




I-318







ԱՐՄԵՆԻԱ



ԳԵՂԱՆԿԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Վ. ՀԻՒԳՈՑԻՑ



Հայոց գիտական մասնակիլ.

Քեզ սիրում եմ և պաշտում,
Եւ աւել լուս ես ուզում:
Քեզ սիրում եմ ինչպես գարդ,
Վարդը մի օրուան
Բայց քեզ յափառեան:

Հայ - Հայ.



Արքական հայ աղջիկ:

«ԳԵՂԱՆԿԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ»

Այս վերաբերեա ներ-
ույ, ինչպես յայտարա-
րած էին, ճառ-թէր էին+
Հրամարամիւլ դարձիւրա-
զարդ ընտէր մի ժեժարեր
Հրամարամիւլ միւն, որի
ինչպես էիւն երի գիտու-
Տօր 15 հոդ, աբդէն



Հայկական սայլ, — նկար Գր. Գալրիկ Ենանցի.

Արայան են + արդարակ-
նակից, ուստի «ԱՌԱԲՍ»ի
հերթայ ընթացք, շահա-
պահի, իսկական իշխան
աշխատ այդ շահա-
թիւնը, առանի հա-
նակն է թագավոր հրա-
մարամիւլ այդ ֆրանքի-
րեն լեռան:



Ես երդիչ եմ—երկիր որդի,
Ես զանձ շանիմ—լեռ ու լիռ,
Ես սիրում եմ ծաղիկ, աղջիկ,
Ծաղկի բաւրմունք, կոյսի սեր,
Ես սիրում եմ լուսնի արաւնջ,
Տանջուան սրտի երգ ու վերը:
1893 թ.

Ա-երկիւ նուանիւան:



Աշամակ գիւղի կամուրջը, Ա. Փափագեանի լուսանկարից.

Ա Ր Ա Ք Ո

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ՀԱՆԴԵՍ

1894 - 1895

(ՄԻ ՏԱՐԵՏՐՈՒԱՆԻ ՎՃԱՐՈՎ)

Գ Ի Բ Ք Ա

Ե Օ Թ Ե Ր Ա Ր Գ Տ Ա Ր Ի

Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՏՊԱՐԱՆ Յ. Ի. ԼԻԲԵՐՄԱՆԻ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 15 Ноября 1893 года.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻ ԳԱՆԻ ԽՕՍՔ	
Խմբագրութիւնից	է
ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ	
Հայկական բարենորոդումների առթիւ. Ս. Գուլամիլէանց.	Թ
Կիլեկիոյ մէջ ազգային դպրոց հիմնելու առթիւ.	ԺԱ
Խուս մամուլի մասին Հայկական խնդրի նկատմամբ.	ԺԵ
Հայկական խնդրիրը Անդղեայում. Բակուրան.	1
Մի տեսութիւն Հայկական Կիլեկիոյ հարստութեան վերայ. Բակուրան.	33
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ	
Սասուն, Նրա նկարագրութիւնը, բնակիչները և նոյաբարք ու վարբը	65
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ	
Իմ Փէրին. Աւետիքի հսահակէան.	96
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ	
Ոլոսորդ Բաղդօն. Պ. Պատշշանց	97
Յիշատակարան մեռեալ տանից. Ֆ. Դաստուազ.	
(Յաւելուածում). Դըռւխ Թա. Նորանոր ծանօթներ—Պետրովի Վճռական մարդիկ.—Ղուկաս, Խոյ Փօմիչ. Բաղնիս. Բակլուշնի պատմութիւնը. Սիլիմ ու ու «Աբով»-ի համբորդ գրեթեու—Տ. (Ըլաբունութեան). 135—182	
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ	
Իզիթ Սարգար. Ա. Իսահակէան	114
Սասուն. Գ. ժահ. Միլդուռ-Շանց.	117
Իմ Հայրենիքը. Ա. Զոքանէանց.	119
Ծանր թախիծ. Ո. Անոնչան.	120
ԿԵՆՄԱԳՐԱԿԱՆ	
Ի Տէր հանգ. Մկրտիչ կաթողիկոս Կիլեկիոյ.	121
Ամեն. Տ. Գրիգորիս եպ., Նորընտիր կաթողիկոս Կիլեկիոյ .	139

ՄԱՍԵՆԱԽԱՆ

Հայկական ճգնաժամն ի Թիւրքիա. 1894-ի կոտորածը, նոր նախընթացները և նշանակութիւնը. Ֆր. Տ. Գրին. 141

ԱԶԳԱՅԻՆ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի Տէր հանդ. Ներսէս պատր. Վարժապետեանի կտակը. . . 153
Թղթակցութիւն Կ. Պոլսից. Արձակը. 164

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՎԵՃԱԿԸ

Բանաստեղծի վեճակը, Բաֆֆի. 170

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վերջին անցքերի մասին 172

Զեսթըրի միթինկը և Գլազոտոնի ամբողջ ձառը . . 182

Սուլթանի հրովարտակը Հայկական բարենորոգումների մասին 205

«Աղբաբար»-ի հարիւրամեակի յիշատակին. Էմիլ. . . 211

«Հետի» լրագրի առաջին համարի առաջին երեսը. . 216

Ամենայն Հայոց Վեհ. Կոթողիկոսը Պետերբուրգում. . . 217

Գեր. Տ. Արսէն արքեպիսկոպոս Այանեան. 236


ԱՅԼԵԿ ԱՅԼՔ

237

«Դեյլի-նի-լ» լրագրի մասին և նորա խմբագրի նամակը: Թիւրքերի վերջին խլժդութիւնը Տաճկահայաստանում:—Անգլիոյ ականաւոր անձանց առթիւ:—Ռուս մամուլի հայատիաց ու հայատէր թիւրքերը:—Ս. Միկալչևսկու գասախօսութիւնը:—Համառուսական տպագրական գործի առաջին ցուցահանդէսը:—ԱհՀափառ Կաթողիկոսի նուերը:—Պետերբուրգի ծխականների ժողովը:—Տեղայս ծխական գործոցի սացումը:—Աղքամանդր Գ. Կայսեր դադաղի վերայի Պետերբուրգի հայոց պատակը:—Իշխան Սիմեոն Ալամելիք-Լազարեան Ս. Էջմիածնում:—Նյոկ քաղաքի արժ. Մարգար աւագ քահանաց Սիմելիանի յորելանլը:—Մի կարևոր գոշագրի կորուսութեան մէջ ստացուած գրքեր: Գործակալութիւնը «Արաքս»-ի մասին:—Խմբագրութեան մէջ ստացուած գրքեր: Գործակալութիւնը «Արաքս»-ի:

ԳԵՂԱՐՈՒԿԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Պատկերների մասին. I. Ա. 1—8



„ԱՐԱՔԻՒ“ ԱՅՍ ԳՐքԻ ՆԿԱՐՆԵՐԸ

Բ Ն Ա Գ Բ Ո Ւ Մ

1.	Նորին կայսերական Մեծութիւն Նիկողայոս Բ.	9
2.	Նորին կայսերական Մեծութիւն Ալէքսանդրա Ֆէօդորովնա	
3.	Ամեն. Մատթէոս պատրիարք Իղմիրլեան.	ԺԶ
4.	Անգղիացի հիւպատոսի վրանները Բաղէշում.	64
5.	Մուշքաղաք	80
6.	Ամեն. Տ. Մկրտիչ կաթողիկոս Կիլիկիոյ.	121
7.	Սիս քաղաք և բերդ	137
8.	Ամեն. Տ. Գրիգորիս եպիսկոպ. Ալէաթանան.	138
9.	Վ. Գլադուտոն.	195
10.	Զեսթըրի միթինկը օգ. 6-ին: Գլագուտոն արտասանում է իւր հռչակաւոր ձառը տաճկահայոց օգախն.	197
11.	Զոն Բրայս, Հայասէր առևետրական նախարար.	201
12.	Սասունցի Հայ	203
13.	«Սէնա Ճէյճ» որահում մայիսի 7-ի մէջ միթինկը: Սրբայլի Դուքսն է խօսում իբրև նախագահ.	204
14.	Սոլիսրըի, արզի նախարարապետ Անդիկոյ.	205
15.	Հայկական խրճիթ Գատուանում.	210
16.	Քէնտըրպերի արքեպիսկոպոսը.	
17.	Եօրքի արքեպիսկոպոսը.	
18.	Խօզպըրի, նախկին նախարարապետ.	
19.	Քիմպըրի, նախկին նախարար արտաքին գործոց.	
20.	Ուէստմինստըրի գուքոը.	
21.	Ճորինզոն, Խմբագիր «Դէյւէ Նէ-՛լ լըազըրի.	
22.	Վեհափառ Հայրապետի հանդիսաւոր ելքը Պետերբուրգի եկեղեցուց մայիսի 25-ին.	212
23.	Վեհ. Հայրապետը Թիֆլիսից մէկնումէ Բաթում.	216
24.	Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոս ամենայն Հայոց.	219
25.	Նորին Վեհափառութեան հանդիսաւոր ելքը Նոր Պետերգովի կայարանից գէպի կայսեր. պալատ.	223
26.	Վեհափառի կառքը Ճանապարհին գէպի կայսերական ապարանքը.	225
27.	Վեհափառը կայսերական ապարանքից մէկնելիս.	227
28.	Վեհափառը Պետերբուրգի եկեղեցու գաւթում.	231
29.	Գեր. Արսէն արքեպիսկոպոս Այանեան.	236
30.	Պարսկահայ երկրագործը.	
31.	Կարինցի Հայ աղջիկը.	

32. ԶԵՐԹՈՒՆԵՐԻ.
 33. ՀԱՅ ԳԵՂԵՄԿՈՒՀԻ.
 34. ԲԺՆՈւ բերդի աւերակները
 35. Աշտարակ զիւղե կամուրջը
 36. Տեսարան կիլիկիոյ

ՏԵՍԱՐԱՆՆԵՐ ԵՒ ՏԻՊԵՐ

37. Հին Ջուղայի աւերակները Արաքսի եղերքում:
 38. Կտուց Անապատի ընդհանուր տեսարանը.
 39. Հայ ուխտաւորների նաւակիր Վանայ ծովում Աղթամա-
 40. Արգինայի ձորը. ըի եղերքում:
 41. Դաւիթ բէզի բերդը.
 42. Նախավկայ վանքի ուխտաւորների փախուստը Արաքս
 43. Թորթումի քարավիր. գետի վերայով 1891թ.
 44. Ախալցիսեցի հայ կինը.
 45. Ալէքսանդրապոլիցի հայ կինը.
 46. Երևանցի հայ կինը.
 47. Սևանայ ծովը.
 48. Սևանայ ծովի մի մասը.

ՀԱՅԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

49. Որոտնայ վանքը.
 50. Հայկական հին խաչքար.

ԳԵՂԱՐՈՒԵՑՄԱՆ ԲԱԺԱՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

51. Մուշելիս.—Յղութն ս. Աստուածածնի:
 52. Յ. Այլաղվանին.—Ատալանդեան ովկիանոս:
 53. Հ. Աւմբարդումին.—Աղբիւրի մօտ:
 54. Զինէլ—Զրբեր Փէլահ կին:
 55. „ —Աղքատ երաժշտուհի:
 56. Բիստան.—Սպասում է:
 57. Ժ. Օբէլ.—Ամուռը (սիրոյ Աստուածը) արձակուրդում:
 58. Ռէյնոյլդ.—Հրեշտակների մի խումբ: Գեղար. Բաժնի 2-դ երեսին:
 59. Զիւս.—Առաջին սէր. Գեղարուեստական Բաժնի 8-դ երեսին:
 60. Պ. Տէր-Աստուածաբարչեանց.—Հայ կինը աղբիւրից դառնալիս:
 61. „ Մշեցի հայ երկրագործը դաշտում: բանական . 152
 62. Գր. Գաբրիէլլանց.—Հայ աշուղը. բանական 118
 63. „ Անւոյ պարիսպը լուսնեակ գիշեր. Հանա-
 64. „ Հայկական սայլ ին Տեսքուն բաժնի Բ. Երեսին:

ՄԻ ՔԱՆԻ ԽԾԱՔ

Մենք թէև մեր յայտարարութեան համաձայն բացած էինք «Արտա»-ի 1894 թ. բաժանորդագրութիւնը և ոչ մի շանք չէինք ինսյած այդ տարեցընի զրքերը լոյս ընծայելու համար,—մանաւանդ որ այդ միջոցում տեղի ունեցաւ Սասունի դժբաղդ արկածը և այնուհետև էլ ծագեց հայկական խրնդիրը, որը «Արտա»-ի ծրագրի մէջ նշանաւոր տեղ է բըռնուում,—այնուամենայնիւ մեր նիւթական միջոցների անձկութեան և հանդիսի ոչ կանխիկ բաժանորդագրութեան պատճառաւ անկարող եղանք հրատարակել «Արտա»-ը, որի համար այժմ 1894 թ. բաժանորդներին մենք ուղարկում ենք 1895 թ. զրքերը:

Բայի այս՝ մինչդեռ մենք «Արտա»ի կանոնաւոր հրատարակութեան հետ ցանկանում էինք իւրաքանչիւր ամիս այլ և այլ կարեոր բովանդակութեամբ զրքեր ևս լոյս ընծայել—քանի որ Պետերբուրգը գորա համար միջոցներ է տալիս,—դժբաղդաբար այսպիսի անձուկ պայմաններում ստիպուած ենք ոչ միայն մեր փափազը անիրագործիկ թողնել այլ և 1895 տարեցընի երկրորդ գիրքը ևս հրատարակելով ժողովուած բարեւցնել «Արտա»-ի հրատարակութեանը:

«Արտա»-ի նման պատիերազարդ գեղարուեստական մի հրատարակութիւն, մենք համոզուած ենք, որ երկար տարիներ կարող չէ զցութիւն ունենալ հայերիս մէջ, ըստ որում ամբողջ զրքի կազմութիւնը այնքան մեծ գումար է պահանջում և աշալուրջ փորձառու հսկողութիւն, որ դժուար թէ մեր ներկայ գործողներից կամ նոր սկսողներից ո և է մէկը վստահանաց ձեռք զարնել և այնքան գլխացտւանք յանձն առնել ի կատար ածելու համար մի այդպիսի հրատարակութեան նոյն իսկ տեխնիքական կողմը: Մենք 1887 թուականից ամեն նեղութիւն և զրկանք յանձն առնելով տարել ենք այս ծանր գործը՝ դրդուած սոսկ այն մոլեուանդ սիրուց, որ


մենք տածում ենք դէպի այս պատասխանառու ու կարեոր գործը, հաւատացած գոլով, որ այդպիսի մի բազմապահանջ հրատարակութիւն առանց բուռն սիրոյ և եռանդի երբէք չէ կարող յարատել: Լոկ այն, որ եւրոպական յայտնի թերթերի կարծիքով, թէ «Արտա»-ը կարող է մրցել եւրոպական նոյնատեսակ շքեղ հրատարակութիւնների հետ, արդէն մեծ զրաւական է այն ջանքերին, որ մենք նորա վերայ գործ ենք զրել և որոշ արժանաւոր զիրքի վերայ պահել, միևնուն ժամանակ և պարզ ապացոյց այն անվերջ դժուարութիւններին, որ մենք ստիպուած ենք եղել տանել մեր նպատակին հասնելու համար:

Ափսոս որ բաժանորդագրութեան կանոնաւոր և կանխիկ չմշարուելը պատճառ է դառնում այսպիսի մի կարեոր հրատարակութեան դաշտարձան, մինչդեռ մենք աշխատում էինք օրէցօր ընդարձակելով և հարստացնելով՝ աւելի օգտակար գտրձնելու նորան:

Ի վերջոյ աւելացնենք և այն, որ հանդիսիս դործակալ-ները, —բացի մի քանիսի սիրալիք պատրաստականութիւնից և եռանդուն աջակցութիւննից, որոնց հրապարակաւ յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը, —մեծ մասամբ բաժանորդագները մեզ խիստ ուշ հասցնելով՝ պատճառ են դառել թէ «Արտա»-ի հրատարակութեան ուշանալուն և թէ մեզ ծանր զրութեան մէջ են ձգել ընթերցողների առաջ, թէև մենք՝ հեռու հայկական կենտրոնից՝ խիստ կարօսութիւն ունէինք գործակալների, որոնց ամեն մի աջակցութիւնը մեզ համար թանգ էր և մեծ նշանակութիւն ունէր «Արտա»-ի կանոնաւոր հրատարակութեան համար:

Յայտնելով մեր հարաբերութիւնը, կարեւոր ենի համարում շեշտել որ «Արտա»-ի վերջնական դադարձան առաջը կարող է առնել միայն այս գրէտէ շաբաթոյն և յաջողակ առաջածնան հետ ԿԱՆՍԻԿ բաժանութեան-թագավորութիւնը:

Ա. Գուլանիքանց.






ЧАСОВЪРШЧИКЪ ШЕХПИРІНЪ ЧАЭСГ ОЛІЧІШ ҖЫЧПУШАПІ Р.
Его Императорское Величество Государь Император Николай II.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.



ՆՈՐԻՆ ԿԱԶՄԵՐԱԿԱՆ ՄԵԽՈՒԹԻՒՆ ԿԱՅԱՐՈՒՔԻ ՈՈՒՍԱՑ ԱԼՔԵՍԱՆԴՐԱ ՖԷՕԴՈՐՈՎՎԱ.
Ея Императорское Величество Государыня Императрица Александра Феодоровна.

Автотипия Ангерера въ Вѣнѣ.



ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

«Արտա»-ի 205—210 հջերում ապագրում ենք Հայաստանի համար խոսացուած բարենորոգումների այն ծրագիրը որ վերջերս, հակա յ-ին, Տաճկաց սուլթան Աբդիւլ-Համիդը վերջ ի վերջոյ բարեհաճեց ընդունել ընկճուած Անգլիոյ, Ռուսիոյ և Ֆրանսիոյ խիստ պահանջներից, թերեւ և 18-ի նշանաւոր ցոյցի, աղղեցութեան ներքյոյ: Բարենորոգմանց այս նոր ծրագիրը աչքէ անցնելուց յետոյ, —որը, ի զէպ է ասել, առաջին տպաւորութեան տակ, շատ տեղ մեր ազգակիցներից ընդունուեցաւ մեծ ոգեւորութեամբ, —տեսնում ենք, որ նա նախ շատ կէտերում չէ համապատասխանում հայժողավրդեան սպասած բարենորոգումներին: Ամբողջ մի տարի, գեռ ևս աւելի, խիստ յաճախ գիտողութիւններ էր լինում թէ չէ կարելի յուսալ թիւրքից ոչ մի բարենորոգումն Հայաստանի համար առանց եւրոպական երաշխաւորութեան ու անմիջական հսկողութեան, ուստի և ամեն ոք սպասում էր, որ ներկայ ծրագրի ամենաէական կէտերը դոքա էլ կը լինեն: Եյսպէս մտածելու հաստատ հիմք կար, մանաւանդ երբ վերջերս, Սոլյսբրին անպայման կերպով շեշտում էր այդ կետի, եւրոպական հսկողութեան, վերայ: Մակայն գուրս եկաւ, որ այդ բոլորը յուսախաբութիւն է եղել, որովհետեւ Բ. Դրան ընդունած ծրագրի համաձայն բարենորոգումների անմիջական հսկողութիւնը ֆեացած է գարձեալ նշյն անընդունակ թիւրքի ձեռքում և թիւրք պաշտօնեաններն են կոչուած այդ բարենորոգումները մտցնել Հայկական գաւառներում, այլապէս՝ բարենորոգումները մտցնելու ուղղութիւնը այժմ թիւրքինն է և զեկավարելու սանձը նրա ձեռքին, թէ կարծես թէ եւրոպական հսկողութիւնն էլ մի քիչ գեր պէտք է խաղայ, որովհետեւ ԺԶ-րդ դիմի մէջ թեյլատրած է գեսպաններին իրանց թարգմանների միջոցաւ խորհրդակից լինելու այս ու այն ձեռնարկութիւնները կամ բարենորոգումները մտցնելու խնդրում:

Բացի այն, որ այս ծրագիրը եւրոպական անմիջական հսկողութիւն չէ ձանացում և եւրոպացիներից պաշտօնեաներ չէ ընդունում պատասխանատու պաշտօնների համար, նաև մի քանի կէտերում զանազանվում է այն ծրագրից, որ երեք

պետութեան ներկայացուցիչները ներկայացրին սուլթանին
մայիսի 11-ին (ն. ա.): Խոկապէս այս նոր ծրագիրը մի աղջա
տումն է մայիսի 11-ի ծրագրի:

Այժմ գառնանք այն կէտին, թէ ներկայ ծրագիրը՝ ինչ
պէս որ կայ, ինչ նշանակութիւն կունենայ հայ ազգաբնակու-
թեան համար այն կենտրոններում, ուր իբր թէ մտցնելու
են այդ բարենորոգումները: Խօսք չկայ որ այս ծրագրի բո-
լոր յօդուածներն էլ առանց այսքան գոռում գոշիւնների
էլ սպասելի էր գործադրուած տեսնել Թիւրքիայում, քա-
նի որ ծրագրի բոլոր շօշափելի կէտերն էլ հիմնուած են
պետութեան մէջ գոյութիւն ունեցող օրէնքների այս ու այն
յօդուածների վերայ. Հէնց այս իրողութիւնը արդէն պար-
զում է, որ սուլթանը հայկական նահանգներում ոչ թէ բա-
րենորոգումներ է մտցնում, այլ խոկապէս գործադրել է ուղում
այն օրէնքները, որոնք մինչև հիմայ անխողաբար ունակոխ
են եղել և հոգեպէս ու Փիղեքապէս սպանել տեղական աղ-
զաբնակութեանը: Սյապիսով մենք տեսնում ենք, որ մեծամեծ
խոստումներից ու արիւնաշեղութիւններից յետոյ, սուլթանը
իւր օրէնքների հիման վերայ բարենորոգումների ծրագրի
փքուած խօսքերի ներքոյ՝ ակամայ երեան է հանում իւր
երկրում ոտնակոխ արուած ծշմարտութիւնը: Ահա այս է
երեւակայեալ միակ օգուար, եթէ իրօք այդ էլ իրագործուի.....

Բայց մենք կարծում ենք, որ հայ ժողովրդի աղաղակը
ու նորա զեռ արիւնաթաւալ հաղարաւոր նահատակների
բողոքը այդ ամենատարրական ծշմարտութիւնը պարզելու հա-
մար չէին միայն, այլ սուլթանի հաւասարիմ հպատակը մնա-
լով հանգերձ նա պահանջում էր երկրի մէջ տիրող անլուր
զեղծումների ու անիրաւութիւնների դէմ արմատական փոփո-
խութիւն, կառավարութեան եղանակի մէջ փոքր ինչ լայն,
ժամանակակից լուսաւոր և արդար հայեացք, որպէս զե երկի-
րը և ժողովուրդը իրօք բարդաւածէ, որից անշուշտ ոչ
պակաս կ'օգտուի նոյն խոկ օսմ: կառավարութիւնը:



ԱՅԻ ԲԿԻՈՅ ՄԵԶ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊԲՈՅ
ՀԻՄՆԵԼՈՒ ԱՌԹՈՒ

Ա հրատարակութեան առաջին օրից՝ մենք
Հայ հասարակութեան ուշադրութեանը ներկայացրինք Կի-
լէկից բարոյական-կրթական անմիտիթար կացութիւնը և մատ-
նանիշ արինք մի ազգու աջակցութեան կարիքը:

Միմիանց յաջորդող վերջին տարիների ընթացքում այդ
կացութիւնը ոչ միայն չէ բարեփոխուել այլ ընդհակառա-
կը աւելի ևս ծանրացել է, այնպէս որ, այն աջակցութիւնը,
որը մի քանի տարի առաջ արդէն հարկաւոր էր, այսօրուան
օրս դարձել է մի անհրաժեշտ պահանջ:

Ահա այս անհրաժեշտ պահանջից մղուած՝ մենք վստա-
հանում ենք մի քայլ ևս յառաջ գնալ և գործնական ձեռ-
նարկութեան առաջարկը գնել Հայ հասարակութեան առաջ:

Տայկական Կիլեկից վերջին թագաւոր Լեռն կուսինեանի
մաշուան հինգարիւրամեակի տարեգարձի առթիւ մենք մեր
կողմից մօտերս լոյս կրնծայենք մի հրատարակութիւն, այս վեր-
նազրով, «Փոյշ աշխարհագրո-Ռէան արդէ Կիլէկից», որպէս մի
գրական համեստ կոթողի յիշատակ այդ պատմական մեծ դէպքի:

Բայց միւնցին ժամանակ կը ցանկանայինք որ ընդհա-
նուր Հայ ժողովրդի մասնակցութեամբ Կիլեկից մէջ կանգ-
նուէր մէծագոյն և կարեորագոյն մի կոթող որը Հայ հասա-
րակութեան ներկայ պայմաններում՝ ոչ այլ ինչ է, բայց եթէ
մի կրթական հիմնարկութիւն:

Ի հարկէ, մեզ ևս շատ լաւ յայտնի է տաճկահայոց ներ-
կայ տիսուր դրութիւնը, որի վերայ կենտրոնանում է այսօր
բովանդակ Հայ սերունդի ուշքն ու միտքը և որով կաշկանդ-
վում է Հայ մարդու գործունէութեան կարողութիւնը...: Բայց
այս ցաւալի կացութեան ուժին տպաւորութիւնը անձամբ
զդալով Հանգերձ, կրթական նպատակների մասին սպասողա-
կան անշարժութիւնը չենք արգարացնում: Ընդհակառակը՝ Հայ
հասարակութիւնից սպասելու ենք, որ նա բացառիկ դէպքե-

րի առջեւ և բացառիկ զոհողութիւնների յանձնառու լինի:

Ազգերն էլ, անհատների նման, իրանց կենաց շրջանում պատահում են ծանր տաղնապների, որոնց միջեց յաջողում են անվտանգ դուրս գալ քանի որ նոցա մէջ սպառուած չէ կենսական ոյժը: Այս իրողութեանը ապացոյց է հենց նոյն խոկ հայ ազգի կեանքը, որ չնայելով իւր կրած անընդհատ տափնապներին և հարուածներին, դեռ զուրկ չէ ոգեսրութիւնից: Մենք այս միսիթարական երեղյթի ազբիւր համարում ենք այն հոգեոր, բարոյական և մտաւորական պաշարը, որը ժառանգել ենք մեր մշտաքարչար նախահայրերից՝ շնորհիւ վանքերի, գպրանոցների և ուսումնավայրերի:

Չենք ուզում ջատագովել ուսմոն կարեորութիւնը, որ արդէն քաջածանոթ է ամեն մի մտածող հայի, միայն շեշտում ենք այն կէտի վերայ, թէ կրթական անհրաժեշտ հիմնարկութիւնների ձեռնարկելու համար լաւագոյն օրերի և յաջողագոյն պայմանների սպասել այլ ևս ներելի չէ, որովհետև մենք չենք իմանում թէ ե՞րբ կը հասնեն այդ օրերը և պայմանները՝ բացի այդ՝ բարոյական և մտաւոր մնունդը հաւասարապէս պէտք է թէ յաջողութեան և թէ ձախորդութեան մէջ:

Խօսքը մասնաւորելով մեր առաջարկութեան վերայ, հրաւեր ենք կարգում հայ հասարակութեան որ անմիջապէս ձեռնարկուի մի կրթարան հիմնելու Կիլիկիայում, այն աշխարհում, ուր վեց եօթ դար առաջ ծաղկած ուսումնավայրերից, դարեկվանքերից և ուխտերից և ոչ խոկ մէկը ֆնացել է այսօր:

Պէտք է խոստովանել որ այս գաղափարը բաւականին հին է և մեղնից առաջ ուրիշներ ևս այդ մասին մտածել են:

Դեռ 30 տարի սորանից առաջ^{*)} յիշատակաց արժանի կարապետ վարդապետ Շահնազարեանցն էր, որ իր հարստութիւնը, հազար ոսկի կտակեց Կիլիկիայում ժառանգաւորաց վարժարան հիմնելու: Նորա կտակակատարները, վսեմ նուբար փաշան, որ իր կողմից ևս 3000 ոսկի աւելացրեց, և հոգելոյս ներսէս պատրիարքը՝ այլ և այլ նկատումներով կ. Պոլսում հաստատեցին Առաքել—նուպար—

^{*)}Տես «Արաք» 1889 թ., և. գերք, էջ 79.

Նահնազարեան վարժարանը և այսպէս մասամբ միայն դորձագրեցին կտակը, թէև ընդհանրապէս խօսելով ազգը ժամանակին մեծապէս օգտուեց այդ հաստատութիւնից:

Վերջին քառորդ դարու մէջ կիլիկիայում մասնաւոր շարժումներն էլ անպակաս չէին և մի կենարոնական վարժարանի պէտքը շատ անդամ յուղվում էր կովկասի և Կ. Պոլսի թերթերում՝ կիլիկիայից ուղղուած թղթակցութիւններով:

Յիշատակելու է նաև, որ կիլիկիայ հոգելոյս Մկրտիչ կաթողիկոսը քանիցս դիմումներ էր արել Նահնազարեանի կտակը կիլիկիայում վերակենդանացնելու: Յետոյ, յաջորդաբար ինքը ևս հաստատեց վարժարաններ—Այնթապում և Մարաշում—բայց պահանջուած պայմաններին չէին համապատասխանում: Պատմական տեսակէտից կարեւորութեան արժանի էր Մկրտիչ կաթողիկոսի դիմումը Անդլիական եկեղեցւոյ պետին, Քենտերպերի արքեպիսկոպոսին, որից բարոյական և նիւթական աջակցութիւն էր խնդրում մի հոգեոր գպրոց հաստատելու համար: Արքեպիսկոպոսը կազմեց մի մասնաժողով, որին մասնակցում էին Լոնդոնի և Սոլզերի քաղաքների եպիսկոպոսները: Այս առժիւ փոխանակուեցին մի քանի անգտում թղթակցութիւններ, Անգղիայից մասնաւորապէս երկու տեղեկարեր-Հոգենորականներ ուղարկուեցան կիլիկիա, և Մարաշքաղաքում որոշուեցաւ Հիմնել հաստատելիք վարժարանը: Բայց այս ամենը գործնական ելք չունեցաւ, որովհետեւ մեր ունեցած հաստատ տեղեկութիւնների համեմատ՝ խնդիրը սխալ ուղղութեան վերայ էր առաջ ընթացել և մանաւանդ՝ կաթողիկոսի նկատմամբ գոյացուած համոզումը նպաստաւոր չէր:

Իսկ այս բոլոր անյաջողութիւնների հանդէպ, կիլիկիայում անսարգել բազմացել են օտար վարժարաններ, որոնք շարունակվում են մինչև այսօր: Լատին զանազան միաբանութիւնները—Ֆրանչիսկեան, Կարմելիան, Տրապեան—վանքերով և գպրոցներով հաստատուել են արդէն կիլիկիայի այլ և այլ կողմերում: Իսկ ամերիկացինները՝ գրեթէ բոլոր կարեոր կենտրոններում հիմնարկած են այլ և այլ հաստատութիւններ, Տարսոնում՝ Ս. Պոլոսի վարժարանը, Մարաշում՝ Աստուածաբանա-

կան վարժարանը և Աղջկանց գոլլէճը, Սյնթապում «Կենտրոնական Թուրքից Գոլլէճը» և նոյնպէս Աղջկանց գպրոյը, գարձեալ վարժարաններ՝ Աղանայում, Հաճինում, Սսում և այլն:

Մենք թէև կօյր քէն կամ նախանձ չենք զգում յիշեալ հաստատութիւնների դէմ, բայց և այնուամենայնիւ նրանց գանում ենք բացարձակապէս օտար, և բոլորովին անհամապատասխան Կիլիկիոյ Աթոռի և Հայ ժողովրդի պէտքերին: Ուստի մենք սուրբ և բարոյական պարտականութիւն ենք համարում անդադար խօսել և աշխատել մինչև որ մի օրինաւոր աղգային ուսումնավայր բարձրանայ Սսում, կամ Մարշում և կամ Աղանայում: Կիլիկիոյ գաւառն իբրև կաթողիկոսական վիճակ՝ պէտք է ունենայ մի կրթարան, ինչպէս Ս. Էջմիածինն ունի իր ձեմարանը:

Արդէն մի բարեբախտութիւն է, որ Հանգ. Մկրտիչ Սահասարեան հիմնել է Հայաստանի կենտրոնում «Սանասարեան վարժարան»-ը, ինչո՞ւ ուրեմն Կիլիկիոյ կենտրոնում ևս չը հաստատուի նմանօրինակ մի վարժարան, ուր սնունդ գտնի նաև Փոքր Ասիոյ, Միջագետքի և Ասորիքի Հայ աղգաբնակութեան ծաղիկ երիտասարդութիւնը:

Մենք զիմում ենք այսօր Հայ ժողովրդին մեր այս առաջարկութիւնով՝ քաջալերուած այն ընդհանուր և զօրաւոր համակրութիւնից որ նշմարել ենք այս նպատակի վերաբերութեամբ, կոչում ենք անում մանաւանդ նոր Շահնաղարեանների և նոր Սանասարեանների, որ զլուխ կանգնեն այս ձեռնարկին:

Քործի նախապատրաստական էական խնդիրն անշուշտ դրամականն է, որը մասամբ գիւրացնելու համար առաջարկում ենք հաստատել «Կիլիկիան Հռնացանի ֆոնդ» և որի վերաբերեալ կարգադրութիւնները կը հրատարակուեն յառաջիկայ առթիւ: Բայց միենայն ժամանակ կը խնդրենք այս նպատակի համակրողներից, որ բարեհաճեն իրանց կարծիքները յայտնել դործի յաջողութեան և լաւագոյն կերպով իրականացման մասին: Մենք մեծ սիրով կը նդունենք այս մաքով ուղղուած գրութիւններ և կը հաղորդենք կազմելի մասնաժողովին:

ԹՈՒՍ ՄԱՐՊՈՒԵԼԻ ՄԱՍԻՆ

Քաղաքակիրթ ազգերի մէջ իւրաքանչիւր կուսակցութիւն, իւրաքանչիւր հաւաքական մարմին, ուր գյուղիթիւն ունի կարծիքների և գաղափարների համանմանութիւն կամ նոյնութիւն՝ լինի դա մի ժողովուրդ, մի ազգ կամ մի պատահական խմբակցութիւն, ունեն իրենց տեսակէտների և գաղափարների, իրենց շահերի և ձգութեների արտայայտիչ մի հրատարակութիւն, մի պարբերական թերթ, որի միջոցաւ նոքա հարկաւոր եղած ժամանակը, պաշտպանում են իրենց գաղափարները, շահերը և մաքառում հակառակորդների դէմ: Թէ ինչ մեծ գեր է խաղում լուսաւոր ազգերի մէջ սյդպիսի թերթերի գյուղիթիւնը, դա ամենքի համար այնքան պարզ է, որ մենք աւելորդ ենք համարում այս մասին խօսել: Այսակը մասնաւորելով մեր խօսքը հայկական հարցի վերայ, մամուլին ծանօթ իւրաքանչիւր անձ գիտէ թէ որպիսի թեր և դէմ կարծիքներ արտայայտուեցան այդ խնդրի վերաբերմամբ: Գալով ոռւսաց լրագրներին, յայտնի է թէ մի կարգ թերթեր որպիսի ջանքեր էին գործ դնում մոլորեցնելու համար հասարակութիւնը և մինչեւ անդամ ժխտել Տաճկահայաստանի սարսափելի կոտորածները ու ամեն տեսակ գաւեր և զրպարտանք հնարելով ձգութենէին գոզուել ոռւս հասարակութիւնը հայոց դէմ, ստկայն, միւս կողմից, գտնուեցին գոցա դէմ թերթեր, որոնք նոյնքան եռանդով հերքեցին հակառակորդների խարդաւանքները, ստութիւնները ու համարձակ պաշտպանեցին հայերի արդար դատը ոռւս ժողովրդի առաջ, որի ճիշտ կարծիքը ոչ պահաս մեծ նշանակութիւն ունի հայերիս համար: Այս ի նկատի ունենալով՝ չենք կարող չհրաւիրել մեր համազգիների ուշագրութիւնը ինպաստ հայոց խօսող ոռւս թերթերի վերայ, առաջարկելով ստանալ այդ լրագրները, որով բարոյապէս թէ նիւթապէս նոյցա քաջալերած և խրախուսած կը լինինք: Հայոց գատին համակիր ոռւս օրաթերթերի յայտարարութիւնը զնում ենք սյն գրքի վերջում:



ԱՄԵՆ. ԽԱՏՔԵԼՈ ՊԱՇՐԻԿՐ ԽԱՎԻՐԵԱՆ.



ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Ա.

Եթէ Հայկական խնդրոյ վերջին երկոյթը ցունց տուաւ համայնքաղաքակիրթ աշխարհին, անուրանալի է որ այս ցունցը բազգատապէս աւելի սաստիկ զգացուեցաւ Անգլիայ մէջ:

Խուսօ-Թրքական վերջին պատերազմէն յետոյ, Հայկական խնդիրը, երբ միջազգային հանգամանք կըստանար Պէրլինի գաշնագրով, արդէն Անգլիայ մասնաւոր հսկողութեան ենթարկուած էր Կիպրոսի պայմանագրով (1878թ.): Այդ թուականէն ի վեր, կըտեսնենք որ Անգլիական դիւանագիտութիւնն ու մամուլը մասնաւոր կերպով կը զբաղին Հայոց վերաբերեալ հարցերով, թէև, ինչպէս փորձը ցոյց տուաւ, Անգլիական հսկողութիւնը Հայաստանի բարենորոգմանց մասին չունէր այն զօրաւոր երաշխաւորութիւնը, զոր Խուսական պետութիւնն ապահոված էր Սան-Ստեֆանոյի գաշնագրով, և Հետեաշար 1878-էն ի վեր Տաճկա-Հայոց վիճակը ո՛չ միայն չը բարւոքեցաւ, այլ և առաւել վատթարացաւ:

Արդարեւ, ցաւալի իրողութիւնը յաճախ կըպարզուէր այս երկրին առջև և Հայկական խնդիրը զրեթէ վառ կը մնար: Մուսա-պէյջի չարագործութիւնները, Կարնոյ արիւնշեղութիւնը, Գումզափուի ցոյցը և Անկուրիոյ դատապարտե-

լոց գլխատումը՝ մամլոյ միջոցաւ հանրային կարծիքը յուղած և խորհրդարանական ջերմ վիճաբանութեանց առիթ տուած էին: Բայց այդ ամենուն հետեւանքն էր ոչ այլ ինչ բայց եթէ պլատոնական ցաւակցութիւն: Մինչև իսկ պ. Կլատողըն, որուն վերջին ընտրութիւնը կենդանի յօյս ներշնչած էր, առանց մի դարման տանելու հրաժարեցաւ նախարարապետութենէ և ազատական նախարարութեան զլուխ եղաւ Հորտ Ռողպրի, որ հայոց դատին նպաստաւոր և ոչ մէկ բառ արտասանած ունէր տակաւին:

Ահա այս վհատական վիճակի մէջ, երբ Անգլիոյ Ազատական կառավարութեան վրայ գրուած յօյսերն ալ կը նուաղէին, հռչակուեցաւ Սասունի սրածութիւնը: Ահաւոր գէպքը կատարուած էր 1894-ի օդոսատին, բայց հազիւ թէ երեք ամիս վերջ արձագանք գտաւ Անգլիական թերթերուն մէջ: Նոյեմբերի 12-ին Թայքն կը հրատարակէր պ. Կ. Յակոբեանի կողմէ Սրտաքին գործոց նախարարին հաղորդուած մի տեղեկագիր, և մի քանի օր վերջ Սրանգարարի մէջ կ'երեւար Վառնայի թղթակցէն մի հեռագիր. նոյնիմաստ լուրեր հետղհետէ կը հասնէին ամեն կողմէ և կը հաստատէին թէ հայատանի քրիստոնեաները մի սոսկալի ջարդ կրած էին:

Հայոց վիճակն օրուան խնդիր կը դառնայ դարձեալ բայց այս անգամ թողած տպաւորութիւնը վաղանցուկ չէր թուեր: Հալածանաց և հարստահարութեան սովորական պատմութիւններ չէին որ կը լսուէին, այլ այնպիսի յայտնութիւններ՝ որոնց ահաւոր բնութիւնն իսկ թերահաւատութիւն կը պատճառէր շատերուն:

Հայկական խնդրոյ վերաբայման առթիւ Անգլիական մամլոյն և հասարակութեան առաջին տպաւորութիւնը կուսակցական նկատումներէ ազատ չէր: Պահպանողական դասը—որուն կը պատկանին պետական (եպիսկոպոսական) եկեղեցւոյ բարձրագոյն պաշտօնեաներ, յեղային ազնուականներ, մեծ դրամատէրներ և ագարակատէր լորտեր,—իր հին ցաւերը կը յիշէր երբ պ. Կլատոսղընի հակաթուրք զգացումներուն ոյժ և իրաւունք տուող հրատապ խնդիրը կ'արծարձուէր:

Հորտ Բալմբրագընի օրինակին հետեւելով՝ Դորիները (պահպանողականները) միշտ թրբասէր քաղաքականութիւն մըշակած, այսինքն «չիւանդ մարդը» առողջացնելու և անորդոյութիւնը պահպաննելու հետամուտ նղած էն: Այս քաղաքականութեան ջատագով և գործադիր Հորտ Պիքընսֆիլտն (Տ' իզրաէլի) էր որ Պուլկարիոյ կոտորածը ուրանալով այն առթիւ լրագրաց մէջ տեսնուած լուրերը «սրճարանի հանաքներ» անուանած էր և թերեւս յաջողէր մի թումբ բարձրացնելու հասարակային կարծեաց առջեւ, եթէ այն տաեն չըլսուէին պ. Կլատսդընի հզօր ինչպահանները: Այն հաստարմատ հակառակութիւնը որ կայ պ. Կլատսդընի կուսակցութեան քաղաքական, եկեղեցական և անտեսական գաղափարներուն դէմ՝ իբրև խրտուիլակ կը կանգնէր ամեն անգամ որ կը յիշուէր չայսատանի անունը և կը գատապարտուէր Թրբական յոռի կառավարութիւնը: Զարմանալի չէ, ուրեմն, որ Թայճը, Սունդարաբի և Տէյլի Թէլէքտի պէս թերթեր մի խուլ արձագանք կուտային Սասունի լուրերուն և Անդլիքան եկեղեցւոյ բարձր ներկայացուցիչը—որոնք չայսատանեայց եկեղեցւոյն ջերմ համակիրներ էին—նուալ ցաւակցութիւն կը յայտնէին համարաւոր քրիստոնեայ զոհերուն նկատմամբ. մինչեւ՝ Տէյլի Նիւի, Տէյլի Քրօնիւլի և Ռէնդինդի Կաղէդի պէս աղատական թերթերն իրենց էջերը լայն բացած՝ կոտորածի լուրերուն վաւերականութիւնը կը հաստատէին և բաժնուած կամ այլապահ (Dissenter, Nonconformist) բողոքականութեան հովիւները, եկեղեցւոյ բեմերուն վրայէն մարդասիրական պարտաւորութեանց կոչում կը նէին:

Բարեբազրաբար, կուսակցական հաշիւներն ընդ երկար չը տիրեցին, որովհետեւ դժբաղդ իրականութիւնն իր սոսկատեսիլ երեսութով կը պարզուէր հետզհետէ և վստահելի վկայութիւնները կը բաղմանային: Վերջապէս, վարանեալ մոքերու վրայ խորապաւորութիւն գործեց Թայճը որ դեկտ. Ք-ին այսպէս կը դրէր:

«... Երբ առաջին անգամ լինելով ուշադրութիւն կը հրաւիրէինք այս խնդրոյ վրայ, մինչև մէկ աստիճան կասկածութիւն

ցուցնելու հարկը կը զգայինք: Այն ատեն, մէկ կողմէ ունեինք Յիշտակագիր մը Հայ Հայրենասիրական Շնկերակցութենէն, որուն քաղաքական հակումը բացայաց է և որ հիմնուած էր՝ հաղէշէն Խրկուած անստորագիր, և տեղերու, անձերու և թուականներու էական մանրամասնութեանց մէջ թերի և ճարտասանական ձերով խճողուած նամակի մը վրայ: Վիւս կողմէ մեր առջե ունեինք Պոլիս հրատարակուած պաշտօնական յայտարարութիւն մը՝ որ ամեն յանցանք կը բեռցընէր հայերու վրայ և մեր հաւատալու կարողութիւնը ճնշող բաներ կը պատմէր....:

«Եյժմ հարկադրուած ենք ընդունելու որ չափազանցութիւն ընելու հարկ չկայ եղեր: Իրենց վստահելիութեամբ անվիճելի և կողմակցութեան ամբաստանութենէ զերծ անձերու ստուգած ճշշմարտութիւնը բաւական է ապացուցանելու թէ Սասուն գաւառի թիւրք պաշտօնէից ոմանք անդթական ոճիրներով մեղապարտ գլունուած են և թէ մեծ պատասխանատուութիւն կը ծանրանայ Դրան վրայ, որ յանցաւորները պատժելու տեղ՝ վարձատրած է:»

Այս մեծարժէք վկայութենէն մէկ օր վերջ, Բէյնը գործակալութիւնն Աթէնքէն կը հաղորդէր Սասունցի փախստականներու յայտնութիւնը և անոր կը յաջորդէր Արտաքին Գործոց Նախարարին հրապարակային ազդարարութիւնը թէ «Հայաստանի խժդժութեանց մասին տրուած տեղեկութիւնները չափազանցուած չեն:»*) Մի քանի օր վերջ, Առևտրական նախարար ար ձէյմն Պրայս Ապէրտինի մէջ հետևեալ կերպով կը խօսէր Հայաստանի վրայ:

«... Պուլկարիոյ կոտորածէն ի վեր Արեւելքէն չէր հասած այսչափ ահոելի լուր մը: Եթէ լսուածները հաստատուին՝ այդ բաներուն թոյլատրող կառավարութիւնը պիտի դատուի Եւրոպայի առջե:... Անդիհա մասնաւոր պարտականութիւն ունի այս մասին, որովհետեւ ինքն էր օր Պերլինի դաշնագրոյն 61-րդ յօդուածը ընդունել տուաւ փոխանակ Սան-Ստեֆանոյի դաշնագրոյն 16-րդ յօդուածին, որով մահարքը Ուուսիոյ պահանջմամբ պարտառուած էր բարենորոգել Հայաստանը: Աստահ եմ օր միւս պետութիւնները, մանաւանդ Ուուսիա, սիրայօժար պիտի միանան այս վիճակը քննելու և Քրիստոնէից կեանքն ապահովելու: Ուրախ եմ օր

*) Լորտ Քիմպըրէի ճառը Eighty Club-ի մէջ գեկտեմբ. 7-ին

Ուուսիա, Գրանսա և Խոտալիա համաձայն կը գտնուին մի կատարեալ քննութիւն անելու::

Պաշտօնական անձերու բերնէն լսուած այսպիսի յայտնութիւնները յուսադրական էին, մանաւանդ Ծուս կառավարութեան խոստացեալ գործակցութիւնն աւելի քաջալերական էր. բայց դէպքերու ընթացքը յոյժ դանդաղ կը թուէր: Քննիչ Յանձնաժողովը, սոսկ Թրբական մարմին պիտի լինէր և ամենեին վստահութիւն չէր ներշնչէր: Միւնցին ժամանակ հայոց դէմ հալածանքը կը խստանար, ձերբակալութիւն, աքսոր և տանջանք կը յաճախէին և թիւրք կառավարութիւնը չափաւորութեան նշան ցոյց չէր տար: Այս մտասանութիւնը, հայերէն և իրենց բարեկամներէն շուտ հազորդուեցաւ հասարակութեան, և Անգլիական կառավարութեան վրայ ժողովրդային ձնշում գործադրելու պէտքը զգալի եղաւ:

Սասունի կոտորածին առթիւ կազմուած առաջին մեծ միթինկը, որ Սէնդ Մարդինի սրահին մէջ (Saint Martin's Town Hall) գումարուեցաւ գեկա. 17-ին, ցոյց տուաւ թէ Անգլիական ժողովրդին մէջ կան շատեր, իրապէս հետաքրքրուած հայկական խնդրով և վշտակից Թիւրբից հայերուն: Սէնդ Մարդինի սրահին միթինկէն յետոյ բազմաթիւ միթինկներ զումարուեցան Լոնտանի զանազան թաղերուն, ինչպէս և Անգլիական և Սկովտիական այլ և այլ քաղաքներու մէջ: Ժողովուրդը սրտագին հետաքրքրութեամբ կը հետեւէր հայկական խնդրոյ ընթացքին և ջերմ ոզեռութիւն ցոյց կուտար: Հասարակային յուղումն առաւել ևս սաստացաւ երբ պ. Կլաստաղըն, հայ գաղթականութեան անունով իրեն նուիրուած սկիհն ընդունելու առթիւ արտայայտեց իր կարծիքը:

Կ'արժէ այս տեղ մի քաղուած ընել Մեծ Ծերունիին արտասանած խոռքերէն:

«... Պառ, պարոններ, աշխարհագրորէն հաղարաւոր մղոն հեռու էք մեզմէ. բայց քրիստոնէական զգացմամբ և սիրով, մի անջրպետ չկայ, մեծ կամ փոքր, որ զձեղ մեզմէ զատէ. և դուք այդ ընծայն ընտրած էք իրեւ նշանակ քրիստոնէական սիրոյ:

«Ես ձեզ համար ոչինչ ըրե ծանր պարագայից մէջ, թէև, կը վատահացնեմ զձեղ որ անտարբեր չէի: Պատճառը բացատրեմ համառօտիւ:

«Հայաստանի մէջ ահռելի և աննկարագրելի խժդութիւններ կատարուած ըլլալու մասին լուրեր տարածուեցան և հետզետէ վաւերական երեսյթ առին: Այսպիսի պարագայի մէջ ամեն մարդ բնականաբար ուժգին սրայուղութիւն կըզգայ. բայց ես այն համոզումը ունեցած եմ թէ ծանրակշիռ դէպքերու մէջ ամեն ազգի լաւագոյն և յարմարագոյն ներկայացուցիչն է իր կառավարութիւնը որ ժողովրդեան բերանն ըլլալով՝ անոր անուամբ և անոր ուժով խօսելու իրաւունքը կը վայելէ...: Կարծեմ 18 տարի առաջ էր որ, պարոններ, ինձ վիճակեցաւ զբաղիլ ուրիշ խժդժական դէպքերով ալ որոնք իբրև զրոյց տարածուեցան, բայց յետոյ ահաւոր կերպով ստուգուեցան ի Պուլկարիա: Այն դէպքերուն առթիւ ամենին չը շարժեցայ մինչև որ, նախ՝ անոնց գոյութիւնը և բնութիւնը ճշգուեցան անվիճելի հեղինակութեամբ և երկրորդ՝ մինչև որ չը յուսահատեցայ մեր այն օրուան կառավարութեան ընթացքէն: Այս առթիւ ևս միևնոյն ուղղութեան հետևած եմ: և այս ըսել չէ թէ իմ ծերանալովս զգացումներս բթացած լինին այս օրինակ սոսկալի խնդրոց առջև: Այն, լուս կեցայ, որովհետեւ լիովին վատահ էի թէ մագուհւոյն կառավարութիւնը գիտէ իր պարոքը, և զեռ կը տածեմ այդ վստահութիւնը:

«... Ի՞նչ պատահեցաւ ՚ի Պուլկարիա: Պուլթանն և իր կառավարութիւնը բացարձակօրէն ուրացան ո՛ և է անկարգութեան գոյութիւնը: Բայց իրենց ուրացումը հերքուեցաւ իրողութեանց ուժով: Դ'շմարտութիւնը պարզուեցաւ: Այն ժամանակ անհեթեթ թուեցաւ այն խօսքս թէ ժամանակը հասած է որ Ժախըքը աղխով մաղխով հեռանայ Պուլկարիայէն:

«... Երդարև այս քննութեան ելքը տակաւին չգիտենք և այնպէս չեւ ենթադրեր որ ամբաստանութիւնները ճշգուին: Ո՞իւնոյն ժամանակ չեմ կրնար ըսել որ պատճառ չկայ նախագուշակելու մի աննպաստ արդինք: Ծնդհակառակն ինձ հասած տեղեկութիւնները—որոնք նորէն յուսամ թէ չը ստուգուին—հզօրապէս կ'առաջնորդեն այն եզրակացութեան, այն ընդհանուր իրողութեան թէ 1876 թուականի Պուլկարիոյ խժդժութիւնները, նՃիրները և պղծութիւնները՝ 1894-ին կրկնուած են ի Հայաստան:

«Պարո՞ն Աղելքնաբն *», ինչպէս ըսի, կը յուսամ թէ այնպէս շըլլայ, պիտի յուսամ մինչև վերջը: Իսյց եթէ ստուգուի որ այնպէս է, ալ ժամանակն է որ անէծքի ընդհանուր աղաղակ մը բարձրանայ ընդդէմ այս չարագործութեանց և այդ աղաղակը մխուելով Ծափաբերոյ Առաջանին ականջներուն մէջ՝ այսպիսի մի ընթացքի վայրագութիւնը զգացնէ անոր, եթէ երբէք կայ մի բան որով նա կզգայ:

«... Յիրաւի, պարոններ, խիստ է այս լեզուն: Աարկ է խիստ լեզու գործածել: Դէպքերը խիստ են, պէտք չէ որ անոնք մնան առանց խիստ քննութեան: Զեղի խորհուրդ տուի որ ձեր դատաստանը յետաձգէք. բայց որչափ որ ապացոյցները բազմանան և խընդիրը մե գոյն ստանայ, իմ յօյս կը տատանի և կը նուաղի և ցորչափ ձայն ունիմ; այն ձայնը պատեհ առմիւ պիտի բարձրանայ յանուն մարդկութեան և ճշմարտութեան:

«... Զեղ համար ի սրտէ կը մաղթեմ ամեն բարիք: Զեր ազգին համար ջերմապէս կը ցանկամ որ վայելէ զօրութիւն և բարօրութիւն, որչափ ալ խաւարամած լինի իր ներկայ կացութիւնը:»

* * *

Ոչինչ այնքան արագ պիտի արծարծէր հայկական խընդիրը՝ որչափ ըրաւ այս հզօր ձայնը: Դեկտ. 29-երորդ օրն էր որ խօսեցաւ պ. Կլատոսզըն և Հետեեալ առաւոս, իր բոլոր բառերը, կէտերը, բացազանչութիւնները արձագանք գտած էին բովանդակ Բրիտանիոյ մէջ: Թայճկէն սկսեալ մինչև յետին դաւառի թերթը, հաւատարմօրէն հաղորդած էին հարտընի հարցուկին պատգամը:

Սնդիմոյ հասարակային կարծիքն որ արդէն հոգ կը պատճառէր Ոսկեղջիւրի պետական մարդոց, մէծ Վետերանին հրաշունչ լեզուով կրնար վտանգաբեր ընթացք ստանալ. ուստի արտակարգ ձիգ հարկ էր այդ ընթացքը խոտորելու: Կարելի չըր այլ ես ուրանալ Սասունի կոտորածը. անոր ապացոյցները դէղ դէղ կը բարդուէին: Անդիմական կարեսը թերթերու խիղճը շահասիրել՝ եթէ ոչ անհնար, գէթ շատ դժուար էր, ինչպէս որ Տէյլի Նի-Ղ ցոյց տուաւ մի քանի տարի ա-

*) Անդլօ-Հայկական ընկերակցութեան նախագահը, որ կ'առաջնորդէր պատուիրակութեան:

ռաջ: Կը մնար միայն անուղղակի միջոցներով մի հակագլեցութիւն (réaction) գոյացնել: Դիւանազիտական պաշտօնեաներէ զատ, որոնց դարձուածքներն անշուշտ դադանիք կը մնան, հրապարակ ելան մի քանի «Ճշմարտասէր» անձինք, որոնք հասարակութիւնը կ'զգուշացնէին հայկական շարժման դէմ: Այս մարդիկ զուրկ չէին նաև ուրիշ հրապուրիչ միջոցներէ. ուստի անբնական չէր որ Սէնեօր Հիմենէս, Վուտս փաշա և Աշմէտ Պարզէդ իրենց շուրջն ունենային մի քանի արբանեակներ ես: Խմբագիրներ՝ որոնք Հայոց հետ զրամական վէճ ունեցած էին, քաղաքագէտներ՝ որոնք հրեայ սեղանաւորի մը շահակից էին, ըրջազբօսիկներ՝ որոնք Երլըրնէ մէջ սուրճով մեծարուած էին, միսիոնարներ՝ որոնք Երկու տարի պարսկահայոց մէջ ապրած էին,— տսոնց ամենքն ալ հեղենակութեամբ կը խօսէին իրենց տեսածներուն և չը տեսածներուն վրայ, լսածներուն և չը լսածներուն վրայ, Հայերը քաջ կը ձանչնային, անոնց «անբարցյականութիւնը», «անհաւատարմութիւնը», «շահախնդրութիւնը» կը հաստատէին:

Յառաջ մղուած հակահայկական պայքարի բնութեան վրայ աւելի որոշ դաղափար կուտան հրատարակուած մի քանի տետրակները: Զեռք առնենք ասոնց մին, «Հայկական և ուրիշ խժգժութիւններ, և Հակա-Բրիտանական միութիւն» տիտղոսով: Տետրակը նախ կը նկարագրէ «Հայ սոսիալիստներու» խոռոչարկութիւնները և անոնց դէմ վկայութեան կը կոչէ Ամերիկացի տոքգոր Համլինի (Պոլսոյ Ռոպերդ Գոլէճի Հիմնադրին) յօգուածները: Յետոյ կը պատմէ «Սասունի ապստամբներուն» պատերազմը և անոնցմէ երեք հարիւր հոգի միայն սպանուած կը յայտարարէ: Թիւրք զօրաց անգթութիւնները հերքելով հանդերձ կը յիշեցնէ Ռումելիի խաղաղասէր մահմետականաց վրայ գործուած «Խուսական և Պուլկարական խժգժութիւններ» և վերջապէս նշաւակելով պէտաշըդնի «փառամոլութիւնն ու եկեղեցական նախապաշարութերը», հետևեալ բառերով կը ջատագովէ Անգլօ-Թրքական դաշնակցութեան երջանիկ առաւելութիւնները:

«Այս ամենը կը պատրաստուի՝ Թիւրքիոյ վրայ մի մեծ յարձակում ընելու համար. և Թիւրքիոյ անկումը՝ Միջերկրականի մէջ Բրիտանական զօրութեան կործանում և մեր Հնդկական կայսրութեան մերձաւոր կորուսա կը նշանակէ: Այս է ահա զոր այս երկրին համար կը պատրաստեն պ. Կլասսողըն և Հայկական Մասնախմբի կոյր մոլեռանդները:

«... Ռուս կառավարութեան հետ բարեկամական յարաբերութեան և դաշնակցութեան բոլոր զբոյցները ցնորք են: Ազոնցմով, ռուսաց միակ նպատակն է իրենց փառասիրական ծրագիրներու մասին անտարբերութիւն կամ հաճութիւն գոյացնելու համար խարել Անդլիոյ հասարակութիւնը, մինչեւ որ իրենց յաջող գործողութեանց ժամանակը հասնի: Այժմ պէտք չկայ պատերազմելու Ռուսիոյ գէմ: Այս երկու պետութեանց պատերազմը պէտք է արգիլել և յետաձգել որչափ որ հնար է: Բայց այնչափ բանաւոր է հաւատալ որ կրաին ու ջուրը միանան, որչափ որ յուսալ թէ Մեծն Բրիտանիա և Ռուսիա իրապէս դաշնակցին: Ասոնց շահերն իրարու կը բաղիին ամբողջ աշխարհի վրայ և այնպէս պիտի շարունակուի մինչեւ որ ռուս կառավարութիւնը հիմնապէս փոխէ իր յարձակողական և դաւադրական յամառ քաղաքականութիւնը:

«... Եւ ամենէն աւելի կ. Պոլսոյ մէջ, ռուսական մերենայութիւնք և ռուսական ձեռնախութիւնք միշտ կ'ուղղուին այս երկրի շահուց գէմ: Այն կոյր և տիւմար խոռվարկուները, որոնք հիմա կը ջանան Անդլիոյ մէջ արծարծել չայ յեղափոխականաց բոցը,—մի շարժում՝ որուն ծագումը, ծախքերը և ծաւալումը կատարուած են Համ-Մլաւեան ոսկիներու շնորհիւ,—իրենց Հայրենեաց գէմ ամենամեծ թշնամութիւն կը գործեն: Ասոնք, եթէ յաջողին իրենց ապուշ և չարագործ յիմարութեան մէջ յառաջ պիտի բերեն Բրիտանական կայսրութեան խոնարհացումը և Անդլիական փառաց անկումը:»

* * *

Բայց Հայոց կրած հալածանքն ու բռնաբարութիւններն արդարացնելու համար այս կերպ փաստաբանութեանց ժա-

մանակն անցած էր: Մէկ կողմէ տոքդոր համլին հրապարակաւ կը բողոքէր որ յեղափոխականաց դէմ իր դրած յօդուածը չարաշար կը գործածուի օսմանիան հիւպատոսաց ձեռքը և կը յայտարարէր որ Թիւրք կառավարութեան գործը «աւաղակութիւն և մարդախոչոշութիւն» է: Միւս կողմէ կարեոր հանդէսներու մէջ ջերմապէս կ'ողջունուէր Անգլօ-Ռուսական համաձայնութիւնը, և անոր սիրոյն համար մինչեւ անգամ կ'առաջարկուէր կ. Պոլիսը թողուլ Ռուսաց ձեռքը: Իսկ Թրքահայտանի կացութեան և Սասունի կոտորածին վրայ այլ և այլ աղբիւրներէ հասած նորագոյն տեղեկութիւններն այնքան ջախջախիչ էին որ թրքասէրներու պաշտպանողական ձայնը զրեթէ անլսելի կը գառնար և անոնց հերքողական ջանքերը ծաղըելի կը լինէին: Տէյլի Նէ-ու այսպէս կը պատասխանէր անոնց, մի առաջնորդող յօդուածի մէջ:

«... Հայաստանի Խժդժութիւններն ալ ծնունդ տուին այն տեսակ ծիծաղաշարժ և անհեթեթ հերքումներու, ինչպէս որ տեսնուեցան Պուլկարիոյ Խժդժութեան սկիզբը: Աննշան թերթերու անանուն թղթակիցներ վստահաբար տեղեկացած են անծանօթ բարեկամներէ—որոնց վրայ կատարեալ հաւատք ունին եղեր, —թէ Ասունի մէջ ամենեկին բան չէ պատահած: Պալատի պաշտօնաւորներէն մի (անգլիացի) ծովակալ համոզուած է եղել թէ Թիւրք զինուորները երբէք խստաբարոյ չեն, կամ անպատշաճ գործէ չեն ախորժիք: Պարապ ժամանակ ունեցող կիսաթոշակ պաշտօնեաններ և գործ փնտուող թափառաշրջիկ փաշներ կը զարմանան թէ խաղաղասէր քիւրտերը և ներողամիտ թիւրքերը այսչափ ժամանակ ինչպէս գիմացած են կուռասէր հայոց վարմունքին: »*

Միւնցին իմաստով՝ յօդուածներ պակաս չէին նաև գաւառական թերթերու մէջ: Անոնցմէ մին հետեւեալ զիտողութիւնը կ'ընէր Սէնեօր Յիմենէսի նկատմամբ: «Հա, Սպանիացի ճամբորդը, մի ո՞ն Խիմենէ, զոր թիւրքասէրները վկայութեան բերին իբրև անկասկածելի ապացոյց հայաստանի Խժդժութիւնները հերքելու, հիմա կը յայտնուի թէ մի քաջածանօթ առասպելախօս է: Նա մի Անգլիացի քաղաքաղէտի հաղորդած էր այլ և

*) The Daily News յունուար 12, 1895 թ.:

այլ տեղեկութիւններ Բամիրի մասին, զոր իբր թէ անձամբ տեսած էր, բայց երբ հարցուփորձ եղաւ՝ հասկցուեցաւ որ երբէք չէր մօտեցած այն կողմերը: Նոյնչափ անտարակուսելի է որ նա Սասուն ալ չէ գնացած, ուր կը գտնուի եղեր, իր խօսքին նայելով՝ «Ենթադրեալ» անգթութիւններուն գործուած ատենը: Եւ տակաւին այս մարդու վկայութեան հաւատալով է որ մի քանի փութաջան անձինք Դորի թերթերը կ'ողողեն իրենց նամակներով և խժդժութիւնները իրեւ ամենախոշոր խարերայութիւն կը ներկայացնեն *»:

Այսպէս, եթէ Հասարակաց կարծիքը մոլորեցնելու ջանքերն անյաջող կը մնային, ազատ և ուղիղ քննութեան դէմ Դրան յարուցած գժուարութիւններն ալ ընդհանուր զայրոյթ կը պատճառէին: Բազմաթիւ են այս իմաստով արտայայտուած խիստ դիտողութիւնները, որոնց մէջ նշանակելի է Սուանդարաբի կ. Պոլսոյ թղթակցին այս հեռագիրը:

«Օօրաւոր պատճառ կայ Հաւատալու որ Դրան բոլոր ջանքըն այժմ կեդրոնացած է մի կէտի վրայ, որ է հերքողական վրձուագիր ձեռք բերել Սասունի քննութեան մէջ: Եմնավստահելի աղքիւրէ լածիս նայելով, այս նպատակի համար իր ծառայութիւնը նուիրած է Գեր. Ազարեան, հայ կաթոլիկներու պատրիարքը, որ Ծիւրքիոյ մայրաքաղաքին մէջ կը վայելէ ամեն բան, ի բաց առեալ բարի համբաւ: Կա հրահանգ պիտի տայ իր Մշոյ փոխանորդին, որ իր ժողովրդին յանձնարարէ թիւրք իշխանութեան նպաստաւոր վկայութիւն տալ Քննիչ Յանձնաժողովին առջև: Որովհետեւ ասոնք կը պատկանին միւնոյն ցեղին և արտաքուստ կը նմանին ուղղադաւան (օրթօսօքս) հայերուն—այն հայերուն՝ որո՞նք միայն Ենթարկուեցան կոտորածին՝ կը կարծուի թէ օտար պատուիրակներն այս դարձուածքէ պիտի խարուին: Կաթոլիկ հայերու կողմէ այսպիսի ընթացք մը տարօրինակ կը ժոււի Տրիտանական ժողովրդին, բայց Արևելքի մէջ բնակած ու է անձի յայտնի է այն Խրամը որ կը բաժնէ հայ ընտանեաց երկու Ճիւղերը, և պատուիրակները պէտք է հրահանգ ստանան, որ խնամքով քննեն կաթոլիկ հայերու վկայութիւնը: Արդէն, Յանձնախմբին այցելութենէն առաջ պատրաստութիւն տեսնուած է և կատարուած սոսկալի ան-

*) The Western Mercury, Plymouth, յունիսար 14, 1895 թ.:

գթութեանց ուղղակաւան քրիստոնեայ ականատեսները նենդաւոր իշխանութեան ձեռօք այդ երկրէն փոխադրուած են պետութեան ուրիշ կողմերը: »*

Կաթոլիկ Հայոց Պատրիարքն, իր ստանձնած այս ան որակելի ծառայութեամբ, որմէ անջատ չէր Սուլթանին կողմէ Պապին ուղղուած դիմումն ալ—պետութեանց պահանջումները մեղմացնելու խնդրանօք—թանձր խաւարի մէջ մնաց երբ Հայոց նորընտիր պատրիարքին ոգեսոր շըրջանը ծագեցաւ: Իզմիրեան Սրբազն իր պայծանառորդ ուխտով, և ազգային իրաւանց բռնաբարման և Հայոց հարստահարման դէմ բարձրացուցած բողոքով ոչ միայն փարատեց Ճշմարտութիւնը խափանել փորձող ամպերը այլ և եւրոպական դիւանագիտութեան ընծայեց մի բարոյական զօրաւոր յեցակէտ՝ բարենորոգմանց անմիջական պէտքին վրայ պնդելու համար: Հաւանական է որ Իզմիրեան Սրբազնի ընթացքն իր արգեանց չափով դատուի: Բայց տարակոյս չկայ թէ Անոր անձնադիր և անվեհեր նկարագիրը, որ արգարե «երկաթեայ պատրիարք» կոչման անարժան չէ, հիանալի տպաւորութիւն գործեց Սրեւմտեան աշխարհին մէջ: Էտո օրաթերթն, յունուար 24-ին, հետևեալ խորհրդածութիւնը կ'ընէր այս մասին:

«Կը յուսանք թէ» կըսէր, «Քաղաքակիրթ Եւրոպա իր գնահատութիւնը պիտի ընծայէ Հայոց նորընտիր Պատրիարք Ամեն. Իզմիրեանի աներկիւղ ընթացքին նկատմամբ: Մեր կենդանի յիշողութեան շըջանին մէջ առաջին անգամն է որ Հայ եկեղեցւոյ պետը, յանձին Ամեն. Իզմիրեանի, իր պարտականութիւնը լրջօրէն կը ստանձնէ: «Եորա ընտրութենէն առաջ, գեռ երէկ, Պոլսոյ պատրիարքն մի արձանագլուխ էր՝ աւելի քան թէ պատասխանատու պետական մարդ: Այդ Աթոռի նախորդ պաշտօնակալներուն կողմէ մատուցուած ուղերձներն ու խնդրագիրները յաճախ այն ոճն ունէին ինչ որ պիտի ունենային հլու փաշաներու խմբագրածները: Շատ բան կրնար ըսուիլ պատրիարքները չքմեղ հանելու: Անոնք, Պոլսոյ մէջ Սուլթանի ձեռաց շատ մօտիկ էին. համարձակ խօսելու համար հարկ էր որ ունենային շատ աւելի բարոյական քաջութիւն

*) Տե՛ս The Standard յունուար 9, 1895 թ.: •

քան զոր կարելի է նմանօրինակ պարագայից մէջ ակնկալել շատ
մը մարդոցմէ: Ի՞այց Խղմիրլեան պատրիարքը փոխեց բաղաքավար-
րական հին ձևակերպութիւնները: «Վախ, Առւլթանին ուղղուած
ճառին մէջ զանց ըրաւ այլ և այլ նշանակելի բառեր, և յայտնի
ակնարկութիւններ ըրաւ իր անձնական պատասխանատուութեան
մասին: Այժմ նա մի նոր բայլ կ'առնէ և կը ծանուցանէ թէ Հայ-
աստանի մէջ իր կողմէ քննութիւն կատարելու մտադիր է: Վրիա-
կան բան է այս: Ի՞այց ի՞նչպէս պիտի կատարուի: Կը հիանանք այդ
ոգւոյն վրայ, բայց լաւ չենք գիտեր թէ մտադրութիւնն ի՞նչպէս
պիտի գործադրուի: Եթէ պետութիւնները չերաշխաւորեն Պատ-
րիարքի քննիչներուն ապահովութիւնը, անոնք յարձակում պիտի
կրեն թիւրք պաշտօնեաններէն: Մինչդեռ, եթէ անոնք ապահովու-
թիւն երաշխաւորէին՝ արդէն իրենք ալ կրնային իրենց կողմէ Միա-
ցեալ Յանձնաժողով նշանակել—բան մը զոր առաջին քայլէն իսկ
ընելու էին: Սուլթանին Յանձնաժողովը բան մ'ըրած չունի. բայց
ամեն հնարաւոր միջոց ձեռք առած է՝ արսորով, բանտարկութեամբ
կամ սպանութեամբ ի բաց վտարելու ամեն հայ վկայ որ կոտորա-
ծի մասին ճշմարտութիւնը պիտի խօսէր:»

Ինչպէս յայտնի է, քննութիւն կատարելու մասին Ա.
Պատրիարքի զիմումն ապարդիւն եղաւ: Նոյնպէս ապարդիւն
եղած էին Սնզլիական թղթակիցներու զիմումները: Դուռը,
երբեմն քոլէրայի ծագում պատրուակելով և երբեմն թրքա-
կան Յանձնախմբին անկախ գրածունէութիւնն ապահովելու
պատժառանքով բացարձակօրէն արգիլեց թղթակիցներու հայ-
աստան մուտքը:

Թղթակիցներու արգիլումը բաւական եղաւ շրջելու այն
մտքերն ալ որոնք տակաւին չեզոք մնալ կը սիրէին: Եւ թայնը
որ գէթ իրեն համար կը յուսար Սուլթանին բացառիկ թղյլ-
տուութիւնը, վերջապէս յուսահատած մի հուժկու հարուած
կուտար թիւրքասէրներու հնարած շինուածներուն:

«Ճիւրք կառավարութիւնը», կը սէր, «տակաւին կոյր մնալով,
չը տեսներ կարեւորութիւնը այն անկախ քննութեան, որով միայն
գոհացում կը ստանայ Եւրոպայի հանրային կարծիքը...: Մենք ո՛ւ և
է կանխահաս վճուի ձայնակից չեղանք—մինչև իսկ՝ երբ յայտնուած
իրողութիւնք կասկածելի հանգամանք ունեին: Ընդհակառակն, ա-

մեն ձիգ դործեցինք, ըստ ոմանց թերեւս չափէն աւելի խղճմառութեամբ, որպէս զի դատաստան և վճիռ յետաձգուին, մինչեւ որ անթերի և գոհացուցիչ քննութիւն մը կատարուի...: Ճշմարտութիւնն իմանալու համար մեր արած ջանքերուն դէմ թիւրք կառավարութեան քօղարկիչ ընթացքը՝ Յանձնախմբին արդիւնքը իրական նշանակութենէ և կարեւորութենէ զուրկ կը թողու:»

Պահպանողական կուսակցութեան և բովանդակ Բրիտանիոյ առաջնակարգ թերթին այս տողերը ամեն կողմ կրկնուեցան և շեշտուեցան. Թերահաւատներն ալ համոզուեցան թէ Սասունի կոտորածը ոչ միայն ստոյգ էր, այլ և մի կազմակերպեալ գրութեան ծնունդը: Հայաստանի աղէտները իրական գոյներով կը պարզուէին այլ ես, և միթինկներու մէջ խորին ուշադրութեան կ'առնուէին ապ. ծ. Պրայսի վեց տարի առաջ արտասանած այս բառերը:

«Թիւրք կառավարութեան ամբողջ քաղաքականութիւնը հաւատալ կուտայ թէ, իրօք կը դործադրէ այն սկզբունքը զոր մի քանի տարի առաջ արտայայտած է մի օսմաննեան նախարարապետ (Սահտ փաշա), ըսելով թէ, Հայկական խնդիրը Աւրացնելու մէջոցն է՝ Հայերը Աւրացնելու:»

Բ.

Փետրուարի առաջին շաբթուն՝ Սնղլիական խորհրդարանի նոր տարեշրջանը կը բացուէր: Հայկական խոդիրն ալ նոր շրջանի կը մտնէր: Սասունի դէպքերը անվիճելի վաւերականութիւն կը ստանային թագուհւոյ ճառին մէջ, որ հետեւեալ յայտարարութիւնը կը պարունակէր:

«Փուր Ասիոյ մի նահանջէն մէջ հանուառուր իամ անհանոն Ակ-ը+ զօր+երու- յեր+ուլ Հայոց Վրայ Գործուած Ճայրայեղու-Ակ-աներու- նկարձաճ Կառաւալարու-Ակ-ան սուսացած արեղիւածէներուն համշար, ինչ պարու+ համարեց ու-ըէլ աւելու-Ակ-անց հետ համայական-Ակ-աճէ աղլուրաց-Ակ-աներ ու-ղւէլ Բարձրագոյն Դրան: Սու-Ականը յայ- դարձնէց Ակ ինչ յօժար է պատրժել եր պըրաբանակէն մէջ գործուող ու և է սպայ իամ պէնուր, որ այդպէսէ Գործերուն յանցանց եղած է, և մի Յանցնաժողովը Երից ու բուռ արդույն Վրայ գնու-Ակ-

իսովացէ: Կարդառյ մէջ հիւպապոս ունեցող աւերտ-ի-
րակները ի՞ո՞ղէցին այդ Յանյնաժողովնեան:

Գահածառին վրայ ընդգիրմազիր կուսակցութեան առաջ-
նորդին տեսութեանց պատասխանելով՝ Նախարարապետը այս-
պէս պարզեց իր և իր պաշտօնակիցներուն ուղղութեան ողին:

«... Հարկ չկաց ըսելու թէ անկեղծօրէն կը համաձայնիմ արտաքին աշխարհա-
վարութեան նկատմամբ գերազին մարդիկին տեսութեանց ոգւյն Արքեմ իրաւունք
պիտի տայ ինձ ըսելու թէ երբ ընդգիրմազիր էի, իրմէ ոչ նուազ լուակաց և զգոց կը
մայի, և եթէ ինք կզգայ թէ Հայաստանի խնդրոյն նկատմամբ լուութիւն անհրա-
ժեշտ է, որչոնք առաւել այդ պատասխանատութիւն պէտք է ծանրանայ իմ վրայ,
որ կը խօսիմ այս երկրի կառավարութեան ամսունուլ Ի՞նչ որ պիտի ըսե՛, այս է որ
այս խնդրոյ մէջ կրցանք գործել սրտադին հաւանութեամբն այն մեծ պետութեանց
որոնք ամենէն աւելի անմիջական շահ ունին—Խուսիոյ, Փռանսիոյ և Խոտալիոյ: Այս
պետութիւններ, իմ կարծեօք՝ անկեղծ փափագով աշխատեցան որ Եւրոպայի կարծեաց
լիակատար ցիցը գործածուի այս տիտոր տարանցութեանց ճշմարութիւնը երի-
ւան երելու, և թէպէտ Պուռալ ըլնդունեց Խոտալիոյ գործակցութիւնը Կարնոյ մէջ
հիւպառոս չունենալուն համար՝ կը կարծեմ թէ ներկայացուցիչ ունեցող երկր պետու-
թիւնները Քնիչ յանձնաժողովին վրայ այնպիսի արթնութեամբ և զօրութիւնմբ
պիտի կարողանան հակելու՝ որ այդ յանձնաժողովը մերժապէս ճշմարտութիւնը ի լցո
պիտի հանէ: Եթէ եղած տարածայնութիւններն սասոյդ են, սախն՝ մեր ամենավերը ցա-
ւակցութիւնը պէտք է ուղղուին Փոքր Ասիոյ մեր քրիստոնեաց հաւատակիցներուն,
որոնք մօտերս այդ անհկարագրելի տառապանաց նեթարկուած են. և երկրորդ՝ իթէ
ատոնք Շեշտ Ենին—և կը ցանկայի որ կարենայի ըսել թէ ձեռքք ունիմ ուկից պաշ-
տօնական աղեկելութիւն զանոնք հերքել կարենալու համար,—կարելի չէ որ այդ Քիս-
տոնէից վիճակը մնայ այժմեան կացութեան մէջ որովհետեւ, հակառակ պարագային
անշուշտ պիտի ենթարկուին այնպիսի վրեժինդրութեան, որ առաջինէն աւելի վատ
վիճակի պիտի հասնին»:

Անզլիսկան կառավարութեան կողմէ Հայկական խնդրոյ
մասին ձեռք առնուած ամեն միջոցները և կատարուած բա-
նակցութիւնները գիտնալ չէ արուած մեզ, սակայն Գահա-
ծառին բառերը և նախարարապետին յայտարարութիւնը,
անշուշտ մեծապէս ներգործեցին ամբողջ քաղաքական
աշխարհին և քաղաքակիրթ ընկերութեան վրայ:

Եւ սակայն, Անզլիսկ մէջ մօտայուղութիւնը չէր պակ-
սէր. բազմաթիւ հարցումներ կային, որոնց պատասխանը
հետաքրքրութեամբ կը սպասուիր: Քննիչ Յանձնաժողովին
յամրաշարժ աշխատութեանց անորոշ և անվստահելի ար-
դիւնքը սպասել երկար ժամանակ և մեծ համբերութիւն
կը պահանջէր: Ի՞նչ էր կոտորածին բուն շարժառիթը, որ-
չափ հողիներ զոհուած էին, ով է պատասխանատուն, ի՞նչ

աստիճանի յանցաւոր էին հայերը: Հասարակութիւնը զիտէր որ կառավարութիւնն ամեն բանէ տեղեակ է, և յաջորդական միթինկներով կը պահանջէր որ այլ ևս հրատարակուին թիւրքից վերաբերող Կապոյթ Տէրբանչէր (Blue Books), որոնք 1890 թուականէն ի վեր պահուած կը մնային: Կապոյթ Տեսրակներու շնորհիւ հայաստանի և ամբողջ Տաճկաստանի մասին ստացուած հիւպատոսական տեղեկագիրները լոյս պիտի տեսնէին: Թէև կոտորածի ստուգութեան մասին ոչ ոք կը կասկածէր այլ ևս, բայց կառավարութեան ընդդիմադիր խումբը՝ հայոց արդար դատին նպաստաւոր ոգի ցոյց չէր տար և լորտ Սոլզպրի, իր լեզուէն դատելով, մասնաւոր կարեորութիւն կ'ընծայէր այն հրատարակութեանց՝ որոնք հայերը ամբաստանելու բնութիւն ունէին: Այս կարգի հրատարակութեանց մին էր, Բէյնը Շէ թղթակցին իրը և թէ Տփղիսէն հաղորդած երկար տեղեկագիրը, որ Գահաճառի ընթերցման նախընթաց օրը տեսնուեցաւ բոլոր թերթերու մէջ և որ հետեւալ տողերը կը պարունակէր:

«Իմ քննութենէս կը հասկնամ որ Թիւրքերն ալ յանցաւոր են հայերն ալ բայց մեղսպարոններուն պատիժը անմեղերը կրած են... Հայաստանի մէջ կայ զօրաւոր յեղափոխական շարժում և այս շարժման պարագլուխներէն ոմանց մէթուները նուռազ սարսափէլ չեն քան այն բարբարոսութիւնները՝ զօրս Թիւրքը կը գործէ զիրենք զապէլու համար:

.. Կարճ խօսքով, անոնց ծրագիրն է՝ խժդժութիւններ գործէլ Թիւրքերու վրայ, որպէս զի Թիւրքական կատաղի վրէժինդրութիւններ՝ Քրիստոնեայ աշխարհը ցնցուի...: Կը պատմեն թէ... Հայերը Թիւրք այրերու և կիներու ողջ մարմններուն մէջ հրացանի փամփուշտ միւնքլ պայթեցուցած են, ուրիշ անդամ մի մարդու լանջուկը ին վարի կողմէն ծակ բացած և մէջը գառօտ լցնելով կրակ տուած են...:»

Զը նայելով որ բննութեան և ստուգութեան կը կարօտէին այս պատմութիւնները, թէ Թիւրքասէրներու խմբակը և թէ հակա-նախարարական թերթերը խիստ զիտողութիւններ ըրին հայոց դէմ: Տէյլի թէլէյտ, Բէյնը վերցիշեալ թղթակցութեան առթիւ այսպէս կը վժռէր:

«... Գոնէ այն միսիթարութիւնն ալ չունինք, որ մեղքը մէկ կամ միւս կողմին վրայ առելի ծանրացնենք: Երկուքն ալ հաւասարապէս յանցաւոր կ'երեկին՝ ուղղութեան, բարոյականութեան և քաղաքակրթութեան ամեն կանոնաց գէմ մեղանչած լինելով և ոչ ինչ համարած են կառավարութեան և կարդ կանոնի սկզբունքն ու տարերքը...: Եթէ ենթադրենք որ թիւրքերը, ապստամբութեան նմանող ամեն բան արիւնաներէ և գաղանացին ձեռքով կը զսպէն, մինչդեռ հայերն ալ չեն վարանիր ան-

գթութիւններ գործելէ որպէս զի թրքաց անխոռսելի վրէժիւնդրութիւններն արևմբան ազգաց ուշադրութիւնը գրաւեն, և այսպէս, մէկ հարուածով, թէ՛ իրենց հարստահարիչները պատճենին և թէ՛ իրենց անկախութիւնը հաստատուի՝ այն առեն չենք կրնար մէկ շեղի տարբերութիւն գնել իրենց յանցանքներու աստիճանին մջ, և ոչ աւ երկնացին վրէժիւնդրութիւնը մէկ կողմէն աւելի միւս կողմին վրայ հրաւիրել...»

Այսուամենայնիւ, ձշմարտութիւնն, թէկ դանդաղ բայց վերջ ի վերջը յայտնուեցաւ պայծառ կերպով. նոյն իսկ Տէյլէ Թէլէլլաֆի էր որ իր զիտնական և աննկուն պատուիրակին, Տոքդոր Տիլլոնի (Dr. E. J. Dillon) մանրապատում զեռազիրներով և նամակներով, փետր. 27-էն մինչև մայիս 23, դրեթէ անընդհատ շարժեց, սորսեց համայն Եւրոպայի և Ամերիկայի խիզճը և կենդանի դոյնով նկարագրեց Թրքաչայոց անտանելի տառապանաց պատկերը: Լրագրական ապարէզին պարձանք այդ եղական թղթակիցը, հայաստանի խորեղէն աղաղակեց թէ, «Թրքաց պատմութեան մջ Սասունի սրածութիւնը պիտի դասուի Պուլկարիոյ, Լիբանանի և Դամասկոսի ախրահռչակ կոտորածներուն կարգը» և թէ, «3000 էն մինչև 10000 հայ քրիստոնեայ ջարդուած են, ամենայն պազարիւնութեամբ»*:

Տէյլէ Թէլէլլաֆի յետոյ, իրենց յատուկ թղթակիցներու մեծարժէք տեղեկագիրները հրատարակեցին նուև Տէյլի Նէպայնը թայիշը Տէյլի կրաֆիտ և դաւառական մի քանի մէծ թերթեր:

Թրքական հայաջինը քաղաքականութիւնը գաղտնիք չէր հիմա, ոչ ալ Սասունի սրածութեան պատճառը: Կը թնար, սակայն, զիտնալ թէ ի՞նչ պիտի լինէր: Ի՞նչ կերպով պիտի լուծուէր այս խնդիրը, որ միշտ կը նկատուէր փափուկ, դժուարալոյծ, կնճռու: Կը լսուէր թէ Խուսական, Անգլիական և Ֆրանսական կառավարութիւնը հայաստանի բարենորոգմանց մի ծրագիր կը պատրաստեն: Բայց քանի որ Պերլինի վեհաժողովն յետոյ Դրան վրայ դործուած դիւնագիտական ազգու ձնշումները, մինչև անդամ 1880 թուականին վեց պետութեանց թէ՛ համիմաստ և թէ՛ հաւաքական ծանուցագիրները ապարդիւն մնացած էին, ի՞նչ վստա-

*) Տես, Daily Telegraph, Մարտ 5, 1895.

Հութիւն կար որ այս անգամ, երեք պետութեանց առաջարկները գործնական հետևանք պիտի ունենային: Անզլիոյ պետական անձինք վստահ կ'երեային Ռուսիոյ և Ֆրանսացի անկեղծ գործակցութեան մասին: Վեհ, Նիքոլա Բ. կայսեր գահակալութեամբ սկսած Անզլօ-Ռուսական համաձայնութիւնը մանաւանդ, յայտնի զրաւական կը համարուէր հայկական ինքոյ նպաստաւոր լուծման, բայց այս տիեզեալութեանց հորիզոնն ալ միշտ պայծառ չէր մար, և գէպքերու յամրաքայլ ընթացքը, ռուսական մամլոյն մէջ երեցած պատահական դժկամակութիւնները և Զինա-Ճարոնական պատերազմին հաւանականութիւնները, ամենավատ տպաւորութիւն կը գործէին հայոց և հայասիրաց վրայ: Մի նշանաւոր ռուս տիկին, Օլկա Նօվիքով, ամիսներ առաջ այսպէս խօսած էր Սասունի կոտորածին առթիւ:

«... Անզլիա երեք կերպով պատասխանառու է: Նա ջնջեց Սան Ստեֆանոյի դաշնագրով ձեռք բերուած ռուսական երաշխաւորութիւնը: Նա ստեղծեց Պերլինի դաշնագրին «Հսկողութեան» տնարժէք յօդուածը, և յետոյ՝ թիւրքին վրայ աղբողական ճնշում գործելու ամեն հնարաւորութիւն արգիլելու համար կնքեց Կիպրոսի այն պայմանագիրը, որ Սուլթանին Սախական տիրապետութեան վրայ մի ապօրէն թեարկութիւն (protectorat) հաստատեց: Այդ քաղաքականութեան պառուղը կը տեսնէք Սասունի մէջ: Մինչեւ ե՞րբ պիտի թողուք որ այդ բան շարունակուի: Սախական պաշտօնագրեր և բարեկամական հրահանգներ կամ խրաններ որչափ ալ ուղղուին՝ դարձեալ չը բարեփոխուիր հայոց վիճակը: Դիտողութիւնք անօգուտ են: Գործ պէտք է: Բայց ովկ կրնայ գործել: Ռուսիայէ զատ ոչ մէկ պետութիւն կրնայ դրաւել և կառավարել հայաստանը: Դժբաղդաբար այսչափ դժուար և ապաշնորհ մի գործի ձեռնարկելու համար նա ոչ փափագ ունի այժմ և ոչ պարտականութիւն: Բայց, եթէ նա ընէ ովկ պիտի ընէ: Ես անդեակ չեմ մեր Արտաքին դործոց նախարարութեան գաղտնիքներուն, և Բէջնչը հեռագրին նայելով՝ արգէն որոշուած է չը միջամտել: Թերեւս ստոյդ է այս: Այսուհանգերձ

ինձ կը թուի որ, եթէ բոլոր մէծ պետութիւնը ստիպեն Ռուսիան որ Եւրոպայի ուղղակի փոխանորդը լինի՝ թերեւ մի անգամ ևս գործէ իբրև վեհանձն պաշտպան մի քրիստոնեայ ազգի, բայց այս անգամ՝ առանց վտանգելու Եւրոպական Համերաշխութիւնը *)»:

Նատ բնական է որ Տիկին Նօվիքոֆ բազմաթիւ դաշտարակիցներ ունենար Ռուսիոյ մէջ, և որովհետեւ Եւրոպայի կամ միայն Անգլիոյ կողմէն մի արմատական գործողութեան առաջարկ չէր տեսնուէր՝ Հայկական խնդրոյ մասին ԱնգլօՌուսական գործակցութիւններ ալ կասկածանօք կը դիտուէր։ Պակաս չին նաև աւելի վրդովեւ յայտնութիւններ։ Բէլ Մէլ Կապէտ, Հայոց ուխտեալ Հակառակորդը, կըսէր, «եթէ մի մարդ կայ որ Քննիչ Յանձնաժողովը ապարդիւն թողուց, նա ալ պ. տը Նէլիտովն է. :

Փ.

Բայց, Հայկական գործիչները չին դադրէր։ Աղօթարանաց բեմերէն, օրագրաց սիւնակներէն և միթինկներու սրահներէն՝ Հասարակային կարծիքը մղում կը ստանար, որպէս զի այնչափ զօրանայ և սաստկանայ, որ Անգլիական կառավարութիւնը գործեւը ստիպէ։ Միևնույն ժամանակ մի պատգամաւորութիւն, Անգլօ-Հայկական ընկերութեան Ատենապետին առաջնորդութեամբ և քաղաքական ու կրօնական տարբեր գասերէ պատուաւոր անձանց մասնակցութեամբ՝ մարտ 29-ին կը ներկայանար Արտաքին գործոց նախարարին։ Պատուիրակութեան նպատակն էր խնդրել կառավարութենէն, որ սոսկ Սասունի կոտորածին քննութեամբ չը բաւականանայ, այլ գործադրել տայ այն բարենորոգութեամբ՝ զորս Դուռը խոստացած էր Պերլինի գաշնադրով։ Պատգամաւորութիւնը բարենորոգութեամբ մասին հետեւեալ խնդր ները կը ներկայացնէր։

*) The Westminster Gazette, գեկտ. 12, 1894.

*) Տես Pall Mall Gazette, գետր. 5, 1895, «Tigranes Ariobarzanes, M. P.»
Խորագրին ներքեւ

Ա. — « Ի հայկական նահանգաց համար նշանակութիւն մէ իստու-
լունիւ Ե-ընդունական հսկողութեան ներքեւ:

Բ. — « Ո վրանաբնակ է ի-ըրտերը Ե-ընդունական հարժապահութեան
Ենթարկութիւն:

Գ. — « Ե-ըրտացներէ և ուշացներէ բառի ասցած մէ խառն-
սագիւնութեան (Gendarmerie) հազնութիւն:

Դ. — « Դաստական դրութեանը բարձեփոխութիւն:

Լորտ Քիմալրթիի պատասխանը, որուն կը սպասէր ամ-
բողջ Անգղիական ժողովը մեծ հետաքրքրութեամբ՝ կը ներ-
կայացնենք այստեղ իր յատուկ կարեորութեան համար:

« Ձերմապէս կը համակրիմ ձեզ թէե դիրքս չը ներեր
մանրամասնութեանց մտնելու: Ամենքդ ալ տեղեակ էք իրաց
կացութեան. հաւատացէք որ իմ հայրենակիցներուն հետ
միենոյն զգացումները կը տածեմ: Խիստ լելու չեմ գործածեր,
անոր համար որ զիրքս մեծ դժուարութիւններով և պա-
տասխանատուութեամբ պաշարուած է և կարծիք արտա-
յայտելու մասին վերին աստիճանի խնամք և զգուշութիւն
կը պահանջէ:

« Նախ, Սասունի խնդրոյն մասին, կրնամ ըսել թէ ամեն
Հնարաւոր ջանք կատարուած է, կը կատարուի և պիտի կա-
տարուի որ քննութիւնը լիակատար լինի, թէե, շատ դիւ-
րին բան չէ այդ: Ֆրանսական և Ռուսական պատուիրակաց
ներկայութեամբ, այդ քննութիւնը, կարելի եղածին չափ եւ-
րոպական հսկողութիւն կը նշանակէ.... Անշուշտ, յանցաւոր-
ներու պատժոյն խնդիրը չը կրնար մոռցուիլ բայց բուն խըն-
դիրն այն է որ այդ դէպքերու կրկնումը կարելի չըլլայ և
պարագայից ներածին չափ մի տեսական գարման լինի: Այս
առթիւ ուրախ եմ որ մեր գեսպան Սըր Ֆիլիպ Քըրի, որու
գործունէութիւնն ամեն գովեստէ վեր է, զիս կրվստահացնէ
թէ իր ուրսական և ֆրանսական պաշտօնակիցներն ալ լիո-
վին համամիտ են բարենորոգման պէտքի մասին: Այս կէտը
յոյժ կարեոր է և ապահով եմ թէ երբ ժամանակը զայ
պիտի տեսնուի որ անոնք մեզի ջերմ և անկեղծ աջակցու-
թիւն պիտի նուիրեն:

«... Խոսվիրը առենամեծ դժուարութիւններ ունի: Ամենէն առաջ Հայաստան ըսելով պէտք չէ հասկնանք մի երկիր, ուր Հայեր միայն կը բնակին: Ասիական Թիւրքիան ունի մի մաս, որ Հայաստան կը կոչուի, ուր բազմաթիւ Հայեր Համախմբուած են. բայց այն տեղ մեծ թուով մաշմետականներ ալ կան: Ասկէ զատ, ամբողջ Թիւրքիոյ մէջ ցրուած հայ ժողովներդ կայ, որոնց վիճակն ալ նկատողութիւն կը պահանջէ: Եյս խնդրոյն ծայրագոյն դժուարութիւնը յայտնի է անով որ մի քանի տարի առաջ միևնոյն նպատակով ներկայացուած միացեալ ազդարարութիւնն ապարդիւն մնաց: Ուշ գրէք նաև, որ այս ամբողջ խնդրոյն խորը մի ծանրակշիռ, դժուարալցծ և վտանգաւոր քաղաքական հարց կը պահուի: Ուրախ եմ որ գուք Արեելեան հարցը յարուցանելու փափագ չէք սնուցաներ: Եյդ է լուծուելիք զիսաւոր հարցերէն մին, — ի՞նչպէս ձեռք բերենք մեր փափագածը՝ առանց յարուցանելու Արեելեան հարցը: Նաև, պէտք է զիտնալ որ մեր նպատակին հասնելու համար՝ Անզլեոյ առանձնակի գործողութենէն աւելի բանի պէտք կայ: Ուրիշ պետութիւններ ալ կան որ այս խնդրոյ մէջ խորապէս կը շահագրգռուին և անոնց անսութիւնները, կարծիքները և գործողութիւնները վերին աստիճանի կարեռութիւն ունին ձեռնարկելի միջոցներու համար: Թիւրքիոյ քրիստոնէից բարեկեցութեան ցանկացողները ջերմ խնդակցութեան արժանի են անոր համար, որ խնդրոյն մէջ անմիջական շահ ունեցող երկու պետութեանց — ֆրանսայի և Ռուսիոյ անկեղծ և սրատագին գործակցութիւնը կը վայելին այս պարագայի մէջ: Երբեմն ֆրանսա գործակից գանուած էր Անզլեոյ հետ և թէպէտ Ռուսիոյ գործակցութեան բազրը միշտ չենք վայելած, յոյժ կարեոր և ուրախափիթ է որ այժմ, այս խնդրոյ մէջ, Ռուսիա ևս յօժարակամ է միանալու: Հաստատապէս համոզուած եմ, թէ ուսւ կառավարութիւնն ալ մեղի չափ կը նդունի որ իրաց այս վիճակին շարունակումը բացարձակապէս վտանգաւոր է և մեղի չափ կը փափաղի որ աղյու դարմաններ գործուին: Քանի որ ապահով ենք այսպիսի գործակցութեան

վըսյ, մեր ոյժը կ'եռապատկի, և անհրաժեշտ է սցնալէս վարուիլ որ գործակցութեամբ մի կորուստ ալ չունենանք: Մինչև հիմա, այսպիսի կորուստի երկիւղ չունեցայ: Ընդհակառակն, այդ երկու պետութիւններէ ստացած թղթակցութիւններս շատ քաջալերական են: Սրտակցութիւնը պակաս չէ նաև Պերլինի գաշնազրին մասնակցող միւս պետութեանց կողմէն և երբ ժամանակը հասնի՝ կը հաւատամ թէ ոչ իտուլիա և ոչ Գերմանիա չպիտի թերանան անհրաժեշտ համարուած ինչ և իցէ միջոցի գործադրութեան մէջ: Մէկդի կը թողում այն ինդիրը թէ հիւպատոսական տեղեկագիրներուասկէ առաջ հրատարակումը պատշաճ էր թէ ոչ բայց հիմա, անկարելի և վնասակար կը նկատեմ անոնց հրատարակութիւր, մինչդեռ զիւտանագիտական բանակցութիւնք կը շարունակուին: Քանի որ հասարակոց կարծիքն այսչափ յուղուած է, կառավարութեան ձեռքը բաւական զօրաւոր է արդէն և այդ տեղեկագիրներու հրատարակումն զօյանալիք ժողովրդային քաջալերութեան հարկ չկայ: Վստահ եղէք որ կառավարութիւնը առաջարկելի ամենալաւ դարմաններ նկատողութեան պիտի առնէ և երբ գործի ատենը գայ չպիտի թերանայ: Բնական է որ այս յապաղումը մտահոգութիւն պատճառէ, բայց երբ առջենիս ունինք մի ամենակնձռոտ իննիր, որ իրարույաջորդող ամեն նախարարութեանց ձիգերը ապարդիւն թողած է, անհաւանական է որ կառարեալ և անթերի լուծում գտնէ՝ թէ որ ծայրագոյն զգուշութեամք չը գործուի: Բայց, այս ըսել չէ թէ մի բան արած չունինք. որովհետեւ ինգիրն այնպիսի գիրքի մէջ է որ կառավարութիւնն այժմ անդառնալի կերպով ստանձնած է մի բան ընել և մինչեւ վերջը հետապնդել կը փափագիմ՝ ազդուապէս հերքել որ ձեր ընկերութեան կամ կառավարութեան առաջարած գործողութիւնը Սուլթանին գէմ թշնամական ոգի ունեցած լինի, որովհետեւ այդ վեհապետին և իր կառավարութեան շահուն, ինչպէս և Օսմանեան պետութեան տեսականութեան համար է որ իրաց արդի կացութեան գէմ անթերի դարման տանիլ հարկ է: Իմհաւատքս այն է որ եթէ հայ ժողովուրդը բարւոք

և արդար եղանակով կառավարուի, Սուլթանը պիտի տեսնէ որ զի՞նք շրջապատող հպատակները ոչ թէ թշնամիներ այլ անկեղծ պաշտպաններ են, և ով որ կը ցանկայ Արևելեան հարցի ըստ ծագիլը՝ պէտք է հանդարտ և պաղարիւն քաղաքականութեան սկզբունքով տեսնէ թէ Սուլթանին և իր կայսրութեան, նոյնպէս Եւրոպական խաղաղութեան շահուն համար պէտք է միջոցներ ձեռք առնուին՝ վերջ տալու այս տեսակ կառավարութեան և եթէ հնար Է՝ իրենց կառավարութեան դէմ դժգոհութեան և անվտանգութեան արդարացի պատճառ ունեցողները մի սրտացոհ ժողովրդի փոխուին։ Արևելեան հարցի ամբողջ առանցքը կը գառնայ՝ Սուլթանի երկրին մի քանի մասերուն դժգոհութեան վրայ, և եթէ մի անգամ այդ դժգոհութիւնը բարձուի կացութեան դժուարութեանց մեծ մասը պիտի պակսի։ Խնդրոյն համար կատարելապէս գոհացուցիչ լուծում պէտք չէ յուսալ բայց ներկայ ժամանակը մասնաւոր կերպով նպաստաւոր է ազգու գործողութեան, քանի որ չկայ մի Եւրոպական պիտութիւն որ այժմ ցանկայ յարուցանել Արևելեան հարցը։ Իրօք, չեմ գիտեր որ շատ ժամանակէ ի վեր պատահած լինի այսպիսի մի առիթ, ուր, իմ տեղս գտնուող մի նախարար, խնդրոյն մէջ ազգեցութիւն և շահ ունեցող պիտութեանց կարծիքներուն մասին ինձ շափ վստահութեամբ խօսէր։»

Պ.

Լորտ Քիմալրուի յուսադրական ազդարարութիւնը գոհունակութեամբ ընդունուեցաւ ամեն կողմէ, թէկ Տէյլէ Թէլէրաֆի կարծեօք «Երէլոք, Շոյլ և անբառական» էր։ Միենոյն ժամանակ ովերութիւնը կը ծաւալէր ժողովրդային ամեն խաւի մէջ, գործնական միջամտութեան ջատազովները կը բազմանային և Անդլիական կառավարութիւնն, որ իր միապետական ձեւին ըստ նայելով երկրագնդիս ամենէն ծայրագոյն ռամլավարութիւնն է, չէր կրնար ժողովրդին զգացումները անտեսել—եթէ մինչև իսկ, իր յայտարարութիւններն անկեղծ ըստ լինէին։

Հասարակային կարծիքը հզօրապէս արտայայրուեցաւ մեծ միթինկին առթիւ, որ գումարուեցաւ մայիս 7-ին։ Նաբաթ-ներէ ի վեր փափադ կար այսպիսի ժողովրդային մի ցոյց կաղ-մակերպելու։ այլ և այլ երկիրներու հայոց կողմէ Անգլօ-հայկական ընկերութեան հասած զրամական նպաստներն աւելի շժ տուին միթինկը կաղմակերպողներուն։ Կրազրական ծանուցումներով և մեծ փողոցներու մէջ շնչարերուած աղ-դարար տախտակներով, հասարակութիւնը կը հրաւիրուեր մասնակցելու։ Միթինկին գումարումը կը ծանուցուեր այս կերպ բացատրութիւններով։ «Կոտորած որինունելից ՚ի Հայաս-տան. Թրքական իշխանութիւնն. Անգլայն բողոք. Սէծ միլինի, որ Սէնդ ճէյմսի որակին մէջ (Saint James's Hall) այսուի գումարուի՝ Տաճ-էաւայսապահէ մէջ հասարած ու տեսային անդիւն-նեանց դէմ բողոք+ե-լու- և Պէրլինի Շառլուադին 61-րդ յօդուածին և Անգլ-Թրքական պայմանագրիւն հարուց։ Մուտքի համար պէտք էր ունենալ տոմսակ, և անոնք որ յատուկ հրաւեր չէին ստացած՝ օթեակներու և աթոռներու տոմսակներուն համար պիտի վճարէին։ Մեծ ցանկութիւն կար որ պ. Կլատողըն նախադահէ այս միթինկին, ինչպէս որ նախադահած էր 19 տարի առաջ միենոյն սրահի մէջ գումարուած միթինկին, որ Պուլկարիոյ ազատութեան պատճառ եղած էր—ըստ Ան-գլիացւոց։ Բայց պ. Կլատողըն յայտնած էր թէ ծերութիւնը կ'արգիլէ այսուհետէ մասնակցիլ հրապարակային գումարում ներու։ Թերեւս ուրիշ պատճառներ ալ կային որ զինք կը զգու-շացնէին հասարակաց ոգեսորութիւնը աւելի զրգուելէ։ Ինչ և իցէ, այս մեծ միթինկին նախադահացից Արկայլի ծերունի դուք-սը, որ հիւանդութիւնէն կատարելապէս առաքինած չը լինե-լուն համար՝ իր ճառն աւարտելէ յետոյ աթոռը թողուց Ուէսկմինստրի գքսին և մեկնեցաւ ծափահարութեանց մէջ։ Սէնդ ճէյմսի միթինկին իրօք Անգլիական—ազգային կերպա-րանք ունէր, որովհետեւ քաղաքական տարբեր կուսակցու-թեանց և կրօնական հակառակ գտաւանութեանց ներկայացու-ցիներ՝ Լոնտոնէն, դաւառներէն, մինչև իսկ Սկովտիայէն յատ-կապէս փութացած էին Հայկական գատին համամառութիւն

և սրտակցութիւն յայտնելու։ Բեմին վրայ կը տեսնուեին՝
եորքի արքեալիսկոպոսը, Ուխնչելսիի կոմսը, Սկովալիոյ եկե-
ղեցւոյն պետը, Մկրտչական միութեան նախագահը, եպիսկո-
պոսներ, քաղաքապեաներ, խորհրդարանի անդամներ, մէծա-
նուն ուսուցչապեաներ, ազնուատոհմ և նշանաւոր տիկին-
ներ, և այլն և այլն։ Աշա այսպէս, մի և նոյն վկայութիւնը
տալու համար եկած էին այնպիսի այլազան գէմքեր՝ որոնք
հաղիւ թէ պիտի համախմբուեին մի ուրիշ սկզբունքի շուր-
ջը։ Այն տեղ մէծահաւատ Աստուածաբանին մօտ կը բաղմէր
ազատախոհ իմաստասէրը, զգուշաւոր պահպանողականին
քով՝ ծայրայեղարմատականը և մէծափարթամլորտին կից՝ սա-
կաւապետ երկցը։ Հայութիւնը կը ներկայացուէր՝ յանձին գեր.
Ս. Պարոնեանի նախագահին աջակողմեան աթոռին վրայ, —
ինչպէս և բրոֆ. Մ. Զերաղի, պ. Ն. Ներսէսեանի և ուրիշ մի
քանի ազգայնոց։ Իսկ ամենէն աւելի ուշազրաւ կերպարանք-
ներն էին, իրենց տեղական նկարագեղ տարագներով Սասուն-
ցի երեք փախստականները, Տալուորիկցի Վարդան, Կէլիկու-
ղանցի Պէտրոս և սորա ամուսինը Անուշ մի թիսաթոյր հա-
մակրելի հարանուէկ, որ ճակտին վերև ոսկիներու շարոց մը
կապած և գլխուն ետև սպիտակ շղարշ մը ձգած կը բաղմէր
դբուհիներու և կոմսուհիներու աթոռակից, — թերեւ ան-
տեղեակ իր կատարած գերի վսեմութեան։ Ի՞նչ աներեակա-
յելի գիպոււած, ի՞նչ խորհրդաւոր անակնկալ։ Տարօնի գաշ-
տաց գեղջուհին՝ Բրիտանեան բամբիչներու խումբին մէջ,
Տալուորիկի հովաաց շուշանը՝ Ալպիոնի ծաղկանց փունջին
մէջ...։

Միթինկին անձամբ մասնակցողներէն զատ, պատկառելի
թիւ կը կազմէին անոնք ալ որը նամակներով և հեռաղիր-
ներով կը յայտնէին իրենց սրտակցութիւնը։ Այս համակիր-
ներու կարդէն էին Բորդլանտի գուքսը, Ֆայֆի գուքսը և
Օրմընտի մարզիզը։ Եւ պ. Կլատաղըն, որուն անուան յիշա-
տակութիւնը և նամակին ամեն պարբերութիւնները որոտա-
գին ծափերով ողջունուեցան, այսպէս կը գրէր։

«Հայոցնի դպրակ, 5 հայիս, 1895.

«Եմ սիրելի Պառքս Արկայլի, —կը յուսամ թէ այն միթինկը որուն վրայ դուք արիաբար ստանձնեցիք նախագահէւլ, իր գումարման պատճառներուն չափ կարեոր արդիւնք պիտի արտադրէ: Դս բոլոր աշխարհի համար խաղաղութիւն և անդորրութիւն կը ցանկամ և կատարելապէս անկեղծ վեշտ կզգամ այժմ—երբ Նայաստանի մէջ կատարուած ամօթալի խժութութեանց մասին կասկած չէ մնացած կ'երկի—տեսնելով, իմ մասին, որ թիւրք կառավարութեան ծայրայեղութիւնը որոշած է գործադրել այն ամեն բան որ իր անկումը կրնայ յառաջ բերել: Տանաւոր կը թուէր յուսալ թէ 1876 թուականին Պուլկարիոյ մէջ կատարուած ոճիրները և անսնց պատճառով՝ Ժակոբիոյ գլխուն եկած յայտնի պատիժը, պիտի կրնային արգիլել Նայաստանի մէջ նմանօրինակ և թերևս աւելի յանդուգն արհաւիրներու կրկնութիւնը: Ամբողջ Խւրոպայի վրայ ծանրացող պարտականութիւնը, որ է, չը վստահիլ սոսկ բառերու, այլ ազգութիջոցներով արգիլել այսպիսի սոսկալի ոճիրներու վերստին կատարումը՝ բառական բացորոշ կը տեսնուի արդէն: Ապահով եմ թէ այս երկիրը չպիտի թերանայ իր պարտականութեան մէջ: Ոստահ եմ նոյնպէս, որ Ֆրանսայի և Ուուսիոյ հաստատ գործակցութիւնը պիտի վայելէ: Եթէ միւս մեծ պետութիւններն անշարժ կը մնան, թերևս, ամենէն աւելի իրենց համար ցաւալի է: Անմուգեր երկար խօսքերով ձանձրացնել զձեզ բայց չեմ կրնար չ'արտայայտել իմ բուռն համակրութիւնն և այն յոյսը թէ, բարոյական միջոցներով, և եթէ անհնար լինի՝ ուրիշ միջոցներով քան երեք, լիակատար ապահովութիւն պիտի ստացուի որ ապագային մէջ Առւլթանն և իր խորհրդականներն այնպիսի ամօթալի միջոցներու չը դիմեն:

Մնան ի՞ն ալբելի Դու-+ա,

Մէլլ Զերու

ՌԻ. Է. ԿԼԱՏՍԴՐԱՆ»

Բազմաթիւ էջեր պէտք պիտի լինէին ևթէ թարգմանուէին այն բանախօսութիւնները, որոնք Արկայլի Դքսին նախագահական կարեւոր ձառէն յետոյ արտասանուեցան այդ գիշեր: Պերճախօսութիւնն, աղատ երկիրներու այդ մեծաղօր ոյժը, կարծես կը թովէր, կը նուածէր բոլոր ունկնդիրներու հոգին: Դիւանագիտական յօդուածներէ շատ բարձր մի զդացում կար, որուն անունով կոչում կը լինէր Մեծին Բրիտանից զաւակներուն և բովանդակ քաղաքական գիրթ ընկերութեան: Մարդկային սրբազնագոյն իրաւանց այս ձարարաբան ջատագովներուն առջև՝ մինչև իսկ Կերբերոս պիտի զսպուէր: Սասունի սրածութեան գէմ ժայթքուած անէծքին տակ՝ բռնութեան ծիւաղային մարմնացումը պիտի հալէր...: Ամբողջ սրահը զգըլսիչ հոսանքով ողողուեցաւ պահ մը, երբ կը խօսէր Լէյտի Հ. Սոմքրսը: Ծնուանի տիկինն այնպիսի հոգէյոյզ բացատրութեամբ ներկայացուց իր Հայաստանցի քոյրերուն բաղդը և անոնց ողջակիզման կենդանի վկայ Անուշը, որ իր բառերը շեշտակի թափ տուին ամեն սրաի խոր ծալքերուն: Արէսեան փողն էր կարծես որ կը հնչէր իր կանացի շրթունքն և պատերազմի հրայրքով կը համակէր Անկլօ-Սոքսոններուն ծանրագրգիռ արիւնը: Եւ այս վայրկնին, մինչ այդ աղատասուն աիրուհին և Սասունի հալածական ամազոնիկը գէմ առ գէմ կանգնած բարձրաշռինդ ծափերով և մեծաղոր կէցցէներով կ'ողջունէին, կարելի՞ էր արդեօք ըլյիշել խնկելի Շաքէն ու իր ընկերուհիները, անմահանուն Գրգօն ու իր քաջերը...:

Շատեր վկայեցին թէ փայլուն յաջողութիւն ունեցաւ Հայկական խնդրոյն մեծ միթինկը: Էստ ոմանց՝ աւելի փայլուն եղած էր Պուլկարական խնդրոյն մեծ միթինկը: Թերեւս: Բայց եթէ Grand Old Man-ը (Մեծ Ծերունին) բաղմած լինէր նախագահական աթոռին վրայ, անհամեմատ աւելի փառաւոր կը լինէր այս անդամ ևս: Եւ եթէ Հայաստանը Եւրոպայի մեջ զտնուէր՝ թերեւս պ. Կլադոտըն չպիտի վարանէր, հակառակ իր ծերութեան, դալ և զոռացնել իր աշեղ ձայնը...:

Հետևեալներն են միթինկի կողմէ միաձայնութեամբ ընդունուած երեք որոշումները, որոնք հաղօրգուեցան նախարարապետին և ուրիշ մի քանի պետական անձերու:

Ա. որոշում: (Երթորոք եղիսկողունի առաջարկածը):

«Այս մինչեւը, առջև առջև առնեալով այն հոգորածը և անոր յարակից իժդժունեները, որոն+ հայաստանի Սասուն գառառացն մէջ ներ+ զօրաց յերածով գործուած են անպաշտպան և անմեղ արտեց, հանանց և աղայոց վրայ՝ այսուեղ ի՞որդայսորէ իր նորին վշարից-նէ-նը՝ այդ շիհերու շնորհանեց համար, ինչպես և իր սաստիկ պարագանէը՝ թրան դէօ, անոր համար որ ճարդինեւան հանոնեները մէջ բանաբարսէ և Պերլինի դաշնադրու, 61-ըդ յօդուածովն ու Անգլ-Թրակիան պայմանագրու իր սպանյնած պարագանեն-նէ-նեները արհամարհած է:»

Բ. որոշում: (Կանոնիկոս Մատ Քուլէ առաջարկածը):

«Այս մինչեւը, յանուան նախարարւու ճարդին-նէան, իր խնդրէ վեհ. Թագուհոյն հարավանդարունենէն, որ դաշնաբարսիան պարագանագունուն-նէանց համեմատ անմիջական գործողուն-նէան յեւնարիէն, որով ու վերջ առ 17 տարիէն ի վեր Տաճկա-հայաստանի մէջ շարժական-ած բարբարուական յուրի հարավանդարունեան և պնդէ այնպիսէ բացուրու բաւարար, և գրեական բարենորդնաց հասին, որոն+ երանական զօրագոր և ճայուան հսկողունեան նէր+ հարարունին և բնակչներուն իշտին, ինչպաց, պատույն և ինչպէս հարարեալ պահունակութիւն-նէ- ընծայցն:»

Գ. Որոշում: (Սէնտ Էազի եղիսկողունի առաջարկածը):

«Այս մինչեւը իր խնդրէ վեհ. Թագուհոյն հարավանդարունենէն, որ անմիջական և անպայման իշտորով ապահովունեան յեր+ բերէ այն արեւականականաց, +ահանապէց, +արողաց, վարժապետաց և այլոց որոն+ առանց դաստիարականի, իամ մի յեւական դաստիարակունով արգիշտած են Արտական բանաբերու և բերդերու մէջ, որոնց շարերը ենթարկուած են անգնական Ահանաց, գանգանաց և գարշելէ անարժանաց, և արոնց ճասին յաճախակի դիմունէներ եղած են խորհրդարական երիս-ժողովներուն աւը:»

Ի բաց առեալ մի քանի դրիչներ, որոնք անձնական հաշեւ մաքրելու փորձութեան չէին կրնար դիմագրել՝

ամբողջ մամուլը շնորհաւորեց միթինկին յաջող ելքը և
արդարացուց Անգլից առաջային բողոքին արտայսյուութիւնը:
Թիւրքասէր թերթերը զաքարիական վիճակի հասած իրենց
պաշտօնը կատարելու մասին գժուարութիւն կզբային: Աւելի
գժուար կացութիւն ունէին այն թիւրք և այլացեղ մահմե-
տականները, որոնք հաղեւ թէ յաջողեցան մի հակահայկա-
կան միթինկ կազմակերպելու՝ Դրան վաղեմի բարեկամ Սըր
Աշմէտ Պարգլէգի և մի խումացած Ամերիկուհւոյ աջակցու-
թեամբ: Թրքական միթինկին առաջնորդները Անգլից հա-
սարակային կարծիքը շահելու համար յղոցած էին մի հան-
ձարեղ ծրագիր, որով Վիզիորիա թագուհին կը ծագրէին,
Ռուս կառավարութիւնը կը դատապարտէին, քրիստոնէու-
թիւնը կը քննապատէին, և անգլիահայպատակ 60.000.000 իս-
լամներուն գժուհութիւնը կը սպառնային...: Եւ անոնք որ
չին կրցած անձամբ մասնակցիլ 200 հոգիով կազմուած այդ
հակահայկական միթինկին, դէմ անոր նկարագրութիւնը
կրցան կարգալ թերթերու մէջ, որոնց մին հետեւալ տողե-
րով կը սկսի:

«Ուշումինսդրի քալաքային սրահին մէջ Ենթամբն է Խումբ գումարման ներկայ
գտնուող ամենաջներմ հայասէրն անգամ, պէտք է մի քիչ գումբ գացած լինի տա-
րարաց ու թրբաց համար, որոնք կը ճգնէին իրենց երկերը պաշտպանելու բրիտանա-
կան հասարակութեան դէմ:

«Ո՞չ թէ միայն յրահատական էր անոնց պաշտպանած դատը, այլ նաև, ճա-
ռախօսներուն մէծ մաս թերակատար հմտութիւն ունէին Անգլիերնի և ամենամեծ
գժուարութեամբ կը հաղորդէին իրենց միարեց...»:

Յ.

Երեք պետութեանց կողմէ Սուլթանին ներկայացուած
բարենորդմանց ծրագիրն, որ անհամերութեամբ կը սպա-
սուէր, համառօտակի հրատարակուեցաւ վերջապէս, մայիս
14-ին: Ընդհանուր տպաւորութիւնը զոհացուցիչ չեղաւ: Շա-
տեր մէծ յուսախարութիւն զգացին: Տէյլի Նիւշ չը վա-
րանեցաւ հետեւալ բառերով յայտնելու իր գիտողութիւնը:

«... Որչափ քննենք այնշափ վատ կը գտնենք (այդ ծրագիրը): Երկշուռ և տար-
տամ մի արտադրութիւն է: Զպիսի գոհացնէ հայերը, որոնց կենաց ընչեց և խզնի
ապահովութեան անհրաժեշտ երաշխիքը շււնիք... Ինդրոյն Էական Շշմարտութիւնն

*) The Echo, «Moslems at bay» Խորագրին ներքեւ, մայիս 16, 1895.

այն է թէ Հայաստանը պէտք է հայանայ...։ Նահանգն պիտի առեն միայն կը հայանայ՝ երբ բուն Հայաստանի մէջ բնիկները գերիշխան դառնան Անոր գլխաւոր կառավարիչը պէտք է որ հայ լինի, քրիստոնեաց լինի. չը կրնար թիւրք լինել...։ Եթէ սայդ է որ պետութեանց պատրաստած ծրագիրն ասկէ լաւագոյն մի բան չէ հարկ է նորէն աշխատին Դրենց շահուն համար իսկ, պէտք է որ այս գործը պատշաճ կիրազ գլուխ հանեն; Եթէ երեսի վրայ թողուն՝ կարելի է որ ներկայ դարուս ամենէն սոսկալի պատերազմներէն մին յառաջ բերեն...»*)

Մայիս 23-ին նախարարապետն ընդունեց այն պատգամաւորութիւնը, որ Միջնինին որոշումները պիտի հազրողէր իրեն և օրուն կ'առաջնորդէն՝ Ուշովմինսզրի Դուքսըն իրքեւ նախադաշնորակազմ «Հայկական Մասնախմբին»** և պ. Սդիվընսըն՝ իրքեւ նախադաշնորդութիւնն այս առօթիւ ուշագրութիւն հրաւիրեց ծրագրին անբաւականութեան վրայ և խնդրեց հիմնական բարեփոխումներու գործադրումը:

Լորտ Ռոզպրիի պատասխանը գաղտնի պահուեցաւ, բայց այժմափ միայն զիտանք որ խորհուրդ տուած է՝ լրադրաց հրատարակութենէն չը դատել ծրագիրը և միանդամայն միւս երկու պետութեանց տրամադրութիւնները նկատողութեան առնել:

Նախարարապետին այս յայտնութիւնները քիչ շատ միիթարական էին, բազդատելով Լորտ Սոլզպրիի ձառին հետ, որ միւնոյն օր կ'արտասանուելու Պրատֆըրտի մէջ Ընդդիմազրիր կուսակցութեան պետին կարծիքով վտանգաւոր էր ցցցեր ընել և աւելի զրգուել Սուլթանն ու իր մահմետական հպատակները, քանի որ երեք պետութեանց գործնական միջամտութիւնը կասկածելի է: Այս ձառը, որ մէկ կողմէ թիւրք կառավարութիւնը քաջալերելու և միւս կողմէ Սնդիտական նախարարութեան ձեռքը թուլացնելու բնութիւն ունէր՝ խստիւ քննադատուեցաւ, նոյն իսկ բազմաթիւ Դօրիական թերթերէ, որոնք կը յիշեցնէին թէ, ի՞նքը, Լորտ Սոլզպրի պատասխանատու է կիպրոսի դաշնագրին համար, որով Հայերը պաշտպանելու պարտականութիւնը մասնաւորապէս Սնդիոյ վրայ կը ծանրանայ: Միւնոյն ժամանակ, նախարարութեան անդամներն

*) The Daily News, Մայիս 17, 1895.

**) «Grosvenor House Committee on Armenian Affairs»—Այսինքն Կրոնքը տան մասնաժողովը՝ Հայկական գործոց մասին:—Կը մը Հայոց Հաստատութիւնը Ուկսդմինստրի գլուխ բնակարանն է:

ալ իրենց ճառերուն մէջ չէին մոռնար Հայկական խնդիրը
և կը շեշտէին Անգլիոյ պատասխանառութեան վրայ:

Յունիս ամիսը կը սկսի և Հայկական խնդիրն իր ամենէն
տաղնապալի շրջանին մէջ կը մտնէ:

Սուլթանին ներկայացուած ծրագիրն անպատասխան կը
մնար և գեսալաններու կողմէն ձնշումը կը շարունակուէր:
Միւնոյն ատեն, Մուշի մէջ օտար պատուիրակներուն դէմ
թիւրք ոստիկանաց նախատինքը, և ծիտակի մէջ միւնոյն
տէրութեանց հիւպատոսներուն վրայ կատարուած յարձա-
կումը, անմիջական բարենորոգմանց պէտքը շօշափելի կ'ընեն:
Ամբողջ Անգլիա անհամբեր կը սպասէր մեծ հաւանականու-
թեանց. առաջնակարգ թերթերը խստիւ կը պախարակէին
Ոսկեղջիւրի զիւանագէտներուն խուսափողական և ձգձգիւքա-
ղաքականութիւնը: Նշանակելի են այս առթիւ Թայֆի հե-
տեւալ խորհրդածութիւնները:

«Ձմիւրքը յապաղկոտ է, թէ՛ սկզբունքով և թէ՛ իր բնական
խառնուածքով: Միջազգային մեծ Միքաւպերն* է նա: Կ'ապրի այն
արմատացած յուսով որ եթէ երկար ատեն դիմանայ՝ թերեւս մի նոր
բան պատաշի: Եթէ բան չըպատաշի՝ յառաջմանէ անձնատուր լինե-
լու տեղ վերջէն անձնատուր լինելով աւելի բան կորուսած չըլի-
նիր, այլ միւնոյն ատեն, իր մենտորներուն անհունապէս աւելի տաղ-
տուկ պատճառած լինելու գերազանց գոհունակութիւնը կը զգայ...:
Ոյուլթանին խորհրդականները... երեկի թէ կուղեն կրկնել այն հին-
ցած խաղը, զոր շատ անգամներ խաղցած են Յարոպայի առջև...: Օ՝ ա-
ւեշտն այնչափ շատ կրկնուեցաւ որ ալ մարդ չը խաբուիր, իսկ ներկայ
դրութիւնն էապէս կը տարբերի այն նախոնթացներէն, երբ այս տե-
սակ դիւանագիտական հնարքներու դիմելով օգուտ տեսնուած էր:
Ոյուլթանը... Պրանսայի արտաքինքաղաքականութեան վրայ պ. ձա-
նօթոյի... Ճառին ակնարկութենէն համոզուելու էր թէ, այս կէտին
վրայ տէրութեանց մտադրութիւնները կամցանկութիւնները չեն տար-
բերիր, թէ որոշում տուած են իրենց պահանջած բանի մասին և թէ
որոշում տուած են ձեռք բերել և շուտ ձեռք բերել զայն...»***:

*) Միւնոյուր կամ Միւնոյը (Micawber), Զ. Տէրընի David Copperfield գի-
պասանութեան այն գէմքն է՝ որ կը ներկայացուի որպէս ոյժ ծիծաղաշարժ, ճոռոմա-
բան, կենցաղապէս և բոլորովին անհոգ անձ Սա, յանախ խոր տիրութիւն կը ձեացնէր,
բայց լնդհանրապէս յուսաւից էր և կը ակնկալէր որ «բան մը Կ'ըւլաց!»

**) The Times, յունիս 1, 1895.

Մտահոգութիւնը ծայրագոյն աստիճանին հասաւ յունիո
5-ին երբ թերթերը հազորդեցին Սուլթանին կառավարու-
թեան մերժողական պատասխանը: Անդիսական նաւատօրմին
Պէրութ ժամանումը, որ մէկ օր առաջ տեղի ունեցած էր,
աւելի յուղիչ կանխադուշակութեանց առիթ ընծայեց: Յու-
նիս 6-ին հրատարակուեցաւ բարենորոգմանց Ծրագրին իս-
կական պատճէնը: Թերթերը, գրեթէ միահամուռ, կը պահան-
ջեն որ այդ Ծրագրին գործադրումը պահանջուի և Անդիս
պատիւը պահպանուի:

Կացութիւնը ծանրակշիռ է: Ժամանակը շուտ ցոյց պի-
տի տայ թէ Անդիս և միւս պետութիւններն որչափ ան-
կեղծ են Հայկական խնդրոյ մասին:

* * *

Յօկուածս փակելէ առաջ, թերեւս անպատեհ չէր երկու
բառ աւելցնել այն մերազգի և օտար գործիչներուն վրայ
որոնք Անդիս մէջ Հայկական խնդրոյն շուրջը կը դառնան:
Եյս առաջադրութիւնն, թէեւ ըստ երեսութիւն պարզ բայց
իրականին մէջ բաւական փափուկ է և կարեոր առընչու-
թիւն ունի մեր ժամանակակից պատմութեան հետ: Հետեա-
բար կ'արժէ ուրիշ առթիւ յատուկ ուսումնասիրութեան
առարկայ ընել զայն:

Բայց առաւել ցանկալի էր ինձ «Արագ»-ի յառաջիկայ
գրեին մէջ Հայկական խնդրոյն համար մի նորազոյն և յու-
սաշող շրջան ողջունել:

Բայուրան.

Յունիս, 1895 թ.
Լոնդոն.



ՄԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻԱՑ ՀԱՐՈՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

(Լւսն Լուսականի համարան հինգհարյուրամյակի առաջին)

ԺԴ. դարու վերջին քառորդը համօրէն Քրիստոնեայ աշխարհին համար աշաւոր ճգնաժամ մըն էր: Խոլամական հզօր բանակներ կը վիստային Արևելքէն և իրենց աշեղասաստ հոսանքին առջեւ կը խորտակէին ամեն թումբ: Եւրոպա տենջալի նշանակէտն էր Գուրանի զաւակներուն, որոնք աշխարհային վայելմանց յուսով և հանդերձեալ երանութեան հաւատքով կը սլանային խալապալու ու աֆիլներուն վրայ:

Հետզետէ ինկան Քրիստոնէութեան յառաջասլահ ախոյեանները, մահիկին առջեւ խոնարհեցան Սերբիա, Պուլկարիա, Վալահիա, Պոսնիա, Հունգարիա, և բազմաթիւ իշխաններ ու զօրավարներ գերութեան շղթայով կաշկանդուեցան:

Արևմուտքի մեծ տէրութիւններն անշարժութեան դատապարտուած էին սյդ պահուն. Խաչակրութեան հին ջերմեռանդութիւնը մարած էր և ներքին հանգամանքներն անհապաստ էին նոր հերոսներ ստեղծելու: Այլ ևս չկային Ռիարտ Առիւծասիրտի, Գոնրատի, և Ֆրետերիք Բ-ի պէս կարող վեհապետները: Անարժան և թուլասիրտ Ռիշարտ Բ-ն էր Անգլիոյ անոռւանական թագաւորը, և ապիկար Շարլ Զ-ը կը բաղմէր Ֆրանսայի գահուն վրայ: Այս երկու աշխարհները տէսարանն եղած էին զօրաւոր աղնուտականներու յարատե հակառակութեանց և ընդհանուր շփոթութեան: Գերման կայսրութիւնն աւելի վատթար կացութեան մէջ էր կոշտ և անառակ Ուինգեսլաւոսի ներքեւ, Դանուբէն մինչև Հոենոս ներքին կոփիւներ կը մղուէին սաստկօրէն: Խոկ Սպանիոյ քրիս-

տոնեայ իշխաններն անդադար կը նեղուէին Մաւրիկներուցարձակումներէն։ Զկար աղջու ձայն մը՝ որ հասարակաց թըշնամւոյն դէմ միացնէր յրուած զժերը. պապութեան հերձուածը աւերում՝ կը զործէր բարոյական աշխարհին մէջ, չոռոմէն ու Աւինեռնէն կոնդակներով զերար անիծողքահանայապետներուն շնորհիւ խիղճը բժացած, բարեպաշտութիւնը կորած և սկեպտութիւն ծաւալած էր ամեն կողմը (1388):

Ուրբանոս Ե. պապն, որ անտարլեր դիտած էր յունադաւան Սլաւոններուն տառապանքը, կաթոլիկ հունգարիան ազատելու համար Խաչակրութիւն մը կը քարոզէ, բայց, ըստաջողիր (1373): Բիւզանդեան կայսրը Բալէսոլոդ կը խոնարհի անձամբ դիմելու մինչև չոռմ, բայց ապարդիւն կը գտանայ (1380): Վերջապէս, Պոնիֆաս Թ. պապին օրով միութիւն մը կը կազմուի, Ֆրանսա և Անգլիա կը հաշտուին և Սիկստունտի առաջնորդութեամբ կազմուած բանակը կ'որոշէ վաղել մինչև Ս. Երկիրը, (1396), բայց իղուր, այս օրութիւնն ալ կը ջախճախուի, և Սիւլէյման ոչ միայն կ'ընդարձակէ իր սահմանները, այլև Բիւզանդիոնի վըայ կ'սպառնայ և հաղեւ կը հեռանայ անկէ՝ ծանր պայմաններ կուելով։ Բիւզանդեան կայսրերն ամեն զոհողութեան յանձնառու կը լլային իրենց մայրաքաղաքը պահպանելու համար։ Քանդաքուղէնի դուստրը, ծաղկահասակ Թէոդորան էր որ կը զսպէր ծերունի Օրխանին բարկութիւնը, ինչպէս և ծիրանածին հելենուհիները կ'ամրապնդէին Մուրատի բարեկամութիւնը։ Իսկ այժմ, (1397), նոր հոռմի եկեղեցիներէն մէկը կը թողուի՝ մահմետական հաւատացեալներուն մղկիթ գտանալու։ Սիւլէյման զոհ ըստ մարտական, իր ուխտն էր վաղել մինչև զին չոռմ և զոն Ս. Պետրոսի սեղանին վըայ կեր տալ իր ձիուն....:

Հորիզոնն աւելի մութ և փոթորկալից էր Արևելքի կողմը։ Խաչակրութեանց մէծամբոխ բանակներէն յիշատակ մը միայն կը մնար։ Բիւրաւոր զոհերով հաստատուած Երուսաղէմի քրիստոնեայ թագաւորութիւնն երկու հարիւր տա-

ըի առաջ կործանած էր քուրդ Սալահէտինի ձեռօք (1188): Նոյնպէս, դար մը անցած էր այն թուականէն՝ երբ քանդուեցաւ Արիա, Լատինական հզօրագոյն ամրոցը և երբ վերջացան Ս. Լուգովիկոսի ու Եղուարդի ձախորդ արշաւանքները: Այժմ ամեն տեղ արիւնաներկ դաշտեր կըտեսնուէին, ամեն կողմ աւերակաց կոյտեր կը բարձրանային և Եղիպտոսի Մէմլուքեան Զէրքէսները արհաւիրքի նոր թուական մը կը բանային (1382): Այս տապնապալից ժամանակներու մէջ էր ահա, որ Լեռն Զ, Հայոց վերջին թագաւորը, կը դեզերէր Արևմուտքի արքունեաց մէջ, Հոռմ, Աւինեռն և Սպանիա այցելէ յետոյ կը գիմեր Ֆրանսա և Անգլիա, և կը ջանար ասոնց գժտեալ վեհապետները հաշտեցնելով իր անկեալ գահուն համար օգնութիւն ստանալու (1386): Ափսոս որ յոյս չկար այլ ևս: Հայկական Կիլիկիոյ քաղաքական գերը վերջացած էր այն օրէն երբ Աշըդ Թիմուրին անձնատուր եղան Սիսի աւագները և բացուեցան միջնաբերդին դռները (1375): Ոչ ևս պիտի ծածանէր այն առիւծանիշ դրօշը, զոր երեք դար առաջ Կոլմօզօլայի բարձունքին վրայ կանդնեց արին Ռուբէն (1080): Եւրոպայի քրիստոնեայ իշխաններն ոչ տրամադիր էին և ոչ զօրութիւն ունէին օգնելու Արևելքի քրիստոնէից, իսկ Կիլիկիոյ աշխարհին կննսական ոյժերը ցամքած, իմաստուն առաջնորդները մեռած և քաջամարտ որդիքը ցրուած էին. Հեռուէն, վտարանդի թագաւորը կը դիտէր իր երկրին աւերածը և կը լսէր ժողովրդին ողըր, բայց իր անկարողութեան գիտակցութեամբը կը տառապէր: Վերջապէս վախճանեցաւ նա ի Բարիլը: Ֆրանսա անկիւն մը շնորհէց անոր վաստակաբեկ մարմնոյն, յաւիտենապէս հանդչելու համար իր հայակապ զաւակաց շարքին մէջ:

* * *

Հայկական Կիլիկիոյ պատմութիւնն, որ մեր աղբային կենաց կարեորագոյն շրջաններէն մէկն է, ըստ բաւականին չէ ուսումնասիրուած ցայսօր: Ժամանակակից հայ պատմագիրները պլիսաւորապէս պատերազմներու և կրօնային խըն-

զիրներու յիշատակութեամբ կ'զբաղին, իսկ արքունի զիւաններէն ամենագոյզն նշխարներ միայն մնացած են: Մինչ Եւրոպացի հեղինակներ խորին ուշադրութեամբ կը հետեւին Արևելքի քրիստոնեայ իշխանութեանց պատմական խնդիրներուն և զրեթէ ամբողջապէս թարգմանած ունին Խաչակրութեանց վերաբերեալ լատիներէն, յունարէն, արաբերէն և հայերէն ժամանակազրութիւնները, որոնցմէ կարելի էր սքանչելապէս օգտուիլ զարմանալի է որ մեր պատմական գրականութեան մէջ տակաւին աննշան տեղ մը կը գրաւէ Կիլեկիոյ աշխարհը: Հայր Ալեշանի Սիսուանն իսկ, որ վեթխարի կոթող մըն է, գարուս հայ մատենագրութեան պարձանք, աղբային ընդհանուր հիացման առարկայ չէ գարձած և բանասէրներու քննական ուսումնասիրութեան նիւթչ եղած մինչև հիմա:

Պէտք էր ըստ կարելւոյն որոշ գաղափար մը կազմել Հայակիլեկիոյ վարշական կազմակերպութեան, քաղաքական նկարագրին, նահանգային և տաւատական բաժանմանց, օրինաց, վաճառականութեան, ձեռարուեստից, երկրագործութեան, եկեղեցական և կրթական հաստատութեանց, կրօնական և քաղաքական օտար առընչութեանց վրայ և այլն և այլն: Նցնչափ հետաքրքրական և կարևոր էր նաև ուսումնասիրել այն 500 տարուան շրջանը որ կը բաժնէ զմեզ Լեռն Հուսինեանի մահուան թուականէն: Թէ ի՞նչ նշանաւոր գէպքեր և ի՞նչ մեծ աղէտներ պատահեցան այն օրէն ի վեր, ի՞նչ փորձեր եղան գահը վերականգնելու, ի՞նչ նոր անձինք փայլեցան, Սիսի կաթողիկոսութիւնն ի՞նչ գեր կատարեց և վերջապէս վերածնութեան յոյսն ի՞նչպէս մարեցաւ: — Ահա այս նորանոր հարցերն ալ, թէև բաղդատապէս նոր թուականներու կը վերաբերին, բայց կը մնան մոռացութեան մէջ և դատապարտուած կերեւին կատարեալ կորստեան:

Հայոց վերջին թագաւորի մտհուան հինգերորդ դարադը խորհրդաւոր հանդրուան մըն է, ուր կ'արժէ պահմը խորհրդածել Ռուբինեանց երեքգարեան հարստութեան կենաց այլազան երեսյթները, ուսումնասիրել անոր ծագման

և անկման հաւանական պատճառները: Յաւակնութիւն չունիմ ներկայացնելու զիտական պայմաններով օժտուած յօդուած մը, որ պատմական ընդարձակ հմտութիւն և քննական սուր միաբ կը պահանջէ, բայց պիտի փորձեմ համառոտ տեսութիւն մը ուրուագծել հայկական իշխանութեան այդ վերջին ապաստանի մասին, որուն յիշատակն այնչափ թարմէ և անունը սիրելի:

* *

Երկրի մը բնական կաղմութիւնն ու զիրքն է որ զըւխաւոր տարրը կը պատրաստէ իր բնակչաց Փիզբական, իմացական և քաղաքական շինուածքին: Ինչպէս պատմական վաղեմի օրերուն, նոյնպէս և Հայոց իշխանութեան տաեն, Կիլեկիոյ աշխարհի բնական հանգամանքը գերակշիռ ներգործութիւն ունեցած է իր ժողովրդի կենաց վրայ: Մէկ կէսը շրջապատռած Միջերկրականի ջրերով, միւս կէսը գրեթէ պահպանուած երկու լեռնաշղթաներով և մանաւանդ ամրապիս փակուած սակաւաթիւ կիրճերով, քանիցս դժուարութեան մասնած է հին աշխարհականերու անցուգարձր: Կիլեկիոյ լեռնային յելուզակները և ծովային ասպատակները մինչեւ իսկ Հռոմեացւոց հոդ պատճառած ունին: Պատմական մեծամեծ գէպքեր տեղի ունեցած են հոն: Քետացիներու (Héteens) մոռցուած աղդին յիշատակարանները ցոյց կուտան թէ այս երկրին մէջ 35—40 դար առաջ հզօր պետութիւն մը կար, որ Եղիպատոսի և Ասորեստանի գէմ կը մաքառէր: Վաւերական պատմութեան ընթացքին մէջ Կիլեկիան կը տեսնենք իրեւ պարսկական Սալրաբութիւն մը, զոր Մեծն Սլեքսանգը կը կորզէ Իսսոսի հռչակաւոր ճակատամարտով (333 ն. Ք.): Իրեն յաջորդող Սելեկիան թագաւորներուն օրով էր որ Միհրգատայ և մեր Տիգրան Բ-ի յաղթական արշաւանքը կը կատարուի ընդդէմ Հռոմայեցւոց, որք վերջապէս տէր կը մնան երկրին: Ը. դարուն մէջ, Սրեելեան Հռոմէական կայսրութեան ձեռքէն Սրաբները կը խլեն և հարուն էլ Բէշտ բերդերով կ'ամրացնէ զայն: Երկու դար վերջ Փո-

կաս և Զմշկիկ կայսրերու օրով վերահաստատեալ յցին աիրապետութիւնը տեական և իրական չը մնար, թուրքերը և Հայերը գերակշռութիւն կ'ստանան: Իբրև բանալի Սուրբոյ և Փոքր Ասիսի մէջ տեղ. Կիլիկիոյ անցքերուն կարեորութիւնը թէ՝ աշխարհավարական և թէ՝ առետրական եղած և ռազմական մեծ գործողութիւններու առիթ առւած է: Բայցառիկ նշանակութիւն ունի Կուկլակայ կամ Քիւլէք պօղաղիկ կիրճը (Pygae Ciliciae) որմէ անցած են Կիւրոս, Մնեմոն, Ալեքսանդր, Կիկերոն, Նիգեր, և աւելի մօտերս, Խլրահիմ փաշա: Մեր Լեռն Բ-ն այդ անցքով յարձակեցաւ մինչեւ Կեսարիա: Այս և միւս երեք կիրճերը լեռնային տաժանելի արաշետները, և երկրին ամեն կողմը բարձրացող ամուր բերգերը, բաւական էին ցամաքային զօրաւոր տէրութիւն մը գոյացնելու, եթէ պահապաններն ունենային պահանջուած յարակից կարողութիւնը, կարողութիւն՝ որ ոչ միայն նիւթական, այլ և բարոյական ու մոտաւորական տարրեր բովանդակէ: Առանց այդ պայմաննին՝ Կիլիկիոյ աշխարհագրական կարեոր գիրքն իսկ, զինք ենթակայ պիտի ընէր անվերջ յարձակմանց:

Աղդ մը, որ ցեղակիցներու կամ գտաւանակիցներու գաշնակցութիւնը կը վայելէ, և կամ բնականօրէն առանձնացած մի հայրենիք ունի, նուազ ևնթակայ է արտաքին վտանգներու և առաւել ընդունակ՝ անկախ զարգացման: Հայոց համար, Հայաստանի մէջ կարելի չեղաւ այս կերպ մի չեղոքութիւն: Կարելի չեղաւ նաև Կիլիկիոյ մէջ, ուր դաշտերը յաճախ ասպարէղ գարձան այն կոխներուն՝ զօրս քրիստոնէութիւնը մղեց իսլամութեան գէմ, Թաթարը՝ Եղիպտոսի գէմ և Լատինը՝ Բիւլղանդիոնի գէմ: Բայց, Կիլիկիոյ աշխարհը կը վայելէր ուրիշ առաւելութիւններ, ու մանաւանդ այն բնական միջնաբերդը, ամփոփ, կուռ և անառիկ գահաւանդ մը, որ Մուրինեանց ազատութեան խանձարուր և հարստութեան գանձարան հանդիսացաւ և որուն յաւիտենական կողերուն առջեւ բազմիցս փշուեցան արշաւասոյր հրոսներունիղակները: Հայկական Կիլիկիոյ կազմաւորութեան մէջ այս

սահմանափակ լեռնագաւառն այնչափ յատկորոշ կարեորութիւն ունեցած է որ օտարազգիներն ի սկզբան չէին ճանչնար հայ իշխանութիւն մը, այլ միայն «Երկիր լեռնական Ռուբէնի» և կամ «Երկիր Լեռնի որդւոյն՝ Ճամբաներու իշխանին» (Terra Rupini de la Muntaine. Պիւտու իոն Լիտ. աւելիութեաւուիրութիւն):

Կը մնայ քննել թէ հայերն ի՞նչպէս աիրացան այս բնական ամրութեանց, և ի՞նչ կարողութիւն ցոյց տուին զանոնք պահպանելու և օգտակար ընծայելու մասին:

* * *

Մայր Հայրենեաց քաղաքական զրութիւնը, ազգին յառաջդիմական ձգտումը, և պարսից կրօնական հալածանքը վաղուց դէպի արեմուտք կը մշէին Հայերը: Յունական ծառայութեան մէջ գտնուող նշանաւոր Հայ զօրավարներէն, նոյն իսկ կայսրութեան գահը բաղմող եօթը Հայազգիներէն և ուրիշ ասպացոյներէ կրնանք հետեւցնել թէ հայ դաղթականներ վաղեմի օրերէ հաստատուած էին Յունական կայսրութեան աշխարհաց մէջ, տեղ տեղ յաջողասլէս մրցելով աիրող տարրին դէմ և փայլեցնելով այն քաղաքազիտական և զինուորական բնազըր, որուն համար Հայաստանի ասպարէզը նպաստաւոր չէին գտներ դժբաղդաբար: Հայերը հետզհետէ հոծ բաղմութեամբ մեկնեցան իրենց բնակավայրէն և Բագրատունեաց վիրջին օրերու գաղթային հրամնքով՝ ընտիր ընտիր խումբեր հասան դէպի Փոքր Ասիա: Հաւանական է թէ Կիլիկիոյ աշխարհը մասնաւոր հրապոյր ունեցած ըլլայ: Յունական տիրապետաթիւնն այնչափ զօրաւոր չէր այդ կողմը, և թերեւս ազատ օդ մը կը յուտային շնչել*):

Սյազէս թէ այնպէս, ժ-րդ դարու սկիզբէն (900—910) կը տեսնենք որ Սասունցի յիսուն իշխաններ հաստատուած

* Ար սկիզբն Խ. դարու (809) ըստ աւանդութեան Արարացւոց՝ խցի ետուն բնակիչը Ասոյ ՚ի Ծրբինս, այլ ՚ի նորոգել զոյն Արարաց՝ Հայք թողեալ գ գեղցկաշէն բնական կարեանց Խալալ եկին ՚ի Սիս. և բովանդակ արեւելակողմն Երկրին մինչեւ ՚ի Հարավաք իւրեանց Խալալ եկին Սայոյ, յորում եին 360 աւանք ամուբք և 26 բերդք անառ ռիկք» (Սիսունցի):

են այս տեղ և անկէ յեաց հետզետէ կը յիշատակուին
այլ և այլ նշանաւոր տուներ: Ռուբինեանց, Հեթումեանց,
Արծրունեաց, Նաթանայէլեանց, Ազգարիպեանց, Մոլեո-
նեանց, Աօլուռսեանց և այլ յայտնի գերդաստաններէն զատ
անուանի եղած են և բազմաթիւ անհատներ, որոնք կիլի-
կիոյ մէջը կամ սահմանները իշխանական պաշտօն վարած են
և առաւել կամ նուազ ինքնիշխան ապրած: Ասոնց կարգէն,
մեզի ծանօթ հնագոյն անունն է՝ Գէորգ Մլէհ (933 ին մե-
ռած) որ Արաբներէն գրաւեց Ծամնդուր, և կարգուեցաւ
«Պառասուպաթար և տեսուչ Մամեսահոյ, Անսարզաբայ և Ծա-
մանդեայ»: Յաջորդ թուականներուն՝ կը տեսնենք Խաչուտու-
ուքրավար, որ Խաւերեան Անտիքի գուբոն էր և աղատարար
եղաւ Խոմանոս Դ. կայսեր, (1071): Գող Վասիկ՝ որ տիրեց Եփրա-
տացւոց զաւառի մեծ մասին (1097): Եւստան՝ իշխան կարգուած
Ալիէի (1098), Աղուտիւն Արքունիք՝ Քաղաքապետ Տարսոնի,
նոյնպէս Աղուտիւն՝ իշխան Պիրի, Թաղուն՝ իշխան Մարաշե
(1100) ինչպէս և Փէլարդոս, Սէմէն, Ճնճղուն և այլք: Այս իշ-
խանական գերդաստանաց և անձանց ներկայութենէն յայտնի
է որ ԺԱ-ՐԴ գարուն վերջերը կիլիկիոյ բնակչաց մէջ հայերը
ու է կերպով գերակշռութիւն ունեցած էին արդէն:

Այսու հանգերձ, ի՞նչպէս հնար պիտի լինէր մի տարա-
դիր ժողովրդի համար, օտար աշխարհի մէջ վերականգնել
այն քաղաքական կեանքը, զօր մայր-հայրենեաց մէջ պահպա-
նել անկարելի զարձած էր: Հայաստանի տարրեր նահանգնե-
րէն գաղթող հայերու մէջ կա՞ր միութեան զօրաւոր կապ մը:
Բաւական չէր պատահական թշնամիներու դէմ բնաղդմամբ
կաղմուած զործակցութիւնը, ազգային հեռաւոր նպատակի
մը իրագործման համոր հարի էր նուև տեական ներքին հա-
մերաշնութիւն: Այս օդին ի՞նչ աստիճան վառ մնացած էր
հայ ընկերութեան մէջ որ անհնարին աղէտներու և երկա-
րատե Ճնշումներու հնթարկուած՝ այժմ կը հեռանար իր
ծննդավայրէն:— Անտարակցո, նուազած էր հայուն վերածնու-
թեան յոյսը և ազգային զօրութեան գիտակցութիւնը: Մո-
գակրօն, սարտկինոս և քրիստոնեայ ոսովներու դէմ ցցյ

արուած զարմանալի ցյմբ՝ կարծես թէ սպառած էր, և սուրի,
կրակի, սովի, ժանտախտի պատուհասներուն առջեւ հայաս-
տան արդարեւ քանդուած: Մինչեւ իսկ Աղջային Եկեղեցին,
որ նախընթաց գարերու մէջ կեանք էր ներշնչել ուժաթափ
սրտերու, այժմ ինքն ալ սպառոր, պահ մը տեղի կուտար
նիւթական կոշա զօրութեան առջեւ: Հովիւները, փոխանակ
առաջնորդելու՝ կը հետեւէին իրենց աարաջնջեկ հօտին և քա-
րողիչ վարդապետներն անոր տառապանքը միայն կ'ողբային.
«այժմ թագաւորն անկեալ ի պատուոյ՝ իրբե զգերի կալանա-
ւոր նստի՝ ի հեռաբնակ տեղիս: Այսպէս և հայրապետական
աթոռն ամայացեալ՝ ի բնակողէն՝ ցուցանի տիսուր դիմօք՝
իրբե զկին նորահարսն մնացեալ յայրիութեան: Հեծելազօրն
անտերունչ շրջեալ՝ ոմն՝ ի Պարսս, ոմն՝ ի Ցոյնս, ոմն՝ ի Վիրո:
Սեպուհ գունդն ազատաց ելեալ՝ ի հայրենեաց, անկեալ՝ ի
Ճոխութենէ, մոնչեն՝ ուր և են իրբե զկորիւն առիւծուցն՝ ի
խշտիս իւրեանց: Արքունական ապարանքն աւերակ անմար-
գի: Մարդաբնակ աշխարհն թափուր՝ ի բնակչացն:... Ելին
թշնամիք՝ ի վերայ Երուսաղէմի, ելին և Պորսիկը՝ ի վերայ
մեր: Աւերեցան և քաղաքը մեր: Մտին հեթանոսք՝ ի տո-
ճարն սուրբ, մաին և յեկեղեցիս մեր և կապուտ կողոպուտ
արարին զբարդս նորա: Հրայրեաց եղեւ տաճարն սուրբ, այ-
րեցան և՝ ի մեզ փոխանակ միոյ տան՝ բազում եկեղեցիք:
Առանց համարոյ անկան քահանայք նոցա (Քրէից)՝ ի սուր,
և զմերոյս ովկերէ զհամուր»... (Լատուիլէբոյ):

... ի հարիէ անբաւական պիտի լինէր երկու բառով
սահմանել այն հրաշալի ցյմբ, որ այս յուսահատական պայ-
մանաց մէջ, երեքդարեան հարստութեան մը հիմը դրաւ: Ժա-
մանակակից պատմիչները, այդ նշանաւոր գէպքը կ'աւանդեն,
բայց այդ գէպքը արտազրող պատմաներուն և միջավայրի
նպաստաւոր կամ՝ աննպատ հանդամանքներուն վրայ ման-
րաւասանութիւն չեն տար: Ինչ օր ալ լինի, պէտք է խոստո-
վանիլ թէ, ինչպէս մի հոգեբանական ընդհանուր երեսիթ,
որ ծայրագոյն տագնապներու պահուն դիւցազնական ցժեր
կը դոյացնէ, հայ ընկերութեան այդ ճգնաժամին՝ յայտնուեցաւ

Մէջն մոռքէն, որու ազատաշունչ ձայնը հնչեց ծորոսի հպարտ սարերէն և արձագանք դտաւ քաջորդիներու սրախն մէջ...:

Այո՛, զիւցաղնական էր մոռքէնի ձեռնարկը. Նա ոչ միայն կը հարուածէր, կը պատժէր օտարազզի բռնաւորները, այլ և տարաբաղդ Գաղիկի արեան վրէժը կը խնդրէր, ազգային իրաւունք մը կը պաշտպանէր, հայատեաց քաղաքականութեան մը դէմ՝ կը բողոքէր: Հայերը վազուց համոզուած էին թէ տիրող ազգին՝ ատելութիւնը սոսկ ռամիկ մոլեռանդութեան արդիւնք չէր. մի յոյն մետրապոլիտի բերնով անարգուեցաւ արքէն անունը, յոյն իշխաններու ձեռօք սպաննուեցաւ հայոց թագաւորը, նոյն իսկ Բիւզանդիոնի արքունիքն էր որ կը քաջալերէր այս յայտնի կամ գաղտնի հալածանքը: Այլ ևս ուր պէտք էր զիմել և իրաւազուրկ ազգին վեշտերն ում ներկայացնել: Մեծին կոստանդիիանոսի քաղաքն ապականեալ մթնոլորտով պարփակուած, արգարութեան և խոզի հրեշտակներուն առջեւ իւր գռները փակած էր: Այստեղ, քայքայուն գահին վրայ բազմած ծիրանակիրները, թէև անզորներուն վրայ իրեւ առիւծ կը գոռային, բայց հզօրազոյն դրացիներուն առջեւ անարգաբար կը խոնարհէին: Մոռքէն խորաթափանց աչքով կը գիտէր հսկայն, և կը պատրաստուէր վերջ տալու հայութեան վտանգաւոր վեծնումներուն: Ոչ հայաստանի բերգերը և ոչ Անիի բանալիները, ոչ իշխաններուն ծառայութիւնը և ոչ ժողովրդին հաւատարմութիւնը գոհացում չէին տար խստապահանջ տիրապետին, որուն ուխտը կը թուէր՝ փճացնել հայութեան մարմինն ալ հոգին ալ: Ուրիշ լինչ նշանակէտ կրնար ունենալ նա, որ իրեն որգեզրեալ ազգը բարբարոսներու դէմ՝ պաշտպանելու անփոյթ Բաղրամունեաց, Արծրունեաց և Կարուց թագտորներն ու բազմաթիւ իշխաններն իրենց բնավայրէն հեռացնելու և հայկան ոյժերը ցրիւ ցրիւ ընելու համար ամեն տեսակ դաւ, հրապոյր կամ բռնութիւն ի գործ կը դնէր:...— Անօրէն և միանդամայն ձախող բաղաքականութիւնն, որուն հետեանքն աղետաբեր պիտի լինէր՝ նոյնպէս տիրող ազգին համար*:

*.) Աւշագրութիւն կը հրաւիրեմ այս տեղը հետեւալ տողերուն վրայ, զոր կը

Հայ հասարակութիւնն ակամայ կը հանդուրժէր բաղդին
այս գառն հեղնութեանց: Իսկ իշխանաւոր կամ տոհմիկ դա-
սը՝ մեծ մասամբ անտարբեր կը մնար, և Յունական պետու-
թեան հի-ջընկալ հոգին վրայ անդորր ապրելու յուսով և
արքունեաց մօտ շնորհ գտնելու բաղձանքով կը համաձայնէր:
Կային այնպիսիներ ևս, որոնք խնամութեամբ և դաւանակ-
ցութեամբ արդէն խառնուած էին հոռոմներու հետ և հեշ-
տասուն կեանք ու պերճաշուք տիտղոս վայելելու համար՝
Հայութեան փարախէն իսպառ կը հեռանային:

Բայց, հասարակ մահկանայցուներու և փառատենջիկ ա-
ւագներու աչքին սովորական դարձած այս ազգային ստրկու-
թիւնը՝ անտանելի էր մեծ հոգիներու համար: Ուուրէն, ա-
ռաջինը հանդիսացաւ իր ժամանակակից մեծահոգի իշխաննե-
րուն մէջ և նկատելով մանաւանդ որ նա Գագիկի արենա-
կիցն կամ դէթ զինակիցն էր, ապահովապէս, ոչ թէ մի լեռ-
նական բերդատէրի ըմբոստութեամբ, այլ մի աղնուագոյն
գաղափարի ներշնչամբ, յանդգնեցաւ մաքառելու՝ անհամե-
մատ հզօր զօրութեան դէմ:

Արդարեւ, կիլեկիոյ լեռները գիւրացուցին այդ աղ-
նուագոյն գաղափարին իրադործումը, բայց արդիւնքն դա-
տելով, խոստովանինք թէ Ուուրէն և իր յաջորդները գիտ-
ցան օգտուիլ իրենց դիրքէն և ժամանակէն: Ուուրինեան ար-
ծիւները բոյն դրին ամպածրար սարերու վրայ, բայց անդա-
գար դիտեցին լայնանիստ դաշտերն ու ծովեղերեայ բերդերը:
Տետղհետէ, Տորոսի և Ամանոսի կիրճերէն ազատ թուիչը առին
անոնք, յաղթութիւններ և դաշնադրութիւններ միջազգային
կարեռութիւն տուին երկրին, նաւահանդիսաներն ու բաժ-
տունները հարստութեան աղբիւր գարձան և Մայր Հայաս-
տանի մէջ թաղուած քաղաքական կեանքը ծլեցաւ ծաղկե-
ցաւ՝ի կիլեկիա, զոր օտարազգիները ճանչցան՝ իբրև Հայաս-

դրէ Մ. Ուուհայեցին. «(Սէլձուքեան) անթիւ զօրութեամբ գան և յաշխարհն Հայոց,
«վասն զի ի ձեռացն Հոռոմոց դիտացին անտէր և անպահապան զամենայն աշխարհն
«Հայոց, զի զարս քաջու և հզօրս քակեալ հանին յարեւելից Հոռոմք և Կուրք զօրուոյետու+
«Քանացին պահիւ զաշխարհն Հայոց և զամենայն տունն Երեւելից»:

դան, Հայակիւնիւա կամ՝ Հայոց Երէնը (Արմենիա, Արմենօքիլիքիա,
կամ Պիլատ-իւլ-էրմէն):

* * *

Ոռութինեանց հարստութիւնը ծագմամբ՝ ժամանակից է
տիեզերական մի գէպըի և բարզաւաճմամբ՝ սերափւ կապուած
անոր հետ: Ոռութէնի որդւոյն Կոստանդին Աւի օրով առա-
ջին անգամ Կիլիկիա մտան Խաչակին կոչուած պատերազմիկ-
ները, (1097): Ասոնք ցամաքային տաժանելի ճամբորգու-
թեամբ Եւրոպայէն Բիւզանդիոն և անկէ Փոքր Ասիա ան-
ցած՝ կ'արշաւէին դէպի Պաղեստին, Ս. Գերեզմանը մահմե-
տականաց ձեռքէն աղատելու ուխտով: Տեսեաբար, ասոնք
շուտով պիտի բազիսէին մահմետական սուլթաններուն, որոնք
կարծ միջոցի մէջ միսուած էին մինչև Փոքր Ասիոյ սիրար:
Ինչ որ աւելի զարմանալի է, Յունաց կայսրն ևս, Խաչակիր
ամբոխը ակամայ Հիւրասիրելէ յետոյ, այժմ զաղտնապէս
կը գաշնակցէր իր հինաւուրց ոսոխին, Խոլամին հետ:

Քաղաքական հորիզոնին այս նոր երեսյթը՝ նոր շրջան
մը կը բանար Հայութիւն համար:

Երբ արեմօնեան Քրիստոնեայք Կիլիկիա մտան, այնտեղ
տեսան երեք կարեւոր ազգաբնակութիւն. Յայնէրը՝ որոնք աի-
րող ցեղը կը ներկայացնէին, Մահմետականնէրը՝ որոնք Արաբյաղ-
թականներու մնացորդներէն և թիւրք կամ թիւրքմէն հրո-
սակներէն բաղկացած՝ այլ և այլ բերգերու կը ափրէին և
դաշտաբնակ քրիստոնեանները կը կեղեքէին, և Հայէրը՝ որոնք
ամեն կողմէ բազմանալով, տեղ տեղյոյններու կամ մահմետա-
տականներու երկիրնները զրաւած էին: Եյս երեք աղքերն ար,
լաւ ևս, անոնց բերգատէր իշխանները՝ իրապէս կամ անու-
անապէս ձորտ (vassal) էին Յունաց կայսեր, և սակայն, ա-
ռանց մի որոշ յարաբերութեան, թէ իրարու և թէ օտա-
րաց դէմյարատե կոփւներ կը մղէին: Ուստի, աղջային ինք-
նապահպանութեան այս խիստ պայցբարներու միջոցին, Խա-
չակիրներու մուտքը, Կիլիկիոյ Հայերուն համար նպաստաւոր
էր, մանաւանդ որ անոնք ալ Խոլամներու յայտնի դիմադրու-
թեան և յշներու կեղծ ընդունելութեան հանդէպ, պէտք

ունէին տեղացի զինակիցներու և մեծապէս գնահատեցին Հայերու օժանդակութիւնը: Այսպէս, առաջին Խաչակիրները տակաւին Հայկական Կիլիկիա ըլ մոտած, 5000 հայ կամաւորներ ունեցան, Կոստանդին իշխանն ուղեցոյց առաջնորդներ և պաշար հասցնելէ զատ, անձամբ մասնակցեցաւ Անտիոքի պաշարման, ուր ներկայ էին նաև Օլին և Բաղրանի իշխանները, Սև լեռան վանօրէից միաբանները և այլ հայեր: Արևմտեան ժամանակակից պատմիչները մասնաւորապէս կը յիշատակեն այն աջակցութիւնը, զոր Խաչակիրք ստացան իրենց պաշարած քաղաքներու հայերէն, ինչպէս Եղեսիայի, Աղեքունտրէդպայի, Արաւսիամի առջև, ևն: *) Այսպէս թէ այնպէս, հայերը մեծաւ մասամբ կը յարին այս նորեկ քրիստոնեաներուն և Կոստանդին իշխանը կոմութեան տիտղոս ստանալով՝ անոնց քաղաքական թեարկութիւնն ընդունած կը լինի:

Լատին արևմուտքի հետ հայկական Կիլիկիոյ գաշնակցութիւնը, որ Խուրինեանց հարստութեան քաղաքական նկարագրին և ընդհանրապէս հայութեան նկատմամբ ահազին ներգործութիւն պիտի ունենար, մի փափուկ խնդիր է, և անոր արդիւնքն ինչ որ ալ լինի, Խուրինեանց քաղաքաղէտներուն գէմ անիրաւած պիտի լինէինք վճռելով որ անոնք անխորհրդաբար կամ սոսկ կրօնական ձգողութեամբ հետեցան լատիններու քաղաքականութեան. ընդհակառակն, առաջին անգամ՝ որ ազգային շահուց գէմ ոտնձգութիւն տեսան, հայերն ըստ պարագային խստիւ ընդդիմացան անոնց: Այդ պատերազմիկները ցորչափ հիւր էին՝ հայոց աչքին

*) Գուտէլէսո, Տիւրոսի հսկուումն, իր պատմութեան մջ կը յիշէ մի հայուղգի, Բանդրաս անուն, (թէ իւս Բագրատ, եղ բայց Գող Աստիլի), Կորին և Խիզախ ձիաւոր, բայց նենդամիտ և անուղղիդ: Սա, Կ. Պոլսց բանակն իսյո առաջով Նաշակիր բանակին հետ միացած և հետզետէ մոերմացած է Պալտինին: Բանդրասի առաջնորդութեամբ, Խաչակիրները կը գրաւեն Կիլիկիոյ մի մասը, որ բերդատեր թուրքերու ձեռքն էր և ուր քրիստոնեաց դաշտաբնակներ չէին կորող գենք ունենալ: Խաչակիրներու զալէն յետոց հեթանոսները կը փեռանան:

Առաւելէտա կը սէ թէ մի հայ փայտահատ գլխատոց Խաղի Արանը, Անտիոքի իշխանը, երբ Խաչակիրներու հետ պատերազմելու ատեն անտառի մջ կը թարչէր:

Քէմալէտուրէն Հայէափ պատմութեան մջ շատ անդամ կը յիշատակէ հայոց արաշաւանքը և յաղթութիւնը, Խաչակիրներուն ողնելու համար:

թուեցան շատ աղնիւ և վեհոգի մարդիկ, բայց շատ չանցած գուրս եկաւ որ այդ միամիտ և մոլեռանդ ամբոխին առաջնորդները՝ միայն քրիստոնէական նախանձախնդրութեամբ չեն շարժէր, հապա իրենց յատուկ աշխարհակալութեան, փառքի և շահու հաշիւներն ունէին: Տետևաբար ադրոնց նկատմամբ հայերու նախին համոզումը միանգամ ընդ միշտ խախտեցաւ և փոխագարձ շահերու նկատութիւնը միայն ֆացին: Բայց, կարելի՞ էր բոլորովին խղել անոնց հետ սկսուած յարաբերութիւնը. — պատասխանը հաստատական չը կրնար ըլլալ: Ա. շխարհի քաղաքական պատմութեան մէջ յաճախակի են այն դէսլքերը, ուր տիրապետներն, առաւել իրենց իշխանութիւնը, քան թէ մի աղջային նպատակ, ապահովելու դիտմամբ, մինչև իսկ իրենց ցեղակիցներուն, կրօնակիցներուն դէմ օտար գաշնակիցներ ունեցած են: Ռուբինեաններն ալ դրացի յշներուն, իսլամներուն և լատիններուն յարափոխիս ուղղութեան հանդէպ, իրենց գոյութիւնը պահպանելու համար պարտաւոր էին՝ ժամանակի, դէսլքերու և անձերու համեմատ գաշնակից և քաղաքականութիւն փոխելու, այնպէս որ, շատ գժուար, եթէ ոչ անհնար, կը լինի մի որոշ գոյն նշմարել անոնց ուղղութեան մէջ: Այսու ամենայնիւ, այդ երեք հարիւր տարուան պատմութիւնը, — որուն յրդ ամփոփ մի ուրուազիծը կը բովանդակի տեսութեանս մէջ — կը յայտնէ թէ, իբրև բնական գաշնակից, լատիններն ամենէն աւելի ներգործած են կիլեկից հայոց վրայ:

Կոստանդինի յաջորդը, Թօնրոս Ա. (1100—1129), թէ յունաց կայսեր կողմէ Սիբաստոսի տիտղոսով կը պատուուի, բայց ինքն է որ կը լուծէ Գաղիկի սպանման վրէժը. Մաստալեան իշխանները կ'սպաննէ և անոնց բերդը կը դրաւէ: Ասոր օրով Ռուբինեան իշխանութիւնն ազգային գրօշմ կ'առնու, վանքեր և հիւրանոցներ կը շինուին, Անարզաբա մայրաքաղաք կը լինի: Թօրոս՝ Խաչակիր Տանդրէտ իշխանին աջակցութիւնը վայելելով հանդիրձ, կը բարեկամանայ նաև Սուրիոյ մահմետականներուն, որոնց օգնութիւնը կ'ստանայ Սելջուքեան թուրքերուն դէմ: Թօրոս Ա. կ'արտաքսէ պար-

սիկ և թուրք ասպատակները՝ Գող Վասիլի զինակցութեամբ:

Այստեղ չենք կրնար անյիշատակ թողուլ Գող Վասիլի իշխանի գործերը, թէև ուղղապէս կասպուած չեն Ռուբինեանց պատմութեան հետ: Որչափ որ կարելի է հիտեցնել կցկտուր և շփոթ յիշատակութիւններէ, Գող Վասիլի երկիրը, Ռուբինեան իշխաններու աշխարհէն յետոյ երկրորդն էր տարածութեամբ և պահ մը կը բովանդապիկր Քեսուն, Մարաշ, Թըլ պաշար, Բաղան, Կուռիս, Բավանտըն և այլ բերդեր և աւաններ Եփրատեան գաշտին վրայ: Անտիոքի իշխանները, անհանդիսա կ'ընէին Գող Վասիլը, բայց միշտ ետ կը մղուէին: Վերջապէս իր մահէն յետոյ լատիններու անցաւ այդ արգաւանդ դաւառը, մի մասն ևեթ կցուելով Լեռն մեծի զօրաւոր ձեռքին ներքեւ: Մասնաւոր նկատողութեան և քննութեան արժանի է, որ Թորոսի յաջորդ Լեռն Ա. վերջ տուաւ այդ հայ իշխանութեան, կալանաւորեց Գող Վասիլի յաջորդը և երկիրը յանձնեց Եղեսիոյ կոմսին (և ոչ թէ Անտիոքի իշխանին): Լատիններու կողմէն առաջին հարուածն էր այս^{*)}:

*) Հետեւեալ յիշատակութիւնները, Գող Վասիլի նկատմամբ, մին լատին և միւսն արար պատմիներէ, կրնան հետաքրքրել ընթերցողները:

Գուշելուսո, Տիգրոսի եպիսոպոս գրած է,

« Մինչ Աստիորի մէջ ժանուարու կը տիրեր (1098), Կոտֆրուա, իր հետեւորներով կ'արշաւէ Այնթապի, Թըլապաշար և Բավանտընի վրայ (ըստ Փրանսներէն լնադրին՝ Hatap, Corbesel, Ravandel) Երկիրն քրիստոնեայր, մանաւանդ վանականք, կը գանգատին երկու հայերու մասին (deus Hermins), որոնք եղայր էին. մին կը կոչուէր Բագարատ (Pancrates, Pancratius), Ջեսու, Գող Վասիլ (Covasilio, Conasilles, Corneil): Ասոնք բերդերու կը տիրէին և շատ բարձր դիրք ունէին, բայց ուղղամիտ մարդիկ չէին, կը պաշտպանէին շարադրծները և Լեռնեցներ կողպատող աւագանները: Ասոնք այնչափ ամբարտաւան էին որ, Պալտինի կողմէն իր եղբօր նուեր խրկուած տաղաւարը Խլշին և իրենց կողմէն Պալտինին ընծայիցին: Եթք դուքսն ասոնք լսեց, իր մարդոցմն յօ ձիւոր և բազմաթիւ տեղացներ խրկեց, որոնք այս երկու հայոց բերդերը առին և կործանեցին^(*):

Եղան կ'ըստէից գրած է

« (Եղեսիոյ) կոմու և ճուլին, Տանգրետի երկիրն արշաւելու ատեն օգնութիւն խնդրեցին հայ Եփր Գող Վասիլէն (Պուասիլ կամ Գովասիլ) որ բազմաթիւ նալամուս բացողներ և ուրիշ պատերազմիկներ ժողոված կը տիրեր Բաղանին, Քեսունին և Հաւլէնի Հիւսիսային երկիրներուն: Վասիլ՝ կոմսին օգնութեան իրկեց 1000 ձիւաւոր տառակի և 2000 հետեւակ: Տանգրետ ասոնց գէմ ելաւ, պատրիարքը (Անտիոքի^o) միջամտեց, խնդիրը վերջացաւ, (1108—9):

«Հայ Եփրը, Լեռնի որդւոյ երկիրն Ճամբաներուն տէրը, մեռաւ: Տանգրետ վաղեց գրաւելու անոր երկիրը (1112, Նոյիմբ, Վերջերը), բայց հեւանդանալով Անտիոք դարձաւ:

Աւոն Աստի իշխանութիւնը կոխւներու շարք մը կը լինի, և վախճանը՝ եղերական։ Սա ի վազուց հաշակաւոր էր իբրև քաջ զինակից ֆրանգներու։ Իր իշխանութեան սկիզբը կը բարեկամանոյ յունաց հետ, մինչեւ իսկ իր աղջիկը կը հարսնացնէ Ալեքս կայսեր եղբօրը, բայց քիչ վերջը կը յարձակի անոնց դէմ։ Պահ մը Հալէպի Զանկի ամիրային հետ կը միաբանի Անտիոքի իշխանին դէմ։ ուրիշ անգամ՝ կը վազէ հիւսիսային թուրքերուն վրայ։ 1136-ին Սարուանդիքառը կը գրաւէ լատիններէն, որուն հետեանքով Երուսաղէմի թագաւորը Անտիոքի օգնութեան կը փութայ։ Լեռն, իր քեռորդի եղեսիոյ կոմսին հետ գաշնակցած, հազիւ կը փակէ կոփւր, և ահա կը դառնաց Մարաշի իշխանին Պալտինի վրայ։ Վերջապէս նենգութեամբ կը բռնութի Անտիոքի իշխանէն և հողային ու գրամսկան փրկանքով կ'ազատի։ Իր կորուստը փոխարինելու համար կ'ուղղուի դէպի արևմտեան Կիլիկիա և կ'առնէ Սելևկիա քաղաքը։ Եւ ահա, երկրին, բուն տիրապետը, Կիւռ Ժան կայսրը, կը հասնի զայրազին։ Լեռն, թէեւ լատիններէ լքուած, արիապէս կը դիմազրէ, բայց իր անխորհուրդ քաջազործութիւն վախճան կը գտնէ Կ. Պոլայ բանտին մէջ, ուր կը տարութի իր որդւոց երկուսին հետ (1137)։

Սյս գժբազդ դէպքն արմատախիլ պիտի ընէր Թուրինեանց նորաբողոք թուրփը, ևթէ Թորոս Բ. իր հօրը և եղբօրը մահէն յետոյ, ըլյաջողէր Կ. Պոլիսէն խոյս տալու և իր բնիկ լեռներուն մէջ ամրանալու (1145)։ Սյս յանգուգն և արկածաւոր սկզբնաւորութիւնը կը յայտնէ, թէ Թորոս Բ. մի սովորական իշխան չէր, այլ արիններու արիազոյն շառաւիդ։ Նո յրուեց Մանուէլ կայսեր խրկած մեծաժողով բանակը, որուն կ'ընկերանային նաև յունահպատակ հայ իշխաններ։ Հիանալի մի երեցիթ է այն հնարինաց և անվեհեր ողին, որ

«Գող Աւասիլի մահէն յետոյ, անոր կինը իշխաց. լաւ վարմունք ցոյց տալով բանակը սիրաշահէց։ Սյս իշխանուցին ֆրանգներուն դէմ օգնութիւն ինդրեց Պորսառքին, որ կը պաշտէր Եղեսիան։ Եմիր Անգօրը Պորսառքին կողմէն օգնութեան գաւովի իշխանուցին շատ դրամ և պատիւ ստացաւ։ Ֆրանգները 100 ձիւաւորով յարձակեցան Եմիրին Վրաց բայց յաղթուեցան։ Իշխանուցին ընծաներ խրկեց իշխան Մէսումին և Պորսառքին։ Ֆրանգ բնակիչները հեռացան դէպի Անտիոք»։

Թուրքնէն սկսեալ կարծես թէ ժառանգաբար, կը ցոլանար պյս լեռնական իշխաններուն դործոց մէջ: Թորոս Բ.-ի Պոլ սոյ մէջ կալանաւորումը մօտէն ծանօթացուցած էր իրեն յունական արքունիքն ու ազնուական գասը՝ որոնց զէմ արհամարհոտ գաղափար էր կազմել: Վերոյիշեալ պատերազմէն զերեալ հայ իշխանները փրկանքով արձակելէ յետոյ, երբ յոյն իշխաններն ալ կը խնդրեն փրկանք վճարել և աղատ թողուիլ անոնց կը պատասխանէ «Եթէ մի արժէք ունենայիք չէ վաճառել զձեղ»: Ի՞նչ բառերով հնար էր աւելի տաղել հայատեաց և զոռող աղքի մը զգացումները:

Թորոս Բ. Փրանգներու հետ ջերմ յարաբերութիւն կը հաստատէ. կը խոստանայ Խաչակիր բանակին օգնութեան յատկացնել 30,000 զինուոր—թիւ մը, որ գաղափար կուտայ իր անակնիալ զօրութեան մասին: Թորոս Բ. ոչ միայն կը ցանկար հաղորդակցիլ Ա. Քաղաքի քրիստոնեայ թաղաւորութեան հետ, այլ և պէտք կ'զգար մի զինակցի: Յունաց կայսրն անողոք էր և միշտ քինախնդիր: Թորոսը ջախջախիելու համար ինքինքն անկարող տեսնելով զիմեց իկոնիոնի Սուլթանին և անոր զրեց «Հանգօ զայրեցումն սրաի իմոյ յաղզին հայոց, տապալելով զամրոցս նոյա և բնաջինջ առնելով զնոսա»: Հոռոմ ինքնակալին այս զիմումը մի նմոյշ է բարբարիկ քաղաքականութեան, և անոր առջե հայ իշխանն ի հարկէ չէր կարող անտարբեր մնալ: Եթէ մէկ կողմէ ներքնապէս կը պաշտպանէր իր ամրութիւնները, միւս կողմէ կը դիմէր քաղաքագիտական միջոցներու: Թէև Մանուէլ կայսր պահմը յաջողեցաւ Թորոսի գէմ իրեն յարելու լատինները, բայց աւելի վտանգաւոր կացութեան պահուն, երբ անձամբ արշաւեց իիլեկիոյ վրայ, երուսաղէմի թաղաւորին և այլ լատին իշխանաց միջամտութիւնը նալաստաւոր եղաւ Թորոսին:

Թորոս Բ.-ի քաղաքականութիւնը կարճատե մի ընհատում ունեցաւ իրեն յաջորդին Մէհի օրով (1168—74) որ Թուրքինեանց պատմութեան մէջ ախուր համբաւ թողած է: Սա, հալէպի Սուլթան Նուրէտափինի պաշտպանութիւնը կը վայելէր: Երբ եղայրը մեռաւ՝ փութաց զրաւեց իշխանու-

թիւնը զոր իր Ստեփանէ եղքօր դեռահաս որդին Ռուբէն պլիտի ժառանգէր: Մլեհ, թէև կը նկարազրուի որպէս մի անհամբըյր և չար ոք, բայց յաղթող իշխան մ'եղած է Յոյներու և Լատիններու դէմ: Սորա անձին բուն նկարագիրը քննական պատմութեան թողելով հանդերձ, անկարելի չէ իրեն վերազրեալ ամբարշառութեանց մեզմացուցիչ պարագաներ գտնել: Լատինները 70 տարիէ ի վեր Կիլիկիոյ մէջ կամ սահմանաց վրայ հաստատուած, Հայոց անհաճոյ կը լինէին հետղհետէ, մանաւանդ Տաճարական կարդը—որոնց անդամ եղել էր երբեմն և Մլեհը—անտանելի կը դառնային: Ուստի հաւանական է որ այն թուականէն զոյացած լինէր մի կուսակցութիւն՝ «բարեաց ամենայն երախտեաց մոռացով» ֆրանցներուն՝ դէմ: Խոկ յշները՝ Հայոց համար անհաշտելի սոսիս կը նկատուէին, դեռ Թորոսի օրովլ Ստեփանէն սպանուեցաւ եռացեալ կաթսայի մէջ. թէև Հայերը «զայրացեալ ընդ զործ նենդաւորացն առին զվրէժ արեան նորա յանմեղ յունաց հաղարապատիկ», բայց յունատեացութիւնը կը սաստիանար օրէցօր: Աշա սյապէս, Մլեհ, թէ յունաց և թէ լատինաց դէմ քինախնդիր՝ միշտ հաւատարիմ մնաց նուրէտարինի բարեկամութեան: Իր այս ընթացքէն կրնանք հետեցնել թէ քաղաքական որոշ ուղղութիւնէ զուրի՝ սոսկ հակաբրիստոնէական ոգւով կը գործէր: Պատմագիրներու վկայութենէն գատելով, իր անբարոյական արարքն արդարե կը զերալանցեն իր մերձաւոր ժամանակակիցները, բայց իր սպանման բուն շարժառիթը կու սակցական ընդգիրմութեանց մէջ պէտք է փնտուել: Մլեհ, Գրիգոր Տղայի կաթողիկոսացման համար պնդելով՝ Շնորհալիի կտակը կը գործադրէ. իր հիմնած Մեծքար վանքով կը ցուցնէ թէ բոլորովին անտարբեր չէր հոգեոր պարտաւորութեանց նկատմամբ *):

*) Մասուսալ Անտոնէիներու պատճենաբետու մէջ Խոնէլը Նմիյ սպառէս կը յիշատակէ Մլեհը: «(Նուրէտարին) իր յարակերութեանց մէջ զորս ունէր ֆրանցներու հետ, (Աստուած զանոնք խռովի) յամախ կը դիմէր վարպետութեան և խորամանկութեան: Այսպիսի միջոցներով անմայ գրոյ յաղթահակ տարաւ շատ անգամ: Երբե օրինակ իր մեծ խոչւմութեան՝ յիշներ իր ընթացքը Մլեհը նկատմամբ որ հոյոց թագաւորին, Ճամբաններու տիրոջ 1, և ոսին որդին (թոռն) կը նուրէտարին շարունակ կը փաղաքչէր և կը շողաբրթէր այս Մլեհին մինչև որ դայն համոզեց իր ծառոց ութեան մոնելու, պատե-

Մէջի յաջօրդ Ռուբէն Բ.-ի իշխանութեան օրով (1174—85) մահմետական գաշնակցութիւնը տեղի կուտայ Փրանգական եղբայրակցութեան: Ռուբէն Երուսաղէմ կուղեռի և կամուսնանայ իշխանուցիի հետ: Սորա յատկորոշքաղաքականութիւնը կը լինի իր ձեռքին մէջ կեզրոնացնել ամբողջ Կիլիկիոյ Հայերուն իշխանութիւնը և կը ջանայ ընկճել մասնաւորապէս Լամբրոնի Տէթումեանները: Ասոնց թելաղրութեամբ պահ մը կալանաւոր կը մնայ յԱնախոք և ըլ յաջողիր իրագործելու իր ցանկութիւնը, թէե ընդհանուր առմամմի իր իշխանութիւնը Սիսուանի փայլուն շըրջանին արշալոյսը կը լինի, երկիրը կը նդարձակի, կը ծաղիի և լեռնական իշխանը կը գառնայ «մեծազօր սազրաբ» (Rupino Armeniorum, Satrapae potentissimo):

Ռուբէնի յաջօրդ Լևոն Բ.-ի (Լևոն Ա. Շահապարէ) օրով Սիսուանի աշխարհին փառքը կը հասնի իր միջօրէականին վրայ: Կարելի չէ մի հակիրծ տեսութեան մէջ ամփոփել այս վեհապետին գործունեութեան ուրուազիծն և քաղաքականութեան նկարագիրը, որուն համար առանձին զրուագ մը կը նուրիէ հայր Ալիշան: Մեր պատմութեան մէջ հազեւ կարելի է աւելի շողջողուն օրինակ գտնել այն կենսալիր շարժման, զոր Կիլիկիոյ Հայ ընկերութիւնն, իբրև քաղաքական ազգ, ստացաւ Լևոն Բ.-ի շնորհիւ: Թէ կարող ձեռքի մէջ որպիսի մողական ոյժ կունենայ իշխանական գաւաղանն, լիսպէս կը տեսնուի Լևոն Մէծագործ թագաւորի գահակալութեան շըրջանին մէջ, որ ոսկեղէն կամբջով կը միացնէ ՓԲ. դարու վերջին մասը՝ ԺԴ գարու առաջին քսանամեակին հետ (1186—1219):

բազմի և խաղաղութեան ժամանակ իր մօտը մնալու և բրանգներուն գէմ իրեն օգնելու: Այս մասին Նուրբէտին կը սկզ. «Անոր բարեկամութիւնը փափակեցայ վասն զի «իր երկին պաշոպահութիւնը շատ դիւրին է, ձամբաները անանցանելի և զղեականները անառիկ են: Մենք ձնարկաց մը ցունինք որ անոր երկիրը մնաէ, մինչդեռ նա «իր ուզած առեն կրնաց գուրս զալ և իսլամական երկիրները առպատակելը Եթէ «իրեն գէմ արշաւանք լինի՝ կը քաշուի իր սահմաններէն ներս, ինչպէս մի անմատչեցի որչի մէջ: Այս բանը տեսնելով ես մի քանի աւատական գիճակ պարգևեցի անոր «որպէս զի իր հաւատարմութիւնը ապահովվմ որով աշա որոշեց ինձի հպատակելու «և Փրանգներուն զէմ ծառացելու» Նուրբէտինի մահէն յետոյ այս ուղղութիւնը չը շարունակուեցաւ, հետեւաբար Մէկի յաջօրդ Հայ իշխանը մահմետականներէն քաղաքներ և բերդեր գրաւեց և այսպէս անդարմանելի չարիք և անհուն վեաս պատճառեց»:

Լեռն թ. իշխանութեան ղէկը ձեռք կ'առնէր երբ Արեւելքի մէջ լատին զօրութիւնը քայքայման վրայ էր: Եղեսիոյ կոմսութեան անկումէն 41 տարի վերջ, Սալահէտտինի ձեռօր կը կործանուէր Երուսաղէմի թագաւորութիւնն ալ, 90 տարի միայն աւելի յետոց (1187): Եւրոպական աշխարհը դարձեալ կը յուղուէր, Խղճահարութեան կամբաղդախնդրութեան ջեղերը նորէն կը ցնցուէին ու երրորդ խաչկրութիւնը կը կավճուէր: Հայոց վաղեմի աջակցութիւնն արդէն գնահատուած լինելով՝ Կղեմս Գ. պապը Լեռնին և Գրիգոր Տղայ կաթողիկոսին կը դիմէ և հայոց քրիստոնէական պարտաճանաչութեան վերստին կոչում կ'ընէ: Ահա այս առթիւ Լեռնի հետեած քաղաքականութեան արդիւնքը կը լինի՝ նորօրինակ կապակցութիւն մը Եւրոպական աղքերուն հետ և արքայական թագ Ալման (գերմանացի) կայսրէն, թէև Ֆրետերիք Բարբարոսայի ջրահեղձ մահուան պատճառով թագագրութիւնը կը յապաղի *):

Ուուրինեան իշխանները մէկ գարէ ի վեր ի զուր հետամտած էին յունական գերիշխանութեան լուծը թօթափելու: Լեռն արևմտաւթէն թագ Խնդրելով՝ ի բաց կը թողուր Բիւղանդեան կայսեր անմիջական հպատակութիւնը և կ'ընդունէր Ալման կայսեր անուանական թեարկութիւնը: Այս կարեոր փոփոխութիւնը յունական արքունեաց ուշազրութենէն ըլլ վրիպիր անտարակցոյս, բայց Ալեքս Գ. նախամեծար կը դատէ Խնդրին անուշ տեղը կապել և նախ իր կողմէն կը խրկէ «թաղ դեղեցիկ, ոսկւով և ակամիք պատուականօք ընդելուզեալ և ասէ. զթագն հոռվմայեցւոց մի՛ դիցես՝ ի զլուս քո, այլ զմերդ, զի առ մեղ հուպ ես քան՝ ի հոռմ **»: Լեռն ընծայ կ'ընդունի նոյնպէս Պալատատի Ամիրապետէն և կը բարեկամանայ Կարնոյ Տուղրիլ շահին հետ: Օտար վեհապետներու այս գերիշխանական ցցցերը հայոց նորապատի թագաւորին համար ոչ թէ լուծ, հապա ոյժ կը դառնան. անոնց միահամուռ հա-

*) Լեռնի մեծահանգէս օծումը կատարուեցաւ 1199-ին. բայց 1196-ին պատահ էր արդէն Ալեքսի խրկած թագով:

**) Կիրակոս Գանձակեցի:

ւանութեան աղղեցութեամբ՝ իր լատին, յոյն և իսլամ հազարակներուն վրայ բացարձակ կը տիրապետէ, իսկ փոխադարձ մրցութեարուն շնորհիւ՝ իր միջազգային զիրքը կ'ամրացնէ և «ինքնակալ» տիտղոսը գործնականապէս կը նուիրագործէ:

Երկրին կաղմանկերպութիւնը կատարելագործելու և իր պետութիւնը կեղրոնայնելու մեծ գաղափարին դէմ Լեռն կունենայ այլ և այլ խոնզոտներ, որոնց ամենէն վտանգաւորը ներքին էր: Խուրինեան ցեղին հնօրեայ մրցակից էին հեթու-մեանները, Լամբրոնի անառիկ բերդին մէջ ամրացած և յու-նական շահերուն հաւատարիմ մնացած: Հարստութեամբ, պերճութեամբ և գիտութեամբ՝ հեթումեանները մասնաւոր համբաւ կր վայելէին և Խուրինեան պայազատներու յաճա-խակի ոտնձութեանց դէմ իրենց սեփականութիւնը պահպա-նած էին: Լեռն, առաջին օրէն որոշած էր իր վեհապետա-կան հեղինակութեան ենթարկել այս գերդաստանը: Մեզի յայտնի չէ թէ Լամբրոնի ամրոցին դէմ իր թշնամական զոր-ծողութիւնները ինչպէս կ'արդարացնէր, բայց կրնանք ըն-դունիլ թէ ազգային—քաղաքական տեսակէտով, հարկ էր որ հեթումեանները, ինչպէս և ամեն մասնաւոր ընտանիք-ներ և տոհմիկներ, զոհէին իրենց շահերը՝ ցորչափ որ անոնք անշրաժեշա էին ընդհանուր նպատակի մը համար: Վերջ ի վերջոյ, Լեռն որ «Խորհէր իմաստութեամբ փետել զթես նո-յա և ցածուցանել զբարձրայօն հպարտութիւն նոցա», յաջո-ղեցաւ իր նպատակին մէջ և Լամբրոնը արքունի սեփականու-թիւն րրաւ, թէե ոչ առանց խորամանկութեան:

Աեռնի ժամանակաշրջանին յատկանիշը չենք կրնար ծըշ-
դել առանց զիտելու անոր կատարած քաղաքական, զինուո-
րական և ընկերական փոփոխութիւնները: Ֆրանգներու հետ
հայոց խնամութիւնը առաւել կընդհանրանայ, Եւրոպական
շահաստաններու հետյարաբերութիւնը կը սերտանայ, Հիւան-
դանոցի, Տաճարականներու և Տետոնեաններու կարգերը աւա-
տական պայմաններով բերգերու կը տիրանան, լատին ազնու-
ականութիւնը երկրին մէջ կը բաղմանայ և պատիւներ կը վա-
յելէ, քաղաքական, զինուորական և դատական հիմնադրու-

Թիւնք Եւրոպական երանդ կ'առնեն, արքունի զիւանատան մէջ Փրանսերէնի և լատիներէնի Ճիւղ կը հաստատուի, վերջապէս Սիսի գարպասը արեւմտեան պալատներու մի փոքրիկ նմոյշը կը դառնայ:

Այս նորօրինակ կարդուսարքին անմիջական տպաւորութիւնն ի՞նչ պիտի լինէր հայ ընկերութեան վրայ:— Զենք կրնար հաւատալ որ համայն ազգը սիրով ողջունեց այս յանկարծական յեղաջրջումը: Աւանդականն ու նորամուտը, ազգայինն ու օտարը, արեւելեանն ու արեւմտեանը միմիանց հանդէսկ պիտի գրտնուէին, ու այս հանդիպումը՝ առանց ընդհարման չը լինէր: Անհատական նկատումներու և մասնաւոր շահերու կոհիւր չը միայն որ պիտի ծաղէր, այլև հանրային ներհակ սկզբունքներու վէճը: Կիլեկից հայութիւնը, թէև անկախ գոյութիւն կը վայելէր այն պահուն, բայց մի մասն էր ևեթ ազգային մարմնոյն, որուն սիրաը անբաժան էր հայաստանի հողէն և անդամները կը տարածուէին 'ի սիրիւս աշխարհի: Հետեւբար, օտարամուտ նորութիւնը համօրէն հայ ժողովրդին քննութեան պիտի ենթարկուէր և անհամաձայնութեան սերմը՝ մասնաւորապէս կրօնական խնդրոց մէջ, վերջ՝ ի վերջոյ Ճարտկ պիտի գանէր:

Արդարեւ հայ տարրին գմկամակութիւնը, ազգային կուսակցութեան մը ընդդիմութիւնը, որչափ որ բնական, նոյնչափ ալ վտանգաւոր կը լինէր առաջին օրէն իսկ, եթէ Լեռնի նկարագիրը կատարեալ վստահութիւն և անոր բարենորոգումները բաւական հրապօյը ներշնչած ըլ լինէին: Արեւմտեան աշխարհը արեւելքի քրիստոնեայ զօրութեանց նուազման վրայ մտահոդ և երուսաղէմի թագաւորութիւնը վերականգնելու ջանապիր՝ այն պահուն գուրգուրանոք կը գիտէր արեւելքի երկու քրիստոնեայ իշխանութիւնները, որոնց մին՝ կիլեկից մէջ կը ծաղէր և միւսը՝ Ռիչարտ Առիւծասիրտակ յաղթանակով կիսպրոսի մէջ կը հաստատուէր: Լեռն և իր խորհրդակիցները կը ցանկային շահագործել Եւրոպական աշխարհին այս բուռն տրամադրութիւնը—ինչ որ ալ լինէր անոր բուն շարժառիթը և հեռաւոր ձրդումը: Հայ հասարակութեան ամբոխն ալ թէև գայթակղածէր Փրանդ ազգին արարքներէն, բայց միշտ լաւատեսական յըսե-

րու հակամէս՝ խաչազգեստ ասպետներուն ակնխափիղ նիզակներուն վերև հայաստան աշխարհին համար յուսաշող արշալոյս մը կ'ընդնշմարէր: Եւ ինչպէս կարելի էր որ դարաւոր թշնամիներէ պաշարուած նորածին հայ տէրութիւնը՝ ի բաց մերժէր իրեն կարկառուած պաշտպանութիւն մը, պաշտպանութիւն՝ որուն զուղընթաց կը հասնէին առեւտրական գործունէութիւնը և նիւթական ճոխութիւնը:

Պնդելով թէ առանց զոհողութեան ամրագնդեցաւ ֆրանգներու այս յարաբերութիւնը, անդիտացած պիտի լինէինք այն անխուսելի պայմաններն ու պատշաճից օրէնքները, որոնք նմանօրինակ պարագայից մէջ միշտ պահանջելի են: Սակայն այդ զոհողութեան բնութիւնը մօտաւորապէս ճշգելու համար, թերեւ բաւական էր ուսումնասիրել միայն՝ պատպական իշխանութեան հետ կեռնի առընչութիւնը, որ հակընդգէմ կարծեաց անսպառ նիւթ կը մատակարարէ մինչեւ ցարդ:

Ճշմարիտ է որ կեռն որդիտական հնազանդութիւն կընծայէրին, իր նամակները, ընծայները, և կիլեկիոյ մէջ լատին եկեղեցւոյն և եկեղեցականներուն շնորհած թշլառութիւնը՝ բաւական առաջոյց են այս բանին: Սակայն նոյնչափ ևս ճշմարիտ է որ այդ հնազանդութիւնը կ'ուղղուէր Պապին ոչ թէ քահանայապետական, այլ վեհապետական հեղինակութեանը: Հռոմեական պապ մը ի՞նչ էր այն պահուն. — Եւրոպայի ամենահզօր անձնաւորութիւնը, որուն ձեռքն էին ոչ միայն Ա. Պետրոսի բանալիքը այլ և աշխարհի քաղաքական բաղկը: Եւրոպայի համայն պետութիւնները յեղափոխական հրոյրքով կը սասանէին, բայց պապութիւնը կը զօրանար օրլատօրէ և կ'ընդլայնէր իր տիրապետութեան ոլորտը, այնպէս որ, պահ մը՝ պապական զահուն ճորտ կը գառնային թագակիր զլուխներ — Բորգուկալի, Արտգոնի, Անգլիոյ, Սկովակոյ, Սարակինիոյ և Երկույ Սիկիլայց վեհապետները: Մասնաւորապէս, Երուսաղէմի վերազատման և Անդրծովեայ գաղթականնութեան (Արեկելքի) խնդիրը՝ Վատիկանի գահին էական և նուիրական քաղաքական դաշտական իշխանութիւնն էր, մինչդեռ խաչակրութեանց ամենափայլուն իշխաններն իսկ, սոսկ անհատական հակումներու և պա-

տահական գէպքերու համեմատ կը նկատէին այդ խնդիրը:
Լեռնի կողմէն Հռոմէական եկեղեցւոյ պետին յայտնուած-
հպատակութիւնն՝ ահա այս պայմաններու մէջ աւելի որոշ կը
նայ բացատրուիլ:

Յայտնի է որ մէկ քանի եկեղեցական նորութիւններ առա-
ջարկուեցան Հայոց՝ իբրև փոխարինութիւն արքայական թա-
գին: Այս տոթիւ, եպիսկոպոսներու ժողովին առջեւ Լեռնի խոս-
տումը — «Դուք մի՛ ինչ հօգայք վասն այգորիկ, ևս հաճեցից
զմիաս նոցա առ անգամ մի կեղծաւորութեամբ»* — կը պարզէ
իր հալատակութեան տեսակը: Աւելի պերճախօս է Լեռնի յանդի-
մանագիրն առ Համբանացին, որուն քրիստոնէական անխարտ-
կանութիւնը մինչեւ լատինասիրութիւն հասած կը համարուեր:

Սրդարև, Լեռնի բարենորոգիչ ողին և քաղաքական նըր-
բամտութիւնը՝ զինք կը մղէին սիրալիր յարաբերութիւն, մինչեւ
իսկ ազատական թոյլառութիւն ցոյց տալու օտարներուն, բայց
իր տէրութեան շահուց և արժանապատուութեան խոչնոտ-
ները երկաթեայ ձեռքով կը բառնար: Անտիոքի իշխանութեան
վրայ իր եղբօր թոռան (Խութէն-Խէյմոնդի) իրաւունքը պաշտ-
պանելու համար տարիներով մաքառեցաւ, լատին իշխաննե-
րուն և կղերին աչառութիւնը զէնքով պատժեց, Տաճարական-
ները կիլիկիայէն արտաքսեց, մինչեւ իսկ լատին կրօնաւորնե-
րու մուաքը արդիլեց (1211—12), և այս առենքը՝ 'ի հեծուկս
իննովիկենատիոս Գ. Պապին բանագրանաց....:

Յոյժ երկար պիտի լինէր թուել Լեռն Մեծի պատերազմ-
ները, որոնք ընդհանրապէս յաջողութեամբ վերջացած են: Իր
արիական առաջին ապացոյցը կը փայլի Սալահէտինի գէմ: Սա
Փրանգներէն յափշտակած էր Պաղբասը (1188). Իր զօրքը հա-
զեւ թէ կը հեռանայ և ահա Լեռն հայագունդ պահակազօր-
քով կ'իւրացնէ այդ կարևոր բերգը: Անիէ յետոյ կսկսի Հալէպի
երկրին վրայ իր յաճախակի արշաւանքը: Վերջերը, Սալահէտ-
ինի սպառնական պատղամաւորութեան առջեւ Լեռն աննկուն
կը ֆնայ և կը պատրաստուի գիմագրելու երուսաղէմի մեծա-
զօր յաղթականին, բայց մահը կը հասնի այդ վատնգաւոր հա-

*.) Կիր. Պանձակեցին

կառակորդին վրայ (1193): Սալահէտտինի դէմ Լեռնի այս ընթացքին գատելով, անհաւանական կը թուի թէ ինք թելաղիր կամ տեղեակ եզած լինի Գրիգոր Տղայ կաթողիկոսի կողմէն առ Սալահէտտին ուղղեալ նամակին, որով Խաչոկիրներու բանակին վրայ տեղեկութիւն կը հաղորդուի *):

* Գրիգոր Տղայի այս թղթակցութիւնը յատկապես կը յշատապէ է. Տիւլուիւն, իրու յատկանից այն քաղաքականութեան որուն հնակեցան հայերը՝ և բոպացի պատերազմիկներուն և Սալահէտտինի հակամարտութեան մէջտեղ Ընդհակառակն, հայր Դ. Ալիշան յիշեալ թղթակցութեան գյութիւնն անհաւատալի կը դատէ, այսպէս գրելով՝ «Եւ մեծագոյն ևս ասոցօք թուղթ մի կարգատարակ էն (Երախտիք) յանոն Քրիտորի որդւայ Ասալի, որպէս թէ կաթողիկոսին Գրիգոր Տղայոյ, առ Սալահէտտին, Արտեմարար Ճանուցանելով նմա զորքանութիւն բանակին Ալամանաց, զարկածս կացաւերն և զոր յետ այնր. Մարթ էր մասնչի ուրուք Գրիգորի, կամ որպէս գրէ Պո-«Հակոտտին պատամիչ նոյն, Գոդոյ, (Խայգուա) «բրույ» Գրիգորի արդույ Ասալի, Հրա-«մանատարի Հոռոմլայ, գրել այդպիսի ինչ»: (Ախուան, երև 447):

Երգարե. յյդ կասկածելի կը թուի որ, նրուսակմի անկոււթը ողբացող և Հռո-մաց պատին հիմ թղթակցութիւն մշակող կաթողիկոս մը պարան երկդիմի ընթացք ունենայ, պատուամենային կ'արքէ խնդրը քննութեան ենթարկել մինչև որ ըստ բարականին լուսարանուի: Պէտականին, որ մեծ դատաւորի (Դատիի գուտառաթ) տիտղոսը կը կրէր, իր Սալահէտտինի կենսագրութեան» մէջ կը գրէ:

«Սուլթանն արգեն նամակ մը ասոցած էր կաթողիկոսին (արտքերէն կը կար-դացուի բանին կամ տանիքուս) որ է հայոց մեծաւորը, և որ Հոռոմլայի տէրն էր... Ահաւասիի յիշեալ նամակին թարգմանութիւնը ...»

(Կը փոխադրենք միայն վերջին տաղերը) ... Նախարարին (Աղնալին) ճամբայ Եւայ «Եր Եվայուաց թոփառը դիմուարիւս, տեսաւ որ իր նախարար իրիւշ Տարրիւշ Եւ ու ու «Քառունակ Անոն թափառը ըրբն (Գրիգորէրէն) ճամբեն յետոյ Ալամանաց բանակին գոխուշ էին: «Այս բանիւշ լույսն ուն Լառուրին ուղարկուած էր բերրիւշ ճշուն մէջ... (Այս-«նոյ) թափառը ըրբն... լույսն Լառուն պարտաճանաւուրեաւած գոխուսը անսաց երաւեն ճամբայ իրիւշ չեւ առտքարուած և ըստ անոնց հոյրը ծերունի ճարդ ճշուն էր և այս իշտիւշ գոխուս բանն պարտաճանաւ Սամարին առարգանցանութեան գոխուշն էր: Պէտակիւնը պատաժարուած էր էն. Էս որ այսպի նեղութիւն իրեցի: Ով որ ինձի զը հնապահութիւն անոր Երիւշ իւ նախարարին: Լառուրին հարստրառեցան անոր ուղ էրիւսւու...: Զեր խաւարհ աշուայն ահա լուժանացներ իրաց վեճուի: Ինե նոր դեպիւր պարագնին, դարձեալ ու «հակուրդի Սարտածուի: Ահա պատիս գրած է կաթողիկոսը (կը կարգացուի Կուրքու), որ կը նշանակէ Խալիֆա (կրօնագում). անունն էր Պար Գրիգոր Պատիւլ»:

Քանի մը էջ գարձնելով կը կարդանք հնուեեալ:

«Երկրորդ ըաների մը, որ եկած էր կաթողիկոսն (կը կարգացուի Կուրքու), ընդունուեցաւ Սուլթանին ներկայութեան, ուր ևս ալ անձամբ կը գտնուէր: Այս մարդը մեզի հաղորդեց, որ Ալմանները յյդ տկարացած էին. իրենց մօս ոչ ձի մնացած էր և ինչ պաշար, և կաչ կարաւաց մեծ մասը էշերու վրայ կը բերցնէին էն են»...:

Միենցն թուականին, Յունաց կայսրը Խաչակ Ընդելսո գեսպանութիւն կը հաս-տատէր Սալահէտտինի մօս և քրանզերուն գէմ գաշնակցութիւն կ'առաջարկէր: Նոյն պատեհութեամբ էր որ, քուրդ սուլթանը Մարգարէին հաւատացեալներուն համար պաշտօնական թղթուութիւն կը ստանայ կայսրէն, և Սթանակովի պարփակներէն ներս

Սալահէտարինէ զաս, սակաւաթիւ չէին Լեռնի թշնամիները: Յիշենք իկոնիօնի սուլթանները, Հալէպի իշխանները, թիւրքմէն պէկերը, ու մանաւանդ Անտիոքեան վէծին Հեղինակը, միականին Պեմունդ, որ ոչ թէ իր կարողութեան գերազանցութեամբ, այլ լատին իշխաններուն և կղերին կուսակցական պաշտպանութեամբ տարիներով զբաղեցուց Լեռնի բեղուն միտքն ու թանգ ժամանակը:

Իր թշնամիներուն վրայ փայլուն յաղթանակներ կը տանի Լեռն, ի բաց առեալ մէկ քանի գէպէրը, զորս, մանաւանդ իր ծերութեան օրերուն մէջ, կը ստիպուի խաղաղութեամբ կնքելու^{*}): Հռոմայ քահանայապետի բանագրանքն ալ—թէկ անդօր

առաջին անգամ կ'ընդունուի Տէճուրը (ամբիօնը) և առաջին անգամ կ'արտասանուի Խօնութիւնի աղօժքն ու Ապահանեան խալիքաներուն յիշատակութիւնը: (1189)

Եյս գէպէրը նկատողութեան առնելով արդեօք անկարելի է որ Հայերն աւ ներքնապէս Խաչակիրներուն համակրելով հանդերձ, ձախորդ պատահականութեանց գէմ կանասհազորութիւն մ'ունենացին: Երուսաղէմի անկումն յետոյ Քրիստուրիք Բարբարոսի յանկարծական մաշը, և երրորդ խաչակրութեան ընդհանուր ելքը, քաջալերական չէին: Չը մոռնանեմ նաեւ, որ Գրիգոր Տղոցի կաթողիկոսացումը՝ մահմտական Սուլթանի մը—նուրեւուինի—պաշտպանութեամբ յաջողած էր:

*) Եյս ամսուր գէպէրէն մին հետեւեալ կերպով կը նկարագրէ Խօնութելու կիսի:
«Եյս պահուս (1217), Սիսի սահմանաց հարկահանները Սիսի թագաւոր Լեռնի գէմ գանգատելու եկան: Արքունի հաշուականները խնդիրը ներկայացուցին Սուլթանին (Խղողէտորին Քէյքառուսի): Սուլթանը զայրացաւ և իր մեծանձնութեան երակը շարժեցաւ: Եթի իր իշխանները Խորհրդակցութեան կանչեց, անոնք միարերան ըսմի թէ Զօրկ է աշարեկել և պատճել այդ անամօթ և չարահաւատ մարզը լայց որովհետեւ մէր կը որիձները թիւրք են և լունացին օդերու վարժուած են, այս եղանակի մէջ անոր երակիրը մանել անհնարին է ջերմութեան, մժելներու և մեծակիներու պատճառաւ, եթէ սուլթանը ողորմածարար համբեկէ մինչեւ աշնան վերջը, որպէս զի ձիերը գիրնան, ուռեւսանները առատասան և արեւոն ասալութիւնը նուազ ի, այն ատեն Սասուծոյ օգոնութեան և սուլթանին մեծափառութեան շնորհիւ Շամբայ կ'ելլենք և այդ պարտազանցը ըստ արժանույն կը պատճենը, այնպէս որ կրթուի և ուրիշ ինքնահաւաններն աւ սարսափելով օրինակ առնեն:» Չարունակելով պատմագիրը կ'աւանդէ որ, աշունը կը համսի և սուլթանը կ'արշաւէ մինչեւ Ազօրսին: Լեռն լսելով «անդիկի պէս կը ճընշուի, հոգին կը վասի և իր պարտազանցութեան վրայ կը զղայ»: Սուլթանը տամար երեք օր շարունակ կը յարձակի ճանձին (Ճանձոյ) բերդին վրայ և կը դրաւէ: «Նոյնակ կը դրաւէ Կանչին (Կանչոյ) բերդը: Եմիք Թալայաց պէկ 3000 քաջերով կը վազէ «անիծեալ Լեռնի» վրայ, բայց կը պաշարուի «անհաւատներէն»: «Պարսն Օչին, պարսն Վասիլ և պարսն Դումագուազը մեծ իշխանները» Լեռնի բանակին մէջ էին: «Պարսն Դումագուազը և պարսն Օչին և նոշին?» կը բանուին և կը ներկայացուին սուլթանին որ իրենց պարզեներ կը ընորհէ: Սուլթանին զօրքը կը վերատանաց անթիւ գերիներով և աւարներով այնպէս որ Կեսարից աշխարհին մէջ գեղեցիկ հայ ծառայմը կամ աղափին մը՝ յօ ստակի կը ծախուի. Ժինդ եղ՝ 2 ստակի և հինգ ոչտար՝ 1

մացած—շուտով կը լուծուի, և Լեռն միշտ կը նկատուի «ամենասիրելի որդի, պայծառափայլ թագաւոր հայոց, և բարեպաշտ առատաձեռն»։ Լեռնի օրով Կիլիկիոյ տարածութիւնն իր բուն ուշհմտնէն շատ տւելի կ'ընդարձակուի, այլազդի ցեղապետներ կը խոնարհին հայկական գահին առջև և 72 բերդեր կը հսկեն այդ նորածին թագաւորութեան վրայ, որուն հարազատ անուանակոչումը ժամանակակից հայրապետէն նուիրադրծուած՝ եօթ դար յետոյ հայր Ալեքանի պատուական զըսին ներքե կը վերափայլի որպէս ԱՇԽԱՌՀՆ ՍԻՄՈՒԱՆԱՅ։

Լեռն Մեծագործի բարեբաստիկ շրջանին կը յաջորդեն աղմկայոյդ տարիներ։ Որովհետեւ իր միակ ժառանգն էր «Զապէլ խաթուն», տասնվեց տարեկան դուստրը, այլ և այլ թեկնածուներ տռաջ եկան, կուսակցութիւններ կաղմուեցան և ներքին կուլւներ մզուեցան։ Բարեբազգաբար, խնամակալ պարոն Կոստանդին—որ իր պաշտօնակից Սիր Ատանի խորհրդաւոր սպանումին ի վեր ինքնապլուս կը դործէր—թէ խելքով և թէ ուժով զերակշխո հանդիսացաւ և խաղաղութիւնը վերահաստատեց։ Վերջապէս հայոց թագաւոր ընտրուեցաւ Ֆէլիք, Լեռն Մեծի հակառակորդ Պեմունդի որդին։ Այս ընտրութիւնն որչափ որ անակնկալ անշուշտ հարկեցուցիչ պարագաներու հետեւանք էր։ Նորանոր թեկնածութեանց

ստակի կը ծախսուին, Յնայոյ, Լեռն «աղերասպիր» կը իրկէ սուլթանին՝ գերեալ իշխանոները ինդրելու համար, տարեկան 20,000 ֆլորին հարի վճարելու և իր խոնարհութիւնը միշտ մասուցանելու կը յօժարի։ Զիյաէտափին Դարա Ծրալան կը խրկուի Լեռնին և անոր երդումը կը լսէ և կը տարուան հարկը կ'առնեւ Դերեալ իշխանները կը վերադառնան։ (Թէվարին է ուշ Ալեքսանդր։)

(Մեր պատմիներուն համեմատ՝ սուլթանը Կասպանի բերդին վրայ անյաջող, յարձակում, վերջ Կոստանդին Գունդսասապլ միւս պարոն Կոստանդին, Պայլ Աւան, Կիռ Սահակ և Վասիլ Օքսենց իշխանները կը գերէ։ Լեռն ուրիշ ձամբով սուլթանին երկրին վրայ կը յարձակի, որով նու կը ստիպուի վերագառնալ Իշխանները տասնըվեց ափս գերի մնալէ յետոյ կ'աղատին։ Լեռն անոնց համար իրկանք կուտայ Լուլու և Լաւզատ րերգերը։)

Իաննէլ-Պիոլի, ասկէ առաջ կը յիշաստակէ որ, երբ Լեռն, Տուղրիլ շահի և Քօյքէպատի դաշնակցութեամբ Կիսարիս քաղաքը պաշարած էր (1211), Քէմբառու իրեն ընծայ կը խրկէ 12,000 եպիստական սոկոյ արժողութեամբ մարդաբառացեռ թաշ-կինակ մը և ձեռագրով ու երդմամբ կը խոստանայ երբէք չըյարձակիլ անոր բերդերուն վրայ և պաշարի համար (12,000 մետր ցորեն խրկէլ հայաստան)։ Լեռն կը հրամացէ որ «գիշերով բեռցնեն սւզուերը և ջորիները, և սարքեն ձիանը, այնպէս որ արեածագէն առաջ Տէվէլիի սահմանէն մտնեն Հայոց երկիրը»։

աեղի չը տալու և լատին կուսակցութեան դոհացում պատճառութու համար հայք թոյլ տուին որ Ֆիլիպ փեսայանայ Զապէլին և տիրանայ թաղին, բայց «բերին՝ ի պայման, որ հայենակ կենայր և զեկեղեցին և զսեղանն՝ հայենակ տանէր և զամէն մարդ յիւր իրաւունք պահէր»: Ավանս որ, այս պայմանը բաւական զօրութիւն չունեցաւ և Ֆիլիպի իշխանութիւնն արագահաս վախճան ունեցաւ (1222—1226): Ֆիլիպ կը ժառանգէր մի կեղրոնացեալ զօրաւոր իշխանութիւն, բայց որովհետե երկրին օրէնքներն ու հիմնարութիւնները տակաւին չէին արմատացած՝ անհատական և հաւաքական պայքարներու միջև տէրութեան գերագոյն շահը պաշտպանել ի՞ր պարտքն և ի՞ր իրաւունքն էր: Դժբաղգաբար, Ֆիլիպ, որուն վրայ իր մեծափառ նախորդին արտասովոր փայլը բնականաբար մի ստուեր կը տարածէր արգէն, իր պարտուց և իրաւանց անգէտ՝ առաւել ևս տիարացուց իր հեղինակութիւնը: «Երդմնազանց եղեալ հայագաւան և հայասէր լինել»՝ օտար շահերու պաշտպան դարձաւ, Սիսի գանձերը Անտիոք փոխադրեց, հայ տարրին զգացումը վիրաւորեց, և վերջապէս գահընկէց եղաւ *):

Ֆիլիպի անկումը օտար մեքինայութեանց գէմ կազմակերպուած շարժման հետեանքն էր. իր յաջորդին ընտրութիւնը՝ ազգային կուսակցութեան յաղթանակն եղաւ: Կոստանդին Պայլի որդին հեթում ընտրուեցաւ թագաւոր և Զապէլ թագուհին, վերջապէս համակերպելով ազգին ցանկութեան՝ իր ձեռքը տուաւ անոր:

*) Ապուլիսարած ասորի եպիսկոպոսը հետևեալ մանրամասնութիւնները կ'աւանդէ: «(Փիլիպ) կը փափագէր հայ իշխանները հեռացնել և ֆրանզները առաջ կոչել Հայերը կ'արհամարհէր. կ'լաւէր թէ: անոնք զբանան չեն, հապա գիշացի են: Զանոնք իրեն սեղանակից չեր ըներ. մինչեւ որ տասն անգամ գուռը չը ծեծէին՝ սենեակէնն ներս չեր ընդուներ: Այս կերպով առելի եղաւ. երկրին մեծերը չը կրցան դիմանալ և Պայլն (ինաւակալին) դիմելով խնդրեցին որ զիրենք անոր ձեռքէն ազտու: Կոստանդին նախ երդում առաւ իշխաններէն եւ յետց որսորդի կերպարանքով մարդիկ պատրաստեց, որոնք զիշերով մոտն թագաւորին սենեակը եւ զինք կնոջը քովին հանեցին: Իզապէլ սկսաւ լսէ եւ մազերը փետակը եւ կ'ազաղակէր. Սի՞ր, Սի՞ր, — որովհետեւ շատ սէր ունէր իր ամուսնոյն վրայ: Բայց մարդիկը ականջ չը տուին և Ֆիլիպը կապելով տարին Սիսի բանտը, ուր մեաց երկու տարի: Հայրը Պեմոնդ բան չը կրցաւ անել: Այլ միջնորդներ իրկեց, վերջն ալ անձամբ եկաւ: Հայերը յօժարեցան Փիլիպը տանեւլու Ամուսա բերդը, բայց հօրը ըսին որ 20 օրէն աւելի չառլիքը, որովհետեւ թունաւորուած էր: Եւ իրօք չ'ապրեցաւ»:

ՏԵՇԱՅԻ Ա.-ի իշխանութեան միջոցին (1226—1270) մի նոր
յեղաշընում կը կատարուի քաղաքական աշխարհին մէջ: Մողոլ
թաթարները Միջին Ասիային դէպի արեւմուտք կը խուժեն, ի-
րենց առջև առևն ցի կը խորտակեն և իրենց արշաւական գնա-
ցքին ետև արեան և աւերածի անընդհատ դիմ մը կը թողուն:
Սիսուանի զօյութեան սպառնացող այս վտանգին հանդէպ՝
Հեթում պատրաստամութիւն ցոյց կուտայ և կը փութայ իր
խոնարհութիւնը ընծայել Թաթարաց վեհապետին: Իր առաջին
պատգամաւորութիւնը հաճութեամբ կընդունուի Պաչունցին
զօրապետէն (1244) և այսպէս, Սիսուանի թագաւորութիւնը
կ'ենթարկուի մի նոր թեարկութեան: Հեթումի և իր խորհրդա-
կաններուն այս ուղղութիւնը՝ դիւանազիտական կարողութեան
փայլուն ապացոյց մըն էր — ինչպէս կը վկացեն Եւրոպացի հեղե-
նակներ — և նպաստաւոր արդիւնքով պսակուեցաւ ցորչափ որ
թաթարները իրենց խոստաման հաւատարիմ և իրենց գերակշ-
ռութեան տէր մնացին: Թաթարներն ի բնէ խորամանկ և աշ-
խարհավարական նուրբ հաշիւներու ընդունակ ազդ էին. քրիս-
տոնէութեան և մահմետականութեան կոխներուն մէջ՝ Աւե-
տարանիշեակետ հետեղներուն ձեռք տուին: Անոնց աշխարհակալական
նշանակէտն էր Երուսաղէմ, ուստի քաղցր յուսադրութիւննե-
րով օրօրեցին պատկերը և քրիստոնեայ իշխանները, մինչդեռ ա-
սոնք՝ վստահացած էին որ իրենց այս նոր գաշնակիցները վեր-
ջապէս լոյս հաւատագի պիտի գառնան, Ա. Գերեզմանը պիտի
փրկեն ու Երուսաղէմի թագաւորութիւնը պիտի վերականգնեն:

Արեւմտեան աշխարհին այս գեղեցիկ յօյսերը չերականա-
ցան, բայց թաթար խանները քրիստոնէից վրայ համակրութիւն
ունեցան, քրիստոնէայ իշխանութիւններու հետ ամուսնացան և ա-
նոնց համար եկեղեցի և սիղան կանգնեցին: Եղան թաթար զօրա-
պետներ որոնք Աստուծոյ տաճարը մտան և խաչն առջև երկր-
պագեցին: Ամեն պարագայի մէջ, կրնանք ըսել թէ թաթարական
գերակայութիւնը քրիստոնէութեան համար իբրև զօրավիդ ող-
ջունուեցաւ, որովհետեւ խալամական զօրութիւնը, խաչակրու-
թիւններու առջև աննուած մնացած՝ առաւել քան երբէք վը-
տանգաւոր կը գառնար, իսկ պատութիւնը զիջողութեան կամ

Հաշտութեան ոչ երբէք տրամադիր՝ այդ զօրութիւնը խորտակելու հնարք կը վիճակուէր: Եղիպտոսի Սուլթան Մէլիք էլ-Քեամիլի հետ Թրետերիք Բ կայսեր հաշտութիւնն իսկ—որով Երուսաղէմ կը վերադարձուէր Քրիստոնէից—Դրիգոր Թ. պապէն բանագրանքով միայն վարձարուեցաւ: Կար ժամանակի որ միայն ճշմարիտ իսլամին արիւնակաթ սուրբ ահ կը պատճառէր, բայց հետզհետէ ֆրանդ ասպեսներու հետ հաղորդակցող բոլոր միւս միւսներուն աղատախոհ և կամ սկեպտիկեան զաղափար ներն՝ աւելի սարսափ ազգեցին Վատիկանի շրջապատին մէջ:

Կը տեսնենք, ուրեմն, որ թաթարաց հետ գանակցելով հայր ոչ միայն զերծ մնացին մի անխուսելի հարուածէ, այլ և ներդաշնակութիւն պահեցին լատին աշխարհին հետ, որ Սիսուանի մէջ տակաւին ունէր զօրաւոր ջտուգովներ—թագուհին Զապէլ թերեւս, անոնց պարազլուխ:

Բայց, աւելի մեծ, հսկայական մի ծրադիր յղացուած էր հեթումի հեռանկատ մաքին մէջ: Հասարակաց թշնամուցն զէմ արևմտեան ազգերուն արևելքի հզօր պետութեան հետ գանեակցութիւնը մեծ հետեւանքներ կը խոստանար: Քաղաքական հորիզոնը յղի էր հաւանականութիւններով. համօրէն հայութեան սիրտը կը բարախէր միւնցին իղձերով...: Հեթում անձամբ կը զիմէ Մանգու խանին և իր հպատակութեան զգացումները արտայայտելով հանգերձ, ընդհանուր հայութեան վերաբերեալ կենսական խնդիրներու վրայ ուշագրութիւն կը հրաւիրէ: Հեթումի սիրական նպատակն էր ոչ միայն Սիսուանի դահուն պահպանութիւնը, այլ և հաւանօրէն, հայատան աշխարհին վերականգնումը: Եթէ այս խնդիրը տարապայման նկատուէր Խանի դաշլեցին կողմէն, գէթ վախճան մը կը տրուէր հայատանի ժողովրդին տառապանաց, որ թաթարական արշաւանքի ատեն ահաւոր աստիճանի հասած էր: Այդ սկ. օրերուն պատկերը կը նկարագրեն մեր ժամանակակից պատմիչները, մասնաւորապէս կիրակոս Գանձակեցիի տողերը դեռ այսօր, վեց ու կէս գար վերջ անդամ, գառն բայց ոչ անպատշաճ խորհրդակցութիւններ կը թելազրեն մեզի:

Նկատելով որ թաթար բանակները խառնիճաղանձ հրաս-

ներէ խմբուած, զինուորական խիստ կարգապահութենէ զուրկ և կեղրոնին անմիջական հսկողութենէն հեռու լինելով յաճախ անզսպելի կրգառնային, իրաւունք ունինք կարծելու որ միջին դարու այդ միահեծան խաները և իրենց զօրապետները միշտ մեղսակից չէին այդ անազորյն խժդժութեանց. բայց ինչ որ ալ լինէր, անգորութեան և մանաւանդ անկախութեան բարիքը վայելող հայերը և իրենց առաջնորդները չէին կրնար անտարբեր մեալ:

Հեթումի գիմումը, եթէ ոչ լիովին, դէթ մտանակի յաջողութեամբ պսակուեցաւ. Հայաստանի գառնութիւնները մեծապէս ամոքեցան, Սիսուանի սահմանը ամեն կողմէ ընդարձակեցաւ, հայ զինուորութիւնը—40,000 հետևակէ և 12,000 ձիաւորէ բաղկացած—յաղթական զնացքով յառաջացաւ և հայկական զրօշը, թաթարական նշանակին ընկերացած՝ մինչև խսկ հալէպի և Դամասկոսի բերդերուն վրայ պարզուեցաւ:

Տարակոյս չկայ թէ Հեթում իր մեծ նախորդին—Լեռն Բ.ի պէս Սիսուանի ներքին բարգաւաճումն ալ ուշագրութեան տռաւ: Թէև քաղաքականութեամբ անկէ կրտարբերէր, բայց իմաստութեամբ և կարողութեամբ անոր կը նմանէր: Նա կը դիմէր արեւմուաքի լատին իշխաններուն, ոա՝ կը խնկարկէր արեւելքի պուտոսայական զօրապետներուն, բայց երկուքին ալ հոգին կը ձգտէր գէպի միւնոյն նշանակէտը: Հեթումի երկտրատե իշխանութիւնը անազօտ ոպայծառութեամբ ողիտի փակուէր եթէ սև ամապէր չը գային ողահ մը մթտգնելու անոր վերջին օրերը: Քաղաքական աշխարհը շատ անակնկալներ ունի մանաւանդ հին գարերու մէջ՝ ազգերու բաղզը յեղակարծ յարափոխութեանց ենթակայ էր: Հայ և Փրանգ քրիստոնէից հետ թաթարներու միացեալ յարձակումներէն ընկծուելէ յետոյ, իսլամութիւնը, այժմ կազզուրուած, կը գառնար հակածարուածը տալու: Բիբարս Բնդուխտարը (Պէյ պարս Պնտուգարի) իսլամի վրէժինդիր օգւոյն մարմնացումն էր: Տրիպոլիսի և Անտիոքի քրիստոնէից մեղքերը արեան հեղեղներով քաւելէ յետոյ, նորածնունդ մէմլուքները իր հրամանով գէպի Սիսուան կը ուսնան: Հեթումի ծանրակշիռ ճզնաժամին գիտակից՝

կը դիմէ թաթարաց խանին, բայց օդնութիւն չը հասած՝ աղէտալի պատերազմը կսկսի և Մառիի տիրահռչակ անցըին մէջ արքայորդին Լեռն զերի և եղբայրը Թորոս նահատակ կիյնան (1266): Այս պատերազմը, որ անփոխարինելի կորուստներով և մի աննպաստ գաշնազրով փակուեցաւ, Թաթարա—Հայկական զինակցութեան վրայ հեթումի հաստատամատութեան հետեանքըն էր: Մահմետականներն իրենց զինուորական կարողութեան հետ կը դիմէին նաև նենդաւոր մեքենայութիւններու: Քրիստոնէից և թաթարաց համերաշխութիւնը խղելու և անոնց ոյժը չէղօքացնելու համար ջանք չէին խնայեր. իրենց պաշտօնատարներուն միջոցաւ քրիստոնեայ և թաթար շրջանակները կը լրտեսէին և խեղաթիւրուած զրոյցներով զանոնք միմեանց դէմ կը զրգուէին. Հայոց դէմ Պիտարսի արշաւանքին գլխաւոր շարժառիթ եղան այն մի քանի քաղաքները զորս թաթարները մահմետականներէն զրաւած և Սիսուանի տէրութեան կյած էին: Հեթում զանոնք մահմետականաց վերադարձնելով թաթարներու գժգոհութիւնը հրաւիրած պիտի լինէր, ուստի, իր իշխաններէն ումանց խորհրդին հակառակ՝ պատերազմ հրատարակեց *):


Արգարե, Հայոց պարտութիւնը երկու շարեաց փոքրազոյնն էր. բայց այսպէս թէ այնպէս, այլ ևս կը փակուէր Սիսուանի յարածուն փառաց՝ շրջանը, որ Ճիշդ մէկ գար տեած էր, Լեռն Բ.-ի իշխանութենէն՝ մինչև Անտիոքի գաշնազրին թուականը (1168—1267):

Կը շարունակուի.

Լոնդոն.

Բախուբան.

*) Թաթարահպատակ Հայոց կողմէն ոյս առթիւ գրուած հետեւալ տողերէն և պատմագրին վկայութենէն մի քաղաքաբ կրնանք կազմել «... Ով սուրբ թագաւոր... լու է քիզ այդ որ քո մին որդին վասն քրիստոնէից մեռաւ և մինն ծառոց գնաց և այս Տաճիկներս յամօթ եղան, որ ՚ի յայս դուրս (Թաթարաց Ղանին) կան. քան թաղաւորութիւնդ ամեն անցած և երկիրդ ընդ նմին աւերած և քրիստոնեազդ կորած... թէ Եւալ էր որ խաքեալ էիր և լուր մին դարտակ տուն էիր տուել թող թէ շեն գիւղ որպէս նա ուզէր, յայնծ ամքո թագաւորութիւնդ անցել էր, և մեր յամօթ եղեալ... իսկ յորժամ՝ զայս ամենայն լսեցին իշխանքն ՚ի թաղաւորէն, հիացան ամենն և մեղաց առացին վասն ոչ գիտելց զայս ամենայն պատճառս լանիս»:








Гар. 14. Година

Сирийські британські палатки в Битлісі.
Палатки англійського консула въ Битлісъ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.





ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՍԱՍԱԻՆ,

ՆՐԵ ԵԿԱՐԵԴՐՈՒԹԻՒՆԸ,

ԲԵՇԿԵՑՆԵՐԸ ԵՒ ԵԱՑՆ ՅԵՐՔ ԱԽ ՎԵՐՔԸ

Մասունի արիւնախանձ լեռնաշխարհը վերջերս իւր վրայ
կեղրոնացրեց ամբողջ Հայ աղզի ուշագրութիւնը: Նոյն իսկ
քրիստոնեայ երկրների մամուլի մէջ խիստ զօրեղ արձագանք
դտան կոտորուած Հայերի վերջին Հառաջանքները: Դիւա-
նագիտական շըջաններում մեծ խլրատում նկատուեց: Հայ
մամուլը՝ իրարանցման մէջ՝ սկսեց մեր առաջ Հանգէս բե-
րել սրտաճմիկ տեսարաններ Մշե ու Ստունի Հայ զիւղե-
րից: Հայութեան վարիչ շըջաններումն էլ աղատ չմնացին ընդ-
հանուրին տիրած անհանգստութիւնից, որ և արտայայտուեց
շշափելի ձեռք: Շնորհիւ այս իրողութեանց՝ այժմ տաճկահայ
գաւառները մի խիստ արտասովոր, բացառիկ զրութեան մէջ՝
են զրուած, քան թէ այդ լինում է սովորական ժամանակ:
Առայժմ զետեղում ենք ներկայ յօդուածը, որը կազմելիս ի
միջի այլոց օգտուել ենք նաև մեր պարբերական հրատարա-
կութիւններից:

* * *

Մի բան, որի կարիքը միշտ զգացուումէ Հայի կեանքի
մէջ տեղի ունեցող այսպիսի նշանաւոր վայրկեաններում և
որը միշտ ծանր տարակուասնքներ ու առարկութիւններ է
առաջ բերում: դա Հայաստան երկրի անյայտութիւնն է՝ նորա-

ուսումնասիրած չլինելու պատճառաւ: Նոյն իսկ արիւնալի եղելութեանց ասպարէզն եղած այս նշանաւոր երկիրը, Սասունը, որ անառիկ Զէյթունի անկումից յետոյ միակ ապաւէնն էր դարձել հայ տարրի անկախ կիանքի, այսօր էլ շատ աղօտ է մեզ նշանարուում հեռուից՝ իւր լեռների անյայտութեան թանձր մշուշի միջով: Եւ այս հանգամանքը շատ լաւ զէնք է դարձել մեր հակառակորդների ձեռքում: որոնք ծանօթ են մեր անհոգութեանը այդ խնդրի մասին: Օտարները հարցնուում են մեզ. «Ո՞րն է Հայաստանը. այն որ Հայաստան երկիր էք կոչում, իսկապէս հայի հայրենիքը չէ. այնտեղ բազմութիւնը այլազգիներ են»: Նրանք ուրանում են, որ մեր հայրենիքն է այն երկիրը, որաեղ ամեն մի քար հայի նախնեաց արեան բժերն է կրում իւր վրայ, որտեղ ամեն մի քայլում ամսի ձգուած գիւղերն ու վանքերը և ընդարձակ գերեզմանները հայի մօտիկ անցեալի բազմամարդութեան անրարբառ վկաներն են: Բայց աշխարհիս իշխողներին պէտք չեն այդպիսի լուս վկաներ. նրանք պահանջում էին սրանից մօտ քսան տարի տռած, և այժմ էլ աւելի՝ սինդութեամբ պահանջում են, որ մենք ճիշտ թուերով ու փաստերով ապացուցաննենք թէ Հայաստան աշխարհը մեր հայրենիքն է, որ այստեղ են ապրում մեր արիւնակից եղբայրները մէծ բազմութեամբ և որ նրանց խաղաղ ու հանրօգուտ կեանք վարելուն խանգարում են միայն վատթար վարչութեան հասցրած աղէտները: Ի հարկէ, առայժմ մենք միջոց չունենք բաւարարութիւն տալ նրանց պահանջներին: Հետեւ անք է դա արդեօք մեր անցեալ անհեռատեսութեան, թէ մեր ապիկարութիւնն ու անտարբերութիւնն է ցոյց տալիս խոշոր հասարակական հարցերի հետ գործ ունենալում, բայց և այնպէս իրողութիւնն է, որ այսօր էլ Հայաստանը մնում է չուտումնասիրուած առաւելապէս մեր՝ հայերի կողմից, քան թէ այն օտարների, որոնք մեր դէմ են հանում յիշեալ ծանր առարկութիւնները:

Այն ազգային հիմնարկութիւնները, որոնց կոչումն է եղել այդ նպատակին ծառայել, չեն կատարել իրենց գերը. Կ. Պոլսի պատրիարքարանը և հայ զարգացեալ գասակարգը սակաւ

դէպքերում են միայն իւրեանց նուլիրել այդ ծանր գործին, և
այն յոյժ սակաւատե ժամանակով, անյարատե եռանդով և
ոչ կարեղոր պատրաստութեամբ: Եթէ օտարների չարախնդաց
հարցումը մեր մշջուսահատ, բայց ձնշուած արգարութեան
դիտակցութիւն է զարթեցնում, եթէ մենք շատ լաւ ենք
հասկանում այդ նենգաւոր հարցման իսկական շարժառիթն
ու չար դիտումը,—այն էլ խոսափանելու ենք, որ մենք ինք-
ներս յիրաւի խիստ անհոգ և անզզայ ենք գտնուել դէպի
մեր, հէնց մօտիկ անցեալի, պարաւորութիւնները: Ճշնարիտ
է, ուրեմն, որ մեզ համար գոյութիւն չունի գեռ ևս պատ-
մական ոչ գաս և ոչ խրատ:

Կարելի է առարկեն, թէ ի՞նչ վիճակազրութիւն էք պա-
հանջում մի այնպիսի երկրի համար, որտեղ այսօրուայ շէն
զիւղը վաղը ամայանում է և զաղանների որջ գառնում, կամ
այսօրուայ քրիստոնեայ զիւղում վաղը—միւս օրը տեսնում
էք միմիայն խալամի զաւակներ. Հայաստան երկրի բոլոր դա-
ւառներում գուք կը հանգիպէք ամեն մի քայլում բաղմաթիւ
զիւղերի կանգուն եկեղեցիներով և նոյն իսկ կանգուն անե-
րով անմարդաբնակ ու ամայի ձգուած իրենց բնակիչներից.
Մեր հայրենիքը ամայանում է հետզետէ, բայց աւելի է վեր-
ջին քսան տարուան ընթացքում: Բայցի այդ, ի՞նչպէս վիճակա-
գրել, երբ հայ ուսումնասիրողը ապահով չէ կասկածու կա-
ռավարութեան հետամոտութիւններից, քիւրդ աւազակների
անպատճէ յափշտակութիւններից, կառավարութեան հայ և
թիւրք արբանեակների մատնուութիւններից:

Ստկայն չնայելով այս ամենին, մենք հնարաւոր ենք գրտ-
նում նոյն իսկ այդպիսի երկրի մասին կազմած ունենալ ճիշտ
տեղեկութիւն. Հարկաւոր էր միայն, որ մենք կարողանայինք
դնահատել և նպատակայարմար դործադրել ժամանակը, ճարդիանց
և դրանք, հարկաւոր էր միայն, որ մենք անտեսել զիտենայինք
մեր ոյժերը: Մենք ճանաչում ենք անհապներ, որոնք ամե-
նադժուար ասրիներում, անհնարին նեղութիւններով, ա-
ռանց մեծ փողի և նոյն իսկ առանց մասնաւոր պատրաստու-
թեան, շրջել են հայտատանում և մեզ տեղեկութիւններ հաս-

ցրել այն երկրի մասին, որի անունով այժմ՝ մենք խօսում ենք
ու մարտնչում: Ուրեմն քիչ ոյժերով էլ կարելի է բան տես-
նել. առաջ ո՞րքան աւելի կը լինէր արդիւնքը, երբ գործը հաս-
տատ հիմքերի վրայ զրած լինէինք: Այս է ահա պատճառը,
որ հայութեան համար ձգնաժամ եղող մեր օրերի նման ժա-
մանակներում միշտ հետաքրքրական է դառնում ամեն մի աշ-
խատութիւն, որքան և նա աննշան լինի, որ ձգտում է եթէ:
ոչ լուծել կատարելապէս այդ մեծ խնդիրը, զիթ այդ ուղղու-
թեամբ մաքեր արծարծել և գուցէ նաև այդպիսով հասա-
րակութեան միջից կարող ոյժերի երեան դալուն նպաստել:

Այս մտածութիւնները մեզ միշտ զրաղեցնում են, բայց
մենք հնար չենք ունեցել «Արագ»-ի միջոցաւ լիովին իրա-
գործելու այս խնդիրը, թէև մեր հանդէսը զլխաւորապէս
իւր նպատակը գնելով թիւրքաց հայաստանի ուսումնասիրու-
թիւնը, ամենից աւելի է զրաղեցրել ընթերցող հասարակու-
թեանը այդ երկրի տեղագրական և ազգագրական հարցերով:
Ի հարկէ, մեր միջոցները աւելին չեն ներել, ապա թէ ոչ
գուցէ աւելի փայլուն լինէին արդիւնքները:

* * *

Սորտնից մի քսան և աւելի տարի առաջ երբ ածիւնա-
ցեալ Զէյթունը իւր հպարտ վեզը ձկեց ու ընկաւ, այնու-
հետեւ հայկական գաւառներից միայն Սասունն էր մնացել,
որ դեռ շարունակում էր ատպել իւր նախկին կիսանկախն
կեանքով մինչեւ որ վերջերս տաճիկ կառավարութիւնը իւր
դժոխային միտումներով և բարբարոսութիւններով հիմնայ-
տակ արեց այս քաղաքի լեռնականների ազատ երկիրը: Ան-
շուշ՝ նորագոյն ժամանակների Զէյթունն ու Սասունը ա-
պագայում կունենան իրանց արժանաւոր պատմիչը, իսկ մենք
այստեղ նկարագրելու ենք՝ ըստ կարելւոյն մանրամասնօրէն՝
Սասունը իւր մերձակայ գաւառների հետ:

* * *

Սասունը հին հայկական Տուշութերան նահանգի Ասպա-
հունիւնի գաւառն է: Նա ձգուած է Տաւրոսի շղթաների ապա-

ռաժների վրայ, և գանուում է լայնատարած Մշոյ գաշտին անմիջապէս կից՝ հարաւային-արևմտեան կողմը, այնպէս որ Մշոյ դաշտից երկիրը սկսում է աստիճանաբար բարձրանալ մինչև Տաւրոսի անմատչելի ծայրերը: Արդէն դաշտը կարծես իբրև նախագուռ ներկայացնելով բուն լեռների ալեկոծեալ տեսարանի, թեթեակի կտրառուած է բազմաթիւ մեծ ու փոքր բլուրներով որոնք խիստ գեղեցիկ տեսք են ընծայում նրան բարձրից զիտելիս: Խոյն իսկ Մշոյ քաղաքը շինուած է Տաւրոսի ստորին փեշերքի վրայ, իսկ քաղաքի այգիները փոռուած են բաւական բարձր մի բլօքի կրծքին: Անմիջապէս քաղաքի ետեռում բարձրանում է հոչտկաւոր Սէ լեռառը, որ առաջին մեծ սարն է Մշոյ դաշտից Սասուն բարձրացնող ճամբի վրայ, և Հովայական պարսպի նման ձգուելով Ս. Կարտապետից մինչև Բաղէշ քաղաքը 24 ժամուայ ճանապարհ կամ մօտ 150 վերստ տեղ՝ հիւսիս-արևմուտքից գէպի Հարաւ-արևելք ուղղութեամբ՝ մի տեսակ սահմանն է կաղմուտմ երկու գաւառների մէջ: Խորենացու պատմութեան մէջ գրուած այս լեռան մասին աւանդութիւնը, որ Հաւանօրէն սեմական ծագում ունի, մնացել է մինչև այժմն էլ Հարաւային Հայաստանի բնակիչների բերանում: Սասունցի ու մշեցի Հայերն ու քրդերը ցոյց են տալիս Սասունի ու Մոկաց սարերը՝ իբրև Խոյի թոռ Սեմի երկու ամսուայ կայարանը:

Միմի կոնաձեւ զագաթից բացուում է մի զմայլելի տեսարան, մի կողմից Մշոյ սիրուն դաշտը իւր նկարչական դիւղերով արևելքում կանգնած ներովթ և Գրգուռ լեռներով, որոնց ետեռում թագնուած է Վանայ ծովը, և միւս կողմից՝ Հարաւում ու արևմուտքում՝ Տաւրոսի ալիքանման վիթխարի կոշակները, որոնք ծածկուած են կամ կաղնի և ընկուզի անտառներով ու մայառոտներով, կամ սիղաւէտ արօտներով և կամ ամեհի լերկ ժայռերով: Այս արևմտեան կողմի զագաթների մէջ բարձրանում է ամենից բարձր Անտօն լեռառը, որը ըստ աւանդութեան, մի ոմն Անտօն Ճղնաւորի Ճղնարանն է եղած և նրա անունով էլ կոչուած: Բացի զրանից՝ ամեն մի առանձնացած զաղաթ իւր

յատուկ անունն է ստացել այսպէս՝ Կաճտ, Ելք, Սասուն, Տուշ-
րող և այլն։ Բոլոր լեռները երենց վրայ ունեն քարացած
ծովային խխունջներ և ձկներ։ մանաւանդ Սև ծովի «խամնի»
կոչուած տեսակի ձուկը, որ այժմ էլ մեծ որս է տալիս այդ
ծովի եղերաբնակներին։ Դա պարզ ապացոյց է, թէ Հայկա-
կան Տաւրոսը ջրի յատակից ստորերկրեայ ոյժերով վեր ամ-
բարձած մի լեռնաշարք է եղել ժամանակով։ Լեռնային սրբն-
թաց հեղեղատների շնորհիւ, օրոնք գարնանը վազում են
հարիւրաւոր ձորերում, տեղ-տեղ հողն աւազու է և մշա-
կութեան անյարմար, իսկ ապառած ու անբռյս տեղերում այդ
անյարմարութիւնը աւելի ևս մեծ է։ Բայց գրա փոխարէն,
Սասունի Տաւրոսը, Կիլեկից լեռների նման, երկաթի անբաւ
հարստութիւններ է պարունակում իւր ծոցում։ Հռչակուած
է մանաւանդ Տալուորիկի երկաթի հանքը։ այս պատճառով
սասունցին էլ զէյթունցու նման իւր անհամբոյր ու ապա-
ռում մայր-երկրի կրծքից իւր անունդը ծարում է միայն
այդ երկաթի մշակութիւնով, և նրա շինած հրացանը, սու-
րը, աշտէն ու վաշանը կարելի է դժոնել ծիգրանակերտի ու
Մշի ամեն կողմերում, հսցերի թէ քրգերի ձեռքում։ Տեղ-
տեղ հովիաների մակերեսոյթը ծածկուած է լինում սպիտակ
բորակով, որից սասունցին կարողանում է ինքնուրոյն եղա-
նակով վառօդ ևս պատրաստել։

Ինչպէս ասայինք, անդնդախոր ձորերում ու մարմանդ
հովիտներում վաղում են բազմաթիւ վրակներ ու հեղեղաբներ։
Միայն նրանցից շատ աննշաններն ու փոքրիկները, օրոնք
ամառը ցամաքում են, իրենց ընթացքը ուղղում են Մշի
գաշտի կողմը և խառնուում են նրա միջով անցնող Մեռչո-
քեաք (հին Մեղքի գետի) կամ Գօռ գետի հետ։ այս գետը իւր
հանդարտ ջրերը թաւալում է Սիմ լեռան տակով, նրան զրե-
թէ զուգահեռաբար ընթանալով հարաւ-արևելքից գէտի
հիւսիս-արևելուաք և թափուելով Արածանի կամ Մուրագ
գետը, այնպէս որ գետի և լեռան ստորոտի միջին կէս կամ
մի ժամացափ տարածութիւն հաղիւ է ֆնում։ Մշից գէտի
Բաղէշ տանող երկայն Ճանապարհը այս գետի ափովն է անց-

նում և բնակիչներն ասում են, թէ «Մշեց Բաղէշ և Բաղէշեց Մուշ զնացողն այն ժամանակ է յոդնում, երբ Մեղրագետի մօտից անցնելիս՝ մոռանում է մեղրաջրից խմել»: Եւյիրաւի, նեմրութ լեռան լայնատարած գագաթին ընկած են հիալտագոյն խաղաղ ու անշարժ լճակներ, որոնք յառաջանում են լճերի յատակից մարմանդ վիր խփող խիստ անուշահամ աղքիւրակներից. նրանցից ամենամեծը, որ հարաւային կողմն է, իւր մեջ ընդունելով նաև միւսների ջրերը՝ գետնի տակով գուրս է ածում նրանց գէպի Մեղրագետի ակունքը: Խաղաղ լճակը այնպիսի տպաւորութիւն է անում, որ իրը թէ շատ խորունկ է և բնակիչներն աւանդում են, թէ «Մեղրագետի բղիսած տեղն անյատակ է»: Մեղրագետի նեմրութ լեռան գագաթի լճակներից գուրս գալու մասին բնակիչները աւանդում են. «Մէկ հովեւ խաշինք էր արածեցնում նեմրութ սարի լճի ափին. մի օր ոչխարը յետ տալիս, նա, ըստ սովորութեան, իւր ձեռքի ցուսպը ձգումէ: Ոչխարը գառնում է, բայց հովուի դաւազանը լճի մէջն է ընկնում և ջրի պայոյքի մեջ կորչում: Անցնում է մի քանի ժամանակ, մէկ օր էլ այդ հովեւը իւր ցուսպը տեսնում է մի ուրիշ հովուի ձեռքին և պահանջում է: Գործը հասնում է դատաւորին և ցուսպի բուն տէրն սկսում է իւր ապացոյցն առաջ բերել՝ թէ նա յիսուն տարի է որ հովուութիւն է անում, ամեն տարի մէկ ոսկի վարձ է ստացել, և իւր ցուսպը փորելով ոսկիքը մէջն է լցրել: Ցուսպը տալիս են իրան, և երբ նա իւր փայտէ քսակի բերանը բաց է անում, իսկոյն 50 ոսկի զետինն է թափուում. և այսպէս նա զարձեալ տէր է զառնում իւր ցուսպին: Գտնող հովուիցն էլ հարցնում են, թէ այս զաւազանը ո՞րտեղից է ձեռքն անցել. նա էլ պատասխանում է. «Նեմրութ սարի տակից վազող Մեղրագետի բերանին արածեցնում էի ոչխարներս, մէկ էլ տեսայ՝ ջուրը իւր փորից հանեց այդ գաւազանը»:— Մեղրագետի Գործ անունը ծագել է զաւառական գործ կամ գործ բառից, որ նշանակում է յեխ, տիղմ, որովհետեւ զետի յատակը տղմատ է և ափերը շամբուտ են:

Սասունի լեռների հիւսիսային մասերը եփատի ջրերն են սնուցանում: Ընդհակառակը, հարաւային և աւելի բազմաթիւ վտակները գէպի Տիգրիսի արեմանեան բազուկն են տանում իրենց յորդ ջրերը: Նրանցից կաղմուումէ բաւական նշանաւոր մի զետակ, որ միայն ամառն է անցը տալիս հունով. դա Պէլչէնէ կամ Պէլչէնի՝ գետն է, ըստ մահմատականաց՝ Բայնանառն, որ անցնումէ Պըշերիի գաշտի արեմուեան կողմից և գէպի հարաւ զնալով՝ որոշումէ Խարդան կամ Մուֆարդին գաւառների սահմանները: Գետը թէև կատարելապէս հետազօտուած չէ իւր ամբողջ ընթացքում, սակայն յայտնի է, որ նա երեք ձիւղից է բաղկանում: մինը գալիս է Սասուն գաւառակից (յատկապէս կոչուած), միւսը Խիսն գաւառակից և երրորդը՝ Սասունին գրացի Խուլի գաւառից: Գետի արեւելեան կողմը, գաշտի միջով 8 ժամուայ ճամբայ հեռու Տիգրանակերտի գետի հետ միանումէ Ռնդուանայ գետը, այդպէս կոչուած Ռնդուան կամ Ռէդուան աւանից՝ նրա ձախ ափին գաշտի մէջ. նա գրեթէ հաւասար է իւր մեծութեամբ Պէշըրկու գետին, և գալիս է Սասունից արեւելահարաւ եղած Խուլթ ու Գղելս գաւառներից, իւր մէջ ընդունելով նաև Սասունի ձորերից մանր վտակներ: Նոյնը պէտք է ասենք և Պէշըրկու գետից 2 ժամուայ ճանապարհով արեմուաք ընկած Շակլապիսու գետի մասին, որի մի բազուկը բղիսումէ Տաւրոսի հարաւային ստորոտում կառուցուած Մուֆարդին հին քաղաքի հիւսիսարեմուային կողմից, իսկ միւս բազուկները իջնում են Սլիվան գաւառի հիւսիսային լեռներից, որտեղ Սասունն է նստած: Եյս բոլոր գետերը ուղղակի գէպի հարաւ են ընթանում: ոռոգելով Տիգրանակերտի արգաւանդ գաշտերը և իրենց արգասաւոր տղմով ողողելով նրանց ամբողջ մակերեսյթը:

Սասունի գետերը փոքր լինելով և ամառը յամաքելով սակաւ են պարունակում ջներ: ուստի ձկնորսութիւնն էլ չի կարող բնակիչների համար հասոյթի աղբիւր լինել: Զուկը առատանում և բազմազան է գառնում, երբ գետերը գաշտերն

են իջնում: Սակայն գեղեցիկ կարմրախայտներ կարելի է որսալ նաև լեռների վտակներում:

Սասունի լեռներումն էլ, ինչպէս ամբողջ Հայաստանի երեսին, շուտ-շուտ հանգիպում են զերծ-դնեց, մանաւանդ երկաթ ծծմբային, որ հետեւանք է լեռների կրային կազմութեան: Այդ լեռներից էլ բնակիչները հանում են մի տեսակ լնտիր հող՝ «կաղզին» անունով, որից շինում են կառէ մեծ ու փոքր ամաններ՝ ուտելիքներ պահելու համար խիստ առողջարար:

Լեռները և ձորերի ծոցերը ծածկուած են բազմերանդ ու անուշահոտ ծաղիկներով, նշանաւոր են՝ հարմի շոշան, որի պատկը գեղեցիկ է և գեղնագյոյն, ունի սքանչելի հիւսք ու տեսք և բուսնում է քարքարոտ տեղերում: Նոռառ-ֆար, յըն-ժառնի, անթառած ժառնի կամ Ս. Կարապետի ժառնի: Ուտելու բջյուրիցն են՝ հանդակ, ժար որ պասերին խաշում են ու աղով ուտում: օղին՝ որի արմատն է շրէշտը (շերիշ), բշտակը որ տեղաբյու է, դեղ որ անուշահոտ մի բոյս է և պանրի մէջ են դնում: աղիքը չուէ և քնչայ, որ կերակրի համար են եփում: այնուշետե՛ առնի-բանջար, խար-բենի է խանդառ. վերջինիս աղնիւ տեսակի արմատից ձութ են շինում: որին «ծամոն» են կոչում: բոյս, որ մեծ-մեծ եռաթեևեր է տարածում և քարաժայռերում շատ առատ է լինում: ոչխարի խիստ ընափիր կերակուր է: Մշակելի բոյսերի մէջ ցորենը շատ սակաւ է հանգիպում լեռնոտ ու ապառաժոտ Սասունում: միւս կողմից էլ ցուրտն է արգելք լինում նրա մշակութեանը. ուտուի սասունցիք առաւելապէս մշակում են տարեկան (չաւդար) և կորեկ ու զըլզըլ վերջինիցս թխում են մի այնպիսի հայ, որ անսովոր մարդու համար գժուարամարս բան է և շատ անախորժ համ ունի: Վարուցանքի տեղը անտառագաշտակներն են կամ արեւահայեաց ձորերը: Տաւրոսի բնական անդառները կտղմուած են մեծ մասամբ ընկույն և խաղնի ծառերից, բայց պատահում է և ալաժահնի ծառը, որի պառողով ոչխարի մորթիքը գեղին են ներկում, ծալինի, որի կեղեռով նոյն մորթիքը մուգ-կարմիր են ներկում: կան նաև

Անդըշի, հաղողականի և այլ անտառներ: Խութի լեռները կամ հին հայոց «Սկաւ լեառը», որ յիրաւի Մշի գաշտից նայելիս սեին է տալիս իւր խիտ անտառների պատճառով, դեռ այսօր էլ առատօրէն փայտ է ընձեռում Մշի գիւղերին թէ շինութեան և թէ առաւելապէս վառելիքի համար:

Քանի որ ազգաբնակութեան արդի ցանցառութիւնը ապարգիւն է կացուցանում շինափայտի շահագործելը, և որովհետեւ, բացի այդ, ճանապարհների բացակայութիւնը մի անյազթելի արգելք է նրա տեղափոխութեան, ուստի և այս լեռների բոլոր բնակիները որոնում են միայն վառելտփայտ և ածուխ, որոնք տեղափոխուում են շատ հեռուները, մինչև բարձրավանդակ հայտատանի մերկ ու անփայտ դաւառները: Այս պատճառով այս լեռներում ու ձորերում դուք ամեն մի քայլում կը հանդիպէք ճղակոտոր ու կտրտուած ծառերի: Բայց հին զլատառուած կոճղերը՝ գուցէ գարերից հետէ՝ յամառութեամբ արձակելով նորանոր շառաւիղներ, ստացել են սստախիտ կերպարանք, առասպելական ձեւեր: Այդ ծեր զինուորների կողքին խմբուած է երիտասարդութիւնը, — մատաղատի կաղնիները ընկուղենիք, շագանակենիք, հայիներ և այլն: Այս ամենը տճում է գեղանկար ցիրուցան վիճակի մէջ, ժայռերի վերայ, կորովի սպատառուների կամ խճճուած փշաւոր խիտ մացառուաների մէջ: — Ածուխ շինելու եղանակն էլ շատ տարօրինակ է: Երբ մի հին կոճղ գալքարում է այլ ևս շառաւիղներ արձակելուց, նրան ուղղակի կրակ են տալիս, որ իրան-իրան այրուի: Լեռնային կածաններով և ձորերով անյնելիս՝ դուք յաճախ կը հանդիպէք իրարու մօտ-մօտ այգակխի հօկայ ջահերի, որոնք մլում են հանդարաօրէն: Այնուշետե հանդցնելով ածուխ են ստանում: Ի հարկէ՝ այգակխով ածուխի³ մասը կորչում է անօգուտ:

Ինչ ասել կուզի, որ այս անտառապատ ու ծաղկագարդ լեռներում թագաւորում է հիանալի-առողջարար կլիմայ, որտեղ ամառը երեսդ փաղաքշում է հաղարաւոր ծառերի ու ծաղիկների բոյրով յաղեցած մի անուշահոտ սիւք, որտեղ երկինքը ջինջ է ու պայծառ, իսկ արել մեղմացրած է տուա-

բում իւր հարաւի ջերմ ճառադայթները: Բայց ձմեռը այս-
տեղ բացուում է կատաղի քամիների արշաւանքների լայ-
նարձակ ասպարէզը որոնց միջոցաւ մանաւանդ խորը ձո-
րերում ձիւնը գիզուում է մի-երկու սամէն բարձրու-
թեամբ, այնպէս որ յաճախ յանդուգն ճանապարհոր-
դին անխուսափելի կորուսատի է մատնում: Ձիւնի՝ ըստ
երևոյթին միապաղաղ՝ խարուսիկ խաւի տակ ծածկուած են
տեղ-տեղ խորխորատներ ու փոսեր, և մարդ պէտք է խիստ
զգուշութեամբ իւր ճանապարհը որոնի՝ նրանց մէջ չըսուզու-
ելու համար: Մի ակնթարթում ձիւնախառն բուքը՝ գժոխային
պտոյտքներ գործելով՝ կերպարանափոխ է անում գետնի երեսը
ու ծանօթ վայրերը անձանաչելի դարձնում: Այդպիսի եղա-
նակին խոհեմութիւն է չը ճանապարհորդել. և երբ դաշ-
տում բուքի ժամանակ քարուանը ապաստանում է խանե-
րում, երբեմն էլ երկու-երեք շաբաթ սպասում է մինչև եղա-
նակի փոխուելը, այդ ժամանակ այս լեռներում յարաբե-
րութիւնները բոլորովին ընդհատուում են. մարդիկ ամիսնե-
րով փակուած են մնում իրենց կենդանիների հետ իւրեանց
աներում: Հարկը պահանջած միջոցին՝ ոտներին կա-
պում են փայտէ տափակ ոտնամաններ, ինչպէս սցու լի-
նում էր հին ժամանակ, և առանց խրուելու քայլում են
ձիւնի վրայ:

Բացի սովորական ընտանի էնդանիներէց, որոնք սասուն-
ցուն թէ կերակուր են մատակարարում և թէ հազնելիք
(բրդից գործում են գուլպայ և շալեղէն, կաշուից կարում
են ոտնաման), լեռներում ու անտառներում սասունցին ստի-
պուած է պատերազմել դայլի ու արջի գէմ, որոնք սպառ-
նում են նրա կենդանիներին և զիշերները նոյն իսկ ցանք-
սերին, որտեղ որ կան. նրանք շատ անզամ իջնելով դաշտ՝
մեծ լիւաններ են տալիս խաղողի այգիներին, ուստի դիւզա-
յիք ստիպուած են առանձին հսկողութիւն նշանակել նրանց
արշաւանիքների գէմ: Այլ և հանդիպում են աւելի ցածր տե-
ղերում չարտազ նապատակ, աղո-էս, իո-զ և չայրէ հագու-
թուչունների մէջ աչքի են ընկնում անբաւ բազմութեամբ

Հաստանել՝ խիստ խոշոր-խոշոր. կտուցն ու թաթերը կարմիր, պարանոցը սեաւուն և փետուրները պէս պէս զցներով: Այս տեսակը ուրիշ տեղ գրեթէ չի պատահում: Միւս տեսակ թռչունները ուրիշ տեղերում եղածներն են:

* * *

Այս համառօտ բնական նկարագրից կարելի է տեսնել թէ որքան է առառում այն երկրի կուրծքը, որի վրայ վեճակուած է կեանք վարել հայկական Տաւրոսի լեռնական մարդուն. այդ խոժոռ ու դաժան բնութեան մէջ մարդ իւր գոյութիւնը շարունակել կարող է միայն անվհատ, լարուած պայքար մղելով կործանիչ տարերքների և բնական շյժերի դէմ: Եւ, ձշմարիտ, Սասունի բնակիչը միայն յամառ, անընկծելի մաքառումով է լցուցանում իւր սակաւ պէտքերը. դաշտեցին՝ փոխագրուելով այս լեռները, կորչելու էր սովամոհ: Դարերով շարունակուել է այդ տեսակ կեանքը, որ սասունցու մէջ զարգացրել է այժմ մեր տչքում՝ չափաղանց գնահատելի որոշեալ հողեկան առանձնայատկութիւններ: Մենք վերը յեշեցինք, որ այս լեռների ժողովրդի սեմական ծագումը մեծ հաւանականութիւն ունի. մինչև անգամ Ս. Գիրքը և հայ պատմիչները յանուանէ յիշատակում են Ասորեստանի երկու արքայազն իշխանների, այն է՝ Ադրամելիքին և Սանասարին, որոնք իրենց թագաւոր-հօրը սպանելուց յետոյ իրենց հետեւորդներով հայաստանի լեռներն են ապաւինել: Հայ պատմիչների այս աւանդածից երեւում է, որ հարաւային հայաստանի բնակչաց սեմական ծագումը շատ պարզ ու անվիճելի մի ձշմարտութիւն է համարուել հնոց մէջ: Սասուն բառն իսկ Սանասար անունիցն են դուրս բերում:

Տաւրոսի լեռներն ապաւինած Ասորեստանից հատուածեալ ու բողոքող այս տարբերի և նրանց բացարձակ ու աններողամիտ մայր աշխարհի միջեւ պէտք է անշուշտ առաջանար մի անհաւասար մնամարտ: Եւ ձշմարիտ, ով ծանօթ է Ասորեստանի հին պատմութեանը, նա զիտէ այն անողորմ սրածութիւնների, աւարառութիւնների ու դերութիւնների

դարաւոր հարուածները, որ կրել են այս աննկուն ավատասէր լեռնցիք անունով միայն պետ Ասորեստանի. երեսից. բայց այն էլ յայտնի է, որ խաղաղութիւնն ու նուածումը միայն ժամանակաւոր են եղել, և սարերի տոկուն զաւակը կրկին զօրացած վեր է բարձրացրել իւր անհանգիստ զլուկուր և յամառել անկախութեան մէջ: Այսպիսով մենք տեսնում ենք, որ այս լեռների ժողովուրդը, նոյն իսկ իւր զյոււթեան արշալոյսին ստիրուած է եղել մարտնչել բռնակալութեան և հարստահարութեան դէմ յանուն իւր ինքնուրոյն զյոււթեան: Մինչեւ անդամ, երբ այս սարերի վրայ էլ տարածուեց բուն հայ տարրի իշխանութիւնը, լեռնցիք գեռ շարունակեցին իրենց կէս-անկախ կենցաղը և շատ անգամ ըմբոստ հայ նախարարութիւնների համար զօրաւոր նեցուկ էին գառնում օրինաւոր թագաւորական հարստավոր դէմ: Այսպէս եղաւ և ծրգատի օրով, երբ Սլկունեանց նախարարութիւնը ապրատամբեց Արշակունիներից և միայն չինացի Մամկունի խորամանկութիւնը կարողացաւ հայ պետութեան վարկն ու հեղենակութիւնը վերահաստատել այս լեռներում: Երեկի այս օրերից սկսուում է սասունցոց աւելի և աւելի ենթարկուելը հայկական լեզուին և ազգեցրութեանը: Արդեօք ի՞նչպէս սկիզբն առաւ քիւրդ տարրը այս լեռներում և ինչպէս նա սկսեց խոշոր գեր կատարել մեզ յայտնի չէ: Բայց հենց արաբացոց ժամանակ Սասունն ու Բաղեշը անկախ էին Բաղդադի խալիֆ-ներից և զօրաւոր քիւրդ բէկերի ձեռքումն էին: Այսպիսով հայ տարրը ստիրուած հետզհետէ ենթարկուել է քրդերի իշխանութեանը և նրանց մասամբ հարկատու դարձել: Նրաներքին կազմակերպութիւնը նման է եղել միշտ քրդերին, -բաժանուած բազմաթիւ ցեղերի, իւրաքանչիւրը իւր ցեղապետով կամ իշխանով, որին անպայման հպատակում են և սիրում: բարերն էլ գրեթէ նոյն են եղել -արիւնարբու, անխնայ կոտորող ու սպանող մանկութիւնից վարժուած արիւնի, արծուի նման իրենց թշնամու վրայ տուող: Քրդերի իշխանութիւնը գարաւոր է եղել. և հայերը գրեթէ ընտելացան այդ հպատակութեանը և մինչեւ անդամ շատ սիրով էին

իրենց զբացիների հետ։ Սակայն բոլորովին փոխուեցաւ բանը, երբ գարուս առաջին կիսի վերջերում օսմանցիք Քիւրդիստանի երկարատև ու կատաղի պատերազմից յետոյ՝ կարողացան վերջնականապէս խորտակել քրդերի ոյժը և նրանց բէկերի փոխարէն Վանում ու Բիթլիսում նստացնել իւրեանց կառավարիչ-վալիները։ Այս ժամանակամիջոցը մի զեղեցիկ ազգային վիպասանութեան նիւթ է գարձել որտեղ պայծառ զոյներով երեսում են քրդերի ու հայերի փոխադարձ յարաբերութիւնները։

Քրդերի երկարատև իշխանութիւնը և տիրող օսմաննեան կառավարութիւնից անկախ լինելը բացատրելու է մի կողմից սուլթաններու պետութեան հետզհետէ անկումով, միւս կողմից պալատական խռովութիւններով ու արիւնչեղութիւններով, որոնք արգելք էին լինում տէրութեան ոյժերը ներքին ցումերի վրայ կեղրոնացնելու։ Անշուշտ Քիւրդիստանի նուածումն էլ անհնարին կը լինէր, եթէ եւրոպացի ականաւոր ռազմագէտների առաջնորդութիւնը չը լինէր թիւրք զօրքերի համար։ Յայտնի գերմանացի զինուորական անձն, կոմն Մոլտկէն, իւր ռազմական հանձարը սակաւ չէ կատարելագործել ծաւրոսի աշուելի ամրութիւնները քրդերի ձեռքից մէկ-մէկ ազատելով։ Բայց և այնպէս՝ քրդերը միայն անունով էին հպատակութիւն ընդունել, նրանք առաջուայ պէս շարունակեցին հպատակուել իրենց ցեղապետներին ու բէկերին, հարկ չտոլ կառավարութեանը կամ շատ սակաւ տալ և շարունակել հայերից հարկ սահանջելը։ Թուրք կառավարիչները, իմանալով իրենց տէրութեան ուժասպառ վիճակը, վաղուց արդէն կարիք չէին համարում զիւացաւանք դարձնել՝ միջամտելով քրդերի զործերում բռնի կերպով նրանք միայն բաւականանում էին ստացած հարկերով թէ հայերի և թէ քրդերի կողմից։ Այսպիսով հայերը պէտք է կերակրէին քըրդին էլ, թուրքին էլ, հարկ վճարէին երկու տէրէրին։ Երկուպէն էլ դրա փոխարէն որոշեալ պարտաւորութիւններ էին ստանձնում։ Քիւրդ բէկերը՝ պաշտպանել «իւրեաններին» աւագակների և այլոց դէմ, իսկ թուրք կառավարութիւնը՝


պաշտպանել նոյն աւազակների և այլոց գէմ, ինչպէս պահանջուռումէ ամենայն կառավարութիւնից: Սակայն, ինչպէս իրերի վիճակը ցոյց է տալիս, ոչ մէկը և ոչ միւսը չեն կատարում իրենց պարտականութիւնները: Հայերի արդարացի և բնական դժգոհութիւնների միջօցին այս անիրաւութեան գէմ, որ բոլորովին ուժասպառ է անում հային տնտեսապէս, թուրք կառավարութիւնը, փոխանակ իւր որսին քրդերից ազատելու, որպէս զի աւելի ատահովութեամբ վայելի նրան, ընդհակառակը տւելի ևս մատնում է նրան նրանց ձեռքը, քանի որ ոյժ չունի նրանց գէմ կոռուելու: Հայերի հետզհետէ յաճախ կրկնուող ու սաստկացող դժգոհութիւնները թէքիւրդ բէկերի հարստահարութեանց և թէ կառավարութեան անհօգութեան դէմ այն հետեանքն ունեցաւ վերջապէս, որ երկու նախկին սոոխները այժմ բարեկամացան իրար հետ ընդհանուր թշնամի համարելով հային, որը քսան տարի առաջ, պարզ կերպով արտայայտուեց և մինչև մեր օրերը գեռշարունակվում է: Բաւական է տաել որ այժմ քիւրդական բոլոր ցեղակետները կառավարութեան կողմն են անցած իրենց ցեղերով: Սասունի հայերն էլ չնայելով իրենց աղքատ երկրին, պարտաւոր են եղել միշտ հարկ տալ և ընծաներ տանել՝ ըստ հին սովորութեան՝ իրենց պաշտպան քիւրդ բէկերին. իսկ վերջին ժամանակները կառավարութեան հարկահաններն էլ երեեցան Սասունի լեռներում: Այսպիսով երկու գրացի գարտաւոր բարեկամների, հայերի ու քրդերի, մէջ կառավարութիւնը կարողացաւ թշնամութիւն ձգել: Վերջին տարիներս երկու կողմից էլ տեղի էին ունենում թշնամական մեծ ցոյցեր. յաճախ իրար հօտերն ու նախիրներն էին քշում տանում. հայերը քիւրդ բէկերին մերժում էին հարկ վճարելը, իսկ քրդերն էլ փոխադարձաբար աւելի շուտ շուտ էին կըրկնում իրենց նախապատրաստուած յարձակութները. միւս կողմից սասունցոց գանդատները կառավարութեանը մնում էին անհետեանք, որի պատճառով հայ լեռնականները նրան արտայայտում էին իրենց դժգոհութիւնը մերժելով հարկ տալ և արտաքսելով հարկահաններին: Այդ եղաւ անցեալ 1893

թուականին ևս. կառավարութեան զօրքերը շնչապատեցին Սասունի կելքրոնական դաւառը: Քիւրդ բէղերը միացրին այդ զօրքին իրենց ցեղակիցներին էլ: Սակայն Սասունը այդ ժամանակ մնաց անգրդուելի և ինչպէս զօրքը, այնպէս և քրդերը, լաւ ջարդ կրեցին: Այս բանը աւելի ևս սասակացրեց երկու գրացի ազգերի թշնամութիւնը, որի հետեւանքն եղաւ այն, որ անցեալ ամսութ թշնամիները վերջապէս միացած յիմնայատակ կործանեցին, աւերեցին իրենց հակառակորդի զօրեղ բունը:

* * *

Հնումը Սասունի +աղաւական սահմաններն էին՝ արևելահիւսից Մշց դաշտը, արեւելքից Խցիթ, արեմուտքից՝ Գինջ և Բոքլան, իսկ Հարաւից՝ Բըշէրիկ, Խարցանք և Սլեվան: Երդի իմաստով՝ Սասունը, ինչպէս երեսում է, շատ աւելի ընդարձակ սահմաններ ունի քան հին ժամանակ, և այժմ նրա մէջ մտնում են՝ իբրև նրա գաւառակներ՝ Խութը, Խարզանքը, Բըշէրիկը, Սլեվանը, Գինջը, Բոնաշէնը, այսինքն՝ այն հին գտառները, որոնք դանուում են բուն Սասունի սահմաններին կից: Բայց և այնպէս՝ այժմ էլ բուն Սասուն անունով հասկանում են հին Սասունը, միայն նրա մէջ ընդունուած է զետեղել և Խարզանք գաւառի մի մասը: Այսպիսով՝ բուն Սասունը համարուում է կազմուած հետեւեալ ութը գաւառակներից. Վեցին՝ Գառառ, Խարզան, Սասուն, Փառանց, Շապան, Տալուշի, Խոռոչ, և Խիւն:

Այս ամբողջ տարածութեան վրայ իրարից հեռու-հեռու ընկած են 110—120 քրդի գիւղեր և մօտաւորապէս 2600 տուն բնակիչ ունեցող 60-ի շափ հայի գիւղեր: Ծները շինուած են միմեանցից մի-մի վերստ և աւելի հեռու, այդքան միջոցը թողնելով հօտերին ու նախիրներին՝ իբրև արօտաաեղիներ. այնպէս որ իւրաքանչիւր զիւղ բռնում է ահազին տարածութեան տեղ՝ 5—10 սարերի ու հովհաների վրայ փռուած: Բայց քուրդ և հայ տարրերից՝ Սասունում չկան ուրիշ ազգի բնակիչներ. միայն Տաւրոսի հարաւային էջքերում տեղ-տեղ կարելի է հանդիպել եղետներէ և +աղուէացիներէ, որոնց մասին յետոյ:





ТАК. ЗА. ТОПР

ПРИС.

Городъ Мушъ въ Турецкой Армени.

Автотипія Ангерера въ Вінц.



Գաւառուակներից առաջինը, որով Մշկ գաշտից մտնելու
ենք Սասունի կեդրոնը, Շատախն է: Այս Շատախը բոլորովին
տարբեր է վերոյիշեալ Մոկաց նահանդի Շատախ գաւառից:
Ահա թէ ինչ է զրուած Ձենորի «Ճարօնոյ պատմութեան»
մէջ Սասունոյ Շատախի գաւառակի մասին. «Իշխանն Արջուց
կողմանն, Գէորգ Շատախիօ, որ կոչեաց զանուն գաւառին
իւրոյ Շատախ, վասն աւելի անուան իւրոյ»: Սրանից տես-
նում ենք թէ Հները այս գաւառակը «արջերի երկիր» էին
անուանում. և յիրաւի, «Ճաւրոսի շղթայի Մշկ հարաւային
սահմանը Խութայ լեռներն են», ասում է Մաֆֆին իւր «Կայ-
ծերում», որոնց միւս կողմը շատախցիւն էն պատճեռապնուճ գա-
շանների հետ»: Շատախի գագաթներն են՝ Սասուն, Անտօք,
Կամք, Ելք, Տորուղ, Սիմ, և այլն: Հովիտաներում վաղում են
առուակներ, իսկ մի գետակ գուրս գալով Գէլիէ-Կուզան գիւ-
ղի մօտից՝ հոսում է գէպի Անտօք, ապա գէպի Հիթէն գիւ-
ղը, և ոլոր-մօլոր անցնելով այլ և այլ ձորերով միանում է
մի ուրիշի հետ և ստանում Կուս-Գէպ անունը, որի առառած
ափին շինուած է համանուն զիւղը: Շատախի նշանաւոր զիւ-
ղերն են՝ Կոչ՝ 30 տուն, Իջնան՝ 15 տուն, Գէպալքն՝ 20 տ.
Շուշանչը՝ 30 տ., Սիս կամ Սիսալ՝ 60 տ., Շէնին՝ 80 տ.
Գէլիէ-Կուզան՝ 120 տ., Տափի՝ 26 տ., Առքի՝ 35 տ., Հիթէն (ըստ
ոմանց Թետինը)՝ 50 տ., Իշխանյոր՝ 80 տ., Ալէտան՝ 50 տ.: Այս
բոլոր զիւղերի բնակիցները հայ են, միայն Տափի մէջ 10 տ.,
քիւրգ կայ: Գրեթէ ամեն զիւղ ունի մի-մի եկեղեցի և քահա-
նայ, իսկ աւելի բաղմամարդ Գէլիէ-Կուզան զիւղը երկու քա-
հանայ: Ամեն մի զիւղ ունի իւր ռէսը, բայց առաջնորդող
գեր կատարում է ամուր Գէլիէ-Կուզան զիւղի ռէսը: Շա-
տախը իւր բոլոր զիւղերից կարող է 1000 զինուոր հանել:

Յիշեալ զիւղերից Շէնիկ և Սիմալ գրեթէ գաշտային են.
Ընդհակառակը, նրանցից վերև՝ Անտօք սարից կէս ժամ գէպի
արևելք ընկած է անառիկ համարուող Գէլիէ-Կուզանը: Անպօտը,
որ այնքան նշանաւոր հանդիսացաւ վերջին պատերազմում, մի
մէնացած գաղաթ է՝ պաշտպանուելու խիստ յարմար. լերան
գագաթը ծածկուած է ընդարձակ արօտներով, իսկ ստորո-

տը՝ անտառով։ Հարաւից նա կից է Կէֆէ առապար լեռան։

Նատախի արևմտա-հարաւային կողմը ընկած է անուանի Տաղ-ողէնը Սասունի կեդրունն ու սիրար, որի ամենաբարձր և վերևի կողմաւմ միայն հայերն են բնակուում։ Այս դաւառակը կազմուած է մօտ 20 զիւղերից, որոնք ընկած են մի երկայն ծառազարդ ու գեղանկար ձորի երկու կուրճքերին. դա Տալուորիկի ձորն է, որի երկայնութիւնն է Հիւսիս-արևմուտքից գէպի հարաւարելք 2—3 օրուայ ճամբայ, և որը սկսուած տեղում, Կոփ զիւղի մօտ, լինելով նեղ ու աշռելի, հետզհետէ խոնարհուում և լայնանում է, այնպէս որ ձորի բերանը ներկայացնում է մի դաշտ՝ մի ժամանակ (մօտ 5—6 վերստ) լայնութեամբ, որ կոչուում է ներքինդաշտ։ Ահա այս ձորի ամենավերին մասում ընկած է Տալուորիկ գաւառակը իւր շրջակայ զիւղերով։ Ձորի վերին մասը մի լեռնային կիրճով գուրս է հանում այն ժամբի վրայ, որ գալիս է Մշոյ գաշտից գէպի Սասուն. այստեղ Տալուորիկի հիւսիս-արևմտեան կողմաւմն, են Մշոյ Ս. Կարապետի լեռները։ Այդ լևոնանցքի վրայ է ձգուած «սատանի մազ» անունով կամուրջը, որ տանում է Մշից գէպի Տալուորիկի զիւղերը։ Կամուրջի տակը աշռելի ձոր է։ Թշնամու յարձակման միջոցին բնակիչները քանդումնեն այս կամուրջը և ամրանում գաւառակի անհատցելի ու անսասան հովանուտակ։ Ենորհիւ այս նախանձելի զիրքին՝ Տալուորիկ զիւղը, որ ամենից աւելի յաջող տեղումն է և այդ ձորի բանալին, անառիկի հռչակ է վաստակել ուստի և թուրք կառավարութեան միշտ երազածն է եղել տիրել և հիմնայատակ կործանել Տալուորիկը։ Բայց մինչեւ օրս այդ չէր յաջողուել։ 1893 թ. երեք ամիս շարունակ կառավարութիւնը խստիւ պաշտեց նոյն զիւղը, և նայելով որ զիւղացիք առանց հացի էին մնացել բայց կարողացան կերակրուել լոկ բանջարներով, կանաչեղէնով, կաթ ու մածնով և մնալ աներնկճելի։ Խսկ թէ լորքերը ու թէ մանաւանդ քրդերը աշաղին վնասներ կրելով միանգամայն ձեռք քաշեցին զիւղին տիրելու մտադրութիւնից։ Ձորի ամենաբարձր տեղում ցցուած է Թրֆր-քար լեա-

ուր, որի հովանու տակն է Տալուռիկը, և որտեղի ապա-
ռաժների ետեր ապաւինում են զիւղացիք թշնամու երիսից
ու իրենց մահացունչ շէշխանաների ծխով լցնում ահռելի
ձորը: Զորի մէջ՝ Սև լեռներից սկիզբն տռնելով՝ հօսում է
մի գետ, որ կամաց կամաց մեծանում է՝ ընդունելով նաև
արեւելեան կողմից՝ Մերգեղար սարից հօսող մի ուրիշ գետ.
ապա հասնելով Ներքին դաշտին՝ թափուում է կամուրջի
մօտ Բաթման-սուրի կամ Փրէ-բաթման գետի մէջ:

Տալուռիկի զիւղերը հետեւեալներն են. Զորի արեւմտեան
կրծքին՝ Տալուռիկի՝ 30 տուն, Հըդանի՝ 40 տուն և Հըդանի՝
30 տուն. արեւելեան կրծքին՝ Փողի՝ 25 տուն, Տուալինի՝
35 տուն, Հսանուար 15 տուն և Հարնի կամ Հարնուար՝ 60 տուն:
Մրանք համարուում են Տալուռիկ մեծ զիւղի իրրե զատ-
դատ թաղերը, և ընկած են իրարու խիստ մօտիկ: Այնու-
հետեւ ձորից զուրս գալու տեղումն դէպի Մշոյ դաշտն
իջնող լեռների կրծքին, ընկած են Սըդանի՝ 25 տուն, Եռ-
դարն՝ 15 տ., Խըդանի՝ 17 տ., Աըդանի կամ Հարնուի՝ 25 տ.,
և Գէճտա կամ Կարճան՝ 40 տ.: Այս բոլոր զիւղերը զուտ հայտ-
քնակ են և կազմում են Սասունի սիրտն ու հոգին և սրանք
են, որ միշտ մեծ անհանդստութիւններ են պատճառել օս-
մանեան կառավարութեանը: Տալուռիկի մի քանի զիւղերը
միայն քահանաց ունեն. ոչ մի տեղ դպրոց չկայ: Գաւառը կա-
րող է 500 զինեալ մարդ տալ:

Ահա Սասունի երկու ամենազլիւաւոր, զուտ հայաբնակ
գաւառակները, Շաբախն ու Տալուռիկը: Մնացեալներում՝ հայե-
րը խոռն են քրգերի հետ:

Սյսպիսի գտւառակներից մինն է Վերին-Գաւառը, որ Սև-
սարով բաժնուում է Խութից ու Բոնաշէնից: Նրա մէջ
յայտնի է Ս. Ասպուածածնի լեռոց: Գաւառի միջից հօսում է
օձապտցյտ գալարներով մի գետակ, որ նոյնալէս Բաթմանսուի
մէջ է թափուում: Գաւառի զիրքը քարքարոտ է, որի հա-
մար տեղացիք կոչում են երկիրը «քարէ բոլող»: Հայաբոյ-
սերը ստկաւ են, բայց ունի յայտնի մարզագետիններ ու սի-
րուն արօտալսյրեր, որոնցից նշանաւորն է Մրկէ-խզլան:

Բնակիչները յետ չեն մնում բարձր Տալուորիկի քաջերից ի-
րենց արիասրտութեամբ։ Այստեղ բնակուող քիւրդ մեծ ցե-
ղը Բըլը+ցի անունն է կրում, խօսում է արաբախառն քրզե-
րէն, և, ըստ աւանդութեան, հայ Պաշլաւունի նախարարու-
թեան մացորդներն են, որոնք արաբական արշաւանքների
ժամանակ բռնի կերպով խսլամութիւն են ընդունել. նրանց
շատ ծէսերն ու սովորութիւնները, նիստ ու կացը հայկա-
կան են մեծ մասամբ։ Մաքուր խօսում են տեղական հայե-
րէնը. ջերմ համակրութիւն ու սէր են տածում գէպի զրա-
ցի հայերը. իրենց զիւղական ժողովներում հայի ներկայու-
թեամբ հայերէն է ընդունուած խօսելը։ Բաժանուած են
երկու ցեղի—Բըլըրցի և Շէկոյի տունն Նրանց այժմեան բէ-
յերը վեց հոգի են, որոնք ընդունում են գաւառի հայ թէ
քիւրդ ազգաբնակութիւնից՝ ըստ հին սովորութեան՝ «խափի-
րութիւն»։ Բնակիչները տուրքեր ու տասաննորդներ են վճա-
րում այժմ նաև թիւրք կառավարութեանը։ Այս երկու զրա-
ցի աղղերի սիրալիք յարաբերութիւնները վերջին տարիներս
խախտուել են այդ հանգամանքի շնորհիւ, և այժմ նայն իսկ
թշնամութիւն կայ նրանց մէջ։

Գաւառի 13 զիւղերն են, Վարդենց՝ 7 տուն, Կորդեր՝ 15 տ.,
Խոջանցի՝ 10 տ., Արծոնի՝ 15 տ., Շիկալցի՝ 15 տ., Ռըճիանց՝
8 տ., Դըուց՝ 10 տ., Ռըշնչի՝ 15 տ., որոնց բնակիչները բոլորն
էլ զուտ հայ են, իսկ Խառօքէ՝ 20 տ., Թալըւ յուր՝ 22 տ., Էրուց՝
23 տ. և երկու ուրիշ քրդախառն փոքրիկ հայ զիւղեր։

Խարդանց կամ Խըլըղանց զաւառակը, որ բաժանուած է
վերին և ներքին մասերի, սահմանակից է Տալուորիկին հա-
րաւից, նրա մէջ է Ս. Մարաթուր լիառը, որ ոչ միայն տե-
ղացոց, այլ և ամբողջ Սասունի քիւրդ թէ հայ ժողովրդի
համար սրբազնն է համարուում։ Նրանով բնակիչները եր-
դուում են ծանր զիապուածներում։ «ընը Սրբ Մարաթուկ
վըզա. ընը Սրբ Մարաթուկ զինա»։ ասում է սասունցի հայը
հաւատացնելով դիմացինին իւր ասածի Ճշմարտութիւնը.
«Բըկի Մարաթուկ», երդուում է քիւրզը։ Թէև լեռնոտ ու
քարքարոս, բայց խիստ խոտաւէտ, ծաղկաւէտ և պտղաւէտ

է, բնակիչները պարապում են խաշնարածութեամբ, նոյնպէս և հողագործութեամբ (ցանում են հայահատիկներ, մշակում են այդիներ): Նոքա հիւրասէր և կրօնասէր են, բայց սիրում են և գէնք: Նցն Բըլլքցի քրդերի իշխանութիւնը տարածուում է և այս գաւառի վրայ: Գաւառակի զիւղերն են հետեւեալ 14-ը, որոնցից Պատրոքնութ՝ 23 տ. Վերին-Զալալէն՝ 25 տ. Ներ+ին-Զալալէն՝ 24 տ. Զախոր՝ 20 տ. կիսախառն են քրդով. Զորաղէն՝ 16 տ. Արջունուց՝ 22 տ., Նախոր՝ 23 տ., Փերջին՝ 27 տ., Թըլէն՝ 11 տ. Հըւեւան՝ 18 տ., Տնէիդ՝ 22 տ., զուտ հայ են, նոյնպէս և 2—3 լեռնամէջների քրդախառն հայ զիւղեր:

Միւս զիւղերը, որոնց տեղը գաւառակների մէջ ձիշտ մատնանիշ լինել չենք կարող հետեւեալներն են. Փառկայ՝ 400 տուն՝ զուտ հայ, ունի գպրոց 80 աշակերտով, թերմ՝ 200 տ., մի գպրոց՝ 50 աշակերտով, Ահրոնք՝ 200 տ., մի գպրոց՝ 60—70 աշակերտով, Սաղտուն՝ 100 տ., մի գպրոց՝ 40 աշակերտով, Պահմըտա՝ 100 տ., Գեղարվան՝ 100 տ., Շուղեկ՝ 70 տ., Հեղին՝ 60 տ., Արակունք՝ 50 տ. Էհուպ 35 տ., Բըրնին՝ 30 տ., Խոճաց վանք՝ 30 տ., Ընկուղնակ՝ 30 տ., Կրէմորի՝ 30 տ., Սեփ՝ 25 տ., Ծորիք՝ 25 տ. Արս՝ 20 տ., Մաղրէն-Խիան՝ 17 տ., Կալքի-Գընմա՝ 15 տ., և Խըտան՝ 100 տ., բոլորն էլ հայ զիւղեր:

* *

Առհասարակ սասունցին խիստ առողջ, կարճահասակ, ձարպիկ և չարքաշ է. Նրա բնաւորութիւնը թէպէտ հեղ ու խոնարհ է, բայց դիւրազուգիռ ու վառվառուն: Ապրում և հաղնում է խիստ պարզ ու անպանցած: Թէպէտ վերին աստիճանի հիւրասէր և ամեն յարգանք ցյց տուող օտարականին, բայց և անզրւսապ վրէմխնդիր է զէպի թշնամին: Ապրելով բնութեան ծոցում և հեռու լինելով այն ամեն չարիքներից ու բարիքներից, որ բերում են իւրեանց հետ աւելի յառաջացած կեանքի բարդ պայմանները, սասունցին հաւասարապէս հեռու է խարդախութիւնից ու նենդութիւնից, սարկահոգութիւնից ու դաւաճանութիւնից, շռայլութիւնից ու անպարկեշտութիւնից, բայց նոյնպէս էլ ուսումից ու կրթութիւնից: Գործին աեղեակ

մի անձ Սասունի ազգաբնակութեան հետեւեալ պատկերն է զծում, որ միանգամայն կարող է զարմացնել մեղ.—Սասնոյ ժողովուրդը իւր զարգացմամբ կարելի է երեք դասի բաժանել. Ա) Վայրենիներ, որոնք ապրում են աչքից հեռու՝ Սասնոյ անմատչելի լեռներում, անդնդախոր ձորերում; որոնք հազնուել նոյն խի ըրդիտեն. սոքա սովի ժամանակ, երբ սարերում խոս չէ լինում, իսկ ժայռերում միրգ ու տերե, յայտնուում են զիւղերում իբրև գաղաններ: Բ) Կիսավայրենիներ, որ հագնուում են կոպիտ ձեռվ շալէ շապիկ, ծածկուում գաղանի կամ այծի մորթով և ապրում իբրև աւաղակ, մերձակայ զիւղերից յափշտակութիւններ անելով կամ մի քանի այծ ու ոչխար պահելով: Գ) Ռամիկներ, որ զիտեն Աստուած պաշտել հազնուել քրդի նման, զիմագրաւել թշնամուն. սոքա են ահա մեր քաջ Սասունցիները: Առաջնները ապրում են լեռներում, երկրորդները Քաղաքնեց սահմաններում, երրորդները՝ Խցիթ, Բլշերիկ, Շատախ և այլ տեղերում: Միով բանիւ՝ սա մի արտասովոր ժողովուրդ է, արժանի մեր խորին հետաքրքրութեան և լուրջ ուշադրութեանը:



Նոյն ինքնուրոյնութեան կնիքը կրում է իւր վրայ և սասունցու ղճեադէ բարադը, որին ուրիշ ոչ մի տեղ անկարելի է հանդիպել: Ահաւասիկ զորա նկարագրութիւնը. Խաչածե հիւսուած մետաքսաթել խոյրը, ուե կամ գոյնզգոյն ապարոշով փաթաթած թեերը մինչե ուսը զրեթէ միշա բաց են. Իս հազնում է մի տեսակ անկար, երկար հուանկիւնի թեերով շապիկ, որը նրան ծառայում է զրաբանի տեղ, իսկ կոռու ժամանակ երկու թեերի ծայրերը կապելով միմիանց, քաշ է տալիս զիեցը. երեւում են քաջի թեերը ինչպէս կիսաշէկ երկաթ, երեւում է նրա վահանը, դուրս է զալիս անվախ կոռու դաշտը: Լոյն վարտիկը, վուշեց հիւսուած կոշիկները ծածկում են մարմնի արտաքին մասերը:—Կանայք հազնում են համեմատաքար աւելի լաւ: Նոքա զլուխները պատում են շտա ապարոշներով՝ որոնք նմանում են մեր քահանայական թագին. զորա արտաքին մասը ծածկուած է լինում շատ հին ու նոր արծաթէ գրամներով. նոյա զզեստը, մանաւանդ ամա-

ուր, ծիրանի շապիկն է, թևերը տղամարդոց նման, օձիքը զարդարուած ասղնէգործերով և զոյոււած արծաթի կապով. նա լինում է երկայն ասպայի նման, ծածկելով մինչեւ ուսները՝ մէջքերը կատում են պարսկական կամ հասարակ շալ միայն հասակաւոր նաները կրում են ասղնէգործ կարմիր գոգնոց և սոլիտակ շապիկ։ Մանկամարդ հարսները ծածկում են իրանց զլուխը կտաւէ քօղ, որ իջնում է մինչեւ ուսները։ Կանանց յիշեալ զլիսարկը կոչուում է +օջն և շատ սիրելի է նրանց համար. նրա բարձրութիւնը մի թիղ կը լինի. բացի հին ու նոր դրամներից, նա շարուած է գունաւոր ուլունքներով, սիւրմահիւս բանուածքով, փիւսկիւներով և շրջապատուած զյնզգոյն մետաքսեայ փոշիներով ու եազմաներով։ Վերոյիշեալ գոգնոցը կոչուում է լոնչի։ Այս բոլոր զղեսաեղէնը պատրաստուած է ԼՃէ զաւառի անունով կոչուող լճու կտաւից և շիլոյից։ Այս ամենի վրայ պէտք է աւելացնէլ իբրև սասունցու զղեստաւորութեան անհրաժեշտ մասը՝ զէնքերը, որոնք ծառայում են թշնամու և զաղանների դէմ մարտնչելու համար։

Սասունցիք ապառած չն մեծ-մեծ գերդաստաններով ըստ նահապետական սովորութեան. մի տան մէջ կարելի է զըտնել միւնցին նախահօր ամենահեռաւոր թոռներն ու ծոռները։ «Կան տներ, որ բազկանում են 70—80 հոդուց, դոքա կառավարուում են տան առաջին ձեռով ամենայն արդարութեամբ, առանց զրկանքի։ Սասնցի հարսներ ամօթ են համարում և մեղք տան բաժանման պատճառ գառնալը. ուստի, պարկեշտ և աղնիւ, հնաղանդուում են տան-տիրուհուն։—Պէտք է նկատել, որ այդպիսի մի բազմամարդ ընտանիքում ծաշին բացակայ եղող անդամների թիւը իմանում են մնացած գրանցերը հաճարելով ինչպէս որ այդ տեղի է ունենում՝ չայաստանի այլ տեղերի մեծ գերդաստաններում։ Փոխանակ անմիջապէս անձնաւորութիւնները համրելու։

Սասունցու պո-նը արտաքուստ ոչ մի գեղեցկութիւն չունի. նա կարծես մի հողաբլուր է ներկայացնուում կամ քարանձաւ՝ լեռան կուրծքին կպած։ Եւ յիրաւի, այդ զծուծ խրճիթները շատ տեղ ոչ այլ ինչ են, եթէ ոչ լեռան մէջ փո-

բուած անձաւներ, որոնք ներս են գնում խորը լեռան տակը։ իսկ ընդհանրապէս լեռան կամ ձորի կողերին յենուած խրճիթի շենքը, բաղկացած է չորս՝ զրեթէ գետնին հաւասար քարեայ պատերից, որոնց վերայ է առասսաղը՝ սովորական հայկական շինուածքով (մեծ գերաններ շարած աջ ու ձախ կամ առջեկի ու յետեկի պատի վերայ, յետոյ նրանց վրայով խոտորնակ գրուած փոքր գերաններ, դարձել, ապա վերջիններիս վրայ բարակ և երկայն փայտեր շարուած, որոնք հարդակ են կոչուում; ապա սրանց վրայ չոր ու չոփ ածած, վերջինիս վրայ էլ խոտ ցանած, իսկ խոտի վրայ հողով ծածկած)։ առաստաղի մէջտեղը երթիկն է բացուած։

Առաստաղի սիւները տակից յենուում են չորս, հինգ, վեց կանգուն սիւների վրայ։ Այդպիսի տան մի անկիւնում գուշ տեսնում էք 6—7 և աւելի մանուկների զիւղական օրորոցներ, որոնց մէջ անուշ-անուշ քնած են ընտանիքի նօրածինները, կլորիկ աղջիկի ու տղայ մանկիկներ, որոնցից անհանդիսաներին օրօրում են տան փոքր ինչ հասած աղջկերը։ Մի այլ անկիւնում հաւերն իրենց ճուտերով են մանգալիս կտկտալով ու ժողովում այստեղ-այնտեղ ցրուած հատիկները, իսկ միւսները մի ուրիշ կողմում կողովների տակ բանտարկուած։ Թուխս են նստել յարդի վրայ լուռ ու մունջ։ միւս կողմից գուրս ու տուն են անում շարունակ մարգիկ ու կենդանիներ, իսկ տան մէջ տեղը, թոնրի շուրջը տան հարսներն ու աղջկերը իրարանցման մէջ շարունակ հաց են թխում ամեն օր, կամ կճուծները ու պտուկները թոնրում կախած՝ կերակուր պատրաստում եկող-գնացող տան աշխատաւորների համար։ Երբէք միասին ճաշ չեն անում. ով եկաւ, իսկոյն հացը փոռում են նրա առաջ և ապա կրկին ճանապարհ գնում գէպի գործ։ Խրճիթի ամենախոր մասում անասուններն են պատսպարուած մէծ բաղմութեամբ, մի քանի տասնեակներով և երբեմն հարիւրներով, որոնցից ոչիսարն ու կովը կթում են ամեն օր տան հարսները։ Զմեռ ժամանակ այլպիսի խրճիթներում մութն է, խոնաւ և օղը հեղձուցիչ ու շող։ Շատ քիչ տուն է պատահում, որ հարուստ լինելով, ունե-

նումէ քանի մի սենեակներ իրարից զատուած. իսկ ընդհանրապէս ամբողջ գերդաստանը ննջումէ մի յարկի տակ, կամ շատշատ լնդհանուր մեծ սենեակի մի փոքր մասը բաժանուած է ծէրով որ հիւսում են կաղնութանձր ուռերից; Այդ մասում քնում են 15—20 տարեկան պատանիները. իսկ հայր ու մայր իրենց քանի մի «մանրիկ ու պէտ» երեխաներով քնում են միևնոյն վերմակի տակ. ամբողջ ընտանիքը այդպիսով տեղաւորուումէ թոնրի շուրջը, ոտները դարձրած գէպի վերջինս: «Մէկ երկայն փսեաթէ խսիր, նորա վրայ տարածուած ու փուուած է երկայն թաղիս (թէշ) կամ շալէ մեղար, գլխավերեր ևս խոտէ կամ քրջուբորջէ (ջուլ ու փալասից) կազմած չթեայ տստառով մի բարձ և ասպա մի լայն ու երկայն կապերտ, որպէս վերնարկ ծածկոց, ահա նոյա վերմակն ու ներքնակը, բարձն ու խսիրը, ննջելու ու հանգստանալու եղանակն ու ձեր: Ամբողջ օրը և մանաւանդ կէս գիշերին անդադար լսուում են «ջիջիրա» կոչուած միջատի և այլ հազարաւոր զեռունների անընդհատ ջի-ջի անախորժ և քնահատող ճրվճրուցները:

Սասունցոց գործածական իշտախունեն էն՝ կաթ, սէր, մածուն, թան, եղի բանջարեղէն, կորեմաղի ու ժաժիկ, որոնք խիստ առատ են. իսկ մսեղէն՝ շատ սակաւ: Նաև մեծ բանակութեամբ մրգեղէն. քաղցրաւենիքից պատրաստուած խմարեղէն ու բռնածք, թթու, ապուր, շորվայ ու լափայ, չորթանի ճաշ կեապու ձուաձեղ խազլոմառիկ, թաւահացիկ, ձրվջուր, որ պատրաստում են ձուից, իւղեց և խմորից, դաթայ, ալրէճաշ, կաթնապուր և ուրիշ իւղահացեր:

Բացի սուրուններով ու խորից ու ածէց և նախիրներով իու ու հորեներից, որոնք հիանալի սնունդ են գանում՝ խոտաւէտ բլուրների, ծաղկազարդ սարաւանդների ու կանաչագեղ հովիտներում, անուշահամ ու յորդարատ սառը աղբիւրների և առուակների, օձապտայտ գետակների և վերջապէս հովանուած մրգաշատ անտառների կողքին,—սասունցին պարտադրութ է և հողագործութեամբ. մանաւանդ Սասունի այն գաւառներում, որոնք աւելի գաշտային են և աւելի ցածր: Արեահայեաց գարաւանդների ժայռոտ ու խճոտ հողի վրայ փռուած

են սասունցու այդիները հայաստանի ամեն տեսակ պաղատառ ծառերով ու տունկերով: Արդիւնաբերութիւնը և արհեստները շատ հասարակ են, իսկ լեռները, ինչպէս յիշեցինք, պարունակում են մեծ առատութեամբ երկաթ, պղինձ, կապար և տեղտեղ էլ արծաթ ու ոսկի: Սասունցին նահապետական ձեռվ միայն երկաթի հանքը շահազործելով շինում է խոփ, խաչերկաթ, վէտատ, բաշ, կեռ, երկսայրի նաշախներ, ուրագ, կացին, գերանղի, մանգաղը պայտեր, մեխեր, և այլ երկաթէ կարասիք ու գործիք, բայց ամենից յարդին նրա շինած «շեշխանաց» հիանալի հրացաններն են: Խաշնարածութիւնից սաացած բուրզը այլ և այլ գործադրութիւն է գտել, նրանից պատրաստում են տանը հագուստի համար ճօմեր, գուլպայ, գորզեր, թաղեքներ, վրանի շալեր, շալէ վարագոյրներ, մեղարներ, տոպրակներ, և այլն, մի խօսքով նրանց գործածական բոլոր շորերը, անկողինը և այլն, բրդի ու շալի գործուածքներ են:

Սասունցին իւր անսանապահութեան և արուեստի արդիւնքների մի մասը տանում է շրջակայ գաւառները և փոխանակում է իրեն հարկաւոր իրերի հետ կամ զրամի է վերածում: Եյս առողջութեան էլ նահապետական ձեռվ է կատարուում փոխն ու պարագը լինում են տուանց մուրհակի ու պայմանի. վտահութիւնը գէպի մարդկային անձի ու խօսքի անխարդախութիւնը լիսկատար է: Ով որ գաւածանում է իւր խօսքի աղնուութեանը, նա ճանաչուում է իրեւ «քօթի ու փնթի» և «շէյթանի» ընկեր:

Սասունի ժողովրդի հքննէ, լըռ-է ո-ո-անան մասին էլ չենք կարող շատ բան ասել: Քիւրդ տարրը հաճարութէն է թէե մահմետական, բայց իսկապէս նրանց կրօնական արարողութիւնները և նոյն իսկ սովորութիւններն ու հաւատալիքները շատ տարբեր են իսլամութիւնից և աւելի մօտենում են քրիստոնէութեանը: Կեղուն նոյնպէս թէե տարբեր է երկու արբերի մէջ սակայն բացի որ քրդերէնի մէջ բառերի մի մ.ծ պաշար կայ փոխ առնուած հայերէնից, գեռ սասունցի քրդերն էլ նոյնքան յաջողութեամբ են խօսում հայերէն, որքան և քրդերէնը: Մինչեւ անդամ հայերէնը նրանց աչքում ինչ-ինչ

դէպքերում մի տեսակ՝ նախապատռութիւն ստանալու ի-
րաւունք ունի քրդերէնի առաջ: Հաւատացնում են որ
քրդերը սովորութիւն ունեն իրենց ժողովներում հայերէն
խօսել այն դէպքում, երբ ներկայ է այնակեղ թէկուզ լոկ մի
հայ անհատ, եթէ նոյն իսկ այդ անհատը շատ լաւ իմանար
քրդերէնը. այս բոլորը հաւանական ապացցյներ են նոցա հայե-
րի հետ ունեցած ազգակցութեան: Քրդերը չունին զիր ու
զրականութիւն, և նրանցում հաղթւ պատահէն արաքերէն զու-
ռանը կարգացողներ, այն էլ հարաւային սահմաններում, որ-
տեղից սկսում է արաքերէն լեզուի տիրապետութիւնը՝ Տիգ-
րանակերախ նահանգում: Սակայն սասունցի հայն էլ շատ չի
առաջացել հոգեոր դաստիարակութեան մէջ: Թէկ նա ջեր-
մեռանդ եկեղեցասէր է, վարք ու բարքով մաքուր ու անխար-
դախ, բայց շատ աղետ և միամիտ: Միայն և զիւղեր (Աշ-
րոնք, Սաղուուն, Փառկայ և Բերմ) ունեն գալրոց և մի-մի
ուսուցիչ գալրոցներից մէկը՝ Աշրոնք զիւղում՝ պահում է
Միացեալ Ընկերութիւնը: Մնացեալ զիւղերում, որոնցից ո-
մանք առանց քահանայի են, եթէ պատահում են զիր իմացող
տիրացուներ ու «քեաթիաններ», անշուշտ գոքա իրենց զի-
տութիւնը պարտական են տեղական քահանային, որի ախո-
ռատանը գտա են առել «փոխն» ու «ռահիսամը»: Կրօնական ու
կրթական վիճակի նկարագիրը լրացնելու համար ի հարկէ յի-
շելու է, որ սասունցին ամեն տարի պտղով, հոգեոր տուր-
քով, կողոսուտով, մատաներով և այլ կողմնակի առատ նուէր-
ներով օգնում ու խնամում է իւր հոգի մէջ ու նորանից դուրս
դանուած հոգեորականներին ու վանական մի շարք միաբա-
նութեանց, ինչպէս Ս. Կարապետի, Ս. Յովհաննու, Ս. Առա-
քելոց վանքերի միաբանութիւններին, թէկ զգբազգաբար
այս վերջիններն էլ իւրեանց փոխագարձ բարցյական պար-
տականութիւնը յաճախ չեն կատարում:

Որպէս յայտնի է՝ Սասունը առաջ Վանայ Հելայէնի մէջն
էր մանում, իսկ մի ժամանակ նցն իսկ Վանը էրզումի ա-
հաղին տարածութիւն բռնող վիլայէթի մասն էր կազմում:
Թուրք կառավարութիւնը դարսւս կէսից ի վեր միշտ ձըդ-

դոփելու համար, որ սկզբում շատ անվստահութեամբ էր կատարում, իսկ շատ անդամ թուրք պաշտօնեաները զոհ էին լինում ոչ թէ նրանով, որ շատ քիչ կամ ոչինչ չէին ստանում հայ զիւղացիներից, այլ նրանով, որ իրանց գլուխը անվնաս էին պրծայնում այդ կատաղի առիւծներից: Ինչեւիցէ, վերջին տարիներու արգէն ստառնցիք իրապէս հարկատու և հաւատարիմ հպատակ էին ձանացւած օսմանեան վեհապետին և նրանց հարեան քիւրդ ցեղերն էլ մեծ մասամբ արգէն թշնամացել էին հայերի հետ՝ նրանց համարելով «գինդիշմանի»:

Բայց և այնպէս Սասունի վարչական հպատակութիւնը գեռ զլուխ չէ եկել թուրք կառավարութեան կողմից, որից և Սասունի Հարցական բաժանուններն ու վարչական կեղրոնները իրապէս զեռ գոյութիւն չունեն երկրի մէջ: Ամեն բան զրեթէ մնացել է հին կաղմակերպութեամբ. ուստի և մենք Սասունի բաժանմունքները անկարող լինելով վարչական ակտեական գործադրութեան հայշական հայշական բաժանուններն էին:

Սասունի բաժանմունքները կամայական չեն, այլ բղիում են երկրի բնական գիրքից: Ամեն մի նշանաւոր ձոր կամ հովիտ իւր մէջ եղած զիւղերով, որոնց թիւը 12—22 հատ է իւրաքանչիւրում; մի զատ զաւառակ է կաղմում; որ թէե սահմանակից է իւր հարեան գաւառակին և նոյն իսկ որոշեալ յարաբերութեանց կապերով միացած, սակայն անջատուած լինելով նրանից գժուարամատոյց ու խոր լեռնանցքով կամ առապար ու ժայռոտ լեռնաշղթայով, կաղմում է առանձին ու անկախ վարչական միութիւն, ևնթակայ որեւէ առաջնակարդ ու փորձուած զիւղապետի կամ ռէսի, որին ընտրում են զաւառակի զիւղացիք իրենց զատերն ու վէճերը տեսնելու, հարկերը հաւաքելու և կառավարութեանը կամ քիւրդ աղային յանձնելու, և վերջապէս թշնամու գէմ իրենց պաշտպանելու համար: Ուստին խիստ յարգում են ստառնցիք և իրենց անձը բոլորանուէր պատրաստ են նրա տրամադրութեան ներքոյ գնելու, երբ որ նա այդ պահանջի: Իւրաքանչիւր զաւառ այդպիսի զէպքում կարող է տուլ 500—1000

Հրացանակիր: Այս կազմակերպութիւնը նահագետական ողի է կրում, և կարծես Սասունի դաւառակների խոշնարած ու անտանապահ բնակիչները ուրոյն-ուրոյն ցեղեր են ներկայացնում, որոնք միմիանցից առանձնացած ապրելով և զատ-զատ իշխանների հեղինակութիւնը ճանաչելով՝ հետզհետէ, գարերի ընթացքում, ստացել են իրարից շատ ու քիչ տարբեր լեզու, տարբեր հագուստ ու սովորութիւն և տարբեր բարքեր: Մէկ գաւառակի ժողովրդի խօսակցութիւնը շատ անգամ անհասկանալի է միւս գաւառակի բնակչին և յաճախ հարկ է լինում իրար պատահելիս թարդմանի օգնութեան գիմել: Արդէն հին հայաստանում Սասունի բարբառները այնքան էին հեռացել սովորական հայերէնից, որ նրա լեռների բնակիչների մի մասը Խոռ-Ռ անունը ստացաւ, որ նշանակում է խորթ, ականջ ծակող լեզու: Այսպէս էլ որոշուում են և բնաւորութիւնն ու բարքերը: Սասունի կեղրոնական ձորերում ու սարերի գլխին ապրում են աներկիւղ, արիասիրտ ու աղատասէր հայեր, իսկ քանի երկիրը խոնարհուում է, այնքան սասունցին գտանում է թուլասիրա, կորովաղուրկ. այս նկատելի է մանաւանդ դէպի Տիգրանակերտի գետի հովիար խոնարհուող տեղերի հայ բնակիչների վրայ, որոնք ստրկօրէն գեռ շարունակում են ծառայել միմեանց յաջորդող քիւրդ բէկերին և հարկ վճարել թուրք կառավարութեանը:

Գաւառակների կարտուած լինելու հետեանքը երեսում է և քրգերի վրայ, որոնք բաժանուել են բազմաթիւ ցեղերի կամ «աշխրաթների»՝ որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է 500—2000 անհատներից. նրանց գլխին կանգնած է իրեւ նահապետական ժառանգական զլուխ՝ քիւրդ բէղը կամ ցեղապետը: Սասունի ամեն մի գաւառակում նստած են մի երկու այդպիսի քիւրդ աշխրաթներ, որոնք, չնորհիւ իրենց արիւնարբու բնաւորութեան, սովորաբար հարկատու են դարձրել հայ տարրին, և նոյն գաւառական անջատութիւնը պատճառ է եղել վաղուց ի վեր աշխրեթների մէջ անհաշտ հակառակութեան և թշնամութեան. զրանից առաջացել են պատերաշմներ զրացի գաւառացիների մէջ, և այս դէպքում հայը

իւր քիւրդ աղայի առաջնորդութեամբ և նրա ցեղե քրգերի հետ միասին երբեմն զնացել է թալանելու իւր զրացի զաւառակի հայի տունն ու տեղը, փախցնելու նրա հօտն ու նախիրը, որովհետեւ այդ դրացին ուրիշ քիւրդ աշերապետի հովանուորութեան տակէ եղել: Այսպէս ընթանալով սերնդից-սերունդ՝ փոխուել էր դա մի տեսակ խորթութեան, տաելութեան: Սակայն վերջին տարիներս կառավարութեան վերոյիշեալ քայլերը սթափեցրին սասունցի հային, քուրդ ցեղապեաները մեծ մասամբ միացան թուրք կառավարութեան հետ՝ յանուն իսլամական «զինի» (կրօնի) իրեւ մի ամբողջական մարմին, իսկ հայ առաջաւոր սասունցիք իրար հետ սերտ սիրով կապուեցին՝ յանուն անկախ ինքնուրցին գոյութեան, մերժելով թէ՛ քրգերի և թէ՛ կառավարութեան պահանջած ապօրինի և անտանելի հարկերը, որը և իսկապէս զլւաւոր պատճառը գարձաւ վերջին կոտորածի, որի մէջ ընկան մի քանի հաղոր հայ սասունցիք և մի քանի տասնեակ զիւղեր այրեցին ու աւերեցին:

* * *

Ահա այն բոլոր տեղեկութիւնները, որ առայժմ՝ կարելի է հաղորդել այս համակրելի և հետաքրքրական աշխարհի մասին, ապագային թողնելով աւելի մանրամասն և հանգամանօրէն ուսումնասիրութիւնը: Ի հարկէ, մենք ներկայացրինք այդ երկիրը այնպէս, որպէս էր նա անցեալ տարի. ասկայն վերջին նշանաւոր, մեծ պատերազմներին, որ հերոսաբար մղեց սասունցին թշնամու ահեղ բազմութեան դէմ, ոչ միայն կերպարանափոխ արեց մեր այս էջերում զծաղքած Սասունը, այլ և իւր հետեւանքներով մեծամեծ աղղեցութիւններ ունեցաւ շրջակայ հայ գաւառների վիճակի վրայ շատ զիւղեր կործանուեցին, գաւառները գատարկուեցին, երկիրը ըստ ամենայնի նոր պայմանների մէջ զրուեց, որոնք անշուշտ և մեծ հետեւանքներ կարող են յառաջ բերել մօտիկ ապագայում:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄ ՓԵՐԻՆ

(ՇԻՐԱԿԻ ԲԱԼՀԱԴՐԱՆԵՐԻՑ)

Կէս զիշերին-զետի ափին
ես նստած եմ սիրավառ,
Գետն հոսում է—և հոսանքին
ես նսյում եմ միալար:
—Ո՞վ է խաղաղ-մէջ զիշերին
Քնած զետը վրդովում,
Ալիքները խփում ժայռին—
Ծերուկ ժայռը լուսնում:
Ո՞վ է ասաղոտ-զով զիշերին
Լուսնի շողով զարդարվում,
Շուշան կրծքին, ոև մաղերին
Գոհար ցողեր սրսկում:
Ո՞վ է չքնաղ բարի լուսին
Ծաղիկները համբուրում,
Մշուշային փրփուրի մէջ
Արշալուսին ողջունում:
—Նա հեղ զետի լուռ Փէրին է—
Ցնորքներիս սիրելին,
Նա իմ սրտի զիցուհին է,—
Վառ երգերիս նաղելին:
Կէս զիշերին-զետի ափին
Ես նստած եմ քարացած,
Գետն հոսում է—և հոսանքին
Ես նսյում եմ շուարած:

Արդինա.

Ճայռի թիւահայտնութեան մասին.



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՈՐՍՈՐԴ ԲԱՂԹՈՆ

ԱԿՑՈՒ Է ԻՐԱԿԱԽՈՒԹԻՒՆ

Զեմ ուզում ասել, թէ ե՞րբ, կամ ո՞ր տարին, էսօ՞ր,
թէ հարիւր տարի առաջ, մեր աշխարհը ո՞ր անկիւնումը,
որ չար ասաղի, ո՞ր չար ահանի ռաստ եկած զիւղի արևելեան
ծայրին, զիւղց քիչ հեռու, խոր ձորի ափին, ապառաժ քա-
րափի գլխին ցցուած էր մէկ տնակ:

Էնպէս իմացէ՛ք, թէ աչքի տեսած բան չի, լսողանց եմ՝ պատ-
մում. ձեր մէջն ընդունեցէք, որ պատմելիքս մեր ժամանակի
անցը չի, մեր ջրատար պապերի օրերի հասլահանի է, որ ձմեռուան
երկար գիշերները, տաք օդումը շարուած՝ մի կողմից էրակէլան
կանէին, մի կողմից բալենու կոթով Աճուրիս կը փստացնէին:

Վերջապէս՝ ում խելքն ինչպէս փշում է, թող ժամա-
նակն էնպէս որոշի. իմ ասելիքն էն է, թէ չոր ու տիլոր
ժայռի ծէրին պալրզած էր մի տնակ:

Տնակս ո՞րն է, միթէ սխալուած կը լինինք, որ ասենք՝
թէ աստերին բարով տուող, թեւաւորների հոգէառ ար-
ծուի բուն էր:

Մարդ առանց ոտու ձեռն ուռու տերեկի պէս գող
ընկնելու չի համարձակուում օխտն աչքանի արեկի լուսով
մօտենալ էդ պստիկ, չոր քարից շարուած ու երեսից ցխով
սուաղած խրճթին:

Պողպատէ սրտանի աղամծրդու աչքը սառչում, միսը վշվշուառում, մաղերը խովի մազի պէս ցից ցից էր լինում, սրտի ծէրը թուառում էր, երբ տնակի անծածկ և անվանգակ պատշպամբից ձորն ի վայր ներքե էր նայում:

Ժայռն ուղղահայեաց իջել էր մինչեւ անտակ անդունդը. էնպէս կոկիկ կտրուած էր, հենց կարծես հազար հազար քարտաշ՝ հազար հազար տարի՝ դուրձը (մուրձ) ձեռներին քարափի խոռթ ու փոռթը ուղղել են ու սուր լաւաշը տաշել, հարթել որ ժայռի կատարումը բնակալած հայ զիւզացիքը պարսկի ու լէզզու ասպատակութիւնից ազատ մնան:

Ի՞նչ թէ վերեկից ներքե, ներքեից վերե մտիկ տալում՝ մարդի աչքերը ջրակալում էր, գտակը ետելի կողմից սոզալով գետին էր ընկնում:

Տնակը պատկանում էր որսորդ Բաղդօյին:

Միայն որսորդ Բաղդօյի բունը չէր ձորաբաշն ցցուած, հարիւր յիսունի չափ հայ ընտանիք իրանց հանդն ու հանգաստանը, իրանց այզիքն ու ծառուտները, իրանց խմորակերների ապրուստը դաշտումը թողել էին Աստծու խնամքին, բազզի բերմունքին ու իրանք քարափի գլխին՝ երկնքի թռչունների պէս թառել:

Ամառ ժամանակը ոչ օրն օր էր էս զիւզացիների համար, ոչ կերածները կերած: Նրանց հանգիստը ձմեռներն էր, որ սիրտն ապահով ամէն մարդ մտնում էր իր ծածկի տակը, իր ընտանիքի հետ զլուկը բարձին ու բարձակալին դնում, Աստծու անունը տալիս, երեսին խաչ հանում ու քնում:

Ես որ ապահով ասացի, դուք չկարծէք, թէ մարդիկը վստահ են եղել, թէ ինչպէս պառկեցին վերջինքին, էնպէս էլ աղօթարանի հետ հանգիստ սրտով վեր կը կենան, իրանց տաւարի տակը կը սրբեն, կեր կտան ու կերթան իրանց ժամին, իրանց աղօթքին:

Ոչ ուր էր, երանի չչը էգպէս լինէր. ընդ հակառակն ամէն մի աղամարդ՝ պակուած, թէ աղափ, բամբակի քուլայ միրքով, թէ վերի պուշը նոր սեն առած, որի կռնումը գեռ ոյժ կայ, կամ որի ոյժը ոչ թէ տարով, այլ օրերով է

աւելանում, ամէն մի էսպիսի տղամարդ, ասում եմ, իրիկունը տեղը մտնելիս՝ զեռ յառաջ պէտք է անտղէր, նայէր իր արծաթի պէս պսպղացող, խոտակ սրբած ու խղած հրացանի չախմախին, պիտի տեսնէր, տտուգէր, թէ վառօթը հօ չի թափուել չախմախի տակից, ապա թէ երկու գնդակով լցրած շէլխանայ հրացանը զլիավերել՝ բարձի ետեր պատրաստ դնէր, աջ կողքին էլ իր երկբերնանի խանչալը պառկացնէր, նոր աքլորի քնով քուն մանէր:

Ազատ երիտասարդները, որոնց տարիքին ու տղամարդութիւնին վայել չէր հօր ու մօր մէջ տեղն իրանց պըստիկ քոյր ու եղբայրների հետ մի շարքի պառկել քնել, էդ աղափների համար աջ ու ձախ չըկար, նրանք տեղաշորի շատ հոգս չէին քաշում, շատերը տակերը մահիճ էլ չէին ձգում, որ մէջքները ըստաքանայ, բունն անուշանայ ու մրափին, քնով ընկնին, օգնութիւն կանչած ժամանակն ուշ վեր թռչնել:

Մի մի փալաս էր, ծածկում էին վրաները, զլուխը տախտակի բարձակալին դնում ու կիսաքուն տալիս:

Նորապսակ նորափեսէքը ձախ կուռն իրանց ձախ կողմը պառկած սիրուն նորահարսի զլիատակն էին գնում, իսկ աջ ձեռն ազատ էին թողում, որ հարկաւորած բոպէին աջ կողմը դրած զէնքը ձեռն առնին:

Երեխատէր տղամարդիկը, մանրներին մէջ էին անում ու աջ կողմից իրանք պառկում; ձախ կողմից իրանց կողակից ընկեր տանտիկնոջը պառկացնում:

Մի խօսքով տղամարդի աջ ձեռը պէտք է աղատ լինէր՝ տեղին ու ժամանակին գործածելու լայն մտքով:

Դիւղի բոլոր տղամարդիկն իրաւունք ըունէին քնելու. ամէն զիշեր էս ու էն տանից հերթով երիտասարդները պարտական էին զիւղը մանելու անցըերում՝ հանաքներ անելով, առակներ պատմելով, սիրունների վրայ խօսելով անքուն գիշեր անց կացնել:

Եթէ էս զգուշութիւնները չըլինէին, աշխատանքից փախչող հայի քնտինքով զլուխ պահող հաւատի թշնամի,

արենխում պարսիկները վաղոց զիւղը քարուքանդ, բու-ա-
ւերակ արած կըլինէին:

Էսպիսի սրտոտ, արիւնի հետ խաղացող մարդիկն էլ
սարսափում էին որսորդ Բաղդօյի տնակի պատշգամբից ցած
նայելուս:

Միայն որսորդ Բաղդօն՝ որսը շալակին՝ կէս զիշերի,
մէջ զիշերի, կամ օրով ցերեկով, ողջ մէկ էր նրա համար,
գալիս էր, զլսով տալիս, գուռը բաց անում ու թրմիալով
որսը գետնին վէր ձգում և ամառները պատշգամբի վրայ էր
գետնին երկարում ու խռմիայնում մինչև լոյս իսկ ձմեռ-
ները ծածկի տակին էր մեկնուում:

Նինուած օրից, Բաղդօյի տնակումը ոչ ճրադ էր կպած,
ոչ կրակ էր վառուած. ցուրտ ու տաք ասուածը Բաղդօյի
համար չէր: Կրակի ի՞նչ կարիք ունէր, Բաղդօն իր կեան-
քումն իր սպանած որսի մահ համը չէր տեսել:

Նա բերում էր, զիւղացիք ուտում էին:

Ո՛ր առաւօտը Բաղդօն ժամից յետոյ մօտենում, աէր-
տէրի աջն առնում էր, ամէնքը հասկանում էին, որ Բաղ-
դօն որս է բերել:

Տէրտէրն ու իշխանները ժամից դուրս էին գալիս և
ուղեղ մտնում Բաղդօյի տնակը:

Տէրտէրն երեք անգամ խաչակնքում էր բերած որսը,
ապա տանուտէրի զիտութիւնովը կտրատում, մաս մասն
էին անում ու տունէտուն մատաղաբաժին ամէնքին հաւա-
սար ուղարկում:

Բաղդօյի որսերը լինում էին քարափների վրայ ծուլէծուլ
անող եղնիկները, կստարները, վայրի այծերն ու ոչխարները:

Արջ, գայլ աղուէս և ամէն սրատամ գաղանների միոյն
կաշին էր բերթում Բաղդօն:

Դրա համար էր, որ տէրտէրից բռնած. մինչև վերջին
հասակն առած զիւղացին՝ ձմեռները տաք քուրք ունէին:

Միայն Բաղդօն ինքն էր, որի թիկունքը տաքայնողն
իր Հնմաշ արխալուղն էր:

Ամառներն երբէք որսի չէր գնում Բաղդօն:

Երկու յարգելի պատճառ ունէր Բաղդօն հղպէս վարուելու: Առաջնը՝ որ ամառները վայրենի կենզանիքը ծընում, ցկնում են, ձագեր ունին, ձագեր են կերակրում: անխղջութիւն էր համարումնա մատղաշ օգնութիւնի կարօտ անասուններին մօրից զրկել և երկրորդը՝ որ ամառը նա գործ ունէր կատարելու:

Ասացինք, որ զիւղացնց կալու կուտը, բարն ու պտուղը դաշտի վրայ էր. եթէ Բաղդօն գիւղի կտրիծների հետ զիշերները, թէկուզ հենց ցերեկները պահապան չըլինէր այդիներին ու արտերին, օրաններին ու քաշաններին, անիծուած թուրքերը բոլորը քանդ ու քար կանէին, կը փշացնէին, ձի ու տաւար կը քշէին, կուտացնէին, կը տրորէին:

Եւ վերջապէս, ովկ կը համարձակուէր հանդը գութան ու չութ տանիլ քանի՞ զլսանի պէտք է լինէին նրանք, որ թշնամու ոտքի տակին փուռած դաշտերից կարողանային իրանց ձմեռուան ապրուստը տուն տանել:

Բաղդցի որսորդութիւնն սկսուում էր աշնանից և շրունակուում էր մինչև ձիւնը վերկենալը:

* * *

Առանց պատճառի չէր, որ Բաղդօն թևաւորների վրայ հրացան չէր բացանում:

Եյսբանումը նա ունէր իր ծանր՝ պատճառը: Գիւղի մեծու փոքրը, էզն ու որձը «Հայր մերի» պէս գիտէին էդ պատճառը:

Ամէն հարցնողի Բաղդօն միշա պատմում էր. ոչ թէ մի անգամ, թէ կուզ օրական տասն անգամ մի և նշյն մարդը հարցնէր, Բաղդօն զլսացաւանը չէր համարում կրկնելը: Աշուղի հերեաթ էր շինել իր համար:

Կուղէք՝ ասեմ՝ ի՞նչ էր պատմում Բաղդօն:

—Երնէ՝ էն օրն ու ժամանակը, այսպէս էր սկսում Բաղդօն իր կեանքի զլիսաւոր արկածքը. ես կը լինէի 12 տարեկան:

Ինձանից մի տարով պստիկ էր մեր հարեւանի տղայ Օնէսը:

Աստուած նրա դատաստանը քաղցր անի, ոնց որ սրբառաւ մարդ դուրս եկաւ, էնպէս էլ ձակատը բաց, կուրծքը

դէմտուած՝ թուրքերի հետ կռիւ տալուս՝ 15 թուրքից տասին
զետին փռեց, վրայ տասն ու մէկն ինքը գնդակախորով ընկաւ:
Գնդակը ձախ էրաթաթից մտաւ, մէջքիցը գուս ելաւ:

Հա, էն էի ասում:

— Մեր ձորումը, զետից հեռու, քարափների մէջ, ձրդը-
ճղքնոտել էր Թուխ-Մանուկի թեղի ծառը:

Մառ հօ չէր, մի պստիկ սար էր, չորս տղամարդ որ
իրար հետ ձեռները պատ էին տալիս, զրկում; զեռ երկու
թղաչափ էլ բաց էր մնում:

Էս ծառի բուկն էր, ճղքների բռնած շուտաքումը, եթէ
տափակ դաշտի վրայ լինէր, հարիւր անանոց մի գիւղ կը-
տեղաւորուէր:

Ճղքներն էնսպէս խիստ իրար մէջ խճճուել էին, որ կար-
ծես, տարիներով խուճուճ մազերը չը սանտրուած, գզզպուած
փնթի աղջկայ զլուխ լինէր. տերեւակալած ժամանակը՝ թէ
կուզ հեղեղ թափուէր երկնքից՝ թեղու տակը միշտ չոր
էր մնում:

Մեռնի՛ մ Թուխ-Մանուկի զօրութիւնին, նրա գերեզմանի
վրայ էր գուրս եկած թեղի ծառը:

Թուխ-Մանուկն անհաւատ թուրքի մօլլի տղայ է լի-
նում, մօլլա եմ ասում, որ ինչ օր՝ ամենաքիչը՝ մի երկու
հայի արիւն չը թափել տար, էն օրը հաց չէր լափիլ:

Մի օր էլ մօլլի ձեռը մի հսյի տէրտէր է ընկնում:

Մօլլէն տէրտէրի ոտ ու ձեռը կապել է տալիս, չոքա-
ցնում՝ եթէ քո Քրիստոսիդ կուրանաս, մեր ունին. (Հաւատ)
կրդաս, քեզ բաց կրթողեմ, թէ չէ մաս մաս կը կտրատեմ:

— Քան թէ ձեր սուտ հաւատը պաշեմ, զժոխքում
էրուիմ, լաւն էն չի, որ էս օր քո ձեռքովդ կտրատուիմ ու
էգուց իմ Քրիստոսի զոգումը բազմեմ:

Մօլլէն հանաք չի իմացել տէրտէրի աջ մատի առա-
ջին խաղից սկսած՝ բոլոր մարմինը խաղ է խաղ բութ դա-
նակով իրարից հանել է:

Տէրտէրը մի կաթիլ արտասունք չի թափել, մի ձեռն էն
կտրատել, մէկէլն է դէմ արել ու յիմարների վրայ ծիծաղել:

Գիտէք՝ ի՞նչ ոլինդ սիրաւ է ունեցել տէրտէրը, լսի բա-
ժին լինի նա, փորը թափել են, աղեք-մաղեքը, լերդ ու
թոքը դուրս են քաշել, համարեա նոր է հոգին տուել:

Մօլլէն զիւղի շներին հաւաքել է տուել, որ տէրտէրի
միսը լափեն, արիւնը լկեն, որ նշանն աշխարքի վըայ չը
մնայ:

Անբան գաղանները հոտհոտել են ու պոչները քաշ՝ յետ
գնացել:

Յետոյ մօլլէն տէրտէրի մարմինը քթոցի մէջ է լցնել
տուել ձորը թափել որ գէլ ու գաղան, լեշակեր թռչուն
գան լափեն:

Քսիի հնար կայ, ճանճ ու մժեղ էլ չեն նստել վըէն:

Մօլլի տղէն կողըին կանգնած մտիկ է տալիս եղել. նա
տեսնում է հօր անօրէնութիւնները:

Տղի քունը չի տանում, տէրտէրի տանջանքն աչքի ա-
ռաջին երեսում է:

Գիշերուայ մի ժամանակը՝ մօլլի տղի քունը որ փախ-
չում է, տեղիցը թաքուն վեր է կենում և ի՞նչ տեսնում:
ամէն տեղ մութն ականակիր է, միայն ձորիցն է մի ֆըռ-
ֆուան լոյս վերև բարձրանում:

Ցառաջ զնայ, ի՞նչ տեսնի. տէրտէրի մարմի վըայ մի
ձեռնաշափ կանանք ու կարմիր շողողուն լոյս պէծպծին տա-
լով բարձր ու ցածր է անում: Էդ լոյսի շաղաւիղն էր չորս
կողմը լուսաւորել:

Ցանկարծ լոյսի միջից մօլլի տղէն մի ձայն է լսում:
Ձայնն իրան էր կանչում: Տէրտէրի տղի անունը լինում է
Թռւխ-Մանուկ (Ղարա-Օղլսն):

— Թռւխ-Մանուկ, Թռւխ-Մանուկ, կանչում է ձայնը, բաշ
ու բրիչ վեր կալ, արի ինձ տեղն ու տեղս թաղիր:

Թաղելուս՝ մի ձայն էլ է լսում. կողքիս քո համար էլ
տեղ պատրաստիր, էդուց դու էլ պիտի նահատակուիս, իմ
Քրիստոսը քեզ սիրում է:

Առաւոտը մօլլէն տղին գտնում է տէրտէրի գերեղմանի
վըայ նստած՝ աղօթելիս:

Մոլլէն դեռ աղաջանքով, յետոյ սպառնանքով աշխատում է տղին հեռացնել, բայց զուր էր. նա միալար էս է կրկնում, թէ ինքը քրիստոնեայ է:

Անստոտուած ու անխղճմուանք հայր, մի ահագին քառվ իր ձեռքովն իր միս ու արիւն զաւակի զլուս ջնջխում ջախջախում է ու տէրտէրի կողքին, Թուխ-Մանուկի պատրաստած փոսումը թաղել տալիս:

* *

Թուխ-Մանուկի ու տէրտէրի գերեզմանների մեջ տեղը դուրս է եկել և շուաք արել թեղի ծառը:

Էն օրուանից էսօր՝ ոչ մի ժոշուն դեռ չի նստել թեղու վրայ:

Մէնակ մի ագռաւ եկել է իր ընկերի հետ ու բուն գրել ծառի ծէրին:

Էն ագռաւների մեջ ձագերի սերունդը որդէցորդի բնակուել են իրանց պապ ու պապերի շինած բնումը:

Ոչ ամառն են հեռանում էն տեղից, ոչ ձմեռը. տարին 12 ամիս զռում ու սգում են տէրտէրի ու Թուխ-Մանուկի գերեզմանի վրայ:

Տէնց էդ ագռաւների անէծքն էր, որ ես մեր երկրից, մեր էլ ու զիւնից (Համայնք) իմ ազգ ու ընտանիքից կըուրեցի, աշխարհէ աշխարհը ընկայ ու իմ զարիք զըուխը ձեր չոր քարին գէմ տուի, ձեր աղ ու հացին մասնակից եղայ, ձեր քաղցր բարեկամութիւնին ու պատուին արժանացայ:

Ձեր սէրը, ձեր տուած պատիւն իմ շնորին պարտք են զրել կարողութեանս չափ ձեր լաւութիւնը վճարել. ընչով պիտի վճարէի, ձեռիցս ի՞նչ կըգար, մի չոր զըուխ ունիմ, մի հրացան, մոքում զրի երկուսն էլ էս Աստծու օրհնած գեղի ուղղին վէր դնեմ. զրա համար եմ որսորդ գառել սար ու ձոր ոտնատակ տալիս:

Իմ որսորդութիւնն էն օրը կը վերջանայ, երբ սպանած որսերիս համարքը հաղար կը դառնայ. Էն օրն իմ որսի հրացանը ձեր սարերումը հողի տակին կըթաղեմ ու տեղը

մի նորը կը ճարեմ: Իմ նոր հրացանը չորքոտանու վրայ չեցացուիլ երկու ոտնանի որսերի արիւնը կը խմի, հայի աղպին, հայի հաւատին թշնամի քուրդ ու զզլբաշի, օսմանցի ու լէգվու հոգեառ Գարեհլ-Մուրեհլը կը դառնայ:

Ել ես իմ նոր հրացանից չեմ բաժանուիլ կը կտակեմ, որ երկուսիս մի պատանում դնեն:

Ազուաւների անէծքի մասին հետեւեալ պատմութիւնն էր ասում որսորդ Բաղդօն:

— Ասայի, որ ես տասն երկու, մեր հարեւանի տղայ Օնէսը տասն ու մին տարեկան էինք:

Մի օր ես հիւանդացայ.

Մէրս ինձ առաւ, մի փարչ ջուր էլ վեր կալաւ, գնացինք Թուլս-Մանուկի գերեզմանին ուխտ արինք: Մէրս ոս ու ձեռիս ջուր ածեց, իմ շորիցը մի ծլանք կտրեց, թեղու ձղքանը կապեց:

Հեռանալիս՝ մէկ էլ ծառի վրիցն ազուաւի ձէն լսեցի, գլուխս բարձրացնեմ, ի՞նչ տեսնեմ, ազուաւի ծուտերը բերանները բաց են արել ձվձվում են, սվավում են, մէկն էլ կտուցով կերակրում է:

— Ի՞նչ սիրուն են, նանի, ասայի մօրս; երնէ՞կ իմը լինէին:

— Դրանք Թուլս-Մանուկինն են, գառնուկս, Թուլս-Մանուկը քո յաւ ու չոռը թուրքերին տայ:

Մէրս պատմեց մօլլի անօրէնութիւնները:

Գիլի զլիին աւետարան կարդացին, ասեց՝ շուտ արա, ովսարը զնաց:

Մօրս պատմածները խելքում չը նստեց. սատանէն մէջաբուն գրեց. քնում էի՝ ազուաւի ծուտերն էին երազ գալիս, զարթնում էի՝ նրանք էին աչքիս առաջին:

Մի օր Օնէսին առայ, մասյ ձորը:

Օրն ամսպակալած էր:

Մի քանի օր կար, որ մեր զետը վարարել էր ու նրատել բայց դեռ էլի ջուրը շատ էր, ոտքով անց կենողը պիտի զլիիցը ձեռք քաշած մարդ լինէր:

Ծառին չըհասած՝ լսեցի ագռաւի դռոցը։ Մօտ վաղեցի,
տրեխներս հանեցի, ուղեցայ ծառը վերև բարձրանալ։

Ի՞նչ խելք, տեղ կայ որ ձեռս բանդ անեմ, ես չէ մեր
խելքը կարծ՝ հասակն երկար Զեսի աղայ Ակոնն էլ չէր ճըշ-
քին ձեռք հասցնիլ։

Հազար էլ Օնէսը գլխիս գիլի աւետարան կարգաց, լսո-
ղըն ով էր. մաքումն գրել է՝ ագռաւի Ճուտերը բռնեմ, պի-
տի կատարէի, թող մի ձեռս առնեմ, թէկուղ թեղու զլիի-
ցը վեր ընկնեմ մեռնեմ։

Երդում հաւատ արի, որ ձեռս զիպցնեմ ու ներքե
գամ. Էնքան լինի, որ Օնէսը կռանայ, ինձ իր ուսերի վրայ
առնի, որ ձեռս ճղքանը հասցնեմ։

Աստուած խելքն առաւ, լսեց։

Երանի՛ չէր լսել։

Պիտի տեսնէիք, թէ ոնց եմ կատուի պէս ծառն ի վեր
շուլալուում։

Մի խիստ փոթորիկ վեր կացաւ. աշխար-արարած տե-
ղեց թնդացին, Էն սարի չափ ծառը գտուել է երկու տար-
ուան նոր գուս եկած տնկի, որ վզզալով գնում գալիս չի,
ուղում է, թէ տեղահան լինի, գետն ընկնի, գետի առաջը
բռնի. ում հոգն է, թէ ծառի տերեներն ու մանր ճղք-
ներն աչքերս են մոնում, ես կզակս վերև եմ արել աչ-
քերս մին փակում, մին բաց անում, ագռաւի բնին մոտիկ
տալիս ու ճուղը է ճուղը ճանապարհս բռնած՝ բարձրա-
նում եմ։ Սուտ չեն ասել. թէ Էն ինչ որ ճնողների զունկը
կրցաւի իր զաւակների համար, ուրիշն սիրտը չի ցաւիլ.
Խեղջ ագռաւների ուրիշն տուեց, զզացին, զլիս ընկան, որ
եկողն իրանց թշնամին է, ոնց են զողուում, ոնց են ճղք-
ղում, պտիտ պտիտ են անում զլիխս, վրայ են պրծնում, թեե-
րով երեսիս տալիս են, ուղում են աչքերս կացահարել։

Զեղ եմ հարցնում, ամօթ չէր իմ համար երկու ագռա-
ւից վախենալ. մի ձեռքով ծառն եմ բռնում, մէկէլով գէմ ու
գէմ հետերը կոիւ անելով վերև եմ բարձրանում. կատա-
րեալ մենամարտութիւն է իմ և թուզունների մէջ։

Տեսնենքը յաղթութիւն մեղանից ով կը տանի:

Էն է հա, փափագիս հասել եմ, ձեռս դիպաւ ագռաւի լիսպոր (փափուկ) ճուտերին, դեռ նոր են բռթուկալել, ի՞նչ փափուկ է փետուրը. այ, այ, այ, բերաններն ի՞նչպէս են բաց արել գլուխներն ինձ են մեկնում, տեսնես՝ հասկանում են, որ ես խլում եմ իրանց մօրից, թէ հէնց իմանում են՝ կերակուր եմ բերել իրանց տալու:

Էլ ի՞նչ եմ ուշանում, մտածեցի ես, վերցնեմ էլի:

— Կաց, խելօք Դաւիթ, կաց, էղքան էլ հեշտ չը կարծես, ի՞նչ ես ագռաւի ճուտերի սիրով գլուխոդ կորցրել, մի ձեռքիդ երեսին մտիկ տուր, հասպա՛ արիւնը չե՞ս տեսնում, հասպա՛ դու ագամորդի չե՞ս, դու մսից չե՞ս շինուած, քարից ես ստեղծուած:

Զեր մեղացը պարտական մնամ, եթէ սուտ ասեմ, ագռաւները երկու երկու մին վերե են թռչում, մին գնդակի նման ուղղակի ցած իջնում ու ձեռիս երեսը կտցահարում. հէնց իմանաս՝ երկու դարբին են՝ երկաթ են ծեծում:

Յաւի սաստկութիւնից աչքերիցս կրակի պէծեր են դուրս թռչում, ատամներս հուազ տուի ու ձեռս տարայ բունը:

Վահ, էս ի՞նչ է, ուր են ձաղերը: Հասկացայ, մէրը նըստել է բնի մէջ ու ճուտերին թեկի տակն առել, պաշտպանում, կուրծքն էլ դէմ է տուել ու հետս կոիւ անում:

Էս մայրն է. բայց ուր է հայրը:

— Հայր է, սառնասիրտ կրլինի, մտքումն ասացի, տեսաւ, որ յաղթութիւնն ես տարայ, գլուխ առաւ, կորաւ, նա զռալով թռաւ, դնաց:

Էս լաւ եղաւ, մէկի հախիցը դալը հեշտ էր, ագռաւին յետ բռթեցի, ձագերից մէկին վեր կալայ ու ցած ձգեցի. Օնէսին էլ ձայն տուի, որ վերցնի, պահի:

Ներքեից Օնէսի ձայնն ականջիս դիպաւ, բայց չիմացայ՝ ի՞նչ ասաց, ագռաւի զոոցը, քամու զզվոցը, տերեների խևշոցը, գետի դոչդոչոցը ձայն են թռղում լսելու:

Ուղեցայ երկրորդ ձագը խլել մօրիցը, բայց էս անդամ առաջուայ պէս հեշտ չեղաւ, ագռաւը տեսաւ, որ ձեռիս

երեսը ծակելով բան չի դառնում, ձագին ոտներով յետ քցեց
ու յառաջ եկաւ, ուղում էր աչքիս կտցի:

Ես էլ բանական էի, հասկացայ թշնամուս հնարագի-
առութիւնը, էլ ճուար մոռացայ, սկսեցի աչքերս պաշտպա-
նել: Ի՞նչ արած, եթէ մէկէլ ձեռքս ազատ լինէր՝ մի ագ-
ռաւի առաջին չի կուչ գալ:

Ի՞նչ թէ մի ագռաւ, ի՞նչ եմ դուրս տալիս զլիսիցս, ըն-
չի չեմ ասում հարիւր, հազար, տասը հազար ագռաւ. եր-
կինքը սեացաւ, կռոցի-զռոցի ձէնից ականջ է խլանում: Տէր,
դու փրկե՞ս, աղատե՞ս... Հիմի հասկացայ, որ ես սխալուած
եմ եղել, որ ծնողն իր զաւակին ձեռից կըթողնի. Հայր ագ-
ռաւը զնացած է եղել օգնութիւն կանչելու:

Մտածեցի, որ բանս բուրդ է, ուշանալն ու զլիսից ձեռք
քաշելը մին է. սիրտս պնդացրի, անդպամ մօրը ձեռքով վեր
կալայ շպրտեցի, ձազը ցած զցեցի ու ինքս աչքերս պինդ
փակած՝ ծիւղք է ծիւղք ներքե եմ թուշում:

Ի՞նչ բաղդ, որ ոչխարէնի փափախը զլսիս էր, թէ չէ
էնքան ինչ ձեռիս էին վեր հատում, թէ որ զագաթիս կըտ-
ցէին, ուղեղս ցրիւ կը տային: Աստուած ինձ խեղջ եկաւ,
ագռաւները յիմար էին, միտք չարին գտակս խլելու:

— Ե՛ւտ, շ՛ւտ, թոքի էդ ներքի ծղքնիցը, տնաքանդի
տղայ, ձայն տուեց Օնէսն ու իր գտակն աչքերը քաշեց:

Իմ միտքս էլ հէնց էդ էր, թուայ գետին ու ձագերս
ուղեցի:

— Ի՞նչ ես տխմարացել, երկնքիցն անթե, անփետուր,
նոր մազակալած ձագեր ես վէր քցել, ուղում ես որ կենդա-
նի մնային, զրա ժամանակը չի, արի կորչէնք՝ թէ որ չնք
ուղում աչքերից զրկուել բարկացաւ վրէս Օնէսը:

Հիմի հասկացայ, թէ ի՞նչ զազան եմ եղել ես, միանգա-
մից զրկել եմ նաշալը ծնողներին իրանց աչքի լոյս զաւակնե-
րիցը. երկու ծուան էլ անշունչ գետնին միջքի վրայ փռուած՝
ոտքերը դէպի երկինք տարածուծ՝ բերանները բայց ընկած
էին. խեղջե՞ր, երեսում է՝ Աստծուն զանգատուում, բողո-
քում էին իրանց քարասիրտ դաշճի ձեռից:

Այդ ժամանակն էր, որ մեռած խղճմատնքս անողորմ դատաւորի սառնութեամբ զարթնեց ու սկսեց ինձ դատել ու դատապարտել, սիրտս ու աղիքս կտրատուում էին, արտասունքս բարափից թափուող աղիւրի ցելթուքսի նման երեսս ողղողում էր, չըքել էի գետնին, կոացել էի իմ զոհերի վրայ, երեսս փափուկ փետուրներին քսում ու համբուրում, մղկտում ու շեկչեկում:

—Ի՞նչ ես գժուել թող էդ լէշերը, վեր կաց, գոչեց, հիմի քեզ պատառ պատառ կանեն ազուսւները, վրէդ շոր ըշմաց՝ ծուիկ-ծուիկ արին, բարկանում է վրէս Օնէսը:

Թէ ինձ ասած՝ թէ քարին:

Խելօք Օնէս, ըզգիտեմ՝ ո՞ր տեղից մի երկար փայտ վեր կալաւ ու սկսեց օդի մէջ աջ ու ձախ տանել բերել:

Անբան թռչուններն էլ իրանց զլիսի զինն ու արժէքն իմացել են, օտար ազուսւները փէտիցը վախեցան ու քիշքիչ թռան, քաշուեցին. մէջ տեղը մնացին անբազդ ծնողները:

Էդ ժամանակն Օնէսը մի կերպով ինձ էր քաշ տալիս, մէկէլով իմ թշնամիքանցն էր Հեռացնում:

Ես հաւատարիմ ընկերիս ըստհառակեցի, վեր կացայ ու ետևիցը թրե գալով գնացի, բայց մէնակ ըստկարծէք, իմ զոհերիս պինդ կրծքիս հուպ տուած:

—Կատաղել ե՞ս, թէ Սատուած է զլիսիդ խռով կացել, հէնց հիմի մայրերն աչքերդ կըշանեն:

Օնէսը ձագերից մէկը ձեռքիցս խլեց ու հեռու շպրտեց:

Մի քիչ ժամանակ կարողացանք շունչներս մեզ քաշել ազուսւները բոլոր էտական յետ մնացին, վէր եկան իրանց ձադի վրայ ու ձանգերով շուռ է շուռ տուին. խեղճերը կարծում էին, թէ իրանց ձագուկը կենդանի է:

Զըգիտեմ՝ զզայի՞ն իրանց անբաղդութիւնը, թէ միւսին ազատելու մաքով՝ ընկածին թողին ու կրկին վրայ քշեցին:

—Նպուաիր սյդ լեշը, ձայն տուեց Օնէսն և ուղեցաւ ձեռքիցս խլել ու դէն ձգել:

—Կըմեռնի՛մ ու սրանից չեմ բաժանուիլ, ասացի ու սատկած ձադը ծոցս կոխեցի:

էլ կարողանում ենք ազատուել, ադռաւներն առաջներս կտրում են և ուղիղ աչքներիս են նշան գնում: Դու նրանց խելքը տե՞ս, զիտին որ իրանց աչքի զրոյն ես եմ; եթէ մի անգամ Օնէսի վրայ են գնում; տասն անգամ ինձ են վրայ քշում:

Անձրեն սկսուեց ջրի պէս թափուիլ, մնացել ենք մոլորուած, ուր գնանք, մինչեւ ձորը գուրս գանք, զիւզը հասնինք, կը թրչուինք, ջուր կը գառնանք, ադռաւների ձեռից էլ ազատում չի լինիլ: Ամենից մօտիկ ու ապահով տեղը գետի մէկէլ երեսի հնձանն էր, որ կը մտնենք, գլուխներս կազատենք. բանն էս է զետն ի՞նչպէս անց կենանք:

— Թէկուզ իմանամ, որ խեղդուելու եմ, պիտի մտնիմ, ասաց Օնէսն ու տրեխները հանեց, փէշերը բարձրացրեց, փայտը սիւն տալով ջուրը մտաւ: Ես էլ իշոյրի պէս իմ մանածողի ետելից գնացի:

Ազատուների ուզածն էլ էդ է եղել քիչ ժամանակ մօտ չեկան, բայց հինց որ գետի խոր ու խշան տեղը հասանք, յանկարծ գլխավերեններովս ծառս եղան, առաջներս կտրեցին և ուզում են աչքներս հանել:

Վրէժ առնելու լու տեղն էր. մեզ պահե՞նք, թէ թըշնամու հետ կոիւ տանք, ջուրն էնպէս կատաղած գալիս է, որ եթէ ոտքներս մի քիչ սլքուի, գլխներիս վրայ կունդիկ կունդիկ կանենք ու ջահել ժուռ ու մուռ (անչափահաս) արեներս ձեր չարին փոխ կ'անենք:

Էլի Օնէսի խելքը մեզ պրծացրեց.—Հանի՛ր ծոցիցդ լէշը, ջուրը քցի՛ր, հրամայեց նա:

Խոնարհ ծառայի պէս կատարեցի:

Ծնողի սրտին ի՞նչ կը հասնի. ագռաւները տեսան, որ իրանց ձուտը գետի երեսին լողալով գնում է, մեզ թողին ու շատապեցին իրանց ձադի, դոնէ, մեռած մարմինը ջրից ազատելու:

Գնացին ու գնացին:

Մենք վայ ու վախով մի տեսակ դետն անցկացանք, հընձանը մտանք, ազատուեցինք: Մութը գետինը բռնեց, ժանդառը կոխեց. մենք զիւզը մտանք:

Օգուտն ի՞նչ հերկք չէր, որ դիշերը մինչև լոյս քունս
փախել էր, հերկք չէր, որ երկուայ անիրաւութիւնս օձ էր
գառելինձ շանթահարում, լոյսը որ բացուեց, դուռը բաց արի,
դուրս եկայ թէ չէ, ազուաւները ղուալով վրէս ընկան:

Ի՞նչ զլիացաւանք տամ, երկու տարի ազուաւների ձեռից
չի կարողանում զլուխս ծածկի տակից հանել մեր տան բաշխ
զլիսիցն ազուաւներն ամառ ձմեռ՝ հեռանում չէին. օրը մի ան-
գամ դեռ մինը, յետոյ մէկէլը, կէս ժամով թռչում գնում էին
ուտելիք ճարելու ու էլյետ գալիս զրլիներիս զռում:

Եթէ սրբերի գասը գասակուելու արժանի հայրս թո-
ղած լինէր, եղբայրներս վաղուց սպանած կը լինէին,
ապրանքն էք ուզում ոչնչացնել. ասում էր լուսահոգին,
Թուխ-Մանուկինն են զրանք, զրանց մերունդը հուրն յաւի-
տենական պիտի մնայ մինչև Քրիստոս դատաստան նստի,
անհաւատ Մոլլի աչքերն էդ ազուաւներին փորել տայ, նոր
հրամայի դժոխքը քցել: Ի՞նչ անենք, կրկնում էր խեղճ հայրս
հոգոց քաշելով, մեր անառակ որդու մեղքն է, մենք պիտի
քաշենք. մինչև էս ազուաւները մեղանից մէկն ու մէկին, կամ,
շատ կարելի է, բոլորիս զլուխը չուտեն, հեռացողը չեն:

Դրախտումը ծլվաս, իմաստուն ու արդար ծնողը եր-
կու տարումը մեր լիքը տունը սունկ եղաւ, բոլորին խշկեց,
հողը կոխեց: Մնացի ես, էս իմ գետինը մտնելու չոր զլու-
խը: Աներես էի, կեանքիս թելը կարուած չէր, ճակատիս
գրուածքն էր, մի բոլորակ ամիս պիտի աչքս քուն չըդար,
բերանս նշխարք չըմտնէր, պէտք է հիւանդապահ դառնայի,
մէկ մէկ մի ամսի մէջ բոլորի աչքը իմ կոտրուելու ձեռովը
փակէի, իմ մեղքի համար ծնողների, եղբայրների, մեծ ու
մանրի կեանք ու արելից զրկէի ու ես մնայի զլիակեր բու-
րայզուշ: Ա՛խ, ընչե՞ մի մազ չը կարողանայի դառնալ,
նրանց փեշեցը կպչել նրանց հետ սե հողի մէջ մի կար-
գում պառկել քան թէ մնացել՝ եմ կենդանի, էրուելով, տա-
պակուելով: Ի՞նչ անեմ, ո՞ր ջուրն ընկնեմ, զլուխս ո՞ր քարե-
րին ատմ, խղճմտանքս եօթը զլիանի վեշապ է դառել, ինձ
քրքրում, քձլձում, ու հարեւան բարեկամի ասելատեղ եմ զառել:

ի՞նչ կարող էի անել ձե՞զ զուրբան, ամէնքն ինձանից
երես էին թեքել մի միմիթարական խօսք ոչ մէկից չը լսեցի:

Ճարս կտրեց, գնացի ընկայ ջրատար ծնողներիս գերեղ-
մանի վրայ, երեք օր երեք գիշեր բերանքս ի վէր կործ եղած
մնացի: Էլ չը գիտեմ՝ քնած եմ եղել նղղած եմ եղել թէ
հէնց զարթուն եմ եղել ուշքս գլխիցս թռած է եղել.
մէկ էլ տեսնում եմ հայրս, ոնց որ կենդանի՝ առաջիս
կանգնած:

— Գնա՛, ասում է, մեր ունեցած չունեցած շարժական
ապրանքը քո ձեռքովդ գիւղի աղքատներին բաժանիր, իսկ
անշարժը բոլորը մեր ժամին փախմ (կտակ) արա՛: Քեզ հա-
մար, ասում է, ոչինչքան չը վերցնես բացի իմ որսորդական
հրացանից, միայն մեր ոչխարի հօտի միջեց վերցրու մեր
չորս եղջեւրանի խոյին, տար Թուլս-Մանուկի գերեղմանի մօտ
մատաղ արա, աղքատներին բաժանի ու ինքդ աշխարհքէ
աշխարհք ընկի, որտեղ նեղղացած ու զբնուած տեսնես,
հարարին հասի, որտեղ օգնութիւնի կարօաներ տեսնես՝
դլուխդ նրանց համար մատաղ տուր:

Հօրս հրամանը սրբութիւն էր ինձ համար, մի առ մի
կատարեցի, և գիտեմ, որ Աստուած իմ մեղքս ջնջեց:

— Ինչպէս իմացար, հարցնում էին լսողները:

— Այ, ի՞նչպէս, հէնց որ ոչխարի զլուխը կարեցի, ադ-
ուաւները, որ մինչեւ էն ժամանակը թեղու ծառի վրայ թա-
ռել էին ու զռում էին, իսկոյն ձայները կարեցին, ցած իջան,
մինն աջ ուսիս կանգնեց, մէկէլք ձախ:

Ես ձեռք չը տուի, աչքս էլ որ հանէին, գիսլողը չէի:

— Փառքիդ մեռնե՛մ, Աստուած, անլեզու թռչուններին
էլ խելք ես տուել ագռաւները թռան, երեք անդամ զըւ-
խովս պտոյտ եկան ու բարձրացան, լուռ ու մունջ իրանց
ընի վրայ կանգնեցին:

— Մատաղս բաժանեցի, շարունակեց Բաղրօն ու Ճա-
նապարհ ընկայ:

Երեք տարի մեր աշխարհքումը գիւղ չը մնաց, որ չը
մտայ: Զեմ ասում, թէ որտեղ՝ ի՞նչ եմ արել բայց էս կայ,

որ սուտ չի ասած՝ թէ մարդարէն իր զաւառումը պատիւ չունի, ամէն տեղ սառնութիւն էի տեսնում:

Առաջ քանի հօրս տանն էի, քանի ագուաւները հետս հաշտուել չէին, մեղքս երևսիս տուողներից չէի նեղանում, բայց էն օրից, որ խզմտանքս մի քիչ հանգստացել էր, չէի կարողանում մարդկանց սառնութիւնը տանել:

Միտք արի, որ քաշուեմի, հեռու աշխարհ գնամ; Ի՞նչ արած, սիրտս լցուեց, ոտներս չէին հեռանում, հողիս ինձ քաշում էր դէպի իմ ծնողաց գերեզմանները. եկայ մեր դիւղի կողքովն անց կացայ, գնացի ողջ զիշերը մերոնց հանգստարանումն երեսս իմ համար թանգագին հող ու քարերին քսեցի, լաց եղայ, առաւօտադէմ մտայ ձորը, թուլի-Մանուկի ու տէրտէրի գերեզմանները համբուրեցի ու աչքս բարձրացրի դէպի ագուաւների բունը:

— Ի՞նչ էք կարծում, ի՞նչ տեսայ:

— Երկու սիրունիկ ձագեր գլուխները բնից հանել են, ներքե են մտիկ տալիս. իրանք ագուաւներն էլ բնի զլիսի ծղբան վրայ նստած՝ ուրախանում են իրանց ձագերով:

Նայուածքներն էնքան քաղցր էր, որ սիրտս չը դիմացաւ, ժալտացի ու լաց եղայ: Յետոյ երկու ձեռս բերանիս տարայ, օղի մէջ քաղցր համբոյր տուի իրանց ու ճանապարհ ընկայ:

Քան տարի է անց կացել էն օրից, եօթը տարէնը մի անգամ յետ եմ գառնում իմ հայրենիքը ծնողացս գերեզմանները լիղում եմ; Թուլի-Մանուկին ուխտ եմ՝ անում. ագուաւների սերնդին օդային համբոյրս եմ ուղարկում ու վիրագառնում:

Էս է իմ կեանքի պատմութիւնը, վերջացնում էր Բաղդօն, կուղէք, խեղճ եկէք, թողէք էս քարափի ծէրին կուչ զամ, մինչեւ մի օր Աստուած իր աւանդը յետ ստանայ, չէք ուղել վերցրէք ինձ ձորը շպրտեցէք, որ հողիս հանգստանայ:

Չեղ եմ հարցնում, Բաղդօյին ի՞նչ պատասխան կը տային:

ԿՐԴ ԾԱՌԱՋ



ԲԱՆԱՍՏԵՂՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՕՏԻՒ

ԻԳԻԹ ՍԱՐԴԱՐ

(ԶՐՈՅՑ ԳՐԱԿԱՆ ՕՐԵՐԵՐ)

Ա.

Ա. ՀՀ Ռ—«Մշուշի պէս մեր թշնամին,
Ծով ու ցամաք պատել է,
Սարդար, վեր ել քու սուր թրին
Ժանդ ու փոշին պատել է:
Մեր վաթանը սգի մէջ է,
Չարն է կապել մեր ասաղին,
Մէր ու մանուկ բանդի մէջ է,
Լուծ է զրած մեր վզին:
Մշուշի պէս մեր թշնամին,
Շէն ու շէմքին հասել է,
Շուտ վեր ելէք, դուռ ու զրկեց,
Կոռի օրը հասել է:
Հաղար ամօթ ով ձին գոմում,
Թուրը պատին—մեռմ է,
Ով զովերում; Եարի զրկում
Վարդ ու զինով քնում է»:

Բ.

Սարի ուսից լուսը շողաց
Արև զիսպաւ կաս—կարմիր,
Սարդարն ելաւ ասպապ մասած
Չեռքին բայրաղ խաս կարմիր:

Ա. ՀՅԱ. — « Մշուշի պէս մեր թշնամին
Դուռ ու երթկին հասել է,
Տղա, վեր ել աղջի՛, վեր ել,
Փառքի օրը հասել է:
Էս ի՞նչ օր է, տարի ու դար,
Որ փախնում էք կռուելուց,
Մեր վաթանի սիրու համար
Վախնում էք մեռնելուց . . . »

Սարդար. — « Մնաք բարով, հէրիկ, մէրիկ,
Տուն ու օձախ պատերի,
Մնաք բարով, քուրիկ, եարիկ,
Ալ վարդ, ալ թուշ ալ դի՞նի.
Սրունս աչքիս կոիւ կերթամ
Դէմ ու գիմաց թշնամուն,
Թիկունք տուէք — կուրծքս թօշ տամ,
Զարդեմ, փշրեմ թշնամուն »:

Սանամ. — « Երթաս բարով աղիզ եար ջան,
Անձարին չարայ եղնիս,
Սուրբ եօթնանուն քեզ թուր ու թե
Ցեա դառնաս, մուրազդ առնիս »:

Խառնք. — Երթաս բարով, իզիթ Սարդար,
Մեր դարդին դարման անես,
Սուրբ եօթը վէրքիդ մահլամ
Բարով զաս, կոսպանդ կապես . . . »

Սարդարն եռաց, Սարդարն թնդաց,
Ալ ձին հեծաւ, չափ տուաւ,
Երկինք հանեց թօղ ու գուման,
Ղօշունի զլուխն անցաւ:

Գլ.

Խորունկ ձորը, կոռւի ձորը,
Ազուաւ, ի՞նչ ես վռազում,

Ա-խ, Սարգարի լուռ դիակը,
Աղռաւ, ի՞նչ ես ըրբում:
Դարդու հարին խաբար տարէք,
Սե-սե ամպեր ու թռչնակ,
Որ Սարգարը զարկեց-դարկուաւ,
Երկինք թռաւ-աստղ դարձաւ:



Ամպերն եկան, սե-սե զիղուան,
Թռնուկն էլ տիսուր երգեց,
Վայ քեզ Սանամ, նստել կուլաս,
Եարապ սիրտդ վկայեց...

Սանամ. — «Իմ Սարդարից խաբար չկայ,
Զարքաշ տարիս բոլորեց,
Սգւոր եմ ես, սե շոր հազիս,
Սիրտս կուտաէ ցաւ ու ցեց:
Տեղ չեմ մտնում, դատար չունիմ,
Աչքս ճամբին՝ ծով կտրաւ,
Գարունն անցաւ, վարդը դարձաւ...
Ա-իս, եարս էլի չփարձաւ...»

Հայոց իշխանություն

the first few weeks.





ՍԱՍՈՒՆ

Ա.

Այդ ի՞նչ աղաղակ, շփոթ է տիրում
Վիթսարի, բարձր Սասնոյ լեռներում.
Եյդ ի՞նչ կրակի բոցոտ ովկեան
Թանձր ծուխի հետ երկինք բարձրանում:
Արդեօք այրվում են կոյս, թաւ անտառներ,
Թէ վերը կովում հսկայ տիտաններ,
Որոնց ոտքի տակ ժայռերն են փլչում,
Աշեղ որոտով ձորերը լցնում:
Որոնց տոփինից հուժկու սարաւանդք
Ճնշվում են սաստիկ, տատանվում, գողում:
Գաղան անասուն և աղատ թռչունք
Ահից սարսափած՝ ապաստան վնտում:

Բ.

Եյրվում է Սասուն, քանդվում է Սասուն...
Թշնամու անարդ, անողորմ ձեռքից.
Դատարկվում են այդ վայրեր հովասուն
Մնացած մի բուռն հայ կորիճներից:
Սև սև ծխում են այրող բոցերում
Եյդ գիւցավների գիւղ ու քաղաքներ.
Վերջին օրհասի մի իրարանցում
Տիրում է վերը՝ բնութեան ծոցում:

Առիւծ կարուած լեռների որդին—
Դարերից ի վեր՝ ազատ Սասունցին
Էլ հանգիստ չունի սարի կատարին.
Մացառների տակ, ժայռերի եսև
Դիտում է շարժուածք թշնամիների
Եւ թաղուած ռազմի, վառօտի ծխում;
Քարէ անձրեւ, գնդակի կարկուտ
Եռանդով թափում ոսոխի գլխին:
Նա գիմանում է ցրտին ու քաղցին
Եւ ապաւինած իր ջլուտ բազկին,
Սուրբ հայրենիքի սեղանի վրայ
Զոհում է իրան, կին ու զաւակին,
Որ կարողանայ հայի ճակատից
Վախի նախատինք արիւնով սրբել
Եւ Սասուն անկախ միշտ ազատ տեսնել:

Պ.

22 սեպտ. 1894 թ.
Դ. Հ. Լուս.

Հ. Բահ. ՀՅԱՂԱՎԻ ամէց:



Հայ աշուշանիստներ Դը. Դաբր եւ եւանդ.

Ի Մ ՀԱՅ ԹԵՇԻՔ Բ

Եթէ կը տեսնէք դուք ջինջ երկնքում՝
Անցնում է լուսին մի տընուր փայլով,
Ուր որ ասաղերը կապօյա են վառվում
Եւ նայում երկրին լացի հայեայքով—
Ո՞հ, այդ եղկելի իմ հայրենիքն է:

* * *

Թէ տեսնէք երկիր, ուր արտասվում են
Մարդիկ երկսեռի՝ սըդուորի նըման,
Դեռահասները շուտ թառամում են,
Հասուններն անյօս մըանում զերեզման,—
Ո՞հ, այդ եղկելի իմ հայրենիքն է:

* * *

Եթէ կը տեսնէք բարձրը տաճարներ
Անփոփոխ կանդնած շատ հին դարերից,
Տարածած օգում խաչածե ձեռներ՝
Փրկութիւն հայցում Վերին Արարէցից,—
Ո՞հ, այդ դեռ ապրող իմ հայրենիքն է:

Չուլաւեր.

Ա. Զաքանչանց.



**

Ծանրը թակիծ պատեց հողուս...
Սիրալս լըռեց կրծքիս տակ.
Եկ, բարութեան վըսեմ հանճար,
Եկ լուսափայլ սուրբ հրեշտակ:

Անհոգ կեանքիս պերճ օրերին
Տէրն ինձ մի կայծ պարզեց,
Այդ օրուանից արարաշխարհ
Աչքիս մի դրախտ երեց:

Ես յուղուեցի և ըսկըսայ
Երգեր երգել խնդութեամբ.
Չարն աչերիս ներկայացաւ
Եւ ինձ ծաղրեց լրբութեամբ:

Եւ ես հիմա էլ չեմ երգում
Փոշոտ երկրում դրախտի երգ...
Եկ, սուրբ հանճար, փոշուց մաքրի՛ր
Այս աղտեղի տիեզերք...

Առաքելու կանոն







Ілл. ВА. ІСЕВ.

С. ՈՒՐԹԻՀ ԿԹԹՈՂԲԿՈՍ ԿԻԼԻԿԻԵՎ.
Киликійскій католикосъ Мкртичъ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.



Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՄԵՆ. Տ. ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՅ

(Ի ՏԵՐ ՀԱՆԳՈՒԹԵԱԼ ԽՈՅԵՄԲ. 14, 1894 թ.)

Ամեն Տ. Մկրտիչ Կաթողիկոսի լիակատար կենսագրութիւնը, կիլիկիոյ վերջին քառորդ դարուն պատմութիւնն ըսել է, հետեաբար անոր յարակից բազմազան խնդրոց մանրախոյդքննութիւնը կը պահանջէ: Որովհետեւ այս պայմանները լրացնելու միջոցներն այս պահուս բացարձակապէս կը պակսին ինձ համար՝ յառաջիկայ մի քանի էջերը «Արտա»-ի յարգելի ընթերցողներուն կը ներկայացնեմ ոչ թէ իբրև կենսագրութիւն, այլ իբրև մի ուրուազիծ պատկեր այն ընդհանուր տպաւորութեան՝ զոր մաքին և սրտիս վրայ դրոշմած է կիլիկիոյ նորոդ հանգուցեալ Յովուապետին կեանքը:

Չեմ ենթագրեր, սակայն, որ տեսութեանս հարեւանցի հանգամանքն իրաւունք տայ ինձ նուազ ուշադիր լինելու կենսագրի պարտականութեանց: Ընդհակառակն, մի ծանր պատասխանատուութեան գիտակցութեամբ է որ կը քրքրեմ աղջային վեհաստիճան մի անձնաւորութեան, մի հոգեոր պետի յիշատակը: Արդարութեան պահանջն ու աղնուութեան պայմանն է ծայրագոյն խղճմտութեամբ վերաբերուիլ դէպի այլոց համբաւը, մանաւանդ երբ այդ համբաւին աւանդապահ պիտի լինի ոչ թէ խօսքը, որ կը թույն՝ այլ զի՞րը, որ պիտի մնայ—ինչպէս կը յիշեցնէ մեղ լտարին տուածը: Եթէ ժամանակիս քննասիրական ոգին կը պրպտէ հին դարերու դէպքե-

ըր, կը վերաբննէ պատմութեան դատաստանները, եթէ կասկածանօք կ'ընդունի անցեալի հրեշտակներն ու գեերը, որչափ հարկ է ուրեմն, որ ժամանակակից անցըերն ու անձերը ճշմարտութեան լուսով դիտենք և մեր տպաւորութիւնը ողջ ամիտ դատողութեամբ միայն ապագային յանձնենք:

Իրօք, պատմութեան մէջ չենք գտներ այն բացարձակ ճշմարտութիւնը, որ չափական զիտութեանց բաժինն է, վասըն զի բարձրագոյն զարգացման հասած դիտողն իսկ, իբրև մարդ, զերծ չէ անկատար կամ անձիշդ ծանօթութեան հետեանքն և գաղափարի, տեսակէտի, միջավայրի և հակումներու կամաւոր կամ հարկեցուցիչ ազգեցութիւններէն, որոնք կը խեղաթիւրէն, կ'այլակերպեն ամենապայժառ իրողութիւններն իսկ: Այո, կենաց բարոյական մթնոլորտին մէջ պատճառի և արգիւնքի յարաբերութիւններն այնչափ նրբին, անտեսանելի թելերով կապուած են որ միշտ դիւրին չէ զանազանել ճշմարիտը ճշմարտակերպէն, արին՝ անարիէն և արդարը անարդարէն:

Եյսուամնայնիւ, երբ գրողն իր եսին շըջանակէն տպատ, Շետքէր բարոյական ընդհանուր սկզբունքներու համեմատ դատելու կարող լինի, իր ակամայ սխալներուն համար ներողամառութիւն սպասելու իրաւունք ունի:

Զգիտեմ, ես ալ կրնամ ներողամառութիւն յուսալ: Բայց, այս խորհրդածութիւններս կ'արձանագրեմ իբրև նախարան, խոստովանելու համար թէ վծիու արձակելու յաւակնութենէ հեռի՝ վկայութիւնս երկիւղածութեամբ կը յանձնես պատմութեան դատաստաննին:

* * *

Տ. Մկրտիչ կաթողիկոսը կիլիկիոյ արևելեան սահմանաց վրայ, Մարաշ քաղաքին մէջ ծնած է, հաւանօրէն քսանական թուականներու միջոցին, և իր ամուսնութենէն այրիանալէ յետոյ հոգեորականութիւն ընդպրկած է: Ս. Երուսաղէմի մէջ վարդապետ ձեռնադրուելով՝ վանքին և մօտակայ քաղաքաց յասուկ պաշտօններ վարած, յետոյ Կ. Պոլիս ուղեո-

բուելով նշանաւոր քարոզչի համբաւ ստացած է: Կ. Պոլիսէն Ս. էջմիածին գիմելով եպիսկոպոսական աստիճանի բարձրացած և Տաճկաստան վերադառնալէ յետոյ, այլ և այլ վեճակը ներու առաջնորդ կարգուած է: Իր հալէպի առաջնորդութեան պահուն Սոյ Աթոռը թափուր էր և Նիկողայոս եպիսկոպոսի օծումը Կ. Պոլսոյ Կելբը վարչութեան կողմէն անվաւեր կը ճանցուեր: Կիլիկիոյ թեմական ներկայացուցիչներուն քուէարկութիւնը, որ աեղի կունենար Պատրիարքարանի տնօրինութեամբ՝ կը կատարուի 'ի նպաստ հալէպի առաջնորդին և Մկրտիչ եպիսկոպոս Քէֆսիզեան կ'օծուի կաթողիկոս Կիլիկիոյ (27 Հոկտեմբեր 1871):

Հետաքրքրական և կարեոր նիւթերով լի պիտի գտնէինք Կիլիկիոյ պատմութեան այդ շրջանը, եթէ մանրամասնութիւններն ունենայինք մեր առջեւ: Երկարատեւ անշարժութեան մատնուած ժողովուրդը կը սթափէր, այդ մոռցուած աշխարհին վրայ աղօտ լոյս մը կը նշողէր, վերջապէս բարեշրջական փոխանցման երեցիթ մը կը պարզուէր: Թերեւ չկար մին որ զգար այս հոգեբանական վեճակը, թէև շատեր ենթակայ էին անոր ազգեցութեան, և եկեղեցական ու աշխարհական պատղամաւորներն ալ այդ հոսանքին մէջ ընտրած էին իրենց նոր գահակալը: Այսչափ միայն բացայացած էր որ Գողանեան բոնակալներուն քմահածյըը և Աջպահեան ժառանգորդներուն թեկնածութիւնը ջնջուած էր այլ Աթոռին ազատութեան գաղափարը և Պոլսոյ պատրիարքարանին վրայ զրուած հաւաաքը լիրախոյս կը ներշնչէին այդ բարեմիտ գաւառացիներուն: Ստանայի և Սոյ մէջ հրձուանքի տօներ կը կատարուէին և հիւրամեծար ինջոյքները եկե-

*). Այս Նիկողայոս եպիսկոպոսն Աջպահեան ցեղէ էր և Հալէպի առաջնորդութիւնը կը վարէր: Կիրակոս Բ կաթողիկոսի փախանումն յետոյ՝ փութաց Սիս գնաց և մի քանի համախոչ եպիսկոպոսներու ձեռքով կաթողիկոս օծուեցաւ Կիրակոս Դ. անուամը (1866): Կեղը Առոշութիւնն ապօրէն համարեց այս օծումը, պետական միջամտութեամբ Պոլիս կոչէց անվաւեր կաթողիկոսը և անկէ Արքեց՝ այն տեղ փակուելու համար: Նիկողայոս եպիսկոպոս իր վլրջին օրերու մէջ աբոմոնութիւն ըստացաւ Կիլիկիա գառնալը: Ըստանայի մէջ վախճանեցաւ 1880-ին: Աս, Հալէպի առաջնորդ եղած առեն ազգային վէճերէ զայրանալով՝ փոքր մի ժամանակ հռովմէադաւանի եղած էր:

զեցական հանդէսներուն կը յաջորդէին: Ամենուն դէմքին վրայ ծիծաղ կը փայլէր, ամենուն վերև յոյսը կը սաւառնէր: Վանքը պիտի վերածաղկէր, միաբանութիւնը պիտի վերակաղմուէր և ամբողջ կիլիկիա մի խնկաւէտ ծաղկաստան պիտի դառնար....

Այս հանդիսաւորներուն մէջ, եթէ կար մի անձ որ Ստոյիկեանի տչըով կը դիտէր իր շուրջը, որ կը նախատեսէր անհաճոյ յուսախաբութիւնը, որ կը չափէր գաղափարականին հեռաւորութիւնը, ոչ այլ ոք էր, բայց եթէ նոյն ինքն, նորընտիր Վեհապետը: Տ. Մկրտիչ կաթողիկոս անուշ բառերը և ակնահաճոյ ձեւերը չէր արհամարհէր, հանդիսական ցոյցէրէ և հրապարակային ձառներէ կ'ախորժէր, բայց անոնց արժէքը դիտէր: Աշխարհը կը ձանաչէր: Իր պատանեկութեան օրերէն իսկ, պղնձագործ վարպետին մուրճը մոքին վրայ բենած էր զործնական աշխարհին անհարժութիւնը և տաժանքը: Եւ այժմ, մինչ ամեն աչք իրեն կը հայէր, ամեն խունկ իրեն կ'ուղղուէր և ամեն բաժակ իրեն կը ձօնուէր, ինքը՝ մատար թուազիտութեան հաշիւներով կը զբաղէր: Կիսաւեր վանքը, անհոգի միաբանութիւնը, գատարկ գանձարանը և անմշակ արտերը կը պատկերանային իր առջե, և անոնց տեսարանին տհաճութիւնը զոգցես կը հակակշռէր կաթողիկոսական փառաց հրապոյրը:

Թեմական պատգամաւորներն ու օժմտն հանդիսաւորները, իրենց հոգեւոր Տիրոջ ներքին հնչնուքներէն անտեղեակ՝ հոգեալարար զոհունուկութեամբ մեկնեցան, հայրապետական ողջոյն տանելով իրենց հետ: Աթոռանիստ քաղաքը վերստին գտաւ իր սովորական վիճակը, լոռութիւնը տիրեց վանքի շրջափակին մէջ և նորընտիր կաթողիկոսը մնաց Սաեցի իշխաններուն հետ: Ասոնք, հեռաբնակ թեմականներուն չին նմանէր: Եթէ միւնցին յարզանքը կը ցուցնէին աւանդական սովորութիւններուն՝ միւնցին զղացումը չէին տածէր Աթոռին և Աթոռակալին նկատմամբ: Հոգեւորական սքեմն ու հոգուական գաւաղանն իրենց համար չունէին սրբազան նշանակութիւն: Ուխտաւորներուն արտասուքը շարժող յիշա-

տամիները, իրենց ազքին հասարակ բաներ դարձած էին: Ասոնք մօտէն գիտէին կաթողիկոսներն ու բոլոր միաբանները, անոնց թերութեանց կամ մօլութեանց քաջածանօթ և երբեմն հաղորդակից լինելով՝ վեղարաւորներէ ակնածելու վեճակին հեռացած էին: Վերջապէս իրենք էին Աթոռին և Ս. Ս.ջին պահապանները. կաթողիկոսները կը փոխառէին, բայց Սսեցին կը պահէր իր պատգենական տեղը:

Տ. Մկրտիչ կաթողիկոս, իր պաշտօնավարութեան այս հաւանական արդելքները յաղթահարելու Ճիդ չը դործեց. շուտ հեռացաւ Սիսէն: Հաճելի կլիմայէ, տեղական նշանակութենէ և հանգստաւէտ պայմաններէ զուրկ մի զիւղաքաղաքի մէջ կաթողիկոսարան պահէլու զաղափարին հետ հաշտ չէր: Անկուրիայի, Եգիպտոսի և Հայէպի նման փարթամ վիճակներու Յուաջնորդը չէր սիրեր փակուիլ Ռուբինեանց անշրացած ոստանին մէջ և պահպանել այն աւերակները՝ զորս վիրականգնելու ոյժ չէր զգար իր մէջ:

Այսպէս սկսաւ իր շըջուն հովուապետութեան թուականը և ասով ծագեցաւ Կ. Պոլսց պատրիարքարանին հետ անհամաձայնութիւնը: Կեդր. Վարչութիւնը կաթողիկոսէն կը պահանջէր որ Սսոյ մէջ հաստատուի և վանքը ծաղկեցնէ: Կաթողիկոսը պայմաններ կ'առաջարկէր և գրամի պէտքը կը յայսնէր: Միևնոյն ատեն անլոյծ կը մնար իրաւասութեան խնդիրն ալ Բատ Սահմանադրութեան, Տաճկաստանի բոլոր հայ վիճակաց գլուխը Պատրիարքն էր, Սսոյ կաթողիկոսին պաշտօնն անտես մնացած էր: Ասկէ զատ, Աղքային երեսփոխաններէ ոմանք մի անմեկնելի հակակութիւն կը տածէին Սսոյ Աթոռին գէմ: կը շարունակէին զայն համարիլ որպէս հէտուեալ հականուու, այնչափ որ Օտեան Էֆէնաիի նման քաղաքագէտներու աղլու ձայնը հարկ եղաւ անոր պահպանումը փաստաբանելու համար: Տ. Մկրտիչ կաթողիկոս թէե Աթոռին վրայ գժկամակութեան ցոյցերով բազմած և վերջէն բանիցս հրաժարականի խօսքեր կրկնած էր, սակայն Լապէս կը պնդէր իր «Հայրապետական» իրաւանց վրայ և Կեդր. Վարչութեան կողմէ գծուած «Կիլիկիոյ վիճակաց հրահանդը»

կը մերժէր։ Այս պայքարին մէջ կաթողիկոսն երբեմն տւելի կը գրգռուէր Տ. Ներսէս պատրիարքի դէմ, որմէ, իբրև Սոյց եպիսկոպոսէ, ակնածանք կը սպասէր։

Տ. Մկրտիչ կաթողիկոսի ընտրութենէն տասը տարի անցաւ։ Իրաւասութեան վէճը տակաւին անլոյծ կը մնար. վիճակը բարեկարգութենէ հեռի, ժողովուրդը դժգոհ։ Կաթողիկոսը մի կարևոր քայլ առաւ. առկախ խնդիրներու և անհրաժեշտ դարմաններու վրայ Խորհրդակցելու մտքով ի Կ. Պալիս ուղեղորեցաւ։

Այս գիմումն ալ չըյանգեցաւ բաղձացեալ վախճանին։ Վոսփորի դործող և խօսող դասէն շատերն այնպէս հայեցան Տ. Մկրտիչ կաթողիկոսին վրայ, ինչպէս առհասարակ նորերը կը հային հիներուն վրայ և պոլսեցին՝ գտաւառացիին վրայ։ Պատրիարքական իշխանութիւնն ալ կարծիս թէ, չըյիշեց կաթողիկոսին պաշտօնական գիրքը և 'ի հաշիւ չառաւ անոր անձնական տրամադրութիւնը, որ ընդունակ չէր իր վեղարին և ստորագրութեան մասին հրահանդ լսելու և ձեւակերպութեան դասեր կարդալու։ Եւ մինչդեռ շաբաթներն ու ամիսները կը սահմէին և էական խնդիրը մոռցուած կը մնար, մի օր ալ յանկարծ, Տ. Մկրտիչ կաթողիկոս թօթափեց Պատրիարքարանի լուծը, թօթափեց իր ոտից փոշին և հռացաւ Պոլիսէն։

Օսմաննեան քաղաքագէտներն այն պահուն նոր կը գծէին հակա-հայկական արդի ուղղութիւնը և Սոյց կաթողիկոսին հակամիտութիւնը շահագործելու մէջ Մաքիավելի հոգւոյն արէտք չունէին։ Ուստի, Սուլթանին կողմէն նոր ոլորտն, Մէծիտիյէ շքանշան և 35 ոսկի ամսական ստանալու մասին Տ. Մկրտիչ կաթողիկոս բարձր պաշտպանութիւն վայելեց և իր հնօրեայ բարեկամ ծէվտէթ փաշան—արդարութեան նախարարը—վըիժառուի մը հաճոյքով գիտեց այս առթիւ պատրիարքարանի մէջ տիրող իրարանցումը։

Տարակցյս չկայ թէ Տ. Մկրտիչ կաթողիկոսի տեսակէտով մի յաղթութիւն էր այս։ Նոր պէտրաթին և առաջնակարդ շքանշանին շնորհիւ այլ ևս համարատու չէր պատրիարքին,

որ նուիրապեառւթեան կարդով իր ստորագասեալն էր: Քաղաքային իշխանութեանց մօտ աւելի կշեռ պիտի ունենար, և յետոյ՝ իր թեմականներն իր ձայնը միմիայն պիտի լոէին: Հասարակ ժողովուրդն այլ նորարծարծ յցյակրով ոգեսորուած մեծ բաներ կը սպասէր վեհափառին այս փայլուն յաջողութենէն:

Մակայն, այս յաջողութեան փայլն տռերեցիթ և վաղասլաց էր: Ժամանակ անցաւ, տարիներ բոլորեցան և կացութիւնը նոյն մնաց: Աթոռը անփառունակ, վեճակները անհովեւ, զպրոյները անխնամ...: Կաթողիկոսը նոր քննագատներ ունեցաւ այժմ: իր ժողովուրդն էր որ կսկսէր տըրտունջ բառնալու և գործունէութիւն պահանջելու: Կիլիկիոյ մէջ փոքրաթիւ երիտասարդութիւն մը գոյացած էր. ամեն քաղաք ունէր իր խմբակը, եռանդոտ, ազգասէր և ուսումնատենջ գործիներէ բազկացած: Ասոնք իրենց գցյութիւնը կը պարտէին ինքնաշխատութեան, մասնաւոր գպրոցներու, պատահական ուղեսորներու և այլ տեղական շարժումներու, որոնց մէջ անմասն չըր նաև կաթողիկոսը: Ասոնք կը գուրզուրային կիլիկիոյ Աթոռին վրայ, բայց գժգոհ էին կաթողիկոսէն: Միւնոյն ժամանակ Ազգային Սահմանադրութիւն և Կելքոնական Վարչութիւն բառերն ուժգին կը հընչէին իրենց ականջին: Ներսէս պատրիարքի համբաւը և Պոլսոյ գործիներուն անունը թունդ կուտային իրենց սրտին, և այս բորբոքած տպաւորութեան ներքէ՝ կիլիկիոյ մէջ աիրող անշարժութիւնը դառն տհաճութիւն մը կը դոյցնէր կաթողիկոսին գէմ:

Կարելի՞ բան էր որ Տ. Մկրտիչ կաթողիկոս անտարբերութեամբ դիտէր այս «անպիտան»-ները: — Ի հարկէ ոչ բայց կը ծիծաղէր անոնց պարզամառութեան վրայ, և անքրդով կը շարունակէր իր ընթացքը: Իրեն համար միշտ Սահմանադրութիւնը տղայական փորձ էր և պատրիարքարանը անկարգութեան բօյն, Պոլսոյ ժողովականներուն մեծ մասը վէճչէի էին և խմբագիրներու շատը փուռք ... : Թերեւս Շմարտութեան տարր մը կար իր այս համազման մէջ, բայց այդ բաւական

չէր դադրեցնելու դժգոհութեան հոսանքը, որ օր ըստ օրէ
կընդարձակուէր ու կը խորանար Սոյ թեմականաց մէջ: Ոչ
նուազ դժգոհ էր նոյն ինքն կաթողիկոսն ալ, որ անշուշտ
փորձով համոզուեցաւ թէ նոր պէրաթի և շքանշանի առա-
ւելութիւնները բաւական չէին զարմանելու Կիլիկիոյ ցաւե-
րը: Ի՞նչ օգուտ որ փորձառութենէ օգտուելու ժամանակն
անցած էր և իր անյաջողութեան զիտակյութենէն զատ ու-
նէր նաև ուրիշ դժբախտութիւններ, որոնք անբաժան մնա-
յին իրմէ, մինչև որ մահը—որ տեղի ունեցաւ հալէպի մէջ—
վախճան տուաւ իր քսանչինզամեայ անընդհատ մտահոգու-
թեան:

* * *

Տրտմախառն զարմանքով կը համակուիմ երբ կը փորձեմ
քննել Տ. Մկրտիչ կաթողիկոսի անյաջողութեան պատճառնե-
րը: Եւ երբ պատճառներ կ'ըսեմ՝ կը հասկնամ, ոչ թէ ար-
տաքին անյաջթելի արգելքները՝ այլ ուղղակի կամ անուղ-
ղակի հետեւանքը իր նկարագրին—այն նկարագրին՝ որուն
մէջ աղնիւ և անազնիւ կիրքերու, բարձր և դռեհիկ բնազդ-
ներու խառնուրդ մը կը տիրէ:

Տ. Մկրտիչ կաթողիկոսի այլ և այլ խորհուրդներուն և
ձեռնարկներուն մէջ մեծագործութեան սազմը կը նշմարուէր:
Աղքասիրութիւն, գաստիարակութիւն, եկեղեցական նախան-
ձախնդրութիւն և Կիլիկիոյ բարօրութիւն,—ասոնք իր սի-
րական բառերն էին: Նա ունէր այնչափ հմտութիւն որչափ
որ կարելի է սպասել հին գպրոցի սահմանին մէջ մնացած
հայ հոգեսորականէն, իսկ կենցաղագիտութեան մասին՝ աւելի
յառաջացած էր: Իր շարժումները եկեղեցականի վայելուչ
շուր ունէին և լեզուին մէջ աստիճաննաւորի մը դոնը կար:
Իր հայերէնին հետ խառնուած ռամփկ բառերը և թուրքե-
րէնին մէջ սպրդած սխալները բազմաթիւ չէին: Իբրև բեմ-
բասաց՝ մինչև վերջ կը ժառանդէր իր վաղեմի համբաւէն
բան մը և քարոզները—որոնք յաճախ թուրքերէն լեզուով
էին—ախորժելի բնութիւն ունէին. միշտ ձաղկիչ միշտ կծիչ
ակնարկութիւններով, զուարձառիթ օրինակներով և հոհոտ-

բական ձեւերով կը համեմեր իր վարդապետական Հնօրեայ մէկնութիւնները, և Սոկրատեան ոծի պատահական թրթը-ռումներուն ներքեւ նուալ կոկիծ կը պատճառէին իր անխնայ հարուածները՝ աէրտէրներու, վարժապետներու և կիներու գէմ: Նորա փոքրիկ գտնկը՝ թափանցող և ձկուն իմացակա-նութեան մը վառարանն էր, աղաղուն դէմքին խորշոմներուն ետեւ թաքչուած խորագիտութիւնը՝ զուրս կը յոլանար ման-րիկ լուսացնցուղ աչքերէն: Ոչ նուազ նպաստաւոր էր արտա-քին կերպարանքն ալ պարթեւ բարձրութեան մօտեցող հա-սակը, և Հնութեան քուրմերը յիշեցնող տարածեւ խոյրը՝ պատկառալից խոնարհութիւն մը կը խլէին հասարակ մահ-կանացուներէն: Եւ այս ամենուն վրայ՝ մի շայցուցիչ առա-ւելութիւն էր անշուշտ իր համբաւեալ և ընդհանրապէս չափաղանցեալ հարստութիւնը:

Բայց... հարստութիւն ըսի. հարկ է մի փոքր գաղար առնուլ այստեղ: Տ. Մկրտիչ կաթողիկոսի հարստութիւնը մտքիս մէջ կը զուգորդուի այնպիսի գաղափարներով, որոնք իր կարողութիւնները ստուերի տակ կը ձգեն և իր անյաջո-դութեան պատճառը կը բայցարեն:

Բանաւոր է ենթաղբել թէ հարստութիւնը մղում կ'ըն- ծայէ իմացական և բարյական գործունէութեանց: Սակայն իրողութիւնը տարբեր եղաւ Տ. Մկրտիչ կաթողիկոսի համար, որովհետեւ ինքն իր հարստութեան վրայ չէր իշխէր, այլ հարստութիւնն էր որ կ'իշխէր իր վրայ և այս կրաւորա-կան վեճակի երկար տեղողութեամբ՝ դրամի ըղձտնքն իր հո-գեկան կազմութեան ամենափափուկ ջիղը դարձած էր: Մի թեթեւ հպում այդ ջիղին վրայ այնպէս կ'աղղէր, ինչպէս մի ուղքի հարուածը Արքիլէսի կրունկին վրայ...:

Ի հարկէ, այս տիկարութիւնն այնքան ծանր հետեւանք չէր ունենար եթէ ինքնուրոյն և տուանձին զոյացած լինէր: Ինչպէս մարմնոյ խօթութիւնները ֆիզիքական դրութեան՝ այնպէս ալ բարյական թերութիւնները հողեկան գրու-թեան փորձանշան (criterion) են: Դրամի—ինչպէս և փառքի — մոլութիւնը չը կրնար աիրել մի հոգւց վրայ, ուր ճշարիտ

ՅԵՇԱ-ՆԻ-Ն կը թաղաւորէ: Աշա այս կենսական տարրն էր որ
կը պակսէր Տ. Մկրտիչ կաթողիկոսին: Ոչ իբր բնածին շնորհ
ժառանգած էր այդ հոգեկան ոյժը, և ոչ ստացական զար-
գացմամբ ըմբռնած էր անոր վեհ նշանակութիւնը, հետեւա-
բար իր ներքին աշխարհին մէջ ճարակ զաած էին այլ և այլ
բարոյական տկարութիւններ: Բայց իր տկարութեանց ամե-
նէն դիւրազգայն, ամենէն սաստիին և ամենէն ախրառիթն
էր մէկ բան, ծնունդ ամենայն չարեաց,—դրամի սէրը: Դրամ,
դրամ: Այս բառն էր որ կախարդիչ հմայքի պէս կը ցանցէր իր
բարեմանութիւնները և կը սանձէր իր կարողութեանց թռիչ-
քը: Չեմ յիշեր թէ ի՞նչ բարոյական կը քարոզէր երբ յաճախ
ուրած բառին տառերը յեղաշրջելով հարդ-ը դուրս կը բերէր:
Բայց բաղմաթիւ դէպքերէ կը հետեցնեմ թէ զրամի հրա-
պցըրն անդիմապրելի էր իր վրայ, և եթէ մի կաթողիկոսի
արժանի յիշատակ չը թողուց՝ զիւաւոր դատձառն այս էր:

Արգարե չպիտի սպասէինք որ Տ. Մկրտիչ կաթողիկոս
մի հրաշագործ զօրութեամբ Աւետեաց երկրի փոխակերպէր
Կիլեկից զաւառը: Այն վերածնիչ զէմքերն իսկ, որոնք դարե-
րու ընթացքին մէջ փայլած են պատահաբար, չպիտի կարե-
նային յաջողել ելթէ արտակարգ ձիրքերով զօրացած և նպաս-
տաւոր պայմաններով շրջապատուած չը լինէին: Սակայն կը ըս-
պասէինք—և առանց խստապահանջ լինելու—որ Սսոյ Հանգու-
ցեալ կաթողիկոսն արգիւնաւորէր իրեն յանձնուած գանձը:

Եւ ի՞նչ էր այդ գանձը: Մի պատմական Աթոռ՝ իբր 200,000
թեմականներով, մի հոգեոր իշխանութիւն՝ զրեթէ անկախ
ու և է Համարատուութիւննէ, մի ծովեկերեայ աշխարհ՝ արագ
զարգացման ընդունակ, և մանաւանդ մի ժողովուրդ՝ յուսա-
տու տրամադրութիւններով օժտուած: Ահ, աշխատութեան
աննման դաշտ մ' էր այն, զոր մշակելու չը յաջողեցաւ Տ.
Մկրտիչ կաթողիկոս, և իր աթոռակալութեան 25 տարինե-
րը, պատուական պատեհութեանց այդ ոսկի շրջանը սահե-
ցաւ զնաց, զրեթէ ամուշ և ապարդիւն....:

Յօգուածիս ծրագիրը, և Տ. Մկրտիչ կաթողիկոսի նկատմամբ ունեցած զգացումներուս հակումը թոյլ չեն տար ինձ փաստերով՝ պարզելու իր արծաթսիրութեան աւերիչ դերը: Այսափ միայն յիշիմ որ իր որոշմանց և ձեռնարկներուն վրայ աղջող մի հաշիւ էր այն: Վարժարաններ հիմնելու կամ խափանելու, հողեորականներ ձեռնալրելու կամ լուծելու և հրամաններ շնորհելու կամ ջնջելու մէջ կը նշմարուեր նոյն շարժառիթը: Հասոյթ գոնձելու համար իր ճամփորդութիւնները և պահանջ ապահովելու համար իր գատավարութիւնները վերջ ըք դատան, իր «Մ. Կ.» նշանակը (marque) վաճառականական հակերու վրայ շատ տեսնուեցաւ և իր միտքը առեւտրական տոմարներու քննութեամբ միշտ զբաղեցաւ:

Անուրանալի է որ զրամի անհրաժեշտ պէտք կար: Միայն բանի չպիտի ապրէին փոքրաւորները, և ոչ իսկ մաղթանքով պիտի ածէին Քէրխանի ամարանցին ծառերը: Բայց Տ. Մկրտիչ կաթողիկոսի զրամասիրութիւնը գայթակղական տարիձանի հասած էր, զրամն իրեն ոչ թէ միջոց՝ այլ նպատակ էր: Ոսկին կը սիրէր՝ որովհետև ոսկի՝ էր, աւելի՝ հաւաք ունէր անոր փոյլին քան թէ բանաւոր զրամապլիսի, բարոյական ոյժերու վրայ: Եւ Մամոնային այս գերակշռ հեղինակութեան տաջեւ ոչ միայն մոռցուեցան աղջօդուտ հիմնարկութիւնները, —ինչպէս Միաբանութիւն, մամուլ, ուսումնարան և այլն — այլ և խոնարհեցաւ կաթողիկոսին նշանակութիւնը, անզօր մնաց իր ճայնը և այսպէս՝ ոչինչ կամ աննշան յաջողութեամբ վերջացան իր այլ և այլ բարենպատակ ձեռնարկները, —եզիպառսի աղջայնոց մօտ արած դիմումները, Հնդկաստան խրկած նուիրակութիւնը և Անգլիոյ բարձր եկեղեցականաց հետ մշակած թղթակցութիւնը: Անյաջողութեան տեսարանն աւելի տխուր էր ներսը, Կլիեկից մէջ, ուր մօտէն կը ճանաչէին կաթողիկոսը: Ժողովուրդը որ ընդհանրապէս ժլատ չէր բարեզործական նպատակներու համար՝ դժկամանկութեամբ վճարեց Աթոռի սովորական տուրքը, անտարբեր եղաւ իր պարտականութեանց: Գանուեցան անձինք՝ որոնք հաշեւներու մէջ կաթողիկոսին վստահութիւնը չարաչար:

գործածեցին. Նոյն իսկ իր ձեռնասունները, բարերարեալները
դժողովութեամբ հեռացան: Չունեցաւ հաւատարիմներու դաս
մը, իրեն յատուկ գաղափարի մը պաշտպանները: Ընդհակա-
ռախին, զրեթէ ամեն տեղ կազմուեցան խումբեր, որոնք իրենց
շրջանակի մէջ, Պոլսոյ լրագրութեան միջոցաւ, նոյն իսկ
Պատրիարքարանին դիմելով՝ կը քննադատէին կաթողիկոսին
արարքը և իրենց կարողութեան չափով կը հակառակէին նո-
րա քմածին տնօրինութեանց, և այս պարագաներու բեր-
մամբ թէե ամբողջ ժողովուրդը դժողոհ էր իրմէ սակայն
յայտնի հակառակորդներն ընդհանրապէս նոր սերունդին
կը վերաբերէին, մաքով և տարիքով նոր գործիչներն էին,
ուրիշ բառով՝ յառաջդպիմականներն էին:

Զեմ կրնար ըսել թէ Տ. Մկրտիչ կաթողիկոս յառաջդպի-
մաւթեան թշնամի էր: Մի քանի վարժարաններու հիմնադիր
և քաջալիր եղած էր—որչափ որ թոյլ կուտար իր զրամա-
սիրութիւնը, կրթութեան օգուտը կը քարոզէր, գպրոցտիան
հանդէսներու նախադաշէլ, ուսանողները հարցաքննել և վկա-
յականներ կնքել կը սիրէր: Սակայն երկու էտկան պատճառ-
ներով՝ յառաջդպիմասէր գործիչներն էին որ ընդհանրապէս
շնորհ չէին գտներ իր մօտ: Նախ՝ որ իր յառաջդպիմաւթեան հո-
րիդոնը յոյժ սահմանափակ էր, ունի-աններու դէմ շատ կը խօ-
սէր, իմացական զարգացման վրայ ազօտ գաղափար ունէր:
Զորօրինակ, իր երկու կարձատե հիմնարկութեանց—Այնթա-
պի զիշերօթիկ վարժարանին և յետոյ՝ Մարտշե Ժառանդա-
ւորաց վարժարանին—ուսուցիչներու համագումար ո.ո.միկը
տարին 100 սոկիէ աւելի չէր, և այս վարժարաններն էին
որ հանգուցեալ կաթողիկոսին կարծեօք՝ Գէորգեան ձեմարա-
նին դէմ պիտի մըցէին...: Երկրորդ՝ որ իր արծաթսիրու-
թեան և հակա-Մահմանազրական ողացն դէմ բողքողներն,
առհասարակ, կրթական հաստատութեանց—գպրոցի կամ ըն-
կերութեան շուրջը խմբուած կը լինէին:

Տ. Մկրտիչ կաթողիկոսի համար հեշտ չպիտի լինէր դո-
հայնել իր քննադատաները, եթէ անոնք կրօնքի թշնամիներ
լինէին, եթէ հայ եկեղեցւոյ ազգային նշանակութիւնը ու-

բանային, կամ՝ եթէ կաթողիկոսին բարոյական հեղինակութիւնը արհամարհէին։ Բայց, կրնամը ըսել թէ, անոնք—սակաւագէպ բացառութեամբ—գովելի զբացումներէ կը մղուէին։ Իրենց զլսաւոր ցանկութիւնն էր՝ կիլիկիոյ վեճակը բարեկարգութեան շաւզին մէջ տեսնել։ Իրենց մտածման թէ՝ աստիճանին և թէ տեսակին պահանջմամբն իսկ, աւելի արամագիր էին ախնածանօք վարուելու կաթողիկոսին հետ, քան թէ նորա դէմ տրտնջալու, և ապահովապէս կուրօրէն պիտի հնաղանդէին նմա, եթէ միայն լսէր պարտականութեան ձայնը և ցուցնէր գործունեութեան նշան մը։

Դժբաղգաբար Տ. Մկրտիչ կաթողիկոս ըսկամեցաւ կամ ըսկարողացաւ ըմբռնել իր քննադատներուն պարզութիւնը և շահագործել անոնց պատրաստականութիւնը, ուստի փոխադարձ պատասխան տուաւ անոնց։

Դժուար չէ գուշակել այս պատասխանին բնութիւնը։ Երբ եկեղեցւոյ բեմն անմատչելի ամրոցի տեղ կը ծառայէ և Աստուածաշունը «կարգաւորի» զէնքին պաշար կը հայթայինէ, երբ ամբոխին նախապաշարումը կը գրգռուի և անհամին փառասիրութիւնը կը փայփայուի՝ բնական է որ կիրքերը գործեն, ժողովուրդը պառակտի, կուսակցութիւններ կազմուին։ Եւ Ճիշդ այս պայմաններու ներքեւ, պահ մը սովորական դարձաւ կիլիկիոյ զանազան քաղաքաց մէջ տեսնել սահմանադրական մարմիններ՝ որոնք տեղի կուտային կաթողիկոսի նշանակած ժողովներուն առջե, պատրիարքարանէ վաւերացած ընկերութիւններ՝ որոնք կը մաքառէին կաթողիկոսէն օրհնուած խումբերու համար, և թաղային սնտուկներ՝ որոնք կը մատնուէին կաթողիկոսի Աթոռակալներուն հսկողութեան։

Բայց այս պայքարի ամենավատ հետևանքներն ասոնք չէին։ Մէկ զի թողունք ժողովրդին զդացած գայթակղութիւնը, և նկատենք միայն՝ աղղային—եկեղեցական վարչութեան վրայ ունեցած անբարոյացուցիչ աղղեցութիւնը։

Մենք, որ մեր եկեղեցւոյ ռամկավարական կազմակերպութեան շնորհիւ կարող էինք աւելի արագ ընթանալ դէ-

պի բարոյական վերածնութիւն (régénération)՝ միշտ պիտի շեղինք դէսի զեղծում, դէսի վատասերում (dégénération) ամեն անգամ որ նուազի եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութեանց միակ զէնքը—բարոյական զօրութիւնը:

Թերեւս, օտար եկեղեցիներու իշխաններուն անձնական նկարագիրն այնչափ ըստիաի ներգործէր նուիրապետութեան ստորագասեալներուն ընթացքին վրայ, —ինչպէս, օրինակի համար հռոմէական եկեղեցւոյն մէջ, ուր բացարձակ իշխանութիւն և խիստ կարգապահութիւն կը տիրեն: Բայց մէր մէջ՝ բարոյական զօրութենէ զուրկ հոգեորական մը՝ ի զուր հնագանգութիւն պիտի պահանջէ, մինչեւ իսկ օրինաւոր սահմանի մէջ. իր հրամանները պիտի ցնդին, իր իշխանութիւնը անուանական պիտի մնայ, անարդար քննագատներ պիտի զոյանան, անձարակ լուսարարն ու ապիկար ժամկոչն իսկ պիտի փորձնն ըլքոստանալ, վերջապէս, կարգ կանոնի գէմ բազմաթիւ բարձրաներ պիտի զոյանան այնպէս՝ ինչպէս աղոտա սողունները արեազուրկ մութ անկիւններու մէջ:

Ահա այսպիսի անիշխանութեան ներքեւ, զարմանալի չէ որ Կիլիկիոյ հոգեորականութիւնը յոյժ սակաւաթիւ արժանաւորներ միայն պարունակէ, զարմանալի չէ որ վանքը ամայի, քաղաքներ և գիւղեր անհրօվիւ և ազգային իրաւունքներ անխնամ թողուած լինին, վերջապէս զարմանալի չէ որ մինչեւ իսկ կաթողիկոսին հարստութիւնը—որուն վրայ կը դուրդուրար—իր վախճանումին յետոյ վտանգներու մատնուած դանուի *):

* * *

Կարելի էր թերեւս, այլ և այլ պարագաներով մեղմացնել Տ. Մկրտիչ կաթողիկոսի դէմ բարձրացած ամբաստանու-

*) Զարմանալի է, որ այդպիսի անհպաստ պայմաններում՝ գլխաւորապէս շնորհիւ անհատական ջանքերի, առաջ եկաւ այն կրթական շարժումը, որի մի փայլուն առացցցը կարելի է համարել Այնթապէի մէջ խմբագրուած «ՄԵՆԴՐ» անունով կիսամայ ժողովրդական հանդէսը, Վարդանեան ընկերութեան հրատարակութեամբ:

թիւնները. Նոյն իսկի յանուն արդարութեան պէտք էր իր յիշատակին հետ կցել իր զանազան ծառայութիւնները,— վանքապատկան կալուածոց ումանց համար արդիւնաւոր ջանքերը, երբեմն Զէյթունի վերաբերութեամբ ցուցած արիական ընթացքը, պետական պաշտօնէից հետ համարձակ վարմունքը և Կիլեկիոյ բարօրութեան համար արտայայտած ցանկութիւնները: Բայց ի՞նչպէս արդարացնել այն ծանրակշեռ հարուածները զօրս իր զաւակաց գէմ ուղղած է, ի՞նչպէս մեկնել այն թուղթերը որոնց ներքեւ իր կարմիր կնիքը դրոշմած է....:

Ի բաց կը թողում մասնաւոր գէպքեր, որոնք ցցց պիտի տային թէ Տ. Մկրտիչ կաթողիկոս երբեմն ինչպէս կը կարդագրէր իր վէճերը: Կը յիշատակիմ միայն—իբրև պատմական նիւթ,— նոյնիմաստ երկու Ատքիներ զօրս նորին Սրբազնութիւն ասկէ տասը տարի առաջ կ'ուղղէր Օսմաննեան Մեծ-եպարքոսին և Դատական նախարարին: Այդ զրութեանց մէջ, հանգուցեալ կաթողիկոսը կը յայտնէ թէ իր Աթոռին իրաւանց գէմ Պոլսոյ պատրիարքարանի կողմէն անիրաւ ձեռնմխութիւն կը լինի 'ի նպաստ Խոռաչոյ (իմա էջմիածնի) կաթողիկոսութեան, թէ «Միացեալ Ընկերութիւն» անուանեալ մի մարմայ կողմէ խոռվարկուներ կը խրկուին Կիլեկիոյ քաղաքները, թէ ինքն, Օսմ. պետութեան ծառայելու նպատակաւ միայն ստանձնած է կաթողիկոսական պաշտօնը և թէ իր ամասթոշակներուն անվճար մնալէն յուսահատած՝ վանքը փակելու և բանալիները Աստանայի նահանգապետին յանձնելու պիտի հարկադրուեի....:

Ընթերցողին կը թողում խորհրդածել այդ դրութեան վրայ և զատել անոր հեղինակը: Միայն թէ, կը համարձակիմ կարծելու որ Տ. Մկրտիչ կաթողիկոս միակը չէ իր տեսակին մէջ: Անձնական, և նոյն իսկ հանրային արդար կամ անարդար նպատակի մը յաջողութիւնը ասպահովելու համար ոյսպիսի միջոցներու դիմելու բէանագէտունեալ Սոյ հանգուցեալ կաթողիկոսին մենաշնորհը չէր: Տայ աղջը շըջապատող քաղաքական մժնոլորտը փորձութեան աշխարհ մ'է,

ուր երբեմն կ'իյնան մեր հոգեորականները, զօրութեան դաղսնիք կամ մեծութեան փառք գտնելու յուսով։ Այդ միմնոլորտէն դուրս, այդ փորձութենէն զերծ կը ֆնան անոնք միայն որոնք իրենց էութեան մէջ կղզան բարցյական զօրութեան և ճշմարիտ մեծութեան գանձերը։ Այսպէս է որ իրարմէ կը տարբերին կաթողիկոսները կամ եպիսկոպոսները։

* * *

Այժմ՝ պատմութեան յանձնենք անցեալը և մաղթենք որ լաւագոյն օրեր վիճակին Սոյ նսեմացեալ Աթոռոյն։

Գիտենք որ Սոյ—ինչպէս և Աղթամարայ—Աթոռը քաղաքական հանգամանաց հետեանքով գոյութիւն ստացած է, և պատճառ չկայ որ այժմ գաղրի այդ գոյութիւնը։ Միւնցն ժամանակ ուրախառիթ է որ ոչ եօ կը շարունակուի այս տարբեր Աթոռներու փոխագարձ պայքարը։ Ամենապատիւ Մկրտիչ Սրբազնի վախճանումն յետոյ նոյն ինքն Ընդհանրական հայրապետն էր որ նախանձախնդիր հանդիսացաւ Սոյ Աթոռոյն և պատրիարքարանին յանձնարարեց նոր կաթողիկոսի վաղընդգոյթ ընտրութիւնը կատարել։ Միւս կողմէ, Սոյ թեմական ժողովուրդը որդիսական յարգանք կը տածէ դէպի Նրարատեան Մայր Աթոռը և եթէ նորա Գահակալին անունը Կիլիկիոյ եկեղեցիներուն մէջ ըստիշտակուրի՛ աստհովապէս կը աիրէ ամեն սրտի վրայ, որպէս գերազոյն հովուապետ հայկական եկեղեցւոյ։

Արդարե հարկ կայ որ Ճշգուհին Սոյ կաթողիկոսութեան իրաւասութիւնները և բաւական իրաւունք տրուի կաթողիկոսին, որպէս վի որոշ զիտակցութեամբ հոգայ իր պարտականութեանց կատարումը, բայց և այնպէս տարակոյս չկայ թէ, օրէնքներէ և կանոններէ աւելի աղդեցութիւն կը գործէ Ընտրեալին անձը, և կարող Գահակալ մը ամեն պարագայի մէջ կը յաջողի արգիւնաւոր պաշտօնավարութեամբ փայլել։

Ամեն յաջողութիւն կը ցանկանք ուրեմն Ամեն. Գրիգորիս Սրբազն Ալեաթեանին, և իրմէ կը սպասենք այն ա-

մեն բարեկարգութիւնները՝ որոնք հնարաւորութեան սահմանի մէջ են:

Իցի՞ւ թէ, չայաստանեաց հօախն համար մի բարեկուշակ զուգազիպութիւն լինէր տեսնել Պէտառէտան թուննէր թառած Սոյ լերան գագաթը, մինչ Վասպուշտական Արժելը կը հսկէ Արարատի բարձանց վրայ:

Լոնդոն.

Բայեն-ըստան.



Ուսուածութիւնը.



Ամերիկահան Տ. ԳՐԵԳՈՐՅԱՆ ԵՊԻԿՈՎՈՒՄ ԱԼԵՎՐՑԵԱՆ
ԸՆԹԱՎԱՆ Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԿԵԼԻԿԻՈՆ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԼԵՎԹՁԵԱՆ


ԵՆՏՐԵԱՆ 'Ի ԿՍԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ակիլեկիոյ նորընտիր կաթողիկոսի կենսագրութիւնը մենք մտացիր էինք տալ մանրամասնօրէն, բայց ի նկատի առնելով հանդիսի այս գրքի չափից գուրս ուշանալը, այդ պատճառով ստիպուած եղանք առայժմ այս գրքում զետեղել ։ որին Ամենապատուութեան միայն հակիրճ կենսագրականը, որը այնուամենայնիւ բաւականին պարզ ցոյց է տալիս Գրիգորիս սրբազնն Ալէաթձեանի գործունեութեան ձիշտ պատկերը։

Գրիգորիս սրբազնն Ալէաթձեանը ծնուել է Պոլսի Պալատ թաղում։ Նախնական կրթութիւնը ստացել է նախ թաղի դպրոցում և յետոյ Սկիւտարի Ս. Խաչ վարժարանի մէջ. այստեղից նա անցել է ձեմարան, ուր 1856—57 թուին աշակերտել է Վանանդեցի Գրիգոր վարդապետին։ ձեմարանը աւարտելով, նա հրատարակումէ 2½ տարու չափ Թուշի Պէտառէան տասնորեայ հանդէսը, որի անունը մի կերպ ապագայ եպիսկոպոսի մականունն է դառնում։ 1863 թ. անձնական գործերով ձանապարհորդումէ Ալգանայի կողմերը և Տրապիզոնի Ճանապարհով կ. Պոլիս վերադառնում։ Բայց իւր գուռառական առաջնորդութիւնից առաջ այս չէ լինում իւր միակ ճանապարհորդութիւնը, այլ մի քանի ժամանակից յետոյ Երզնկայ, Էրզրում և Վան էլ է զնում, ուր և վարդապետ է ձեռնապրվում 1866-ին Խանատիս սրբազնի յորդորանքով, որ այն ժամանակ Վանի առաջնորդ էր։ Սորանից յետոյ Աղթամարայ վանքի մէջ ուժ ամսի չափ վարդապետութեան պաշտօն է վարում։ Երկրորդ անդամ՝ կ. Պոլիս վերադառնալով Տ. Պողոս պատրիարքի օրով՝ նախ Պալատու, յետոյ Ենի-Քաբուի քարոզիչ և թաղային վարժարանի տեսուչ է նշանակվում և 1869 թ. Տ. Արիստակէս եպիսկոպոսի պատրիարքական անդապահութեան օրով Բաքերդի առաջնորդ է ընարվում։ 1870 թ. Բաքերդի առաջնորդութիւնը միացվում է Երզնկայի հետ, և այս աւելի ընդարձակ

պաշտօնի մեջ Ալէաթձեանը մնում է մինչև 1873 թ., երբ
Քուղիչանի թեմական գործերի առժիւ պատրիարքարա-
նի հրաւիրմամբ կ. Պոլիս գալով եօթն ամիս մնում է,
և այն միջոցին երկու վիճակը գարձեալ միմիանցից բաժա-
նուելով, միայն Երզնկայի առաջնորդութեան պաշտօնով
իւր պաշտօնավայրն է գտնուում և մնում այնտեղ մինչև
1875 թ.: Մի ժամանակ Պոլսի Սամաթիոյ եկեղեցւոյ քարող-
չութիւնը վարելուց յետոյ, 1876 թ. ընտրվումէ Մշու առաջ-
նորդ, որի վրայ էլ Գէորգ կաթողիկոսից 1877-ին եպիսկո-
պոս է ձեռնադրվում: Մինչև 1880 թ. այս պաշտօնը վարե-
լուց յետոյ Պոլիս է գտնում և հինգ տարուց յետոյ
Մուշ գնում, այս անդամ նաև Սուրբ Յովհաննու վանքի
վանահայրութեան պաշտօնով: Ապա 1886 թ., որովհետեւ
վանքերի կառավարութեան բաւական փորձառութիւն է
ձեռք բերած լինում, երկրորդ անդամ Երզնկայ երթալու
առժիւ, ուր թեմի ինն վանքերի տեսչութիւնն ևս վարած
էր, Մուշէն ազգային վարչութեան հրաւերով գնում է Վան-
պատրիարքական փոխանորդի և միանդամյն Վարագայ վան-
քի փոխ-վանահայրութեան կրկին պաշտօնով, որ վարում է
մինչև 1889 թ., սրանից յետոյ էլ իւր զործունէութիւնն
է ամփոփում է կ. Պոլսում՝ կատարելով Ս. Խաչ վանքի քա-
րողչութեան պաշտօնը: Տ. Գրիգորիս սրբազնն անդամակցած
է նաև պատրիարքարանի ժողովներին, և վերջին անդամ
ընտրուել է Կրօնական ժողովի առենապետ:

Նորընտիր կաթողիկոս Տ. Տ. Գրիգորիս սրբազն Ալէաթ-
ձեան եկեղեցուն օգտակար լինելու համար պահանջած բա-
րոյական և իմացական կարողութեանց հետ մարմնական առող-
ջութիւն և առօգութիւն էլ ունի և յոյս ունինք որ իւր
պաշտօնավարութիւնը հոգեսր, բարոյական ու կրթական տե-
սակէտներով օգտակար լինի իւր բազմակարօտ հօտին, որ եր-
կար ժամանակ թողնուած լինելով առանց խնամքի, իրօք,
զործունեայ և եռանդուն հոգեսր պետի մեծ պահանջ ունի:





ՄԱՏԵՆԱԿՈՍԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ ՄԻ ԳԻՐՔ

Սերկայ 1895 տարուան սկիզբը լցո տեսաւ անդլիերէն
լեզուով մի զիրք, որի անունն է. The Armenian Crisis in Turkey,
The massacre of 1894, its antecedents and significance. By Frederic Davis
Greene. (Հայկական հժողովածահն ի Թիւրքիա. 1894-ի հոգորածը, նորա
նախընթացները և նշանակունենալը): Հեղինակն է ոլ. Ֆրէդէրիկ
Տէրվիս Կրին ամերիկացի մի միախոնար, որ 4 տարիի ըստ
Վան գտնուած է ամերիկան Պորդ ընկերութեան կողմէ և
անձամբ ներկայ եղած Հայութեան կրած ճղնաժամերին և
որն, այժմ Ամերիկա գառնալէ Խոք, իրը մի անկախ անձ,
ներկայ հրատարակութիւն կոննի Սասունի ջարդերի առթիւ,
իրքե մի բողոք՝ անպատճուած, չարչորուած մարդկութեան
կողմէ ընդդէմ սուլթանական բարբարոսութիւնների: Գիրքը
նուրիրուած է Սասունի նահատակների յիշատակին:

Այս հրատարակութիւն եղած է Միացեալ Նահանգների
մէջ հայ խնդրի համար աշխատող Հայ-Ամերիկեան մարմնի
նպասառվը. իր 20.000 օրինակների մեծագոյն մասը ձրիս-
տէս տարածուէր է անդլիախօս երկիրների մէջ: Գիրքը ունի
180 էջ ութածալ, 18 գեղեցիկ պատկերներով զարդարուած.
մին Վեհ. Հայրեկի յաջողուած մի պատկերն է. զրքի սկիզբն
ու գրուած է Հայերէն լեզուով և գրով ն. Վեհափառու-
թեան մի խօսքը. «Յուստահարէլս- վնեց», զոր Վեհ. Հայրիկ
զրքի հեղինակին ասէր է անձամբ երբ սա ասկէ երկու տարի

առաջ Ա. Եջմիածին հանդիպելով, Ն. Վեհափառութեան ներկայացելէ: Գրքի արտաքինի մասին այսքանը զբելէ ետք, միքանի քաղուածներով և տեղեկութիւններով ալ զրքի բովանդակութիւնը աշխատենք ծանօթացունել հայ ընթերցողին:

Գրքի ընթերցումը ընդհանրապէս լաւ տպաւորութիւն կը թողու և ընթերցողը բոլորովին անձնատուր կը լինի այն յուղումներին որոնք շարժած են հեղինակի մարդասէր և զգայուն հոգին, այս բողոքի ձիչ հասցնելու լուսաւորեալ աշխարհի ոչ թէ միայն ուղեղներին, այլ և սրտերին: Եւ իսկապէս անդիմակաս ժողովուրդներին հայկական խնդիրը ծանօթացնելու համար ամփոփ և միենոյն ժամանակ ճշգրիտ և հեղինակաւոր անձերի վկայութիւններով ճոխ մի զիրք է դա. Հեղինակը ինամք է տարեր իր բոլոր տեղեկութիւններ և փաստեր բացառապէս անդիմակայի և ամերիկացի ճամբորդների, և միսիոնարների զրածներէն առնելլ որով և մեծապէս համոզիչ լինել անդիմակաս հասարակութեանը համար, որով և հանրային զօրեղ կարծիք մը ստեղծելոր կարենայ Ճնշում անել գիւտնագիտութեան վրայ, իր քայլերը փութացնելու:

Գրքին Ա. Գլ-իւ կը պարունակէ 18 նամակներ, որոնք գրուած են Արեւելեան Թիւրքիայի այլ և այլ քաղաքներէ. Թղթակիցների, ինչպէս և քաղաքների անուններն չն յիշուած, որպէս զի զրողները յականէ անուաննէ Թիւրք բարբարոսութեան մատնանիշ եղած չլինին, թէև աղոնք ամենքն ալ եւրոպացի կամ ամերիկացի անձեր են: Սակայն որքան ալ անանուն են նամակները, ասով մէկ տեղ գոյա բնագիրները 20 տարուայ ամերիկացիների, քաղաքագլուխ, օրէնսդէտ, եկեղեցական, զրադէտ անձերի ներկայացուած են և ասոնք իրենց ստորագրութեամբ հաստատեր են թէ տպագրուած օրինակները նամակների հարազատ օրինակներն են. բացի այդ, այդ նոյն անձեր այդ նամակների ուշի ուշով ընթերցումը ջերմագին յանձնարարեր են, իբր կատարելապէս վստահելի: Քննիչների այդ յանձնարարութիւն, ինչպէս և իրենց ստորագրութիւններ (Fac-simile փորագրութեամբ) աղբւած են նոյն զլիսի սկիզբ:

Կյդ նամակներ որոնք իրարմէ հարիւրտոր վերստ հեռաւորութիւն ունեցող 4—5 տեղերէ զրուած, իրարմէ անկախ տեղեկութիւններ են, ամենքն ալ կը հաստատեն Սասունի գէպքի սոսկալի մանրամասնութիւնները. աղոնք բոլորն ալ կը միաբանին այս կարծիքի մէջ թէ Թիւրքիայի այս վերջին 5 տարիների մէջ բռնած ընթացքը ուղղակի ջրնջումն էր հայութեան և քրիստոնէութեան: «Յիշէլ պէտք է, չառէ Ն. 14 նամակագիրը, Ալ Սասունի դէպէր հարավարութեան ընդհանուր դրութեան հետուանդն է. այս վերջին 10 տարիներէ է վեր հարյէր Սասուններ ուղղէ անեցան երիբն մէջ: Երբողացի նուլս-նի-նը՝ պարտէն առէն ընթայեց նի-ը+ին այս անդուն գործ էր բուլը ստորին-նի-անձն առաջաւ այդ դրութեան առաջ ե- կած է ցեղէ և հրժն տարելու-նենէ և նա իւս սպառեաց +ընդունէան ընթե և ուշաբանէու-նեան զնօն-ը»: Մի ուրիշ տեղալ. «Նի-ը+ը այժմ դարձագանի հանուած է, բայց չուետ է մայն Սասուն նիշ ժաման առաջ ճերէլ մեւնոյն ունիւ երիբն ամէն հորժըն է վեր իւ բարձրանայ: Ն. 11-ը իր զրածը կը վերջացնէ հետեւեալ սրտաշարժ տողերով. «Սասուն-ծոյ սկրուն, ՀՀնին Ալ նոյն-+ որ հանրային իւնչը նորին անդարշէր +ունի մէջ իշխայ այս սարսափի արկանը-նի-ան նկարածնձ. երիբը սոսկումով և սարսափով անդաշալ-ծու-ածն-ածն է»:

Սասունի գէպքի, ինչպէս և երկրի ամեն կողմը աիրող ընդհանուր թշուառութեան մասին նամակները շատ ազգու ոճով զրուած են և թերես այդ աղբիւրներն այս անդամ սկիզբ տուին Սնզլիախ կրօնական և աշխարհական շրջանների մէջ հայենական յուղման և Թիւրքիաի գէմ ընդհանուր զայրցյթին: Ն. 7 նամակը Սասունի հայութիւնների արիութիւնը և քրիստոնէական անձնուրիութիւնը կը վկայէ. «Ա.Ձնէն ա- ռեւ ժեղլցին հանանց մէ ինքնի, իւնէ, առաջարկությա- ուրանալ իրեւը և իւսան+երնին աղաքուլ սահայն նուաւ պատրասիանեցին Ալ մէն+ վնի+ ուրանալ Քրիստոնը և ցոյց ուալով իրենց անունների և եղայլների դեմիները, գովեցին. մէն+ անոնցէ առեւ վնի+ մէն+ վնի+ մէն+ այսնեցէ ե- այդպիսով մէռան»:

Նամակներէ 6-երորդը ընդարձակ և խնամով պատրաստ-

ուած տեղեկադիր մ'է Սասունի դէպքին, այդ տեղեկադիր
մէծ նեղութեամբ և զգացութեամբ պատրաստեր են մի քա-
նի անձեր միտախն, «որոնց մէ մինչև իսէ մէջն ապորաժողովին-
նը հըսէ հէղինակը, բառական էր ինդին այդ գրուածին ուալ-
թե էլ եւ. ապորաժողովին մինչև բնակչը կացութեան ուէր է և
շեղացաւ ապորաժողովին ան»։ Այդ տեղեկադրի մասնա-
մասնութիւններն այսաեղ թարգմանել աւելորդ կը համա-
րիմ դոքա կը համացայնին հայ թերթերի մէջ մասնաւոր
թղթակիցների և անզլ թերթերէ թարգմանօրէն տպուած
նամակներին։ Բարբարոսութիւնների նկարադիրը շատ կեն-
դանի կերպով գրուած է և ընթերցողը չկրնար առանց ար-
տասուելու և մազերը տնկուելու կարգաւոր Զեքի փաշա կոչ-
ուած հրէշե միջոցով կատարուած այդ անդր զազանական
արարքների պատմութիւնը։ Նամակադիրները կը հաստատեն
թէ թիւրքիան Սասունի դործին մէջ իր դէմ ապօտամբներ
ունեցած չ։ Ն. 4-ը իր ամերիկան ոճով հետեւալը կը զրէ
այդ մասին։ «Սուլիանը անմիջապէս հրանցեց, որ հեծեալ և
հերթեալ գունդերը յարցանիւն հայ ապարաճութիւնը ճնշելու և
նուա ալ յարցանիցան, միայն նէ իրենց դէօն ու և մի ապարաճ-
ճութիւն լգունելով երերը այնպէս ճը ճարցեցին որ ապարաճի մէջ
այդ առանձի մի բան լայտանի»։ Ն. 17-ը մի հայ կնոջ աղերսն է,
որ առեւանգուելով մի թիւրք գայմադամի տղայէ, իր նախկին
ուսուցիչ միսիոնարին կը հաղորդէ իր վեճակ. «Եւ նահակ մէլանով է, իշխէ հայուհին, ասէայն հաւատացէ+ որ արքենով և
արդասանուած»։

Ինչպէս նամակները, այնպէս և հեղինակի տուած ու-
րիշ տեղեկութիւնները կը ցուցնին որ թիւրքիս իր հալա-
ծող և հայաջնջ քաղաքականութեան մէջ խորութիւն չէ
գրած լուսաւորչականի և բաղոքականի միջև. միսիոնա-
րական հաստատութիւնների լարգացման ալ արգելք զրած
է։ Բայց այդ բանի պատճառը մասսմբ մը պէտք է տուլ Ամե-
րիկայի անտարբեր քաղաքականութեանը գէպի թիւրքիակ
զործերը։ Իրաւ է թէ ամերիկան միսիոնարները իրենք ա-
մեն կերպ ջանացեր են պահպանողական մի դիրք առնել և

մինչև իսկ թրքասէր ալ երևնալը ստկայն այդ չէ արգելեր որ Թիւրքիան շատ տեղեր արգիլէ բողոքական համայնքին հաւաքուել մի տեղ և իրենց աղօթք կատարել և կամ մի եկեղեցի շինել: Այն օրից երբ Պօլսի ամերիկեան դեսպանը ձկրցաւ միսիոնար Միստրը Ծիյոնութափի և ընկերին Մուսա բէզէն ընդունած վէրքերի համար ամենափոքր հատուցում ստանալ և մինչև իսկ մեծ-վէղիրի դռնէն և անգամ ետ գառնալն մարսեց (նոյն գրքի 161-րդ երեսը) և բացի այդ, երբ Ամերիկաի կառավարութիւնը, նախագահ Քլիվլենտի բերանով յայտարարեց որ ինքն մինչև իսկ պարտաւոր չէ պաշտպանել ամերիկեան քաղաքացի դարձած թիւրքիացիները: այդ անտարբերութենէ մեծ մնաս կրեցին թէ՛ բողոքական եկեղեցին և թէ նոյն իսկ բուն ամերիկեան հաստատութիւններ և բնիկ ամերիկացիները Թիւրքիայի մէջ: Եւ այժմ՝ ինչպէս կերևի, ամերիկացի միսիոնարների համբերութիւնն ալ հատած է:

Գրքի Բ հէ-Եր աշխարհագրական և ցեղազրական տեղեկութիւն մ'է Հայաստանի երկրին և ժողովրդին վրայ:

Գ հէ-Եր վիճակագրական տեղեկութիւններով քրիստոնեայ գիւղերի վրայ ի գործ զրուած հարկահաւաքչական հարստահարութիւնների, ինչպէս և երկրին ամեն կողմը տիրող ընդհանուր կեղեցման, հալածման և բնաջնջման պատկերը կը գծէ, յիշելով ի միջի այլոց և կուռուպաշի գէպքը: (Այս գէպքի մանրամասնութիւնները հրատարակուած են արտասահմանի հայ լրագիրների մէջ: զա ինքնին մի փոքր Սասուն է և նշանաւոր նորանով որ Վանի ժողովուրդը մեծ յուղում ցոյց տուաւ այդ առթիւ. իսկ Վալի Բահրի փաշան, թէ ժողովրդի շարժումը հանդարտեցնելու համար խոստացաւ արդարութիւն անել բայց յետոյ ոչ միայն մարդասպանները չպատմեց որոնք յայտնի էին, այլ մինչև իսկ շատ մը հայեր ի բացակայութեան դատապարտել տուաւ մահուան, իբր թէ ակոնք եղած լինին գէպքի հեղինակները, և իրենք զիտմամբ եղեռնագործութիւններ արած են և անմեղ թիւրքերի ու գառնուկ քիւրդերի կը վերազրեն ադոնք որ Եւրոպա յուղուի ընդդէմ թիւրք կառավարութեանը:) Հեղինակը այդ դլուխի

մէջ կը յայտնէ նաև թէ անիրաւացի է հայ աղքիւրներէ առնուած տեղեկութիւնները առհասարակ նկատել իբր չսփազանցեալ կամ յեղափոխականների շինծու պատմութիւններ. և եթէ տգոնցմէ ոմոնիք քաղաքների և անունների մանրամասնութիւնների վրայ անորոշ կերպով կանցնին, դորապատճառը, կասէ Միսարը Կրին, լոկ այն է օր թղթակիցները և զոհերը թրբական բարբարոսութիւններն աւելի և չձանրացունեն իրենց վրայ:

Հեղինակը այդ զլուխի մէջ զրելով թէ Հիւանդ Մարտոն (Թիւրքիաի) ախաերը անթժշկելի են, հայենական ինդրի երեք լուծումներ մէջանեղ կը գնէ: Ագոնցմէ մին է. Ռուսական գրաւունք՝ որ ուրախութեանն այսուհետեւ աղջունութեան է կամ է են թէր+իան և Ռուսական այլապետութեան մէջը լինելու է ընդունութեանը և նէ նիւ թէր+ահայտապահնէն ասուական ասհաննը անցած արշնը, շժուղին արդայութեանը անցածի պէս է զդացած: Բ' հայիական ինժնաւալարութեանը որ աշխարհագրական և աղլաւական պատճառներով երազ էր իր նոր-է հեղինակնն, Գ' արհապահան և զըրեղ նարական բարեկարութեան հարկանք երաշխաւոր-նշանն: Սա է հեղինակի համար ամենէն զործնականը. ոյսու հանդերձ հեղինակը տեղտեղ առաջ կերթայ և հայաստանին Թիւրքիաէն անջատում, Հիւանդ Մարտոն վրայ վիրահատական գործողութիւն մը կը թելազրէ իբր ամենէն սասյդ միջոց թէրփրիստոնեայ և թէ մահմետական յեղերը փրկելու համար:

Դ գլուխ մէջ՝ օսմ. կառավարութեան խոստումների որպան անարժէք բան լինելն կը հաստատուի և ցոյց կը գրուի թէ ամեն մի խոստումներ անելէ ետք, Թիւրքիան միշտ գէպի աւելի ետ գնացած է, կամ հեղինակին բուն խօսքերովը. «Էտու լողանալք եան, իր վերաբառեայ ցեխի մէջ նախլուիլու, և նէ Հիւանդ Մարտոն (Թէր+իայն) հաճար աւ նոյնական միշտ է այն բան, ինչ որ Աւելարանի մէջ յէլուած դիւահարին հահար, որմէ եօն դեկի համուեցան, բայց այդ հարդուն վերջինն լար եղև ան զարաշինն»: Այսպէս ալ հակառակ 1829-ի Ատրիանուպոլսի գաշնազրին, 1839-ի Հաթթի շէրիփին, 1844-ի թանդիմաթին, 1856-ի Փարիզի գաշնազրին, 1878-ի

Կիպրոսին և նոր թուականի Պերլինի դաշնագրերին մէջ Բ. գրան յանձն տանուած պարտաւորութիւնների և արած հանդիսաւոր խոստումների, հպատակ աղքաց մինչեւ իսկ կրօնական ազատութիւններն ոչ միայն ընդգարձակուեցան, այլ նախկինէն աւելի ևս պակսեցան։ Հեղինակը զբոքի Դ յաւելուածի մէջ մի քանի նմուշներ կը բերէ լոկ կրօնական զրքերի զրաքննութեան մասին թիւրքիայի ցոյց տուած ծայրայեղ և ծիծաղելի խստութեանը, որ ցոյց կուտայ թէ խղճի տարրական ազատութիւնն իսկ որքան բըռնաբարուած է ներկայ սուլթանի օրով։ Պոլսի Պայլպլ Հառուղին ս. զրոց ցանկի մի հրատարակութիւնն արտօնելու համար, թրքական զրաքննիչը պահանջեր է որ Երեմիաի 33-րդ դլիւն հետևեալ խօսքը «արտմութիւնը պիտի փոխուի ուրախութեան» ջնջուի։ Ջնջուին նոյնպէս և Սաղմոսի 33-րդ դլիւի «Ամբարիշտ խորհուրդները ի չեք գառձան», Եսթերի 4-րդ դլիւի «Տրամութիւն պալատի մէջ», Սաղմոսի 38-րդ դլիւի «Տրամութեան ժամանակ յցս», Հռովմայեցոց 8-րդ դլիւի «Ուրախանակ հալածանքի մէջ» վերնագիրները և ուրիշ պյառէս 50-ի շափ խօսքերը։ Թրքական զրաքննիչը, հեղինակի բերտծ մի ուրիշ վկայութեան նայելով կը ձգտի այնպիսի փոփոխութիւններ անել քրիստոնէական զրքերին որ ասոնք իսլամ զրքերի համաձայնին։

Ե ՔԸՆ մէջ նախ կը յիշատակուի թէ ինչպէս 1880 յունիս 1-ին հայկական խնդրի մասին, աէրութիւնների ծանուցազրին համեմատ Բ. գուռու նախ խօստումի և փախուստի պատասխան մը տուաւ, բայց շուտով իր զիրքը փոխեց և սեպտ. 11-ի վեսպանների հաւաքական ծանուցազրին, պահանջումներին առանց կարեօրութիւն տալու, բաւականացաւ լոկ պատասխան մը զրելով թէ ինք մտադիր է այս ու այն բարենորոգում անել։ Սպիտէ ետք, թէ ինչպէս ալ տէրութիւնները չպնդեցին իրենց պահանջման վրայ, իշխան Պիոլմարկ յայտարարեց թէ «Ճանը անպատճեն-Ալ-Անելը իշխան ծագել է Ալէ հայկական ինդէր ճը յարուցու-կ»։ Անպլիւն ալ լոիկ մէկ կողմք քաշուեցաւ և մինչեւ իսկ այդ ինդրի մասին

կապոյտ տետրակի հրատարակութիւնն ալ գագրեցուց։ Տեղինակը զասոնք յիշելէ ետք, թիւրքահայաստանի ներկայ աղետալի վիճակի հետևանք կը համարի Եւրոպիոյ այդ անգործադրելի մնացած գաշնագրին։ «Ո՞ւնե՞ իտուն Աէ հայերը երես ըրտածով երես գլուխն բերին այս գործառնութեր նիւրուեր գրդուելով ասիայն ես ալ իշհարցելով Աէ հայերին ով գրդուեց։— Նախ Պերլին 61-րդ յօդուածն էր որ Ալեքսանդր բարեւ Անդրեան արլինցոց բացի այդ, Պերլին բաշխաժերը ուրեւ մի հետանու ալ ունեցաւ որ Թիւրքիան Եղնան-Ենի-նը ասելու ասացած կացաւ Քիւտափնելու հայրածառին ունեմ արեւ-Ենի-ննին երես Այդ արևակ Ֆնացան Ալեքսանդր և Ալեքսանդրի գործողութենին էր։ Գործերը հիմա այն Հիմակին հասուն են որ մեայն այդ արեասի մի գործողութենութեր կարելէ և առաջը ասունել մի ասցանդիւն ուղղելով որ ինայ Ստանուն ալ հաւանացունելու հայաստանի Քիւտափնելու այնին իշնան ջնջուելու բայց անանուն ապօքին-Ենի-ն և կան Եղնան-Ենի-ն յանցի առանձնեն։ Կոտու ուշիսարները հնան ինյա առաջ յանցի պիտի առանձնեն, բայց ուշ-աներուն հնան ասարինելու»։

Այդ գլխի մէջ Հեղինակը պարսաւի մի քանի տողեր ալ կուղղէ այն հայ յեղափօխականների որոնք, կատէ, նիշի-լիստական զաղափարներով տողորուած, անհաշիւ կերպով գործեցին և որմէ թիւրք կառավարութիւնը յաջողութեամբ օգուտներ քաղեց։ Քալով յեղափօխական ոգուն հայի նման մի հանդարտ ժողովրդի մէջ երեւալուն, «Դա ուղարկի հետանուն է Պերլին բաշխաժերն է վեր հայաստանի մէջ արեւու առանձնել վիմակին և այդ հիւանդու-Ենի-ն առանձնել և առանձնել առաջանակին պիտի լինի, ենի Երուպայի բժիշկները վէտ-իւն չի-անդ Մարդու վրայ վերահաստական գործողութեն օանելը մի բան, որ լու հետանուներ պուած Յունաստանի, Լիբանանի, Պուլիարիանի, Պահանիցունի և Եդիլյանոսի ինդիրները ժամանակի»։

Զ գլուխը կը վերաբերի սուլթանի քաղաքականութեան նկարագրին։ այդ գլխի մէջ մեղմացունելու միտք մը կը տեսնուի սուլթանի անձնական պատասխանատուութիւնը։ իրը

թէ նա հաւատացեալների խալիֆաի և պարկեշտ մահմետականի մը պէս վարուած է. սակայն այդ միտք հերքելու համար առանց զրուէն փաստ բերելու պէտք լինելու, նոյն այդ գլուի մէջ միւնոյն միտքը հերքող տողեր շատ կան. և ինչ պէս որ ինքն հեղինակն ալ զրած է, սուլթան համիար պատմութեան մէջ պիտի ներկայանայ ոչ իբր մի սուլթան որ պետութիւն փրկեց, այլ իբր մի սուլթան, որ կրնար փրկել բայց չըրաւ:

Ե գլու-ի մէջ մի ցուցակ զրուած է այն բարբարոսական կոտորածների որոնք թիւրքերը միայն այս վերջին 75 տարիների մէջ ի գործ զրած են իրենց հպատակ հանդարաբնակիցների, անպաշտպան կանանց և տղայոց վրայ. այդ ցանկին մէջ չեն առնուած 10,000-էն պակաս զոհ ունեցող ջարդերը: Ահա այդ ցանկ.

1822-ին ջարդուած են Ցյուրի, մասնաւորապէս Քիոս կղզու մէջ	50.000	հոգի.
1850-ին Ասորիներ, Հայեր (Քրիստոնեաների մէջ).	10.000	"
1860-ին Մարոնիք, Սիւրբիցեր (Լիրանանի և Դամասկոսի մէջ).	11.000	"
1876-ին Պուլարներ	10.000	"
1894-ին Հայեր Սասունի մէջ)	12.000	"
Գումար.....		93.000 հոգի:

Այս թուերը բոլոր բերուած են հեղինակաւոր և պաշտօնական վկայութիւններէ: Ազոնցմէ դեռ դուրս կը գան 1866-ի Կրէտէի ջարդը, 1877-ին Շէյխ ծէլալէտարինի և Ուպէյտուլլահի Հայաստանի մէջ արած կոտորածները, նոյնպէս և 1892-ին Մօսուլի եղիպիների վրայ եղած ջարդը որմէ միայն այն եղիպիներ ազատ մնացին որոնք գէթ առերես իսլամութիւն ընդունեցին:

Ե գլու-ի լինզրին մէջ իսլամութեան կատարած դերի մասին խօսելով, այդ առժիւ Ֆրիմէն նշանաւոր պատմաբանի խօսքերն ալ առաջ կը բերէ որմէ կը քաղենք հետեւեալ տողերը. «Երբ մենք թիւրք աիրապետութեան չարիքները կը նշանակենք, ոմանք մեզ կառարկեն թէ քրիստոնեայ իշխողներն ալ հին ժամանակները նոյնքան գէշ բաներ արած են. գա մասսամբ ճշմարիտ է, բայց ոչ ամբողջապէս. ոչ մի քրիստոնեայ իշխանութիւն այսքան երկար ատեն շարունա-

կեր է գէշ կառավարել ինչպէս թիւրքն արած է: Ճիշտ է,
որ քրիստոնեայներն ալ հին ատենները մասնաւոր գործեր
արած են. թիւրքերի արածին շափ վատ, բայց այս կայ որ
քրիստոնեայները վաղուց ի վեր թող առւած են այդ տեսակ
գործեր, մինչդեռ թիւրքերը կը շարունակին նոյնը և միենոյ-
նը անել: Ամենայօռի քրիստոնեայ կառավարութիւնն իսկ
այսօր աւելի բարեփոխուած է 100 կտմ 500 տարի առա-
ջուայ վրայ. բայց թիւրք կառավարութիւնը այսօր աւելի
ևս գէշցեր է քան ինչ էր չէր 100 կտմ 500 տարի առաջ.
ասել է որ ամենավատ քրիստոնեայ իշխանութիւնը կրնայ
բարեփոխուիլ, բայց թիւրքիան չկրնար»: Մի քիչ վար ալ կը
յարէ: «Թիւրքիան իբր թշնամի և բարբարոս կառավարու-
թիւն եկաւ բանակեցաւ Եւրոպաի հողեն վրայ. անկէ ի վեր
500 տարի կանցնի և նա դեռ կը մնայ նոյնքան թշնամի և
բարբարոս մի բանակ նոյն հողեն վրայ, ինչպէս որ էր երբ
առաջին անգամ ոտք դրաւ Կէլիպոլուի վրայ»:

Թ Գլուհի մէջ պ. Կլագրսթոնի ձառն է գրուած, որ սա
ուղղեց Անգլօհայ պատգամաւորութեանը, երբ սա այս ձըմ-
րան Մեծ Տերունիի ծննդեան 85-ի տարեվարձին իրեն ներ-
կայացաւ շնորհաւորելու և սկիզ մը նուիրելու: Նոյն ձա-
ռին կցուած է և պուլկարական սարսափների ժամանակ պըր.
Կլագրսթոնի հրատարակած բրոշիւրէն մի հատուած:

Ժ Գլուհի ամփոփ և համակրական ձանօթութիւն մ'է
հայ ազգի, եկեղեցու և զրականութեան պատմութեանը:

ԺԱ. Գլուհը բոլորովին նուիրուած է ամերիկեան Պորտ
լնկերութեան Թիւրքիաի մէջ կատարած քրիստոնէական և
կրթական դերին. մենք թէե այդ գլուխի մէջ յայտարարուած
ինչ ինչ կարծիքներ և եղակացութիւններն քննագատելի և
միակողմանի կը գոնենք, սակայն վիճակագրական մի քանի
թուանշաններն այստեղ գնել անօգուած չենք համարիր:

Այդ գլուխ մասնաւորապէս բնիկ ամերիկեան միսիոնար-
ների և հաստատութիւնների ի Թիւրքիա պաշտպանութեան
լսնդիր մ'ալ կը դնէ ամերիկեան ժողովրդի և կառավարու-
թեան առջեւ:

Հետեւեալ թուանշանները կը պատկանին ամերիկեան Քօնկրէ Կէշընէլ Պորտ և Փրիսպիտերեան Պորտ ընկերութիւններին, 3/4-ը առաջինին և 1/4-ը վերջինիս:

Ներկայիս մէջ այդ մարմինների կողմէն Թիւրքիաի մէջ կը կարծեն 223 բնիկ ամերիկացի միսիոնարներ և 1.094 տեղացի քարոզիչներ, հովիւներ և ուսուցիչներ: 1821-էն ի վեր 550 բնիկ ամերիկեան միսիոնարներ եկած են ի Թիւրքիա: Այդ թուականէն մինչև այսօր 10 միլիոն գոլլար ծախք արած են այդ միսիոնարութիւններ. այժմ տարեկան ծախքն է 285.000 գոլլար, որմէ 60.000 տեղացի բոլոր. եկեղեցիներէ կը հաւաքուի: Բողջքական եկեղեցիների թիւն է 155. իսկ քարոզատեղիները 281: Հազորգուողների թիւը 13.528 և բողջքական հասարակութեան անդամների թիւը 60.000: Միսիոնարութիւններն ունին նաև ի Թիւրքիա 5 քոլէճ, 6 աստուածաբանական սեմինարիա, 80 բարձր նախակրթաբաններ և գիշերօթիկ վարժարաններ, 530 հասարակ երկսեռ վարժարաններ: Ուսանողների թիւը 27.400-ի կը հասնի, որմէ 4.085-քոլէճի և սեմինարիաի կը վերաբերին: Կան և բժշկական հիմնարկութիւններ, թերթերը հայերէն, թուրքերէն, յունարէն, պուլկարերէն և արաբերէն լեզուներով: Իրենց տպարաններ մինչև այժմ 7 միլիոն հասոր գիրք հրատարակած են:

Ահա բովանդակութիւն Մր. Կրինի զրքին որ ժամանակակից մի կարևոր պէտք կը լեցունէ և հայկական խնդրի մասին արևմտեան զրականութեան մէջ մի գեղեցիկ հատոր կ'աւելցունէ: Թէև ունենայ մի քանի քննադատելի անսութիւններ ալ, սակայն զիրքն ընդհանրատէս առնելով, շնորհակալութեան և գնահատման արժանի է և ինչողէս կը աեղեկացունեն, արգէն իր ազգեցութիւն արած է ամերիկեան և անդլիական հասարակութեանց մտքին վրայ:

Ա.





Узбеки. Сказки братии Алиса в стране чудес.



ԱԶԳԱՅԻՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի ՏԵՐ ՀԱՆԳ. ՆԵՐՍԵՍ ՊԱՏՐԻԱՐքԻ ԿՏԱԿԸ

Մեր ժամանակի անուանի հոգևոր գործիչներից մինի, ի Տէր Հանգ. Կերսէս պատրիարք Վարժապետեանի, այս յօյժ շահեկան և կարևոր գրուածքը, որ անշուշտ պատմական մեծ նշանակութիւն ունի, մենք մտագիր էինք զետեղել 1888 թ. «Վրաքս»-ում, բայց այլ այլ պատճառներով դորա տպագրութիւնը մեր կողմից յետաձուեցաւ մինչև այժմ, երբ դարձեալ այսօր մեր հանդիսի մէջ է առաջն անդամ տեղ գտնում նշանաւոր հայ վեղարակրի այս շահագըրգիս յիշատակարանը:

«Վտակը» հայերէն բնագրից ֆրանսերէնի վերածուելով տպագրուել է նախ եւրոպական մի նշանաւոր թերթում, որից և թարգմանելով տպագրում ենք այսեղ հանդերձ այն բացատրութիւնով, որ յիշեալ թերթը նուիրած է այս կտակին:

Այս հաղորդել են, գրում է այդ թերթը, մինչեւ այժմ գեռ չհրատարակուած այս յիշատակարանը և միենցն ժամանակ երաշխաւորել են մեզ սորա բնագրի մասին:

Մենք մեր պարտականութիւնն ենք համարում հրատարակել այս ինկատի առնելով այն ժարդ հետաքրքրութիւնը, որ նա ներկայացնում է ինչպէս տաճկահայերի, այնպէս էլ ուստահայերի համար. ամենքը յիշում են այն զրկանքները, որ հայերը կրեցին վերջին տարիներս, ամենքը յիշում են նմանապէս, որ հայերը կարողացան առաջ բերել ներլիսի վիհաժողովում «Հայութան ինդիք». բայց գժրաղդաբար Բերլինի վիհաժողովի որոշումը նոցս համար մնում է և մինչեւ այժմ որպէս մեռած տառ:

* * *

Այն օրից, երբ ես վճռեցի թողնել իմ հասարակական գործունեութիւնը՝ այլ ևս յօյս չունենալով վերստին սկսելու նորան քայլայուած առողջութեանս պատճառաւ, — ես

ցաւերիցս թեթև զգալու րոպէներին ինձ նուիրում եմ ոչ
թէ յիշատակարաններ գրելու, այլ մի քանի խորհուրդներ
աւանդելու իմ հաւատակից եղբայրներին, որոնց ես այնքան
սիրել եմ:

Սահմանագրութիւնը, որի վերայ հիմնուած է հայ ժո-
ղովրդի վարչական կազմը, յառաջացրել է անիշխանութիւն,
ըստ որում թէե մի կողմից նա համապատասխանում է մեր
եկեղեցու ժողովրդական ոգուն, բայց և շատ կէտերում նա
բացասում է նրա աւանդութիւնները: Այդ սահմանագրու-
թիւնը կազմելս վարուել են այնպէս, որ կարծես թէ, եկեղե-
ցին դոյութիւն չունենար, և հոգեորականութիւնը ընդու-
նել է նրան ամբողջապէս՝ առանց ամենեին իւր իրաւունքնե-
րը պաշտպանելու: Կարգապահութեան տեսակէտից՝ հոգեո-
րականութիւնը համայնքի մէջ կազմած է մաքառող տարր,
իսկ եկեղեցական աւանդութեանց տեսակէտից՝ հոգեորակա-
նութեան բոլոր անդամների իրաւանց հաւասարութիւնը հա-
մահաւասար է հպատակութեան և կարգապահութեան ոչըն-
չացմանը նրա միջից: Սորա հետեանը այն եղաւ, որ, իրօք,
հոգեորականութիւնը, որը իր գործունեութեան որոշ սահ-
մանի մէջ պէտք է ղեկավարուէր ինչպէս մի ամբողջութիւն,
հետզեաէ կորցրեց իւր ներքին կապը, և հասաւ, եթէ չո-
սեմ անիշխանութեան վերին աստիճանին, այլ մի այնպիսի
գրութեան, երբ այլ ես նա արդէն դադարումէ հասարակա-
կան օգտակար գործիք լինելուց և հետեւապէս ստեղծումէ է
իրենից անկարգութեան մի տարր հէնց այնտեղ, ուր նա պէտք
է լինէր հաւասարակշռող և հաշտեցնող տարր:

Գուցէ ինձ մեղադրեն, որ իբր ես ևս նպաստել եմ իրաց
այս վիճակին կամ նրանով որ սկզբից համաձայն եղայ դո-
րան, կամ նորանով որ վերջերը ըլջանացի մի հնար գտնել
այդ գրութիւնից դուրս դալու համար: Սակայն անիրաւա-
ցի կը լինէր անտես առնել այն կեղծ վիճակը, որի մէջ ես
դրուած էի: Ընտրութեանս ժամանակ արած երգումը՝ պահ-
պանել սահմանագրութիւնը մինչև գործունեութեանս վեր-
ջը, ինձ կաշկանդել էր մինչև որ արամաբանական մի խիստ

բացատրութիւն ինձ չարձակեց այդ կապանքից: Ես այս բացատրութեանը սպասեցի շատ երկար, մի քանիսի անսարքերութիւնը գէպի հասարակական գործերը, միւսների կողմապահութիւնը զրել էին ինձ այնպիսի պայմանների մէջ, որ պէտք էր կամ միայնակ վճռական կուլ մղել, որով գործել մի ժամը երգմաղանցութիւն, կամ խնդրի ելքը թողնել հանգամանքների ընթացքին, որոնք տեղում էին հասարակութեան վրայ, այն հանգամանքների, որոնք հայ ժողովրդի համար մահու և կենաց նշանակութիւն ունեին: Ես նախագասեցի վերջին ելքը:

Յայտնի է, որ եկեղեցին զյութիւն ունէր նաև քան Սահմանագրութիւնը, որ հայ հասարակութիւնը մշակեց իւր համար: Ոչ ոք ի հարկէ նպատակ չունէր փոփոխելու հայ եկեղեցու կաղմակերպութիւնը, ընդհակառակը նրա վարչութիւնը և նրա կարգապահութիւնը կարող էին մնալ անձեռնվագելի: Սա լոկ մի տարածայնութիւն է, որ հարկաւոր է հեռացնել և որի համար բաւական է միայն մի պաշտօնական բացատրութիւն այն մտքավ, որ ոչ ոք ցանկութիւն չէ ունեցել գիւղել եկեղեցու աւանդութիւններին: Հոգեորականութիւնը Սահմանագրութեան տրամադրութիւններից միայն այնքան օգտուելու իրաւունք ունի, որքան եկեղեցին այդ թոյլ է տալիս նրան:

Իմ հոգսերի առարկան եղող երկրորդ կէտը այն մարմնն է, որ համարվում է ժողովրդի ներկայացուցիչ կամ աւելի լաւ առած՝ այն եղանակը, որով դա հանդէս է գալիս:

Փոխարինելով մէկի կառավարութիւնը, թէև այդ մէկը ընարուած լինի հասարակութիւնից, խորհրդականների կառավարութեամբ՝ նշյնպէս հասարակութիւնից ընարուած, անշնչաց երբէք միաք չեն ունեցել անձնական կամայականութիւնը ոչնչացնելու համար հպատակուել անմիտ փոքրամասնութեան նրանով, որ վերջնին միջոց տան իրադործելու ամենասառը իշխանապետութիւն, որ երբ և իցէ զյութիւն է ունեցել սակայն ճիշտ այդպիսի հետեանքի հասանք մենք թոյլ տալով մեղ մի քանի շեղումներ նոյտ յաճախակի դորձագրելով:

ի՞նչ նշանակութիւն ունի այն ընտրեալը, որ հազիւ է կենարոնացնում իր մէջ որոշ շրջանում իրեն ընտրողների տասներորդ կամ քսաներորդ մասի ձայնը: Սա հակառակ է սահմանադրութեան ոգուն, որ պահանջում է, թէ ընտրեալը ընտրողների մեծամասնութիւնը պէտք է ներկայացնի: Բայց այս չարիքին դիւրին է օգնել պահանջելով որ ընտրողները իրենց լիազօրին ընտրելիս մեծամասնութիւն կազմն, և մինչեւ որ այս վերջինս ըներկացացնէ մեծամասնութիւն, ընտրութիւնը պէտք է համարուի չկայացած և այդպիսի ընտրեալն էլ զուրկ ձայն տալու իրաւունքից: Ճիշտ այսպէս էլ հեռացնելու համար այն ընտրելիներին, որոնք ցանկալի պայմաններին չեն համապատասխանում կամ որ նոյնն է իրանց բարձր կոչմանը արժանի չեն Սահմանադրութիւնը այդպիսիների բարոյականութեան և ընդունակութեան նկատմամբ որոշ պահանջներ է զծում: Այդպիսի պայմաններով տալահովուած ընտրողական մարմինը երբէք չի շեղուիլ իւր կոչումից, թէև զուցէ ժողովրդականութիւն ձեռք բերելու ծարաւը այդ ժամանակ դառնայ մի տելի խոր վերք, որը սովորաբար կրծում է դործի զլուխ կանգնածներին:

Դարձեալ մի նկատողութիւն քաղաքական կազմակերպութեան վերաբերմամբ: Զը նայելով Սահմանադրութեան պարզ առաւելութիւններին զրանք ենթարկուեցին շեղումների յօդուտ, այսպէս ասած, ներքին կանոնադրութեան, որը իմ՝ կարծիքով ոչ այլ ինչ է, եթէ ոչ իւր մօրը լափող մի հրէշ մանուկ: Խոստովանում եմ, որ այս կանոնադրութիւնը երբ որ քննվում էր Ազգային ժողովում, հաւանութիւն գոտաւ իմ կողմից, բայց այդ աշխատութեան սկզբնական երեալուն պատասխանատութիւնը բոլորովին ինձ վրայ առնելով հանդերձ, այժմ ևս բողոքում եմ նրա դէմիմ բոլոր ուժով: Փորձը պարզեց ամեն բան. երբ փաստերը ցոյց են տալիս, որ դործիքը վատ է, այն ժամանակ առողջ գատողութիւնը պահանջում է նրա ոչնչացումը, որովհետեւ հասարակաց շահը պէտք է առաջին աեղք բռնի: Այդ պատճառով պէտք է փոխել ներքին կանոնադրութիւնը և նրան փոխարինել մի այլ կանոնադրութիւ-

նով՝ որ լինի աւելի համեստ, աւելի համապատասխան մեր կարիքներին և զերծ բոլոր այն բարդութիւններից, որոնք իրենց գոյութեան իրաւունքը կարող են ունենալ զօրեղ կառավարութիւնների մէջ, բայց մեր մէջ ուղղակի ծիծաղելի են: Իմ կարծիքով կանոնադրութեան գծած սահմանից անցնելու ձգտումը առաջ է եկել վարչական մեքենայի բոլոր անիւներում մէկի տեղ կարելի եղածին չափ բազմաթիւ անձինք դնելու ցանկութիւնից: Դրա հետեւանքը այն եղաւ, որ վարչութեան մէջ բաղմաթիւ ծառայողների մասնակցութիւնը, որոնք թոշակ չէին ստանում, միշտ թղթի վրայ միայն գոյութիւն ունեցաւ: Բայց տասնհինգ, քսան տարուայ փորձը պէտք է որ արտայայտէր իւր արդար վճիռը այդ տեսակ ձգտման վրայ: Ես քնաւ խորհուրդ չեմ տալիս վերադառնալ հնաւանդ կառավարութեան մոլորութիւններին, բայց անհրաժեշտ կարիք կայ ամենուրեք կրծատել վարչութեան կազմը: իրական և աւելի օրինաւոր վերահսկողութիւն հիմնելով կարելի է հասնել աւելի խիստ բաւականացուցիչ գործնական հետեւանքի՝ քան այն, որին հասնում են սյդպիսի լոկ արտաքուստ երեացող վարչական կազմի միջոցով:

Հաղորդելով իմ անձնական գիտողութիւնների հետեւանքները այստեղ, ես յցս եմ տածում, որ միւսները ինձնից աւելի բախտաւոր կը լինին և կը մշակեն մի այլ կանոնադրութիւն աւելի դրական հիմքերի վրայ, քան էր այդ անցեալում:

Այժմ ես անցնում եմ ամենակարեսոր կէտին, այլ խօսքով այն զեկավարող մաքին, որին ես հետեւում էի ինչպէս համայնքի պետ: Ես պատկանում եմ այն անձանց շարքին, որոնք կարծում են, որ իւրաքանչիւրը վարձատրվում է իւր ծառայութեան համար, որ ժողովուրդը կարող է սկզբում բարւոքել իւր զրութիւնը միայն իւր սեպհական աշխատանքով: Իմ պատրիարքութեան ամբողջ երկար շրջանում, ես զարմանքով նկատում էի, թէ ինչպէս ամեն ինչ սպասում են ուրիշների հովանաւորութիւնից և շնորհից: Այն ինչ ժողովուրդը ժամանակի ողուն ենթարկուելով բարւոք զրութեան աւելի ու աւելի պահանջ էր զգում, ամեն կողմից յարձա-

կումներ էին լինում պատրիարքական իշխանութեան գէմ բաւականութիւն պահանջելով մինչդեռ պատրիարքական գահը իւր շուրջը չէր գտնում կամ շատ սակաւ էր գտնում այդպիսի գէպքերում այն անհրաժեշտ համերաշխութեան ողին, առանց որի ամեն մի ջանք մնում է անօգուտ: Իմ նախորդները ինձնից ոչ պակաս էին հասկանում այդ, բայց թէ ի՞նչ կարող էինք անել մենք թշուառութեան անունով կատարուող այդպիսի եռանդուն բուռն պահանջների առաջ: Գիմել աղջային համերաշխութեանը մի կողմից և մեզ վերայ իշխող օրինաւոր կառավարութեան հովանաւորութեանը միւս կողմից: Ես չեմ ասում, որ իմ շուրջը երբէք չէի գտնում աղնիւ գործակցութիւն, բայց այն ծանր շրջանում; որին մենք ենթակայ ենք մեծաւ մասամբ, այդպիսի աջակցութեան կատարեալ բացակայութիւն էր տիրում, յամենայն գէպս զզացվումէր նորա պակասութիւնը մինչեւ վերջը: Սակայն իմ կողմից մեծ ապերատսութիւն կըլինէր մոռանալ այն, ինչ որ արուեց հայկական ստրահարթում տիրող սովի ժամանակ: Եթէ մենք ամեն բանում հետեւէինք անձնութիրութեան այդ օրինակին, այն ժամանակ երկրի ներկայ դրութիւնը բոլորովին այլ կըլինէր. իսկ ինչ վերաբերում է կառավարութեան հովանաւորութեանը, ես պէտք է տաեմ որ ցանկանալ և կարողանալ երկու բոլորովին տարբեր բաներ են և որ բացարձակ անարդարութիւն կըլինէր մեղաղբել ում և իցէ վատ մտադրութեան համար՝ նախապէս համազուած չըլինելով որ նու կարող էր անել բայց չէ արել: Կառավարութիւնը տատանուելով ամբողջ մի շարք յաճախ միմեանց հակառակ պահանջների առաջ, իրաւացի համարելով հանդերձ մեր այդ պահանջները նոցա պատասխանեց անվճռողաբար և խցս տալով: Բայց այսպիսի հետեւանքի ներքոյ ես բնաւ չի նկատում չար գիտաւորութիւն, որովհետեւ չեմ կարող ինձ թոյլ տալ կարծելու, թէ որ և է կառավարութիւն գաղարի հոգալուց մի ժողովրդի մասին, ինչպէս էլ լինի այդ ժողովուրդը որ ապրում է նորա իշխանութեան տակ գարերի ընթացքում: Ես հաւատացած էի նորա հոգատարութեան մասին,

բայց փորձը ցոյց առւեց, որ նա անկարող է մի բաւականութիւն տալ: Կառավարութեան գէպի մեր ժողովուրդը ունեցած ցուրտ վերաբերմունքը աւելի աչքի է ընկնում նորանով, որ նա արդէն ընտելացել է դարերի ընթացքում մեր հաւատարմութեան և որ նա երբէք չէ ունեցել պատճառներ մեզ խնայելու, որպէս այդ առում էր նա կէս դարու ընթացքում այլ տարրերի վերաբերմամբ, որոնք կարողացան իրանց նեցուկներ դժունել մեր կառավարչուկան սահմաններից դուրս: Մեր հասարակութեան պահանջները վերջին քսան տարուայ ընթացքում զարձան աւելի յաճախտի ստիպողական: Այդ նկատմամբ ես միայն ընթանում էի իմ նախորդների շաւզով, և երր վերջին պատերազմը զանազան ազգութիւնների ապագայի հարցը յարուցեց, և շտապեցի կառավարութեանը առաջարկել վարչութեան մի նոր ծրագիր, որ ըստ իմ համոզման պէտք է նպաստէր մեր զրութեան լուանալուն: Կառավարութիւնը ընդունեց այդ ծրագիրը, բայց նա հակառակ բան էլ չասաց: Ես գեռ աւելին եմ ասում: Շնորհիւ միայն կառավարութեան պաշտօնական համաձայնութեան, համաձայնութեան, որ բացատրվում է այն բացառիկ հանգամանքներով, որոնց ժամանակ յայտնած էր պահանջը, — և նոյն այդ ծրագիրը ներկայացրի նախ Ռուսիային, իսկ յիտոյ Բերլինի վեհաժողովին: Մեր հրաւէրը եւրոպական պետութիւնների մարդասիրական բարձր զգացումները շարժելու՝ արձադանք տուեց: Եւ այժմ իսկ, երբ մի ուաքս զերեղմանում է, ևս մասնութ եմ գորա մասին հոգեկան յոյզով և չեմ կարող այդ չլյիշել առանց լցուելու ջերմ շնորհակալութեան զգացմունքով գէպի այն ամենքը, որոնք արտայայտեցին իրանց կարծիքը յօդուած մեր զործին: Եթէ իմ փորձերը և եւրոպական պետութիւնների և նոյն իսկ մանաւանդ մեր ողորմած միտպետի գէպի մեզ ունեցած բարի արամազրութիւնը չունեցան իբրեւ իրանց հետեւանք նշանաւոր փոփոխութիւններ, - զրանից չէ կարելի եղբակացնել, որ այդ չը պէտք է լինի և ապագայում:

Իմ փորձը ստկայն, քննութեան ննթարկեցին և այդ երկու կերպ, ոմանց կարծիքով մենք մեր պահանջների մէջ

շատ հեռու էինք գնացել, այլոց ասելով՝ բաւականաչափ. ևս աւելացնում եմ, որ մի քանի եսամոլ հոգիների համար էլ լուսութիւնն էր այն միակ քաղաքականութիւնը, որին նոքա հետեւում էին: Իմ փորձի բարոյական տեսակէտից գնահատութիւնը ապագային է պատկանում: Ինչ վերաբերումէ անձամբ ինձ, ես կատարեցի իմ պարտքը, ամենայն կերպ ջանալով մեր ժողովրդի վիճակի բարւոքման մասին: Հասարակութիւնը նեղվում էր, ես էլ նորա արապայտիչն էի, բայց ոչ մի գէպքում ես չէի քաջալերիլ նորա իւր միապետին հաւատարիմ ջնալու ձգտութիւնները: Բոլոր իմ ծրագիրները վերջ ի վերջոյ հանգում էին այն բանին, որ պէտք է վերջնականապէս պահանջել այնպիսի պայմաններ, որոնց ժամանակ համայնքը կարող կրլինի գոյութիւն ունենալ և զարգանալ:

Անզօր լինելով թափանցել նախախնամութեան անփոփոխնելի վճիռների մէջ, ես, սակայն, պէտք է յիշեցնեմ իմ եղբայրակիցներին, որ գոյութիւն ունին յաւիտենական օրէնքներ և որ միայն այդ օրէնքների տիրապետութեամբ մենք կարող ենք բարեկեցիկ կեանք վարել: Բայց եթէ դուք ձեր ապագան հիմնում էք այս աշխարհի զօրեղների օգնութեան վերայ՝ առանց աշխատելու, որ այդ օգնութեան արժանաւոր լինիք ապա և ձեր դորձը կորած է:

Մեր սուրբ եկեղեցին իւր լայն զաղափարներով հաշտեցնում է ժամանակակից ոգին, յառաջադիմութեան և զարգացման ոգին քրիստոնէութեան սկզբունքների հետ. երբէ՛ք նա չէ վատարանել յառաջադիմութիւնը և քաղաքակրթութիւնը, ընդհակառակն մի բան, որին նա միշտ դէմ' է եղել, դա անհամբերող ոգին է: Մեր եկեղեցին, որ ամբողջապէս պահպանել է նախանական եկեղեցու բնաւորութիւնը, յառաջադիմական է: Դուք կարող էք այդ մշտական սիւնի լուսով վստահ քայլերով դիմել դէպի լուսաւորութիւն: Յառաջադիմութեան շաւզով, մտաւոր և բարոյական զարգացման շաւզով, դուք կարող էք իբրև ազդ զիրք ձեռք բերել ներշնչուած համերաշխատթեան օգով՝ դուք կարող էք զօրաւոր լինել, և չեղուելով մեր եկեղեցու սուրբ հայրերի զծած ձանապարհից՝

գուշ կարող էք յուսաւ ապագայի վերայ: Զարդացէք, օգնեցէք միմիանց, և Աստուած կ'օգնէ ձեզ:

Մի խօսք ևս ժամանակակից հարցերի մասին. Ս. էջմիածնի, Կ. Պոլսի և Երուսաղէմի թափուր գահերի մասին և այլն:

Ես երախտապարտ եմ իմ բոլոր այն հաւատակից եղբայրներին, որոնք որբան հնարաւոր էր յաջողեցրին էջմիածնի համար իմ թեկնածութիւնը, չնայելով որ ես հակառակում էի դորան և խօսքով և գործով: Օդառւելով այս հանգամանքից իմ ջերմ շնորհակալութիւնն եմ յայտնում Ռուսիոյ Օգոստափառ. Միապետին, որ ինձ տուեց փայլուն ապացոյց իւր դէպի հայ ազգն ունեցած բարձրագոյն և մեզ համար թանկագին բարեհաճութեան, երկու անդամ իւր աղնիւ ներկայացուցչի միջոցով ինձ համոզելով յետ առնելիմ հրաժարականը և եթէ ես այդ չարի, այդ լոկ նորա համար, որ ես մտածում էի, և մտածում եմ դեռ այժմ էլ որ իմ գործունէութեան ժամանակը լրացած՝ է այս աշխարհում, մանաւանդ որ ես առաջարկեցի աւելի արժանաւոր և իմ կարծիքով ամեն կերպ աւելի յարմար թեկնածուի, որին, սակայն, ոչ միայն չկարողացայ ցանկը մտցնել, այլ նոյն խսկ անկարող եղայ ինձ ազատել թեկնածութիւնից: Այդ թեկնածուն էր Մակար արքեպիսկոպոսը: Նա բաւականութիւն է տալիս երկու պայմանների, որոնք պահանջվում են կաթողիկոսից. առաջին՝ նա հայոց եկեղեցուն նուիրուած ազնիւ հոգեւորական է, երկրորդ՝ նա հաճելի անձնաւորութիւն է ռուսաց միապետի համար: Ինձ մօտ կան նորա հայրենասիրութեան ամենաշօշափելի ապացոյցներ: Այդ հոգեւորականի կրծքի մէջ բարախող սիրաը հայի սիրտ է: Միւս կողմից՝ ինձ յայտնի է, որ նորա ընտրութիւնը Ռուսիայի սրառվը կը լինէր, որովհետեւ ամենից առաջ կաթուղիկոսից պահանջվում է ազնուութիւն (մի՛ հաւատաք այս խնդրում շահ ունեցող մարդոց թշուառ խօսքերին): Սուրբ Հոգին օգնէ մեր հաւատակիցներին կատարելու արժանաւոր ընտրութիւն: Ամենապլիսաւորը այն է, որ պէտք է տաճկահայերի և ռուսահայերի, ազգի այդ երկու նշանաւոր մասերի մէջ անապարակոյս գոյութիւն ունեցող համերաշ-

խութեան հոգեոր կապերը պահել և ամրապնդել: Բայց այդ կապերը աւելի ամուր կարող են լինել եթէ ձեռք առնուին հարկաւոր միջոցները:

Ինչ վերաբերում է Կ. Պօլսի աթոռին, պատրիարքի ընտրութիւնը համեմատաբար նուազ նշանակութիւն ունի, որովհետեւ վերջինս միայն տեղական կարեորութիւն ունի: Այնուամենայնիւ այդ ընտրութիւնն էլ պէտք է ընկնի այնպիսի մի հոգեորականի վրայ, որ նախանձախնդիր է եկեղեցու աւանդութիւններին և ջերմապէս նուիրուած հասասարակութեան շահերին: Ես չեմ ցանկանում մատնացոյց անել մէկին, բայց այդ չեմ նշանակում որ ինձ դժուարին էր այդ անել: Ես միայն չեմ ցանկանում ինձ իբրև յաջորդ մէկին յանձնարարել: Փնառեցէք և դուք էլ կը գտնէք: Մօտեցէք ընտրութիւններին առանց որ և է կրքի և մի թողնէք ձեր ուշադրութիւնից այն, որ ընտրեալը այն ժամանակ միայն կանգնած կը լինի: Իւր կոման բարձրութեան վերայ, երբ նա կը կարողանայ նախախնամութեան գործիք դառնալ անշետացնելու համար պառակտման և բաժանման այն բոլոր ձկտուֆները, որ անձնական շահը դրվում է մեղանից իւրաքանչիւրին.— դուք գորան օրինակ ունիք Սսի գահի համար եղած մրցուֆները, և—սպահանջելու եկեղեցու միութիւն և ժողովրդի մէջ համերաշխութիւն:

Ինչ վերաբերում է Երուսաղէմի պարտուց խնդրին, ես նորան պատուաւոր տեղ եմ տալիս, որովհետեւ սուրբ տեղերը մեզ համար ունին մեծ նշանակութիւն: Այն միջոցները, որոնք մինչեւ այժմ գործ գրուեցին առանց շետեանքի, շուտով կը տանեն աւելի արմատական միջոցի: Վերջինս կարծ ժամանակ կարող է մեզ նեղացնել, բայց ինչ էլ որ լինի անհրաժեշտ է պարագը վճարել, և այդ գործում խիստ մեծ ծառայութիւն կարող է մատուցանել այն հոգեորականը, որ արգէն երկու տարի է գործում է Երուսաղէմում: զա է Յարութիւն արքեպիսկոպոսը: Հարկաւոր է նորան քաջալերել նպաստել և թեթևացնել նորա գործը՝ ոչ միայն անմիջապէս պարագը վճարելով, այլ և միջոցներ ձեռք առնելով

յափշտակութիւնների դէմ, որոնք ո. վայրերը վտանգի են-
թարկեցին:

Տրաժարուելով այն ամենից, ինչ որ այսպէս թէ այն-
պէս կարող է հասարակական գործունէութեան վերաբերել
ես մտածում եմ իմ մնացած օրերը նուրիել վերակենդանեց-
նելու մի բարեզործական խնդիր, որի վերայ հսկել ինձ
կտակել է արժանապատիւ Նահնազարեանը, — այսինքն Խառ
գիւղում դպրոց հիմնելը՝ որ մի քանի տարուայ գործունէու-
թիւնից յետոյ, ունենալով 300-ից աւելի աշակերտներ, սով-
ուուած էր միջոցների պակասութեան սատճառով փակուել
ծախսելով գրամագլուխը, որ նշանակուած էր նորան պա-
հելու համար:

Այդ հաստատութիւնը՝ որ կտակողի կամքի համաձայն
ալէտք է սեմինարիա լինէր, արդէն գնահատուած է իւր ար-
դեանց համեմատ, նա հետզհետէ ստացել է բաւական լայն
ծրագիր, ամեն ստոիծանի՝ սաներին հնարաւորութիւն տալով
տեղ ունենալու իւր նստարանների վերայ: Այդ՝ բառի բուն
նշանակութեամբ՝ ազգային հաստատութիւնից թէ հոգեորա-
կանութիւնը և թէ ժողովուրդը ընդարձակ կերպով օդ-
տուեցին: Իմ հրաւէրը դէպի իմ ազգակիցները նորան վերա-
կանդնելու, թէ լինի այդ աւելի նեղ սահմանով և այդ կեր-
պով բաւականութիւն տալ ամենաստիպողական սահմանջին—
ունենալ ազգային դպրոց կրթութեան համար ընդհանրապէս
և մասնաւորապէս հոգեորականութեան կրթութեան համար,
այդ հրաւէրը, պէտք է խոստովանեմ, լսուեց, բայց թոյլ այ-
նուամենայնիւ ես հաւատացած եմ, որ եթէ հետեւնք այդ
մտքին՝ զործը զլուս կը դայ: Եթէ Աստուած ինձ կեանք
տայ, ես բոլոր ուժովս պէտք է աշխատեմ զորտ համար, ե-
թէ ընդհակառակն՝ ինձ վիճակուած է վերանալ երկրի երե-
սից, ուրեմն այդ գպրոցում կրթութիւն ստացած սաները
չպէտք է մոռանան, որ իրանք իբրև որդեզրած դաւակներ
անմիջական ժառանդներն են մեր արժանապատիւ Նահնա-
զարեանի, այսինքն՝ նոքա պարտաւոր են սահմանել այն-
քան օգտակար այդ հիմնարկութիւնը: Ես նշանակում եմ նո-

յա Շահնազարեանի ժառանգութեան հոգեոր գործակատար-
ները Թող նոքա կազմեն մի գաշնակցութիւն որը անելու
նոքա իրաւունք ունին, որպէս զի կարողանան գլուխ բե-
րել այն գործը, որ իմ ուրախութեան առարկան էր կազ-
մում, քանի դպրոցը գոյութիւն ունէր, և վշտի առարկան
իմ կեանքի վերջին օրերում, երբ ես յիշում եմ սորանից շատ
տարիներ առաջ նորա վախճանը:

Ես վերջացնում եմ, խնդրելով Բարձրեալի օրհնութիւ-
նը մեր ու եկեղեցու և մեր թանկագին աղջի դաւակների
վերայ, և ցանկանալով նոյա հաշտութիւն և սէր այժմ և
յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Նշուն արքեպիսկոպոս Վարչապետան

Օբխարեց, (Միջագիւղ)
1 հոկտեմբերի 1884 թ.



Յայտնի է, որ անցեալ տարուայ վերջում տաճկահայոց վար-
չական ներքին կեանքում տեղի ունեցան մի քանի կարեսոր գէպքեր,
որոնք իրենց նշանաւոր արդիւնքով առաջնակարգ տեղ գրաւեցին
համայն հայութեան էական խնդիրներում: Այս գէպքերն են
նոր պատրիարքի ընտրութիւնը ի գէմա ամենազատիւ Ատաթէոս
արքեպիսկոպոս Խզմիրլեանի և Ազգային Ժողովի անդամների նոր
կազմութիւնը: Յայտնի է արդէն նորընտիր պատրիարքի եռան-
դուն և կորովի գործունէութիւնը, որով այնքան կարծ ժամանա-
կում կարողացաւ իր բռնած վստահ ընթացքով վերականգնել ար-
ժանայիշատակ՝ Աերսէս Պատրիարքի ազգաշահ քաղաքականութիւ-
նը. միւս կողմից Ազգային Ժողովի նոր կազմութեան առթիւ շեշ-
տելու ենք այն ուրախալի երեսյթը, որով առաջին անգամ, այն
էլ այնպիսի տագնապալից օրերում, պարզ ժողովքի ներկայացու-
ցիչները հանդէս եկան, հակառակ նախկին էֆէնտիների, վարելու
տաճկահայոց հասարակական գործերը, որը պակաս ազգեցութիւն
չունեցաւ ազգային խնդիրների և Ա. Պատրիարքի գործունէու-
թեան վերայ:

Որպէս զի ցոյց տանք, թէ որքան մէծ նշանակութիւն ունի
վարչական մարմինների կազմութիւնը ազգային ընթացիկ խնդիր-

ների վերաբերմամբ, մենք առաջ կը բերենք մի գրութիւն, որը ներկայացնում է էֆենտիների տիրապետութեան ժամանակուայ մի կենդանի պատկերը, երբ նորա ո՛չ միայն ազգային այս ու այն խնդիրներն էին ոտնատակ անում կամ իրանց քմահաճոյքին ծառայեցնում, այլ նոյն իսկ պատրիարքներին և ազգային հիմնարկութիւնները իրենց ձեռքին խաղալիկ դարձնում, որոնք, ի թիւս այլ պատճառների, իրենց կողմից պակաս չը նպաստեցին դաւառացոց այժմեան անտանելի կացութեանը:

Ա. Ա. Բարեկամ

Կ. Պոլիս 10/22 օգոստոս 1887 (թ. *)

Վերջապէս նուրեանի հռչակաւոր վարչութեան շրջանը լրացաւ: Հիմա կը պատրաստուի իւր մեծագործութեանց համարատուութիւնը բերել Ազգային Ժողովին՝ կանխաւ վստահ ըլլալով անոր մէկ մասին՝ այսինքն Փափաղեան և Ընկերութեան ծափերուն և դափնիներուն վրայ:

Բայց մենք իբրև անկողմնակալ ոք՝ ոչ թէ Փափաղեանի նման իւր բերանը նետուած ոսկորին. սիրոյն համար՝ այլ միմիայն մեր հէտ ազգին շահն ի նկատի ունենալով՝ ինքնին պիտի առնենք այս մի քանի տողերուն մէջ նուրեանի գլուխգործոցները և այնուհետև պիտի հարցնեմք թէ խիզճ ունեցող հայ մը կրնայ անոնց հաւանիլ: Երբ Վանայ Պօղոսեան և Ապօղոսեան հին ազգային խնդիրը վերջերս ամենայն սաստկութեամբ արծարծեցաւ՝ նուրեան ո՞ր կողմ բռնէր կը հաւնիք, տարակոյս չկայ թէ Ապօղոսեանց իրաւոցի գանգատներն ի նկատի առնելով՝ խնդիրն ազգին շահուց համաձայն կարգադրելու էր: Ազգին շահը կ'ըսեմք, վասն զի Պօղոսեանց և Ապօղոսեանց խնդիրն անձի խնդիր չէ, այլ յառաջադիմութեան և յիտազիմութեան խնդիր է, լուսոյ և խաւարի մարտին խնդիրն է, միով բանիւ Վարդանի և Վասակի սկըզբանց խնդիրն է: Արդ, նուրեան այս ամենը դիտնալով հան-

*) Ծ. Ա. Օ. Թ. — Մեր մի աշխատակցի այս գրութիւնը, թէեւ ուղարկուած էր «Ըբագու»-ին 1887 (թ.), սակայն մենք միայն այժմ՝ աւելի քան նախատակայարմար դատավորութեան հաւատացած լինելով որ Պոլսում յայտնի այս անձի գրութիւնը ամեն ժամանակ կունենայ իւր հետաքրքրութիւնը:

գերձ՝ ուաքի տակ առաւ ամենայն ազնիւ ղգացում, թողուց
Վարդանի դրօշը և գնաց Վաստկայ դրօշակիրն եղաւ, Պո-
ղոսին՝ վանեցւոց այդ մատնչին պաշտպան դարձաւ, և այն-
չափ ըրաւ՝ որ բարձրագոյն ակումբներ ալ կասկածեցան Ապօ-
ղոսեանց վրայ: Աստի կրքերն իրենց վերջին աստիճան սաստ-
կութեան հասան, հազարաւոր անհատներ հռովմէականու-
թեան յարելու պատրաստուեցան, Ազարեան գերերջանիկն
ծափ զարկաւ՝ այս ազգաւէր խռովութեանց հանդիսատես
կենալով՝ գուցէ իւր նոր հօտին հովեւներն ալ պատ-
րաստեց: Բայց չնորհիւ կառավարութեան ճարպիկ ջանից
և վանեցւոց աննկուն հայրենասիրութեան՝ խնդիրը վեր-
ջացաւ. սակայն մինչեւ յարդ իւր ազգամկաս տպաւորու-
թիւնը թողեց կայսերական կառավարութեան մտաց վրայ,
զե վանեցիք՝ այնուշետե կասկածելի դարձան յաչս կա-
ռավարութեան: Ահա նուրեանի առաջին գչուխ գործո-
ցը: Երկրորդն է՝ Տիգրիկի հոգաբարձութեան խնդիրը, ո-
րուն մեջ նուրեան՝ կառավարութեան միջամտութիւնը
հրաւիրեց, բանտարկութիւններ ի գործ զնել տուաւ՝ և
սակայն խնդիրը դեռ անլոյծ կրմնայ տարիններէ իվեր: Բայց
ահա երրորդն և ամենէն նշանաւորը պատմենք: Նուրեան
Տիգրանակերտի առաջնորդը Մշյ Ս. կարապետի Վանուց
վանահայր կարգեց՝ զրեթէ բռնի: Ընթերցողը թող աչքի
առաջ բերէ Տիգրանակերտի և Մշյ հեռաւորութիւնը. արդ
այս գործով նուրեան յոյց տուաւ որ ինք վարչական ոչն-
չութիւն մ'է. իւր կարծեցեալ տաղանդը իւր յաղթ հասա-
կին, հաստ բազին, զօրաւոր ձայնին վրայ է՝ նոյնպէս ու-
ժեղ ապտակին՝ զօր մերթ ընդ մերթ չխնայեր իւր բար-
ձակից ընկերաց՝ ինչպէս ըրաւ Բարազամեան Տիգրան ազգա-
սէր և արդիւնաշատ անձին: Այս յիմար գործով՝ առաջնոր-
դական այս նորանշան կարգագրութեամբ զիտէք, նուրեան
ի՞նչ աղէտ բերաւ աղզին զլխուն. — Տիգրանակերտցի ազգայինք
առանց առաջնորդի, առանց ներկայացուցչի մնալով՝ կառա-
վարական ատենից առջեւ՝ սկսան հազարներով զիմել Ճիկ-
ւիթներու և պապականներու, որպէս զե իրենց յաւերուն

դարման ընեն՝ իրենց բողոք և գանգատը բայցատրեն կառավարութեան։ Հիմա, անաղան ուրեմն սթափելով ու պատրիարքը՝ ստիպողական խնդիրներ կրմատուցանէ կառավարութեան՝ որպէս զի հրաման տայ զԱ. Հայրիկն զրկել ի Տիգրանակերա՝ կրօնափոխութեան դիմած կամ առ այն պատրաստուած հազարաւոր աղջայինք յետս կեցնելու իրենց աղջաւեր խորհրդէն՝ և անոնց գանգատանաց դարման ընելու։ Նուրեանի չորրորդ մեծագործութիւնն եղաւ Տաճկաստանի հայոց կրթական գործին տուած սոսկալի հարուածը։ Մինչդեռ ամեն ազգ իւր գրագէտներն, գաստիարակներն կըքաջալերէ, Նուրեան քաջ գիտնալով որ անոնք են ամենէն աւելի սուր տեսնող իւր աղջաւեր գործեցը՝ անոնց մահացու հարուած մը տուաւ. և ահա թէ ինչպէս.—դասազրքերու մենաշնորհի, դրոշմի տուրք սահմանեց, և հակառակ կարող և լուրջ մարդոց քննադատութեանց, հակառակ նոյն իսկ երկրի իշխող կարգերի, բռնի գործադրութեան դրաւ։ Ուսուցչական վկայականի խնդիր մը յարոյց՝ ոչ թէ արժանաւորները քաջալերելու, այլ իւր արարածներն յառաջ քաշելու, և իւր խնկարկուաց թիւն սոսուարացնելու համար։ Պօլսոյ թաղային բոլոր վարժարաններն խանդարեց, թաղային մրցման ողին սպաննեց, որպէս զի աշակերտներն ստիպուեն երթալ Նալաթիոյ Կեդրոնական կոչուած վարժարանը, որ իւր վարչութեան արգիւնքը կը կարծէ, մինչդեռ արդէն բարեիշատակ ներսէս սպատրիարք և Մաքսուտ Սիմոն բէյ տարիներ յառաջ սպատրատած էին անոր բացումը, բայց կարծեմ աւելի օգտակար եղանակաւ։ Գիտէք թէ ի՞նչ հետաքրքրական կարգադրութիւն ըրաւ Պօլսոյ և կերպիւ իւիք բոլոր Տաճկահայոց վարժարանաց բարեկարգութեան համար։ Մասիսի նախկին խմբագրապետ իւթիւնեան ոլ. Կարապետ իշխանական պէսու-լ անուանեց մեծ թոշակով մը. արդ ևս նկարագրեմ այդ անձը՝ և թող համայն հայութիւնն իմանայ թէ ասկէ աւելի անսպաստ ընտրութիւն կրնա՞ր ըլլալ։ Իւթիւնեան եօթանասուն տարեկան, ֆիզիքապէս անկարող և բոլորովին անհամապատասխան իր ծանր, պատասխանատու պաշ-

տոնին անձ մ'ը. այս անձը ի՞նչ պիտի լնէ, զիտէք. Պօլսոյ 45
գպրոցները պիտի այցելէ շարունակ, ուսուցչաց և հոդաբար-
ձութեանց վրոյ պիտի հսկէ, դաւառաց վարժարանաց բա-
րեկարգութեան հրահանդ պիտի տայ և այն և այլն. Աս-
տուած ողորմի այս ազգին: Նուրեանի մէկ ուրիշ նշանաւոր
զործն ալ եղաւ Ներսէսի ուսերիմ թշնամին՝ Փափաղեանը
Գումագարուի կեղրոնական Ուսումնարանին տեսուչ կարդելը:
Եյս պաշտօն առաւ Ստեփան Փափաղեան ի փոխարէն իւր
հալածանաց զորս ի զործ դրաւ տարիներով և զորս կը շա-
րունակէ գերեզմանին մէջ իսկ՝ ընդգէմ երջանկայիշատակ
Ներսէսի. Փափաղեան կատաղութեամբ յարձակուեցաւ նաև
Նուրեանի վրայ, և պարծենալով կ'ըսէր թէ՛ Աւրծաղէ՛ նո-
րւան պիտի սորիպուէ ի՞ն բերանո սոէր ճը նէրէւ որպէս զի լուէն.
և յիրաւի՛ Նուրեանն որ բացէ ի բաց կը յայտարարէր թէ՛
կը վախնայ Փափաղեանի չարութիւններէն (չարերն իրար
լաւ կը կշռեն) լաւ իւղոտ, ուղղալիր ոսկոր մը նետեց Փա-
փաղեանի բերանը և իսպառ լուցուց զնա: Թէ ի՞նչ արժա-
նիք ունի Փափաղեան մանկավարժութեան մասին՝ զայն ևս
յայտնենք կարծառօտ: Եյս մարդ քսան տարի Ղալաթիոյ
վարժարանին մէջ իբրև տեսուչ և դասատու հայերէնի պաշ-
տօն վարած է առանց արդեանց, Ղալաթիոյ հռչակաւոր ճնա-
խը կազմակերպած է, ամեն պատրիարքի գարանակալ ա-
մեն առաջնորդի խոչընդունութեան եղած է իւր անձնական շա-
հուն համար միայն: Վերջապէս երբ Ներսէս պատրիարքէն
արտաքսուեցաւ Ղալաթիոյէն և ճնախն ալ քանդուեցաւ՝ Փա-
փաղեան սկսաւ ութ տարիէ ի վեր վայրահաջութեամբ միայն
պարապել թափառական և նոր ապազյի մը հիմերը գնել՝
միշտ հայհոյելով Ներսէսի, անոր թշնամիներն որոնելով, ա-
նոնց հետ գաշնակցելով՝ մինչեւ որ դառաւ զնուրեանն, որ Ներ-
սէսի օրով պարսաւանաց քուէ առնելով՝ ծակամուտ եղած
էր, և անոր մահուան կսպասէր զլուխը գուրս հանելու հա-
մար: Եւ այն Փափաղեան որ կենաց մէջ մանկավարժական,
զրական, գիտնական զրուած մը, թերթ մը ձեռք չէ առած,
մէկ ժամ, կէս ժամ ուսումնասիրութիւն չէ ըրած՝ ազգին,

զիտութեան, գրականութեան մարդկային անհատական արժանապատութեան սիրոյն համար՝ այն Փափաղեան ահա Կեղրոնական Բարձրագոյն Ուսումնարանի տնօրէն կ'ըլլայ իւր դաշնակից նուրեանի ձեռօք:

Անշուշտ պիտի հարցանէք թէ այս ամեն անկարգութեանց մէջ պատրիարքն ի՞նչ կ'ընէ, պատրիարքը պահ մը կոռուել յիտոյց, տեսաւ թէ պիտի չկրնայ գլուխ ելնել՝ մտաւ Նուրեանի և Փափաղեանի գրտանը, ձայնը քաշեց և նստաւ: Շատերն շատ բան կ'ըսեն այդ անձին համար. կ'ըսեն թէ ազգատեաց է, ուսումնատեաց է, բայց ես ադոր հակառակը կը պնդեմ: Յարութիւն Ա. պատրիարքը, շատ ազգասէր, վերջին աստիճան կրօնասէր, ուսումնասէր մարդ մ'է. իրէն քով պակսածը վարչապետի մը ազգու, անկախ ողին է, որ մեծ քանակութեամբ կը գտնուէր ներսէսի քով:

Կը տեսնես, բարեկամ, որ մեր տաճկահայոց ներքին զործերը խիստ ողորմելի վիճակի մէջ են: Աւելցուր ասոր վրայ այս աւարուան մէջ պատահած մէծ հրդեհներն, որ ամբողջ Զէյթուն և կ. Պօլսոյ բազմահայ մէկ թաղն իւր եկեղեցովն ու հինօրեայ վարժարանով մօխիր գարձուց, բարդէ ասոր վրայ նաև փոքր և մեծ հայաստանի ամեն կողմեր արրող երաշտութիւնը, չքաւորութիւնը, սովի երկիւղներն և սովո՞ւ և ահա ճշգրիտ պատկեր մը կունենաս մեր վիճակին:

Իբրև մի այլ հետեւանք մեր տնտեսական, վարչական անկեալ վիճակին, գրականութիւնն ալ ողորմելի կերպարանք մ'ունի: Հակառակ բանդագուշանաց բազմածանոթ թեթևամասի մը (Գ. Ապոնն), որ կը յաւակնի զենք մերթ Պայրընի, մերթ Կէօթէի և Հիւզոյի համեմատել և այս տղայական տենչանօք ամիսն հատորի մը չափ թուղթ մրուտել՝ մեր գրական երակը տակաւին չը գտնուեցաւ: Էստ իս այս երակը, այս աղբիւրը պիտի չգտնուելի, մինչև որ մեր երկրին տնտեսական վիճակը չբարւոքի, մինչև որ նոր, լուրջ սերունդ մը չկաղմուի՝ աւելի յուսով պարարուած, աւելի լուսով ողողուած:

Արքա-էր.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՀԱՅԳՈՒԹԵԱԼ ՌԱՖՈՒԻ ԱՍՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ)

Այդ ախտաբորբոք ոգեսորութեամբ
Պատանի հւր ես գու յափշտակուած,
Արգեօք դէպի երկինք քո միտք սրաթռիչ
Ցեթերս ճախրելու կոչում է Աստուած:

* * *

Հրեշտակաց հետ հրձվում ես գու,
Եւ մոռացել ես քո բոլոր շրջան
Քո հոգեղուարձ այդ ցնծութիւնը
Չունի բնաւ վերջ ու ոչ իւր վախճան:

* * *

Այդ ոսկի ժամուց բոպէք սրբազան
Այդ խորհրդական զբաղմունք հանդարտ,
Արհամարհանօք ծաղրում է խուժան,
«Չունի ասում է, դա նախանձ կամ դարտ»:

* * *

«Տե՛ս, որքան անհոգ, յիմար է այս մարդ,
Թէև նա չունի հաց և ապրուստ:
Արբուած է միայն իւր ցնորքներով,
Եւ թափառում է մերկ և անհագուստ»:

Բայց գոհ է քո սիրտ աշխարհի փառքէն,
Քեզ չէ հրապուրում կեանքի ճոխութիւն.
Եւ ոչ հարստի մամանի սէրը
Դառնացնում է քո աղքատութիւն:

* * *

Դու նուիրուած ես քո ազգի օդտին,
Եւ նորա շահուն, հաստատուն ուխտով,
Զոհել ես նորան քո կեանք և վաստակ,
Բոլոր զյութեամբ և քո չար բախտով:

* * *

Իսկ այդ սրբազնն զոհաբերութիւն
Խնչով վարձատրեց ազգը քո պաշտօն,
Նա զրեց արդեօք որ և իցէ գին
Քո անգին զոհար խօսքերուդ զգօն:

* * *

Ո՞չ... հայհոյեց քեզ այն ապերախտը,
Զլացաւ յարգանք և ոսկու քսակ,
Քո անզուզական ճգանց փոխարէն,
Կապեց ճակատիդ նա փշեայ պսակ:

* * *

Արհամարհելով ռամկի չարութիւն,
Դու վրէժիննդիր չեղար բանասեղձ,
Քո քնար հնչեց գարձեալ քաղցրաձայն,
Երդեցիր քո երդ անաշառ, անկեղծ:

* * *

Թշուառ է, պօէտ, քո կեանքը անգին,
Դու նմանում ես խեղձ թիթեռնակին,
Որ, սիրահարուած լուսով ճրագին,
Այրում է թեքեր, փչում է հողին:





ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Արքա»-ը միշտ իւր սրտին մօտիկ ունենալով հայութեան ու հայաստանին վերաբերեալ խնդիրները, ամեն ժամանակ աշխատել է մանրամասն կերպով հազորգել հայի ներքին կեանքում կատարուած նշանաւոր դէպքերի և փոխոխութիւնների մասին, որքան հանդամանքները այդ թղյլ են տուած եղել սակայն, գժբաղբաբար, այս անդամնա՝ իրանից անկախ պատճառներով չկարողացաւ իւր ժամանակին ընթերցող հաստրակութիւնը ծանօթացնել տաճկահայի կեանքում տեղի ունեցած մի շարք կարեոր և ծանրակշիռ իրողութիւնների հետ, որի պատճառով էլ այժմ նա ստիպուած է աւելի քան կարձառօս խօսել այդ խնդիրների մասին, մանաւանդ որ «Արքա»-ի սոյն զրքի անսովոր մեծութիւնն ու շափից աւելի ծաւալը չեն ներում գոյա մասին ընդարձակ կերպով յիշատակել որպէս այդ ցանկալի էր: Համաձայն մեր այս մտադրութեան այստեղ կ'արձանադրենք լոկ փաստերը, որոնք տեղի ունեցան անցեալ 1894 թ.-ի վերջին ամիսներում և նորանից յետոյ, սոյն ներկայ տարում:

Օրէցօր գաւառներից և կեղրոններից հասած լուրերը աւելի և աւելի տիսուր ու տագնապալից էին գառնում; Հայ ժողովուրդը ամեն տեղ ծանր և խսկապէս անտանելի վիճակի մէջ էր տաճկական բռնութիւնների և հարստահարութիւն-

ների երեսից, գրութիւնը կրիտիկական էր. Սասունը արեան ու կրակի ծով էր դարձել հազարաւոր անմեղ մարդիկ թըրքական ու քրդական անյագ սրին զոհ էին գնացել տասնեակ շնչ գիւղեր աւերակ ու ամսյի էին դարձել կրակի մատնուել շատ գաւառներ իրանց բնակիչներից զրկուել ու գատարկուել էին անվերջ գաղթականութեան շնորհիւ. ամեն կողմ տիրում էր յուղում, իրարանցում. ամենուրեք յուսահատութիւն, ծանր ճգնաժամ էր նկտուում: Կառավարութիւնը իւր սև և պատմութեան մէջ յաւէտ իւր անուան անջնջելի արատ դարձող եղեռնագործութիւնները և գժոխսյին գաղանութիւնները ծածկելու և լարուած մաքերը մի քիչ խաղաղցնելու համար թոյլ տուեց Ազգային ժողով գումարել և պատրիարքական ընտրութիւն կատարել Ազգ. Սահմանագրութեան արամագրութեան շնորհիւ, Սահմանագրութեան, որ՝ շնորհիւ նախկին ազգագաւ և պետութեան գործիք դարձած պատրիարքի՝ բոլորովին ոսնատակ էր արքուած և ոչնչացրած: Տիրահռչակ և իրանց պաշտօնից հալածուած ազգամաս էֆէնտինների տեղ անցնող ժողովորդի ցաւերին ծշմարիտ կարեկից ու հոգատար և նորա իսկական ներկայացուցիչ ընտրելինների միջոցով՝ ձայնների բացարձակ բազմութեամբ պատրիարքական գահ է բարձրանում՝ բուռն պահանջների և սպառնալիքների ազգեցութեան տակ ակամայ տեղի տուող և հեռացող Աշղեանի փոխարէն՝ տաճկահայ հոգեւորականութեան արժանաւորագոյն ներկայացուցիչ սրբազն Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեան, որի մանրամասն կենսագրութիւնը՝ այլ կարեւոր տեղեկութիւնների հետ միասին՝ «Արաքս»-ը առաջինն էր որ տուեց արդէն իւր ժամանակին ընթերցող հայ հասարակութեանը: Գործունեայ, անշահալաղիր, հեռատես և կորովամիտ պատրիարքի առաջին գործն է լինում բարձրացնել իւր նշանակութիւնն ու ազգեցութիւնը կորցրած պատրիարքական պաշտօնը թէ՛ իւրայինների և թէ՛ օտարների աչքում, և արդէն շատ շուտով մենք տեսնում ենք, որ նա ամենի ուշագրութեան և համակրութեան առարկան է դառնում: ամբողջ հայ ժողո-

վրդի սէրն ու հաւատն է զրաւում դէպ ինքը իւր արդիւնաւոր և աղջօվուտ ձեռնարկութիւններով զրացի ազգերի նախանձն է շարժում իւր անկեղծ և անդրդուելի գործունէութեամբ, իսկ եւրոպացիների հիացման և յարդանքի առարկան է լինում իւր անկաշառ և անվհատ բնաւորութեան շնորհիւ և արժանանում է «Երկար պատրիարք» բարձր անուան: Վերանորոգուում են պաշտօնական և բարեկամմական յարաբերութիւնները օտար պետութեանց ներկայացուցիչների և դեսպանատների, օտար եկեղեցիների և դաւանութեանց հոգեւոր պետերի հետ ամեն աեղ պատրիարքը ընդունուում է մեծ պատուով իրրե հայ ազգի զլուխ: Անմիջական յարաբերութիւններ են սկսուում պատրիարքարանի ու գաւառների մէջ, ամեն կողմերից մանրամասն տեղեկութիւններ են թափուում զաւառացի ժողովրդի թշուառ վիճակի մասին, հանուում են փոշու տակից տարիներով պատրիարքարանում հաւաքուած և անուշագրութեան մատնուած թղթերն ու բողոքագրութիւնները, և այդ բոլորի հիման վերայ խմբադրուում է հայ ժողովրդի իրապէս զառն, անելանելի ու հալածուած դրութիւնը բովանդակող մի տեղեկագիր, որը ներկայացուում է տածիկ կառավարութեան և եւրոպական դեսպանութիւններին և որի հետևանքը՝ եւրոպական միջամտութեան աղջեցութեան տակ՝ լինում է տածկական բանտերը և աքսորավայրերը լեցնող հազարաւոր անմեղ հայերից մի խումբ հոգեւորականների և ապա աշխարհականների հետզհետէ աղատարձակուելը:

Սակայն Բ. Դուռը չէր կարող հաշա աչքով նայել այս բոլոր գործողութիւններին, որոնց միակ նպատակն էր հայ ժողովրդի համար ձեռք բերել ապահով և անդորր վիճակ կանոնաւոր ղարգացման համար. նա տեսաւ, պատրիարքի գործունէութեան ազդեցութիւնը նորա օրէցօր աւելի և աւելի սթափուող և կենդանութեան նշաններ ցոյց տուող հօտի վերայ. նա պատրիարքի անձնաւորութեան մէջ գտաւ իւր շահերին խիստ վտանգաւոր և վնասակար մի մարդ, որի հետ չի կարելի խաղ անել, ինչպէս նորա նախորդի հետ: Նա սկսեց

միջոցներ որոնել պատրիարքի գործունէութիւնը կաշկանդելու, չզգոքացնելու համար, ամեն տեսակ որոգայթներ լարեց նորա գէմ, հնարներ սարքեց, արգելքներ հանեց, բայց երբ տեսաւ, որ պատրիարքը իւր հեռատեսութեամբ և խորագիտութեամբ այդ բոլորը ոտնատակ տուտ և տնյաւ առանց ընկճուելու, փորձեց ազգի մէջ երկպառակութիւն ձգել մի քանի սզգավաճառ և տիկարամիտ եկեղեցականներ իրան գործիք գարձնելով որոնք այն ժամանակ, երբ հայկական խրնդիրը դիպլոմատիայի օրուայ հարցն էր գարձել երբ տաճկահայի ապագան էր վճռուելու, երբ հասարակաց շահը և հանգամանքները պահանջում էին միաբան և համերաշխ գործակցութիւն յօգուտ ընդհանուր հարցի, — կուրացած փառասիրութեամբ և անձնական շահերով, յանդկնեցան հայի արիւնը քամող և նորան հայաստանից բնաջինջ անելու ձգտող տաճիկ կառավարութեան բողոքել Կիլիկիայի Մկրտիչ կաթուղիկոսի մահուամբ թափուր մասցած դաշի համար օրինաւորապէս ընտրուած արժանաւոր և յառաջադէմ հոգեորական Գրիգոր եպիսկ. Ալէաթձեանի ընտրութեան դէմ, ամբաստանել իւր հօտի անձնուէր պաշտպան սրբազն պատրիարքին իբրև յեղափոխական, այն պատրիարքին, որի շնորհիւ միայն մի քանի օր առաջ կարողացել էին թրբաց բանաերի մութու ապականուած խորշերից գուրս դալ և ազգի կողմից փառաւոր ընդունելութիւն գտնել և այլ մէկը միւսից ծանր զըպարտութիւններ և դատապարտելի քայլեր կատարել: Ասկայն այս մէծ փորձութեան առաջ ևս անցողգողդ պատրիարքը ընկրկեց, չըխոնարհուեց. իրաւ է, նա ունեցաւ ծանր, մայշյղ ըստէներ, բայց նա. մի վայրկեան անզամ չըուարեց և իւր հեռատես ու խոհուն քաղաքականութեամբ կառավարութեան վերայ արած արտօաքին ազդեցութեան շնորհիւ կարողացաւ խաղաղ ծանապարհով ի չիք դարձնել թ. Դրան և իրանց ծակատի վերայ դաւաճանի անարդ կնիքը կրող հոգեռականների մեքենսցութիւնները և դաւելը:

Մինչ այս, մինչ այն, երբ ամեն օր միմիանցից տարբեր և յաճախ հակասական լուրեր էին հասնում երեք պետու-

թեանց Ռուսիայի, Անդիսիայի և Ֆրանսիայի կողմից Տաճկա-
չայաստանի Համար Բ. Դրան առաջարկած բարենորոգու-
թեանց ծրագրի ընդունելութեան և զործադրութեան մա-
սին, գաւառացի ժողովուրդը օրհասական կոիւ էր մղում
խստութեամբ վերայ հասնող սովի և անվերջ յափշտակու-
թիւնների դէմ, յափշտակութիւններին, որոնք անարդել շա-
րունակուում էին՝ չնայելով եւրոպական քննիչ յանձնաժո-
ղովի հայաստանում լինելուն: Սրբազն պատրիարքը բերա-
նացի թէ գրաւոր հրաւէր է կարգում բոլոր աղղայիններին՝
օգնութեան հանելու իրանց կարօտեալ և սովամահ եղայր-
ներին: Ամեն կողմ պատրիարքի հրաւէրը արձագանք է զգտ-
նում՝ չնայելով տաճիկ կառավարութեան հակամարդկային և
անարդ վարմունքին, որովնա սկսեց արգելքներ և խոչնդուներ
դէմ հանել այս մարդասիրական գործի—հանգանակութեան
դէմ: այսու ամենայնիւ պատրիարքարանը կարողացաւ ըստ
կարելոյն օգնել անտուն, անտէր, քաղցածութիւնից մեռ-
նող գաւառացիններին, թէև նպաստի և օգնութեան պաշան-
ջը համեմատաբար խիստ մէծ է լինում: Այս ամենի հետ
միասին՝ սրբազն պատրիարքը չի մոռանում հոդալ և ընդ-
հանուր տաճկահայ հոգեւորականութեան վիճակի բարւոք-
ման և ուսումնարանների գրութիւնը բարձրացնելու մա-
սին՝ հիմնուելով Սահմանադրութեան վերայ ու նորա հա-
մեմատ ուղղելով իւր գործունէութիւնը, իւր ձեռնարկու-
թեանց պատուանդան ունենալով ազգը, նորա համակրու-
թիւնն ու սէրը:

Եյստեղ ընդհատելով մէր խօսքը՝ հարկաւոր ենք համա-
րում աւելացնել, որ եթէ մի բոսէի ինկատի առնենք այսքան
կարծ ժամանակում կատարուած բոլոր եղելութիւնները, զար-
մանքով պէտք է տեսնենք, որ տաճկահայը այս վերջի մի
քանի տարում մէծ յառաջադիմութիւն գործեց աղղային ինք-
նաձանաչութեան, զիտակցութեան տեսակէաից և անշուշտ
ողէտք է ձգտել այդ զգայմունքը—զիտակցութիւնը միշտ
վառ և կենդանի պահել ու զարդացնել:

Մեր «Ընդհանուր պէսութիւնն» մէջ արդէն ընդհանուր կերպով յիշեցինք Սասունի կոտորածի և աւերածութիւնների մասին. այստեղ ուղղում ենք այդ և այլ մի քանի տեղերում կը բինուած նման տիսուր անցըերի վերաբերմամբ մի քանի կարեոր տեղեկութիւններ հաղորդել անցըեր՝ որոնք անպատճե կերպով գործուեցան թիւրք կառավարութեան ձեռքով և, կարելի է ենթադրել կը կրկնուեն գարձեալ եթէ րոպէ առաջ եւրոպական միջամտութիւնը հայկական բարենորոգութեանց ծրագիրը իրագործելու և հայերին ապահովելու համար վը ձռական միջոցների չղիմէ:

Թիւրք կառավարութեան վերջին տարիներում դէպի հայերը բռնած ընթացքը շատերին տեղի էր տուել կարծելու, որ նա վճռել է հետեւել մի քաղաքականութեան, որի նպաստակն է հայերին ոչնչացնել հայաստանից և դրանով վերջ գնել անդադար իւր մեռելային հանդիսար վրդովող հայկական հարցին: Բայց շատերն էլ, որոնք ծանօթ չեն Բ. Դրան դործունէութեան, կասկածանքով էին վերաբերուում այդ կարծիքին, չկամենալով հաւատալ որ մի տէրութիւն, որը իւր դոյութիւնը պահպանում է համարեա միայն այդ աշխատասէր ժողովրդի ճակատի քրածինքով, անհաշիւ տուրքերով և չափից դուրս հարկերով կարող էր մի այդպիսի հրէշաւոր միտք յղանալ և յղանալուց յետոյ էլ՝ զեռ ևս իրագործել: Սակայն վերջին երկու տարուայ ցաւալի դէպերը եկան հաստատելու ժանր ճշմարտութիւնը: Հաղիւ թէ մըտքերը մի քիչ հանգստացել էին Սեբաստիոյ տեղի ունեցող արիւնաշեղ յուղութերից յետոյ որոնց հետեւանքն եղաւ տասնեակ անմեղ հայերի գլխատուելը, աքսորուելը, կամբերդարգելութեան դատապարտուելը, թիւրք կառավարութիւնը ձեռնարկեց վերջնականապէս ի գլուխ բերել մի զաղանային զիստաւորութիւն ևս, որը իրագործելու համար մի քանի անդամ կատարած փորձերը անյաջող էին անցել—այն է սրի և հուրի միջոցաւ Ճնշել, սորկացնել Սասունի լեռներում նահապետական ազատ կեանքով ապրող մի բուռ քաջ հայերին: Իւր այս մտագրութիւնը իրագործելու համար՝

պատրուակ բռնելով հայերի և քրդերի մէջ պատահած մի փոքրիկ սովորական ընդհարումը, թ. Դուռը հրաման է արձակում Դ.դ զօրաբանակի հրամանատար Զէքըի փաշային, Բաղէցի կուսակալ Թահսին փաշային իրանց զօրքերով և թնդանօթներով,—որոնց հետ միանում են շրջակայ քիւրդերը՝ հրապուրուած զանազան վարձատրութիւններով և խոստումներով,—յարձակուել անխնայ կերպով Սասունի վրայ: Սասունցիք իմանալով թշնամու միտքը հաւաքուում և իրանց զիւղերի կողմից ներկայացուցիչներ են ուղարկում կառավարութեան՝ հասկացնելու համար, որ իրանք թուրքաց կառավարութեան հաւատարիմ հպատակներն են: Թիւրքերը նոյա բոլորին չարաչար տանջելուց և նոյա վրայ ամեն բռնութիւններ գործելուց յետոյ՝ անասելի միջոցներով նոյա սպանում ու կոտորում են: Ապա սկսում են իրանց համարձակ արշաւանքը Սասունի զիւղերի վրայ: Նոյա ձեռքն անցած ոչ մի անձ կենդանի չէ մնում.—տղայ, աղջիկ, ծեր թէ մանուկ հաւասարապէս զոհ են գնում տաճկական անլուր գաղանութիւններին և խմգժութիւններին, սրի պակաս թողածը հրացանն է լրացնում, իսկ երկուսի պակասը կրակը մարդիկ կենդանւոյն կրակի մէջ են ձգուում, ամբողջ զիւղեր կրակի են մատնուում: Լեռնային հայերը աշխատաւմ են իրանց լեռների անառիկ և անմատչելի վայրերը փախչելով՝ ազատուել թշնամու ձեռքից, բայց այստեղ ևս նորա հանդիսա չեն գտնում: Թշնամին ըրս կողմից պաշարում է նոյա. սկսուում է երկու կողմից կոխւը: Հայերը քաջարար պաշտպանուում են. նոքա առանց սեռի և հասակի խտրութեան երգուում են մինչեւ վերջին բոսկէն դէմ զնել թշնամուն և թոյլ չոտալ մահմետականներին իրանց պապերի աղատ երկիրը պղծելու: Բայց հայերի վեճակը կրիտիքական է դառնում, երբ ստիպուած են լինում մաքառել և՝ սովի դէմ, որովհետեւ ամեն կողմից կտրել էին նոյայարաբերութիւնները մերձակայ զիւղերի հետ, որտեղից նոքա կարող էին ուտելիք և այլ պաշարներ ստանալ, իսկ իրանց ունեցածն էլ արդէն սպառուել էր: Վերջին անդամ նոքա նետուում են առաջ հաստա-

տապէս որոշելով մեռնել կամ ազատուել սակայն սօվը կատարում է իւր գործը. թշնամին տանում է յաղթութիւնը, շատերն ընկնում են կռուի գաշտում, մնացածներն էլ կամ դերի են տարուում թշնամու բանակը կամ նորա վրէժինդրութեան զոհ դառնում, իսկ մի չնչին փոքրամասնութիւնն էլ ցրուում է շրջակայ անմարդաբնակ և ամայի վայրերը ապաստարան գտնելու, որոնց մէջ է լինում և այս կռուի հերոս՝ գաղափարական երիտասարդ Մուրադը իւր արի եօթն ընկերներով, որոնք ևս արիւնահեղ կռուից յետոյ իրանց առաջնորդի հետ միասին թշնամու ձեռքն են ընկնում յանկարծական կերպով, երբ մի այրում ապաստանած ուտելիքի էին սպասում:

1894 թ.-ի օգոստոսի 13-ն էր երբ այս դադանային գէպքը տեղի ունեցաւ: Թիւրք կառավարութիւնը հասած էր իւր նպաստակին. այլ ևս Սասունի լեռների վրայ չէր իշխում նորա ազատ որդիների ազատ, անկախ ոգին, ոչ մի տեղ չէր երեսում կենդանութեան նշոյլ տասնեակ զիւղեր այրուած, վարուցանքը աւերուած, հաղարաւոր բնակիչներ սրի և կրակի մատնուած, ամէնուրեք տիրում էր արհաւերք ու սոսկում: Եւ Բ. Դուռը այս րոլոր գաղանութիւնները ու շարիքները անմեղ սասունցիների գլխին թափելուց յետոյ, գեռ անամօթաբար քաջութիւն ունեցաւ համայն լուսաւորեալ աշխարհի առաջ յայտնելու, որ սուլթանի կառավարութիւնը «միայն խանգարուած կարգն է վերականդնել»: Սակայն չնորհիւ մերձակայ եւրոպական հիւսպատուների իրանց պետութիւններին ներկայացրած զեկուցագրերի և եւրոպական մարդասէր ու ազգեցիկ զանազան թերթերի անվեհեր և յանուն ճշմարտութեան գործող թղթակիցների, — որոնց մէջ չենք կարող յատկապէս չյիշել Daily Telegraph-ի անմռուանալի թղթակից յարգելի պ. Դիլոնին, որ չնայելով թիւրք կառավարութեան եւրոպացիների գէմ յարուցած զժուարութիւններին ու արգելքներին, ամէն վտանգ յանձն առնելով՝ մտաւ հայստանի խորքերը, ուսումնասիրեց այն երկիրը, որ պատահել էին այդ անօրինակ գաղանութիւնները, — ինդիրը պարզուեց և քաղաքակիրթ եւրոպան մար-

գասիրութիւնից շարժուած, առանձնապէս Անդլիան, ձայն բարձրացրեց յօգուատ մի ընդունակ, բայց հալածուած ժողովը իր, որ այդ բոլոր զօկանքները կրում էր մահմետականներից իւր քրիստոնեայ լինելուն պատճառով, և մինչև իսկ շապասելով երեք մեծ պետութիւնների Ռուսիայի, Անդլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներից և տաճկաց հառավարութեան կողմից նշանակուած անձիրեց բաղկացած Քննիչ Յանձնաժողովի վերջնական եղբակացութեան,— Յանձնաժողովի որի գործունէութիւնը Բ. Դուռը ամէն կերպ ձգաեց այնպիսի պայմանների մէջ պահել, որպէս զի վկայութիւնները և ցուցմունքերը յօգուատ իւր լինին, թէե այս դէպքում, ի մեծ ցաւ իւր, այդ չյաջողուեց և վերջ ի վերջոյ դարձեալ Ճշմարտութիւն վերահաստատուեց,— վերցիշեալ երեք պետութիւնները Բ. Դրան առաջարկեցին Հայաստանի համար բարենորոգութեանց ծրագիր, դորան հիմք առնելով Բերլինի վեհաժողովի 61-ր յօգուածը: Բ. Դուռը՝ իւր աւանդական քաղաքականութեան համեմատ՝ օգտուելով պետութիւնների մէջ Հայկական հարցի առթիւ նկատուած քաղաքագիտական հակառակ շահերից և ընդհանրապէս նոյա դէպի իրար ու բարակ բանակցութիւններ յօրինելով՝ քննացնել բարենորոգութեանց ծրագիրը ընդունելու և իրագործելու խնդիրը, որի ընծումից կախուած էր Հայ ազգի ապագան: Այս բաւական չհամարելով՝ միւս կողմից շարունակում էր նա իւր ոչնչացնող քաղաքականութիւնը, և ահա մի զինուորականի Կանաչի մօտ (Երվնկայից քիչ հեռու) աւաղակների կողմից կրած յարձակումը և սպանութիւնը հոյերին վերագրելով, զօրքերով, և թնդանոթներով, որոնց հետ դարձեալ միանում են թիւրք մոլեսանդ ամբոխը և քիւրդերը շոջապատում են Երվնկան, Կամախը և գոյա շուրջը գանուած վանքերն ու գիւղերը. Եկեղեցիներն ու վանքերը պղծում են և աւերում, նոյա հարստութիւնները յափշտակում, բնակիչներին կողոպտում, տանջում և չարչարում, իրանց սովորական անլուր միջոցներով կանանց ու աղջկերանց բռնաբարում, իսկ շատերին տեղն.

ու տեղը կոտրում; կամ ծանր շղթաներ վզները ձգած բանտերի մութ ու խոնաւ անկիւններն են նետում; Հարիւրաւոր անմեղ հայեր լցնում են բանտերը առանց որևէ է քննութեան, առանց պատճառի: Մինչ դեռ եւրոպան ստական օրօրներին հաւատացած շարունակում էր իւր անվերջ բանակցութիւնները և լոկ խօսքերով ու խոստումներով յոյս էր տալիս արդէն յուսահատ և օրհասական կոիւմզող հային, այս կողմ թիւրք կառավարութիւնը՝ հայկական հարցի վճիռը դանելով հայերի ոչնչացման մէջ՝ համարձակ կերպով զիմում էր իւր նպատակին, մինչև որ վրայ էր հասնում Պօլսի մեծ արիւնահեղ ցոյցը (Սեպտեմբ. 18-ին 1895 թ.), երբ Պօլսի հայերը այլ ևս չկարողանալով զիմանալ աիրող կարգերին և անիրաւութիւններին, վճռում են զիմել թ. Դուռը և պահանջել իրանց վիճակի բարերումն: Բ. Դուռը ոստիկանութեան միջոցաւ արգելում է նոցա իրանց պահանջը ներկայացնելու. տեղի է ունենում մեծ ընդհարում ոստիկանութեան և հայերի մէջ, որի ժամանակ երկու կողմից շատերը սպանուում են և վերաւորուում: Ցոյցերը շարունակուում են մի քանի օր: Զօրքին միանում է և թիւրք ամբոխը. Հայերը անխնայ կոտրուում են, իսկ շատերն էլ ձերբակալուում և բանտարկուում առանց որևէ է յանցանքի և քննութեան: Ամբողջ Պօլսը տակն ու վրայ է լինում; ամեն կողմ աիրում է ահ ու սարսափ: Հայերը իրանց կեանքը փրկելու համար լցուում են եկեղեցիներն ու պատրիարքարանը:

Պօլսի գէպքը կրկնուում է և գաւառական զտնազան կենարուններում և այս բոլորի հետեանքը այն է լինում; որ երեք պետութեանց զեսպանները խիստ կերպով պահանջում են թ. Դռնից ընդհանուր կարգը վերականգնելու և բարենորոգութեանց ծրագիրը ընդունել: Ահա՝ այդ խիստ պահանջների և սպառնալիքների առաջ միայն Սուլթանը և թ. Դուռը տկամայ համաձայնեցին ընդունել և դործադրել առաջարկած բարենորոգութեանց ծրագիրը:

Լոնգոնից երկաթուղիով 4½ ժամ հեռու է գտնվում Չեսթը քաղաքը, որի քաղաքապետութեան ապարանքի (Town Hall) մէջ տեղի ունեցաւ օդոստ. Յին երեքշաբթի օր հայերի համար եղած միթինկը, Ուչստմինիստրի զքսի նախադաշտութեամբ:

«Daily News» լրադիրը զբումէ թէ պ. Գլադստոնը յատկադէս պահանջած էր, որ սովորականից փոքրիկ ժողովասրահ բռնեն, որպէս զի իւր ձայնը լսել տալու համար շատ չը նեղուի: Եյդ պահանջը զժուար կացութեան մէջ էր զրել կարգադիր յանձնաժողովը, որ ստիպուած էր մերժողական պատասխան տալ Անգլիայի զանազան կողմերից իրեն զիմող և միթինկին ներկայ գտնուելու համար մուտքի տոմսակ խնդրող հազարաւոր անձանց: Երկու երեք և մինչեւ անգամ իսկ հինգ անգլիական ոսկի տուողներ գտնուեցան այնտեղ, որ մէկ մուտքի տոմսակ ձեռք ձգեն. բայց ի զուր. տոմսակ ունեցողները չէին ուղրում զրամի հետ փոխանակել միթինկին ներկայ գտնուելու և պ. Գլադստոնի ճառը լսելու բաղկաւորութիւնը: Շատ հեռու տեղերից եկածներից ոմանք յուսահատուած յարձակուեցան վերջապէս իրենց աղաջանքներին չը լսող գունապանների վրայ ու ուժով ներս մտան զոնէ գումարի մէջ կանգնելու համար:

Երբ պ. Գլադստոնը ներս մտաւ սրահը Ուչստմինիստր զքսի, Չեսթըրի և Էքքֆորդի եպիսկոպոսների, Լորդ Քէնիրի և իրեն հրաւիրակ գնացած Հ. Ս. Պարոնեանի և ուրիշ անձերի հետ մէկ տեղ, ամբողջ ժողովը մէկ մարդու պէս ուղքի վրայ կանդնեցաւ իսկոյն և ամենամեծ ոգերութեան ցցցեր անելով ծափահարեց: Ուչստմինիստրի գքսուհին արկին Գլադստոնի հետ մէկ տեղ սրահը ներս մտաւ. Նրանց յետեւից եկան հաւարդընի երեցը՝ պատ. Ստեփան Գլադստոնը և իւր տիկինը, պ. Ներքերտ Գլադստոնն, պ. Նարբի Օրէփօն և իթըն Հօլի ու հաւարդընի մարզիկը: Երկու սեռից էլ այնչափ բազմութիւն էր լցուել սրահը, որ պարապ նստարան չը գտնելով շատերը սահմուած էին սաքի վրայ կանգնել:

Պ. Գլադստոնը քայլելիս ձեռնացուպի վրայ էր կրթնում, բայց չը նայելով իւր 86 տարեկան հասակին, շատ քաջառողջ էր երեւում: Երբ ուրիշները ճառում էին, պ. Գլադստոնը

Հանգարառութեամբ նայում էր նրանց և Ուշտմինիսարի զքսի խոսած ձառի զանազան մասերին իւր հաւանութիւնն էր ցոյց տալիս զլուի շարժումներով:

20-ից աւելի լրագրների թղթակիցներ շարուել էին բեմի առաջ, երբ ժամի 3½-ին ատեանը բացեց Ուշտմինիսարի զուքը իւր ձառով: Թղթակիցները շուտ շուտ սղազրում էին խօսուածները և ամեն մէկը 5 վայրկեանից իրենց զրածը հեռադրատուն էին ուզարկում յատուկ պաշտոննեյների ձեռքով: Բեմի վրայ նախագահի աջ կողմը բազմել էր պ. Գլագսառնը, իսկ ձախ կողմը Զեսթըրի եպիսկոպոսը: Բեմի վրայ էին նաև զեր. Ս. Վ. Պարոնեան, իբրև հայ ազգի ներկայացուցիչ նաև մի հայ վաճառական:

Ուշտմինիսարի զուքը յայտնեց թէ համակրական նամակներ է սատացել մեծ. Ջէյմս Բրայսից և պ. Երպուրիկից, որոնք ցաւ էին յայտնում միթինին ներկայ գտնուիլ ըլ կարողանալու համար: Խորհրդարանի անդամ պ. Ջէյմս Բրայսը, որ Էոնդոնի անվո-հայկական ընկերութեան հիմնադիրն է եղած, զրած էր հետեւեալը.

«Նատ ցաւում եմ որ ստիպուած եմ Լոնդոն մեալ «Ռոյլ Քըմիլը»-ի միթինիի պատճառով, որի նախագահն եմ: Հետեւապէս անկարելի է ինձ ներկայ գտնուիլ Չեսթըրի մէջ ձեր նախագահած միթինդին, ուր նկատողութեան պիտի առնուի հայկական խնդրի ներկայ վիճակը: Այդ խնդիրն այս բողէիս իւր ամենատագնապալի մէկ շրջանի մէջն է: Ոչ միայն հայաստանի հայերին, որոնց ոչնչացնել ինչպէս երկիւղ կայ, որոշել են թիւրքերը, եթէ իրենց թոյլ արուի, այլ և ամբողջ Արեւելան Թիւրքիայի վրայ գտնուած քրիստոնեաց ժողովրդի ապահովութիւնը վասնդի մէջ է: Եւրոպական աշրութիւնները և մասնաւորապէս Անգլիան կարուի զիրք բռնելով միայն կարող են հեռացնել այդ սպառնայող վտանգները: Երբ հրատարակուին հիւպատուների տեղեկագիրները, որոնք նկարագրում են թիւրքերի արած սորսափելի և գարշելի անզթութիւնները, յայտնի պիտի տեսնուի, որ շատ շուտով բարենորոգումներ մացնելու պէտք կայ և թէ զրանց դորժածութեան համար անհրաժեշտ է որ ամենամեծ խնամքով հսկողութիւն լինի: Առ այժմ զահացուցիչ է տեսնել որ ամեն անզիւացիներ, ինչ կուսակցութեան էլ պատկանն, համաձայն են այդ բարենորոգումների դորժադրութիւնը սպահանջելու համար և պատրաստ են աջակցելու այժմեան կառավարութեան որ նա պնդէ, ինչպէս որ արա-

Մողբերբի մինհատրութիւնը, Սուլթանին ընդունել տալու համար բարենորոգութիւնը ծրագիրը, որ հանգամանքների ծանրութեանը յարմարացնելով կազմուած է, և որ կարող է արգելել Սասունի մէջ կատարուած հարսաահարութիւնների և անդժութիւնների կրինուիլը»:

Ջէյճա Բշայս.

Այնուշանեւ դուքսը կարգաց լորդ Սոլսբրը կողմից պ. Սանդըքսէնի իրեն ուղղած մի նամակը, որով խմաց էր տալիս թէ Կ. Պոլսի անվլիսական դեսպանը հեռազրումէ որ Հայերին նախատամատցյ ժողովից ուղարկուած 1000 անդղիսական ոսկին ստացուած է, որի բաշխումը մասնաժողովը յանձնած էր Նորին Վսեմութեան դեսպանի կարգադրութեանն:

Ուկստմինհատրի դուքսը միթինի բացման ճառը խօսելով տաւ թէ իրենց առաջ ներկայացուած խնդիրը մի այնպիսի մեծ, մի այնպիսի ծանր նիւթի համար է, որ չի կարելի կուսակցական ոգւով վերաբերուիլ նրան, որովհետեւ ոչ թէ կուսակցական, այլ էապէս ազգային մի խնդիր է այս, որ անվլիսական ազգի պատիւն է շօշափում (Ժաֆ.): Որ սա շատ լուրջ մի խնդիր է, նրա մէկ ապացոյցն էլ սա է, որ իրենց անուանի գրացին էլ միացած է այս ազգային ազաղակին՝ յետ պահելու համար թիւրք կառավարութեան ձեռքերը (և ի՞նչպէս կարելի է նկարազրել այդ ձեռքերը), մի ազաղակ, որ շատ քիչ ազգեցութիւն պիտի ունենար, եթէ մեր կառավարութիւնը իւր բոլոր ուժով չօղնէր նրան (Ժաֆ.):

Սասունի կտորածները, նրանց մանրամասնութիւննեները, որոնք թէկ կամաց կամաց, բայց ճշտութեամբ հասան մեր լրագիրների մասնաւոր թղթակիցների միջոցով, որոնց Ճանապարհի վրայ զանազան խոշնդուաններ էին վրուած և դրանց Ճմարատութիւնը ստուգելու համար Ռուսիայի, Ֆրանսիայի և Ծնդղեայի կողմից ուղարկուած պատուիրակների աեղեկագիրները նորից սարսափահահար յուղեցին Եւրոպայի հանրային խիղճը և մի անզամ ևս ազգի առաջ ներկայացրին Բ. Դրան գարշելի բռնութեան սոսկալի անսարանը և 40 տարուց աւելի առաջ Բ. Դրան գաշնազիրներով պետութիւններին տուած խոստութիւններից պարզապէս փախուստ տուած լինելը: Երեք պետութիւնների պատուիրակները հաստատեցին որ այդ նահանգի մասին տրուած տեղեկութիւնները չափազանցրած չէին և անհերքելի հեղինակութեամբ հաստատուեցաւ որ զարհուրելի թուով—10,000—անմեղ և ան-

սլաշտպան քրիստոնեաներ, որոնց մէջ այր, կին և երեխաներ կային, շատերի վրայ ըստուած բարբարոսութիւններ կատարելուց յետոյ, կոտորուել են: Եւ ովէ արած այդ: Աստիկանութիւն ասուածքը և սուլթանի զօրքերը: Բայց այդ չէ ամէնը: Տեղական հիւլպատոսները իրենց վիպյութեամբ հաստատեցին որ հազարաւորներ կան երեսի վրայ լքուած մնացած որոնք կոտորածից փախած սարսափահար խեղճ վիճակի մէջ են ապրում և օգնութիւն աղաղակում: Այդ վիճակը գրեթէ յուսահատական էր երեսում, երբ քրիստոնեայ տէրութիւնները միջամտեցին անմիջական համաձայնութեամբ և զտան, որ ընդհանուր մարդկութեան շահերին և բաղմաթիւ բաշխուների պայմանների համեմատ, հարկաւոր է վայելուչ և ընդարձակ ապահովութիւններ տրուին թրբահպատակ քրիստոնեայների կրօնը, պատիւր, ստացուածքը և կեանքը պահպաննելու համար: Անցեալի պատմութիւնը մեղցըց և տալիս որ, սրանից աւելի քիչը չէր կարող բաւականութիւն տալ (Ճախահարս-Շին):

Պ. Գլագուտոն, այդ պատկառելի ծերունին, երիտասարդական աշխոյժով ուաքի կանգնելուն պէս, արժանացաւ որոտապին ծափահարութիւնների: Նախ հանդարա, իսկ յետոյ այնպիսի ուժգին ձայնով և ոգեսորութեամբ սկսաւ խօսել, որ սրահի մինչև հեռաւոր անկիւնները կը թնդացնէր: Ահա այդ ձառը:

ԳԼԱԳՈՒՆԻ ՃԱՌԸ

Ի՞ լորդ Դու-+ո, ովէիններ և պարոններ.

Անձամբ համոզուած եմ ես, թէ ալ նախագահի արած հիւնալի զիտողութիւններն այնչափ բացայաց էին, որ բաւական են այսօր այսուեղ ձեզ առաջտրկելիք եղբակացութիւններին առաջնորդելու: Ես՝ որ նախագահի հրաւերին անսալով, ձեղ մի ձառ խօսելու կը համարձակուիմ, աւելի ուրիշների յշխերին և պահանջներին համապատասխանած լինելու համար է, քան թէ ձեր միթինիի նախատակին նկատմամբ ձեղ աւելի կարևորագոյն բաններ հաղորդելու համար: Իմ առաջին պարտաւորութիւնս է շեշտել այս կէտի վըս, որ

արդէն ասուեցաւ—թէ այս միթինկն որև է կուսակցութեան շահի նպաստելու համար գումարուած մի միթինկ չէ (Ժաֆ.) և թէ բնաւ որև է վերաբերութիւն ըռնի այն կարծիքների ու կուսակցական տարբերութիւնների հետ, որոնք այսպիսի աղատ երկրներում բնականապէս և ի հարկէ կարող են կազմուիլ, երբ գործերի խառն դրութիւն է ներկայանում և ինչ ինչ խնդիրների մէջ մարդիկ միմիանցից բաժանվում են: Բայց և գոհացուցիչ է տեսնել որ կարծիքների այդ աղատութիւնը, մի քանի խնդիրների համար եղած նոյն խկ բաժանումները, մի աւելի ծանր կշռ են տալիս մի ամբողջ աղջի միաձայն պահանջներին այսպիսի հանգամանքների մէջ, ուր ընդհանուր մարդկութեան և ընդհանուր արդարութեան սկզբունքները վտանգի են ենթարկուած:

Կուսակցական կան իրանական խնդիր չէ այս.

Իմ լորդ գուքս, յօժարակամ կը կրկնեմ ես ինքս էլ ինչ որ արդէն գուք յայտարարեցիք և ինչ որ արդէն բաւականացափ կը հաստատեն այստեղ այսօր գումարուածների կարծիքներն ու գաղափարները: Շատ գոհ եմ որ կարող եմ կրկնել այս, որովհետեւ այսպիսի յայտարարութիւն անել կարողանալը շատ հաճելի բան է ինձ համար: Սրա համար է որ ուղում եմ մի քիչ աւելի բացատրութիւն աալ այդ յայտարարութեան և ես ասում եմ թէ ինչպէս որ քաղաքական կուսակցութեան մի խնդիր չէ այս, նոյնպէս էլ կրօնական խնդիր չէ ամեննեին: Արդարեւ այն կառավարութիւնը, որի արարքը ամբաստանում ենք, մահմեղական մի կառավարութիւն է և նրանից հարստահարուողներն ու նախատուողները ըրիստոնեաններ են: Թիւրքիայի մահմեղական հպատակներն էլ շատ նեղութիւններ են կրում, բայց նրանց նեղուելու պատճառները իրենց կաշկանդող և վատ կառավարութեան — որ գուցէ աշխարհիս վրայ զոնուած ամենից վատ կառավարութիւնն է — թերութիւններն ու յառաջադիմութեան մէջ զանգաղութիւններն են: Խկ ոյն խնդիրը, որի մասին մենք պէտք է խօսենք այժմ այստեղ ցաւելով եմ ասում, որ բոլորովին մի առանձին բան է ներկայացնում: Սովորական օրէնքների վատ կամ լաւ կերպով գործադրուած լինելուն վրայ չէ խնդիրը. վարչական խստութիւնների կամ զեղծումների խնդիր չէ այս, այլ աւելի հեռուն կերթայ կը հասնի մինչեւ մարդիկների ամենանախական պայմանների մէջ աղբելու իրաւունքներին. բայց այս պէտք է ասեմ, որ եթէ

փոխանակ թիւրք կառավարութեան հետ զործ ունենալու և իւր քրիստոնեայ հպատակներին արած վատութիւների համար իրեն ամբաստանելու, մենք զործ ունենայինք մի քրիստոնեայ կառավարութեան հետ, որ կարող եղած լինէր իւր մաշմեղական հպատակներին այլպիսի վատութիւններ անել, մենք այժմուանից պակաս չը պիտի բարկանայինք և նոյն իսկ սրանից էլ աւելի (ժամ): Ինչ որ առում ենք, առում ենք, ոչ թէ կրօնական կապերի շահերի համար, այլ նրանցից աւելի առաջ գոյութիւն ունեցող մարդկային ընկերական կապերի շահերը աչքի առաջ ունենալով: Ես պիտի համարձակուիմ կարգալ այն առաջարկութիւնն, որ ինձ յանձնուեցաւ և որ կարծեմ թէ ազգու, բայց չափաւոր լեզով ներկայացնում է այն կարծիքները որոնց ապահով եմ; թէ այս ժողովը պիտի ընդունէ, և այս ժողովն էլ զրանց ընդունելով ամբողջ աղջի կարծիքը ներկայացրած կը լինի: (ժամ): Աւելի առաջ գնալով, ես առում եմ թէ ամբողջ երկիրը այս գաղափարները ընդունելով քաղաքակրթուած մարդկութեան ներկայացուցիչը եղած կը լինի և ես այս առում եմ հիմուելով մասամբ իմ անձնական ծանօթութիւնների վրայ, նաև այն կարծիքների և հիմունքների վրայ, որոնք յայտնուած են քրիստոնեայ աշխարհի այս մասի մէջ, որ այնչափ հեռու է Հայաստանից, ասել եմ ուզում՝ Միացեալ Նահանգների անդրատանաեան մեր եղբայրների մէջ: Վերջին գէպերի պատճառով Ամերիկայի մէջ տիրող զգացումները, եթէ կարելի է այսպէս ասել, պիտի տսեմ, որ այս երկրի ժողովրդին մէջ բարախող զգացումներից աւելի եռանդուն և աւելի զօրաւոր են:

$$U_1 = \{y \in \mathbb{R}^n : \|y\|_2 = 1\} - \mathbf{z}_0$$

Աշաւասիկ, իմ լորդ դուքս, այդ առաջարկութիւնը եղած է Հետեւեալ բառերով.

“Մենքնէք է՞ր համապատճեննեն և յայուղուն, որ Նորին Սէժու-
ծունեան կառավագան-ընեանը սիսոյցքար պէտք աջակցէ ամբողջ
առաջը առանց իսաւակցուն-ընեան խորուն-ընեան, որպէս Ակ այսուեան
միջնունեւ յիշուտ առեւն-ին թօրդական հայուսուանի Ակ բարձուրու-
գուն-հունը ճացուելը, որ երական երաշլուսուն-ընեանը Ակնին նուանց
չիւնանուր, որպէտք-ը, իշօնը և սուսոցուածուր պահպաննեւ- համար.
Լ Ակ ու մի բարձուրուգուն- Ակ երաժշութուն-էւ, Երեւ և Երազական
մէծ այլուն-ընեանը ճացուաբար հակողուն-ընեան առաջ առաջ Ակ առաջ Ակ:

Այդ նշանակումէ անտարակոյս որ եւրոպացի բոլոր մեծ
պետութիւնները ուղղում են մասնակցիլ այս զործում, իսկ
եթէ այդպէս չըլինի, յիշատակելի են այն մեծ պետութիւնները,
որոնք բարեբազզապէս միացած են արդէն և իմ կարծիքով,
ինչպէս իրենց զօրութիւնը, նոյնպէս և իրենց պատիւր մէջ
տեղ են արած մեր առաջարկած նպատակին հասնելու
համար (Ժաֆ.): Սրանից կարծեմ վեց ամիս կամ առելի առաջ
ես խօսեցայ մի քանի (ոչ հանրային ժողովի մէջ, այլ սահ-
մանափակ թուով) հայ անձնաւութիւնների և հայաստանով
հետաքրքրուող անձնաւորութիւնների առաջ: Այն ժամանակ
ես ցոյց տուի իրենց թէ մեր պարտաւորութիւններից մինն
էր զգուշանալ կանխազատ մի վճիռ տալուց: Մեր այն ժա-
մանակ ասածը վճռական և անկողմնակալ մի յայտարարու-
թիւն չէր աշխարհի առաջ Սասունի կոտորածի ծանօթ
խնդրի վրայ, այն կոտորածի, որին ակնարկութիւն արաւ
աղնիւ դուքսը մի այդպիսի կոտորածին փայելուչ եղած յար-
գանքով, և ինչպէս որ ամենանշանաւոր վկաներից մէկը յոյ-
տարարեց, թէ կամաց կամաց երեան եկած էին մժի մէջ
մնացած այն անասելի սարսափները, որոնք բերանէ բերան
և շաբաթէ շաբաթ ու օրէ օր տարածվում էին հայաստանի
այլ և այլ նահանգների մէջ: Մեր պարտաւորութիւնն էր
զգուշանալ կանխաւ մի զատավճիռ տալուց և կարծում էմ
թէ զգուշացան: Մեծ խոհեմութիւն պէտք էր որ միջոց
գտնուէր հանդարտութեամբ մի քննութիւն կատարելու, և
երբ այդ միջոցը դանուեցաւ, մի ուրիշ տեսակ պարտաւորու-
թիւն ել պիտի ծնէր, որ ընդհանրապէս շատ կարեւոր է
ոյսպիսի պարագաների մէջ, բոյց այս մասնաւոր զօրծի մէջ
իրեն համար տեղ իրօք չը դտաւ:

Զաֆաղանցո-Եկանը հարեւէ նէ.

Ուղում եմ խօսել չափաղանցութիւնից զգուշանալու
պարտաւորութեան վրայ. սրբազնն պարտաւորութիւն. սա-
կայն շատ փոքր կամ բնաւ տեղ չը կայ իրեն՝ մեր առաջ ներ-
կայացուած այս պարագայի մէջ, որովհետեւ նրանք, որոնք
ուղղում են իրենց կարողութիւնը փորձել եղելութիւնները
նկարագրելու, պիտի տեսնեն, որ մարդկային լեզուն արդէն
գժուարութեամբ կարող է ներկայացնել ինչ որ եղած է և
կը լինի. չափաղանցութիւնը այս պարագաների մէջ մեր կա-
րողութիւնից վեր է, եթէ նոյն խկ ուղենանք չափաղանցել
(Ժաֆ.): Այս դժուար կատարելիք մի պաշտօն է:

Պարտաճանաչութեան ամենազօրաւոր զգացմունքն է միայն, որ կարողացել է ձեզ ամենիս հաւաքել այստեղ այս չորս պատի մէջ, կարողացել է այստեղ բերել իմ հասակիս մի մարդ, որ կռուելու համար ուրիշ զժուարութիւններից էլ աղատ չէ բոլորովին և որ սակայն այս ըոսէիս մէկ կողմ թողած իւր հանգստութիւնը ու խաղաղ վիճակը, որոնք իրեն մնացած երկրային բարիքների միակ վախճանն են, եկած է հրաւերել ձեզ նկատի առնելու այս ինդիրը. չեմ ասում ձեզ հրաւերելու, որ գուք այս խնդրի ունեցած զղուելի մասնրամասնութիւնների տակ ձնշուիք: Ես չը պիտի փորձեմ ձեզ մանրամասնութիւնների այդ սոսկալի կէտի վրայ առաջնորդելու. բայց տիկիններ և պարոններ՝ ձեզ ուղղում եմ այս հրաւերը. թող ձեղանից ամէն մէկը աշխատէ իւր զիրքի և վիճակի համեմատ անձնապէս տեղեկութիւններ ըստանալ (լսեցէք, լսեցէք): Վկաներից որը բերեմ ձեր առաջ: Ես կարծում եմ թէ հոգ չէ որն էլ որ լինի: Ամէնքն էլ իրար համաձայն են: Ժամանակին երբ նրանց մասին խօսեցայ, 5—6 ամիս առաջ, մասնաւոր վկաներ կային: Նրանից յետոյ, թէ և մենք կառավարութիւններից հրատարակուած մանրամաս վաւերագիրներ տեսած չենք, այսուամենայնիւ զիտենք որ սառւզուած և հաստատուած են մինչև այժմ պատմուած այն բոլոր եղելութիւնները, որոնք այս խաղաղ աղջի արիւնը թափուելու պատճառն եղած են: Դրանք ոչ չափազանց բած և ոչ այլափոխուած էին, այլ իրենց ամբողջութեամբ, իրենց ողբալի մանրամասնութիւններով հաստատուած:

Կողոպտուա, սպանուանեան, բանաբարուան-նիւն և պանջանաւ.

Միայն եւրոպացի վկաների հետ չէ այժմ մեր գործը: Մենք ունինք ամերիկացի վկաներ էլ և ամերիկացին տուած վկայութիւնն էլ եւրոպացիի վկայութեանը համաձայն է: Ամէն մարդ զիտէ, որ ամերիկացին Արեելքի գործերի մէջ ոչ մի կերպով բաժանարար կամ վնասակար մի շահ չունի: Նա կատարելապէս պարկեշտ կերպով և առանց մի կասկած ներշնչելու ներկայանում է այս դատի համար ատեանի առաջ և այս գործի համար նրա առածները կրկնակի կշեռ ունին: Արդէն լսած էք իմ զերապատիւ բարեկամիս Քանոն Մաք Քոլի տեղեկագիրը, որ միւսների հետ միենայնն է հաստատուած: Կարծում եմ որ ամէնքն էլ բոլորովին համաձայն են իրար հետ և նշանակութեան արժանի մի աարբերութեան ստուերն անդամ չը կայ զրանց մէջ: Ես պիտի աւելացնեմ

այդ վկաների շարքի վրայ և մէկը, որի անունը պատուով կը յիշատակեմ, գոկ. Դիլոն (Ժաֆ.)—որի անունը Յ—կ օր առաջ երեսցաւ անսովոր երկարութեամբ մի յօդուածի տակ — (և այդպէս երկարօրէն զրելու էլ շատ իրաւացի պատճառ ունէր) — «Contemporary Review» ամսագրի մէջ (Ժաֆ.): Թերես պիտի հարցնէք, ինչպէս որ ես ինքս էլ եմ հարցրել, թէ ովէ այդ գոկ. Դիլոնը: Կարող եմ նրան ներկայացնել ձեզ իրեն պատուաբեր կերպով: Դոկ. Դիլոն այն մարդն է, որ սրանից մի քանի ամիս առաջ, «Daily Telegraph» լրագրի իբրև մի մասնաւոր յանձնակատար, վարպետութեամբ և աշխատանքով, նոյն իսկ իւր կեանքը վտանգի ենթարկելով (լսեցէք, լսեցէք) գնաց թիւրքիա և յատկապէս ծպտեալ կերպարանքներ ընդունելով յաջողեցաւ մանել հայաստան, որտեղ կարողացաւ անձամբ տեղեկանալ բոլոր եղելութիւններին: Նա իւր տեղեկութիւնների արդիւնքը հրատարակեց մի հանրային իշխանութեան առաջ, որ նրա մասին իւր գիտողութիւնները յայտնեց և այդ տեղեկութիւնները՝ որոնք կարծում եմ թէ շարունակական ձեռով յայտնուած առաջին տեղեկութիւններն էին և հետեւապէս իբրև կանխահաս նկատուեցան, կատարելապէս ստուգեցին և հաստատեցին յետոյ երեք տէրութիւնների, Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից յատկացրած պատուիրակների գննութիւնները (Ժաֆ.): Ասացի թէ իւր կեանքը վտանգի ենթարկելով իրաւունք ստացաւ ձեր հաւատարմութեան արժանանալու և արդէն իւր ներկայացրած տեղեկադիրը ճշմարտութեան ամէն նշանները կրում է իւր մէջ. այսուամենայնիւ այդ ճշմարտութիւնը գժուարահաւատալի պիտի թուի ձեզ:

Դժբախտաբար այսպիսի անհաւատալի փաստեր ճշմարիտ և հաւատալի են դառնում այդ տեսակ քմահաճ կառավարութիւն ունեցող և տարօրինակ աշխարհի մէջ և մարդ զարմանում է թէ մարդկային բնութեան մէջ կարող է զըտնուիլ այն աստիճան զիւական չարամտութիւն, ինչպէս որ ներկայացնում են դոկ. Դիլոնի նկարագրութիւնները: Ես մանրամասնօրէն չը պիտի ներկայացնեմ ձեզ այդ պատմութիւնները, այլ մի քանի հատուածներ միայն, որոնք եթէ կարելի է այսպէս ասելի աւելի սկզբնական քան թէ մանրամասնութեան հատուածներ են, բայց երբ սկսէք ծանօթանալ նրանց հետ, պիտի հասկանաք, որ ասածս ճշմարիտ է եղած՝ թէ կառավարական զեղծումի կամ թերութիւններ ունեցող կառավարութեան վերաբերեալ հասարակ և սովորական ինդիր

չ որ մեզ զբաղեցնում է: Այս խնդիրը շատ աւելի ծանր, աւելի ընդարձակ մի բան է, որ մեզ առաջնորդում է և, թոյլ տուէք ինձ ասել, որ ձեզ ևս պիտի առաջնորդէ և տանէ դէպի աւելի ծանր պարտաւորութիւններ: Այդ նշանաւոր յօվուածը, որ ինչպէս ասացի, համաձայն է մի ուրիշ վկայի վկայութիւններին, ամբողջ նիւթը կարող է ամփոփուիլ Հետեւեալ սոսկալի չորս բառերի մէջ: Կողոպարագ, աղանդ-Շէն, բանահարաց-Շէն և գանձան: Պատմուած բոլոր դէպքերն միմիանց հետ շղթայի օղակների պէս միանում են այս սոսկալի չորս բառերով: Պիտի մատածէք թերես թէ կողոպուտ և ըսպանութիւն բաւական են արգէն. բայց դրանք գեռ թեթև բաներ են առեւանդութեան և չարչարանքներ տալու գործերի հետ համեմատած, որոնք նկարագրուած են դոկ. Դիլոնի յօվուածի մէջ, որ ուրիշներից էլ ամբողջովին վաւերական է Ճանաչուած (Ժաֆ.): Ես իմ տուած խոստմանս տէր պիտի մնամ և չը պիտի փորձեմ մանրամասնութիւնների մէջ մըտնելու կոտորուած ողերգական գործերի չափազանցութիւնների հետաքրքրաշարժ լինելուցը հրապուրուելով: Բայց ձեզ՝ որ այս խնդրի մանրամասնութիւնները չէք ստուգած, այս ասում եմ որ ձեր վստահութեան վարկը շնորհէք ինձ ասածիս ճշմարտութեանը համար, մինչեւ որ ցոյց տամ ձեզ թէ որոնք են այս չարագործութիւններ անողները: Ոճրագործութեան սովորական դէպքերի մէջ, երբ այգպիսի մարդասպանութեան ոծիրներ ենք լսում, մինչեւ իսկ շատ սոսկալի ոծիրներ, ինչպէս օրինակի համար՝ Զինաստանի մէկ մասի մէջ պատահած կոտորածը, որ այսօր լրագիրները հրատարակած են, մտածում ենք թէ «օհ, այո, ամեն երկրի մէջ էլ գժբախտաբար կան չարագործներ, գողեր, մարդասպաններ». բայց այս ժողովրդի մէջ, որի չարագործութիւնները ներկայացնում եմ ձեզ միևնույն բանը չէ: Այստեղ հասարակութեան վտանգաւոր ասուած դասակարգերի հետ չէ մեր գործը. նրանց վարմունքի եղանակները չեն որ դուք ուզում էք իմանալ, այլ կ. Պալքի հաւաքարաց-Շէան և Է-Ռ Գործակագործների վարչութեան+ը: Այստեղ կատարուած չարագործութիւններից բնաւ մէկը չը կայ, որի համար կ. Պոլսի կառավարութիւնների պարուապէս պատասխանաառ չը լինի նրա համար (Ժաֆ.): Որոնք են իւր գործակատարները: Թոյլ տուէք ինձ ասել ձեզ կարծ կերպով: Երեք կարգի են բաժանվում նրանք: Առաջին կարգի անունը տուեց արդէն աղնուափայլ գուբուր, այսինքն Քերերը, որոնք գժբախտաբար հայերի

գրացիներն են, հայերի՝ որոնք վաղուց քաղաքակրթուած ցեղերից մէկի ներկայացուցիչն են և բնաւ տարակոյս չը կայ որ աշխարհիս ամենից խաղաղասէր և խելացի ժողովուրդներից մէկն են (Ժաֆ.): Իսկ այդ քիւրդերը վայրենի ցեղեր են: Այս առիթով, իմ լորդ գուբա, խօսքս ձեզ ուղեկելով ցանկանում եմ քննագատել ձեր այն ասածը, թէ սուլթանը կաղմակերպել է այդ քիւրդերը: Իմ կարծիքով, գրանք բնաւ կաղմակերպուած չեն. այն ինչ որ կաղմակերպութիւն է ասկում, աւազակների խմբի մէջ եղած կաղմակերպութիւնից տարբերութիւն չունի. նրանք ուրիշ կաղմակերպութիւն չունեն և իրենք էլ ուրիշ բան չեն, բայց եթէ աւազակների մի խումք:

Ս ո - ւ ն ա ն է պ օ բ + է ր ը.

Սուլթանը և Կ. Պոլսի կառավարութիւնը անունով մի այն զինուորագրութիւն են արել, չմտցնելով զինուորական կարգապահութիւն վեծելազորքերի այդ անուանական բանակների մէջ և նրանց թոյլ են տուած որ Սուլթանի անուան ազգեցութեամբը կողապատեն և ջնջեն հայաստանի ժողովուրդը: Աւրեմն այս սոսկալի գործի մէջ, իբրև զործակատարներ, առաջին տեղը ըռնում են Ք-ը-Ե-Ե-Յ-ը. սրանց յետերից կը գան Ծ-ը-Շ- Պ-Ե-Ե-Յ-ը, որոնք իմ կարծիքով քիւրդերից ամեննեին պահան չեն մնալ իրենց շարագործութիւնների մէջ. երրորդ տեղն էլ բռնում են Ծ-ը-Շ- Հ-Ա-Ր-Ա-Լ-Ա-Ր- Ծ-է-ան Շ-Ա-Ր-Ա-Ն-Ե-Յ-ը, սատիւան-Ծ-է-ան և հարկահաննելը: Ինձ թուում է թէ մի սոսկալի և անողօք մրցում կայ այդ երեք գասակարգերի մէջ այն բանում, թէ ով աւելի եռանդ ցոյց կտայ իրենց վիճակուած այդ զարշելի և գժոխային աշխատանքի մէջ: Բայց սրանցից շատ աւելի յանցաւոր են թիւրք կառավարութեան բարձր պաշտօնեանները (Ժաֆ.): Եթէ գոկ. Դիլտնի յօդուածը քննութեան առնեք, պիտի տեսնեք, որ ամեն մէկ կէտի վրայ ինքն իրեն պիտի հակասէր, եթէ տատճները սխալ և անսույզ լինէին: Նա ամեն բան յայտնած է ականէ յանուանէ, աեղերը, թուականները և ամեն մանրամասնութիւնները նշանակելով, այնպէս որ թիւրք կառավարութիւնը եթէ ուղի, կարող է հետազոտել, հասկանալ և նրանց հասարակական կարծիքին նախատինքին ենթարկել: Բայց մի յուսաք բնաւ որ թիւրք կառավարութիւնը այդ յօդուածին պատասխանէ: Մինչև իսկ, համարձակութեանս համար ներողութիւն խնդրելով, հաստատ կերպով կարող իմ ասել թէ թիւրք կառավարութիւնը ոչ մի պատասխան չը պիտի տայ

այդ յօդուածին, որ իւր անձնական փորձառութիւնների վրայ է Հիմնուած մանրամասնութիւնների մէջ։ Ինչպէս արդէն ասած եմ; ես չեմ ուզում ձեզ ախրեցնել այդ մանրամասնութիւններով. բայց դոկ. Դիլոնի գրածներից մէկ հատուած եմ ուզում՝ մէջ բերել որովհետեւ շատ յարմար է կարճ կերպով մի բաւական ընդարձակ գաղափար տալ գործերի դրութեան վրայ։

Այնուհետև Մեծ Ծերունին մէջ է բերում դոկտ. Դիլոնի գրուածքից յայնի չարագործ Մոնթիկոյ անունով՝ մի քրտի պատմութիւնը։ Դոկտ. Դիլոն փողի ուժով՝ նորանից տեղեկութիւններ է քաղել և մեծ վարպետութեամբ գրաւել է նորա վստահութիւնը՝ պատահելով կարինում, ուր նորան մահապարտութեան վճիռ էր տրուած։ Այդ քուրտը մեծ հիացմունքով և հպարտութեամբ պատմելէ դոկտ. Դիլոնին իւր սարսափելի շահատակութիւնների, առևանդութիւնների, աւարառութիւնների և կողոպուաների մասին, որոնց, նորա խօսքով, եթէ լսէին Եւրոպիոյ մեծ պետութիւնները, կը վշաբաղուէին։ Դոկտ. Դիլոնի հարցին՝ թէ հայերը արգեօք ձեզ չին դիմադրում, երբ նոցա հօտերը և կանանց յափշտակում էիք, Մոնթիկոն սառնասրտութեամբ պատասխանում է, որ նոքա եթէ նշյն իսկ ուզենային էլ չէին կարող դիմադրել, որովհետեւ զէնք չունէին և հէնց կառավարութիւնն էլ միացած քրտերի հետ նոցա իսկոյն բնաջին կանէր։ Քուրտի այսպիսի բացարձակ արած խոստովանութիւնները շեշտելով, Դլադստոնը միթինկի ուշադրութիւնը էր հրաւիրում դոցա վերայ և իրեն յատուկ ճարտարութեամբ պատկերացնում էր այդ բարբարոսների քստմելի արարքները քրիստոնեայ հայերի մէջ։

Դոկտ. Դիլոնի նկատողութեանը, թէ ահա այդ իւր ծանր չարագործութիւնների պատճառով՝ ստացած էր մահապարտութեան վճիռը, Մոնթիկոն հեգնօրէն պատասխանում է այսպէս։ «Հայերը ովքեր են որ նոցա համար ինձ նեղացնեն կամ պատժեն, այլ եթէ ինձ կախեն, այդ նորա համար է, որ որ ես բռնաբարել եմ մի թիւրքի կնոջ, և մի թիւրքի էլ կողոպտել եմ»։

Բ. Դուռը Բուժաբայի կոբորդաժնելն էլ ուրացած։

Ի՞նչ ընդունելութիւն կը գտնեն Կ. Պոլսի մէջ գրանց համար ուղարկուած տեղեկագիրները։ Եթէ մի ամենափոքրիկ հիմք ունենային այն վարդադշն յոյսերը որ 40 տարուց

աւելի սնուցվում էին Թիւրքիայի մէջ մի լաւ կառավարութիւն մտցնելու համար, անշուշտ, այդ տեղեկագիրները մեծ փութաջանութեամբ պիտի ընդունուէին չարագործներն ու ասպատակները ձեռք ձգելու համար: Բայց ընդհակառակն, այդ տեղեկութիւնները ընդունուած են նախ և առաջ իրրն սուա հերքուելով: Սցդ օսմանեան կառավարութեան նոր հնարած բանը չէ: Ճիշտ միւնոյն բանն եղաւ 1876-ին Բոլգարիայի մէջ բոլգարական կոտորածներից յետոյ, որոնք ի վերջոյ հաստատուեցան անգլիական կառավարութեան կողմից նշանակուած ներկայացուցչի՝ լորդ Կրոմերի՛ վաւերական քննութիւններովը: Լոնդոնի թրքական գեսպանը մի յատուկ տեղեկագիր տպկել տուեց և ցրուեց Անգլիայի մէջ—նրա մի օրինակն իմ մօտս էլ կայ—որով բոլորովին ուրանում էր Բոլգարիայի մէջ եղած կոտորածները, ասելով թէ բոլգար ժողովուրդը մի քիչ անհնազանդ ժողովուրդ է, որին հարկ եղած էր կարգ-կանոնի բերել. իսկ միւս բոլոր պատմուածները սուտ են: «Պատճուածը առ-առ է» խօսքը թիւրք կառավարութեան մի գէնըն է: Նա այս պարագայի մէջ էլ զործածեց իւր այդ զէնըը բայց տէրութիւնները հսկում են և անկողմանակալ պատուիրակներ ուղարկուեցան Խուսիայի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից: Յայտնի են ձեզ այն վաւերագիրները՝ որոնք ընդարձակօրէն կատարելապէս խօսում են կատարուած բոլոր չարագործութիւնների մասին. բայց երբ այդ սոսկալի բոնարարութիւնները հրատարակուեցան ու իմացուեցան Կ. Պոլսի մէջ, օսմանեան կառավարութիւնը ի՞նչ ուղեց անել. միմիայն ուղեց ծածկել այդ բոնարարութիւնները ստութեամբ, խարդախութեամբ և յետաձգումներով: Մինչև այժմ մի երկու ամիս է արդէն որ յանձնաժողովը իւր տեղեկագիրը ներկայացրել է. չեմ կարծում որ մեծ պետութիւնների կառավարութիւնները և պատուիրակները մեղագրելի էին սրանից առաջ. որչափ ինձ յայտնի է, այդ ամիսները անցել են ձեւակերպութիւնների, հարցաքննուութիւնների և տեղափոխութիւնների գժուարութիւններին յաղթելով, որովհետեւ ամեն մէկը քայլափոխում խոշնդրուներ էին առաջ բերում թիւրքերը: Երբ պատուիրակները վերջացնում են իրենց տեղեկագիրները, այն ժամանակ ահա, սուլթանը հրամայում է մի ժողով կազմել և այդ ժողովին վիմել քննութեան գործի համար. բայց երբ տեսնում է, որ այդ ժողովը բան չէ անում, այն ժամանակ էլ վեր է կենում և ասում թէ այս ինչ բանը ընդունում եմ, այն ինչ կէտերը մերժում: Լաւ. հիմայ

այս ինդրի վրայ մեր ունեցած վերջին տեղեկութիւնները ի՞նչ
են. ի՞նչ օգուտ կարողացանք ստանալ սուլթանից: Նախ պար-
տաւոր եմ յիշեցնել ձեզ իմ բարեկամ Ռւէսթմինիսար գրսի
առաջ բերած գաշնազիրները: Այդ գաշնազիրները 1856 թ.
եւրոպական տէրութիւններին իրաւունք տուին, իրաւունք, —
որ այժմ բոլորովին պարզ և անվիճելի է, — հայաստան մտնե-
լու և կառավարութիւնը թիւրքի ձեռքից առնելու (Ճաֆ.),
քանի որ ինքն հանդիսաւոր կերպով խոստումներ տուած է
Եւրոպային, բայց իւր
յանձն առած պարտա-
ւորութիւնները չեն կա-
տարած: Բայցի սրանից
մենք մասնաւոր գաշնա-
զիր ենք կնքած 1878 թ,
որով թիւրքիան պար-
տաւորեցաւ բարենորո-
գումներ մայնել հայաս-
տանի մէջ. եթէ այդ բո-
լոր բարենորոգումների
գէթ մէկ մասը իրագոր-
ծուած լինէր, այսօր մեր
ինդրի առարկայ եղած
սարսափելի գործը չէր
կարող պատահել: Այդ
գաշնազիրը իրաւունք
է տալիս Անդլիսային որ



Վ. ԳԼԱԴՍՈՆ.
Right Hon. W. E. Gladstone.

նրա գործադրութեան համար հարկ եղածն անէ, իրեն վե-
րայ յանձն առնելով այդ չարագործութիւնների վերացնելու
գործը և այնպիսի լեզուով խօսի հետը, որ թիւրք կառավա-
րութիւնը հասկանայ և վերջ դնէ այդ անիրաւութիւններին:
Այժմ թոյլ տուէք ինձ յիշեցնել ձեզ որ այդ գաշնազիրները
մեզ իրաւունքներ տալով, իրաւունքների հետ պարտաւորու-
թիւններ էլ են զնում մեզ վրայ: Երբ թիւրք կառավարութիւ-
նից վստահութիւն և խոստում էք առնում թէ զեղծումները
պիտի վերացնէ և քաղաքային և կրօնական աղատութիւն պի-
տի հաստատէ, և երբ այդ խոստումները չեն կատարվում, պար-
տաւոր էք նրանց գործադրութիւնը ապահովելու համար աղ-
գարարել որ յարգուին այդ խոստումները, թէ չ հակա-
ռակ գիտուածքում ձեր սեողհական իրաւունքները գործ
կը դնէք:

Ի՞նչ են ասում ձեզ հասած տեղեկութիւնները: Վերջին
լուրը այս էր թէ սուլթանը զայթակղուել է տէրութիւն-
ների արած պահանջների սահմանափակ լինելուց, թէ ինքը
տեսնում է որ բացի հայաստանից միւս նահանգների մէջ էլ
իւր կառավարութիւնը կատարեալ վիճակի մէջ չէ: Ինձ էլ
թրբական կայսրութեան զանազան նահանգներից հեռագիր-
ներ են գալիս, հայաստանից եկածների քիչ շատ նմա-
նող զանգատներով բայց ինչպէս որ առաջուց ասած եմ ես,
երբէք հանդէս չեմ գտն բայց ի բաց չեմ բողոքիլ այդպիսի
գործերի դէմ, եթէ շատ վստահելի կերպով ստուգուած և
անկողմակալ իշխանութեան մանրախոյդ քննութեամբ հաս-
հատուած ըլլինին: Հաղորդուած լուրին նայելով, սուլթանն
ասել է. «Ձեր ուղած բարենորոգումները բոլոր Թիւրբայի
համար ենք ուզում մենք»: Բայց ի՞նչ է նշանակում այդ
խօսքը: Այդ նշանակում է թէ քննութիւնների անվերջանալի
մի շարք պիտի հանէ մէջ տեղ և զանազան գէպքերի պա-
տահման վրայ պիտի դնէ իւր յոյսը որ բարենորոգումների
խնդրից բոլորովին խոյս տալու մի ձանապարհ դանէ: Թշյլ
տուէք ինձ որ ասածս գէթ թէթէ կերպով բացատրեմ: Ի՞նչ
պիտի մտածէիք մեր երկրի կառավարութեան վրայ — այժմ
ուանը լինի թէ մի ուրիշը — եթէ ենթադրենք որ Խորհր-
դարանի մէկ մասնաւոր որոշմամբ մի շատ ծանր զեղծում
հաստատուած լինի և ինչպէս զիւրահասկանալի է, դուրս
գանք ու Խորհրդարանի այդ որոշման բարենորոգելու հա-
մար ստիպողական մի միջոց ձեռք առնենք և երբ այդ որոշ
ման բարենորոգելու համար գիմում լինի հանրային Խորհր-
դարանին կամ կառավարութեան, հանրային խորհրդարանը
կամ կառավարութիւնը մեղ պատասխանէ: «Օ՛հ, ո՞չ ձեր ու-
ղածը շատ փոքր բան է, միայն այդ օրէնքը չէ որ թերի է»:
Տարօրինակ հրէշային խօսք: Բայց թիւրք կառավարութեան
համար սովորական մի չնչին բան է այդպիսի խօսք ասելը և
երբ նա նեղն է ընկնում, այդպիսի միջոցներին է զիմում
այնպիսի սարսափելի եղելութիւնների մէջ մեղագրուելուց
իրեն աղատելու համար, ինչպիսին է այսօր ձեզ ներկայա-
ցուածը: Այդ մեղ հասած առաջին լուրն էր. սրանից երկու
օր յետոյ մի ուրիշ տեղեկութիւն էլ եկաւ. թէ օսմանեան
կառավարութիւնը մտաղիր է մերժել հայաստանի համար
առաջարկները, բայց թէ յօժարում է քիւրդերին զինաթափ
անելը: Լաւ, ենթադրենք որ հաւանում էք սրան և ասում
էք. «Ձենք կարող ձեռք բերել մեր բոլոր ուղածը: գէթ պէտք է



Զեմօնը քաղաքի միջնակը օգոստոսի 6-ին Ա. Գլազուռն արտասահմամ է իւր
Հռչակաւոր ճառը առանձահպաց օգտին.



մէկ մասով՝ բաւականանանք: Քիւրդերի զինաթափութիւնը
մեր ամբողջ ուղածը չէ, բայց մեր ուղածի մէկ կարեօր մա-
սրն է և այժմ յետ կը կենանք Եւրոպայի վերահսկողութիւ-
նից»: Լաւ. ի՞նչ յօյս ունիք գրանից. Հաւանօրէն 50 կամ 100
քիւրդերի ձեռքից կառնեն զէնքերը և կը տան նրանցից աւելի
աւաղակ եղող ուրիշ ցեղերին (Ժաֆ.): Էական կէար այս է,
որ ինչպէս ինքն օսմանեան կառավարութիւնն էլ շատ լաւ
զիտէ այդ, այնչափ խոստայուած բաների վրայ չէ ինդիրը,
որչափ խոստայուածը գործադրելու երաշխաւորութիւնների
վրայ (Ժաֆ.): Այսօր մի նոր լուր է եկած, պարոններ, որ ես
միայն «Մանչստրը Գարդիան» մէջ կարդացի. չեմ իմանում
ուրիշ լրազիրների մէջ էլ կար թէ ոչ: Սյդ լուրին նայե-
լով, աէրութիւնները թիւրքերի խուսափողական պատաս-
խաններից յուսահատուած, որոշել են վերջ տալ այդ վե-
ճակին, որ օրէցօր յետաձգուելով չսփաղանց երկարանում է
(Ժաֆ.): Տէրութիւնները կատարեալ իրաւունք և իշխանու-
թիւն ունին մի յանձնակատար (commissioner) ուղարկելու
հայստան և նրան լիազօրութիւն տալու որ սուլթանի
անունով կառավարէ այդ նահանգները և այդ պաշտօնի հա-
մար էլ մեծ պետութիւնները նշանակել են մի անձնաւորու-
թիւն—ոչ անդլիայի և ոչ էլ այնպիսի մի ազգից, որ կա-
րող է կասկածելի համարուել իւր ունեցած սաստիկ համա-
կրութեան համար զէպի թիւրքիայի քրիստոնեանները: Սյդ
անձն է Թոն-Կալան, որին յանձնուած էր Բօսնիան և Հերցե-
գովինեան բարեկարգելու գժուարին պաշտօնը, որ իրեն համար
շատ պատուաբեր կերպով կատարեց: Նա մի հունգարացի է.
Հունգարացի մամառները թիւրքիայի քրիստոնեայ ցեղերի հա-
մար սաստիկ համակրութիւն ունեցող չեն համարուիլ: Ի՞նչ
կը լինի այս կերպով: Եթէ նա մի բարի մարդ է և հասկանում
է թէ ինչ պէտք է անել և կարող է անելու, մենք չենք նա-
խանձիլ մերինների համար և չենք միջամարիլ գործերին ա-
ւելի գոհացուցիչ ընթացք տալու պահանջումով: Տիկիններ
և պարոններ, ես որևէ է հեղինակութիւն չունեմ ձեզ հաւաս-
տելու համար թէ այդ լուրը Ճիշտ է, բայց տայ Աստուած
որ Ճիշտ լինի: «Մանչստրը Գարդիան» մի նուրբ դիտազու-
թիւն արած է թէ սա այնչափ մի լաւ բան է, որ Ճիշտ լինելը
կասկածելի է դաւնում: Բայց ինչ որ լինի, իրողութիւնը
այս է որ վաւերական տեղեկութիւններ չունինք և հաւա-
նական է որ կառավարութիւնը չի կարող կամ իրեն պար-
տաւոր չի համարում վաւերական տեղեկութիւն մեզ տալու:

Երեւան պատմական գիրք և հայոց պատմությունները.

Շատ երկար ժամանակ է որ մեզանից գաղտնի են պահում տեղեկութիւնները: Ենթագրում եմ, քանի որ հաստատ չեմ իմանում, որ նախորդ կառավարութիւնը զօրաւոր պատճառներ ունէր գաղտնի պահելու համար: Դեռ գուցէ ժամանակը հասած չէ մի վճիռ տալու այս խնդրի վրայ: Սակայն որքափ էլ չունենանք այնպիսի տեղեկութիւններ, որոնց վրայ կարողանանք հաստատալիս կրթնիլ այսուամենայնիւ ևս կարծում եմ թէ կան այնպիսի փաստեր, ինչպէս նրանք, որոնք այսօր վիճաբանութեան ենթարկուեցան և արդէն ուրիշ մի քանի ձևերով էլ ենթարկուած են վիճաբանութեան, որոնց մասին կատարելապէս կարող ենք մեր որոշումները տալ: Եւ հս կաւելայնեմ որ գրանց ամբողջութիւնը կարելի է ամփոփել երեք կարճ առաջարկութիւնների մէջ: Չեմ իմանում թէ այս առաջարկութիւններից որին աւելի կամ պակաս նշանակութիւն պէտք է արուի: Ինձ թուում է թէ նրանք ամենքը բացարձակապէս անհրաժեշտ են: Առաջին առաջարկութիւնը այս է: պէտք է լսիր ու զերծ պահանջները:


Դուք պիտի պահանջէք այն ինչ որ անհրաժեշտ պէտք է և կարելի եղածին չափ յարմարվում է մեզնից առաջ եղոծ առաջարկութիւններին: Չեմ վարանիլ ասելու, արկիններ և պարօններ, թէ այս խնդիրը լուծելու ամենալաւ և ամենապարզ կերպը կը լինէր ասելու թիւրքին որ հայտատանից դուրս գնայ (առարկի ծառի): Նա բնաւ իրաւունք չունի այնական մասն և խնդիրն էլ լուծելու ամենալաւ կերպն էլ այդ է: Բայց հաւանական չէ երեւում որ երուպան կամ նոյն իսկ երեք պետութիւնները համաձայնուելով այդ եղած կացութեան դան: Ուստի յետ քաշունք այդ ամենից և պահանջենք միայն այն ինչ որ անհրաժեշտ է: Վերջապէս գալիս եմ միւս երկու առաջարկութիւններին, որոնցից առաջնը այս է որ դուք և պէտք է ընդունեն նույալու նույալու լուսական գիրք (լուսական գիրք, լուսական գիրք): Նրանք բացարձակապէս և բոլորովին անարժէք են: Եւ անարժան լինելուց զատ այս վատութիւնն էլ ունին, որ կարող են խարել անտեղեակ կամ անփորձ մարդկանցից ոմանց, որոնք ենթագրում են թէ երբ խոստում կայ, նշանակում է և խոստումը կատարելու դիտաւորութեան պէս մի բան էլ կայ: Իմացէք որ ոչ մի ծրագիր արժէք չի ունեալ, եթէ հիմնուած չէ թիւրք կառավարութեան խոստումներից գուրս եղող աղբեցիկ երաշխաւորութիւնների վրայ

(ծագի.): Մի խօսք էլ կայ որ պիտի ասեմ ձեզ: Շատ միք վա-
խենալ երբ տեսնէք թէ իմ ձառիս մէջ մտցնում եմ մի բառ,
որը ընդունում եմ թէ սովորական հանդամանքների մէջ գի-
ւանագիտական գործողութիւններից դուրս պէտք է ձգել
այդ բառն է հնարուն (coercion) բառը: Ճնշում բառը շատ լաւ
են հասկանում Կ. Պոլսի մէջ և մեծ նշանակութիւն են տա-
լիս նրան: Այդ մի ազգու գեղ է (ծիծառ) որ միշտ նպատա-
կին է ծառայում, երբ այնտեղ դործ է ածվում: Պարոններ,
այդ բառը չի գործ ածիլ եթէ ես ինքս անձամբ երկար
փորձառութիւն ունեցած ըլ լինէի կառավարութեան վար-
մունքների մասին: Ես ասում եմ որ քննեցէք նախ թէ ձեր
պահանջը բարի է թէ ոչ և երբ բարի է նա, վճռեցէք թէ
նա պէտք է յաղթանակի (ծագ.): Քերականութիւնն էլ այս-
տեղ դործ ունի: Յիշեցէք որ երբ Կ. Պոլսում «պէտի» բառն
է Հնչվում, օդի մէջն է ցնդվում և ոչ էլ ոյժ և ոչ էլ հաս-
տառութիւն է ունենում այն ամենը, ինչ որ նրա հետ է
կցուած լինում: ընդհակառակն, նրա քոյր կամ եղբայր եղող
«պէտի» բառը շատ լաւ է հասկացվում այնտեղ (ծագ.):
Սա յայտնի մի իրողութիւն է դրական փորձառութեամբ
հաստատուած որ կարող է սառագուիլ Եւրոպայի քարտէզնե-
րի վրայ, թէ մի բառի իւր յարմար ժամանակ և արդարացի
կերպով գործածուիլը երբէք իւր ազգեցութիւնը չի կորցնիլ:
Պարոններ, պէտք է ասեմ ձեզ որ արդարե մի շատ տագ-
նապալի վիճակի հասած ենք այժմ: Եւրոպական երեք մեծ
պետութիւնները որոնք 200 միլիոն ժողովուրդ են կառա-
վարում, որ թիւրքիայի ժողովուրդից թիւրես ուժ կամ տասն
անգամ աւելի է, որոնք թիւրքիայից հինդ անգամ աւելի ազ-
դեցութիւն և կարողութիւն ունին և թիւրքիայից քսան
անգամ աւելի հարստութիւն, աշխարհի առաջ իրենք էլ
բռնուած են այսօր այս դործի մէջ. եթէ յետ քաշուին ա-
նիրաւ զիմանդրութեան առաջ—յիշեցնում եմ, ինչպէս սրա-
նից առաջ էլ ասել եմ թէ մեր պահանջը բարի, իրաւացի
պէտք է լինի—եթէ նրանք սուլթանի և օսմանեան կառա-
վարութեան անիրաւ զիմանդրութեան առաջ յետ քաշուին,
իրենց պատիւլ կը կորցնեն աշխարհի առաջ: Պարտաւորու-
թեան ամեն մէկ շարժառիթը կտպ ունի արժանապատուու-
թեան զգացման հետ և, իմ լորդ դուքս, իսկ այժմ արտա-
սանեցիք մի բառ, որ սարսափեցուցիչ է և գմբախտաբար
ու բոլորովին անտեղի՝ (բնաջնջութ-ն) (extermination) բառը: Մինչև
հեռաւոր տեղեր—ես ինձ ձեռ հաս չեմ համարիլ այդ խըն-

զիրը դատելու, — մինչև հեռաւոր տեղեր ընդհանուր կերպով համոզուած են թէ թիւրք կառավարութեան վերջին գործերը հայստանի մէջ մասնաւորապէս, բայց ոչ մի միայն հայստանի մէջ, Հիմուած են թրբարնակ բոլոր քրիստոնեաները բնաջնջ անելու վճռական որոշման վրայ:

Թէ-րէ հարավայրո-նեան երեն հրայ շայո-նը.

Կրցանկայի որ Ճշմարիտ ըլլինէր յիշեալ համոզումը, բայց միւնցին ժամանակ պէտք է ասեմ որ այդ հաստատող ապացոյցներ կան, (լեզվ'+, լեզվ'+) և զլիաւոր ապացոյցն էլ թիւրք կառավարութեան իրեն վրայ շլաշած լինելն է (infatuation): Կար ժամանակ որ Թիւրքիան կառավարվում էր պարկեշտ և Ճարպիկ մարդկանցով: Կարող եմ ասել որ մօտաւորապէս 30 տարի առաջ կարելի էր թիւրք կառավարութեան խօսքերին վստահիլ իրրե եւրոպական մի կառավարութեան. կարելի էր ըլհաւանիլ նրա ընթացքին, բայց կարելի էր վստահիլ նրա խօսքերին. բայց աւազ, այժմ կարծես թէ իրրե պատիժ է իրեն վերայ տիրել իւր կարողութեան մասին մի տեսակ շլաշումը: Ի՞նչ է պատահել Թիւրքիային: Եթէ նայէք իւր խօսքերին, կը զարմանաք թէ ինչպիսի հեղինակութեամբ է խօսում իւր կառավարութեան մասին, ինչպիսի հպարտ զիրք է բռնում երբեմն տսելով թէ չի կառողիր արժանապատւութիւնը վտանգել չի կարող հրաժարուիլ իւր իրաւունքներից: Ի՞նչ եղան իւր այդ իրաւունքները կայսրութեան մէկ երրորդ բաժնի մէջ: Իմ կեանքի միջոցին Թիւրքիան կորցրեց իւր երկրի մէկ երրորդ մասը և 6 կամ 8 միլիոն ժողովուրդ, որոնք աշ-



ԶԵՄՍ ԲՐԱՅ.
Right Hon. James Bryce.

Խարհի ամենագեղեցիկ, ամենահիանալի և հռչակաւոր տեղերում էին բնակվում և օսմանեան կառավարութեան տակն էին գտնվում, իսկ այժմ նոյնպէս ազատ են, ինչպէս որ մենք. (Ժան.): Օսմանեան կառավարութիւնն ինքն էլ մեր չափ լաւ դիտէ այդ յիմարական ընթացքը: Միւս կողմից լորդ գուքսը շատ արդարացի կերպով յիշեց այն վարչական ծրագիրը, որ 1861-ին հաստատուեցաւ կիբանունի մէջ և որով տեղային վարչական հիմնագրութեան և վերահսկողութեան (control) գործի մէջ ժողովրդին իրաւացի կերպով բաժին տրուեցաւ: Թիւրքիայի այդ մասի մէջ հետեանքն էլ շատ գոհացուցիչ եղաւ: Երկրի փոքրիկ մի մասն է այդ, ուր տեղական ինքնավարութեան նման մի բան թոյլատրուած է և իւր վիճակի մէջ շատ յուսալի է: Բայց երբ տեսնում ենք այս ամենը որ արդարութեան գաղափարով մէկը միւսի յետելից յաջորդաբար կատարուած փորձառութիւններ են և միւս կողմից էլ երբ տեսնում ենք թէ յոյները, բոլգարները և չորս կամ հինգ տէրութիւններ երեան են եկել Թիւրքիայի իւր այդ նահանդները կորյունելուց, այդ ժամանակ ես ասում եմ թէ թիւրք կառավարութիւնը յայտնապէս ինքն իր վրայ շլանալից էլ յիմարացած այնպիսի վիճակի մէջ է, որ մարդ ստիպուած է հաւատաւթէ ինչ ինչ պարագաների մէջ նա կարող է իւր ոյժի վրայ շլացած յիմարանալ այնպիս, որ քրիստոնեաց ազգերը բնաջինջ անելու ծրագիր կազմէ: Այս շատ ախուր և սոսկալի պատմութիւն է և ես երկար ժամանակ զբաղուեցի ձեզ պատմելու համար, բայց նրա շատ մի փոքր մասն է այս և ես յոյս ունիմ թէ ձեզ ներկայացուած որոշ ման բանաձեռը լսելով ձեր համաձայնութիւնը պիտի շնորհէք նրան (Ժան.): Ես ուրախ պիտի լինեի եթէ ուրիշ խառնակութիւններից լսուսափելու համար թիւրք կառավարութեան լսելքը զլուխը գար, եթէ միայն ֆոււադ և Սլի փաշայի պէս մարդիկ, որոնք Խրիմի պատերազմից յետոյ թիւրք կառավարութեան վլուխ էին անցել կարողանային յարութիւն առնել և իրենց ոգին ու ազգունքները ներշնչել Թիւրքիայի քաղաքականութեան: Այս է իմ կարծիքը և ամենքս էլ այս պիտի փափազնք, և թէպէտ շատ աւելի հաճելի է լուսաւորել Թիւրքիան բան թէ նրան յանցաւոր գատել սոսկալի ամբաստանութիւններով սակայն եթէ ունինք ամենափոքր մի յարդանք մարդկութեան համար, եթէ զգում ենք մեր պատերը, վերջին տասներկու կամ ութ տիսների մէջ արած այնչափ դիմումներից յետոյ, պէտք է

որ այս գործի մէջ առաջ երթանք: Պէտք է հոդ տանել որ իրաւացի եղածից աւելին չը պահանջինք—բայց վերջապէս ինչ որ պէտք է և պէտք է հաստատ գիտենանք որ Աստուծոյ օղնութեամբը պիտի շնորհուի, ինչ որ կարեղո՞ն է և ինչ որ իրաւացի է»:

Այնուհեաև Կանոնիկոս Մակ-Քօլը կրկնեց ժողովի որոշումը և ասաց, որ ինքը վստահ է, թէ լորդ Սոլսբրին կը հաւատայ, որ Չեսթրոի այս միթինկը իւր ձեռքերը կը զօրացնէ գործելու համար այս խնդրում: (Ժա՞՞):

Որոշումը ընդունուելու մեջ ոգեորութեամբ:

Չեսթրոի եպիսկոպոսի առաջարկութեամբ, որ կրկնեց նաև լորդ Քէնիէն, երեք անդամ ծափահարութեամբ շնորհալութեան քուէ արուեցաւ որ, Գլադստոնին իր ծառի համար: Մեծ Ծերունին շնորհակալ լինելով յշյա յայտնեց, որ Թագուհու կառավարութիւնը բարեկամական աչքով կը նայէ այս ժողովի ջանքերին, որը կ'օգնի հայաստանի նկատմամբ նոցա վերայ ծանրացած մեծ պատասխանատվութեան բեռը թեթևացնելու:

Միթինկի վերջանալուց յետոյ, պ. Գլադստոնը անվերջ ծափահարութիւններով և կէցցէների աղաղակներով նստեց կառը և մեկնեց՝ անցնելով խուռան ժողովրդի միջեց:



Ասառնացի հայ.



Անդամ, ու Անդ Շեյլիս պահի մջ մայիսի 7-ի մեջ պարբեկը—Արկադի Դավթյան է խօսում, իր և նախագահի:
1. Թոք. Առաքել, 2. Մատթ Շաքի, 3. Բլազ շֆ Հեն, Քարտ, 4. Լուի Պրաւ, Արքայի առաքել, 5. Մինոր Արքայի առաքել, 6. Լեոպ Շենք Ասքերով հետ:



ԱՅԻ.ԹԱՆԻ ՀՐՈՎԱՔՑԱԿԸ. ՀԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԱԼԻԹՈՒՆ, ԱՅ

ՀԱՅԱՏԱՏՈՒԾ Է ՀՅԱՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ

ԳԼՈՒԽՆ Ա.-ՎԻԼԱՋ է թներ և Մութեասրի ֆներ (Նա-
շանդներ և նահապետներ). Յօդ. 1.—Վմեն մի վիլայէ-
թում նշանակվում է մասվին-օգնական ոչմահմեդական, 1286 թ.
շեվալ ամսի 9-ի վիլայէթները կառավարելու օրէնքի հա զլսի
որոշութիւնը համաձայն: Վյու օրէնքի հիման վերայ, օգնականի պար-
տառութիւնը կայանում է վիլայէթի գործերի մասնակցութեան
և կառավարութեան մէջ և գործարավարութիւնը դիւրացնելու:

Յօդ. 2.—Ոչմահմե-
տական օգնականները սան-
ձաղներում և զավաններում
օգնում են մահմեդական
մութէսարի ֆներին (Նա-
հանգապետներին) և գայ-
մագամներին (գաւառա-
պետներին), ուր այդ պա-
հանջում է քրիստոնէական
աղդաբնակութեան քանա-
կութիւնը:

ԳԼՈՒԽՆ Բ. Գայ մագամ-
ներ. Յօդ. 3.—Պայմա-
գամները ընտրվում են ա-
ռանց կրօնի խարութեան
ներքին գործոց նախարա-
րից քաղաքական դպրա-
նոցի վկայական ունեցող-
ներից և հաստատվում են
կայս. հրովարտակով:

Յօդ. 4.—Պաշտօնի մէջ այժմ գտնուող ծառայողները, որոնց
ընդունակութիւնը անժխտելի է, կըման իրենց պաշտօններում,
եթէ մինչև անգամ վկայականներ չունենան: Եթէ որոշ թուով
վկայականներ ունեցողներ չեն գտնուիլ ոչմահմեդականներից, այն
ժամանակ կը նշանակուին և վկայական չունեցողներից, երբ նոքա
ընդունակ կը գտնուեն գայմագամից վարելու պաշտօնները:

ԳԼՈՒԽՆ Գ. Պետական ծառայութեան մէջ քրիստո-
նեաների և մահմետականների թիւը: Յօդ. 5.—Ա ար-
շական պաշտօնները կը վարեն մահմեդական և ոչմահմեդական
հպատակները համեմատ նոցա թուին ամեն մի վիլայէթում: Ոչմահ-



ՍՈԼԵԻՍԲՐԻ.

Lord Salisbury—The New Prime Minister.

մեդական պաշտօնեաների թիւը ոստիկանական և ժանդարմիական ատեաններում կ'որոշէ մշտական հսկող մասնաժողովը:

Գլուխ Դ. Աանջաղներում և ղաղաներում վարչական խորհրդները, որոնք կազմվում են ընտրուած և պաշտօնապէս նշանակուած անդամներից, գոյութիւն կունենան առաջուան պէս և կը կատարեն իրենց պարտաւորութիւնները 1286 թ. վիլ. ընդհ. կառավ. օրէնքի 61-դ, նշյն և 1867 թ. վիլ. մատին 77 և 78 յօդուածների հիման վերայ, որոնց համաձայն այս խորհուրդները հաստատուած են եղել: Կոցա իշխանութեան սահմանը որոշուած է վիլ. ընդհ. կառավարութեան օրէնքի 90, 91, 92 յօդուածներով և 1293 թ. ընդհնուր կառավարութեան վերաբերեալ հրահանգների 38, 39 և 40 յօդուածներով:

Գլուխ Ե. Նահիա. (Համայնական շրջան). յօդ. 7. «Աահիաները պէտք է կազմակերպուեն 1287 թ. վիլ. ընդհ. կառ. օրէնքի 94—106 յօդ. որոշուածների և 1292 թ. մարտ 25 համայնական կառավարութեան օրէնքի 1—19 յօդուածների համաձայն:

Յօդ. 8.—Վմեն մի նահիա կը կառավարուի մի մուտիրից և տեղացի ժողովրդից ընտրուած 4 անդամէ խորհրդից: Վայ խորհուրդը իւր միջից կ'ընտրի մի միւտիր և մի օգնական: Վուտիրը բնակիչների մեծամասնութիւն կազմող տարրիցն է լինելու, իսկ օգնականը փոքրամասնութեան ներկայացուցիչ: Խորհուրդը ունենալու է իւր ատենադպիրը:

Յօդ. 9.—Վթէ նահիայի բնակիչները միւնոյն ազգիցն են, խորհրդի անդամները բացառապէս ընտրուելու են նոցանից: Վթէ համայնական գաւառու ազգաբնակութիւնը խառն է, փոքրամասնութիւնը պէտք է ներկայանայ համաձայն իւր համեմատական նշանակութեան, սակայն այն պայմանաւ, որ այդ փոքրամասնութիւնը 25 ծուխից պակաս չի լինի:

Յօդ. 10.—«Աահիայի միւտիրները և ատենադպիրները ստանում են ռոճիկ:

Յօդ. 11.—«Աահիայի խորհրդի անդամները պէտք է յարմարուեն այն պայմաններին, որոնք նախատեսուած են համայնական կառավարութեան օրէնքի 18 յօդուածում:

Յօդ. 12.—Վմամեները, քահանաները, ուսուցիչները և պետութեան ծառայութեան մէջ գտնուող բոլոր անձինք չեն կարող մնալու միւտիր:

13.—Վրաքանչիւր տարի խորհրդի անդամների կէսը նորոգվում է: Խնչպէս միւտիրը, այնպէս և անդամները կարող են վերընտրուիլ:

14.—Վուտիրի և նահիայի խորհրդների իրաւասութիւնը որոշվում է համայնական կառավ. օրէնքի 20—27 յօդ.

Վիւղերը նահիան երուամ. յօդ. 15.—Վրաքանչիւր գիւղ

Նահիայում կունենայ իւր մուլսթարը (գիւղապետ): Աթէ գիւղում մի քանի թաղեր են և մի քանի ազգութեան բնակիչներ, այդ դեպքում ամեն մի թաղ և ամեն մի ազգութիւն կունենայ իւր մուլսթարը:

16.—Աչ մի գիւղ չէ կարող միաժամանակ գտնուիլ երկու նահիաների իրաւասութեան ներքոյ:

ԳԼՈՒԽ Զ. Արդարագութ առու թիւն, յօդ. 17.—Խւրաքանչիւր նահիայում աւագների խորհուրդ է լինելու մուլստարի նախագահութեամբ: Այս խորհուրդի պարտաւորութիւնն է դատաստանական օրէնքների հիման վերայ բնակիչների մէջ խաղաղութեամբ լուծել վէճերը:

18.—Հաշտարար դատաւորների պարտաւորութիւնները գիւղերում կատարում է աւագների խորհուրդը, իսկ համայնքներում՝ համայնական խորհուրդները: «Եոցա իշխանութեան իրաւասութիւնը որոշուած է օրէնքով»:

19.—Դատաստանական հսկիչները, որոնց թիւը 6-ից պակաս չէ կարող լինել (<իշխանական թուով մահմեդական և ոչ-մահմեդական>), հաստատվում են ամեն մի վելայէթում բոլը ընթացիկ գործոց դատավարութիւնը արագացնելու համար և գիտելու բանտերի վեճակը քաղաքացիական դատարանների կազմութեան օրէնքի բարձրութիւնը որոշումների համաձայն: Ա երահսկողութիւնը կատարվում է միաժամանակ երկ-երկու հսկիչների կողմից՝ մի մահմեդականի և մի ոչ-մահմեդականի:

ԳԼՈՒԽ Է. Ոստիկանութիւն, յօդ. 20.—Ոստիկանական պաշտօնեանները ընտրվում են հպատակ մահմեդականներից և ոչ-մահմեդականներից համեմատ վելայէթի երկրի ստորաբաժնում է միւտիրին և յանձնակատարի գլխաւոր իշխանութեան ներքոյ է: Ոստիկանների համար լինելու է սովորական:

21. Վեն մի վարչական բաժանմունքի համար, այստեղ առնելով և նահիան, կ'որոշուի այս պաշտօնեաններից բաւական թուով: «Կահիայում ոստիկանութիւնը ստորաբաժնում է միւտիրին և յանձնակատարի գլխաւոր իշխանութեան ներքոյ է: Ոստիկանների համար լինելու է սովորական»:

ԳԼՈՒԽ Ը. Ճանդարմերիայի սպաները, ենթասպանները և զինուորները առնվում են հպատակ մահմեդականներից և ոչ-մահմեդականներից իւրաքանչիւր վելայէթում նոցա քանակութեան համեմատական չափով: Ճանդարմերիան կըպահպանուի իւրաքանչիւր վելայէթի գանձատան հաշուովը: Ճանդարմերիաների ռոճիկը պէտք է բանակի մէջ գտնուող զինուորի ռոճիկից աւելի լինի, իսկ ժանդարմերիայի սպանների ռոճիկը հաւասար բանակի սպանների ռոճիկին:

23.—Ճանդարմերիային յանձնարարվում է կարգի պահպանութիւնը և փոստին ուղեկցելը:

ԳԼՈՒԽ Թ. Գիւղական ոստիկանութիւն, յօդ. 24.—«Եա-

Հիսյի խորհուրդը հաւաքելու է գիւղական ոստիկանութիւնը բնակիչների ամեն ազգերից: Ոստիկանների թիւը որոշում՝ է մշտական հսկող մասնաժողովը ամեն մի նահիսյի կարիքների համաձայն և միւտիրի զեկուցման հիման վերայ և նոյնպէս վալիի առաջարկութեամբ: Համազգեստը և զէնքը մատակարարում՝ է նոցա համար զինուորական ատեանը:

Գլուխ ժ. Բանտերը և ժամանակաւոր բանտար կութեան մասնաժողովը ընդհանուր վարչութեան վերաբերեալ հրահանգների համաձայն հրաւիրվում է կատարել իւր պարտաւորութիւնները ամենաճիշտ կերպով:

26. Ժամանակաւոր բանտարկութեան մասնաժողովը ընդհանուր վարչութեան վերաբերեալ հրահանգների համաձայն հրաւիրվում է կատարել իւր պարտաւորութիւնները ամենաճիշտ կերպով:

Գլուխ ժԱ. Հսկողութիւն քուրտերի վերայ. յօդ. 27. Վուրտերի տեղափոխութեան համար կանխօրէն ցոյց կտրուին որոշ տեղեր, բայց ի նկատի կառնուի այն, որ չուող ցեղերը վնաս չը հացնեն մերձակայ բնակիչներին: Վուրտերի տեղափոխութեան ժամանակ նոցա կ'ուղեկցէ մի սպայ, որ իւր ձեռքի տակ կունենայ մի գումարտակ և ժանդարմեր: Խպայի հետ կը լինի ոստիկանական յանձնակատարը: Վուրտերը իշխանութեանը պէտք է ներկայացնեն երաշխաւորութիւն իրենց լաւ վարի համար: Անցաթղթերի մասին որոշումները և զինաթափ անելը կը գործադրուի և քրուերի վերաբերմամբ: Չուող և թափառող ցեղերին կառաջարկուի բնակուիլ տերութիւնից նշանակուած հողերում:

Գլուխ ժԲ. Համիտէի հեծելազօրքը. յօդ. 28.— Օպայութիւնից դուրս զէնքը և համազգեստ կրելը արդելվում է: Վայ շրջանից դուրս Համիդիէ հեծելազօրքը սովորական դատարանների հսկողութեանն է ենթարկվում: Հատ շուտով այս հեծելազօրքի ծառայութեան վերաբերմամբ կը հատարակուին զինուորական կանոններ:

Գլուխ ժԳ. Կալուածագրերի վերաբերեալ հարցը: յօդ. 29. Վայ մի վիլայէթի կամ սանջաղի գլխաւոր քաղաքում կը հաստատուին յանձնաժողովներ կալուածների վերաբերեալ ապացուցագրերը վերաբերնելու համար: Վայ յանձնաժողովները կը բաղկանան չորս անդամներից՝ երկու մահմետական և երկու ոչմահմետական, դիւանի կառավարչի կամ պետական կալուածոց պաշտօնեայի նախագահութեամբ: Կոցա վճիռները վարչական խորհրդների քննութեանը կը յանձնուին, բացի այդ, ամեն տարի Պոլսից կ'ուղարկուին վիլայէթները վերաբերնելու համար չորս պաշտօնեներ, թէ արդեօք, գոյութիւն չե՞ն ունեցել որ և է անկանութիւններ սեպհականութեան վերաբերմամբ:

Գլուխ ժԴ. Հարկանանութիւն. յօդ. 30. Հարկերը ժողովներու ժամանակ ոյժ գործադրելուց խուսափելու համար նշա-

Նակուած են մասնաւոր գործակատարներ, որոնց իրաւունք չեն արուի պահանջմանը հասոյթ կամ պաշար և նոքա ոչ մի գործ չեն ունենայ փողի հետ, բայց նոցա կը յանձնարարուի յանձնել գիւղերի և թաղերի բնակիչներից ընտրուած մուխտարներին և հարկահաններին անուանացուցակները, որտեղ կը գրուի թէ որբան պէտք է առնել այս ինչ բնակչեցից: Մուխտարներին և հարկահաններին կը յանձնարարուի ժողովել հարկերը և յանձնել պետական գանձատունը:

Գլուխ ժԵ. Տասանորդական տուլքի ժողովելը պէտք է տեղի ունենայ կապալով: Հարկը ընդհանուր կապալով վեր առնելը արգելվում է և փոխարինում է իւրաքանչեւր գիւղից առանձնապէտ՝ նորա բնակիչների անունից տեղի ունեցող հարկահանութեան եղանակով: Այս և է գժուարութեան դէպքում բնակիչները կարող են դատարանին դիմել: Ոտիպողական աշխատանքները արգելվում են, իսկ փոխարինութիւնը արդիւնքով և փողով մնում է: Ժողովը գանձնական կրթութեան ամեն մի վիլյայէթի համար հաշուեկշիռը որոշվում է հանրային կրթութեան նախարարից: Պետական կամ մասնաւոր անձի պարտքի համար պարտապանի տունը, հողը, որոնք անհրաժեշտ են նորա գոյութեան համար, աշխատանքի գործիքները, տնային գրաստը և հացարոյմերի ծախելը, արգելվում են:

Գլուխ ժԶ. Մշտական մնայուն վերահսկող ժողով Պոլսում. յօդ. 32. Մշտական վերահսկող ժողով հաստատվում է Տ. Դրանը մահմեդականի նախագահութեամբ և բաղկանում է հաւասար թուով մահմեդականներից և ոչ-մահմեդականներից և պէտք է հետեւ բարենորոգումների կանոնաւոր իրագործման: Դեսպանները իրենց թարգմանների միջոցով կարող են այդ ժողովին ներկայացնել իսրայէլներ, հաղորդագրութիւններ և զեկուցումներ, որոնց նոքա անհրաժեշտ կը համարեն այս արձանագրութեան մէջ յիշուած միջոցներին ու բարենորոգումներին օրինական ոյժ տալու համար: Երբ Տ. Դրույ և գեսպանները միասին կըդան այն եղակացութեան, որ ժողովը իւր գործը աւարտել է, այն ժամանակ նա կը փակուի:

—————
Որոշումներ, որոնք իշխաննեն բաշխնորդումներ յայտաբարող
հայուսաբանի մէջ:

Ա. Տարենորոգումների գործադադրութեանը հսկող Բարձրագույն լիազօր: Կառավարութիւնը ընտրում է ամեն կողմից արժանի մի պաշտօնեայ, որը կը կրէ բարձրագոյն լիազօրի կոչումը (մուֆֆէտիէ) և կ'ուղերուի զանազան կողմեր մասնաւոր նպատակաւ բարենորոգումների գործադրութեանը հսկելու և այն գործադրելու: Եյս բարձրագոյն պաշտօնեայի բացակայութեան կամ անընդունակութեան պատճառով, նորան փոխարինում է սուլ-

թանից նշանակուած մի ուրիշ մահմեդական բարձրագոյն պաշտօնեայ: Իսրաձրագոյն լիազօրին կուղեկցէ նորա պաշտօնավարութեան միջոցին ոչ-մահմետական օգնականը:

Տ. Ծնդհանուր ներումն: «Ա. Մեծութիւն սուլթանը յունիսի 23ին 1895 թ. քաղաքական յանցանքների համար մեղադրեալ կամ գատապարտեալ հայերին ներումն շնորհեց: Այս հրամանը տարածուելու է մինչև ներկայ թուի բոլոր բանտարկուածների վերայ, որոնք դեռ գտնվում են բանտում և չեն մեղադրվում սովորական յանցանքներ գործելու մէջ:

Գ. Փախստականների վերադարձը: Իրենց երկրից փախած և հեռացրած կամ օտար երկիրներ գաղթած հայերը իրաւունք են ստանում վերաբառնալ Տաճկաստան, եթէ ապացուցեն իրենց տաճկահպատակութիւնը և լաւ վարը:

Դ. Ոչ-մահմեդականների վերադարձը: Ասիոյ միւս վելայէ թներում: Ա երոյիշեալ սկզբունքների վերայ հիմնուած միջոցները գործադրուելու են ամեն տեղ ուր ոչ-մահմեդականները բնակիչների ստուար մեծամասնութիւնն են կազմում:

Մեծ եպարքոսի առ Հարզերումի, Վանի, Բաղէշի, Տիգրանակերտի, Մամուրէտ-ուլ-Եղիզի և Սեբաստիոյ կուսակալներին ուղղուած հրամանի մէջ, նոյն և նորերս վերահսկեներալ նշանակուած Շաքիր փաշային տեղեկագրուած է, որ սուլթանի հրովարտակի յօդուածների իրագործումը տեղի ունենայ ամենայն ինամբով և միշտ գործադրուած միջոցների մասին հաղորդել սուլթանին:



Հայական երգին Դարպանական:



Նորին Բարյերստիւն Արժեղունուոյս Քիւդապարէն.



Նորին Բարյերստիւն Արժեղունուոյս Խօթէն.



Լորդ Ուոլտոն, Նորին Նախարարութէուն.



Նորին Բարյերստիւն Դամաւ Ռեկորդնուորէն.



«Գերլէ Նէ-զ» լրագրէ իշբը Սըր Ճան Ուոլքնազն.



Լորդ Վիլհալմէ, Նորին Նախարար արք. Քործ.

ԱԶԴԱՐԱՐ

ԹԻՐԱՅ ԱՄՍՈՅ

1794

Բարեպաշտ Պարոնաց և
Մաքրակենցաղ Ծիկնաց } Մադրասիս Հայոց.

Կատել լով իմայլ եթէ զօժանդ ուկրակ տպարանին՝ և եթէ
բարեպաշտ Պարոնաց և իմ ալն ուստափի բաց, յարնար վար-
կարդ և պահ ի բնել առաջի ծերում գումարի ազգայի բան, զնուկուն
առաջ և պահ ի պահ գումարի մի լոյս ածել լցուտը տրկ մի յամաւմ վերջնոց
ամաց, մասն անե ազգայի պահու յորմէ իմացուն լինել լոյտ ըն-
թե բարողաց, ծայրաբաղ անցքն նոյնոյ ամսոյ, և իթէ ՚ի զնուազան կա-
զէթ աց, եթէ ՚ի զնուազան քարտիսոց, և եթէ սոյլոց զնուազան
գորոց, նաև բանք հարկաւորք և քաղցածութիք, և ՚ի վերջնուն մն
տետրապին, զօրացոյ մի հետեւ ալ ամսոյ, պարոնակե ալ ՚ի նմա-
կառն սրբոց, և զաւուրս ծննդե ան և լրման լրւմաց և սոյլն:

Արդ

ԱՆԳՐԱԿԱՆԻ ԼՐԱԳԻՐ ՀԱՅՈՅ

ՀՐԵՍԵՐԵԿԵՆԵԼ

Ի Մ Ա Գ Ր Ա Ս 1794-6.

Ի

Տ. ՅԱՐՈՒԹԻՒԽ ՔՅ. ՇՄԱԿՈՆԵԱՆԵ

«Ազդարար» անդրանիկի լրագրի երեսը ինուկ չափ քուրոցը:

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՍԵԱԿԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

1794 թուականի հոկտեմբերը 16-ը հայկական կեանքի համար կաղմում է մի խոշոր գարազլուխ, որովհետև այդ ժամանակ է ծնունդ առնում մի նշանաւոր ձեռնարկութիւն, որը ժամանակակից թանձր խաւարի մէջ փայլում է որպէս մի լուսաւոր աստղ: Այդ օրը, սորանից ուղիղ հարիւր տարի առաջ, հեռաւոր չնդկաստանում, Մադրաս քաղաքում, լոյս է տեսնում առաջին անգամ «Աղջաբար» ամսագիրը, հայ մամուլի այդ երախսայրիքը, որով և սկիզբ է առնում մի նոր շրջան:

Աչքի առաջ ունենալով «Աղջաբար»-ը և խորը թափանցելով անցեալ դարու հայ կեանքի ներսը, իսկոյն տեսնում ենք, թէ ինչպէս համատարած հայութիւնը Գանգէսի ավերից մինչև նեւայի ափերը խաւարի ու տղիտութեան մէջ է մրափած, և միայն մի քանի անհատներ աստ ու անդ գեղերելով որպէս և անմոռանալի Մեսրովք Թաղիաթեան, յուսահատ հառաջում են ընդհանուր վիճակի վերայ, և զոցանից համարեա ոչ ոք իւր մէջ ոյժ ու կարողութիւն չէ զգում ժողովրդի մտաւոր մահաքունը ընդմիջելու: Ահա այդ ժամանակն է ինչ հայ եկեղեցւոյ հարազատ սպասաւորը, Տէր Յարութիւն քահանայ Շմուռնեանը, վեհ աւանդութիւններով հրապարակ է նետիւմ ու իւր ամսագիր «Աղջաբար»-ը հիմնում:

Զընայելով ժամանակի խոչընդուներին, որ հայ լըադրութեան նահապեալը, անշուշտ, մեծ քանակութեամբ պէտք է ունենար իւր առաջ, այնուամենայնիւ, նա իւր վեհ նպատակը առաջ մղելու համար ամենայն անձնուիրութեամբ մեծ ժիդ ու ջանք է գործ զնում «Աղջաբար»-ը օգտակար գարձնելու համար, և արդարե իւր հրատարակութիւնը համարեա առաջին իսկ ամիսներից սկսում է ծառայել ամենուրեք յրուած հայերի շահերին, որքան ժամանակակից հանգամանքները զորան առիթ էին տալիս:



Հայ մամուլի անդրանիկ խմբագիր-հրատարակչի՝ բարեյի-շատակ Յարութիւն աւագ քահ: Շմաւոնեանի վերայ, հայաղգի գրագէտ Թաղէսոս Աւետումեանը իւր Աղամայն հրատարակութեան մէջ (եր. 118—120) հաղորդում է հետեւեալը:

«Տէր-Յարութիւն Շմաւոնեան Շիրազեցի քահանայութեան ժամանակ գժբաղտանում է՝ կորցնելով մի շաբաթուայ ընթացքում իւր երկու զաւակներին, ու այնուհետեւ վիրաւոր սրտով նա առանձնանում է Բաբաքուայ լեռը, ուր ապրում է գերվիշների հետ եօթը տարի։ Այս լեռը Շիրազեց երկու ժամանակ չափ հեռաւորութիւն ունի, որի ստորոտում գտնվում է հայոց գերեզմանատունը։

Լեռան վրայ այս աշխատասէր քահանան ուսումնասիրում է պարսկերէնը, որի մէջ հայոց ազգին յատուկ ընդունակութեամբ մեծ հմտութիւն է ցոյց տալիս։ Բաւական ժամանակից յետոյ զիջանելով իւր ընտանիքի բուռն թախանձանքներին, կրկին անդամ իջնում է քաղաք (Շիրազ), իսկ այնտեղից անցնում է Մալրաս՝ քահանայական պտշառնով։

Այս քահանան, ինչպէս երեւում է, իւր անսովոր յատկութիւնները ստացած պէտք է լինի գերվիշներից։ Սորա մասին ասուած է, որ նա չը ներում կարօտեալներին, երբ նոքա ողորմութիւն հաւաքելու համար էին շրջում, այլ յորդորում էր նոցա աշխատութեան։ և մի անգամ պատրաստել տալով մի սափոր ուղարկում է մեծատունների մօտ, որով և հաւաքում է առատ ողորմութիւն կարօտեալների համար։ Սա մի բարի օրինակ է ընդհանրութեան համար։

Տասնութերորդ գարու վերջը սկսում է «Աղբաբար» ամսագրի և այլ զրբերի տպագրութիւնը, սակայն, գժբաղվաբար, ինչպէս միշտ պատահում է մեր մէջ, որ յարմար մարդկանց պահասութիւնից գործը վերջանում է իւր սկսողի հետ միասին, սոյնպէս և Մալրասի տպագրութեան դործը վերջանում է այս բարեյիշտակ աղջասէր անձի հետ։

Պարսից լեզուի գերազանց հմտութեան շնորհիւ, այս ազգասէր անձը արժանանում է Արկաթի և Մալրասի Նաբարի Վալաջայ Մահմադ Ալի խանի շնորհներին։ Նրանից հրաման է ստանում տպագրել նաև պարսկերէն և արաբերէն զրբեր»։ Այս հրամանազրի պատճէնը պարսկերէն և արաբերէն գեղեցիկ տառերով տպագրուած է յիշեալ «Աղբաբար»-ի 253 և 254 երեսներում։



«Աղբաբար»-ի առաջին գիրքը սկսվում է մի ազգով, որը նախապէս հրատարակուել է առանձին մի երկու ամիս առաջ, օգոստոսի 9-ին, առ «Քարեղպաղ» պարոնաց և հադրախնականց Մալրասիս հայոց»։

Այստեղ հայ մամուլի նահապետը ույտարարում է, որ «Նկատելով եթէ զօժանդակութիւն տպարանին և եթէ բարեպէս յառաջ եկեալն ուսութեասիրաց, յարմար վարկայ նուիրել առաջի ձերումի աղջասիրութեան զիսոկմունս նարդենիս, այսինքն տպեցմամբ ի լոյս ածել զանարակ մի յամենայնում վերջնոց ամսոյ, անուանեալ Աղոթ արարող յորմէ իմացումն լինելոց է ընթերցողաց ծայրաբաղ անցքն նշյն ամսոյ, եթէ ի զանազան կազէթաց եթէ ի զանազան քարտիսաց և եթէ այլոց զանազան գրոց. նաև բանք հարկաւորք և քաղցրալուրք, և ի վերջումն տետրակիս զ'օրացոյց մի հետեւեալ ամսոյ, պարունակեալ ի նմա զտօնս սրբոյ, և զաւուրս ծննդեան և լրման լուսնոյ և այլն: Գինն տետրակի մի հուն հաստատեցի»: Այս զրքի մէջ ասուած է, որ «տպարանն մեր և դպրոցն ո'ր է յօր ծաղկի, յառաջանայ և պաղարերէ»:

Այնուհեաւ արժանայիշատակ Յարութիւն քահ. Շմաւոնեանը խօսելով Մագրասում մի ամսով առաջ լոյս տեսած անդիխական ամսագրի հրատարակութեան մասին, ասում է, որ ինքը ևս հետեւելու է այդ ամսագրի օրինակին՝ «Աղոթարար»-ը, օգտակար և հետաքրքրական դարձնելու համար ընդ սմին ուրախութիւն է յայտնում, որ իրեն խոստացել են օգնել տեղւոյն հայ երիտասարդները՝ ամսագրի համար թարգմանութիւններ անելով, կամ լուրեր, տեղեկութիւններ հաղորդելով: Միւնոյն ժամանակ նա խնդրում է ընթերցողներից շատ էլ խոստապահանջ չլինել դէպի խմբագիրը, «քանիդի խոստովանիմ յայտնապէս զի ոչ ես և ոչ օգնականք եմ ոչ են հմուտիսկապէս քերթութեան արհեստի և ոչ բուն հմուտ գրոց...: Յաղագս այսորիկ հայցեմ արժանի առնել յուղարկելով որոք լուր, ախորժ շարադրութիւնք, ոտանաւորք, և որոք գրուածք որ իցէ պիտանի և հաճելի հասարակութեան, խոստանամ տպել զայն ամենայն (որ չիցէ անպատեհ գրուած) որքան զկարս իմ խոստանայ առ ի պարծանս շարագրողաց և երջանկութիւն աղգին մերոյ»:

«Աղոթարար»-ին նուռաստանից աշխատակցած են. Յովսէփի արքեալ. Արզութեանց և Ստեփաննոս Յովհաննէս Գուլամիրեան: «Սրբոյ և Մեծի Աթոռոյն Ս. Էջմիածնի ծայրագոյն նուիրակս նուսայ երկրի ամենայն հայոց աղջին Յուաջնորդ և Հիմնադիր Նոր-Նախիջևանայ ու ԳրիգորուՊոլսու Յովսէփի արքեպիսկոպոսը» գրում է Ս.Պետերբուրգից ժամանակակից քաղաքական անցքերի մասին ի Կովկաս

և Անդրկովկաս, Ռուսաց պատերազմները և հայոց անցքերը: Նոյնպէս տպուած է Գրիգորիսուլսի քաղաքի շինութեան համար Եկատերինէ կայսերուհու տուած Հրովարտակը, Եկատերինէ կայսրուհու, հայոց և Յովսէփի արքեպիսկոպոսի զինանշանները: Նաև տպագրուած է գաղղթական մեծ յեղափոխութեան մասին տեղեկութիւններ: Էետաքրքիր է աշխատակցութեան վերաբերմանը «Ապարար»-ի յայտարարութիւնը: Խմբագրութիւնը յայնում է որ եկեղեցու ղանգակառան տակ հաստատուած է մի արկղ ուր կարող ամեն մէկը «Ապարար»-ի մէջ տպագրելու համար լուրեր և այլ յօդուածներ ձգել: «Մեր բանալոց եմք, ասուած է, զօնդուկն ամենայն աւուր և զօր ինչ գտանիցիմք անդ գրեցեալք, յուղարկելոց եմք վաղվագիր առ ի վեր կարգեցեալք վերակացուս, որպէս զի նոքա վերահսու լեալ զրուածոյն, զոր ինչ ի նոյանէ յարմար վարեցին, առաքեսցեն ի տպարանն զի տպեսցուք»:

«Ապարար»-ը, ինչպէս երեւում է յայտնի զրասէր, արժ. Յովհ. աւագ քահ. Մկրեանի ամբողջական օրինակից, գյուղութիւն է ունեցել մէկուկէս տարի, և այս ժամանակամիջոցում կանոնաւորապէս լրս է տեսել իւրաքանչիւր ամիս մի մի տետր, հետեւապէս ընդամենը հրատարակուել է 18 ամսատետր, որից չորսը՝ 1794 թ., տասնուերկուուրը՝ 1795 թ. և երկուուրը՝ 1796 թ. առաջին երկու ամսում: Այնուշետե մել անյայտ պատճառներով դադարում է:

1894 թ. հոկտեմբ. 27-ին լրացաւ հայ լրագրութեան հարիւրամեակը, որի առթիւ Վիեննայի Միաբանութիւնը հրատարակեց 1894 թ. բոլոր հայ լրագրների խմբագրների պատկերները և հայ Լրադրութեան պատճեն-նի-նը է ոչ բնակ մէջ ժամանակները:

Մենք կարծում ենք, որ հայ լրագրութեան հարիւրամեակը այնքան նշանաւոր, խրախուսիչ և յանկալի շրջան էր աւետում հայ ժողովրդի նորաբողը զիտակցութեան համար, որ հայ մաքի ու բարոյականի առաջնորդները պարտաւոր էին այնպէս թշլ չանցկացնել որպէս այդ տեղի ունեցաւ: Հայ լրագրութեան հարիւրամեակը պէտք է հայ ժողովրդի համար ցնծութեան ու ուրախութեան հանդէսներ ծնեցնէր, մանաւանդ այժմ, երբ ազգային զիտակցութեան շարժման զօրեղ նշաններ ենք տեսնում հայ ժողովրդի մէջ:



ՀԴ



Անհոգ Հայութեալը Թիֆլիսից մեկուսար է գեղիք Բարթոմէ: (Առ պատմական լրաբան առ համապատասխան):





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՇԱՓՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Մայիսի 18-ին մայրաքաղաքում յայտնի եղաւ, որ Նորին Վեհափառութիւն ամենայն հայոց կաթողիկոսը ժամանելու է Նոր-Նախիջևանից Պետերբուրգ: Այս ուրախալի լուրը արագութեամբ տարածուեցաւ տեղւոյս ազգայնոց մէջ և ամեն ոք, մեծ ու փոքր, սրատարով սպասում էր այն օրուան, երբ Նորին Օծութիւնը մտնելու է Ս.-Պետերբուրգ:

Եկեղեցական ժողով սկսեց պատրաստութիւնն տեսնել Վեհափառ Հայրապետին շքով ընդունելու համար: Կիւրակէ պատարագից զինի ծխականաց կողմից ընտրուեցին 12 հոգի Նորին Օծութեան ընդ առաջ գնալու համար. բայց ինչ ինչ պատճառներով Մոսկուա գնացին՝



Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՅ ՀԱՅՈՑ.

Գ. Եաղուբեան և
Ս. Գուլամիրեանց,
որոնք և այնտեղեց
ուղեկցեցին Վեհափառին մինչև Պետերբուրգ: Նորին Օծութեան արտակարգ գնացքում կային նաև Ն. Նախիջևանու քաղաքավուկ՝ պ. Մ. Բալաբանեան, Մոսկուայից՝ պ. Մ. Պոպովեան, Բագուից՝ պ. Ա. Թումայեան:

Նորին Սրբութեան շքախումբը կազմում էին՝ զեր. Կարապետ եպիսկոպոս Այվաղեան, արք. Բարթողիմէոս, Յուսիկ՝ Բեսարաբից թեմի կառավարիչ, Նահապետ, Յուսիկ՝ Վեհափառի քարառուղարը, Միսիթար՝ Ն.-Նախիջևանի յաջորդ, վարդապետները ու Վահան սարկուադ. նաև Խորէն էֆ. Խոր-

մեան: Բալագօյէ կայարանում Նորին Օծութիւնը բարեհածեցաւ և ժամ հանդիսաւ առնել զիշերելու համար: Լիւրան կայարանում Վեհափառին ներկայացան Պետերբուրգի եկեղեցական խորհրդի անդամները, պ. պ. բժ. Ս. Յարութիւննան, բժ. Վ. Վարդաննան, էմ. Մուրաշի և Գ. Տիգրաննան:

Մայիսի 25-ին, ժամի 2½-ին, Նորին Օծութեան գնացքը Պետերբուրգի համար առնելուն պէս՝ կայարանում խոնուած ժողովրդի ողբեորութեանը սահման չկար. «Կեցցէ Հայրիկ», «Կեցցէ Վեհափառ» և այսպէս հայ ժողովրդի ցոյցերը վերջ չունին: Արքայական սենեակները անցնելիս՝ կառավարութեան կողմից ողջունեցին Նորին Մրբութեանը. օտար գաւաննութեանց գեպարտամենտի կառավարիչ գաղտնի խորհրդական՝ Մասալով, գիներալ մայօր Տիմօֆեէֆ, գնդապետ Դոբրովոյլսկի և Ռիգարդ. իսկ Պետերբուրգի հայերի կողմից զիմաւորեցին Նորին Օծութեան՝ գիներալ-ինֆ. Ալիսաղեան, պ. պ. Կ. Եղեան, Քեղիսուդեան և տեղական հայ հասարակութիւնը: Վեհափառը մի քանի խօսքով նոցա ողջունելուց յետոյ՝ նստեց քառաձի մի շքեղ և հանդիսաւոր կառք և ուղեորուեց դէպի Հայոց եկեղեցին: Վեհափառի կառքի առաջից գնում էին կառքով երկու վարդապետներ հայրապետական գաւաղանը ու խաչը ձեռքներին, իսկ յեակեցից գեր. կարապետ սրբաղան և շքախմբի միւս անդամները: Հայրապետական կառքի մեկնելու բոպէին այնպիսի իրարանցում, բուռն ողեորութիւն տեղի ունեցան, որ երկար ժամանակ ուրախ հասարակութիւնը չէր կարողանում հանդարտուիլ. ուսանողների ընդունելութիւնը ևս սքանչելի էր. տեսնելու էր թէ ինչպէս մի քանի ուսանողներ ողեորուած Վեհափառի կառքը շրջապատելով՝ դոչում էին բարձրաձայն. «Հայրիկ ջան», «Կեցցէ մեր Վեհափառը», «Կեցցէ Հայրիկ» և այսպիսի սիրային զեղութիւննով լի ճանապարհ դրին իրենց պաշտելի հոգեոր Պետին: Վեհափառին յետեւում էր հայ ժողովրդից այնպիսի մի բազմութիւն, որ նեւսկի պողոտայում կառքերի անցուգարձը կանգ առաւ և ոստիկանները ստիպուած էին հայ հասարակութեան սրարշաւ քշող կառավաններին կարգապահութեան հրաւիրել: Այդ օրը նեւսկու վերայ, որ տօնի պատճառաւ զրօշակներով զարդարուած էր, օաարազգի ժողովրդի հետաքրքրութեան շափ չկար, աւելի ևս երբ տեսնում էին հայ վարդապետներին ձեռքներին բոնած հայրապետական խաչ ու գաւաղանը և Վեհափառի կարմրազգեստ հագուստով շաթիրներին: Երբ Վեհափառի կառքը մօտեցաւ Հայոց եկեղեցուն,

պողոտայի վերայ գտնուած բազմութիւնը անընդհատ օդը
թնդացնում էր. «Կեցցէ Հայրիկ», «Կեցցէ Վեհափառ»: Նո-
րին Օծութիւնը, եկեղեցու բազում կառքից իջնելով, մտաւ
ամպհովանու տակ, որ բռնել էին գեն. Ալիսաղեան, պ. պ. Եղեան,
Խորհրդարանին նախագահող բժ. Յարութիւնեան և տեղեռյա
եկեղեցեաց երեցիոխ Ն. Թաղիանոսեան ու կարմիր մաշուտի
վրայով ժողովրդական ցոյցերով և եկեղեցական երգեցողու-



Նորին Վեհափառութեան հանդիսաւոր ելքը Պետքանութիւն Ակեղեցուց, մայիսի 25-ին.

թեամբ մտաւ ուղղակի տաճար, անցնելով թարմ ծաղկների
վրայով, որ ցրվում էին հայ կանայք և օրիորդներ: Եկեղեցու
արտաքին երեսը զարդարուած էր գեղեցկահիւս թարմ բյո-
սերով, որոնց մեջ նկատվում էին Նորին Սրբութեան անուան
սկզբնատառերը: Վեհափառը ազօթելուց յետոյ, բարձրացաւ
բեմ և ժողովրդին ողջունելով ու օրհնելով մի քանի կար-
ճառօտ խրատական խօսքեր ուղղեց, որ ցաւօք սրտի սղա-

գրած չլինելով, անկարող ենք առաջ բերել այստեղ նոյնութեամբ։ Սակայն յիշելու ենք, որ Վեհափառ Հայրապետը աղօթեց Կայսերական գերդաստանի արևշատութեան համար և յայտնեց իւր ուրախութիւնը, որ մտնում է Պետերուրդ Նորին Մեծութեան Կայսրուհու ծննդեան աօնախմբութեան օրը։

Այնուշեաւ նոյն ընդհանուր կեցցէներով Վեհափառ եկեղեցուց ուղևորուեց Միլիոնեան փողոցի վերայ պատրաստուած բնակարանը, որտեղ ներքին գործոց նախարարի կողմից եկաւ ողջունելու զաղտնի խորհրդական Մասալովը և Պետերբուրդի քաղաքապետ Ֆոն-Վալբ։ Երկար ժամանակ վեհարանում խռնուած բազմութիւնը չէր հեռանում։ Միւս օրը, 26-ին, Վեհափառ իւր շքախմբով այցելեց Ս. Պողոս Պետրոսի տաճարը և Աղէքսանդր Գ-ի զերեզմանի վերայ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց։ Նոյն օրը, 26-ին, Նորին Օծութեան առաջին անգամ այցելութեան եկաւ հանրային կրթութեան նախարար կոմս Յ. Դելեանեան։ Այդ օրը Վեհափառ այցելեց ներքին գործոց նախարար Դուրնովյին, որը և իսկոյն փոխագարձ այցելութեան եկաւ Վեհ. Հայրապետին, նաև փոխադարձ այցելութեան գնաց կոմս Դելեանեանին։ Մայիսի 31-ին Նորին Վեհափառութիւնը պատիւ ունեցաւ ներկայանալու նոցին Մեծութեանց՝ Կայսեր և Կայսրուհուն, Նոր-Պետերգովում։ Երբ Նորին Օծութիւնը, Նորին Մեծութեան արարողապետ Ա. Վոնլեարլեարսկու և կամեր-իւնկէր Վ. Կոնիարի ուղեկցութեամբ հասաւ Պետերդոֆ իւր բոլոր շքախմբով ու արտաքին գործոց նախարարութիւնից նշանակուած թարգման մեծ. պ. Եղեանի հետ, տեղոյն քաղաքապետի ողջոնը ընդունելուց յետոյ՝ հրաւիրուեցաւ նստելու Աղէքսանդր Բ-ի պատմական կառքը վեց սպիտակ ձի լծուած, չորս ձիաւոր և մի սպայ յետեից ունենալով. շքախմբի առաջից երկու վարդապետներ առանձին առանձին սլալատական կառքերի մէջ նստած տանում էին Հայրապետական խաչ ու գաւազնը, յետոյ Նորին Օծութեան կառքը, իսկ այնուշետե չորս պալատական շքեղ կառքերով հետեւում էին զեր. Կարապետ սրբազնուր պ. Կ. Եղեանի հետ և միւս վարդապետներ։ Իսկ վերջին կառքում շամիրները։

Պետերգոֆ հայ հասարակութիւնից եկած էին հանդէսը զիտելու. իշխ. Կ. Բեհըռուղեան, պ. պ. Առ. Մատուրեան, Գր. Սալթիկեան, բժ. Վ. Վարդանեան, բժ. Յ. Զաւրեան, Ա. Պոպովեան, Ա. Թումայեան և Ս. Գուլամիրեանց։



“Նորին Ահա իսկառութեան հանդիսաւոր ելքը Նոր Պետերգովի կայարանից գեղի կայսերական օլալստը.



Նորին Օծութիւնը Վեհափառ Կայսեր և Կայսրուհուն բախտ ունեցաւ ներկայանալու Պետերգովի մեծ ապարանքում, որի առաջի հռչակաւոր շաղրուանները, ի պատիւ Վեհափառ Հայրապետի, բայցած էին և որոնք այդ միջոցին սքանչելի տեսարան էին ներկայացնում մինչև Բալդիկ ծովը, ջրանցքի երկարութեամբ:

Վեհափառը երր հասաւ կայսերական ապարանքը, առաջնորդուեցաւ կանաչ գահին, իսկ շքախումբը մնաց Զինական սրահում: Այս միջոցին կայս. ապարանքը եկան. Կայսերական Տան նախարարութեան կառավարիչ՝ զեներալ-լէյտենանդ բարոն Վ. Ֆրիդերիկս, օքէր-Հոֆմարշալ իշխան Ա. Ն. Տրուբէցիօյ, աւագ արարողապետ իշխան Ա. Դոլգորուկիյ, Հոֆմարշալ կոմս Հ. Բեկէնդորֆ և ուրիշները: Ժամի 1½-ին Ալբանուանդիայից ապարանք եկան կայսր և Կայսրուհին: Աւագ արարողապետ իշխան Ա. Դոլգորուկին այդ ժամանակ գալով Վեհափառ Հայրապետին՝ հրատիրեց նորին Օծութեանը նորին Մեծութեան առանձնասենեակը: Այստեղ ունկդրութեան միջոցին Վեհափառը շնորհաւորեց նորին կայսերական Մեծութեանը նրա ի Գահ բարձրանալը. ապա հաղորդեց ի սփիւռս աշխարհի հայոց անձնութիրութեան զգացմանց արտայայտութիւնը: Թագաւոր Կայսրը իւր գոհանակութիւնը յայտնեց Վեհափառին, որ տեսնում է իւր մօտ նորին Օծութեանը և շնորհակալ եղաւ Վեհափառ Հայրապետից նոցին Մեծութեանց այցելութեան համար:

Ընդունելութիւնից զինի, որը տեսց կէս ժամ, Վեհափառ Հայրապետին և շքախումբին առաջարկուեցաւ կայսերական ապարանքում նախաճաշիկ: Նորին Օծութեան համար առանձին սեղան էր պատրաստուած. սակայն Վեհափառը յետոյ բարեհածեց հրատիրել սեղանակից լինելու գեր. Կարապետ սրբազանին, Կայս. արարողապետ Ա. Կօնլեարլեարսկուն, գաղտ. խորհրդ. պ. Վ. Եղեանին և հանդիսակատարութեանց գործերի վարչութեան կառավարիչ Կոնիարին:

Նախաճաշից յետոյ նոյն հանդիսով, պալատական կառերով, Վեհափառ Հայրապետը իւր շքախումբով վերագրածաւ կայարան, որտեղից Ն. Օծութեանը ուղեկցեցին մինչև Պետերբուրգ արարողապետ Վօնլեարլեարսկին և կամեր-իւնկէր Կոնիարը:

Ցունիսի 1-ին նորին Օծութիւնը այցելութեան գնաց Մեծ իշխան Միքայէլ Նիկոլաևիչին և արտաքին գործոց նախարարին: Այնուհետեւ, միւս օրը, ամսի 2ին, Վեհափառը բարե-



Նորին Ահշափառութեան փառաւոր դհացքը դէպի կայսերական ուղևոր.



Հաճեց այցելել Պետքրուրդի միտրոպոլիս Պալւադիին, որը շքեղ հանդիսով Վեհափառին ընդունելուց յետոյ խօսյն եկաւ փոխադարձ այցելութեան: Սյու օրը Վեհ Կաթողիկոսը այցելեց նաև Օրէր հօֆ.մարշալ իշխան Տրուբէցիօնին և աւագ արարողապետ իշխան Դոլգորուկուն: Յունիսի 3-ին այցելեցին աղքիս Հայրապետին արտաքին գործոց նախարար իշխան Լոբանովի Խոստովսկին և աւագ արտրողապետ իշխան: Դոլգորուկին: Յունիսի 9-ին Նորին Օծութիւնը հրաժեշտի այցելութեան գնաց ներքին գործոց նախարարին, որը նշյալէս խօսյն փոխադարձաբար եկաւ Վեհափառին. այնուհետեւ, յունիսի 12-ին, փոխադարձ այցելութիւն տեղի ունեցաւ Նորին Օծութեան և պարսից գեսապանի մէջ:

Բացի պաշտօնական այցելութիւններից՝ Նորին Օծութիւնը այցելեց և զանազան հաստատութիւններ, ինչպէս նաև ռուսական անուանի տաճարները: Յունիսի 7-ին այցելեց իւր շքախմբի ուղեկցութեամբ Պետքրուրդի էրմիտաժ կոչուած կայսերական թանգարանը, ուր մանրամասնօրէն դիտեց աշխարհահռչուկ հին և նոր նկարիչների գործերը, ինչպէս և Մեծն Պետրոսի պատմական գահինքը: Հետեւեալ օրը, յունիսի 8-ին, Նորին Օծութիւնը այցելեց ս. Խստհակեան աւագ եկեղեցին և մանրամասնօրէն դիտելուց յետոյ՝ բարեհաճեց շքախմբի հետ գնալ բուսաբանական այգին, ուր մօտ միժամ մեծ հետաքրքրութեամբ տեսնելուց զինի հարաւի և հիւրսի դիխաւոր բյուսերը, վերափարձաւ վեհարան: Ամսի 10-ին բարեհաճեց արքունի շողենաւով պատցաւ անել Նեւայի վրայ դէպի Ելադին կղզիների ուղղութեամբ: Ամսի 11-ին, կիւրակէ, օրպատարագլից զինի, այցելեց ս. Կազանու տաճարը, ուր խռնուած մեծ բազմութիւնով շրջապատուած՝ զիտեց մի առ մի տաճարի նշանաւոր հնութիւնները: Նորին Սրբութեանը տաճարի գոռն հօտ դիմաւորեց եկեղեցու աւագ երեցը, որը և մեծ ախնածութեամբ հաղորդում էր Վեհափառին հարկաւոր տեղեկութիւնները: Ամսի 12-ին Վեհափառը այցելեց Լեռնային Ճեմարանը, որտեղ Նորին Սրբութեան ուշադրութիւնը գրաւեց Ճեմարանի մեծաքանակ լեռնային և հանքային հաւաքածու բնաիր բարերը և նիւթերը:

Վեհափառ Հայրապետի մօտ, վեհարանում, մի երկու անգամ նիստեր տեղի ունեցան օտար գաւանութեանց վարչութեան կառափարչի գաղանի խորհրդական Մոսոլովի մասնակցութեամբ: Սյուեղ քննվումէին համարեա բոլոր կարեւոր խնդիրները հայ եկեղեցու կառավարութեան վերաբերմամբ:

Նաև Վեհ. Հայրապետը մի կարգ կարևոր խնդիրների մասին զանազան պաշտօնական թղթեր ներկայացրեց ներքին գործոց նախարարութեան:

Մոռացանք յիշել, որ գաղանի խորհրդ. Մոսոլովին, որ մայիսի 25-ին ներք. գործ. նախարարի կողմից կայարանում զիմուռեց Վեհափառին և առաջ այցելեց վեհարանում, նորին Օծութեան կողմից նոյն օրը այցելեցին արք. Նահապետ և Յուսիկ վարդապետները: Վեհափառը ևս այցելեց մի քանի օրից յետոյ:

Նորին Վեհափառութիւնը մի քանի անգամ եղաւ եկեղեցում, որի շնորհիւ առանձին շքեղութեամբ անցան Ս. Հռիփսիմեանց, Գայիսնեանց և Ս. Լուսաւորչի ու Ս. Էջմիածնի



Վեհափառի հանդիսաւոր գարձը կայսերական պալատից դեպի կայարան.

տօները: Մայիսի 28-ին և յունիսի 4-ին, ըստ բարեհած թոյլտվութեան Վեհափառի, պատարագեց Կարապետ սրբ. Այվազեանը, որին Ս. Էջմիածնի տօնին պատարագի ժամանակ սպասաւորում էին 4 վարդապետ. այդ օրը Վեհափառի հրամանով գեր. Կարապետ սրբազն աւուր պատշաճի մի քարոզ խօսեց:

Ամեն անգամ Վեհափառը եկեղեցում մասիթարում էր իւր հօտին Հայրապետական քարոզներով որոնցից ուրախութեամբ առաջ ենք բերում միայն երկուսը:

Ս է ր է լ է ժ ո ղ ո կ ո - բ դ ։

Որքան որ յօդնած ու գաղրած եմ, սակայն հովուական պարտքը կ ստիպէ զիս, որ գարձեալ խօսիմ ձեղ հետ։ Վնցեալ օր երբ մտայ այս Տաճար, ողջունեցի զձեղ. իսկ այսօր հարցնում եմ ձեղ թէ ո՞ղջ էք, ինչպէս երբեմն Փրկիչն մեր հարցնում էր իւր աշակերտաց։ Երդարկ ողջ լինել և թէ մարմնապէս ըմբռնենք՝ կը նշանակէ այն որ մարդս կենդանի է կեանքի մէջ, զօր օրինակ. կուտէ, կը խմէ, կը գործէ, կ'ապրի և այլն։ Կը տեսնամ զձեղ ամէնքդ այսօր այստեղ ողջ և առողջ եկեղեցում կանգնած. ես կը խօսեմ և դուք կը լսէք, բայց իմ հարցմանս միտք այլ է, թէ ինչպէս մարմնով՝ ո՞ղջ էք նաև հաւատքի մէջ. ո՞ղջ էք նաև քրիստոնէական պարտիքներ կատարելու մէջ. ո՞ղջ էք աստուածսիրութեան և ընկերսիրութեան մէջ, վասն զի հաւատք առանց գործոց մեռեալ է, կատ առաքեալ։ Եթէ քրիստոնեայ անուն կրող հաւատացեալ չունենայ նաև քրիստոնէավայել գործք, այլ միայն անունով երեսնայ որպէս քրիստոնեայ, եկեղեցի յաճախէ, սալմոս աօէ և չ'առնէ միտք, Աւետարանին լսէ և չը կատարէ պատուէրներ, այդ չի նշանակիր քրիստոնեայ լինել կատարեալ կերպով, զի այդպէս էր երբեմն Խարայէլի ժողովուրդ, որոյ գէմ կը գանդատէր Տէր Աստուած մարդարէլ բերնով. «թէ այս ժողովուրդ միայն շրթունքով զիս կը պատուէ, իսկ իրենց սիրտ հեռացած է ինձմէ»։ Այսկ հաւատք գիտէ՞ ը ինչ բանի կը նմանի. Ճիշտ ներսը փառած ծառի, որ գրսի կողմէն միայն կեղեւեր ունի, և կանաչ տերեւներ, մարդիկ արտաքուստ նկատելով կը կարծեն թէ ծառն իսկապէս ողջ է. Պէտք է գիտնաք որ գործն է որ զշաւատք կենդանի կը պահէ. և մենք գործէն պէտք է կը շանք մարդոյն հաւատքը, և ապա դատինք թէ նա կեղծ կամ ճըշմարիս քրիստոնեայ է. հաւատք հաւատացելոյն համար մինչեւ ի գերեզման կը տեսէ, բայց բարի գործոց յիշատակ, գերեզմանէն յետոյ ևս կը մնայ աշխարհի վերայ։

Վհա ձեղ մի կենդանի ապացոյց, այս հոյակապ եկեղեցին և տաճար, որ շինուած է Լազարեանց մեծատոհմիկ գերդաստանի շնորհիւ, պատմութիւն ցոյց կուտայ մեղ որ Պարսկաստանից դադլթած է ժամանակին և եկել այս մայրաքաղաք և յաջողութիւն գտնելով կառուցած է սոյն եկեղեցին՝ մշտնջենական յիշատակ թողնելով գնացած է այս աշխարհէն. այս մեծ ազգատոհմի մասին պիտի խօսիմ գարձեալ։

Այս այսպէս, դառնանք այժմ երկրորդ հարցին. ևս ձեր ողջութիւն հարցուցի, և փոքր ի շատէ հասկցուցի ձեղ, թէ ինչպէս պէտք է իսկապէս քրիստոնեայ լինել և ողջ լինել։ Ես կարծում եմ որ դուք ևս ինձ կը հարցնէք, թէ, չայրիկ, Դաւ ուստի դաս, ասս մեղ արդեք ո՞ղջ է մեր Ապար չայսատան, ո՞ղջ են իւր հայ որդիներ։ Գիտեմ, կան թերահաւատ մարդիկ որք յուսահատ են

և յուսահատարար կը խօսեն. կասեն թէ Հայաստան մեռած է, և կիսամեռ ընկած: Խոկ ես կ'աւետեմ ձեզ, թէ Հայաստան կենդանի է և կենդանի պիտի մնայ: Եթէ Հայաստան շատ բան կորուսեր է, սակայն ի ըրս հազար ամաց հետէ Աստուածային պահպառութեամբ տակաւին կ'ավրին նորա ճիռեր. այո՛, Հայաստան կայ և պիտի մնայ, երբ նորա գրացի մեծ աղգեր Մաքք և Ասորիք անցեր գնացեր են և միայն պատմութեան մէջ հետք ժողովեր են: Երբեմն Խարայէլի ժողովուրդ երբ տարագիր եղած էր ի Շաբելոն, Երուսաղէմ գնացողներէն կը հարցնէր Երուսաղէմի ողջութենէն և շինութենէն: Պատը ես, ով գաղթական ժողովուրդք, որ այժմ Անվագ գետին քով կը բնակիք, գիտեմ դուք էլ նոյն հարցում կընէք ինձի: Դուք քաջ գիտէք որ այսօր Հայաստան բաժանուած է երկու գրացի պետութեանց մէջ, դուք բաղդաւոր էք, ձեզ վիճակուած է ազատաբար վայելել մեր ամենաողորմած Կայսեր մեծին Ուուսիոյ հզօր հովանին և պաշտպանութիւն: Խոկ մի մաս, որ ինկած է Տաճկաց իշխանութեան ներքոյ, այսօր հեծում է բաղմատիմի զրկանաց և տառապանաց մէջ, այլ որովհետեւ ամեն բան իւր վերջն և վախճանն ունի, հասած է ժամ որ վերջ պիտի դրուի վշտակրեալ հայ ժողովուրդին: Կը հաւատամք թէ Աստուածային նախախնամութիւն բաւական համարելով իւր հաւատացեալ ժողովուրդին չարչարնքը, իւր այցելութեան ձեռքով շարժեց քրիստոնեայ տէրութեանց սիրտը որք այսօր միանալով համեռաշխարհար, ոչ միայն կը յուսանք, այլ և աներկմիտ կը հաւատանք որ վերջ տան թառւրքիոյ հայոց աշխարհի ներկայ դրութեան և վերանորոգեն երկրի վարչական նոր բարեկարգ վարչութիւն. կը հաւատանք նաև որ նոյն խոկ Ուուլթանն ես զգալով այս պէտքը, որ իրապէս իւր երկրի պետութեան շահն է, հաճութեամբ կը համակերպի հաստատել վերանորոգ բարեկարգութիւն:

Այլ որովհետեւ թէ Ուուսիոյ և թէ թառւրքիոյ համայն աղգայինք միենայն հաւատը միշտ կենդանի պահում են իրենց սրտին մէջ և գիտեն որ ի սկզբանէ անտի քրիստոնեայ ժողովուրդին պաշտպան հանդիսացեր է արեան զոհերով ինքնակալ Կայսրութիւն Մեծին Ուուսիոյ, և առ այս կը վկայեն անցեալ պատմութիւնք: Այսօր համար բովանդակ հայոց ակնկալութեան աջք կը յառին գէպի Մեծ գատաւոր և թափաւորն Ուուսիոյ, որ իւր բարեացակամ հաճութեամբ պսակէ և վախճան դնէ հայոց վաղեմի և հնացեալ խնդրոյն, որով առաւել ես փառք և պարծանք կը յաւելու Մեծին Ուուսիոյ Աստուածապաշտ թագաւորութեան:

Եւ որպէս ուսոյց մեզ Քրիստոս այսպէս աղօթել առ Երկնից Հայր, եղիցին կամք Հօր որպէս յերկինս և յերկրի: Ամեն:

Միւս երեսում դնում ենք Վեհափառի մի այլ ողելից Ճառը, որ խօսեց եկեղեցում մեկնելուց 2 օր առաջ, յունիսի 11-ին:

Սէրէլէ ժողովո-բռ.

Այսօր մի վերջին պարտք ունիմ կատարելու. այն է տալ իմ՝
վերջին հրաժեշտ: Երիտասարդական հասակէս մինչև ցարդ տուածս
հրաժեշտները չափ չունին. Ո անէն ի Պօլիս, Պօլսէն ի Ո ան,
Ո անէն ի Մուշ գարձեալ ի Պօլիս և անտի Երուսաղէմ ուրիշ
շատ տեղեր: Վշնարքիս վերայ ամեն մարդ մի պարտականութիւն
ունի իւր վրայ գրուած, որ պիտի կատարէ, սկսեալ թագաւորէն
մինչև վերջին շնական. Հարուստէն մինչև աղքատը, իւրաքանչիւր
ոք ըստ իւր չափու. Հարուստի պարտքն է օգնել աղքատին, կա-
րեկցութեամբ նայել դէպի թշուասը, իսկ աղքատն էլ ունի իւր
պարտք. Կը տեսնես որ ընկերիդ գրաստ ճանապարհի վրայ ինկած
է, և նա միայնակ շուարեր մնացեր է. օգնել ընկերին: Խնչպէս երեսում է սամարա-
ցիներ և հրէաներ սաստիկ ատում էին իրարու, որ Քրիստոն էլ
այդ օրինակ բերաւ առ հրեայս խօսած ժամանակ: Վռակն ասում
է, «Մէկ մարդ Երուսաղէմից իջնում էր Երիքով. այդ ճանա-
պարհորդը ընկնում է աւազակաց ձեռք, որոնք կողոպտելով նորա
ամեն ունեցածը և մերձ ի մահ վիրաւորելով այդպէս կիսամեռ
կը թողան ճանապարհի վերայ և կերթան. քիչ վերջ այդ տեղէն
կանցնի մի զերացի և անփոյթ մնալով կանցնի կերթայ, նաև մի քա-
հանայ էլ. նա ևս առաջնին նման առանց կարեկցելու կը մեկնի.
Վերջէն կուգայ մի սամարացի՝ որ մօտենալով կը դարմանէ նորա
վէրքեր, կը կապէ և իւր գրաստի վերայ զնելով՝ կը տանի կը յանձ-
նէ մի պանտոկապետի ինամոց և կը պատուիրէ որ պէտք եղած
ինամք տանի մինչև իւր վերագարձը, ահա ձեղ մի ճշմարիտ օրի-
նակ մարդասիրութեան, մի՞թէ ամէնքս պարտաւոր ենք միայն մեր
ընկերին օգնել քաւ լիցի, այն՝ որ մարդ է, այն՝ որ անկեալ է,
լինի դա հրէայ կամ սամարացի կամ մի պլազդ, իւրաքանչիւր
ձեռնհաս մարդու պարտաւորութիւնն է իւր կարողութեան չա-
փով օգնել: Աներ Հայաստանն էլ այժմ մի վիրաւոր է, որ կիսա-
մեռ ինկած է, տեսնենք թէ ո՞վ պիտի օգնէ նորան իւր այդ վի-
ճակից աղատելու համար, և ո՞վ պիտի լինի աւետարանի յիշած
ճշմարիտ և գժած սամարացին, որ իւր բարի գութ, ուշք դարձնէ
նորա այժմեան ողբալի գրութեան վերայ. ի հարկէ դրացին դրացին
վիճակ առաւել մօտիկէն կը ճանաչէ և կը հասկանայ քան թէ օտա-
րը: Հայաստան Որուսական լայնածաւալ պետութեան գրացի մի
երկիր է և ամենից առաւել քաջ տեղեակ է Հայաստանի վիճակին
մեր ամենաողորմած և մարդասէր ինքնակալ Յարը, թէպէտ Երո-
պայի ամեն կողմէրէ ձայներ բարձրացրել են Հայաստանի համար

և գիտեն նորա վիճակ, բայց Ուուսական հզօր արծուի սրատես աչքը աւելի լաւ է տեսնում և գիտէ ամեն ինչ: Երբե ընդհանուր քրիստոնէից պաշտպանին և մանաւանդ դրացի մի հզօր պետութեան մեր յոյս նորա վրայ է և նրանից ենք ակնկալում ամեն ինչ:

Խակ ինձ վերայ, շատ շատ պարտքեր դրուած են իբրև այսոց կաթողիկոսի և ես չը գիտեմ, սիրելի ժողովուրդ, վայ ինձ թէ ինչպէս պիտի կարողանամ այդ իմ անթիւ պարտքերս կատարել և բարեմն ինքնիրենս մտածում եմ, ահ, Տէր Աստուած, ես մի ծերա-



Կոռին Օծութիւնը Պետքրուրդի եկեղեցու գաւթում:

ցած մարդ եմ ծանրաբեռնուած շատ պարտքերով որ դրած է իմ վերայ իմ պաշտօնս. օգնիր ինձ և ինսայիր գոնէ որչափ կարելի է իմ պարտքերիցս թեթևացած, կատարած մեռնիմ. պարտական չը մնամ քո և քո ժողովրդի առաջ: Քանի որ ս. Եջմիածնումն էի, աշխարհքի չորս կողմից նամակներ, հեռագրներ կը թափէին ի վեհարան, թէ չայրիկ, մի նատիր, շարժուիր, դիմիր Ուուսիոյ ինքնակալ Յարին, ինդրիր դարման քո ժողովուրդի համար, Կամ մարդասէր է: Ա. Հ.

մի մեծ պարտականութիւն էր ինձ համար, իբրև ամենայն հայոց կամուղիկոսի. արդարեւ, եմեւ ինկատի ունենանք Բեթղէհէմի մանկանց կոտորածի մասին Հռաքելի լացն ու ողբը, շատ չնչին կը գտննենք Հայաստանի կոտորածի հանդէպ, այնտեղ կոտորեցին միայն երեխաներին և մնացին դարձեալ հայրեր և մայրեր, բայց Հայաստանում ոչ ոքի ինայեցին. թէ՛ հօր կոտորեցին, թէ՛ մօր սպանեցին, թէ՛ ծերին և թէ՛ երեխաներին նոյն իսկ իրենց մօր արդանդի մէջ միայն այս վերջին կոտորած չէր որ տեղի ունեցաւ, այլ տասը տարիէն աւելի է որ կը սպանեն և կը սպանեն: Ես չէի կարող անտարբեր նայել դէպի այն ամեն կատարուածներ և պարտազանց գտնուիլ. գիմեցի Առին Կայսերական ՄԵծութեան ամենասողորմած Աիկոլայ Բ. Կայսեր, որ իւր մարդասիրական կարեկցութեամբ ընդունեց զմեղ և սփոփեց մեր վիշտ, այնտեղ էր նաև մեր գթառատ Խագուհի Կայսերուհին, որի իմաստութիւն և կատարելութիւն ամեն ինչ յայտնի է: Ի հարկէ նա ևս իւր մայրական բարեսրութեամբ և գթութեամբ կը կարեկցէ հայ ազգի վիճակին: Վիտէք, կիներ և մայրեր շատ գթոտ կը լինեն: Ես այժմ ոչ միայն կը յուսամ, այլ և կը հաւատամ թէ Աստուծոց այցելութեան ժամ հասած է. մի այցելութիւն պիտի լինի Հայաստանի ժողովրդոց, և մեր խնդիրք պիտի կատարուի, միայն Առին Կայսերական ՄԵծութեան բարեհաճ ուշագրութիւն կը խնդրենք դէպի մեր տառապեալ հօտը, վասն զի բարերարէն կախեալ է իւր բարութեան չափն, զի խնդրողին չէ կարելի ասել. թէ ինչպէս իրան պէտք է ողորմել, դա կախուած է ողորմողի մեծահոգութենէն: Ես է հայոց կաթուղիկոսի, և այս է նաև ժողովուրդի խնդիրը. այս այսպէս:

Խակ գուք գիտեմ պիտի ասէք, է՛հ, Հայրիկ, եկար և կերթաս. հազար մեղ ի՞նչ կտակ կաւանդես, մեղ ի՞նչ կը թողուս. ես ոչինչ չունիմ ձեզ տալու, հարուստ չեմ որ ձեզանից ամեն մէկուդ հարիւր հազար տամ, և ասեմ ելեք գնացէք ձեր տեղեր, աղէկ գիտեմ որ ամենքդ էլ մի մի գործով այստեղ եկած պարապում էք: Մեր Աւետարանի աշակերտներիս կտակն Աւետարանն է, և ես էլ իւրեւ Աւետարանի աշակերտ, ձեղ միայն մի բան կը կտակեմ, այս է «սիրեցէք զմիմեան» այսինքն իրարու սիրեցէք: Եթէ Ճմարիտ աւետարանական սիրով զիրար սիրէք, էլ ձեզ ոչինչ չի պակասիր. մանաւանդ օտարութեան մէջ շատ աւելի պէտք ունիր իրար սիրելու: Յիսուսի սիրելի աշակերտ Յովհաննէս Աւետարանիւ երբ շատ ծերացեր էր, այլ ևս չէր կարող երկար կայնել և քարողել իւր ժողովուրդին, նա մի օր ցանկացաւ եկեղեցի գնալ, երբ այլ ևս իւր ժամանակ հասած էր և պիտի թողնէր այս աշխարհը, այնտեղ հաւաքած հաւատացելոց իսուեց. սիրելիներ, ցանկացայ վերջին անգամ ևս ձեզ հետ իսուել ձեզ Աւետարան բացատրել բայց կարծ և երեք տառերով պիտի ասեմ, ի՞նչ որ Աւետարանի ընդհանուր բովանդակութիւնն է, այն է «սէր». այս,

Աւետարան ամբողջ իւր մէջ սէր է բովանդակում; զի Աստուած սէր է»։ սիրոյ հետ կաւանդիմ նաև ձեղ Փրկչի խաղաղութիւն. զխաղաղութիւն իմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ, տամ ես. ուր տեղ սէր կայ այն տեղ կը տիրէ նաև խաղաղութիւն. կը տեսնաք որ ամբողջ աշխարհի տէրութիւններ միշտ կաշխատին որպէս զի խաղաղութիւն լինի, և ամենք անդորրութեամբ ապրին։ Եթէ կան ձեր մէջ անբաւականութիւններ, զանազան կուսակցութիւններ, հեռացրէք ձեղանից այդ ոգին, իրարու հետ սիրով և խաղաղութեամբ ապրեցէք, և պիտի տեսնաք որ երջանիկ պիտի լինիք։

Ի հարկէ վատեր ամեն տեղ կը գտնուին, որոնց գործն է չարութիւն. բայց Աստուած չարին առանց պատժի չի թողաւր, և աւետարան էլ կասէ. մի գատէք զի մի գատիցիք, որով չափով չափէք չափեսցի ձեղ։ Մարդս ինչ կերպով էլ որ ուզենայ ուրիշն չարիք հասցնել նոյն չարիք մի օր էլ նորա գլխին պիտի դայ։ Աշխարհքիս ամեն պատահարներ առանց Աստուծոյ գիտութեան չի լիներ, թէպէտ կան արդի իմաստուններ, բնագէտներ, որոնք ամեն ինչ բնական պատահարների կը վերագրեն, բայց մենք Աւետարանի աշակերտներս ամեն ինչ սուրբ գրեն կը հասկնանք, և այնպէս էլ կը մեկնենք, ինչ որ ցոյց է տալիս մեղ սուրբ գիրք իւր բաղմատեսակ կենդանի օրինակներով։ Խրայէլի ժողովուրդ երբ Աստուծոյ օրէնքից դուրս էլ գալիս և կամբարշտէր, այն ժամանակ Աստուած էլ կը խրկեր նոցա վերայ հզոր թագաւորներ, որոնք կուգային կ'աւերէին և ամբողջ ժողովուրդ ալ միասին գերի կը տանէին, իսկ երբ կը զըշչային և բոլորով սրտիւ առ Աստուած կը դիմէին, այն ժամանակ շատ անգամ կոապաշտ թագաւորների իսկ սիրու կը շարժէր և նոցա վրայ գթալով կարձակէին գերութենէն և կը վերաբառնային իրենց տեղեր, ինչպէս կիւրոս, Արտաշէս, որոնք հրամայեցին Զօրաբարէլին առաջնորդել ժողովրդին և շինել իրանց տաճար և քաղաքը։ «Նոցա մէջն ևս կային սուտ մարգարէներ, որոնք սիսալ մեկնութիւն կուտային, և չէին հաւատար Աստուծոյ արդար գատաստանին և հատուցման և ամեն ինչ իրանց գիտցածին պէս կը բացարէին։ Պիտեմ պիտի ասէք միթէ Աստուած ևս կամենում է իւր ժողովուրդի չարչարանք և կը պատժէ նոցա։ Եթէ կարդաք մարգարէութիւններ, այնտեղ պիտի հանդիպիք այն ասացուածքին, որ մարգարէն գրեր է. արգեօր չը կա՞ն քաղաքներ, որոնց ամբարշտութիւն իսկ պատճառ տուած է իւր կործանման։

Առանց Աստուծոյ կամքին ոչինչ չի լինիր. մի հոսանք կայ երկնքից գէպի երկիրս, որով կառավարվում է այս աշխարհը։

Այսքանս բաւ է, սիրելի ժողովուրդ, ես շատ կը ցաւիմ որ տկարութեանս պատճառաւ չը կարողացայ երկար խօսիլ Աստուած յաջողէ, վաղ թէ միւս օր, որ երեքշաբթի է, պիտի մեկնիմք ձեր քաղաքէն. ուրեմն կուտամ ձեղ իւմ վերջին ծրչնութիւնս և կասեմ մնայք բարե, շատ շնորհակալ եմ ձեր ընդունելութիւնէն և հիւ-

բասիրութիւնէն. զձեղ չեմ մոռանար և դուք էլ մի մոռանաք Ձեր
Ոուրբ Լշմիածին, Ա՞այր Վ. Թոռը: Երեքշաբթի մերկս գարձեալ
միքանի խօսք խօսիմ ձեղ մեկնած պահուս: Վու այժմ այսբանս բաւ է:

Եկեղեցական ժողովի կողմից վեհարանի կառավարիչ նշանակուած էր պ. բժ. Վ. Վարդանեանը, որը խիստ մեծ հաճայքով և արտաքոյ կարգի սիրալիք պատրաստականութեամբ առաւտօտուց մինչև կէս գիշեր ոտքի վերայ հսկում ու կարգադրում էր վեհարանի առօրեայ կառավարութեան վերաբերեալ գործերը: Մոյնպիսի մի կարգ այլ գործերում յիշելու է նաև ժողովի միւս անդամ՝ պ. Էմ. Սուբաշու ծառայութիւնը:

Նշանակելու ենք նաև, որ Ս. էջմիածնի տօնին, ս. պատարագից զինի, տեղիս հասարակութիւնը խմբովին դիմելով վեհարան բազդ ունեցաւ ներկայանալու ազդիս հայրապետին և շնորհաւորել նորին Օծութեանը՝ հայկական սրբավայրի, հայ սրտերի այդ մօգական կենտրոնի, տօնախմբութեան առթիւ: Մայիսի 28-ին ս. պատարագից յետոյ, Վեհ. հայրապետը բարեհանգաւ ընդունել հայ կանանց, օրիորդներին և ուսանողներին, որոնց և իրեն յատուկ պերճախօսութեամբ ըստ պատշաճի մի կարգ իմաստալից խօսքեր ուղղեց, որ, անշուշտ, խիստ մեծ տպաւորութիւն ներգործեց բոլորի վերայ:

Յունիսի 13-ին նորին Սրբութիւնը բարեհանգ մեկնել դէպի Մոսկուա: Հայ ժողովուրդը մեծ բազմութեամբ ժողովուել էր եկեղեցի ու այնաեղից կայարան: Վեհափառի արտակարգ զնացքը շարժուեց տեղից ընդհանուր կէցցէների դղրդիւնով: Ներբեն զործոց նախարարի կողմից կայարան էր եկել նորին Օծութեանը ճանապարհ ձգելու դադա. Խորհրդական Մոսկով: Մինչև Մոսկուա ուղղեցցին. իշխան Միք. Բէհրուգեան, որը ժողովի կողմից արտակարգ զնացքի կառավարիչ էր նշանակուել, որ և մեծ սիրով կատարեց իւր ստանձնած պաշտօնը, Պետերբուրգի երեցփոխ Ն. Թաղիանոսիանց, պ. պ. Էմ. Սուբաշի, Գ. Տիգրանեան և Ս. Գուլամիրեանց, նաև Մոսկուայից եկած պատգամաւորները. Մեծ. պ. Յովհաննէս Ժամկարեան և պ. Ստ. Մամիկոնեան, Մոսկուա կայարանում Վեհափառին սպասում էր խիստ մեծ բազմութիւն, որի կէցցէների դղրդիւնի ներքոյ, Վեհափառը նստելով վեց ձիանի շքեղ կառքը ուղեսորուեց եկեղեցի և այնտեղից Տեղեան փողոց, ուր պատրաստուած էր արքայավայել բնակարան: Մոսկուայում ևս ընդունելութիւնը ցնծազին և եռանդալից էր:

ԳԵՐԱՊԵՏԻ ԱՐՄԵՆ ԵՐԱԵՎԻՍԿՈՊՈՍ ԱՅՏԵԾՆ

Հոկտեմբեր ամսի 23-ին Վիեննայի Միսիթարեան միաբանութիւնը տօնեց իւր Ընդհ. Արքահօր, գեր. Այտնեան Արսէն արքեպիսկոպոսի քահանայութեան և զրական գործունէութեան 50-ամեայ յորելեանը:

Գերապատիւ Արսէն վ. Այտնեանը ծնուած է 1825 թ. յունուարի 7-ին Պոլսում, ուր և ստանալով իւր նախնական կրթութիւնը տեղւոյն Միսիթարեան միաբանութեան զըպրոցներում, 1835 թ. մեկնում է Վիեննա՝ ուսումը կատարելագործելու այդ միաբանութեան վանքի ուսումնարանում: 1845 թ. ստանում է

քահանայական կոչում և այդ ասպարիզում մին չե օրս, ամբողջ 50 տարի, ծառայելով հասնում է մինչեւ արքահայրական բարձր պաշտօնին: Յիսնական թուականներից սկսում է և նորա զրական և մանկավարժական բեղմանոր գործունէութիւնը, որով նա արժանանում է թէ՛ միաբանութեան և թէ հայ ժողովուրդի համակրութեանը: Բաւական է միայն յիշել, որ 1866 թ. լոյս է անմուռմ նորա «Քննական ժերականութեան արդիք հայերէն լըլուկ», որի մէջ մեծ

հմտութեամբ պաշտպանելով աշխարհաբար լեզուն և նրա քաղաքացիութիւնը, ամենուրեք մեծ քերականի և հայկաբանի պատուաւոր տիտղոսն է ստանում: Բայցի զրական և մանկավարժական օգտակար գործունէութիւնից՝ նա մեծ ծառայութիւն է մատուցել ազգային տպագրական և երաժշտական գործին:



ԳԵՐ. ԱՐՄԵՆ ԱՐԵԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՏԵԾՆ.



ԱՅԼԵՒԱՅԼՔ

«Դէյլէ նէ-ու» անուանի լրագիրը, որ Անգլիոյ ազատական կուսակցութեան առաջին օրդաննէ, իր հիմնարկութիւնից ի վեր միշտ հզօր պաշտպան է հանդիսացել Ճնշուած ազգութիւններին: Բուլղարիայի վիճակի մասին տարիներ առաջ իր հրատարակած բազմաթիւ և աղղեցիկ խմբագրականները ահազին ներգործութիւն էին առաջ բերել քաղաքակիրթ աշխարհում:

Հայկական խնդրի առաջին ծագումից ի վեր՝ «Դէյլէ նէ-ու» անդադար զրել է հայոց համար նպաստաւոր յօդուածներ, իսկ վերջին գէպքերի առիթով, առաջին անդամ «Դէյլէ նէ-ու» էր որ ձայն բարձրացրեց, մինչև որ «Դէյլէ թէլէ գրաֆ» և ուրիշ թերթերն ևս իրենց մասնաւոր թղթակիցների նամակներով հաստատեցին իրողութիւնները: Մի ճշմարտութիւն է, որ հայոց խնդրը պաշտպանող բոլոր թերթերի մէջ «Դէյլէ նէ-ու»-ն է, որ հայերիս մասին նուազ խստապահանջ և մեր իրական կամ կարծեցեալ թերութիւններին աւելի ներող աչքով է նայում:

Հայաստանի կարօտեալների համար կոնդոնում բացուած հանդանակութիւնը «Դէյլէ նէ-ու»-ի էջերում էր հրատարակվում ամեն օր: Թէրթը ձրիաբար կատարում էր հաշեների արձանագրութեան և փոխանցման գործերը և իր վարչութեան կողմից էլ ինչպէս յայտնի է, 100 անդիսական ոսկի ստորագրուեց:

«Դէյլէ նէ-ու» լրագրի Տնօրէն-Խմբագիր Սըր Ճռինդօնը, մեր խնդրի համաձայն իր լուսանկար պատկերն «Արագու»-ի խմբագրութեան նուիրելու առթիւ՝ հետեւալ երկտողն է ուղղած մեր կոնդոնի յարգելի աշխատակցին:

The Daily News Office
London, May 27, 1895.

Dear Sir

I have to thank you for your kind expressions. I have always felt the utmost sympathy with the Armenians and have lost no opportunity of urging their claims upon the governments of civilised countries. I like to think that the end we have in view is nearer than it was and that the sufferings of the dead have not been in vain.

Very faithfully yours

J. R. Robinson.

A. Pagouran Esq.

«ԴԵՐՈՒՅԻՆ ԱՅԻ ԱԿ»

Հանդիս, 27 հայիսէն 1895 թ.

Digitized by srujanika@gmail.com

Ամենաշատ հասարակությունը 24-ը

Ճ. Ռ. Ռաբինյան

ԱՐՄԵՆԻԱ. Ա. Բանիսովան.

Սեպտեմբերի 18-ին Պոլսում տեղի ունեցած մեծ ցոյցից յետոյ՝ նոյնպիսի արիւնալի դէպքեր և սոսկալի ընդհարումներ տեղի ունեցան նաև գաւառներում—Տրավիլոն, Բարբերդ, Երզրում, Երզնկա, Խարբերդ, Տիարբէրի, Մալաթիա, Արարիեր, Ակն, Կեսարիա, Ամասիա, Երբաստիա, Հալէպ, Մարշ, Զէյթուն և այլ տեղերում։ սոցանից մասնաւորապէս շէշտելու ենք Զէյթունը, ուր մի քանի հազար լեռնականներ ապստամբելով՝ պաշարեցին թիւրքական զօրանոցները և ստիպեցին այնտեղ ամրացած զինուորներին անձնատուր լինել։ Տաճկաց կառավարութիւնը Մուսթաֆա փաշայի առաջնորդութեամբ մեծ քանակութեամբ զօրք է ուղարկել ապստամբների վերայ, որոնք մինչեւ օրս, երբ այս տողերը դրվում է, քաջարար դիմադրում են թշնամուն։ Ինչպէս երեսում է, դէմունդիք անպատճառատ չեն։

Զելքունցոց անցեալին և ներկայի մասին «Արտա»-ի
1887թ.-ի առաջին զրքում զետեղուած են երկու ընդարձակ
շահեկան և գեղեցիկ յօդուածներ։ Խորհուրդ ենք տալիս մեր
ընթերցողներին կարգալ այդ յօդուածները։ Նմանապէս կարե-
յի է ընդարձակ տեղեկութիւն ստանալ Զելքունի մասին մօ-
տերս Հրատարակելիք «Կիլէհիտ» մեր Հրատարակութեան մէջ։

Յայտնի է, որ հայկական խնդրի վերաբերութեամբ Անգլիայի թէ կառավարութիւնը և թէ հասարակական կարծիքը մեծ ջանք դործ դրեց տաճկահայերի վեճակը ապահովելու և տաճկական ու քրդական անիրաւութիւններից պաշտպանելու ու աղատելու համար: Տեղի ունեցան այլ և այլ տեղերում ի պաշտպանութիւն հայերի զանազան ժողովներ, բեմերից խօսեցին հոգեորական և աշխարհական յայտնի հրապարակախօսներ և քաղաքական գործիչներ: «Արաքս»-ի այս գրքում տալիս ենք այդպիսի մի քանի նշանաւոր ժողովների և ականաւոր անձանց պատկերները:

Հայկական խնդրի ծագած օրից եւրոպական մամուլի հետ ուռսական մամուլն ևս զբաղուած է այդ հարցով. թէ գժբախտաբար ասելու ենք, որ ոռւս մամուլը ընդհանուր առմամբ իւր կոչման բարձրութեան վրայ չը կանգնեց. նոյնիսկ եղան թերթեր, որոնք հրէշաւոր մաքեր յայտնեցին տաճկահայերի և եւրոպական միջամտութեան վերաբերմամբ, որոնց թուում չենք կարող մատնանիշ չանել Ա. Սուվորինի օրդան՝ Նորու Վրեմյան, Մոсковսկի Ենք, Գրայданու, Ըեւել և այլ մի կարգ նոյն իսկ անունները յիշելու անարժան թերթեր: Զընչին փոքրամասնութեան մէջ, որոնք մասամբ հետեւողականաբար պաշտպանեցին թշուառ հայերին և նոյա արգար խնդրի արտգ լուծումը պահանջեցին, կարող ենք յիշել. Բարյեն Վեճոմութիւն, Նուու, Նուու, Ս.-Պետերբուրգի Վեճոմութիւն, մասամբ և Սին Օտեսեւու. Ժամանակի ընթացքում լոյս տեսան նաև արժանաւոր յօդուածներ ուռւս ամսագրներում:

Հայ ընթերցող հասարակութեանը ծանօթ երիտասարդ ոռւս ճանապարհորդ և զրող պ. Ստ. Միկլաշեսկին այս տարի երկու անգամ գասալխօսութիւն արեց տաճկահայոց մասին իւր վերջին երկու անդամ արած ճանապարհորդութիւնների առիթովի Փոքր Ասիա: Առաջին անգամ դասախոսեց գարնանը Կայսեր. Աշխարհագրական Ընկերութեան գուլեծում, իսկ երկրորդ անդամ նոյնմբ: 4-ին Ծնաեսագիտաց ժողովում: Յարգելի գասալխօսը տիսուր գոյներով պատկեցաց եց տաճկահայոց անել վիճակը: Հանդիսականների միջեց պ. գասախօսի այս ու այն յայտնած մաքի առիթով խօսեցին միքանի անձինք: Իշխան Կոստանդին Բէհրուղեան մասնաւոնաւորապէս մի կարգ կարեոր բացատրութիւններ տուեց

կովկասեան տրանզիտի մասին. պ. Գր. Նիկողոսեան մեծ աշխայժով խօսեց տաճկահայոց նշանակութեան ու նոցա խաղած դերի մասին Տաճկաստանում, ուր նոքա մինչեւ ներկայ գարուս կէսը համարեա միակ կերակրողն են եղել թիւ ըստ պետութեան: Վերջում այն միաբը յայտնեց, թէ Տաճկահայաստանի արդի սոսկալի պատճառը Եւրոպան է եղել:

Ինչպէս յայտնի է, անցեալ գարնան Պետերբուրգում բայցուած էր Հաճառուական պայտքական գործի առաջ ին ցուցահանդէսը: Յուցահանդիսին զանազան երկրներից ու կողմերից բաղմաթիւ մասնակցողների թուում կային և մի քանի հայ տպարանական հաստատութիւններ. առաջին տեղն էր բըռնում՝ էջմիածնայ տպարանը, որը ի ցցց էր գրած վրեմեալ իւր բոլոր հրատարակութիւնները. այնուհետեւ մի քանի կաոր զիրք և տպագրական թերթեր արուած էին Բագուից՝ «Արք»-ի և Աղեքսանգրագոլց՝ պ. Մալինասեանի տպարանների կողմից: Սնչուշտ հայ տպարանների այս խեղջ մասնակցութիւնը աւելի աչքի էր զարնում, երբ համեմատում էինք զրացի օտար ազգի տպարանական արտադրութիւնների հետ: Հրատարական բանահանձն հայերի կողմից մասնակցում էր միայն մեր խմբադրութիւնը. «Արքան»-ի շքեղ կազմած զրքերը ու այլ բոմները այցելուների ու շագրութիւնն էին զրաւում, մասնաւունք գոյնզգոյն զանազան պատկերները, որ երենք արշնաշափ տարածութեան վրայ սոկէշը ակցրած էին պատի վրայ ընտիր ճաշակով: Երկու ամսուայ ընթացքում, «Արքան»-ի պատկերներից վաճառուեցաւ ոռւս այցելուներին 678 օրինակ և 7 հատ այլբում: Նկարներից զլիաւորապէս պահանջում էին նորին Օծութեան պատկերը, մի քանի հայկական տեսարաններ և տիպեր, իսկ գեղարուեստական նկարներից մեծ քանակութեամբ վաճառուեցաւ ու թիւ թ. Այլաղովսկու և Սեմիրագսկու նկարների արտասիս օրինակները: «Արքան»-ը իր շքեղ հրատարակութեան համար արժանացաւ գովասանական թերթի, մեդալ շնորհելու արգելքը մասնաժողովի կողմից հանդիսացաւ այն հանդամանքը, որ «Արքան»-ի կլեշաները պատրաստվում են արտասահմանում ոչ մուսատան: Այնուհետեւ պատճական բանահանձն օտարազգիայ պարբերական թերթերի հետ շըջանակի մէջ զետեղուած էին և թիֆլիսի մեր բոլոր հրատարակութիւններից մի մի օրինակ. իսկ մի այլ պահարանի մէջ արևելեան զրքերի շարքում տուած

Էին և հայերէն այնպիսի գրքեր, որոնք մի որ և է կողմից, մանաւանդ տպագրական, ուշագրութեան արժանի էին: Այսպէս այստեղ զրուած էր «Կովկաս» ռուսահայոց առաջին թերթը, «Աշաբար» Թիֆլիսի պարբերականը, «Ճռագաղ», հին Աստուածաշունչներ և այլ գրքեր: Առաջին հրատարակութիւնները մեր գրադարանից առաջարկուած լինելով, հանդիսիս անօրէնը ցուցահանդիսի կողմից շնորհակալութեան թերթ ընդունեց:

Նորին Օծութիւն Վեհափառ կաթողիկոսը, նախ քան Պետերբուրգ ժամանելը՝ բարեհածել էր նոր նախիջևանից իւր մեծադիր լուսանկարից մի մի օրինակ ուղարկել իւր սեղհական ստորագրութեամբ. պ. պ. Կ. Եղեանցին, Լ. Մազբերեանին և Հանդիսիս խմբագիր Ս. Գուլամիրեանցին, որոնք իսկոյն նամակաւ իւրեանց որդիսկան երախտագիտութեան հաւասարիքը յայտնեցին նորին Վեհափառութեանը, նոր նախիջևան. իսկ Պետերբուրգում Վեհափառ Հայրապետը բարեհածեց շնորհել իւր լուսանկարներից մի մի օրինակ պետական բարձրագիր պաշտօնեաններին, եկեղեցական ժողովի անդամներին, իշխան կոստ. Բէհրուղեանին և տեղւոյս երեցփոխին:

Տեղւոյս ծխականների այս տարուան ժողովին, որ կայացաւ մայիսի 29-ին, ներկայ էր 73 հոգի: Հերթով թողին իրենց պաշտօնը եկեղեցական խորհրդի անդամութիւնից՝ պ. բժ. Սր. Յարութիւնեան և պ. Գ. Եղաղուբեան: Նիստականների ձայների ստուար մեծամասնութեամբ այդ օրուայ ընտրողական ժողովի նախագահ ընտրուեց բժ. պ. Սր. Յարութիւնեան, որի, ի գէպ է ասել յաճախակի նախագահ ընտրուելը ցոյց է, տալիս, որ պ. Յարութիւնեանը վայելում է ծխականների համակրութիւնը: Ձայնների մեծամասնութեամբ վերընարուեց պ. Սր. Յարութիւնեան և ընտրուեց իշխան Միքայէլ Բէհրուղեան, իրեն խորհրդի անդամներ, իսկ փոխանդամ ընտրուեց Սիմէօն Գուլամիրեանց: Ժողովի միւս չորս անդամներն են Հետեեալները. պ. պ. բժ. Վարդան Վարդանեան, Զերոն Զերոնեան, Էմմանուէլ Սուբաշի և Գրիգոր Տիգրանեան. իսկ փոխանդամ՝ պ. Քերովէ Խօջայեանց: Կանոնադրութեան համաձայն ժողովի մշտական նախագահն է պատուաւոր հոգաբարձու, իշխան Սիմէօն Աքամելիք-Լազարեան, որի փոխարէն վերջինիս կողմից ժողովի նիստերին նախագահում է պ. Յարութիւնեանց:

Պետերբուրգի հայ ծխականների ցանկութեան համաձայն տեղւոյս եկեղեցական խորհուրդը բանալու է եկեղեցական ծխական դպրոց, որի վերջնական կարգադրութեանն է սպասվում թեմիս կառավարիչ բարձրապատիւ Ցուսիկ վարդապետից: Դպրոցը լինելու է երկսեռ, ուր տղայք և աղջկերք սովորելու են միասին և ունենալու է երեք տարուայ դասընթացը:

Ի Տէր հանգուցեալ Աղէքսանդր Գ. Կայսեր դագաղի վերայ տեղւոյս հայ Հասարակութիւնը 1894 թ. նոյեմբերի 3-ին, Ս. Պօղոս Պետրոսի տաճարում դրեց արծաթեայ պսակիւր երեք ներկայացուցիչների՝ երեցփոխ պ. Նիկողայոս Թաղիանոսեանցի, թնդանօթաձիգ զօրաց Հազարապետ Պօղոս Սուլթան-Շահի և հանգիսիս տնօրէն Ս. Գուլամիրեանցի ձեռքով այս մակագրութեամբ. Պաշտելի կայսեր Աղէքսանդր Գ.ին Պետերբուրգի հայերի կողմից: Նոյն պատգամաւորութիւնը հրաւիրուեցաւ ներկայ լինելու նոցին Կայսերական Մեծութեանց ներկայութեամբ տեղի ունեցած հոգեհանգիստին:

Յայտնի Լազարեանց տոհմի վերջին շառաւիղ իշխան Սիմէօն Արամելիք-Լազարեանը սոյն հոկտեմբերի սկզբին այցելեց Ս. Էջմիածին, իջևանելով վեհարանում, ուր նորա համար յատկապէս պատրաստուած էր սենեկ: Իշխանը ս. Էջմիածում մի օր մնալով այցելեց Ս. Տաճարը, ձեմարանը, շրջակայ վանքերը, և այլ հետաքրքրական վայրեր, և շնորհակալութիւն յայտնելով նորին Վեհափառութեանը իրանցց տուած ընդունելութեան համար, մեկնեց դէպի Պետերբուրգ: Իշխանը Ս. Էջմիածնում նուիրել է 1000 ռ. մայր տաճարին, 300 ռ. խաչակամբոյր և 200 ռ. ռ. հոփիսիմէի վանքին:

Կուբանեան շրջանի Եյսկ քաղաքից ստացանք մի թրդթակցութիւն, որի մէջ մեծ զովեստով են խօսում տեղւոյն աւագ քահանայ Մարգար Սուրբիասեանցի մասին: Հայր Սուրբիասեանը 25 տարուց ի վեր նուիրուելով տեղւոյն հայերի հոգեոր միսիթարութեանը, մեծ եռանգով աշխատել է իւր հօաի մտաւոր և բարոյական յառաջադիմութեան վերայ, միենցն ժամանակ տեղւոյն պետական դպրոցներում վարելով հայ կրօնուացիցի պաշտօնը: Նաև նորա յորդորանքով է, որ հանգ. Եղիա Նազարեանը տեղւոյն հայերի հետ միասին ձեռնարկեց տեղական մատուռը ընդարձակել և բարեզարդել: Այժմ Եյսկի հայ Հասարակութիւնը իւր հոգեոր հովուին բարոյա-

պէս վարձատրելու համար՝ նոյեմբերի մէջ տօնելու է նորա քահանայական գործունէութեան 25-ամեայ յորելնանը: Արժ. Մարգար քահանան արժանացած է և Վեհ. Հայրապետի բարձր գոհունակութեանը սովիլոց օդտին արած ժողովարարութեան համար և 1894 թ. հոկտ. 12-ի կոնդակաւ նաև վարձատրուած է վարդապետական խաչով:

1873 թ. Երևան քաղաքում պատահած մեծ հեղեղեց յետոյ, մեզ յաջողեցաւ հեղեղեց բերած քարերի ու տիղմի մէջ ձեռք անցնել մագաղաթի վրայ զրուած մի փոքրադիր ձեռա-

դիր ընտիր գրչագրով: Այդ ձեռագիրը տօնացոյց էր. սրայիշատակարանից յայտնի եղաւ, որ այս տօնացոյցը զրուած է Կաֆա (Թէովոսիա), Օգսենտ անունով մի կրօնաւորի ձեռքով հայոց 883 թ. (1434): Այս ձեռագրի երկարութիւնն էր մոտ 1 վերշոկ, իսկ լայնութիւնը $\frac{3}{4}$ վերշոկ: Գեղեցիկ քանդակներով, որոնք զարդարուած էին ոսկով պատած կարմիր ու կանաչ գոյներով: Գրքոյիր կաշուէկաղլմէր և բաղկացած 258 երեսից:

Այս հաղուապիւտ ձեռագիրը տեսած էին մեր անուանի հայ Հոգեորականներից շատերը, նաև մի քանի աշխարհական անձինք: Պոլսում, 1888 թ. Հանգ. Նար-Պէյ արքեպիս-



ԶԼՅԹՈՒԽՑԻ.

կոսկոսը քննելուց յետոյ խորհուրդ տուեց հրատարակել, թերեւս շեշտեց, թէ այժմեան տօնացոյցի նկատմամբ երևի ինչ ինչ տարբերութիւններ ունենայ. նոյն կարծիքը յայտնեց և ամեն. Մելքիսեդէկ եպիսկ. Մուրաղեանը: Անշուշտ այս տօնացոյցը մենք ցոյց էինք տուած և աղգիս Հայրապետին, երբ այն ժամանակ դեռ Պոլիս էր: Հանգ. Գաբր. արքեպ. Այվազեանը

քանիցս խնդրեց իրան թողնել այդ տօնացոյցը, ինչպէս և ալ.
Աղքասանդր Երիցեանը, սակայն մենք այս ձեռագիրը շատ
էինք գնահատում, որպէս հին դարերի մի դուզնաքեայ յի-
շատակարան, որ կարող լինէինք զիջել ուրիշն: Մինչև ներ-
կայ մայիսը այս ձեռագիրը առանձին արկղիկի մէջ պահպօւմ
էր մեր սեղանի վերայ, որին կարող է վկայել և պ. Տ. նաղա-
րեանը, որ Տպարանական Ժողովին մասնակցող երկու այլ ռուս
ընկերների հետ ապրիլին առիթ ունեցաւ նրան տեսնելու
մեջ մօտ. բայց որքան մեծ եղաւ մեր զարմանքը և անհան-
գստութիւնը, երբ մի քանի օր անցած դարձեալ կարեւորու-
թիւն ծաղեց տեսնելու այս զրբոյկը, բայց նրան չգտանք իւր
թղթէ պահարանում և մեր բոլոր ջանքերը գտնելու այդ ձե-
ռագիրը ի զուր անցան և ահա այսպէս անյայտացաւ 15 դա-
րու կիսի այդ կարեսը և ընտիր յիշատակարանը:

Անցեալ տարի լոյս տեսաւ Պետերբուրգում դանիացի
յայտնի գրող Անդերսէնի «Մայ» առակը 22 լեզուով, ի թիւս
որոց է և հայերէն թարգմանութիւնը: Հետաքրքիր ընթեր-
ցողաց խորհուրդ ենք տալիս ձեռք բերել այդ խիստ շքեղ հրա-
տարակութիւնը, որ իր տեսակի մէջ հազուաղէպ է: Գինն է 1 ր::



Ընորհունակ Գեղորգ սորբաւազ Ձեռքեր ճիշանի պատրոսաւած երգեցիկ խումբը
Նորանախիջեանում, որը երգում էր Ա. Ե. Հայրապետի սինակը եղած ժամանակը:

Այն անձինք, որոնք սովորութիւն ունին խծբծել մեր հանդէսը, չարութեամբ այս և այն պակասութիւնը վերագրելով նորան, ինչպէս վերջերս ի միջի այլոց թշյլ էր տուել իրեն Մոսկուայի հանդէսը, այդպիսեաց պատասխանելու փոխարէն՝ բարւոք ենք համարում ներկայացնել արտասահմանի մի երկու թերթերի կարծիքը «Արագո»-ի մասին:

Echo. II փետրուար, 1895 թ.

Կոնդոնի անդիմական «Էթօ» լրագրի մի խմբագրականի թարգմանութիւնը.

Ա երջին մէկ երկու օրերս մամուլի մէջ բազմաթիւ ակնարկութիւններ եղան Հ էքսպիրի հայերէն թարգմանութեան ձեռնարկի նկատմամբ։ Ի՞այց, որչափ որ տեսանք, ո՛չ ոք յիշատակած չէր Միլտոնի «Կորուսեալ Դրախտ»-ի հայերէն թարգմանութիւնը, որ տարիներից ի վեր գոյութիւն ունի արդէն։ Մ'ենք անհամբեր կ'սպասենք տեսնել թէ այդ երկը, կամ գրական ո՛ւ և իցէ մի հրաշակերտ, ե՞րբ պիտի թարգմանուի հայոց կեղեքիչներու լեզուով, այսինքն թիւրքերէնի։ Վզգային զատ կեանքի ընդունակութեան աւելի մեծ ապացոյց չի կարող լինել և ազգային բեղուն հնարաւորութեանց համար աւելի համոզիչ փաստ չի պահանջուիր բան այս իրաղութիւնը թէ, նոքա ուր որ զատ մնացած են օսմանցու ձեռքից, ուր որ անարգել թողուած են իրենց բնական հակումները, այն տեղ ցոյց տուած են ուրիշ ազգաց լաւագոյն և բարձրագոյն մտածութեանց հետեւելու մի ցանկութիւն, և ո՛չ միայն ցանկութիւն՝ այլ և իրագործում։ Ոչ սակաւք զարմանք պէտք է զգան տեսնելով այն երկասիրութիւնների ցանկը, որոնք թարգմանուած և տպագրուած են Ա ենետիկի Աան Ռ'իօրձիո (Շ) կղզու հայկական վանքի մէջ, ուր Ի՞այրոնի յիշատակը քաղցր կը մնայ և իր գործածած գրիչն ու գրասեղանը պատկանանքով կը պահուի։ Դարձեալ Խիֆլիսի մէջ, երկար ժամանակից ի վեր հայ գրականութեան մի անընդհատ հօսանք է սկիզբ առած։ «Վ ր ա ք ս ւ -ը տոնով բարձր և մոքով յառաջընթաց՝ արևմուտքի առաջնակարգ հանդէսներից յետ չի մնար և այս հանդէսը՝ դեռ մինն է այլազան երեսոյթների այն ազգային հանճարի՝ որ հակառակ ջանջախիչ Ճնշումների և ամենաձախորդ ներգործութիւնների՝ երբէք չէ բթացած և վաղ կամ անագան՝ աշխարհի մէջ իր արժանաւոր դիրքը գրաւելու Ճանապարհը լունած է»։

Ահա «Արագո»-ին նույիութ բնադրի ուղերձ.

The Arax, high in tone and advanced in thought, holds its own with the first class reviews of the West, and it is only one among many manifestations of a national genius, which, in spite of the most crushing repression and the most untoward influences, has never been extinguished, and is bound, sooner or later, to take its proper place in the world.

Այժմ զետեղում ենք Ամերիկայում միշտ ցարդ հրատարակուող հայ լրագրի մէջ տպաւած հնատեալ դատողութիւնը նոյնութեամբ մեր հանդիսի մասին։

«Ը նորհակալութեամբ ստացանք «Արաքս» Պատկերազարդ Հանդիսի երրորդ տարւոյ Շ. գիրքն, որ կը բաղկանայ 140 երեսներէ և 18 ընտիր պատկերներէ: Հոն կը գտնենք Հայկական Խնդրոյ վերայ կարևոր գրուածներ, հայ քաղաքաց տեղագրութիւն, երևելի հայերու կենսագրութիւն, կարևոր գրքերու վերայ մատենախօսութիւն և հայկական ընտիր բանաստեղծութիւններ: Կարներն կամ հայկական տեսարանաց են կամ հայ ականաւոր նկարչաց, Այլազովսկիի, Բաշինջաղեանց գործ ընդհանրապէս: Ամբողջ «Արաքս» հմուտ հայ հեղինակներու աշխատակցութեամբ գրուած է, և կը ծառայէ իւր նպատակին՝ որ է «Հայի անցեալ և ներկայ կեանքի և հայ աշխարհի բազմակողմանի ուսումնասիրութեամբ նպաստել հայ անհատի մտաւորական զարգացման և ինքնաճանաչութեան, իբրև հայ ազգայնութեան անդամի»:

«Արաքս»-ն տեսնելով մեր առաջին տպաւորութիւնն եղած է սքանչացում և ուրախութիւն, զի այդ հանդէս հսկայ յառաջդիմութիւն մ'է հայ մամլոյ մէջ, և իբրև տիպար օրինակ կրնայ նկատուիլ թէ որպիսի պարտին լինի այժմու հայ հանդէսներ: Ո՞եր երկրորդ տպաւորութիւնն եղաւ տիտոր, կարդալով «Արաքս»-ի նիւթական անձկութեան մասին, որ իւր ծափերն չկրնար ծածկել: 663 րուպլի վեաս կ'ընէ հրատարակիչն այս տարի:

Զերմապէս կը յանձնարարեմք այս գերազանցապէս հայկական Հանդէսն մեր հայրենասէր երիտասարդութեան, և մեր ունեոր դասակարգին, բաղձալով որ մեծ. Գուլամիրեանց ծախուց ներքե չընկծի, այլ քաջալերեալ շարունակէ իւր գերընտիր հրատարակութիւնն:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՄԵջ ՍՏԱՑՈՒԱԾԻ ԵՆ ԱՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Բաֆֆի.—Խամսայի մելիքութիւնները, նիւթեր հայոց նոր պատմութեան համար (1600—1827). բ. տպ. Թիֆլիս, տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի, 1895, 8^o. էջ 319+XXVIII+ 3. գինն է 2 ռուբլի:

Բաֆֆի.—Պարոյր Հայկազն (Պրոյերեսիոս). Թիֆլիս, տպարան Մ. Վարդանեանի, 1895, 16^o. էջ 116. գինն է 20 կ.

Մեսրոպ Հարդարով Աղոք-Շլան.—Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիվոռնիոյ քաղաքի հանդերձ յաւելուածով: Վենետիկ, ի տպարանի Միսիթարեանց, 1891, 8^o. էջ 326:

Սարգսի Բահանըւանց.—Հողային և անձնական իրաւունքը Քին հայաստանում (Հայկազանց շրջան). Թիֆլիս, տպարան Մ. Դոտիննեանցի, 1895, 8^o. էջ 76+2. գինն է 40 կ.

- Բրոֆ. Հետան Գլէ+է.—Մայլը (Փիզիքական տեսակչող).
թարգմ. գերմաներէնից Մ. Նազիկեան, Պոլիս. տպագր. Յ.
Մաթէոսեան 1894, 8. էջ 2+105+5. գինն է 3 դռուշ.
Ե. Ղ.—Քննական Հայեացը. Թիֆլիս, տպարան Մ. Վարդա-
նեանի 1894, 16°. էջ 45. գինն է 20 կոպ.:
Գարցեժին Ջի-անի Լևոնէանց.—Հայոց պարբերական մամուլը,
պատմական տեսութիւն, սկզբից մինչև մեր օրերը
(1794—1894) ընդարձակ ծանօթութիւններով. Ալէք-
սանդրապոլ. տպարան Արքահամ Մալխասեանի. 1895,
4. էջ 8+ի+570+1. գինն է 3 ռուբլի (8 ֆրանք):
Դ. Ե. Տ. —Մեղքի զղջումն. թարգմ. Խորեն +ահ. Խանկաղըւան.
տպ. Մ. էջմիածնի, 1894, 16. էջ 27. գինն է 5 կ.:
1894 Տէղէկաժին.—Հայ ընթէրցարան Զմիւռնից, Հաստ. 1869.
Երջան 25-դ, Զմիւռնա. տպ. Թագիկեան 1895, 8. էջ 14.
Ի. ան Տուրչէնէւլ.—Սրճակ բանաստեղծութիւններ. թարգմա-
նեց Ալէտասնուր Մարտուրէան. Մոսկուա, տպարան Ք. Բար-
խուղարեանի, 1895 էջ. 164+2. գինն է 50 կ.:
Գ. Լէժոր.—Դրօշակ. թարգմ. Գէորգ +ահ. Մէրտուրէանց, Թիֆլիս.
տպ. Մ. Վարդանեանի 1895, 80. էջ 52. գինն է 8 կ.:
Հորիզոն.—Դրականական Հանդէս. 1894, տպ. Յ. Մարտիրոսեանի,
Թիֆլիս, 80 երես 2+216. գինն է 1 ռուբլի:

Minas Tchéraz.—Notes sur la mythologie Arménienne. London 1893.
Frederick Davis Green, M. A.—The Armenian Crisis in Turkey 1895.
8° p. XIX×180.

Theodore Isaac, First Encyclical Letter of His Holiness Mgrtitch I,
Catholicos of all Armenia Translated into english with an introduction by Theodore Isaac, Calcutta. 1894, 8.

H. Marrp.—Сказание о католикосе Петре и учномъ Иоаннѣ Козер-
итѣ. 1895. Тип. Академіи Наукъ, in folio եր. 24.

H. Marrp.—Грузинскій изводъ сказки о трехъ остроумныхъ братъ-
яхъ изъ „Русданіи“. 1895. Тип. Акад. Наукъ, in folio եր. 19.

Левонъ З. *Мсеванцъ.*—Къ интерпретациі ванскихъ надписей.

Ենուկ Թէյթէն.՝ Նախատարերը ընագիտական և բնագիտական գիտութիւնն. Տար-
րական գասընթացը, Բ. տարի. Պոլիս, 1895 թ. տպարան Յ. Մատթէոսեանի 8°:
Գ. Պալէնց գրատան գրացուցակ, Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1895 թ. 16°, եր. 96:
Ա. Գուլութինց.—Պատմութիւն Բագուայ աղքատանամ Եկեղեցական Հոգաբարձութեան:
Տրատ. Դր. Յ. Դէլաբեանց, Բագու, տպ. «Արօր» 1895 թ. 16°, եր. 70 գինն է 25 կ.:
Բէյլ Սէրժն Շահ-Նազըւանց.—Երեցիիսանութեան Հարցը Մոսկուայում. Մոսկուա
տպարան Բ. Բարիսուդարեանի, 1895 թ. 80 երես 31+1.

Զառ-Լէբբու.՝ Հարիւր ամենալւս գրքեր, զին և նոր ժամանակի. թարգմանեց Արշա-
ներէտորեան. Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանցի, 1895 թ. 80°, եր. 15, գինն է 8 կ.:

Հ. Դաբբէկլ Ա. Մէրէլէլէնց.՝ Ցիսնամայ յունէնի առ.թիւ. Կենաչքրական ակնարի
գեր. Արսէն արքեպիսկոպոսի Այտնեան, լնդհանրական արքայի Միսիթարիանց
Արքենայ կենաց և գործունեութեանց գեր. Արքահօր չորս զատկերով. Արքենա
Միսիթարեան տպ. 1895 թ. 80 երես 47. գինն է 35 կ. կամ մի ֆրանգ:

ԳՐԻՒԹԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ „ԱՐԱՔՍ“ ՀԱՆԳԻՄԻ

Առլեւտանդրապուշ.	Պ.	Կարապետ Յակովբեանց.
Ազիքընան.	Պ.	Լեռն Ասվաղուրեանց.
Արհամ-էր.	Արժ.	Գաբրիէլ քահ. Թուէլեանց.
Առխանդադ.	Պ.	Առաքել Ոսկանեանց.
Առորախան.	Պ.	Գերասիմ Ֆարմանեան.
Բագու-	Պ.	Արշակ Թումայեան.
"	Պ.	Նիկողայոս Դովլաթեանց.
Բարուճ.	Պ.	Մկրտիչ Մէհրամիւրեանց.
"	Պ.	Քրիստափոր Մարտիրոսեանց.
Եկատէլինուտուր.	Պ.	Աւետիք Մամիկոնեան.
"	Պ.	Յարութիւն Զօրեանց.
"	Պ.	Քրիստափոր Թոփալեանց.
Երևան.	Պ.	Արգար Գուլամիրեանց.
"	Պ.	Գմիտրի Պօպով.
Ժէֆէլէս.	Պ.	Կենտրոնական դրավաճառանց.
Խէրէ.	Տ.	Սաթենիկ Զաքարեանց.
"	Պ.	Ստեփան Դովլաթեանց.
Կրտսեածոդուի.	Պ.	Առուշան Յարութիւնեան.
Ղար.	Արժ.	Խորէն քահ. Ստամբոլցեանց.
"	Պ.	Խաչատրու Մառանկողեանց.
"	Պ.	Արամ Մելիքեանց.
Մարտանուխայա.	Պ.	Մելքրակ Լուսիկեան.
Մէրէւ.	Պ.	Պ. պ. Գաբր. և Միք. Մսիթարեանք.
Մողլուի.	Պ.	Միքայէլ Յովհաննիսեան.
Մոնիւտո.	Պ.	Գէորգ Մ. Կարօտիկեան. Черкасскій переул.
"	Պ.	Յովհաննէս Մուսինեան.
"	Պ.	Անուշաւան Մկրտումեանց.
"	Պ.	Լուսեղէն Խալայձեան. <small>Никольская, Шеремет. подв. кв. № 54.</small>
Ն.-Նախիջևան.	Արժ.	Մարգիս քահանայ Ոսկերչեան.
"	Արժ.	Պօղոս քահ. Բեգելեան.
Շուլս-էր.	Պ.	Արշակ Պապեանց.
Շուլի.	Պ.	Յովսէփ Յարութիւնեանց. « Սիւնի ».
Պէտքէն-րժ.	Խմբաղրութիւն « Արաքս » Հանդիսի.	Կույշին մագանին, „Нового Времени“.
Մւաղլադ.	Պ.	Միայն մայրապաղպուշ սառուագուռովների Համար.
Վարդշապաս.	Պ.	Նիկողայոս Դանիէլեանց.
Օլնի.	Արժ.	Աղէքսանդր Բղնունի.
		Վարդան քահ. Սառափեանց.

ԱՐՏԱՍԱՅՄԱՆԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ «ԱՐԱՔՍ»-Ի

Ա.Երիկսոն.—Նիւ-Եօր+. College Point, N. I. Պ. Յակովլ. Աղատեան.
Անդրեաս.—Մանչեսթեր. Պ. Ս. Եալտղմէան.
Բուլղարիստ.—Ռուսաճուհ. Պ. Գառնիկ Տէօրմէան.
Եդիսպուս.—Գահիկ. Պ. Երուանդ Փափաղեան, Boite Postale. 374
Պարսկաստան.—Թարբէու. Պ. Աւետիս Սարգսեանց.

ՆՈՒԻՒՐԱԾՈՒՈՒԹԻՒԽԻՆՆԵՐ. Սորու յանվեալ յորթեւէ ունինտ 1895 նուագուն
«Արաբա»-ու քրեւեց չե մ օրինակ սահմանադր են այս հաստատութիւններէն.
ԱՍՏՐԱԿԱՆԱՅԻ. Անգլիական Մասնագիտական և Աստրախանու տղայց և օրիորդաց,
նաև Քանաքըռ և Անդաման զիւլերի պարոցներին.
ԹԵՂԱՎԻՑԻՑ Տայշաբ Բարոյականաց թէլւակի հայոց դպրոցին.
ՄՊՈԶԴՈՒԿԻՑ. Յափհանեն Օնտարիոնց Մողաքի հայոց դպրոցին.
ՎԱՐՉՈՒԿԻՑ Միւտյել Զարուհի կաւորի Կարաչալիլ զիւղի
դպրոցին, Լաճարու զիւղի դպրոցին և գիւղական հասարակութեանը, Վաղարշապատու օրիորդաց և Կողովր աղայց պարոցներին.
Մնացեալ նուիրատուութիւնների գրքում:

«ԱՐՄՔԻ» ԴՊԱՏԱԽԱՆԵՐԸ, Թէֆէն. — Ն. «Երազը չի տպուի Պարունական. — Ա. Եկը «Սալմասի ներկայից» գրուածքը կը տպուի Բ. Գրքում: Թէֆէն. — 2. Տեղ Կիշշաները վարձու կամ փոխառութեան չենք տպիլու: Իմբագրութեան մէջ գտնուած բացմաթիւի բանաստեղծութիւններից չի տպուի և ոչ մէկը: Ներդումների բար ինքուուի, որ մեզ ուղարկուած յայտարարութիւնները տեղի ողութեան պատճառաւ անկարող եղանք գետեղել այս գրքում:

«Յըստու» ի սյուն գիրքը պարունակում է 20^{2/1}/2 տպագրական թերթ և 64 նկար, փոխանակ 12 թերթի և 24 նկարի, մանաւանդ որ շարուածն էլ Փոքր բացառութեամբ առանց զպնի է: Այս յաւելումը մի կամ երկու հարիւր ուսուրու ինդիր չէ, այլ մօն Հայութի Պէտք է իմանալու որ գեղարվեստական հրատարակութեան ձախոր չէ կարելի դատել միայն լցու տեսած գրքի չափով և պարունակութեամբ, որ միանդամյն սխալ է, ինչպէս որ մեր ընթերցողներից մէկը դրան է մեզ. այլ լցու ընծայած գրքը հաշուած չափով էլ մի այլ ձաման հաշուելու է վախտած, անկախ պատճառներով շմածած կլիշաների, շարուած յօդուածների համար, որոնք գելի մեծ ձախուեր և ժամանակ են պահպանում:—

„НОВОСТИ“

политическая, литературная и экономическая ежедневная газета, выходить единовременно въ двухъ изданіяхъ.

Подписьная пена большого объема

На 6 м. въ СПб. 9 р. въ др. г. 10 р.
Вмѣстѣ съ Иллюстрированнымъ журналомъ „Петербургская Жизнь.“ 17 — 18

Подписанная цѣна **втораго изданія**, въ меньшемъ объемѣ: на годъ: въ С.-Петербургѣ 9 р. (смѣстъ съ "Петерб. Жизнью"—10 р.), въ другихъ городахъ 10 р. (смѣстъ съ "Петерб. Жизнью"—11 р.), на мѣс. въ Петербургѣ и въ гор. 6 р., на мѣс. въ Петербургѣ и др. г. 1 р.

Подписка на "Новости" вмѣстѣ съ "Петербургомъ и др. гор. о р." не мѣтъ въ Петербургѣ и въ Академіи наукъ. Жизнь" принимается только на цѣлый годъ.

Адресъ: С.-Петербургъ. Въ контору газеты «Новостей» Б. Морская, домъ № 33.

«БИРЖЕВЫЯ ВѢДОМОСТИ».

общественная, политическая и литературная ежедневная газета съ органомъ
финансовъ и торговли.

Подписьная цѣна въ Россіи съ доставкой и пересылкой:

На годъ 15 р. | На 6 мѣсяцевъ . . 9 р. - к.

ПОДПИСКА СЪ РАЗСРОЧКОЮ: Въ Россіи—съ уплатою при подписаніи

5 руб., въ концѣ февраля — 4 р., въ концѣ апреля — 3 р., въ концѣ июня Зр.

ԱՐԱՔՈՒ

ԳԵՂԱՐՈՒԻԵՍԱԿԱՆ

ԲԱԺԻՆԸ



Հրեշտակներ, նկար Ռեյհանի.



ՄՈՒՐԻԼՈՅ. — Յղում Ա. Ասուածածին: ՅՈՎԵՆՈՒՆԻՍ ԱՅՎԱԶՈՎՈՎԿԻ. — Ապրանդեան աշ-
իւնուս: Հ. ՍԵՄԻՐԱՆՈՎԿԻ. — Ալբերտ Տօդ: ԶԻԽԵԼ. — 1) ՋՐԲԵՐ ԵԳԻՊԵՏՈՒՄ ԷՒՆ, 2) Ապտու-
երաժշուահի: ՕԲԵՐ. — ԱՅՆՈՒ արքինուրդուս: ԲԻՍՍՈՒ. — Սպասուս է: ԶԻԽ. — Առաջին
սկզբ: ԱՅՑԱՌՈՅ. — ՀՐԵԼԿԱՆԻՆԵՐԻ խոհմբը: ՊՈՂՈՍ ՏԻՐ. — ԱՍՏՈՒՄԾԱՏԵՐԵՆՅՈՅ. — Հայուհին
ալբերտ Տօդ:

Վիճակի այլաբան

Յայս Ասուածածին նկար Մուրիլեյի — ԺԵ գարու
այս սպանիացի նկարչի մեծաղոյն գործերից մինն է, որը նա
կրկնել է մի քանի անգամ: Այս նկարը դանվում է Դրէզդէնի
հռչակաւոր թանգարանում: Նրա միւս օրինակը պահպում է
Պետերբուրգի Էրմիտաժ կոչուած թանգարանում, մի եր-
րորդն էլ Մատրիդում, բայց այս բոլոր նկարների մէջ նկատ-
վում է չնչին տարբերութիւն, որը նոցանից իւրաքանչիւրին
տալիս է կատարեալ ինքնուրոյնութիւն: Նկարչին վերին աս-
տիճանի յաջողել է Մարիամ Աստուածածնի դէմքի արտայայ-
տութիւնը՝ իրքև մարմնացումն մաքրութեան և սրբութեան,
ինչպէս և հրեշտակների ողեղորուած կրօնական զգացմունքը,
որոնք որպէս լցո շըջապատում են Սուրբ Կուսին:



Ապրանդեան ավելիանուս. Մեր անխոնջ նկարիչ Յովհաննէս
Այվազովսկին, որին բնութիւնը մեծ տաղանդի հետ պարզել է
նաև կատարեալ առողջութիւն, 1893 թուականին, չնայելով
իւր 75 ամեայ հասակին, ինչպէս յիշել էինք, Ճանապարհորդեց
դէպի Ամերիկա, ուր նորան վաղուց ի վեր ձգում էր նորանոր

տպաւորութիւնների փափազը: Այս ձանապարհորդութեան հետեանքն էր նիագարայի ջրվէժի մի քանի հրաշալի տեսարանների և Ատլանտիան ովկիանոսի նկարները, որոնք նոյն թուականին գրուեցան ի ցոյց Մեծ իշխան նիկոլայ նիկոլայևիչի ապարանքում: Այս վերջին նկարը, որի աւտոտիպական միջոցաւ պատրաստած օրինակը դնում ենք այս գրքում, ներկայացնում է ովկիանոսի ալիքների կատաղի շարժումը: Շոգենաւի մի մասը նկարուած է պատկերի ներքեւի անկիւնում: Նրա տախտակամածի վրայ տեսնվում է մի խումբ մարդիկ, մէջտեղում ինքը նկարիչը, որին ռուս բանաստեղծներից մէկը անուանել է «Ծովի նախառոր», իսկ նորա մօտը կանգնած է իւր գեղեցիկ ամուսինը: Այս նկարը յետոյ ի ցոյց տրուեցաւ թերլինում և այժմ կազմում է թերլինի ռուսաց դեսպանի ապարանքի թանկազին զարդը, որտեղ նրանով սակաւ զուարձութիւն չէ ստացել գերմանական երիտասարդ կայսրը, որ, ինչպէս յայտնի է, ծովի մեծ սիրահար է:



Առջեւունք ճօպ՝ նկար Հ. Սեմիրադսկու: Այս նկարը ևս հոչակաւոր նկարչի անուանի գործերի այն շարքին է վերաբերում, որոնց մէջ նա երեսն է բերում հին կլասիքական աշխարհից այլ և այլ տեսարաններ: Նկարի գոյների փայլը, նրանց պայծառութիւնը, կանանց կտղմուածքի գեղեցկութիւնը, անդորր կեանքի և բախտաւորութեան պատկերացումը, որոնք կազմում են այս նկարչի տաղանդի հիմնական յատկութիւնը, մեզ ներշնչում են այն իդէալական արտայայտութիւնը, որ մենք երեակայութեամբ պատկերացնում ենք հին հելլենական աշխարհի մասին:



Զըմբել Եգիպտացի ինը՝ նկար Զիլսէլի: «Արաքս»-ում այս առաջին անգամը չէ, որ մենք տալիս ենք Վիեննայի այս նշանաւոր նկարչի յայտնի պատկերների արտատիպ օրինակները,

նկարչի՝ որ իրեն մասնագիտութիւն է ընտրել գլխաւորապէս արևելքան կանանց պլաստիք գեղեցկութեան արտայայտութիւնը գեղարուեստի միջոցաւ:

Մեր առաջ կանգնած է ոչ միայն Աստուածային քնքոյշ մի ստեղծագործութիւն, բայց և ուժով ու եռանդով լի մի կին: Սափորը, որին նա կոթնել է, ապացուցում է որ այդ կինը ներկայացնում է այն իդէալը, որի մէջ գեղեցկութեան գաղափարը միանում է մայրական գաղափարի հետ, որը պահանջում է ոյժ և կարողութիւն: Ցաւօք սրտի այս իդէալից շատ հեռու է ժամանակակից կինը, որը կամ փափկասէր է և ֆիզիքական գործունէութեան անընդունակ, թէև զրաւիչ ու գեղեցիկ, կամ կոշտացած է ոյժից վեր Փիզիքական աշխատանքից և կորցրած նախախնամութիւնից իրան պարզեած գեղեցկութիւնն ու կանացիութիւնը:



Աղջադ Երաժշտութիւն նկարի մէջ Զիխէլը ձևացնում է մի աղջիկ զարմանալի գեղեցկութեամբ, համեստ հագուստով, որ մի ձեռքով բռնած է երաժշտական գործիքը, իսկ միւսը կարկառած: Նկարչի այս երկին նայելով, կարծես թէ նորա ձրգումն է եղել ցոյց տալ թէ ամենաճայրայեղջբաւորութիւնըն անգամ անձեռնմուկնելի է թողնում Աստծուց շնորհած գեղեցկութիւնը, եթէ միայն աղջիկը պահպանել է իւր բարոյական և Փիզիքական մաքրութիւնը:



Ապաստան է, նկար Բիսսոնի: Կինը ամեն զարու բարոյագէտներից և փիլիսոփաներից համարվում է ստեղծագործութեան պսակ: Նրա կոչումն է մարդկային բնաւորութիւնը մեղմացնել, ինչպէս իւր գեղեցկութեամբ, այնպէս և հրապոյրներով, որոնք ամփոփում են նրա սիրող սրտի մէջ: Ահա ինչու համար նկարիները շատ յաճախ իրենց նկարների առարկայ են ընտրում կինը գաղափարականի վերածելով նորա հոգեկան և արտաքին գեղեցկութիւնը: Իտալական և սպանիական կին

Նկարիչները կնոջ գեղեցկութեան բոլոր հրապոյրները պատկերացնում էին Մարիամ Աստուածածնի և ո. կոյսերի մէջ, տալով նրանց նաև աստուածային սիրոյ և խորին հոգեկան արտայայտութիւն։ Սրա հետ միասին շահագործում էին առասպելական նիւթեր, որոնք նկարիչներին միջոց էին տալիս առանց բարոյական զգացմունքը վերաւորելու ներկայացնել կանացի մերկութիւնը։ Ժամանակը փոխեց այս ուղղութիւնը։ Անցեալ դարում, երբ կինը երկրպագութեան առարկայ գարձաւ և բնաւորութիւնները չափազանց թուլացան, սկսեցին ներկայացնել կիսամերկ կաղմուածքներ կրքի և զգայնութեան արտայայտութեամբ։ Մեր ժամանակը կանացի գեղեցկութեանը վերաբերվումէ աւելի լրջօրէն։ Մեր ժամանակամիջոցի գեղարուեստագէտները գաղափարականացնելով կնոջ գեղեցկութիւնը, աշխատում են նրա մէջ մարմնացնել նկարի ներդաշնակութիւնը հոգեկան արամագրութեան այս կամ այն նուրբ արտայայտութեամբ, այս կամ այն գաղափարով։ Այս վերջինների շարքին է պատկանում և Բիսոնի նկարը։ Այս սքանչելի գեղեցկուհին ոչ միայն երեսի գծագրութիւնով, բայց և իւր ամբողջ կաղմուածքով արտայայտում է հանգիստ սպասողական դրութիւն։ Նա՝ հեռուն դիտելով, մտածում է, բայց ակամայ նկատում ես, որ նա երկմտութեամբ սպասում է գեռ անյայտ մի որ և է բանի։ Մատաղ սրտի մէջ առաջին սիրոյ զգացման զարթնելը չ արգեօք սա. արգեօք չ սպասում նա անծանօթ հեռուից լուծումն այն անյայտ զգացման, որը նրան տիրել է ամբողջովին։



Աձուուը արյակուրդուն, նկար Օբերի, — որի մէջ երիտասարդ աղջեկը, բնութեան զրկում արձակում է սիրոյ չարաճճի Աստուծուն հանդստանալու, — պատկանում է այնպիսի դործերի, ինչպէս և նախընթացը, որի մէջ աղջկայ մաքրութիւնը և անմեղութիւնը կաղմում են նրա գեղեցկութեան լրացուցիչը։



«ՀԵՂԱՎԱՐՆԵՐԻ ԽԱ-ՏԵՐ»՝ ՆԿԱՐԻ ՌԻՅՆԾՈՂԻ: ՄԵՆՔ ՊԵՏԵՂՈՒՄ ԵՆՔ
Այստեղ ամենամեծ անգլիացի նկարչի ստեղծագործութեան ար-
տատիպ օրինակը, որ կարող է ծառայել իբրև բնորոշ նմայշ
մի այնպիսի երկրի գեղարուեստական հմտութեան, ուր ոչ մի
ժամանակ գեղարուեստները չեն եղել առանձին մշակման ա-
ռարկայ: ՌԻՅՆԾՈՂը իւր բոլոր ստեղծագործութիւնների մէջ
ցոյց է տալիս նկարի անսովոր կանոնաւորութիւնն և ամբող-
ջացումն, կոլորիտի ոյժն ու պայծառութիւնը և խիստ շար-
ժուածք: Ս. Պետերբուրգի թանգարանում գտնվում են այս
նկարչի մի քանի նշանաւոր գործերը, որոնցով մեծ իրաւամբ
պարծենում են անզղիացիները: Այս պատկերը, որի արտա-
տիպ օրինակը զետեղում ենք այստեղ ներկայացնում է հրեշ-
տակների մի խումբ, որոնց գեղեցկութիւնը սքանչելի է: Այդ
հրեշտակները մեզ յիշեցնում են այն գեղեցիկ մանուկներին,
որոնց այնպէս սիրում են նկարել անզղիացի գեղարուեստա-
գէտները և որոնց թիւը, կանոնաւոր ֆիզիքական դաստիա-
րակութիւն ստանալու համար, այնքան մեծ է այս մէդի և
ծխի աշխարհում:



Գերմանացի Զիւս նկարչի գործը՝ «Առաջն աւ» պատ-
կանում է ժամանակակից գեղարուեստագիտութեան այն չը-
նաշխարհիկ ստեղծագործութիւնների թուին, որոնք կարծես
թէ նպատակ ունեն հակակշխո լինելու ներկայ գարուս նիւ-
թապաշտական ուղղութեանը: Երկու գողտրիկ սիրոյ աս-
տուածներ, օճառի փամիշտի վրայ նստած, միացած են ջերմ,
երկարատե համբոյրով: Մէրը, որի արտայայտութեան նշանա-
կըն են կազմում այս երկու գեղեցիկ մանուկները, նրանց հա-
մար կարծես թէ կազմում է կեանքի միակ նպատակն ու նշանա-
կութիւնը, բայց այդ սէրը այն խորին զգացուած սէրը չէ, որ
ամբողջովին կլանում է երիտասարդի սիրաը, այլ դա մի թոռւ-
ցիկ հրեշտակային զգացում է, որ բնազդօրէն յայտնվում է երա-
խայի սրտում և խկոյն օքն է ցնդում այն օճառի փամիշտի պէս,
որի վրայ նոքա նստած են:



Հայուհին աղբերդի Տօպ, Պ. Տէր-Աստուածատրեանցի: Մենք
ուրախ ենք, որ մեր երիտասարդ նկարիչները ձգտում են
ներկայացնել իրենց զործերի մէջ զանազան կողմերի մեր
հայկական տիպարները, կենցաղը և բնաւորութիւնները, այս
պատճառով և մենք ուրախութեամբ զետեղում ենք Պ. Տէր-
Աստուածատրեանի այս նկարը, որը ներկայացնում է հայ
կնոջը Հայաստանում ազգային տարազով: Իւրաքանչիւր հայ
այս աշխատաւոր կնոջ վրայ նայելով իւր մտահոգ արտայայ-
տութեամբ, անշուշտ կը յիշէ իւր մօրը կամ քրոջը:

Լ. Ա.



Կիւր Զիւսի: —Արագին սէր.



Убранство

ՄՈՒՐԵԼԻ. — ՅՆՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱՆԵԱՆԻ.

Мурпільо. — Зачатіс Божъей Матерн.


• 100 •

Автоматія Ангерера въ Вѣнѣ.

Հրատակությունը պահպանվելու

Изд. лите.-худ. обозр. „Араксъ“.






ЧРІД 92. ГОДІВ

Յ. ԱՎԱԶՈՎԾԻՆ.—ԱՏԼԱՆԴԵԱՆ ՈՎԿԻԱՆՈՒ.


И. Айвазовский. — Атлантический океанъ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Під літнім обозр. Апраксін








Հ. ԱՅՐԻՄՈՎԻ. — ՄՊԻԿԻ ԽՕՏ.

Г. Семиралский. — У фонтана.

Автогравь Ангерера изъ Венг.





Н. Зихель.— Водоносница феллашка.

Н. Зихель.— Водоносница феллашка.

Автотипія Лінгерера въ Віднѣ.





И. Ф. ФОЛЛЕ

Ա. ԶԻԽԵԼ —ԱՂԲԱՏ ԵՐԱՎԵՏՈՒՀՅԻ,
Н. Зихель. — Нишай.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.





РЕНЕСАНС.—ШАШИЛЬ Е.
Биссонъ. — Ожиданіе.

Автотипія Ангерера въ Віаре.





Тип. ВА. ГОГА.

8. ОБЕР.—ШИНОС АРДИЧИНОВИЧ.

I. Оберъ.—Амуръ на капикулахъ.

Автогипія Ангерера въ Вінк.

Зірка. «Іллюстрація». 1897 рік.

Изд. літ.-худ. обозр. „Аракес“.





Рис. на грав.

Պ. ՏԵՐ ԱՅՈՒՆԻՍՐԵԱ. - ՀԱՅ ԿՈՒՇ ԱՊՐԻԼԻ 1938.

II. ՏԵՐ ԱԿԱՏՈՒՐՅԱՆՑ. — Արմանկա ս ֆոնտան.

Автотипия Лигерера въ Вене.





ՀԱՅԱՍՏԱՆ
ՏԵՍԱՐՈՒ-
ՆԵՐ ։
ՏԻՊԵՐ




Cherry blossoms in full bloom.



180 - 58 - ГОДЫХ.

Հին Ջուլֆի մասորդը. Առագեանցի լուսանկարից,
Развалины Старой-Джульфы на берегу Аракса.







ЧЕРНІГІВСЬКА ГУМАНОТИЧНА АКАДЕМІЯ

Цікава П'ятацькій міськотицькій та вищаршій.
Видъ монастыря Ктуцъ Анастасъ на Ванскомъ озерѣ.

Автографія Ангерера въ Венѣ.

Санкт-Петербург. С. Ніжинський.

Під ким-такій обозомъ. Араповъ.








108 AL. 1010.

Արքաւորների նաւակը Վանա ծովում Հղթամարի եզրուամ.
Лодка богохульцевъ-армянъ въ Ванскомъ озерѣ на монастырскомъ берегу Ахтамаръ.

Автографъ Аштерера въ Вѣнѣ








Таб. 32. Топка

Горгонажи дюре.
Ущелье въ Аргинѣ.



100% Natural
Organic Cotton





19. 12. 1900.

Դավիթ բերդի բերդը. Ա. Փափազեանի լուսանկարից.

Развалины крепости Давидъ-Бека.







ФОТО Г. СОЛОДКОГО

({днорфнлікі քարտիք,

Скала въ Тортумѣ, Тур., Армениѣ.

Автотипія Лінгерера въ Вѣнѣ.

ЛІНГЕРЕР, АВТОТИПІЯ, 4-150(150)

Изд. зем.-худ. обозр., АГАКІЧІ.





— Н. А. Говзен.

“Կախալկայ վանքի ուխտաւորների փախուստը Առաքս գետի վերայ 1891 թ.
Ո՞ւ Փափաղեանի լուսանկարից

Бѣгство богомольцевъ изъ монастыря Нахавка на берегу Аракса.







Աւանայ լճի բնդհանուր տեսարանը.

Островъ Севангъ на Геокчинскомъ озерѣ.



Մ. Դադեանցի լուսանկարից.

Часть Геокчинского озера съ монастыремъ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.







ՂԱՐԱԲԻԴԻ ՀԱՅ ԿԻՆԸ.





ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅ ԿԻՆԸ.

Типы армянскихъ женщинъ въ Закавказіи.




ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՈՂԻ ՀԱՅ ԿԻՆԸ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.







ՀԱՅԿԱԿԱՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

1800

1800



299

1885 № 208

Հայկական հին խոցքար.

Наагробный памятникъ.

Ալետինյ Լութերը մ. Բայր.





Որոտնայ վանքը. Ա. Փափազեանի լուսանկարից.

Монастырь Воротна въ Эрив. губ.



A person riding a horse in a desert landscape.



ՆՈՐԱՆՈՐ ՏԱՆՈԹՈՒԵՔ:—ՊԵՏՐՈՎ

Բայց ժամանակն անցնում էր, և ես քիչ-քիչ սկսեցի ընտելանալ: Օր աւուր աւելի ու աւելի սակաւ էին շփոթեցնում ինձ նոր կեանքիս ամենօրեայ երկոյթները: Անցքերը, կարդուսարքը, մարդիկը—ամեն ինչ մի տեսակ սովորական էր դառնում աչքերիս համար: Հաշուել այս կեանքի հետ անհնար էր, բայց ճանաչել այն իբրև կատարուած իրողութիւն՝ ժամանակ էր վաղուց: Բոլոր տարակուսանքներս, որ զեռմացել էին մէջս, ես թագցրի իմ ներս՝ որքան կարող էի՞ խորը: Այլ ևս քաշ չեի գալիս բանտումը կորածի պէս, և վեշտս ցոյց չեի տալիս: Տաժանակիրների վայրենի հետաքըրքիր աչքերը էլ կանդ չին առնում վերաս այնքան շուտ-շուտ, հետամուտ չին լինում ինձ այնպիսի նախապատրաստուած լրբութեամբ: Ես էլ երեխ սովորական էի դառնում նրանց համար, որ շատ ուրախացնում էր ինձ: Բանտումը ես արդէն Ճեմում էի՞ ինչպէս իմ տանը, գիտէի իմ աեղը տախտի վրայ և մինչեւ իսկ, ըստ երկոյթին, ընտելացայ այնպիսի բաների, որոնց՝ կարծում էի թէ նոյն իսկ ցկեանս չեմ ընտելանայ: Կանոնաւորապէս շաբաթը մի անգամ գնում էի գլխիս կէսը սափրելու: Ամեն շաբաթ օր, պարապ ժամանակը, մեղ զրա համար հերթով կանչում էին բանտից պահականոցը (չսափրողը արդէն ինքն էր պատասխանատու իւր համար), և այնտեղ գումարտակ գնդերի սափրիչները սառը օճառով սասդնում էին մեր գլուխները ու անխիզձ կերպով քերքերում ամենաբութ ածելիներով, այնպէս որ նոյն իսկ հիմի էլ մարմինս սարսուում է այդ տանջանքը յիշելիս: Սակայն շուտով զեղը գանուեց. Ակիմ Ակիմիչը ինձ ցոյց տուեց մի կալանաւոր, ղինուորական կարդից, որ մի կոպէկով որին

ուղես գերծում էր սեփական ածելիով և գրանով վաստակ անում: Տաժանակիրներից շատերը նրա մօտ էին գնում՝ որ թագաւորական սափրիչներից ազատուեն, ոյն ինչ այդ մարդիկը փափուկ մեծացածներից չէին: Մեր կալանաւոր սափրիչն հայեց էին կոչում, թէ ինչու, չդիտեմ: և թէ ինչով նա կարող էր մայեօրին յիշեցնել նոյնպէս չեմ կարող ասել: Հիմի որ զրում եմ այս, հենց սլատիկերացած է տռաջիս այդ մայեօրը, մի բարձրահասակ, նիշար և լուռ տղայ, բաւականին արխմար, ընդմիշտ ընկղմած իւր պարապմունքի մէջ և անպատճառ փոկը ձեռքին, որի վրայով նա դիշեր-ցերեկ տանում բերում էր իր անասելի սրած ածելին և կարծես ողջամբ տարում էր այդ զարծով իւր կեանքի կոչումը այդ համարելով ակներե կերպով: Եւ յիրաւի, նա չափաղանց գոհ էր լինում երբ ածելին լաւ էր լինում և երբ մէկը զալիս էր ստիրուելու, նրա օձառը ատպ էր, ձեռքը՝ թեթե, ածիլելը՝ թաւշի պէս փափուկ: Նա յայտնապէս ուրախանում էր ու հպարտանում իւր արուեստով և անփոյթ ստանում էր վասակած կոպէկը, կարծես թէ իրօք էլ բանը արուեստն էր, և ոչ կոպէկը: Թանգ նստեց Ա-վին մի անգամ երբ մատնութիւններ անելով բանաի վրայ պլաց-մայեօրին՝ մեր բանային սափրիչի անունը տուեց և անզգուշութեամբ նրան հայեց կոչեց: Պլաց-մայեօրը կատաղեց և վերջին սատիճանի վերաւորուեց: «Դիտես արգեօք, ստոր արարած, թէ ի՞նչ է մայեօրը», զոռում էր նա փրփուրը բերանին՝ ըստ իւր սովորութեան Ա-վի հետ իւր բանը տեսնելով: «Հասկանում ես արգեօք թէ ի՞նչ է մայեօրը: Եւ ահա մի որ և է անարդ տաժանակիր, ու համարձակուում են նրան մայեօր կոչել՝ երեսիս, առաջիս»... Միայն Ա-վը կարող էր այդպիսի մարդու հետ վարուել:

Բանստային կեանքիս առաջին իսկ օրից ես արգէն սկսեցի երազել ազատութեան մասին: Հաշեւ անել թէ ե՛րբ կը վերջանան բանտարգելութեանս տարիները, հաղար ու մի այլեայլ տեսակով ու ձեռվ, սիրած պարապմունքս դարձաւ: Ես մինչեւ իսկ մոտածել էլ չէի կարող մի ուրիշ բանի մասին այլ կերպ, և հաւատացած եմ, որ ով ասես այդպէս է

անում՝ զըկուելով առժամանակ ազատութիւնից: Զգիտեմ
արդիօք տաժանակիրներն այնպէս էին մտածում, հաշիւ ա-
նում; ինչպէս ես, բայց նրանց թեթևամիտ յօյսերը ապշե-
ցրին ինձ առաջին անգամից: Արդելականի, ազատութիւնից
զըկուածի յօյսը բոլորովին ուրիշ տեսակ է իսկական կեան-
քով ապրող մարդու յօյսից: Ազատ մարդը, ի հարկէ, յու-
սով է (օրինակ՝ որ բախտը կրփոխուի, որ այս-ինչ ձեռնար-
կութիւնը կ'իրագործուի), բայց նա ապրում է, գործում է.
իսկական կեանքը նրան լիովին տանում է իւր յորձանքով:
Այդպէս չէ արդելականի համար: Այդտեղ ասենք, նոյնպէս
կեանք կայ,—բանտի, տաժանակրութեան կեանքը. բայց ով-
էլ որ լինի տաժանակիրը և որքան ժամանակով էլ լինի ար-
սորուած, նա բնաւ չի կարող բնազդմամբ, մի դրական՝ վերջ-
նական բան՝ իրական կեանքի մի մասը համարել իւր բախ-
տը: Ամենայն տաժանակիր զգում է, որ ինքը չ-ո պահը չէ,
այլ կարծես թէ հիւր է: Քսան տարուայ վրայ նա կարծես
երկու տարուայ վրայ է նայում և կատարեալ համողուած է,
որ յիսուն տարեկան հասակումն էլ բանտից ելնելիս, նոյն-
պիսի երիտասարդ կըլինի, ինչպէս հիմի երեսուն տարեկան
հասակում: «Դեռ կ'ապրենք», մտածում է նա ու յամառու-
թեամբ յետ վանում իրանից ամենայն կասկած և ուրիշ զայ-
րացնող միտք: Անորոշ ժամանակով առանձին բաժանմուն-
քի՝ աքսորեալներն անդամ երրեմ յօյս էին ունենում՝ թէ ա-
չա եղաւ-չեղաւ մէկ-էլ տեսար հրաման եկաւ Պիտերից: «Գո-
խագրել ներչինսկ՝ հանքերը և որոշել ժամանակամիջոցը»: Այն
ժամանակ հիանալի կըլինի. նախ որ ներչինսկ գնալը ոտով
հաղիւ թէ կէս տարի չըաշի, իսկ խմբով գնալը բանտից ինչ-
քան լու է ու լաւ: Յեայ էլ ներչինսկում պայմանաժամը
լրացնել ու այն ժամանակ.... Եւ այդպէս յօյսեր է տածում
ախր ալեոր մարդու մէկը:

Տոբոյլսկում տեսել էի շղթայով պատից կաղածներին:
Նստած է մէկը շղթայով կապած՝ այսպէս սաժէնաշափ եր-
կայնքով. այդտեղ՝ նրա կողքին է Ճօճքը: Կապել են նրան մի
չափից դուրս սարսափելի բանի համար, որ նա գործել է

նոյն իսկ Սիբիրում։ Նստած են Հինդ-Հինդ տարով ամեն մէկը, տասը-տասը տարով էլ կան նստածներ։ Շատը աւազակ-ներիցն են։ Մէկին միայն նրանց միջում տեսայ՝ կարծես պա-րոններիցն էր. որտեղևիցէ մի ժամանակ պաշտօն է ունեցել նա։ Խօսում էր խոնարհութեամբ, շնչալով. ժպտում էր քաղցրիկ կերպով։ Մեզ ցոյց էր տալիս իւր շղթան, ցոյց էր տալիս թէ ինչպէս պէտք է պառկել ծօճքում՝ որ աւելի հան-դիստ լինի։ Պէտք է որ իւր տեսակում մի ուրիշ արարած եղած լինէր նա։ Նրանք բոլորն էլ առհասարակ իրանց հան-դարտ են պահում և գոհ են երկում, բայց սակայն ամեն մէ-կը չափազանց ուզում է իւր ժամանակը շուտ լրացնել։ Եւ ինչո՞ւ համար՝ կարծում էք։ Այ թէ ինչո՞ւ համար. գուրս՝ կրգայ հեղձուկ՝ գարշահոտ սենեակից՝ ցածրիկ աղիւսի թա-ղերով, և կրծեմի բանտի բակումը, և... և ուրիշ ոչինչ Բան-տիցն էլ նրան դուրս չեն թողնի երբէք։ Ինքն էլ զիտէ, որ կապից արձակուածները այնուհետեւ առմիշտ պահուում են բանտում, մինչև մահները, և ոտն ու ձեռքը շղթայած։ Նա այդ գիտէ և այնուամենայնիւ սաստիկ ուզում է շուտ վեր-ջացնել իր շղթայակապութեան միջոցը։ Առանց այս ցան-կութեան կարո՞ղ էր նա արդեօք հինդ կամ վկաց տարի շրդ-թայով կապած նստել չմեռնել կամ չինակարուել։ Ուրիշ մէկն էլ նստած կըկենա՞ր արգեօք։

Ես զգում էի՝ որ աշխատանքը կարող է ինձ փրկել կազզուրել առողջութիւնս՝ մարմինս։ Անընդհատ հոգեկան անհանգստութիւնը, ջղերի գրգռուելը, բռնատան հեղձուկ օդը կարող էին բոլորովին քայբայել ինձ։ Շուտ-շուտ բաց օդում՝ լինել, ամեն օր յոգնել, ծանրութիւններ կրելու վար-ժուել—և ես ինձ գոնէ փրկած կրլինեմ, մտածում էի, ինձ կրկազզուրեմ, առողջ, զուարթ, ուժեղ, չծերացած գուրս կրգամ։ Ես չխալուեցի. աշխատանքն ու շարժողութիւնը շատ օգտաւէտ եղան ինձ։ Աչ ու սարստիով էի նայում ըն-կերներից (աղնուականներից) մէկի վերայ՝ թէ ինչպէս նա բանտում հալուում էր մոմի պէս։ Մտաւ նա բանտը ինձ հետ միասին, զեռ մատաղ սիրուն, զուարթ, բայց գուրս

եկաւ կիսակործան, ալեոր, ոտներից զուրկ, շունչը կտրուած։
Զէ, մտածում էի՝ նայելով նրա վերայ, և ապրել ուզում
եմ և կ'ապրեմ։ Դրա փոխարէնն էլ ստանում էի սկզբում
տաժանակիրներից աշխատանք սիրելուս համար, և երկար ժա-
մանակ արհամարհանքով ու ծաղըելով խոցում էին ինձ։ Բայց
ես ոչ ոքի չէի նայում և զուարթ գնում էի ուրեկիցէ, օրի-
նակ, հենց սպիտակ մարմարինը այրելու ու մանրացնելու
— մինը իմ ճանաչած առաջին աշխատանքներից։ Դա մի
հեշտ աշխատանք էր։ Կառավարիչ ճարտարագէտները ըստ-
կարելոյն պատրաստ էին աղնուականների բանը թեթեա-
ցնել որ սակայն, ամենեին զիջողութիւն չէր, այլ արդարու-
թիւն միայն։ Օտարոտի բան կը լինէր կիսով չափ ամենատկար
և երբէք չբանած մարդուց պահանջել միենցն գասը, որ կա-
նոնով տալիս էին իսկական բանողին։ Բայց այդ «երես տալը»
միշտ չէր կատարուում, մինչև իսկ կարծես թագուն էր կա-
տարուում։ այդ բանի վրայ խիստ հսկում էին գրսից։ Բա-
ւական յաճախ պէտք էր լինում ծանր աշխատանքով բա-
նել, և այն ժամանակ, ի հարկէ, աղնուականները միւս գոր-
ծաւորներից կրկնակի նեղութիւն էին քաշում։ Սպիտակ մար-
մարինի համար սովորաբար երեք-չորս մարդ էին նշանա-
կում, ծեր կամ թոյլ դէ՛, մեղ էլ խօսք չկայ, նրանց կար-
գում։ և բացի այդ՝ հետերս ուղարկում էին մի իսկական՝
բանը գիտեցող՝ գործաւոր։ Սովորաբար դալիս էր միշտ՝ մի
քանի տարի շարունակ՝ միենցն Ալմազովը, մի խոժոռ, թխա-
գէմ և նիշար մարդ, արդէն տարիքով, մարդկանցից խոր-
շող ու գարշող։ Նա մեղ խորը արհամարհում էր։ Սակայն,
նա շատ քիչ-խօսող էր, այնքան՝ որ նոյն իսկ ծուլանում էր
փնթփնթալ մեղ վրայ։ Համբարանոցը, որտեղ մարմարինն
էին այրում ու մանրում, նոյնպէս ընկած էր գետի ամայի
ու զառիվայր ափին։ Չմեռը, մանաւանդ մռայլ օրին, թախ-
ծալի էր նայել գետին և հանգիպակաց՝ հեռաւոր ափին։ Մի
ինչոր վշտագին, սիրտ կարատող բան կար այդ վայրի ու
ամայի տեսարանում։ Բայց հազիւ թէ աւելի ծանր չէր լի-
նում, երբ ձիւնի անհուն սպիտակ սփռոցի վրայ պայծառ

փայլում էր արեղակը. հենց կ'ուզէիր թռչել ուրեիցէ, դէպի այդ դաշտը որ միւս ափին սկսուում էր և ձգուում դէպի հարաւ մէկ ու կէս հաղար վերստի չափ՝ իբրև մի անընդհատ սփռոց: Ալմաղովը սովորաբար լուռ ու խօժոռ գործի էր սկսում. մենք կարծես ամաջում էինք, որ չէինք կարողանում ինչպէս հարկն է օգնել նրան, իսկ նա զիտմամբ միայնակ էր գործը առաջ տանում, զիտմամբ մեղնից ոչ մի օգնութիւն չէր ուղում, կարծես նրա համար՝ որ մենք մեր ողջանցանքը զբայինք նրա առաջ և խոստովանուելինք մեր անձնական անպէտքութիւնը: Բոլոր բանն էլ հօ վառարանը վառելն էր՝ նրա մէջ զրուած մարմարիոնը թրծելու համար, որ ինքներս էլ քաշ տալով հասցնում էինք նրան երբեմն: Միւս օրը, երբ մարմարիոնը արդէն բոլորովին թրծուած էր լինում: սկսում էր վառարանից հանուելը: Ամեն մէկս վերցնում էինք մի-մի ծանր թակ, մի առանձին արկողում մեղ համար մարմարիոն զարսուտում և սկսում ջարդել: Դա մի շատ դուրեկան աշխատանք էր: Փխրուն մարմարիոնը արագ փոխարկուում էր սպիտակ փայլուն փոշու, — այնպէս շուտով այնպէս լաւ էր մանրանում: Մենք թափահարում էինք ծանր մուրծերը և այնպիսի թրիկթրիկոց հանում, որ ինքներիս գուր էր գալիս: Եւ յօգնում էլ էինք՝ վերջապէս, և թեթե էր լինում միենոյն ժամանակ. այսուերս կարմրում էին, արիւնը արագ էր պտառում: Այդ ժամանակ Ալմաղովն էլ սկսում էր ներողամառութեամբ նայել մեղ վրայ՝ ինչպէս նայում էն փոքրիկ մանուկների վրայ. ներողամտութեամբ ծխում էր իր ծխափողը, բայց և այնպէս՝ երբ հարկ էր լինում խօսել՝ չէր կարողանում չըրթմնջալ: Սակայն նա ամենքի հետ էլ այգպէս էր, իսկ էտպէս՝ կարծեօք՝ բարի մարդ է:

Միւս աշխատանքը, որի համար ես ուղարկուում էի՝ արհեստանոցում խառատի ճախարակը պտտացնելն էր: Ճախարակը մեծ էր՝ ծանր: Ոչ սակաւ ճիգեր թափել էր հարկաւոր նրան պտտացնելու համար, մանաւանդ երբ խառարը (ճարտարագէտների արհեստաւորներից) առաջելիս էր լի-

նում սանդուղքի վանդակասիւնի պէս մի բան, կամ մեծ սեղանի ոտներ՝ որևէ պաշտօնեայի թագաւորական կարասիների համար, որի համար քիչ էր մնում գերան պէտք լինէր: Այդպիսի գէպքում մէկի ցժի բանը չէր դարձնելը և սովորաբար երկուսին էին ուղարկում, — ինձ և էլի ազնուականներից մէկին, Բ.-ին: Այս աշխատանքը մի քանի տարուայ ընթացքում այդպէս էլ մնաց մեր ձեռքում՝ եթէ միայն հարկ էր լինում մի բան տաշել: Բ.-ն վատոյժ, տկար մարդ էր, զեռերիտասարդ, կուրծքը ցաւոտ: Նա բանտն եկաւ ինձանից մօտ մի տարով առաջ՝ իր երկու ուրիշ ընկերների հետ միասին, — մի ծերուկի, որ իր բանտային կեանքի ողջ ժամանակը զիշեր-ցերեկ ազօթք էր անում (որի համար շատ էին յարգում նրան կալանաւորները) և որ մեռաւ իմ ժամանակը, և մի ուրիշ զեռ շատ մանկահասակ, թարմ, կարմիր, ուժեղ, անվեհեր երիտասարդի հետ, որ դալիս շալակած է ունեցել կէս-ճանապարհին յոզնած Բ.-ին, ինչ որ տեսել է եօթհարիւր վերստ անընդհատ: Պէտք էր տեսնել նրանց բարեկամութիւնը իրար հետ: Բ.-ն զեղեցիկ կրթութիւն ստացած մարդ էր, ազնիւ, բնաւորութեամբ մեծահոգի բայց հիւանդութիւնիցը այլանդակուած և դիւրազրդիու գարձած: Ճախարակի գործը մենք միասին էինք զըլուխ բերում, և այդ նոյն իսկ զբօնեցնում էր երկուսին էլ: Ինձ այս աշխատանքը հիւանալի մարզումն էր շնորհում:

Յատկապէս սիրում էի նաև ձիւն քերելը: Այդ սովորաբար բուքերից յետոյ էր լինում, և ձմեռը շատ ուշուշ չէր պատահում: Մի օրուայ բուքից յետոյ առւն կար որ մինչեւ լուսամուտների կէսը ծածկուում էր ձիւնով, իսկ մի ուրիշը քիչ էր մնում՝ բոլորովին թաղուէր: Բուքը որ կըտրուում ու արել ծագում էր, գուրս էին հանում մեզ մեծամեծ խմբերով իսկ երեմն բրվանդակ բանտարկեալներին՝ ձիւնի կյատերը սրբելու թագաւորական շնոքերից: Եւրաքանչիւրին մի-մի թի էին տալիս, իսկ բոլորին միասին գաս էին նշանակում, երբեմն այնպիսի գտա՝ որ պէտք էր զարմանալ թէ ի՞նչպէս կարելի է զլուխ բերել այն, և բոլորը միահա-

մուռ գործի էին սկսում: Փուխը, հենց նոր նստած և թե.
թեակի երեսից սառած ձիւնը ձեռաց վեր էր առնուում
թիակով՝ ահազին կտօրներով՝ և շաղ արուում դես ու զէն,
դեռ օգում փայլուն փոշու փոխարկուելով: Թիակը հենց
խրուում էր սպիտակ՝ արեի տակ փայլփլող շեղջում: Կա-
լանաւորները գրեթէ միշտ այդ աշխատանքով ուրախու-
թեամբ էին բանում: Զմեռուայ թարմ օդը, շարժողութիւ-
նը վառում էին նրանց: Ամենքը աւելի ուրախ էին դառ-
նում: Հնչում էր քրքիջ, բացականչութիւններ, սրախօսու-
թիւններ: Սկսում էին ձնազունդ խաղալ, սակայն անշուշտ՝
առանց այն չէ, որ մի բոպէ յետոյ խոհեմերն և ծիծաղի ու
ուրախութեան վրայ զայրացողները չգոռային, և ընդհանուր
յափշտակութիւնը վերջանում էր սովորաբար յիշոցով:

Քիչքիչ սկսեցի ծանօթներիս շրջանն էլ ընդարձակել:
Սակայն ինքս ծանօթներ ունենալու վրայ չէի մատածում: զեռ
էլի ես անհանգիսա էի, խոժոռ և անվստահ: Ծանօթներ ունե-
նալս ինքն իրան սկսուեց: Առաջին ծանօթներիցս կալանաւոր
Պետրովն սկսեց այցելել ինձ: Ես ասում եմ այցել և յատկա-
պէս շեշտում եմ այդ բառը: Պետրովը կենում էր առանձին
բաժանմունքում և ինձից ամենաշեռաւոր բռնատանք: Մեր
մէջ ըստ երեցյթին՝ ոչ մի կապ կարող չէր լինել. ընդհա-
նուր բան նոյնպէս բնաւ չկար մեր մէջ: Բայց արի տես,
որ այս առաջին ժամանակը Պետրովը կարծես պարտա-
կանութիւն էր համարում մտնել բռնատունս՝ քիչ էր մը-
նում ամեն օր, կամ կանգնեցնել ինձ պարապ ժամանակը,
երբ ես՝ լինում էր՝ շրջում էի բռնատների ետևում, ըստ
կարելոյն ամեն աչքից հեռու: Սկզբում ինձ զիւր չէր զալիս
այդ: Բայց նա մի-տեսակ կարողանում էր այնպէս անել, որ
շուտով նրա այցելութիւնները նոյնիսկ սկսեցին զբուցնել
ինձ, չնայելով որ նա այնպէս էլ շփուռող ու ասող-խօսող
մէկը չէր ամենեին: Արտաքուստ նա ցածր էր հասակով,
զօրեղ կազմուածքով, ճարտար, շարժուն, բաւականին հա-
ճելի գէմքով, դժգոյն, լայն այտերով, անվեհեր հայեացքով,
սպիտակ, խիտ-առ-խիտ ու մանր ատամներով և տրորած

ծխախոտի մի պաղօւնց մշտական գրուած ստորին շըթունքի ետևում: Շրթունքի վրայ ծխախոտ դնելը շատ տաժանակիրների սովորոյթն էր: Նա մատաղ էր թուում իւր տարիքից: Նա քառասուն տարեկան էր, իսկ տեսքով միայն երեսուն էր: Ինձ հետամիշա խօսում էր խիստ ազատ, իրան վերին աստիճանի միւնյն ոտի վրայ էր պահում, այսինքն՝ չափազնց կարգին ու շնորհալի: Եթէ օրինակ, նկատում էր, որ ես տռանձնութիւն եմ որոնում, այն ժամանակ՝ հետո երկու րոպէի չափ խօսակցելուց յետոյ՝ իսկոյն հեռանում էր և ամեն անգամ շնորհակալութիւն էր անում ուշագրութեանս համար, ինչ որ՝ ի հարկէ երբէք և տաժանակիրներից ոչ մէկի հետ չէր անում: Հետաքրքրական է, որ նոյն տեսակ յարաբերութիւններ շարունակուեցին մեր մէջ ոչ միայն առաջին օրերը, այլ և մի քանի տարի շարունակ և գրեթէ երբէք մտերմական չէին դառնում, թէե նա իրօք ինձ նուիրուած էր: Մինչեւ իսկ այժմ էլ ես չեմ կարողանում որոշել, ի՞նչ էր նրա ուզածը ինձանից, ինչո՞ւ էր ամեն օր մօտս գալիս: Թէե գէպը էր լինում որ նա վերջը բան էր գողանում ինձանից, բայց գողանում էր կարծես յանէտքանի: իսկ փող գրեթէ երբէք չէր խնդրում ինձանից, հետեւաբար բնաւ փողի կամ որևէ շահի համար չէր գալիս:

Զդիտեմ նոյնպէս ինչո՞ւ, բայց միշա ինձ թուում էր, որ նա կարծես բնաւ ինձ հետ միասին չէր կենում բանառում, այլ որտեղեկիցէ հեռու մի ուրիշ տան, քաղաքում, և միայն այցելում էր բանտը հարեւանցի կերպով լուրեր լսելու, իմ մասին տեղեկանալու, նայելու՝ թէ ինչպէս ենք ապրում բոլորս: Միշա նա շտապում էր ուրեկիցէ, կարծես մի տեղ մէկին թողած լինէր և այնտեղ սպասելիս լինէին նրան, կարծես մի տեղ մի բան կիսաս ձգած լինէր: Այն ինչ կարծես թէ շատ էլ չէր անհանգիստ լինում: Նրա աչքերն էլ մի տեսակ օտարոտի էին, —յառած, յանդզնութեան և փոքր ինչ ծաղքի նշոյլով, բայց նայում էր կարծես հեռուն մի բանի միջով. կարծես նրա քթի առաջն եղած բանի ետեռում նա զննել էր աշխատում մի ուրիշը՝ աւելի հեռուն: Այդ նրան ցրուածի տեսք էր ըն-

ծայում: Թիտմամբ նայում էի երբեմն՝ թէ ուր կ'երթայ մօտիցըս Պետրովը: Այդ որտեղ են նրան այնպէս սպասում: Բայց մօտիցս շատալ-շտապ նա գնում էր մի որեւէ բռնտուն կամ խոհանոցը, նստում խօսակիցներից մէկի կողքին, ականջ գընում ուշի-ուշով, երբեմն ինքն էլ խօսակցութեան մէջ մըտնում՝ նոյն իսկ խիստ տաք-տաք կերպով, իսկ յետոյ յանկարծ մի տեղում կըկարէր ու լուռ կըկենոր: Սակայն խօսելիս էր լինում նա՝ թէ լուռ նստած լինելիս, այնուամենայնիւ երեսում էր որ միայն այնպէս՝ հարեանցի կերպով է անում, որ մի ուրիշ տեղ գործ ունի և այնտեղ նրան սպասում են: Ամենից տարօրինակն այն է՝ որ նա գործ չէր ունենում երբէք՝ ոչ մի, բոլորովին պարապ էր ապրում (բացի թագաւորական աշխատանքներից՝ խօսք չկայ): Ոչ մի արհեստ զգիտէր, և փող էլ զրեթէ երբէք չէր լինում նրա ձեռքում: Բայց փողի համար էլ շատ չէր ցաւում նա: Եւ ինչ բանի մասին էր խօսում հետքս: Նրա խօսակցութիւնը նոյնպէս տարօրինակ էր, որպէս և ինքը: Կըտեսնէր, ասենք, որ ես մի տեղ բանտի ետեւում պտտում եմ մէնակ, և մէկ էլ տեսար յանկարծ իմ կողմը շըրջուեց: Նա ման էր դալիս միշտ արագ, շըջուում էր միշտ յանկարծ: Կըգար քայլելով, բայց կըկարծէր թէ վագելով եկաւ:

— Բարե ձեզ:

— Բարե ձեզ:

— Ձեղ չխանգարեցի:

— Ոչ:

— Այ՝ ես ուզում էի նապոլէօնի մասին հարցնել ձեզ: Զէ՞ որ նա ազդական է տասներկու թուականի նապոլէօնին: (Պետրովը զինուորի որդի էր և զիր զիտեցող):

— Ազգական է:

— Իսկ ի՞նչ գահերէց է նա, որ ասում են:

Հարցնում էր միշտ արագ-արագ, կցկտուր կերպով, կարծես նրան պէտք էր որբան կարելի է շուտով տեղեկանալ մի բանի մասին: Կարծես թէ նա տեղեկութիւն էր ուզում ըստանալ մի ինչոր խիստ կարեոր գործի մասին, որի ամենաթեթև ուշացնելը անհնար էր:

Ես բացատրեցի՝ թէ նա ի՞նչ գահերէց է, և աւելացրի
որ գուցէ շուտով կայսր էլ դառնայ:

— Այդ ինչպէս:

Այլ էլ բացատրեցի՝ որքան կարելի էր: Պեարովը ուշի-
ուշով լսում էր՝ լիովին հասկանալով և արագ կշռադատե-
լով՝ մինչև իսկ ականջը իմ կողմը թեքելով:

— Հըմ... իսկ ես, այ, ուզում էի հարցնել ձեզ, Ալէքսան-
դրը Պեարովից զօրդ է, ասում են՝ այնպիսի կապիկներ կան,
որոնց ձեռները մինչեւ կրունգներն են հասնում, իսկ հասա-
կը՝ ամենաբարձր մարդու չափ:

— Այս, կան այդպիսիները:

— Բաս ո՞րոնք են դրանք:

Բացատրեցի՝ որքան գիտէի՝ այդ էլ:

— Բաս ո՞րտեղ են ապրում նրանք:

— Տաք երկրներում: Սումատրա կղզու վրայ կան:

— Այդ Ամերիկայումն է ինչ է: Այդ ի՞նչպէս ասում են՝
իրեւ թէ այնտեղ մարդիկ զլիիվայր են ման գալիս:

— Ոչ զլիիվայր: Այդ հակոանեայց մասին էր հարցը-
նում գուք:

Ես բացատրեցի՝ ի՞նչ բան է Ամերիկան և՝ ըստ կարել-
ոյն՝ ի՞նչ են հակոանեայք: Նո լսում էր նոյնպէս ուշի-ու-
շով, կարծես գիտմումը հակոանեայց համար էր միայն վազ-
տուել եկել:

— Հա: Իսկ անցած տարին, այ, ես կարդայել եմ կոմ-
սուչի կաւալիկուի մասին, աղիւտանտիցն էր զիրքը բերել
Արեփիկը: Բաս այդ զօրդ է, թէ միայն այնպէս՝ հնարած
բան է: Դիւմայի գրածն է:

— Խօսք չկայ՝ հնարած բան է:

— Մառայութիւն՝ ուրեմն: Մեծապատիւ շնորհակալ եմ:

Եւ Պեարովը չքանում էր. իսկապէս էլ զրեթէ երբէք
նրա հետ մենք սրանից ուրիշ տեսակ չենք խօսեցել:

Ես սկսեցի տեղեկութիւն հարցնել նրա մասին: Մոն-
երը իմացաւ այս ծանօթութիւնս՝ մինչև անգամ նախազգու-
շացրեց ինձ: Նա ասաց՝ որ տաժանակիրներից շատերը ահ

ու սարսափի էին ազգում՝ իրան, մանաւանդ սկզբում՝ բանտի առաջին օրերը, բայց նրանցից ոչ մէկը՝ ոչ նոյն իսկ Գաղինը՝ նրա վրայ այնպիսի զարհուրելի տպաւորութիւն չէին թողնում, որպէս այս Պետրովը:

— Դա ամենավճռականը՝ ամենաանվախն է բոլոր տաժանակիրների մէջ, ասում էր Մ.-ն: — Նա ամեն բանի ընդունակ է. նա կանգ չի առնի ոչ մի բանի առաջ՝ եթէ նրա քմահամշյըը գայ: Նա ձեղ էլ կըմորթի՝ եթէ նրա խելքին փչի այդ, այնպէս՝ հէնց կըմորթի, չի խոժոռուի և չի զըղջայ: Ես նոյն իսկ կարծում եմ, որ նա խելքից պակաս է:

Այս կարծիքը խիստ գրգռեց Հետաքրքրութիւնս: Բայց Մ.-ն մի տեսակ չկարողացաւ ինձ հաշիւ տալ՝ թէ ինչո՞ւ էր իրեն այդպէս թուում: Եւ զարմանալի բան է, մի քանի տարի շարունակ ես յետոյ Ճանաչում էի Պետրովին, զրեթէ ամեն օր հետը խօսում էի բոլոր ժամանակը նա հետս անկեղծ կապուած էր (թէ ամենելին չփիտեմ ինչո՞ւ), — և բոլոր այս բանի մի տարիները թէ եւ նա բանտում խոհեմ ապրում էր և սարսափելի բան ամենելին չարեց, բայց ամեն անգամ՝ նայելով նրա վրայ և խօսելով հետը՝ համոզուում էի որ Մ.-ն իրաւ էր և որ Պետրովը գուցէ ամենավճռական, անահ և իւր վրայ ոչ մի բռնութիւն չճանաչող մարդն է: Թէ ինչո՞ւ էր ինձ այդպէս թուում՝ նոյնպէս չէի կարող հաշիւ տալ:

Նկատեմ սակայն՝ որ այս Պետրովը նոյն ինքն էր, որ ուղում էր սպանել պլաց-մայեօրին՝ երբ նրան կանչեցին պատժուելու և երբ մայեօրը «Հրաշքով պրծաւ», ինչպէս ասում էին կալանաւորները, նոյն իսկ պատժի բոպէից առաջ հեռանալով: Ուրիշ անգամ՝ զեռ տաժանակրութիւնից առաջ՝ պատահել էր որ զնդապեար խփել էր նրան սովորեցնելիս: Հաւանօրէն՝ նրան զրանից առաջ շատ անգամ էլ էին ծեծել. բայց այս անգամ նա չուզեց տանել և իւր զնդապետին բայց արձակ մորթեց՝ օր-ցերեկով՝ զօրքերի ձգուած շարքի առաջ: Սակայն ես մանրամասն չփիտեմ նրա ողջ պատմութիւնը. ինձ նա երբէք չի պատմել: Ի հարկէ, դրանք միայն ճայթիւններ էին, որոնցով բռնութիւնը հանդէս էր գալիս բոլոր ամ-

բողջութեամբ: Բայց և այնպէս դրանք շատ հազուադէպ էին նրանում: Նա յլրաւի խոհիմ էր և նոյնիսկ հեղ: Կրքերը նրանում թագնուած էին, և նոյնիսկ հզօր՝ բոցու կըրքերը. բայց աւաք ածուխը միշտ թաղուած էր մոխրի տակ ու հանգարտ մլում էր: Մեծախօսութեան կամ սնափառութեան ստուերն էլ չնկատեցի երբէք նրա վրայ, ինչպէս օրինակ՝ միւսների վրայ: Նա սակաւ էր կոխւ անում, բայց և ոչ մէկի հետ առանձնապէս բարեկամ չէր՝ բացի Սիրոտկինից միայն, այն էլ երբ սա պէտք էր զալիս նրան: Մի անգամ սակայն տեսայ՝ ինչպէս նա լուրջ բարկացաւ: Նրան մի բան՝ մի ինչոր իր չէին տալիս. մի ինչոր բանից նրան բաժին չհասցրին: Նրա հետ վիճողն էր մի ուժով կալանաւոր, բարձր հասակով, զժնեայ, կոռւարար, ծաղրածու և ամենեին ոչ վախկոտի մէկը, Վասիլի, Անտօնով՝ քաղաքական կարգից: Նրանք արդէն վաղուց գորգոռում էին և ես կարծում էի՞ որ բանը շատ-շատ կրվերջանայ հասարակ տուրութակով, քանի որ Պետրովը՝ թէև շատ հազիւ՝ բայց երբեմն նոյնիսկ կոռուում էր ու յիշոցներ տալիս ամենայետին տաժանակրի պէս: Բայց այս անգամ այն չեղաւ. Պետրովը յանկարծ գոյնը ձգեց, նրա շրթունքները դողդողացին և կապաեցին. Հնէլ սկսեց գժուարութեամբ: Տեղիցը վեր կացաւ և գանգաղը շատ գանգաղ իր անձայն՝ բորիկ քայլերով (ամսուր նա շատ էր սիրում բորիկ մոն զալ) մօտեցաւ Անտօնովին: Յանկարծ՝ մի անգամից՝ ողջ ազմկայոյլ ու ճշան բըռնատանը լոեցին բոլորը. Ճանճի բզզոցը կարելի էր լսել: Ամենը սպասում էին թէ ի՞նչ կըլինի: Անտօնովը վեր թըռուաւ նրան ընդառած: Նրա երեսին գոյն չկար...: Ես չդիմացայ ու դուրս եկայ բռնատնից: Սպասում էի որ դեռ սանդուխքից չիջած՝ սպանուած մարդու գոռալը կըլսեմ: Բայց բանը ոչընչով վերջացաւ այս անգամ ևս. Անտօնովը՝ զեռ Պետրովը չհասած իրեն՝ լուռ և շտապով շլրտեց նրան վեճելի իրը: (Կոխւը մի ամենաողորմելի փալասի, ինչոր ոտի փաթաթանների վրայ էր): Խօսք չկայ, մի երկու բուգէ անց Անտօնովը այնուամենայնիւ հայհոյեց նրան միքիչ իիղջը

Հանգստացնելու և պատշաճութեան համար՝ որ ցոյց տայ
թէ բոլորովին այնպէս էլ չէ վախեցել ինքը։ Բայց հայհոյան-
քի վրայ Պետրովը ոչ մի ուշազրութիւն չգարձեց, մինչեւ
իսկ չպատասխանեց էլ բանը հայհոյելումը չէր՝ և վերջա-
ցել էր իւր օդտին։ Նա շատ դոհ մնաց և վեր առաւ փա-
լասը։ Մի քառորդ ժամկից յետոյ նա արգէն առաջուայ պէս
քաշ էր զալիս բանտումը՝ կատարեալ անգործ մարդու կեր-
պարտնքով, և կարծես փնտուում էր թէ որտեղ արգեօք կը-
սկսեն խօսել մի աւելի հետաքրքրական բանի մասին, որ իր
քիթն էլ այնտեղ խցէր և լսէր։ Նրան կարծես ամեն ինչ
զբաղեցնուում էր, բայց երբեմն այնպէս էր պատահում, որ
նա մնում էր մեծ մասամբ անտարբեր դէպի ամեն բան և միայն
այնպէս քաշ էր զալիս բանտումը պարապ, ձգում էր իրան
դէս ու դէս։ Նրան կարելի էր նոյնպէս համեմատել այն բա-
նուորի՝ այն կորովի բանուորի հետ, որի ձեռքի տակ աշխա-
տանքը կրգողայ, բայց որին առժամանակ աշխատանք չեն
տալիս և աշա նա սպասելով նստել ու խաղում է փոքրիկ
մանուկների հետ։ Զէի հասկանում նոյնպէս՝ ինչու է նա
բանտումը կենում, ինչու չէ փախչում։ Նա երկար չէր մտա-
ծի փախչելու վրայ՝ եթէ միայն սաստիկ ուղէր փախչել։ Պետ-
րովի պէս մարդկանց վրայ խելքը իշխում է մինչեւ որ նը-
րանք մի բան չեն ուղել։ Երբ ուղեցին՝ էլ ողջ երկրիս վրայ
արգելք չկայ նրանց ցանկութեանը։ Իսկ ես հաւատացած եմ՝
որ նա փախչել կարող էր ճարտար կերպով, կըխարէր ամեն-
քին, շաբաթով կարող կըլինէր անհաց մնալ որտեղեւիցէ
անտառում կամ զետի եղէգնուուտում։ Բայց երկի նա դեռ
այդ մտքին չէր հասել և չէր ցանկացել այդ լիովն։ Մէջ
խելք, մի առանձին առողջ դատողութիւն ես երբէք չեմ նը-
կատել նրանում։ Այդ մարդիկը չէնց ծնուած են մի զաղա-
փարի համար, որ ողջ կեանքում անգիտակցաբար շարժում
է նոյս այս կողմն ու այն կողմը. այդպէս էլ թարթափում
են նրանք՝ մինչեւ որ գտնում են բոլորովին իրենց ուղածի
համաձայն գործը. այստեղ արգէն նրանց կեանքն էլ արժէք
ըռնի։ Զարմանում էի երբեմն՝ ի՞նչպէս այն մարդը, որ ծե-

ծի համար իր իշխանաւորին սպանեց, այնպէս անմռունչ
Ճիպոտի տակն է պառկում մեզ մօտ: Նրան երբեմն ծեծում
էին, երբ բռնուում էր գինիով: Ինչպէս և բոլոր արուեստ
չունեցող կալանաւորները՝ նա էլ երբեմն ձեռք էր տալիս գինի
անցկացնելու: Բայց նա Ճիպոտի տակ էլ պառկում էր կար-
ծես իր սեփական համաձայնութեամբ, այսինքն՝ կարծես գի-
տակցում էր որ տեղն է իրան. հակառակ գէպքում բնաւ,
թէկուղ սպանէիր էլ չէր պառկի: Նոյնպէս զարմանում էի
որ չնայելով ինձ տածած առերեցի սիրուն՝ կողոպտում էր
ինձ: Նա այդ ցաւով բռնուում էր կարծես մերթ-ընդ-մերթ.
Նա էր որ ինձնից գողացաւ ասաւուածաշունչս, որ նրան տուեցի
միայն մի տեղեց միւսը հասցնելու համար: Ճանապարհը քա-
նի մի քայլ էր, բայց նա կարողացաւ ճամբին առնող գլու-
տել, ծախեց և իսկոյն փողը գինու տուեց: Երեկի սիրաը էլ
շատ ուղեց խմել իսկ ինչ որ սիրաը շատ ուղեց՝ այն պէտք է
կատարուի: Ահա հինց այդպէսն էլ հինգ շահու համար
մարդ է սպանում՝ որ այդ հինգ շահով մի շիշ գատարկի,
թէկ ուրիշ անզամ հարիւր հաղարի չափ ձեռքից բաց կը-
թողնի: Իրիկունը ինքն էլ յայտնեց ինձ գողութիւնը՝ միայն
առանց որ և է շփոթութեան ու զղջմնն, բոլորովին սառ-
նասրտութեամբ, իբրև մի ամենասովորական պատահարի
մասին: Ես փորձ արեցի նրան մի լաւ կշտամբել ափսօսս էլ
գալիս էր ասաւուածաշունչս: Նա լսում էր առանց զայրանա-
լու՝ նոյն իսկ շատ հեղութեամբ, համաձայնում էր որ աս-
տուածաշունչը շատ օգտաւէտ զիրք է, անկեղծ ցաւում էր
որ հիմի էլ չկայ այն, բայց բնաւ չէր ափսօսում՝ որ գողա-
ցել էր. նա այնպիսի յանձնապատաստնութեամբ էր նայում,
որ ես իսկոյն էլ վերջ տուի յանդիմանութեանս. իսկ յան-
դիմանութիւնս նա տանում էր՝ մնածելով հաւանօրէն՝ որ
առանց այն չի էլ լինի ախր, որ չհայհոյեն նրան այդպիսի
արարքի համար, գէ ուրեմն թող՝ ասում է՝ սիրաը հովացնի,
ուրախանայ, հայհոյի. բայց թէ ըստինքեան այդ ամենը յի-
մարութիւններ են, այնպիսի յիմարութիւններ՝ որ լուրջ
մարդը կամաչ ասել անդամ: Թուում է ինձ թէ նա ընդ-

Հանրապէս ինձ մի որեւէ երեխայ էր համարում, քիչ էր մնում ծծկեր, որ չի հասկանում աշխարհիս ամենահաստրակ բաները: Եթէ օրինակ ինքս էի նրա հետ խօսք բաց անում մի բանի մասին՝ բացի զիտութիւններից ու դրբերից, այն ժամանակ նա՝ ուղիղ է՝ պատասխանում էր ինձ, բայց կարծես քաղաքավարութեան պատճառով միայն՝ ամենահակիրծ պատասխաններով բաւականնելով: Յաճախ ևս ինձ հարց էի տալիս, ինչի՞ պէտքն են նրան այս գրբերի տեղեկութիւնները, որոնց մասին սովորաբար հարցուփորձ է տնում ինձ: Պատահում էր որ այս զրոյցների ժամանակ ես նրան չի նայի՝ չէ, ու յանկարծ կողքից մտիկ կըտայի՝ թէ վերաս հօ չէ ծիծաղում: Բայց չէ. սովորաբար նա ականջ էր անում լուրջ, ուշի-ուշով, թէև ասենք՝ այնքան էլ չէ, և այս վերջին հանգամանքը երբեմն զայրացնում էր ինձ: Հարցերը նա առաջարկում էր ծշտիւ, որոշակի, բայց կարծես շատ չէր զարմանում ինձանից ստացած տեղեկութիւնների վրայ և նոյնիսկ ցրուած էր ստանում... Թուում էր ինձ նոյնպէս որ իմ մասին նա որոշել է առանց երկար զլուխ ցաւեցնելու՝ թէ ինձ հետ չէ կարելի խօսել ինչպէս ուրիշ մարդոց հետ, թէ բացի զրբերի մասին զրոյցներ անելուց, ևս ոչինչ չեմ հասկանայ և նոյնիսկ անընդունակ եմ հասկանալ, այնպէս որ ինձ անհանգիստ անելն էլ զուր է:

Ես հաւատացած եմ որ նա անգամ սիրում էր ինձ, և այդ շատ էր ապշեցնում ինձ: Արդեօք համարում էր նա ինձ խակ՝ թերակատար մարդ, տածում էր դէպի ինձ այն առանձին տեսակ կարեկցութիւնը, որ բնազդմամբ զգում է ամեն մի զօրեղ էակ դէպի մի այլ տկարազոյնը՝ համարելով ինձ այդպիսի տկարազոյն էակ... չզիտեմ: Եւ թէպէտ այս ամենը չէր խանգարում որ նա ինձ կողոպահի, սակայն ևս հաւատացած եմ, որ կողոպտելով հանգերձ նա խղճում էր ինձ: «Է՛հ, —մտածում էր նա գուցէ ձեռքը դէպի իմ գոյքը պարզելով, —էլ ինչ մարդ է առ՝ որ իր գոյքն էլ պաշտպանել չի կարողանում: Բայց հենց սրա համար էլ՝ կարծեմ՝ սիրում էր նա ինձ: Ինքն ասաց ինձ մի անգամ՝ կար-

ծես պատահմամբ՝ թէ ես «շատ բարեհողի մարդ եմ», և «այնքան միամիտ էք, այնքան միամիտ, որ մինչև անգամ մեղքս գալիս էք: Միայն, Ալէքսանդր Պետրովիչը սրտներիդ չ'առնէք,—աւելացրեց նա մի բովէ յետոյ,——ես ախր այնպէս՝ սրտանց ասեցի»:

Սյդ տեսակ մարդկանց կեանքում երբեմն պատահումէ, որ նրանք յանկարծ խիստ ու խոշոր յայտնուում են և նշանաւոր դառնում որևէ վճռական՝ ընդհանուր գործի կամ յեղաշրջութեան բոպէներում, և այդպիսով միանդամից իրենց լիակատար գործունէութեան վրայ են ոտք զնում: Նրանք խօսքի մարդիկ չեն և չեն կարող գործի հեղինակներ և առաջնակարդ պարագլուխներ հանդիսանալ. բայց նրանք զլիաւոր գործազիրներն են և սկսում են առաջինը: Սկսում են պարզ՝ առանց որևէ բայցականչութիւնների, բայց դորա փոխարէն առաջինն են ցատկում զլիաւոր արգելքի վրայից՝ առանց վարանելու, առանց աշի, ուղղակի գնալով սրի ու կրակի առաջ,——և ամենքն էլ թափուում են նոցա յետելից և զնում կուրօրէն, գնում են մինչև ամենավերջին պատնէշի առաջը՝ որտեղ և իրենց կեանքն են զնում սովորաբար: Ես չեմ հաւատում՝ թէ Պետրովը լաւ վերջ ունենայ. նա ամեն բանի միանդամից վերջ կրտայ որևէ մի վայրկենում: եթէ մինչև օրս էլ գեռ կորած չէ, նշանակում է առիթը դեռ չի ներկայացել: Սակայն՝ ովզ զիտէ: Գուցէ և ալենոր ծերութեան հասնի և հեշտ ու հանդիստ մեռնի ծերութիւնից՝ աննպատակ այս ու այն տեղքաշ գալով: Բայց ինձ թուում է թէ Մ.ն իրաւ էր որ ասաց՝ թէ դա բոլոր տաժանակիրների միջին ամենավճռական մարդն էր:

Պ Ժ Թ Ա Կ Ա Ն Մ Ա Բ Դ Ի Ւ Կ Ա Ա Բ

Դժուար է որոշ բան ասել վճռական մարդոց մասին.
տաժանակիրների մէջ՝ որպէս և ամեն տեղ՝ բաւական սա-
կաւ էին այդպիսիները։ Արտաքուստ՝ թէ կ'ուղէք՝ սարսա-
փելի մարդ է։ Երբեմն մտածումես թէ ինչք' են պատմում
որեւ մէկի մասին, և մինչև անգամ հեռու ես քաշուում
նրանից։ Մի անորոշ զգացմունք սախում էր ինձ սկզբում
մինչև անգամ հեռու-հեռու պահել ինձ այդ մարդկանցից։
Յետոյ հայեացքս շատ կողմից փոխուեց մինչև անգամ ամե-
նասարսափելի մարդասպանների մասին։ Ուրիշ մէկը չէ ել
սպանել սակայն աւելի սարսափելի է մի այլ՝ վեց սպանու-
թեան համար եկածից։ Խոկ ոճիրներից մի քանիսի մասին
դժուար էր նոյն խոկ ամենատարրական գաղափար կազմել՝
այնքան նրանց զործելը շատ օտարուի պայմաններով էր տեղի
ունեցել ես հինգ դրա համար եմ ասում՝ որ մեր հասա-
րակ ժողովը մէջ սպանութիւններից մի քանիսը ծագում են
ամենազարմանալի պատճառներից։ Օրինակ՝ լինում է և մինչև
անգամ շատ ստէպ՝ մարդասպանի մի այսպիսի տիպար։ մար-
դը անձայն ու հանդարտ ապրում է իր համար։ Նրա վիճա-
կը դառն է, — համբերում է։ Դիցուք թէ նա ռամիկ է, աղայի
տան ծառայ է, քաղաքացի է, զինուոր է։ Մէկ էլ տեսար նրա
ինչոր մի բանը կտրուեց, չդիմացաւ ու դանակով տուեց իր
թշնամուն ու հարստահարիչն։ Հինգ այս տեղից էլ սկսուում
է տարօրինակ բանը, — մի առժամանակ մարդը յանկարծ չա-
փիցն անց է կենում։ Առաջինը սպանուեց նրա հարստահա-
րիչը, թշնամին, ոտ թէւ յանցանք է, բայց հասկանալի յան-
ցանք, այստեղ առիթը կար։ բայց՝ յետոյ էլ՝ նա մորթում է

առաջին անցաւորին ու դարձաւորի, մորթումէ քէֆի համար, կոպիտ խօսքի խաթեր, նայուածքի խաթեր, «Ծուխտ»-ը լրացնելու համար, կամ պարզապէս՝ «Ճամփիցս կորի՛ր, ի՞նչ ես առաջս ընկնում, տեսնում ես՝ ես գնում եմ»։ Կարծես հարբած լինի, կարծես տենդային զառանցանքի մէջ լինի։ Կարծես մի անգամ իր ուխտեալ սահմանը ցատկել-անցնելուց յետոյ, նա այնուշետե սկսում է զուարձանալ՝ որ էլ սուրբ բան չկայ նրա համար։ Կարծես ներքուստ զրգում են նրան մի անգամից ցատկել անցնել ամեն տեսակ օրինականութիւն և իշխանութիւն ու վայելել ամենասանձարձակ ու անսահման ազատութիւն, վայելել այն սոսկման սրտաթափութիւնը, որ մարդ գէպի ինքը անհնար է որ չզգայ։ Այն էլ զիտէ նա՝ որ սարսափելի պատուհաս է սպասում իրան։ Այս ամենը թերես նման է այն զգացմունքին, որը մի բարձր տշտարակի զլիսց մարդուս քաշում է գէպի ոտների տակի խորքը, այնպէս որ ինքն էլ իվերջոյ ուրախ է գահավիժուել զլիսիվայր։ որքան շուտ, այնքան էլ ցաւի վերջը շուտ։ Եւ այս ամենը ամենահանգարած և մինչ այդ ժամանակ աննկատելի մարդկանց հետ էլ է պատահում։ Ումանք այս արբեցութեան մէջ հպարտանում էլ են իրենց անձով։ Որքան մոռացուած էր տռաջ, այնքան աւելի է նա ուզում այժմ «Թաշախուստ» ծախել ահ տալ։ Նա այդ ահով զուարձանում է, սիրում է նոյն իսկ զզուանքը, որ զարթեցրել է ուրիշների մէջ։ Նո մի տեսակ յուսահագուստ-նէան դիմակ է ծածկում, և այգպիսի զուսահագուստ» ինքն էլ երեմն պատժի է սպասում շուտ-շուտ, սպասում է որ ՀՅՈՒՆ նրան, քանի որ իրեն համար էլ ծանր է դառնում տանելիւր անձի վրայ այդ շինծու յուսահագուստ-նէան։ Էետաքրքրական է որ մեծ մասով բոլոր այս տրամադրութիւնը, բոլոր այս կեղծիքը շարունակուում է մինչև նոյն իսկ պատժատեղը, իսկ յետոյ կարծես փոխուում է։ Կարծես յիրաւի էլ մի տեսակ ձեւական բան լինէր այդ ժամանակամիջոցը, կարծես նշանակուած լինէր առաջուց այդ բանի համար սահմանուած կանոններով։ Այդտեղ մարդը յանկարծ խոնարհ է դառնում, ոնչանում՝ փալասի է փոխարկուում։

Պատժատեղում նա տրտասուում է, —ժողովրդից թողութիւն է խնդրում: Քալիս է բանար, և մահկ ես տալիս՝ այնպէս փալնքոտն է, այնպէս խլնքոտը, նոյն իսկ ջարդուածը, որ զարմանում էլ ես նրա վրայ. «սա է միթէ որ հինգվեց մարդ է սպանել»:

Իշարկէ կան որ բանտումն էլ շուտ չեն հանդարառում: Դեռ էլի մնում է մի տեսակ «զօռ», մի-տեսակ պարծենկոտութիւն, թէ այ, ես ձեր կարծած մարդը չեմ ախր, —ես «վեց հոգու համար» եմ եկել: Բայց բանը նրանով է վերջանում՝ որ հանդարատուում է այսուամենայնիւ: Երբեմն երբեմն միայն միսիթարուում է՝ յիշելով իւր սրտոտ թափը, իւր կեանքում մի անդամ արած քէֆը այն ժամանակ՝ որ նա «յուսահատ» էր, և շատ է սիրում—եթէ միայն գտնի միամիտ մէկին—պատշաճաւոր ծանրութեամբ կոտրտուել նրա առաջ, պարծենալ և պատմել նրան իւր սկրագործութիւնները, սակայն չձեւացնելով նոյն իսկ թէ ի՞նքը ուղում է պատմել: Թէ այ, ես ի՞նչ տեսակ մարդ եմ եղել:

Եւ այդ ինքնասէր զգուշաւորութիւնը որպիսի նրբութիւններով է երեան գալիս, որբան թմբրած ու անփոյթ է լինում երբեմն այդպիսի պատմութիւնը: Ո՞րպիսի ուսումնասիրուած տիմարութիւն է ցոլանում պատմողի ձայնի, ամեն-մի բառի միջից: Եւ որտեղ են այս մարդիկը սովորել:

Այս առաջն օրերիցս մի օր, մի երկար երեկոյ, ես՝ պարապ ու վշտալց պառկած տախտի վրայ՝ ականջ դրի այդպիսի մի պատմութեան, ու անփորձութեանս պատճառով պատմողին մի վեթխարի՝ սոսկալի չարագործ կարծեցի, մի չուենուած՝ երկաթի բնաւորութիւն, մինչդեռ նոյն այդ ժամանակ քիչ էր մնում ծաղրէի Պետրովին: Պատմութեան նիւթըն էր՝ թէ ինչպէս ինքը, Ղուկաս Կուզմիչը, ոչ այլ ինչ՝ եթէ ոչ իւր բաւականութեան համար պատէցը եւ մի մայեօր: Այս Ղուկաս Կուզմիչը նոյն այն պստիկ, բարակ-մարակ, սուր պնչով, մատղաշ կալանաւորն էր մեր բռնատան, խօսօշներից, որին այնպէս յիշատակեցի էլ արդէն: Խոկապէս նա ռուս էր, միայն թէ հարաւումն էր ծնուել կարծեօք

իբրև աղայի տանու ծառայ: Նրա մէջ յիրաւի մի տեսակ խայթիչ կրուասէր բան կար. «պստիկ էր, բայց ճստիկ էր»: Սակայն կալանաւորները ատամին տալով՝ բնազգմամբ մարդուս ճանաչում են: Նրան շատ սակաւ էին պատուում: Նա սարսափելի ինքնասէր էր: Այդ երեկոյ նստած էր տախտի վրայ ու շապիկ էր կարում: Ճերմակեղէն կարելլ նրա արհեստն էր: Նրա կողքին նստած էր մի բթամիտ ու տիմար՝ բայց բարի ու քաղցրաբարոյ տղայ, պնդակազմ և բարձրահաստի. Նրա հարեանը տախտի վրայ՝ կալանաւոր Կորիլինն էր: Դուկասը՝ հարեան լինելու պատճառով՝ շուտ-շուտ նրա հետ կոխւ էր ձգում, և ընդհանրապէս գոռողութեամբ՝ հեղնելով ու բըռնութեամբ էր վարուում, ինչ որ Կորիլինը՝ իւր միամտութիւնից՝ չէր էլ նկատում մասամբ: Նա բրդի գուլպայ էր գործում և սառնասրտութեամբ լսում Դուկասին: Սա պատմում էր բաւական բարձր ու պարզ: Նա ուզում էր՝ որ ամենքը նրան ակտնջ դնեն, թէև՝ ընդհակառակը՝ այնպէս էր ցոյց տալիս թէ միայն Կորիլինին է պատմում:

— Ինձ, ախաբէր, ուղարկում էին մեր տեղից գէպի Զ-վ սկսեց նա՝ տաեղով բլանդելով, — այսինքն՝ պարապ ման գալու համար:

— Այդ Երբ է եղել բաս, շատոնյ, հարցրեց Կորիլինը:

— Այ, որ հունձը կ'ընկնի՝ տարին կըլրանայ: Դէ՛, Կ-վ որ հասանը՝ կարծ ժամանակ ինձ բանաը նստացրին այդտեղ: Տեսնում եմ, հետս նստած են տասներկու հոգի՝ բոլորը խօխօներ, բարձրահաստի, առողջ, հաստ, կարծես գոմէշներ լինեն: Բայց այնպէս հանդարտ. կերածները վատ, նրանց մայեօրը շուռ էր տալիս նրանց՝ ինչպէս իր Ձենյառատիւ (Դուկասը դիտմամբ աղաւաղեց բառը) կամքն ուզում էր: Նստում եմ մի օր, երկու օր. տեսնում եմ՝ վախկու մարդիկ են: Բաս, ասում եմ, ի՞նչ էր գուք էլպէս ախմուխին երես տալիս:

— Դէ՛ մի արի ինքդ հետ խօսիր տեսնենք. — Ծիծաղում են վերաս մինչև անդամ: Ես սուս եմ կենում: Եւ ամենածիծաղելի մի խօխօլ կար այդտեղ, ախպէրներ, աւելացրեց նայանկարծ թողնելով Կորիլինին և դառնալով ամենքին առ-

Հասարակ:—Պատմում էր՝ ի՞նչպէս դատարանում վճռեցին նրա գործը, և ի՞նչպէս ատեանի հետ խօսել էր. իսկ ինքը արտասուում՝ լաց է լինում. որդիքն՝ ասում է՝ մնացին տանը, կնիկը: Ինքը այսպէս խոշոր էր, ալեօր, հաստ: «Ես նըրան, ասում է, նշանց եմ աալիս թէ՛ չամա նա, էս զեի վաստակը, զրում է ու զրում է: Դէ՛, ասում եմ ինձ ու ինձ, շանսատակ ընել որ ես էլ զարմացած մնամ: Էլինա հա զրում է ու զրում: ու էնպէս է զրում որ... էդպէս էլ խաւարեց իմ արես»: Թելը տուր տեսնեմ, Վասեա. փթած են տաժանակրի թելերը:

— Բազառիցն են, պատասխանեց Վասեան՝ թելը տալով:

— Մեր կարետան թելերը աւելի լաւ են: Իսկ այս օրերըս նեալիդին զրկել էինք, և ինչոր մի լիրը կնկանից է առնում, շարունակեց Ղուկասը՝ թելն անց կացնելով. լոյսի գիմացը:

— Սանամօրիցը՝ ուրեմն:

— Ուրեմն՝ սանամօրիցը:

— Դէ լաւ, մայեօրի բանն ինչ եղաւ.—Հարցրեց բոլորովին մոռացուած Կոբիլինը:

Այդ էլ պէտք էր Ղուկասին: Սակայն նա իսկոյն չչարունակեց իւր պատմութիւնը, մինչև անդամ իւր ուշադրութեանն էլ չարժանացրեց Կոբիլինին: Հանդարտ թելերը զրբառեց, ուները հանդարտ ու դանդաղ ծալեց իւր տակը և միայն այդ ժամանակ սկսեց իվերջոյ խօսել:

— Գրգռեցի՝ վերջապէս՝ իմ խօսօներին, ու մայեօրին ուղեցին: Իսկ ես գեռ առաւոտուց հարեանիցս դանակ ուղեցի, առայ ու պահեցի. այսինքն՝ բան է, ով գիտէ: Կատաղեց մայեօրը: Գալիս է: Դէ՛, ասում եմ, չվախէ՛ք, խօսօներ: Իսկ նրանց հողին խօմ ցամաքել էր՝ հա՛ գողում են ու դողում: Ներս պղծաւ մայեօրը. հարբած է: «Ո՞վ է՛ Ի՞նչպէս: Ես եմ թագաւորը, ու աստուածն էլ ես եմ»:

— Տէնց որ ասաց՝ «Ես եմ թագաւորը, ու աստուածն էլ ես եմ», ես առաջ եկայ, — շարունակեց Ղուկասը. — դանակը թելում է:

— Զէ, ասում եմ, գերազնիւ պարոն,—իսկ ինքս կամաց կամաց համար մօտենում եմ ու մօտենում,—չէ, ասում եմ, գերազնիւ պարոն, էլ էդ ոնց կըլինի որ դուք մեր մէջ թագաւոր լինէք՝ համ էլ աստուած:

— Դու ես հա, դու հօս. գոռաց մայեօրը.—խռովարա՞ր:

— Զէ, ասում եմ (իսկ ինքս համար մօտենում եմ ու մօտենում), չէ, ասում եմ, գերազնիւ պարոն, կարելի է՝ ձեզ անձամբ լաւ յայտնի է ու աեղեակ էք, մեր Աստուածը, ամենազօր ու ամենուրեք, մի հատ է, ասում եմ: Մեր թագաւորն էլ մի հատ է՝ ինքն Աստուծուց մեղ վրայ դրուած: Նա, գերազնիւ պարոն, ասում եմ, վեհապես է: Իսկ դուք, ասում եմ, գերազնիւ պարոն, գեռ ես մայեօր էք՝ մեր մէծաւորը, գերազնիւ պարոն, թագաւորի ողորմութեամբ և ձեր արժանաւորութիւններով, ասում եմ:

— Ի՞նչի՞նչի՞նչի՞նչ: Ու հենց վնդվնդացրեց. խօսել չկարողանում, խեղտուումէ: Շատ էր արդէն զարմացել:

— Այ թէ ինչ ասում եմ: ու որ վրայ ընկայ յանկարծ՝ հենց փորը ծխտեցի դանակը, սազ ծխտեցի: Յաջող եկաւ ձեռիս: Գլորուեց ու միայն ոտները թափ տուեց: Ես դանակը դէն շարտեցի:

— Տեսէք, խօսօներ, ասում եմ, վեր կալէք որան հիմի:

Եյստեղ արդէն ես կըշեղուեմ մի փոքր: Տարաբախաբար, այդպիսի ասուածքներ՝ թէ «ես եմ թագաւորը, ու աստուածն էլ ես եմ» և շատ ուրիշ սրան նմաններ՝ սակաւ գործածութեան մէջ չին հնումը՝ հրամանատարներից շատերի մէջ: Սակայն պէտք է խօստովանուել որ այդպիսի հրամանատարներ սակաւ են մնացել այլ ես, և գուցե բոլորովին հատել էլ են: Նկատեմ նոյնպէս՝ որ այդ տեսակ ասուածքներ յատկապէս ծախում էին ու ծախել սիրում էին մեծ մասը հասարակ զինուորութիւնից դուրս եկած հրամանատարներն իրենք: Սպայութեան աստիճանը կարծես յեղաշրջում է նրանց ներքինը բովանդակ, և դրա հետ միասին՝ զլուխը: Լծի տակ երկար տնքալուց ու ստորագրեալի բոլոր աստիճաններն անցնելուց յետոյ՝ յանկարծ նրանք տեսնում են որ սպաներ

են, հրամանատարներ են, ազնիւներ են, և անսովոր լինելուց
ու առաջին յափշտակութիւնից՝ չափազանցացնում են իրենց
զօրութեան և նշանակութեան իմաստար, խօսք չկայ՝ միայն
իրենց ենթագրուած ստորին զինուորականների նկատմամբ:
Իսկ իրենցից բարձրների առաջ նրանք առաջուայ նման՝ բո-
լորովին այլ ևս անպէտք և շատ իշխանաւորների համար
նոյն իսկ ատելի՝ ստրկական հպատակութիւն են ցոյց տա-
լիս: Ոմանք ստրկահոգիներ նշյնիսկ մի առանձին գորովով
շտապում են յայտարարել իրենցից բարձր հրամանատարնե-
րի առաջ, որ իրենք էլ ախր ստորին զինուորներիցն են՝
թէե սպաներ են, «և իրենց տեղը միշտ ու միշտ յիշում են»:
Բայց ստորին զինուորների վերաբերմամբ նրանք քիչ էր մը-
նում անտաշման իշխաններ դառնային: Իշարկէ, այժմ հա-
զիւթէ կան այդպիսիք, և հազիւթէ լինի մէկը՝ որ գոռայ՝
«ես եմ թագաւորը, ու աստուածն էլ ես եմ»: Բայց չնայե-
լով գրան՝ ես կընկատեմ այնուամենայնիւ, որ չկայ մի բան, որ
այնպէս զրգուի կտլանաւորներին և առհասարակ բոլոր ստո-
րին զինուորականներին, որքան մեծաւորների այդ տեսակ խօս-
քերը: Այդ յանդուզն ինքնապարծութիւնը, այդ ծայրացեղ
կարծիքը իւր անպատուհաս մնալու մասին, ատելութիւն է
զարթեցնում ամենախոնարհ մարդու մէջ և վերջին համբերու-
թիւնից հանում: Բարեբախտաբար, այս բոլոր՝ զրեթէ անցած
բաները նոյն իսկ հնումն էլ խստիւ հալածուում էր իշխանու-
թեան կողմից: Դրա քանի մի օրինակները ես էլ զիտեմ:

Եւ առհասարակ՝ ստորին զինուորականին զայրացնում է
ամենայն զոռող արհամարհանք, ամեն տեսակ գարշող վար-
մունք իր անձի հետ: Ոմանք, օրինակ, կարծում են որ՝ եթէ
լաւ կերակրեն, լաւ պահեն կալանաւորին, ամեն բան օրէնքի
համեմատ կատարեն, պրծաւ-զնաց: Ով և լինի և որքան էլ
անարդուած լինի մարդ, թէե բնազդմամբ, թէե անզիտակցա-
բար, բայց և այնպէս պահանջում է յարգել իւր մարդկային
արժանապատութիւնը, կալանաւորը ինքը զիտէ՝ որ կա-
լանաւոր է, մերժուած մէկն է, և զիտէ իւր դիրքը իշխա-
նաւորի առաջ. սակայն ոչ-մի գաջերով, ոչ-մի շղթայով չես

ստիպիլ նրան՝ որ մօռանայ թէ ինքը մարդ է: Եւ քանի որ
նա յիրաւի մարդ է, հետեաբար և պէտք է նրա հետ մար-
դավարի վարուել: Աստուած իմ: Մարդաշարի վարմունքը կա-
րող է մարդամէր գարձնել նոյն իսկ այնպիսուն, որի մէջ
վաղուց արդէն խաւարել է Աստուծոյ պատկերը: Հէնց այս
թշուառների հետ էլ ամենից աւելի է հարկաւոր մար-
դավարի վարուել: Դա է նրանց փրկութիւնն ու ուրա-
խութիւնը: Ես պատահել եմ այդպիսի բարի, ազնիւ հրա-
մանասարների: Ես տեսնում էի թէ ի՞նչ ներգործութիւն
էին ունենում նրանք այդ անարդուաճների վրայ: Քանի մի
քաղցր խօսքեր՝ և կալանաւորները քիչ էր մնում բարոյապէս
վերակենդանանային: Մանուկների պէս էին նրանք ուրախա-
նում և մանուկների պէս սկսում սիրել: Մի տարօրինակ բա-
նըն էլ նշանակեմ: Իրենք կալանաւորները չեն սիրում մեծա-
ւորների խիստ ընտանի և արդէն խստ բարեսիրա վարմուն-
քը իրենց հետ: Նա ուզում է յարգել մեծաւորին, իսկ այդ
դէպքում կարծես դադարում է նրան յարգելուց: Կալանա-
ւորը սիրում է որ, օրինակ, իւր իշխանաւորը ունենայ շքա-
նշաններ, լինի անսքով պարթե, որեւէ բարձր իշխանաւորի
աչքին սիրելի, լինի և՛ խստապահանջ, և՛ վեհանձն, և՛ արդա-
րասէր, և՛ որ իր արժանաւորութիւնը պահպանի: Այդպի-
սիներին կալանաւորներն աւելի են սիրում: Նշանակում է՝
և՛ իւր արժանաւորութիւնը պահպանեց, և՛ նրանց չղրկեց,
ուրեմն բան էլ լաւ եղաւ ու սիրուն:

— Լաւ խորովածդ էլ արեցի՞ն դրա համար՝ ով է իմա-
նում: անխոռով նկատեց Կորիլինը:

— Հըմ: Խորովածս անելը արեցին, այդ զօրդ է, ախալէր:
Ալէյ, մկրատը տուր տեսնեմ: Այս ի՞նչ է, ախալէր, այսօր
մեյդան-բազառ չկայ:

— Քիչ տռաջ փողերը խմեցին, նկատեց Վասեան: — Եթէ
չխմէին, ով զիտէ՝ կարելի է լինէր:

— Եթէ: Եթէ-ով որ լինէր՝ Սոսկուայումն էլ հարիւր
մանէթ կըտային, նկատեց Չուկասը:

— Բա քե՞զ ինչքան տուին, Ղուկի, բոլոր՝ բոլոր արած-ներիդ համար. խօսեց կրկին Կոբիլինը:

— Տուին, սիրելի բարեկամ, հարիւր հինգ: Իսկ այ, ինչ կասեմ ախպէր, ախր քիչ մնաց ինձ սպանեն, շարունակեց Ղուկասը՝ կրկին թողնելով Կոբիլինին: — Այ թէ ինչպէս այդ հարիւր հինգը հասաւ ջանիս. ինձ բոլոր զօրքերի միջից անց կացրին: Բազմութիւնը թափուել էր անշափ ու անծայր. ողջ բաղաքը վաղել՝ հաւաքուել էր. աւաղակի են պատժելու, այսինքն թէ մարդասպան է: Էլ թէ ինչքան ախմախ են այս մարդիքը՝ չզիտեմ թէ ոնց ասեմ: Տիմոշկան (դաշիճը) շորս հանեց, պառկացրեց ու գոռում է. «Մի շարժ դայ, կրպա-ղեմ»: Սպասում եմ՝ ինչ կրլինի: Մի անգամ որ կպցրեց ինձ ուղում էի գոռալ բերանս բաց արի, բայց մէջս ձայն չկայ: Այսինքն թէ ձայնս կորել էր: Որ երկուսը կպցրեց, զէ, կրհաւատաս թէ չես հաւատայ, չսեցի էլ՝ ինչպէս Երկու համրեցին: Իսկ որ ուշըի եկայ՝ լսում եմ — համրում են տաս-նուեօթը: Սյդուկս ինձ յետոյ, ախպէր, չորս անգամ տախ-տակից յետ էին անում, կէս-կէս ժամ հանդստանում էի. ջուր էին թափում վրաս: Մտիկ եմ տալիս ամենքի վրայ աչքերս չուած ու մտածում եմ: «որտեղ որ է՝ կըմեռնեմ»...

— Բաս չմեռա՞ր. միամիտ հարցրեց Կոբիլինը: Ղուկասը նրան զննեց վերին աստիճանի արհամարհամ հայեացքով. բարձրացաւ հրհռոց:

— Այ աւանակ, ոնց որ կաս:

— Վերնատունը գարդակ է, նկատեց Ղուկասը, կարծես ափսոսալով որ այդ տեսակ մարդու հետ խօսք բաց անել էր ուղեցել:

— Այսինքն՝ տախտակը սլակաս է, հաստատեց Վասեան:

Ղուկասը թէւ վեց մարդ էր սպանել, բայց բանտում նրանից ոչոք և երբէք չէր վախենում, չնայելով որ ինքը սըր-տանց ուղում էր գուցէ սարսափելի մարդու անուն վայելել:



ԽՍՅ ՓՕՄԻՉ:—ԲԱՂՆԻՍ:—ԲԱԿՈՒՄԵՒՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻ:

Քրիստոսի Ծննդեան տօնը գալիս էր: Կալանաւորները սպասում էին նրան մի-տեսակ հանդիսաւորութեամբ, և նրանց նայելով՝ ես էլ սկսեցի արտասովոր մի բանի սպասել: Տօնից չորս օր առաջ մեզ բաղնիս տարան: Իմ ժամանակը, մանաւանդ առաջին տարիներս, կալանաւորներին հաղիւերբէք բաղնիս էին տանում: Ամենքն ուրախացան ու սկսեցին պատրաստուել: Նշանակուած էր Ճաշեց յետոյ գնալ և այդ Ճաշեց-յետոները աշխատանք չէր լինում արգէն: Ամենից աւելի ուրախացել և ձեռ ու ոտ էր ընկել մեր բռնատնից իսայ Ֆօմիչ Բումշտէյնը, Հրէայ տաժանակիրը, որի մասին ես արդէն յիշատակել եմ պատմութեանս չորրորդ գլխում: Նա շշմելու անդպայտալու չափ սիրում էր քրանքախաշլինել և ամեն անգամ՝ որ դէպք է լինում այժմ հին յիշատակները յեղյեղելիս մոտաբերել և մեր տաժանակիրներիս բաղնիսը (որն արժէ մոռացութեան շտալ), — պատկերի առաջին տեղում իսկըն դուրս է գալիս առջես գերերջանիկ և անմոռաց իսայ Ֆօմիչի, տաժանակրութեանս ընկերոջ և բռնատանս կենակցի դէմքը: Տէ՛ր Աստուած, ի՞նչ թուլացնող ու ծիծաղաշարժ մարդ էր դա: Ես նրա արտաքինի մասին մի քանի խօսք ասացի արդէն, — մօտ յիտուն տարեկան, հիւանդոտ, կնճռոա, ամենասոսկալի գաջերը այտերին ու Ճակատին, նիշար, վատոյժ, պղուկներով լիբը սպիտակ մարմնով՝ ինչպէս հաւի ձուտը: Նրա գէմքի արտայայառութիւնը ցոյց էր տալիս յարատե՛ ոչ մի բանից չվրդովուող՝ ինքնագոհութիւն և նոյն իսկ երջանկութիւն: Կարծեմ նա ամենեին չէր ցաւում որ

բանտն ընկաւ։ Քանի որ նա ակնագործ էր, իսկ քաղաքում չկար ակնագործ, այդ պատճառով էլ անընդհատ միմիսյն ակնագործի աշխատանքով էր պարապում քաղաքի պարոնների և իշխանաւորների համար։ Նրան այնուամենայնիւ որքանելիցէ գէթ վճարում էին։ Նա կարիք չէր քաշում, նյոն իսկ ճոր էր ապրում, բայց փողը յետ էր ձգում և բոլոր տաժանակիրներին տոկոսով փոխ տալիս՝ զրաւ առնելով։ Նա իւր ինընաեռն ունէր, լաւ ներքնակ, զաւաթներ, ձաշի ողջ սպասները։ Քաղաքի հրէաները չէին զրկում նրան իրենց ծանօթութիւնից ու հովանաւորութիւնից։ Եաբաթ օրերը նա պահնորդներով գնում էր իրենց քաղաքային աղօթատունը (որ օրէնքը թոյլատրում է) և բոլորովին անդարդ կեանք էր վարում, անհամբեր սպասելով՝ սակայն՝ որ անց կացնի իւր տասներկուամեայ ժամանակամիջոցը և ապա «պսակուի»։ Նրանում մի ամենածիծաղելի խառնուրդ էր երեւում միամըտութեան, տիմարութեան, խորամանկութեան, յանդինութեան, պարզամտութեան, երկութեան, պարծենկուտութեան ու աներեսութեան։ Շատ օտարութիւն էր ինձ համար՝ որ տաժանակիրները ամենեն չէին ծիծաղում նրա վրայ, բացի այն որ հետը հանաք էին անում զրօսանքի համար։ Ակներև էր որ իսայ Ֆօմիչը ամենքի զուարձութեան և մըշտական ծիծաղի համար էր։ «Իսայ Ֆօմիչին մի դիպչէք, մեղնում մի հատ է դա», ասում էին կալանաւորները, և իսայ Ֆօմիչը թէև հասկանում էր՝ ինչումն է բանը, բայց ըստ երեւութիւն հպարտանում էր իւր նշանակութիւնով ինչոր շատ էր ծիծաղեցնում կալանաւորներին։ Նա բանան եկաւ ամենածիծաղելի կերպով (գեռ ինձնից առաջ, բայց ըստ երեւութիւն հպարտանում էր իւր նշանակութիւնով ինչոր շատ էր ծիծաղեցնում կալանաւորներին։ Նա բանան եկաւ ամենածիծաղելի կերպով (գեռ ինձնից առաջ, բայց ինձ պատմում էին)։ Մի օր, յանկարծ, իրինամութիւն առաջ, պարապ ժամանակը, բանատումը լուր տարածուեց թէ ջնուդ են բերել և պահականոցում սափրում են և թէ իսկոյն ներս կրմտնի։ Հրէաներից գեռ ոչ մէկը չկար այն ժամանակ տաժանակիրների մէջ։ Կալանաւորներն անհամբեր սպասում էին նրան և գռնից որ ներս մտաւ՝ իսկոյն շուրջը պատեցին։ Բանտի ենթասպան քաղաքայիականների բռնատունը տա-

րաւ նրան և տախտի վրայ տեղ ցցց տուեց նրան։ Իսայ Ֆօմիչը ձեռքում բռնած ունէր իւր տոպրակը իւր թագաւորական և սեփական իրեղէններով։ Տոպրակը դրեց, տախտի վրայ տակը փոեց ու նստեց՝ ոտները ծալած, չհամարձակուելով աչք բարձրացնել մէկի վրայ։ Նրա շուրջը հնչում էր ծիծաղ և բանտային հանաքներ, որոնց կէտ-նպատակին նրա հրէական ծակումն էր։ Յանկարծ ամբոխը Ճեղքելով առաջ եկաւ մի երիտասարդ կալանաւոր, ձեռքում բռնած իւր ամառուայ ամենահին, կեղտոտ ու պատուած անզրավարտիկը՝ հետն էլ թագաւորական ոտի-փաթաթաթանները։ Նա Իսայ Ֆօմիչի կողքին նստեց ու նրա ուսին զարկեց։

— Դէ՛, սիրելի՛ բարեկամ, ես քեզ այս վեց տարի է որ սպասում եմ այստեղ։ Ա՛յ, տե՛ս, շա՞տ կրտաս։

Եւ նա նրա առաջը փոեց բերած ցնցոտիները։

Իսայ Ֆօմիչը, որ բանտը մտնելիս այնքան վախեցաւ՝ որ չէր համարձակուում աչք անդամ բարձրացնել ծաղրածու, այլանդակուած ու սարսափելի մարդոց այս ամբոխի վերայ, որոնք նրա չորս բոլորը սերտ պաշարել էին, և ահից դեռ չէր կարողացել բան ասել, — զրաւը տեսածին պէս յանկարծ սթափուեց և մատներով սկսեց արագ տնդղել ցնցոտիքը։ Մինչեւ անզամ լոյսի առաջը փոեց։ Ամենքը սպասում էին՝ թէ ի՞նչ կասի։

— Ե՛, ի՞նչ մի մանէթ էրծաթ չե՞ս տայ՝ խօսք չկայ։ Բայց ախր արժէր։ շարունակեց զրաւ դնողը՝ աչքով անելով Իսայ Ֆօմիչին։

— Մի մանէթ էրծաթ չէ, բայց եօթը կոպէկ՝ կարելի է։

Աշա Իսայ Ֆօմիչի բանտումն արտասանած առաջին խօսքերը։ Ամենքը ծիծաղից թուլացան հէնց։

— Եօթը։ Դէ լաւ, տուր թէկուզ եօթը։ Քո բախտն էր։ Բայց տե՛ս, զրաւս պահի՛ր։ զլիսովդ պատասխանատու ես ինձ զրա համար։

— Տոկոսը երեք կոպէկ՝ կ'անի տասը կոպէկ, կցկտուր շարունակեց ջնուզը դողդոջուն ձայնով՝ ձեռքը զրպանը տանելով որ փողը հանի և երկշոտութեամբ կալանաւորներին

մտիկ տալով: Նա համ՝ սարսափելի վախենում էր, համ էլ
ուղում էր գործը զլուխ բերել:

— Տարի՞ն երեք կոպէկ տոկոս, ի՞նչ է:

— Ոչ, ոչ թէ տարի՞ն՝ այլ ամիսը:

— Բաս պինդ ես դու, ջհուդ: Իսկ հրամանքդ ի՞նչպէս
վերապատռենք:

— Իսայ Թօմիչ:

— Ե՛, իսայ Թօմիչ մեզնում դու շատ առաջ կրգնաս:

Մնաս բարով:

Իսայ Թօմիչը մի անգամ էլ զննեց զրաւը, ծալեց ու խնա-
մով իւր տոպրակը ճխտեց՝ մինչ կալանաւորները շարունա-
կում էին հռհռալ:

Յիրաւի կարծես բոլորը մինչև անգամ սիրում էին նրան և
ոչոք չէր զրկում; թէև զրեթէ բոլորն էլ նրան պարա էին: Ինքը
հաւի պէս բարեհօդի էր, և տեսնելով բոլորի քաղցը վարմուն-
քը դէպի ինքը՝ կոտրտուում էլ էր, բայց այնպիսի ծալը էլի
պարզմտութեամբ, որ իսկոյն էլ ներում էին այլ: Նուկասը, որ
իր կեանքում շատ ջհուդներ էր տեսել, յածախ զրդում էր
նրան բնաւ ոչ չարութեամբ, այլ այնպէս՝ զուարձալիքի համար,
Ճիշտ այնպէս՝ ինչպէս զուարձանում են շնիկի, թութակի, սո-
վորեցրած գաղտնների վերայ՝ և այն: Իսայ Թօմիչը այդ շատ լաւ
էր իմանում, ամենելին չէր վերաւորուում և խիստ ճարտա-
րութեամբ պատասխան էր տալիս նրանց հանաքներին:

— Եյ, ջհուդ, կրթակեմ քեզ:

— Դու ինձ մի անգամ կրտաս, իսկ ես քեզ՝ տասը, քաջ-
քաջ պատասխանում է իսայ Թօմիչը:

— Անիծած քոս:

— Թողլ ընի քոս:

— Քոսոտ ջհուդ:

— Թողլ էդպէս ընի: Քոսոտ եմ, համա հարուստ եմ
կոպէկներս շատ են:

— Քրիստոսին ծախել ես:

— Թողլ էդպէս ընի:

— Եատ լաւ է, իսայ Թօմիչ ապրիւս: Մի՛ գիպչէք, նա մի

Հաս է մեղնում. կանչում են կտլանաւորները հռհռալով:
— Էյ, ջհուդ, ձիպոտի համը կ'առնես, Սիրիր կ'երթաս:
— Առանց այն էլ Սիրիրումն եմ:
— Աւելի գէնը կըզրկեն:
— Բա այնտեղ տէր Աստուած կայ:
— Լինելը կայ ասենք:
— Է՛հ, թող էդպէս. լինի միայն տէր Աստուած, մէկ էլ
կոսէկներ, ամեն տեղ լաւ կըլինի:

— Դոչաղ, Խսայ Ֆօմիչը երեսում է որ զըչաղ է. գոռում
են չորս կողմից, և Խսայ Ֆօմիչը՝ թէև աւեսնում է որ հենց
իւր վրայ են ծիծաղում, բայց խրախուսուում է. ընդհանուր
գովասանքները նրան առերևոյթ բաւականութիւն են տա-
լիս և նա, իր բարակ զել ձայնը ողջ բռնատանը ձգած, եր-
գում է լա-լա-լա-լա, մի անմիտ ու ծիծաղելի եղա-
նակ, միակ երգը՝ առանց բառերի, որ նա երգում էր իր ողջ
տաժանակրութեան ընթացքում: Վերջը՝ հետա աւելի մօտ
ծանօթանալուց յետոյ՝ նա երգումով հաւատացնում էր ինձ,
թէ գա նոյն այն երգն է և հենց նոյն այն եղանակը՝ որ
կարմիր ծովից անցնելիս երգում էին բոլոր վեց հարիւր հա-
զար հրէայք՝ մեծից մինչև փորբը, և թէ իւրաքանչիւր հրէայի
պատուիրուում է այդ եղանակը երգել թշնամեաց վերայ յաղ-
թանակելու և նոցա յաղթահարելու բոպէին:

Ամեն շաբաթ օրուայ նախընթաց՝ ուրբաթ երեկոյին
միւս բռնատուններից մեր բռնատունն էին զալիս՝ յա-
տուկ աեսնելու թէ ինչպէս է Խսայ Ֆօմիչը իւր կիրակին տօ-
նելու: Խսայ Ֆօմիչը այն աստիճան անմեղ պարծենկոտ ու
մնափառ էր, որ այս ընդհանուր հետաքրքրութիւնն էլ էր
նրան բաւականութիւն տալիս: Նա ունայնամիտ ու շնչու
ծանրութեամբ իւր պատիկ սեղանը պատրաստում էր անկիւ-
նում, բաց անում զիրքը, երկու մոմ վառում՝ և ինչոր խոր-
հրըգաւոր բառեր վնթինթացնելով՝ սկսում էր զգեստաւո-
րուել իւր շուրջառով: Դա մի զյնզգայն վերարկու էր բըր-
զեղէն պաստառից, որ նա ինամով պահում էր իւր սնդու-
կում: Երկու թեքերին կապում էր թեքնոցներ, իսկ գլխին,

հենց ձակաւի վրայ, փաթաթելով՝ պնդացնում էր մի փայտեայ արկղեկ, այնպէս որ կարծես իսայ Ֆօմիչի ձակատից մի ինչոր ծիծաղաշարժ եղջիւր էր գուրս գալիս: Այնուհետեւ սկսուում էր աղօթքը: Աղօթքը երգելով էր կարգում, գոռզուում էր, դէս-դէն թքում, շուռ էր գալիս այս-այն կողմը, վայրենի ու ծիծաղելի շարժուածքներ էր կատարում: Իշարկէ՝ այդ ամենը պատուիրում էին աղօթքի ծէսերը և այդտեղ ծիծաղելի ու տարօրինակ ոչինչ բան չկար, բայց այն էր ծիծաղելին՝ որ իսայ Ֆօմիչը կարծես դիտմամբ մեր տուած ձգուում էր ու իւր ծէսերով հպարտանում: Մէկ էլ տեսար գլուխը ձեռներով ծածկեց ու սկսեց հեծկլտալով կարդալ: Հեծեծանքները սաստկանում են և նա ուժասպառ՝ ու քիչ է մնում ոռնալով՝ զրքի վրայ է խոնարհում իւր տապանով պսակուած գլուխը. բայց յանկարծ, ամենասաստիկ հեկեկանքների միջոցին, սկսում է հրհռալ և մի-տեսակ դորովալեց, յաղթական, լիառատ երջանկութիւնից կարծես նուազած ձայնով՝ երգելով կարգալ: «Տեսնո՞ւմ ես ոնց է զիւտուում», ասում էին երբեմն կալանաւորները: Մի անգամ հարցրեցի իսայ Ֆօմիչին՝ ի՞նչ են նշանակում այդ հեկեկանքները, և ապա յանկարծ այդ յաղթական անցութերը դէսլի երջանկութիւնն ու բախտաւորութիւնը: Իսայ Ֆօմիչը սաստիկ սիրում էր իմ այդ հարձափորձերը: Նա իսկոյն և եթ մեկնեց ինձ, որ ողբն ու հեկեկանքը նշանակում են երուսաղէմի կորըստեան յիշատակը և որ օրէնքը պատուիրում է այդ յիշելիս որբան կարելի է սաստիկ ողբալ և կուրծքը ծեծել: Բայց ամենասաստիկ հեծկլտոցի բոպէներին ինքը՝ իսայ Ֆօմիչը՝ ողբալ է յանկարչ, կարծես պատահաբար, մտաբերէ (այդ յանկարչը՝ նշյնպէս պատուիրուած է օրէնքով)՝ որ մարգարէսութիւն կայ հրէեց երուսաղէմ վերադարձի մասին: Այդ ժամանակ անյապաղ պէտք է ուրախութիւն, երգեր, քրքիջ գուրս թոշն նրանից և պէտք է աղօթքները այնպէս արտասանէ, որ նոյն իսկ ձայնով որբան կարելի է շատ երջանկութիւն արտայալտէ, իսկ դէմքով՝ որբան կարելի է աւելի փառայեղութիւն և ազնուամտութիւն: Այդ յանկարչակի անցումը և այդ անց-

ման հարկեցուցիչ պարտաւորութիւնը չափազանց դուր էին
դալիս Խոյ Ֆօմիչին։ Նա զրանում մի առանձին՝ ամենասա-
տանայական «օյին» էր տեսնում, և պարծենկուտ կերպարտն-
քով ինձ հաղողդում էր օրէնքի այդ խորախորհուրդ կանո-
նը։ Մի անգամ, աղօթքի հինց ամենասթունդ ժամանակը,
տուն մտաւ պլաց-մայեօրը պահնորդ սպայի և ուղեկից զե-
նուորների հետ։ Բոլոր կալանաւորները թելի պէս ձգուեցին
իրենց տախտերի կողքին, մի՛ միայն Խոյ Ֆօմիչն էր՝ որ ըս-
կոց էլ աւելի գոռգոռաւ ու ծռմռուել։ Նա գիտէր որ ա-
ղօթք անելը թոյլատրուած է, ընդմիջել չէր կարելի, իսկ
մայեօրի ներկայութեանը զոռգոռալով նա, ինչ ասել կ'ուղի,
ոչինչ չէր կորցնում։ Բայց նրան չափազանց դուր էր գալիս
մայեօրի առաջ մի քիչ կոտրտուել և մեր առաջ երեալ։ Մայեօրը
մօտեցաւ նրան մինչև մի քայլափոխ նրանից հեռու։ Խոյ
Ֆօմիչը քամակը իւր սեղանին արեց և ուղղակի, մայեօրի
երեսին, սկսեց երգելով կարդալ իւր յաղթական մարդարէու-
թիւնը ու ձեռները գէս-գէն թափ տալ։ Քանի որ նրան պա-
տուիրուում էր այդ բոպէին էլ չափազանց լիառատ երջան-
կութիւն ու աղնուականութիւն արտայայտել գէմքի վրայ,
ուստի և նա անմիջապէս էլ արեց այդ՝ մի առանձին ձեռվ
աշըերը պլացնելով, ծիծաղելով ու մայեօրին զիսով անելով։
Մայեօրը զարմացաւ բայց վերջիվերջոյ ծիծաղեց փոթկա-
ցրեց, այնտեղ ևեթ երեսին նրան յիմար անուանեց ու հե-
ռացաւ, իսկ Խոյ Ֆօմիչը ևս առաւել սաստկացրեց իր գոռ-
գոռոցը։ Մի ժամանակ յետոյ, երբ նա արդէն ընթրիք էր ու-
տում, հարցրի նրան. «Իսկ ի՞նչ կըլինէր, եթէ պլաց-մայեօրը
իւր յիմար սովորութեամբ բարկանար ձեղ վրայ»։

— Ո՞ր պլաց-մայեօրը։

— Ի՞նչպէս թէ որ։ Չտեսա՞ք միթէ։

— Ոչ։

— Նա ձեղանից մի արշե՞ն հեռու էր կանդնած ախր,
ուղեղ ձեր երեսի հանդէպը։

Բայց Խոյ Ֆօմիչը ամենալուրջ կերպով սկսեց ինձ հա-
ւատացնել, որ նա իսկի ոչ մի մայեօր չի տեսել որ այդ ժա-

մանակ, այդ աղօթքներն անելիս, նա մի տեսակ վեր է քաշուում, այնպէս որ էլ ոչինչ չի տեսնում ու չի լսում թէ ի՞նչ է կատարուում իւր ըրս բոլորքը:

Սյաօրուայ պէս տեսնում եմ իսայ Ֆօմիչին, ի՞նչպէս նա շաբաթ օրը սովորաբար քաշ էր զալիս ողջ բանտումը, բոլոր ուժերով աշխատելով ոչինչ չանել, ինչպէս այդ պատուիրում է օրէնքը շաբաթ օրուայ համար: Ի՞նչ տեսակ սնհաւատալի անեկոտաներ էր պատում ինձ ամեն անդամ՝ որ իր աղօթանից տուն էր զալիս, ի՞նչ տեսակ բանի նման չեղող համբաւներ ու լուրեր էր բերում ինձ համար Պետերբուրգից, հաւատացնելով որ իւր ջհուդներիցն է ստացել իսկ նրանք՝ բուն աղբիւրից:

Բայց ևս արդէն չափաղանց երկար խօսքով ընկայ իսայ Ֆօմիչի մասին:

Ողջ քաղաքում միայն երկու հասարակաց բաղնիս կար: Առաջինը, որ մի ջհուդի ձեռքին էր, համարներով էր, վճարը 50 կոտէկ համարին, և բարձրից բանով անձանց համար էր սարքուած: Մի՛ւս բաղնիսը առաւելապէս ռամկական էր, հնացած, կեղտոտ, նեղուածք, և ահա հինց այս բաղնիսը տարան մեր բանտեցոյց: Ցուրտ-սըլուլ էր ու արեկայ: Կալանաւորները ուրախանում էին արդէն՝ որ բերգից գուրս կըդան ու քաղաքը կըտեսնեն: Հանաք՝ ծիծաղ չէին կտրուում ձանապարհին: Մի դաս զինուորներ ուղեկցում էին մեղ՝ լրցրած հրացաններով, ի զարմանս ամբողջ քաղաքի: Բաղնիսում մեղ իսկցյն երկու հերթի բաժանեցին, երկրորդ հերթականները սպասում էին ցուրտ նախասենեակում, մինչ առաջինները լուցցուում էին, ինչոր բաղնիսի նեղուածքութեան պատճառով, կարեոր էր անել: Բայց այսուամենայնիւ բաղնիսում այնչափ նեղուածք էր, որ գժուար էր ըմբռնել թէ ի՞նչպէս մեր կէսըն անդամ՝ նրանում կարող էր տեղաւորուել: Սակայն Պետրովը ինձնից ձեռք չէր քաշում: ինքը, առանց իմ կանչելու, թռաւ եկաւ որ ինձ օղնի և նոյն իսկ առաջարկեց լուսնալ ինձ: Պետրովից հետ միասին առաջ ընկաւ ինձ ծառայութիւն անելու նաև Բակլուշինը, —մի կալանաւոր առանձին բա-

ժանմունքից, որին մեղնում «նահատակ» էին կանչում, և որին ևս այնպէս յիշատակել եմ իրեւ կալանաւորներից ամենագուրեկանը, ինչպէս էր էլ նա իրօք: Նրա հետ մենք արդէն թեթև ծանօթացած ենք: Պետքովն ինձ մինչև անդամ շորերը հանելում օգնեց, որովհետեւ անսովոր լինելուց ևս երկար էի հանուլում, իսկ նախառենեակում ցուրտ էր, համարեա ոյնպէս՝ ինչպէս դուրսն էր: Իգէաք. կալանաւորների համար շատ դժուար է հանուելը՝ եթէ նա դեռ լիտկատար չի վարժուել: Նախ պէտք է կարողանալ շուտով յետ անել ոտի բազանները: Այդ բազանները կաշուից հն շինուում, չորս վերշոկաչափ երկայնքով, ու հագուեցնում են ձերմակեղէնի վրայ, ուղղակի ոտը խատող երկաթէ օղակի տակը: Բազանի զազը վաթսուն կոպէկից պակաս չի առնուում, այնինչ ամեն մի կալանաւոր ձեռք է բերում իւր համար, խօսք չկայ՝ իւր հաշուով որովհետեւ առանց բազանի ման գալ անհնար է: Շղթայի օղակը սերտ չի սեղմում ոտքը, և օղակի ու ոտքի արանքովը կարելի է մասն անց կացնել այսպիսով երկաթը ծեծում է ոտքը, շփում է, և մի օրում կալանաւորը կարող էր վէրքեր ստանալ առանց բազանների: Բայց դժուարը բազանները հանելը չէ: Աւելի դժուարը շղթայի տակից ձերմակեղէնը վարպետութիւնով հանել սովորելն է: Դա մի ամբողջ «օյին» է: Տակի շորը ասենք՝ ձախ ոտից հանելուց յետոյ՝ պէտք է առաջ անց կացնել ոտքի ու ոտնօղակի արանքովը, այնուշետեւ ոտքն ազտանելուց յետոյ, այդ շորը էլի անց կացնել միենոյն օղակի միջով. յետոյ՝ ձախ ոտից բոլոր հանուծը աջ ոտի օղակովը դուրս բերել իսկ դրանից յետոյ աջ ոտի օղակովը բոլոր դուրս բերածը էլի յետ դէալի ինքը անց կացնել: Նոյն բանն է և նոր ձերմակեղէն հաղնելիս: Խամ մարդը կրդժուարանայ անդամ պլիսի ընկնել՝ թէ ինչպէս պէտք է անել այս ամենը մեղ առաջին սովորեցնողըն եղաւ կալանաւոր կորինել, Տոբոյլսկում, մի ժամանակ աւազակապետ, որ հինգ տարի կապած էր եղել շղթայով: Բայց կալանաւորները սովորել են ու առանց որևէ արգելքի գլուխ են բերում գործը: Ես մի քանի կոպէկ տուի Պետ-

ըովին, որ օճառի ու ձիլոբի պատրաստեթիւն տեսնի. ուղեղ է, կալանաւորներին թագաւորական օճառ էլ էին տալիս, ամեն մէկի համար մի-մի կտոր՝ մեծութիւնը երկու կոպէկանոցի չափ, իսկ հաստութիւնը մի պատառ պանրի չափ, որ իրիկունները «միջին զասի» մարդկանց ճաշակելու և մատուցուում: Օճառը այնտեղ եեթ էին ծախում, նախասենեակում, ինչպէս և զբիտենը*), բոքոններն ու տաք ջուրը: Ամեն մի կալանաւորի համար, բաղնիսի տիրոջ հետ կապած պայմանով, մի-մի դոյլ տաք ջուր էին ճամփու դնում: իսկ ով ուղում էր աւելի խստակ լուացուել կէս կոպէկով մի դոյլ էլ կարող էր ստանալ, որ հէնց բաղնիսն էլ յանձնուում էր, յատիապէս զրա համար նախասենեակից բացած պատուհանով: Շորերս հանելուց յետոյ՝ Պետրովն ինձ նոյնիսկ թերու բռնած տարաւ՝ երբ նկատեց, որ շատ եմ գժուարանում ոտ փոխել շղթայուած: «Դրանք վե՛ր՝ ծնկներիդ քաշեցէք», աւելացնում էր նա՝ բռնելով ինձ դայեկի նման.—«Բայց այ՝ այստեղ զդոյշ շէմքն է»: Ես մինչեւ անգամ մի քիչ ամացում էլ էի. կուղէի Պետրովին հաւատացնել որ ես մենակ էլ կարող եմ գնալ բայց նա չէր հաւատայ դրան: Նա հետո բոլորովին երեխայի պէս էր վարուում, անշափահաս ու անշնորհք երեխայի՝ որին ամեն մարդ պարաւոր է օգնել: Պետրովը ծառայ չէր իսկի, նախ և առաջ՝ ծառայ չէր. թող ես նրան վիրաւորէի, այն ժամանակ նա կըդիտենար թէ ինձ ի՞նչ կ'անէր: Նրան իւր արած լաւութիւնների փոխարէն ես փող բնաւ չէի խոստանում, և ինքն էլ չէր ուղում: Ի՞նչն էր ուրեմն ստիպում նրան այդպէս հոգ տանել վիրաս:

Իսկական բաղնիսի դուռը որ բաց արինք, ես կարծեցի թէ գժոխքը մտանք: Երեւակայեցէք տամներկու քայլ երկայնքով ու նոյնչափ լայնքով մի սենեակ, ուր միանգամից լցուած լինէին գուցէ հարիւրի չափ մարդիկ, և հաւանօրէն՝ գէթ ութսուն, քանի որ կալանաւորները երկու հերթի էին բաժանուել իսկ բոլոր բաղնիս եկողներս երկու հարիւր հոգու

*.) Տաք ըմպելիք, որ պատրաստում են մեղրից, պղպեղ ից ու գափնու տիրենիրի մզուածքից:

Հափ էին: Աչքերը մթնացնող շոգի, մուր, կեղտ, նեղուածք այն աստիճանի՝ որ ոտը դնելու տեղ չկար: Ես վախեցայ ու յետ դառնալ ուզեցի. բայց Պետրովն իսկոյն սիրտ տուեց ինձ: Որպէս և իցէ, մեծամեծ զժուարութիւններով, յատակին նստոտած մարդկանց զլիների վրայով սլկուեցինք՝ հասանք նստարաններին, խնդրելով որ կռանան, որպէսզի մնաք անցնել կարողանանք: Բայց նստարանների վրայ բոլոր տեղերը բռնուած էին: Պետրովը յայտնեց ինձ որ հարկաւոր է աեղ գնել և իսկոյն սակարկութիւն սկսեց պատուհանի մօտ տեղաւորուած մի կալանաւորի հետ: Մի կոպէկով նա իւր տեղը զիջեց մեղ անմիջապէս ստացաւ Պետրովից փողը, որ սա ափումը սեղմած ունէր՝ հեռատեսութեամբ հետք բերած լինելով բաղնիս, ու իսկոյն ևեթ նստարանի տակը սլկուեց, ուզեղիս տակը, որտեղ խաւար էր, կեղտոտ և որտեղ կպչուկ նսմութիւնը քիչ էր մնում կէս-մատնաչափ նստած լինէր: Բայց նստարանների տակն էլ բոլոր տեղերը բռնուած էին. այնտեղ էլ վիստում էին մարդիկ: Ամբողջ յատակի վրայ մի ափ տեղ չկար՝ ուր կուչ եկած նստած չլինէին կալանաւորները, իրենց գոյլերից ջուրը չփչփացնելով: Ուրիշները նրանց մէջներին ցից կանգնած էին, և ձեռքներումը բռնած իրենց գոյլերը՝ լուացուում էին ոտքի վրայ: Կեղտոտ ջուրը նրանց վրայից թափուում էր ուզեղի ներքեր նստածների սափրած զլիներին: Շովիառոցում և նրա աստիճանների վրայ կծկուած ու կուչ եկած նստուել էին լուացուածները: Բայց լուացուում էին քիչ: Խամիկ մարդիկ սակաւ են լողանում տաք ջրով ու օճառով. նրանք միայն սասաթիկ շոգի են առնում ու յետոյ սառը ջուր ածում վրաները, — աշաք բոլոր բաղնիսը: Յիսունի չափ աւելներ շոգիառոցում բարձրանում ու ցածրանում էին մի անգամից. ամենքը շշմելու չափ ծեծուում էին: Բոպէ-առ-ռոպէ շոգի էին խփել տալիս: Այդ արգէն շոք չէր. դա հուր-հնոց էր: Ամենքը գոռդոռում ու զըզըռում էին, հարիւր շըթաների ձայնի հետ. խառը, որոնք քաշ էին գալիս յատակին.... Ոմանք՝ անցնել ուզելով խճճուում էին ուրիշների շղթաների մէջ և ինքները դէմ

էին առնում ցածը նստածների դլխներին, վայր էին ընկնում, իրար հայշպում և դէմ առնուածներին իրանց ետեներից քաշում տանում: Կեղալ թափուում էր ամեն կողմից: Ամենքը մի տեսակ հարբած, մի տեսակ յուղուած հոգեկան տրամադրութեան մէջ էին. Ճիշն ու զոռում-գոչիւնն ընկել էր: Նախասենեակի պատուհանի մօտ, որտեղց ջուրն էին տալիս, տեղի էին ունենում յիշոցներ, նեղուածք, մի կատարեալ կուիւ: Ստացուած տաք ջուրը մինչև տեղը հասցնելը թափթփում էր յատակին նստածների դլխներին: Որտեղց որ էր, մէկ էլ տեսար պատուհանովը կամ յետ գրած զբոնովը դլուխը կըհանէր երկար բեխերով զինուորը, հրացանը ձեռքին, որ տեսնի թէ անկարգութիւն չկայ արդեօք: Կալանաւորների ստափած դլխները ու կարմելու չափ շոգուց խաշուած մարմինը ևս առաւել այլանդակ էին թուում: Քրտնքախաշ մէջքի վըայ սովորաբար պայծառ դուրս էին յայտում մի ժամանակ ստացած մտրակի ու գաւազանի հարուածների հիաքերը, այնպէս որ բոլոր այս թիկունքները կըկին վիրաւորուած էին թուում: Զարհուրեկի հետքեր, մարմինս փշաքաղուեց նրանց զիտելով: Զուրը կըլսփէին և շոգին թանձրը, տաք-տաք ամպի նման կըծածէր ողջ բաղնիսը, ամենքը կըզողացնէին, կըգոռոգոռային: Ամսկեղէն շոգու միջեց կըցոլային ծեծուած թիկունքները, ստափած դլխները, կորացած ձեռներն ու ոտները, և ի լրումն ամենայնի, իսայ ֆօմիչը՝ որբան մէջը ձայն կայ՝ զազռացնում է ամենաբարձր շողիառօցում: Նա ուշաթափուելու չափ քրտնքախաշ է լինում, բայց կարծես ոչ մի տաքութիւն չի կարող նրան յագեցնել. մի կոպէկով նա ջուր խփող է վարձում, բայց սա, վերջիվերջոյ, չի դիմանում, աւելը ձգում ու վաղ է տալիս սառը ջրով ուշաթերուելու: Իսայ ֆօմիչը չի վհատուում և վարձում է երկրորդին, երրորդին. նա արդէն որոշում է տալիս այդ տեսակ զիպուածի համար ծախքին չնայել և մինչև հինդ շոգի խփող է փոխփոխում: «Թունդ է, բըստնքախաշուում, զոչաղ իսայ ֆօմիչ», գոռում են նրան կալանաւորները ներքեից: Իսայ ֆօմիչը ինքը զգում է որ այդ

բոսկին բարձր է ամենքից և բոլորին իւր ոտների տակին է տրորել. նա յաղթանակը տարել է, և զիլ խելակորոյս ձայնով իւր եղանակն է գորգոռացնում, լա՛, լա՛, լա՛, լա՛, որ բոլոր ձայները խեղդում է: Մոքիս եկաւ որ եթէ մենք բոլոր միասին երեւեցէ հուր հնոյում լինէինք, նա շատ նման կրլինէր այս տեղին: Ես չհամբերեցի ու այս գիւտս Պետրովին հաղորդեցի. նա միայն չորս բոլորքը մտիկ տուեց ու լուռ կացաւ:

Ես ուզում էի նրա համար էլ տեղ գնել իմ կողքին, բայց ոտներիս մօտ նստեց և յայտնեց որ իրան շատ յարմար է: Այնինչ Բակուշինը մեզ համար ջուր էր գնում ու բերում պէտք է եղածին պէս: Պետրովը յայտնեց թէ զլսից մինչև ուքը ինձ կրլուանայ, այնպէս որ «բոլորովին իստակ կրլինէք», և թախանձագին կանչում էր ինձ որ շոգի առնեմ: Շոգի առնել ես սիրտ չարեցի: Պետրովը ողջ մարմնիս օճառքսեց: «Իսկ հիմի տոտիկներդ կրլուանամ», աւելացրեց նա վերջը: Ուզում էի պատասխանել, որ ինքս էլ կարող եմ լուանալ բայց սյլես չէի հակառակում ու ոտով-գլխով ինձ նրա կամքին յանձնեցի: «Տոտիկներ» նուազականից բնաւ չէր լսուում ոչ մի ստրկական ելեէջ. պարզիպարզոյ՝ Պետրովը չէր կարողանում իմ ոտներին ոտներ ասել շատ կարելի է այն պատճառով, որ միւս՝ իսկական մարդկանցը ոտներ են, իսկ իմը՝ դեռ ես տոտիկներ:

Ինձ լուանալուց յետոյ՝ նա նոյն ծէսերով, այսինքն բըռնելով ու նախազդուշացնելով ամեն-մի քայլափոխում, կարծես ես ձենապակուց լինէի շնուռած, հասցրեց ինձ նախասենեակը ու օգնեց ձերմակեղէնս հաղնել և երբ արդէն բոլորովին իմ բանը վերջացրեց, թռաւ կրկին բաղնիսր՝ շոգի առնելու:

Երբ տուն եկանք, ես նրան մի բաժակ թէյ առաջարկեցի: Թէյից նա չըրաժարուեց, խմեց ու շնորհակալութիւն արեց: Խելքիս փէց զբաններս գատարկել ու նրան մի գորակ խմելու հրամացնել: Մի գորակ մեր բոնատանն էլ զըռնուեց: Պետրովը չափից գուրս գոհ եղաւ, կոնձեց, հոփացրեց

և, նկատելով ինձ՝ որ ես բոլորովին կենդանացրի նրան, ըշտապով խոհանոօքը զիմեց, կարծես՝ այնտեղ տունց նրան իսկի չէին կարողանում վճռել մի ինչոր բան։ Նրա տեղը մօտ եկաւ մի ուրիշ խօսակից, Բակլուշինը (նահատակը), որին նոյնպէս գեռ բաղնիսում ես թէյի կանչեցի ինձ մօտ։

Բակլուշինից դուրեկան բնաւորութիւն ես դեռ չեմ ճանաչում։ Ճիշտ է՝ նա ուրիշներին թող չէր տալիս, նա մինչև իսկ շուտ-շուտ կոփւ էր անում, չէր սիրում որ խառնուեն իւր գործերին, մի խօսքով կարողանում էր ինքն իրեն պաշտպանել։ Բայց երկար ժամանակով չէր կռուում, և կարծեօք բոլորը սիրում էին նրան մեղնում։ Ուր որ մտնէր, նրան ուրախութեամբ կ'ընդունէին բոլորը։ Քաղաքումն անդամ ճանաչում էին նրան՝ իրբե աշխարհիս ամենավուարձալի մարդը և որը երբէք իր զուարթութիւնը չի կորցընում։ Դա մի բարձր տղամարդ էր, ասրիքը երեսունի չափ, անվեցէր ու պարզահոգի, բաւականի սիրուն կերպարանքով, դորդնուկն երեսին։ Այդ կերպարանքը նա երբեմն-երբեմն այնպէս ծիծաղաշարժ ձեռվ էր ծոմնում՝ ամեն պատահողի ձեռը ներկայացնելով, որ շուրջ պատողները չին կարողանում չհահռաւլ։ Նա նոյնպէս հանաք սիրողներիցն էր, բայց շատ երես չէր աալիս մեր գարշող ծիծաղատեացներին, այնպէս որ նրան ոչ ոք էլ չէր հայհցում՝ որ նա «Պատպակ ու անպէտք» մարդ է։ Տեղովը կեանք-կրակ էր նա։ Հետո ծանօթացաւ, նա առաջին իսկ օրերից և յայտնեց ինձ, որ զինուորի որդի է, յետոյ ծառայել է իրբե «մարտիրոս», և նոյնիսկ աչքի է ընկել ու սիրուել մի քանի բարձրաստիծան անձերից, որով վազուց անցած յիշատակներ լինելու պատճոռով շատ էր հպարաանում։ Ինձ նա իսկցյն և եթ սկսեց հարց ու փորձ անել Պետերբուրգի մասին։ Նա մինչև իսկ զրբեր էլ էր կարլացել։ Գալով ինձ մօտ թէյ խմելու՝ նա բոլոր բռնատնեցոց ծիծաղը բարձրացրեց, պատմելով ի՞նչպէս հարիւրապետ Շ.Ն առաւատը մեր պլաց-մայեօրին անպատուեց, և կողքիս նստելով՝ գոհունակ գէմքով յայտնեց ինձ, թէ երեսում է որ թատրոնը պլուխ կը զայ։ Բանտում թատրոն էին

սարքում՝ տօներին։ Դերասանները յայտաբարուեցին, բեմա-
ղարդերը քիչքիչ շենուում էին։ Քաղաքացի ումննը խոստա-
ցան իրենց զգեստները տալ զերասանական խաղերի, նոյն իսկ
կանացի խաղերի համար։ Մինչեւ անգամ՝ յոյս ունէին մի սպա-
սաւորի միջոցով մի ձեռք սպայի շոր ճարել ուսափունջե-
րով։ Միայն թէ պլայ-մայեօրի խելքին չփէք արգելել՝ ինչ-
պէս անցեալ տարի։ Բայց անցեալ տարուայ ծնունդին
պլայ-մայեօրի տրամադրութիւնը տեղը չէր. մի տեղ տա-
րուել էր, բանտումն էլ բացի այդ անկարգութիւն էին ա-
րել ահա նա բարկութիւնից արգելեց, իսկ հիմի գուցէ ըր-
կամենայ նեղել։ Մի խօսքով՝ Բակլուշինը յուգուած տրամա-
դրութեան մէջ էր։ Երեսում էր որ նա թատրոնի զլիաւոր
հեղինակներից մինն էր, և ևս հէնց այն ժամանակ խօսք
տուեցի ինքս ինձ անպատճառ այդ ներկայացմանը հանդիսա-
տես լինել։ Բակլուշինի պարզամիտ հրձուանքը թատրոնի
յաջողութեան մտսին՝ սրտովս էր։ Խօսքը բերեց ու մենք
զբոցի մտանք։ Իմիջի այլոց՝ նա ասաց ինձ, որ ոչ միշտ
Պետերբուրգումն է պաշտօն վարել որ այնտեղ մի բանում
յանցաւոր գտնուեց ու նրան Ռ. ուղարկեցին՝ բայց իրեւ
ենթասպայ՝ բերդաղօրքի գումարտակ զնուում։

— Ահա այնտեղեց արգէն ինձ ուղարկեցին այստեղ, նը-
կատեց Բակլուշինը։

— Բայց ինչո՞ւ, հարցրեցի նրան։

— Ինչո՞ւ։ Ի՞նչ էք կարծում, Ալէքսանդր Պետրովլիք ին-
չո՞ւ։ Նրա համար ախր՝ որ սիրահարուեցի։

— Է՛հ, գրա խաթեր այստեղ ուղարկելը շատ կրկնէր,
առարկեցի ես ծիծաղելով։

— Ճշմարիտ, կցեց Բակլուշինը, — ես այդ դործում մի
այնտեղացի գերմանացու վրայ ատրճանակ կրակեցի։ Արժէ՝
ախր գերմանացու խաթեր մարդու աքսորել ինքներդ գատեցէր։

— Բայց ի՞նչպէս եղաւ այդ։ Հետաքրքրական է, պատմեցէր։

— Ամենածիծաղելի պատմութիւն է, Ալէքսանդր Պե-
րովլիք։

— Որ այդպէս է, աւելի լաւ։ Պատմեցէր։

—Պատմեմ թէ չէ: Դէ, որ սյզպէս է՝ ականջ դրէք
ուրեմն...

Ես ունկնդիր եղայ մի սպանութեան, թէւ ոչ բոլո-
րովին ծիծաղելի, բայց և բաւական օտարոտի պատմութեան...

«Ահա թէ ի՞նչպէս եղաւ այս բանը, սկսեց Բակլու-
շինը:—Ռ. որ ուղարկեցին ինձ, տեսնում եմ՝ լաւ քաղաք է,
մեծ, միայն գերմանացիք շատ կան: Դէ, ես խօսք չկայ, ջա-
հել տղայ եմ, մեծաւորների աչքին գուր եկած, ինձ-ու-ինձ
ման եմ գալիս գդակս ծուռը դրած, այսինքն լաւ ժամանակ
եմ անցկացնում: Գերմանուշիներին աչքով եմ անում: Ու
այդտեղ մի գերմանուշի ինձ գիւր եկաւ, անունը Լուիզա:
Նրանք երկուսով էլ լուացը անողներ էին, նա ու իւր մօր-
քոյրը, է՞ն ամենամաքուր իստակ ձերմակեղէնի համար: Մօր-
քոյրը պառաւ է, քիթը բարձր-բարձր պահող բայց ունեո-
րի պէս են ապրում: Ես առաջ լուսամուտների առջեռվը
արշաւներ էի տալիս, իսկ յետոյ իսկական բարեկամութիւն
էլ կապեցի: Լուիզան ոսերէն էլ լաւ էր խօսում, բայց միայն
այնպէս, կարծես թոթովում էր,—մի խօսքով՝ այնպէս մի
գուրեկանն էր, որ գեռ պատահել էլ չեմ իսկի այդպիսուն:
Ես առաջ գէս արեցի, գէն արեցի, համա նա թէ «Զէ, այդ
չեմ կարող, Սաշա, որովհետեւ ուղում եմ անմեղութիւնս բո-
լոր պահպանեմ», որ քեզ համար արժանի ամուսին լինեմ»,
ու հէնց գուրգուրում է, ծիծաղում է սյզպէս զել-զել... ու
այնպէս էլ անմեղն էր, որ ես չեմ էլ տեսել այդպէտներին
բացի նրանից: Ինքն էլ հրապուրեց ինձ որ պսակուհմ: Դէ,
ի՞նչպէս չպսակուիմ, մտածեցէք: Ահա ես պատրաստութիւն
եմ տեսնում զնալ ու խնդրել փոխ-զնպապեախն... Յանկարծ
տեսնում եմ—Լուիզան մէկ գուրս չեկաւ տեսնուելու, երկու
չեկաւ, երեք՝ չեկաւ... Նամակ եմ ուղարկում: Նամակին պա-
տասխան չկայ: Ի՞նչ է այս, մտածում եմ: Այսինքն թէ որ
խաբելիս լինէր ինձ, այնպէս կըկեղծէր, որ նամակիս էլ
պատասխան կըտար, տեսնուելու էլ կըդար: Իսկ նա սուտ
խօսել էլ չկարողացաւ. հէնց այնպէս կտրեց: Այդ մօրքու-
րիցն է, մտածում եմ: Մօրաքրոջ մօտ զնալ-զալ ես չեմ հա-

մարձակուում. թէե նա գիտէր, բայց էլի մենք ծածուկ էինք անում, այսինքն՝ սուս-ու-փուս: Յնդուածի պէս եմ ման զալիս. վերջի նամակը գրեցի ու ասում եմ: «թէ որ չգաս՝ ինքըս կրգամ մօրքուրիդ մօտ»: Վախեցաւ, եկաւ: Լայ է լենում: ասում է թէ մի գերմանացի, անունը Շուշլց, իրանց հեռու աղգականը, ժամագործ, հարուստ ու արդէն հասակն առած, ցանկութիւն յայտնեց իր վրայ պսակուել,—որ՝ ասում է՝ ինձ էլ բախտաւորացնի, ինքն էլ ծերութեան օրերում առանց կնկայ չմնայ ու սիրում էլ է նա ինձ, ասում է, ու վաղուց նա այդ միտքն ունէր, ասում է, բայց սուս էր կենում, պատրաստուում էր: Բաս այ, ասում է, Սաշա, նա հարուստ է, գա ինձ համար բախտաւորութիւն է. բաս դու կուզենանս ինձ իմ բախտիցս զրկել: Մաիկ եմ տալիս՝ լայ է լինում, փաթաթուում է ինձանով... է՛հ, մտածում եմ, ախր ծշմարիտն է ասում: Դէ՛, ի՞նչ օգուտ զինուորի գնալ թէկուղ ես ենթասպայ էլ լինիմ:— Դէ՛, ասում եմ, Հուիզա, մնաս բարով, Աստուած քեզ հետ. զուր կրլինի ինձ համար բախտաւորութիւնիցդ զրկել քեզ: Իսկ նա ի՞նչպէս, տեսքով է:— Զէ, ասում է, տարիքն առածն է, երկար քթանի:— մինչեւ անզամ իրան ծիծաղն եկաւ: Հեռացայ նրանից. ի՞նչ արած, միտք եմ անում, բախտս չըր: Մէկ էլ առաւոտը գնացի այդ մարդու կրպակի մօտերքը,— փողոցն ինձ ցոյց էր տուել աղջեկը: Մաիկ եմ տալիս ապակու միջով, — նստած է մի գերմանացի, ժամացցյներ է շնում, այսպէս բառասուն ու հինգ տարեկանի չափ, քիթը կուզիկ, աչքերը ըռած, ֆրակը հազին ու կանգնովի, երկար-երկար օձիքը շապկին, աղայի մէկն էր: Տեսնելս ու թքելս մին եղաւ. ուզում էի հէնց այգտեղ և եթ նրա ապակիքը կոտրտել... Բայց ի՞նչ արած, մտածում եմ: Զուր է ձեռք դիպցնելը, չուրն ընկածը ջրին տուր. իրիկնամութին զօրանոցն եկայ, պառկեցի մահիճու, և այ, հաւատում էր: Ալէքսանդր Պետրովիչ թէ ո՞նց եմ լալիս...

«Դէ՛, անց է կենում էսպէս մի օր, երկու օր, երեք օր: Հուիզայի հետ չեմ տեսնուում: Բայց մինչայս-մինչայն՝ մի սանամօրից լսել էի (պառաւ էր, նոյնպէս լուացը անող, որի

մօտ Լուիզան ժամանակ-ժամանակ դնում զալիս էր), որ գերմանացին իմացել է մեր սէրը. այդ պատճառով էլ որոշեց շուտով խնամախօսել: Թէ չէ էլի երկու տարի սպասելու էր: Լուիզայից իբրև թէ երդում էր առել, որ ինձ ձանաշելու չէ. և որ իբրև թէ նրանց, մօրքուրին էլ ու Լուիզային էլ առայժմ գեռ սրտանց չի բացուիլ. որ դուցէ, առում է, գեռ կըմտածի, բայց թէ գեռ այժմ էլ բոլորովին չի որոշել: Ասաց ինձ նշնպէս, որ էղուց չի միւս օրը, կիրակի, երկուսին էլ առաւօտը սուրձի է կանչել և որ մի ուրիշ ազդական էլ կըլինի, որ առաջ վաճառական է եղել իսկ հիմի խեղճ-ողորմելի, մի տեղ նկուղում վերակացուի պաշտօն ունի: Որ իմացայ թէ կիրակի նրանք կարելի է գործը բոլոր կրվճռեն, այնպէս հերսոս եկաւ, որ ինքս ինձ պահել չեմ կարողանում: Թէ այս օրը բոլոր և թէ միւս օրը բոլոր հինց բան ու դործս սրա վրայ մտածելն էր: Արիւնը կրիմի այդ գերմանացու, մտածում եմ:

«Կիրակի առաւօտը դեռ ես ոչինչ չէի իմացել իսկ պատարագը որ վերջացաւ, վեր թռայ, շնէլս ուսիս քաշեցի ու ձամբայ ընկայ գերմանացու մօտ: Ուզում էի նրանց բոլորին վրայ հասնել: Իսկ ինչու ձամբայ ընկայ գերմանացու մօտ, և ի՞նչ էի ուզում այնտեղ տսել—ինքս էլ չպիտեմ: Բայց յամենայն դէպս ատրճանակը զրպանս դրեցի: Եյդ ատրճանակը այնպէս՝ փչացած էր, հնացած չախմախով. գեռ տղայ ժամանակս կրակում էի նրանից: Նրանից կրակելն էլ անկարելի էր այլեւ: Սակայն գնդակով լցրի այն. մտածում եմ՝ որ կըսկսեն դուրս անել կոպիտ խօսել, ևս ատրճանակը կրհանեմ և նրանց բոլորին կրվախեցնեմ: Փալիս եմ: Արուեստանոցում ոչ ոք չկայ, այլ ետեի սենեակութի են նստած: Նրանցից զատ ոչ մի հոգի, ոչ մի սպասաւոր չկայ: Նրա ունեցած բոլոր սպասաւորը մի գերմանուհի էր, ու կերակուր եփողն էլ էր նա: Անցայ կրպակովը. տեսնում եմ այնտեղի գուռը կողպած է, ու դուռն էլ հին էր՝ «չանգալով»: Սիրտս խփում է, կանգնեցի. ականջ եմ զնում, խօսում են գերմաներէն: Որ բոլոր թափովս մի բացի չառեցի, գուռը իսկոյն բացուեց:

Տեսնում եմ՝ սեղան է փռած։ Սեղանի վրայ մի մեծ սրճաման գրած ու սուրձն էլ սպիրտի վրայ եփում է։ Մի տեղ պաքսիմաներ են զրուած։ միւս մատուցարանի վրայ մի յուրան օղի, տառեխ ու երշիկ, ու էլի մի տեսակ դինու շիշ կուիզան ու նրա մօրքոյրը, երկուսն էլ շորերից թեթեացած, նաև ել են բաղմոցին։ Նրանց գէմուզէմը, աթոռի վրայ ինքը գերմանացին է նատած, փեսացուն, սանդրուած, ֆրակով ու օձիքով, որ հէնց առաջ է տնկուել։ Կողքին էլ աթոռին մի ուրիշ գերմանացի է նատած, արգէն ծեր, հաստլիկ, ալեոր, ու չի խօսում։ Որ տուն մոսայ, Լուիզան հէնց սպրթնեց։ Մօրքոյրը վեր թըռչւ էր ուղում, բայց էլի նստեց, խոկ գերմանացին ունքերը կիտեց։ Թունդ բարկացած էր, վեր կացաւ ու գէմն եկաւ.

«— Ի՞նչ էր կամենում, ասում է։

«Ես՝ քիչ մնաց շփոթուելու էի, բայց զայրոյթս սաստիկ էր եկել։

«— Ի՞նչ եմ կամենում, ասում եմ։ Դու հիւր ընդունիր, արաղ հրամմեցրու։ Ես քեզ մօտ հիւր եմ եկել։

«Գերմանացին մատեց, ու ասում է, «նատէ՛ք»։

«Նստեցի։— Դէ տօւր արաղն՝ է՛ ասում եմ։

«— Ա՛յ, ասում է, արաղը համեցէր, խմէք։

«— Դու ինձ լու արաղեցը առւր, ասում եմ։— Բարկութիւնս, ուրեմն, խիստ է բռնուում։

«— Սիրոս դառնացաւ, որ այդպէս խիստ ստոր է դասում ինձ։ Բայց ամենից աւելի՝ որ Լուիզան մտիկ է տալիս։ Խմեցի, ու ասում եմ յետոյ։

«— Ախօր ի՞նչ այդպէս կոպիտ սկսեցիր վարուել դու, այ գերմանացի։ Դու հետո բարեկամացիր։ Ես բարեկամավարի եմ եկել քեզ մօտ։

«— Ես չեմ կարող ձեր բարեկամը լինել ասում է, դուք պարզ զինուոր էք։

«Դէ, ես այստեղ արգէն կատաղեցի։

«— Այ դու խրառւիլակ, ասում եմ, երշիկ շինող։ Գիտէ՞ս, որ այս ըսպէից ինչ ուղենամ, կարող եմ քեզ անել։ Ա՛յ, կուզէ՞ս, աարձանակը վերադ բաց կանեմ։

«Հանեցի ատրճանակը, գնացի կանգնեցի նրա առաջը,
ու բերանը ուղիղ նրա զլիի վրայ շուռ տուի, շեփ-շետակ:
Նրանք նստած են ոչ մեռած, ոչ կենդան. ձայն-ծպտուն հա-
նել վախենում են. իսկ ծերը, նա չօ՛տերեւի նման է գողդո-
զում, սուս է կացել իսպառ զոյնը ձգել:

«Գերմանացին զարմացաւ, բայց և այնպէս ուշի եկաւ:

«—Ձեզանից ես չեմ վախենում, տառմ է, և իրեւ աղնիւ
մարդու՝ ինգրում եմ ձեզ՝ թողնէք այս բովկին ձեր հանտ-
ըլ, իսկ ես ձեղնից բնաւ չեմ վախենում:

«—Օ՛, սուտ ես խօսում, վախենում ես: Ու ի՞նչ Ատր-
ճանակի տակից զլուխը շարժել չի համարձակուում ինքը.
Հինյ նստած է մնում:

«—Զէ, տառմ է, գուք այդ ամենեին չէք համարձակուի
անել:

«—Ախր ինչու չեմ համարձակուի, տառմ եմ:

«—Նրա համար, տառմ է, որ այդ ձեզ խիստ արգե-
լուտած է և դրա համար ձեզ խստիւ կըպատճեն:

«Այսինքն՝ ստատնան զիտէ այդ յիմար զերմանացու բա-
նը: Թէ որ ինքը չոռքացնէր ինձ, մինչև այսօր կենդան կը-
մնար. գործի սպատճառը վէճն էլ եղաւ:

«—Ուրեմն չեմ համարձակուի, քու ասելով:

«—Զէ:

«—Չեմ համարձակուի:

«—Դուք ամենեին չէք համարձակուի ինձ այդ բանն
անել:

«—Որ այդպէս է, այ քեզ երշեկ: Ու որ զրմիացրի,
թաւալ-թաւալ արեց աթոռի վրայ: Միւսները ծվացին:

«Ես ատրճանակը զրպանս գրի, ու սցգպէս էլ մնացի,
բայց բերդը որ մանում էի, այդտեղ գռան մօտերքը ատր-
ճանակը եղնջի մէջը ձգեցի:

«Եկայ տուն, պառկեցի մուշիճն ու մոտածում եմ ահա
որտեղ որ է կըբռնեն: Մի ժամէ անցնում, երկու—չեն բըռ-
նում: Իրիկնազէմին մի այնպէս տիրութիւն եկաւ վրաս որ...
Դուրս եկոյ. անպատճառ Լուիզային տեսնել ցանկացայ: Անց

կացայ ժամագործի տան մօտովը: Տեսնում եմ այնտեղ՝ ժողովուրդ, ոստիկաններ: Ես դնացի սահմամօրենց, թէ Լուիզային դուրս կանչիր: Մի քիչ ուղասեցի, աեսնում եմ: Լուիզան վաղ է տալիս. հենց փաթաթուեց վզովս, ու լսոց է լինում: «բոլորի մեղաւորը, ասում է, ես եմ, որ մօրքուրիս ականջ արեցի»: Ասաց ինձ նաև, որ մօրքոյրը այդ անցըից յետոյ իսկոյնեւեթ տուն եկաւ, ու այնպէս սարսափահար էր եղել որ հիւանդացաւ և գաղանիք է պահում: Թէ ինըը ոչոքի չի յայտնել թէ ինձ, ասում է, արգիլել է. թէ վախենում է, թէ ինչպէս ուղում են, թող անեն: Մեզ ասում է, ոչոք չափառ այն ժամանակ: Իւր աղախնին էլ ճանապարհ էր զրել պատճառը՝ որ վախենում էր: Նրա աչքերը կը քանդուածէր, եթէ իմանար որ պասկուել է ուղում: Արշեստաւորներից էլ ոչոք չկար տանը, ամենքին հեռացրել էր: Ինըը թէ՝ սուրճ եփեց, և թէ նախաճաշ պատրաստեց: Ազգականը հօ, նա առաջ էլ իր ողջ կեանքումը լուռ է կացել ոչինչ չի խօսեցել իսկ փոքր ինչ առաջ բանը որ պատահեց, զլիսարկն առաւ և առաջինը հեռացաւ: Ու անշուշտ նոյնպէս չի յայտնի, ասաց Լուիզան: Այդպէս էլ եղաւ: Երկու շաբաթ ինձ ոչոք չքոնից ու ոչ մի կասկած էլ վերաս չտարան: Այս երկու շաբաթն էլ, կ'ուզէք հաւատացէք, կ'ուզէք չէ, Ալէքսանդր Պետրովիչը ես իմ բախտաւորութիւնս բոլորը քաշեցի: Ամեն օր ես ու Լուիզան հանդիպում էինք իրար: Եւ այնպէս կպաւ ինձ նրա սիրառ, այնպէս որ... Լաց է լինում: «ես, ասում է, ետեիցդ կըդամ, ուր որ քեզ աքսորեն. ամեն բան քեզ համար կըթողնեմ»: Ես մտածում էի արգէն, որ իմ կեանքս բոլորը այգանիզ կըվճռուի, — այնպէս սիրառ շուռ ու մուռ բերեց այն ժամանակ: Դէ՛, երկու շաբաթից յետոյ ինձ բունեցին: Ծերն ու մօրքոյրը խօսքը մէկ արեցին, ու ինձ վրայ էլ հաստատեցին:

— Բայց կացէք, ընդմիջեցի ես Բակլուշինին. — Ճեզ զրա համար կարող էին ընդամենը տասը, թող հենց ասաներկու տարով միայն ուղարկել, քաղաքացիական կարգը. իսկ դուք չէ որ առանձին բաժանմունքում էք: Այդ ինչպէս կարելի է:

— ԵՇ, այլ արդէն ուրիշ գործ գուրս եկաւ, ասաց Բակ-
լուշինը: — Ինձ դատաստանի ատեանը որ բերեցին, հաղարա-
պետս դատարանի առաջ հայհցից ինձ աղտեղի խօսքերով:
Զգիմացյ ու ասում եմ նրան. «Ինչ ես ուշունց տալիս,
լի՞րը: Զե՞ս տեսնում որ հայելիի առաջն ես նստած»: Դէ՛,
սյդտեղ բանը այլևս ուրիշ կերպարանք առաւ. նոր մեղքիս
դատաստանը սկսեցին քննելը ու բոլորի համար միասին վճռե-
ցին չորս հաղար զարկ, ու այս առանձին բաժանմունքը: Իսկ
պատժուելու որ գուրս բերեցին ինձ, հաղարապետին էլ գուրս
բերեցին, — ինձ Ճիպոտներ ուտելու, իսկ նրան կարգից զըր-
կելու, և Կովկաս զինուոր ուղարկելու: Յտեսութիւն: Ալք-
սանգը Պետրովիչ: Մաէք մեզ մօտ ներկայացման ժամանակը:



ՄԵՐ ՀԻՍՏՈՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

„ԿԻԼԻԿԻԱ“

Դեկտեմբերի 15-ին
մենք լցու կը լնձայինք
«ԿիլիկիԱ» վերևագրով
մի ընտիր հրասարա-
կոմ թիւն մատ 400 է-
րեսից և 40-աչափ Կի-
լիկից տեսարաններից
և տիպերից: Թէ ընա-
զիրը և թէ նկարնե-
րը տպագրվում էն կա-
պցադցնով: «Արտուր»ի
խմագրութիւնը, չը-
նացելով իւր նիւթա-
կան հարստահարուած
վիճակնեւ, իւր սրբա-
զան պարտը համա-
րեց Ռուբենեանց հար-
ստութիւնն 500 ամես-
կի առթիւ գնել այս
զիրը հոյ մարդու ա-
ռաջնիրը Խուրինեանց
Զայթնիրին ու երա-
րնակիշներին Խուրի-
ռուած մի գործ:

«ԿիլիկիԱ»-ի գինն
է «Արտուր»-ի 1895 թ.
բաժանորդների հա-
մար. 40 կ.
ոսկեկազմով. 1 ռ. —
ոչ բաժանորդաց հա-
մար. 1 ռ. 25 կ.
ոսկեկազմով. 2 ռ.:



ՏԵՍԱՐԱՆ ԿԻԼԻԿԻԱՑ.


„Ս. ԷՉՄԻԱՅՃԻՆ“

«Արտուր»-ի սովոր 1895 տարե-
չը ջանի երկորդ գրքի հետ լցու
կը լնձայինք «Ս. Էջմիածնու»
խորագրով պատկերագրով մի շա-
քեղ հրասարակութիւն:

Գինն է «Արտուր»-ի 1894—1895
թ. ուսականի բաժանորդների հա-
մար. 60 կ.
ոսկեկազմով. 1 ռ. —
իսկ «Արտուր»-ի ոչ բաժանորդնե-
րի համար. 1 ռ. 40 կ.
ոսկեկազմով. 2 ռ.:



ՏԵՍԱՐԱՆ ԿԻԼԻԿԻԱՑ. — Առին կամ Վաճառքին.



ԱՐԱՔՈ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ԿԵՑԱՄՍԵԱՅ ՊԱԺԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ
ԱՄԵՆ ՄԻ ԳԻՐՔԸ ԲԱՂԿԱՆԱԼՈՒ Է 12 ԹԵՐԹԻՑ
ՈՒԹԱԾԱԼ ԴԻՐՔՈՎ ԵՐ 24 ՆԿԱՐԻՑ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 3 ՐՈՒԲԼԻ
ԻՒՐԱՔԱՆՉԻՐ ԳԻՐՔԸ 2 Ր. 50 Կ.

ԱՐՏԱՊԱՀՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 10 ՖՐԱՆԳ ԿԱՄ
ԱԽՏՐԻԿԱԿԱՆ 5 ԳՈՒԼԴԵՆ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ 2 ԴՈԼԱՐ

«ԱՐԱՔՈ»Ի 1895 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է.



ԵՎԸՆԻԿ ԵՒ ՎԵ-
ՐԵԴԻ ՎՃԵՐՈՎ ԲԵ-
ՓԱՆՈՐԴԵԳՐՈՒ-
ԹԻՒՆ ԱՄԵՆԵՒՆԻ
ՁԵ ԸՆԹԱՆԱԿԱՆԸ.



Տեսարան Կիւկեցոյ.—Կոռկիոսի Ճաղային բերդը.

„ԱՐԱՔՈ“-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԳՈՐԾ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՂՆԵՐԸ
ԴԻՄԵԼՈՒ ԵՆ ՄԻՄԵԾՆ ԳՈՒԱՄԻՐԵԱՑԻՆ ԸՆԴ ՄԻՇՏ ԱՅՐՁ ԵՒ ԱՊԱՀՈՎ ՀԱՍՑԵՎԸ.

Ը.-Պետերբուրգ. Սիմեոն Գուլամիրյանց հանձնաժողով. St. Petersbourg. Simeon Goulamiriantz.


«ԱՐԱՔՈ»-Ի ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐ-
ՔԸ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԵՆՔ ՄԵՐ
ՄԻԶՈՅԸ ՆԵՐԱԾԻՆ ՊԵՍ ՇՈՒ-
ՏՈՎ. ԱՅՍ ՄԱՍԻՆ ԽՆԴՐՈՒՄ
ԵՆՔ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴԱՆԵՐԻՑ
ՄԻԱՆԳԱՄԱՑՆ ԱՊԱՀՈՎ ԼՐ-
ՆԵԼ, ՈՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԿԲ
ՍՏԱՆԱՆ ԻՐԵՆՑ ԳՐԲԵՐԸ.



Իշխու բերդի աւերակները, Նրեանի մատ.

Дозволено цензурою. С.-Петербургъ, 15 Ноября 1895 года.

Паровая Скоропечатня Я. И. Либермана, Фонтанка, домъ № 86.



ԳԵՂԱԿԱՐ ՀԱՅՈՒՄ

$$\{ \theta = \frac{\pi}{2} \} \approx \theta = \frac{\pi}{2} - \frac{\epsilon}{2} \{ \theta = \frac{\pi}{2} \} \approx -\frac{\epsilon}{2} \}.$$

Վայու արդարութիւն է պարսկա գործի
Տար մեջը քաղաքին...
Եւ վշտը բառապ պարսկա
Գործիւնը ու կերպն
Կազմութ բարձրացնաւ իւն արեւը
Արդար աշու պատճենն է...
Վայու արդար իւն պարսկա կանչալու
Բայ, ամ այս մասն անունն է...

REFERENCES AND BIBLIOGRAPHY

1. $\mu = \text{mean} - 2\sigma$ to $\text{mean} + 2\sigma$

զարդ պատճեն է առաջ մնալ իր ուշ յան-
քանի համար, առաջ հաստիական և թագավորական այլ
բարձր վեճութեան մեջ մաս մաս գումարեց շա-
ռավա յան առաջ առաջ առաջ առաջ առաջ:

III. All the men who have been to the United States have been to Canada.

— սիրե իւ սիրու և յանձնե քըլիստին
Տիգ ցաւառուոց մի առաջ շնէրց
Ես հաւատացած եմ յարութիւն նորութիւն
Այս առ իւ բայ մերժից կը մերժէր: